



The National Academy of Sciences of the Republic of Armenia
H.Acharian Institute of Language

Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна

X International Conference on Armenian Linguistics
Yerevan, 7-9 October, 2015

C o l l e c t i o n o f p a p e r s

**X Международная конференция по армянскому
языкознанию**

Ереван, 7-9 октября, 2015 г.

С б о р н и к д о к л а д о в

Yerevan – 2015 – Ереван

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Հայերենագիտական միջազգային տասներորդ
գիտաժողով**

7-9 հոկտեմբերի, 2015թ.

Զ ե կ ու ց ու մ ն ե ր ի ժ ո դ ո վ ա ծ ու

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2015

ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.2Հ

Հ 301

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Տպագրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական
կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.թ. Վ.Լ.Կատվայան (նախագահ)

բ.գ.դ., պրոֆ Գ.Կ.Խաչատրյան

բ.գ.դ., պրոֆ. Վ.Գ.Համբարձումյան

բ.գ.դ., պրոֆ. Ս.Ա.Հայրապետյան

բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ Լ.Շ.Հովհաննիսյան

բ.գ.դ., պրոֆ Լ.Ս.Հովսեփյան

բ.գ.դ., Ռ.Մ.Թոխմախյան

բ.գ.թ. Ն.Գ.Հովհաննիսյան

բ.գ.թ. Գ.Մ.Մխիթարյան

բ.գ.թ. Ա.Ս.Գալստյան

բ.գ.թ. Հ.Մ.Չոլաքյան

Հ 301 Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտա-
ժողովի նյութեր (Երևան, 7-9 հոկտեմբերի, 2015թ.)- Եր.:
«Գիտություն» հրատ., 2015.- 315 էջ:

ISBN 978-5-8080-1187-8

ի ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2015

**ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԵՎԵԼԱ ՀԱՅԵՐԵՆԻ ՍՈՍԿԱՍՆՑԱՎՈՐ
ԲԱՅԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ինչպես հայտնի է, լեզվական համակարգը ենթադրում է լեզվական միավորների բազմազան տարբերակների գոյություն, մինչդեռ լեզվական նորմով ընդունվում և հաստատվում են միայն դրանցից մի քանիսը: Այդ իսկ պատճառով էլ լեզվական համակարգի և լեզվական նորմի միջև ծագում են որոշ հակասություններ:

Արևելահայ գրական և խոսակցական տարբերակների՝ զգալի տարբերություններ դրսևորելն էլ իր հերթին նպաստում է այն բանին, որ լեզվական շատ փոփոխություններ սկիզբ առնեն հենց խոսակցական լեզվից: Ի տարբերություն վերջինիս՝ գրական գրավոր լեզուն շատ ավելի կայուն է, ավանդապահ, որում գիտակցաբար պահպանվում և կիրառվում են ընդունելի համարվող կանոնիկ ձևերը:

Խոսակցական լեզուն իր մեջ ներառում է բարբառային տարրեր, օտար լեզուների ազդեցությամբ առաջացած իրողություններ, որոնք փորձում են աստիճանաբար ներթափանցել գրական լեզու:

Արդ մեր խնդրո առարկան բայական համակարգում, մասնավորապես՝ սոսկածանցավորներում կատարված տեղաշարժ-փոփոխություններն են:

Ըստ Հ. Բարսեղյանի՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության բայացանկի տվյալների՝ արդի հայերենի բայերի թիվը մոտավորապես 6000 է: Այդ բայերի մի մասը այժմ անգործածական է, միննույն ժամանակ առաջացել են նոր բայեր, նոր կազմություններ: Բացատրական նորագույն բառարանի բացակայության պատճառով բայերի թվի հաշվարկը կատարել ենք՝ հենվելով ժամանակակից հայոց լեզվի բացատրական քառահատոր բառարանի¹ ընձեռած նյութի վրա (բառացանկը բացատրական 2 բառարաններում՝ նշվածում և Է.Աղայանի բառարանում², գրեթե չի

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), 1-4 հատորներ, Ե., 1969-1980:

² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2հ., Ե., 1976:

տարբերվում. նախընտրել ենք առաջինը, քանի որ նրանում շատ դեպքերում տրված են կատարյալի հիմքն ու վերջավորությունները, որոնք անհրաժեշտ էին մեզ ուսումնասիրության համար):

Քարտագրել ենք մոտավորապես 15700 բայեր, որոնցից, բնականաբար, առանձնացրել ենք բարբառային տարբերակները, հնացած ձևերը, արևմտահայերենին բնորոշ բայերը (կան նաև **խ, ու** լծորդության որոշ բայեր), ինչպես նաև սխալ կազմությունները: Մակայն շատ բայեր էլ կազմվել են 80-ականներից հետո ընկած ժամանակահատվածում: Կարող ենք ասել, որ այժմ գրական արևելահայերենի բայերի թիվը ամենայն հավանականությամբ եռապատկվել է:

Տեղաշարժերը հիմնականում վերաբերում են՝ 1/ սուկաձանցավոր բայերի քանակին, 2/ չ սուկաձանց ունեցող բայերի թվի նվազմանը, 3/ սուկաձանցավոր բայերի արգելական հրամայականի կազմությանը, 4/ **ն**-սուկաձանցավոր անկանոն որոշ բայերի կատարյալում կատարված փոփոխություններին և այլն:

Քննությունը կատարվել է 1254 սուկաձանցավոր բայերի հիման վրա, որոնք դուրս ենք գրել վերոհիշյալ 15700 միավոր պարունակող ցուցակից, որից գատել ենք՝

ա/ *տես*-ով տրված 91 բայեր /նշենք, որ սրանցից յոթի մոտ չի եղել *տե՛ս* հղումը. դրանք են՝ *կայսերանալ, հինանալ, հուռանալ, երևութանալ, նիհարանալ, նախատեսնել, ներառնել*³/. հանդիպել է նաև հակառակ երևույթը. *տես*-ով են տրված *կաշխանալ /տե՛ս կաշվանալ/* և *պատանեկանալ /տե՛ս պատանիանալ/ բայերը*, որը, կարծում ենք, ճիշտ չէ,

բ/ բարբառային նշումով 60 բայեր,

գ/ խոսակցական /կամ ժողովրդական/ 20 բայեր /այս ցուցակում մեր կողմից են ավելացվել՝ *բոյովանալ, թփռռշանալ, շաշանալ, փետանալ, գողենալ /բորոտ դառնալ/, փոմփռշանալ, փորփռշանալ, ժուլիկանալ, կարենալ, հետնանալ, հետանալ, պստիկանալ, ջահելանալ, ջրիկանալ* բայերը,

դ/ արևմտահայերեն 54 բայեր,

ե/ *հնացած* 42 բայեր, որոնցից 26-ի մոտ նշումը բացակայում է

³Է. Աղայանի բառարանում *ներառնել*-ը տրված է *տե՛ս ներառել* /2-րդ հ., էջ 1062/, *նախատեսնել*-ը՝ անհանձնարարելի /էջ 1051/:

/պրոլետարանալ, պրոլետարականանալ, սովետանալ, սովետականանալ, ապշանալ, բանալ, բառնալ, ընթեռնել, կայլականալ Աղաթել/, համենալ /ուշանալ, հապաղել/, հուլանալ /հանդաղել/, մատչել, վերաբանալ, վերառնել /վերցնել/, ընտանենալ, մթանալ, մթնանալ, թերաբանալ, իրտչել, կալնել, կալնվել, թաքչել, ցրտանալ, սխրանալ, սատնանալ, ողջանալ/,

զ/ *հագվադեպ* նշումով 19 բայեր /օրինակ՝ *արիաջանանալ, արոսանալ, բարեբախտանալ*/ և այլն:

Այսպիսով՝ արևելահայերենի սոսկածանցավոր բայերի թիվը, մեր հաշվումների համաձայն, 969-ի է հասնում:

Մ. Աբեղյանը որևէ ածանցական իմաստ չի կապում ժամանակակից հայերենի **ան, են, ն, չ** սոսկածանցների հետ և կարծում է, որ դրանք բայի հիմքի նշանակության վրա ոչ մի նոր երկրորդական, ածանցական գաղափար չեն ավելացնում. «...**Ցանկանալ, ուզենալ, վախենալ, ուռչիլ** մի և նույն իմաստ ունեն, ինչ որ պարզ ձևով՝ **ցանկալ, ուզել, վախել, ուռիլ**»⁴: Ա. Աբրահամյանի կարծիքով այդ ածանցներն ունեն բառակազմական և քերականական կրկնակի դեր, ուստի դրանք կոչում է **բաղադրության-քերականական** ածանցներ: Լեզվաբանը նշում է՝ քանի որ **լողալ** և **լողանալ** բայերը ժամանակակից հայերենում տարբեր բառեր են, սակայն ըստ ձևի տարբերվում են միայն **-ան** ածանցով, ապա կարելի է ասել, որ ածանցը բառակազմական նշանակություն ունի՝ լինելով միա-ժամանակ բաղադրության ածանց⁵:

Էդ. Աղայանը **-անալ**-ով ձևերը⁶ /**կարմրանալ՝ կարմիր դառնալ, ապշանալ՝ ապուշ դառնալ**/ կոչում է **վերածության-դառնալիության** բայեր: Կարծում ենք՝ սոսկածանց անվանումը տեղին է միայն **ն** և **չ** ածանցների համար, որոնք սոսկ բաղադրական ածանցներ են:

Այժմ անցնենք սոսկածանցավոր բայերի քննությանը:

Շ. Բարսեղյանի կազմած բայացանկում **ան** սոսկածանց ունեցող բայերի թիվը գրեթե 750-ի է հասնում, մեր հաշվումների համաձայն՝ դրանք 936-ն են: Սրանց համեմատ չնչին թիվ են կազմում մնացյալ ածանցավորները:

⁴Նույն տեղում, էջ 92:

⁵Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Բայը ժամանակակից հայերենում*, Ե., 1962, էջ 225:

⁶**Աղայան Է.**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1967, էջ 331:

Են ածանց ունեցող բայերը Հ. Բարսեղյանի մոտ 19-ն են: Հարբենալ-ը թե՛ ԺՀԼԲԲ-ում, թե՛ Է. Աղայանի բառարանում տրված է որպես սխալ ձև /հարբենալ- տե՛ս հարբել/ ԺՀԼԲԲ, 2-րդ հ., էջ 320/ և տե՛ս արբենալ /Է. Աղայան, 1-ին հ., էջ 843/: Գիտենալ բայը մեր օրերում դուրս է եկել գործածությունից՝ փոխարինվելով իմանալ բայով: Համենալ բայը, որը նշանակում է ուշանալ, հապաղել, այժմ հնաբանություն է, և երբեմն թյուրըմբռնմամբ կապվում է համեցեք հրամայական բայաձևի հետ, մինչդեռ վերջինս ծագել է հրամայեցեք-ից: Գողենալ բայը /նշանակում է բորոտ դառնալ/, որը բացակայում է Է. Աղայանի բառարանից, սակայն կա Հ. Բարսեղյանի ցուցակում, ևս հնացած բառ է: Երկու բացատրականներում էլ /բնականաբար Հ. Բարսեղյանի մոտ նույնպես/ կարենալ-ը տրված է որպես կանոնական ձև /կատարյալը՝ կարացի/, մինչդեռ այժմ այն հատուկ է միայն խոսակցական բառաշերտին. գրականում կիրառվում է կարողանալ-ը:

Բացառելով հնացած, սխալ կամ նույն բառից բաղադրվածները /ինչպես՝ հագենալ-ից գերհագենալ, կիսահագենալ/՝ առանձնացրել ենք եւս- սուկաձանցավորների հետևյալ բայաշարքը՝ 1. արբենալ, 2. արժենալ, 3. կամենալ, 4. հագենալ, 5. Մերձենալ, 6. մոտենալ, 7. վախենալ, 8. ուզենալ, 9. ունենալ, 10. Պարծենալ:

Հ. Բարսեղյանի գրքում **ն** սուկաձանց /ն+ել/ ունեցող բայերը 32-ն են: Լեզվաբանը բերում է օրինակներ, որոնք այժմ ընդունելի չեն, ինչպես *դիպնել, կպնել, նախատեսնել*: Պրծնել-ը տրված է 2 անգամ՝ կապված երկսեռության հետ, որը ճիշտ չէ, և այլն: Հնաբանություն է ԺՀԼԲԲ-ում առկա *վերառնել* բայը, *ներառնել*-ը անընդունելի է *նախատեսնել* բայի պես: Սրանց կանոնական ձևերն են՝ *ներառել, նախատեսել*: Համընկնել, կիսահագնել, թնառնել /ի դեպ, 2 բառարաններում վերջինս գրված է միասին/ բայերը չենք դնում **ն**-սուկաձանցավորների ցուցակում՝ որպես նույն բաղադրիչից սերված տարբերակներ /ընկնել, հագնել, առնել/: Պշնել /գրաբ. պշնուլ/ բայը ընդունելի չէ գրական լեզվում. երբեմն հանդիպում է ժողովրդախոսակցական լեզվում: Ինչ վերաբերում է **ն** ածանց ունեցող **ա** լծորդության բայերին, նշենք, որ *համբառնալ* բայը դեռևս է. Աղայանի բառարանում տրված է *հնացած* նշումով /հ.1, էջ 806/, *բանալ* և *բառնալ* բայերը /նույն ձևով՝ վերաբանալ, թերաբանալ/

փոխարինվել են այժմ ելակետային դարձած վաղակատարի *բացել, բարձել* ձևերով: Մնում է *դառնալ* բայը նույն կառուցվածքով /դրանից սերվել են *անդրադառնալ, վերադառնալ* բայերը/: Ըստ Հ. Աճառյանի արմատական բառարանի՝ սույն բայը նախապես եղել է *դարձնալ* > *դարնալ* > *դառնալ*⁷ /նույն ձևով և՛ *բարձնալ* > *բարնալ* > *բառնալ*/:

Ինչ վերաբերում է *անել, դնել, տանել, լինել, կենալ* բայերին, ճիշտ է, ծագումնաբանորեն սրանք ածանցավոր են (*բերենք միայն մեկ օրինակ. Հ.Աճառյանի արմատական բառարանի 1-ին հատորի 675-676 էջերում գրված է՝ դնել- բնիկ հայ բառ՝ հնիս. dhe- /դնել/ արմատից..., ուներ միայն կատարյալ ձև, իսկ ներկայի ձևերը կազմում էին կրկնությամբ /սանս., հարս.../, մյուս լեզուները կրկնավոր ներկայի տեղ մի պարզ ձև դնելու համար հորինեցին ածանց ձևեր. այսպես՝ ...-ne-մասնիկով՝ հյ. դնեմ-Հյուբշ. 439*), սակայն լեզվի զարգացման ներկա փուլում դրանցում առկա ածանցը ընկալվում է որպես արմատը կազմող տարր: Նշենք, որ տեղաշարժ է կատարվել *անել, դնել, թողնել* բայերի անցյալ կատարյալի կազմության մեջ: Եթե նախկինում արի//արեցի, դրի// դրեցի, թողի//թողեցի գույգ ձևերից կանոնական համարվել են անցոյական ձևերը, ապա այժմ պատկերը փոխվել է. գրական լեզվում տիրապետող են դարձել ցոյական ձևերը⁸, իսկ արմատական ձևերը առավել հաճախ կիրառվում են առօրյա-խոսակցական լեզվում⁹:

Կենալ բայը Հ. Բարսեղյանի գրքում դրված է և՛ *նալ*-ի, և՛ *ենալ*-ի տակ:

Այսպիսով՝ բացառյալ վերջին բայերը՝ «մաքուր» ն-սոսկա-ծանցավորները ներկայանում են հետևյալ կազմով՝ 1. առնել, 2. հասնել, 3. բուսնել, 4. հատնել, 5. հեծնել, 6. ելնել, 7. ընկնել, 8. թողնել, 9. իջնել, 10. տեսնել, 11. պրծնել, 12. հագնել, 13. անցնել, 14. գտնել, 15. մեռնել, 16. մտնել, 17. դառնալ:

Ածանցավոր բայերի շարքում թվով ամենաքիչը չ *սոսկածանց* ունեցող բայերն են:

Հ. Բարսեղյանի վերոնշյալ գրքում դրանք 13-ն են: Զարմանալի է, որ *կաշել, դիպշել* բայերի՝ ոչ ընդունելի, բայց խոսակցական

⁷Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.1, Ե., 1971, էջ 639:

⁸Ըստ Ն. Պառնասյանի՝ 2-րդ ձևերը ավելի գործածվում են խոսակցական լեզվում:

⁹Տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջեր 471-475:

լեզվում տարածված **կպնել, դիպնել** տարբերակները լեզվաբանը գետեղել է **և** սոսկածանցավորների մեջ¹⁰: **Հալչել** բայը այս ցուցակից դուրս է մնացել: Նշված բառացանկը նույնությամբ կամ մասնակի փոփոխություններով ներկայանում է հետագա աշխատություններում¹¹:

Ա. Աբրահամյանը նշված ցուցակից հանում է **բլչել** և **խրթչել** բայերը, բայց ավելացնում **հալչել**-ը (նշենք, որ **բլչել**-ը Աղայանի բառարանում տրված է որպես **փլչել**-ի ոչ ընդունելի ձև (1-ին հ., էջ 192), իսկ **խրթչել**-ը՝ **խրտչել** տարբերակով, համարվում է նույնը **խրտնել**-ի հետ (1-ին հ., էջ 618):

Թաքչել // քաքնվել, հալչել// հալվել, փլչել/փլվել զույգ ձևերի մեջ հաղթող են դարձել վերջինները, իսկ **փակչել** բայի փոխարեն գործածվում է **կպչել**-ը (նկատենք, որ **փակչել**-ի պատճառականը լայնորեն կիրառվում է՝ **փակցնել**):

Մ.Ասատրյանը **չ** սոսկածանցավոր է համարում 8 բայեր՝ **դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել**¹²:

Ռ. Սաքապետոյանը այս բայերին նվիրված հոդվածում նշված բառացանկից հանում է **ուռչել** բայը՝ այսպիսով դրանց թիվը հասցնելով 7-ի¹³:

Յու. Ավետիսյանը «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» գրքում Մ. Ասատրյանի նման ընդունում է **չ** սոսկածանցավոր 8 բայեր¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այս բայերի թվի, նրանց խոնարհման որոշակի ձևերի կազմության հետ կապված՝ կան նկատելի տարաձայնություններ: Մասնագիտական գրականության մեջ և դպրոցական դասագրքերում հաճախ խուսանավում են ճշգրիտ թիվ ներ-

¹⁰Բարսեղյան Հ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Ե., 1953, էջ 383:

¹¹Չ-սոսկածանցավորների մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Տեղաշարժեր արդի հայերենի բայի և խոնարհման համակարգում» /*Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, Ե., 2015/:

¹²Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2002, էջ 198:

¹³Սաքապետոյան Ռ., «Չ» սոսկածանցավոր բայերը հայերենի զարգացման արդի փուլում, «Բանբեր», N2, Ե., 1989:

¹⁴Ավետիսյան Յու., *Տեղաշարժեր արդի գրական հայերենում*, Ե., 2011, էջեր 61-66:

կայացնելուց, խոնարհման հարացույցում բերում են միայն տիպական անվիճելի օրինակներ:

Հայտնի է, որ **ն, չ** սոսկաճանցավոր բայերի անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի արմատական հիմքից կրավորակերպ վերջավորություններով: Այսինքն՝ **սառչել** և **ուռչել** բայերի կատարյալի կանոնավոր ձևերը պիտի լինեն (և այդպես էլ ընդունված է) **սառա, սառար, սառավ..., ուռա, ուռար, ուռավ...**:

Զ. Աղաջանյանի «Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր» գրքում **ուռա, սառա** ձևերը համարվում են օրինաչափ, **ուռեցի, սառեցի** ձևերը՝ նորակազմություններ:¹⁵

Վստահ կարող ենք արձանագրել, որ այս բայերի կատարյալի կազմության մեջ կատարվել է փոփոխություն (տեղի սղության պատճառով չենք ներկայացնում մամուլից և տարբեր տարիքի ու կրթության անձանցից կատարված հարցման վիճակագրությունը), և սրանք կատարյալը կազմում են **ե** խոնարհման պարզ բայերի օրինաչափություններով՝ ցոյական հիմք գումարած **ի, իր, 0, ինք, իք, ին (սառեցի, ուռեցի)**: **Սառա, ուռա** ձևերը ընկալվում են որպես շեղումներ, ոչ գրական ձևեր: Նշանակում է՝ այս բայերը ձեռք են բերել պարզ բայերին յուրահատուկ հատկանիշներ:

Ինչպես իրավացիորեն նշում է Ռ.Սաքալետոյանը, **ուռչել** բայի **ուռել** տարբերակի առաջացումը իբրև ելակետային ձև այսօր կասկած չի հարուցում¹⁶:

Մենք այս բայի կողքին դնում ենք նաև **սառել**-ը:

Էդ. Աղայանի բառարանում **սառել** և **սառչել** ձևերը համարվում են նույնը (2-րդ հատոր, էջ 1278):

ԺՀԼԲԲ-ում (հ. 4-րդ, էջ 273) **սառել** բայի դիմաց գրված է՝ տե՛ս **սառչել**, իսկ կատարյալը՝ **սառեցի** (ոչ թե **սառա**): Ցավոք, Աղայանի բառարանում բայից հետո կատարյալը չի տրվում:

Մի փաստարկ ևս **սառել, ուռել** բայերը ելակետային ձևեր համարելու օգտին: Սրանցից կազմվող պատճառականները, ըստ լեզվական նորմի, պիտի լինեին **սառցնել, ուռցնել**, ինչպես ունենք **փախցնել, կպցնել, թոցնել, կորցնել**, մինչդեռ տարածված են **սառեցնել, ուռեցնել** ձևերը:

¹⁵Աղաջանյան Զ., *Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր*, Ե., 2007, էջ 285:

¹⁶Սաքալետոյան Ռ., *նշվ. հոդվածը*, էջ 176:

Էդ. Աղայանը բերում է **սառեցնել/սառցնել** (էջ 1281), **ուռեցնել/ուռցնել** (էջեր 1496-1497) գուգաձևությունները, այնինչ ԺՀԼԲԲ-ում **սառցնել**-ը տրված է *տես*-ով (էջ 275), **ուռեցնել/ուռցնել**-ը համարվում են գուգահեռ ձևեր (էջ 606): Ջ. Աղաջանյանը այլ բան է գրում՝ **սառցնել/սառեցնել, ուռցնել/ուռեցնել, հալցնել/հալեցնել** գուգաձևություններում առաջինները համարելով գրական, նորմով սահմանված¹⁷: Սակայն ակնհայտ է, որ դրանք այժմ դիտվում են որպես խոսակցական տարբերակներ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ չ սուկածանցավորների թիվը այսօր ընդամենը վեցն է, որից էլ **փախչել, թռչել, կայչել** բայերը առօրյա խոսքում համատարած փոխարինվել են **փախնել, թռնել, կպնել** ոչ ընդունելի (առայժմ) ձևերով:

Այսպիսով՝ ԺՀԼԲԲ-ից քարտագրված ընդհանուր 969 սուկածանցավորների քանակը բերենք նվազման կարգով՝ **ան**-ով բայեր՝ 936, **ն**-ով բայեր՝ 17, **են**-ով՝ 10, **չ**-ով՝ 6:

Գրական լեզվի զարգացման վերջին ժամանակահատվածում տեղաշարժեր են կատարվել՝ կապված սուկածանցավոր բայերի, ինչպես նաև **ա** լծորդության պարզ բայերի հոգնակի և պատճառականների արգելական հրամայականի կազմության հետ:

Վերոնշյալ բայերը, ըստ ավանդական քերականության, արգելական հրամայականը կազմում են կա՛մ *մի՛ արգելական + անո՜րոշի ձևափոխված տարբերակ* կաղապարով (մի՛ գտնիր), կա՛մ *մի՛ արգելական + հաստատական հրամայական* կաղապարով (մի՛ գտիր):

Հ. Բարսեղյանը «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ ներկայացնում է առաջին կաղապարը՝ որպես նորմատիվ ձև, իսկ երկրորդին առհասարակ չի անդրադառնում¹⁸: Էդ. Աղայանը «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» գրքում նշում է արգելական հրամայականի կազմության 2 ձև. «...մի՛ մոռանա, մի՛ գտնի... Այս երկրորդ ձևն ավելի ժողովրդախոսակցական բնույթ ունի, բայց թափանցել է գրական

¹⁷Աղաջանյան Ջ., *նշվ. աշխ.*, էջ 265:

¹⁸Նշվ. տեղում, էջ 318:

լեզվի մեջ և հետզհետե տարածվում է՝ ընդհանրապես ձգտումով»¹⁹:

Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը և Հ. Օհանյանը²⁰ **ան, են, ցն** ածանց ունեցող բայերի արգելականի համար ընդունում են նաև ներկայի հիմքից կազմությունը (*մի՛ հեռանա, մի՛ մոռանա*)՝ նշելով, որ առաջին 2 ածանցներն ունեցող բայերը երբեմն կարող են ստանալ **ր** (*մի՛ վախենար, մի՛ հեռանար*):

Հեղինակները առանձին չեն նշում **ն, չ** սոսկածանցավոր բայերի մասին, բայց բերված օրինակներից (*մի՛ փախիր*) երևում է, որ ընդունում են դրանց՝ դրական ձևից կազմության տիպը:

Ս. Ասատրյանը, անդրադառնալով այս հարցին և հաշվի առնելով գրական լեզվի արդի վիճակը, նշում է. «Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական և արգելական ձևերը նույնանում են, ինչպես՝ գրիր, մի գրիր..., ուստի և դրանց նմանակությամբ մյուս բայերի արգելական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից...: Միավրված չենք լինի, եթե ասենք, որ արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից»²¹ (ընդգծումը Մ. Ասատրյանինն է-Ա.Ա.):

7-րդ դասարանի՝ 2006թ. լույս տեսած դպրոցական դասագրքում (հեղինակներ՝ Խլդաթյան, Խաչատրյան) հարցը մասնակիորեն լուծում է ստանում. *ա* խոնարհման պարզ բայերի արգելական հրամայականի կանոնական ձևը համարվում է դրականից կազմվողը (*մի՛ խաղացեք*), իսկ սոսկածանցավոր և պատճառական բայերինը՝ հին ավանդականը (էջեր 100-101):

Հինգ տարի անց՝ 2011թ. լույս տեսած «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» գրքում Յու. Ավետիսյանը, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, հստակ ձևակերպում է տալիս. «Ժամանակակից հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից. մնացած զուգահեռ կազմությունները հնաբանություններ են» (էջ 36):

Նույնը կարդում ենք դարձյալ 2011թ. հրատարակված 7-րդ դասարանի դպրոցական դասագրքում (հեղինակներ՝ Բարսեղյան,

¹⁹Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 368:

²⁰Տե՛ս նշվ. աշխ., էջ 416:

²¹Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 329:

Մեյթիխանյան). «Արգելական հրամայականի եզակի և հոգնակի թվերը բոլոր բայերի դեպքում կազմվում են հրամայականի դրական ձևերից՝ *մի՛ մասնիկով: ...Մի՛ մեծանա-մի՛ մեծանար...* ձևերն արդեն հնացած են, ունեն սահմանափակ գործածություն, ուստի դրանցից պետք է խուսափել» (էջեր 127-128):

Այսպիսով, տեղաշարժը այս բայերում փաստացի իրողություն է, և մնում է հստակ ու կոշտ ձևակերպամբ (ոչ թե «խուսափել այդ ձևերից», այլ որ դրանք հնաբանություններ են, լեզվի արդի վիճակի համար սխալ ձևեր) ամրագրել նորմատիվ քերականության մեջ:

Այսպիսով, զուգադրահամեմատական քննություն կատարելով ԺՀԼԲԲ-ից առանձնացված ընդամենը 1254 սուկաձանցավոր բայերի և Հ. Բարսեղյանի ներկայացրած բայացանկերի միջև, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1/ Արդի գրական արևելահայերենի սուկաձանցավոր բայերի թիվը 969 է՝ չհաշված բառարանում առկա հնացած, սխալ կազմությամբ, արևմտահայերեն, բարբառային, խոսակցական, հազվադեպ կիրառվող ձևերը՝ Հ. Բարսեղյանի նշած մոտ 837-ի դիմաց /հեղինակը նշում է *ան*-ով մոտ 750, մյուսները գումարած՝ ստացվում է այդ թիվը. 750+87/: Գերակշռում են **ան** սուկաձանցավոր բայերը՝ 936:

2/ Չհաշվելով հնացած, սխալ կամ նույն բառից բաղադրվածները /ինչպես՝ *հազենալ*-ից > *գերհազենալ*, *կիսահազենալ*/՝ առանձնացրել ենք **են**-սուկաձանցավորների հետևյալ բայաշարքը՝ 1. արբենալ, 2. արժենալ, 3. կամենալ, 4. հազենալ, 5. մերձենալ, 6. մոտենալ, 7. վախենալ, 8. ուզենալ, 9. ունենալ, 10. պարծենալ /Հ. Բարսեղյանի ցուցակում 19 է/:

3/ «Մաքուր» **ն**-սուկաձանցավորները ներկայանում են հետևյալ կազմով՝ 1. առնել, 2. հասնել, 3. բուսնել, 4. հատնել, 5. հեծնել, 6. ելնել, 7. ընկնել, 8. թողնել, 9. իջնել, 10. տեսնել, 11. պրծնել, 12. հազնել, 13. անցնել, 14. գտնել, 15. մեռնել, 16. մտնել, 17. Դառնալ /Հ. Բարսեղյանի ցուցակում 32 է/:

4/ Չ- սուկաձանցավորները, ըստ մեզ, այսօր ընդամենը 6-ն են՝ *փախչել*, *թոչել*, *կորչել*, *կպչել*, *դիպչել*, *հանգչել* /Հ. Բարսեղյանի ցուցակում 13 է/:

5/ Գրական լեզվի զարգացման ներկա փուլում տեղաշարժ է կատարվել սուկաձանցավոր բայերի արգելական հրամայականի

կազմության մեջ: Եթե նախկինում կանոնական էին վերոնշյալ բայերի արգելական հրամայականի կազմությունը և՛ *մի՛ արգելական + անորոշի ձևափոխված տարբերակ* կաղապարով (մի՛ գտնիր), և՛ *մի՛ արգելական + հաստատական հրամայական* կաղապարով (մի՛ գտիր), ապա այժմ առաջին տարբերակը դարձել է հնարանություն. հաղթել է վերջին ձևը:

Анна Абаджян, Сдвиги в глагольной системе простосуффиксальных глаголов восточноармянского языка. -

Сделав сопоставительный анализ 1254 простосуффиксальных глаголов Толкового словаря современного армянского языка и словаря О.Барсегиан, мы пришли к следующим выводам:

1. число простосуффиксальных глаголов в современном армянском языке - 969, не считая устаревших и неправильных, редко употребляемых, западноармянских, диалектных, разговорных образований, среди них доминируют имеющие суффикс «ան» - 936,

2. не считая устаревшие, неправильные или образованные от одного корня глаголы, мы отделили следующий ряд глаголов с простосуффиксом «են»: *արբենալ, արժենալ, կամենալ, հազենալ, մերձենալ, մոտենալ, վախենալ, ուզենալ, ունենալ, պարծենալ,*

3. глаголы с чистым «ն» имеют следующий состав: *առնել, հասնել, բուսնել, հատնել, հեծնել, ելնել, ընկնել, թողնել, իջնել, տեսնել, պրծնել, հազնել, անցնել, գտնել, մեռնել, մսնել, դառնալ,*

4. глаголов с простосуффиксом «չ», по нашим данным, всего 6: *փախչել, թռչել, կորչել, կպչել, դիպչել, հանգչել .*

Abajyan Anna, Shifts in the System of Eastern Armenian Affixal Verbs.-In the result of carrying out a contrastive research of 1254 affixal verbs singled out from CAED (Contemporary Armenian Explanatory Dictionary) and the lists of verbs, presented by H. Barseghyan, we have come to the following conclusions;

1. the number of the affixal verbs of contemporary Armenian is 969, except for the old-fashioned, wrongly-formed, Western Armenian, dialectical, conversational and rarely used forms registered in dictionaries. the ones, having the affix “ան” are prevailing, their number is 936.

2. excluding the old-fashioned, wrongly-formed words or the ones derived from the same word, we have singled out the following group of the

“նն” affixal verbs: *արբենալ, արժենալ, կամենալ, հագենալ, մերձենալ, մոտենալ, վախենալ, ուզենալ, ունենալ, պարծենալ*.

3. the affixal verbs with pure “ն” are presented in the following group: *առնել, հասնել, բուսնել, հատնել, հեծնել, ելնել, ընկնել, թողնել, իջնել, տեսնել, պրծնել, հագնել, անցնել, գտնել, մեռնել, մտնել, դառնալ*,

4. the affixal verbs with “չ”, according to the data we possess, nowadays are only 6 in number: *վախչել, թռչել, կորչել, կպչել, դիպչել, հանգչել*:

**ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ *իւ*
ԵՐԿԲԱՐԲԱՌԻ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Արդի արևմտահայ քերականագիտության մեջ առավել տարածված տեսակետի համաձայն՝ նախաբաղաձայնական դիրքի *իւ* կապակցությունը (որի հինհայերենյան ուղղագրությունը գրական արևմտահայերենում պահպանվում է անփոփոխ) հանդես է գալիս երկակի հնչյունական արժեքով. բառակերպի դիրքում և *-ութին* ածանցի կազմում այն արտասանվում է որպես *եու* (= *յու*) երկհնչյուն (օրինակ՝ *իւղ*, *իւր*, *ուրախութիւն*, *աշակերտութիւն*, *գիտութիւն*), իսկ մնացած դեպքերում երկու բաղաձայնի միջև *իւ* կապակցությունն արտահայտում է քմային <ü> (= ժ. ֆր. *u*, ժ. գերմ. *ü*) ձայնավորը (օրինակ՝ *ձիւն*, *հիւր*, *սիւն*, *դիւրին*, *երկիւղ*, *հիւսիս*, *արիւն*)¹: Հ. Չոլաքյանը գրում է. §Գրական լեզուին մեջ *իւ* ձայնաւորին գոյութիւնը եւ ընկալումը աներկբայ է, անշփոթելի է յստակ կերպով կը հակադրուի *իւ* երկհնչիւնին. համեմատել *քաջութիւն*՝ Տքաջութ-եուն՝ (նոր ուղղ.՝ *քաջութ-յուն*) եւ *ա-լիւր*: Համեմատել *իւրաքանչիւր* բառի երկու *իւ*-երը Տեւրաքանչիւր՝: *Իւ*-ի երկհնչիւն եւ ձայնաւոր արժեքները կրնան միայն նոյն հնչոյթին դիրքային տարբերակները նկատուիլ, որովհետեւ անոնք իմաստազատիչ հակադրութիւններ կազմող եզրեր չունին եւ չեն հանդիպիր իրարու՝²: Սակայն արևմրտահայերենի մի շարք դասագրքերում և քերականական աշխատություններում նախաբաղաձայնական դիրքի *իւ* կապակցությանը բոլոր դեպքերում վերագրվում է *եու* (= *յու*) երկհնչյունային արտասանություն³: Ըստ Ռ. Թոխմախյանի՝ Ֆարևմտահայերենի բազմա-

¹ Տե՛ս **Յ. Չոլաքեան**, *Հայերենի դասընթացը*, Ա. գիրք, Հալեպ, 1996, էջ 6, **Ռ. Սաքալետոյան**, *Արևմտահայերենի դասագիրք*, Ե., 2006, էջ 14-15, **դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան**, *Արևմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ*, Ե., 2009, էջ 13-14, **Կ. Առաքելեան**, *Արդի հայերենի քերականություն*, գիրք Ա., Պեյրուք, 1998, էջ 78-79:

² **Յ. Չոլաքեան**, նշվ. աշխ., էջ 6:

³ Տե՛ս **Յ. Գազանձեան**, *Նոր քերականություն արդի հայերեն լեզուի*, Կ. Պոլիս, 1924, էջ 20, **Ս. Գ. Աբրահամեան**, **Բ. Յ. Վերդեան**, **Վ. Ա. Քոսեան**, *Հայերեն լեզուի դասագիրք*, Ե.,

թիվ դասագրքերում իւ > յու արտաբերությունը որպես հաստատուն իրողություն է ներկայացվել (ինչպես օրինակ՝ **Աբրահամյան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ.**, Հայերեն լեզուի դասագիրք, Ե., 1966 (sic! – Ս. Ս.), **Դորա Սաքայան**, *Western Armenian for the English-speaking World*, Montreal, 2000, էջ 124), սակայն ավանդաբար այն շարունակվել է դիտվել որոշ վերապահությամբ ու-ի տարբերակ կամ երկբարբառ (**Ռ. Սաքապետյան**, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 14) ... Նման մոտեցմամբ պետք է տրամաբանական լիներ նաև մյուս ձայնավորների քմայնացումը, այսինքն՝ այդ երևույթը պիտի տարածվեր նաև օ-ի, ա-ի, է-ի վրա⁴:

Հարկ ենք համարում նշել, որ Ռ. Թոխմախյանի կողմից հղում տրվող Ռ. Սաքապետյանի §Արևմտահայերենի դասագրքի՝ համապատասխան էջում, որտեղ մեջբերվում է Մ. Աբեղյանի տեսակետը, իրականում չի խոսվում քմային <ü> ձայնավորի հնչույթային կարգավիճակի մասին, և <ü>-ն չի դիտվում որպես *m* (ս) ձայնավորի տարբերակ. Մ. Աբեղյանը հայ. *m* և *h* ձայնավորների հետ համեմատության միջոցով պարզապես փորձում է հնչյունական-արտասանական տեսանկյունից բնութագրել հայերեն մի շարք բարբառներին բնորոշ քմային <ü> ձայնավորը, բացատրել քմային <ü> ձայնավորի արտասանությունը. §Դա շրթնայնացած *h* կամ առաջաքմային ՌԻ հնչյունն է (ֆրանսերեն ս, lune բառի մեջ. գերմաներեն ü, über բառի մեջ), որ միևնույն ՌԻ հնչյունն է, միայն արտաբերության տեղը, առաջաքմային *h* ձայնավորի ազդեցությամբ, փոխվել է քիմքի առաջի կողմը, կամ թե միևնույն առաջաքմային *h* ձայնավորն է, միայն արտաբերության համար, շրթնային ՌԻ ձայնավորի ազդեցությամբ, մասնակցում են նաև շրթունքներն իրենց կլորումով: Այսպես՝ Տսիւն⁵, Տիիւր⁵, արտասանում են sün, hür⁵: Մյուս կողմից, կարծում ենք՝ քմային <ü> ձայնավորի առկայության փաստից բնավ էլ չի հետևում, որ օ, ա, է ձայնավորները պետք է քմայնացման ենթարկվեին, քանի որ տվյալ դեպքում քմային <ü> ձայնավորն առա-

1968, էջ 41, **D. Sakayan**, *Modern Western Armenian for the English-speaking World. A Contrastive Approach*, Montreal, 2000, էջ 124:

⁴ Ռ. Թոխմախյան, Սիրիայի հայերենի հնչյունական համակարգը. – *Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում*, Ե., 2015, էջ 20:

⁵ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Ե., 1974, էջ 96:

ջացել է ոչ թե *nz* (ս) ձայնավորի քմայնացմամբ, այլ *hz* (iu) երկբարբառի բաղադրիչների առնմանական հնչյունափոխությամբ: Ի դեպ, երկբարբառի բաղադրիչների առնմանական հնչյունափոխությունը տիպաբանական տեսանկյունից հաճախադեպ երևույթ է և սովորաբար հանդես է գալիս որպես *երկբարբառ* > *պարզ ձայնավոր* հնչյունական զարգացման միջակա աստիճան⁶:

Ինչ վերաբերում է գրական արևմտահայերենի քմային *hz* (ü) ձայնավորի ծագմանը, այն հաճախ դիտվում է կա՞մ որպես բարբառներից գրական լեզվին անցած երևույթ⁷, կա՞մ էլ որպես առանձին անհատների օտարախոս արտաբերության արդյունք⁸:

Կարծում ենք՝ գրական արևմտահայերենում քմային <ü> ձայնավորի առկայությունը ճիշտ չէր լինի բացատրել օտարախոս արտաբերության ազդեցությամբ, քանի որ այդ պարագայում անբացատրելի է մնում <ü> ձայնավորի դիրքային սահմանափակումն արևմրտահայերենում: Ինչպես տեսանք, արդի արևմտահայ քերականագիտության մեջ *hz* կապակցության երկակի (որպես երկհնչյուն <yu> և որպես քմային <ü> ձայնավոր) արտասանության համար հստակ հնչյունական դիրքեր են տարբերակվում, և այդ պարագայում ճիշտ չէր լինի կարծել, թե մենք գործ ունենք թվացյալ (կեղծ) արտասանական տարբերության հետ: Ավելի տրամաբանական է ենթադրել, որ *hz* կապակցությանը բոլոր դեպքերում <yu> երկհնչյունային արտասանություն վերագրելիս բավարար ուշադրություն չի դարձվում տարբեր դիրքերում *hz*-ի ունեցած արտասանական տարբերության վրա: Նկատենք, որ <iu> երկբարբառը, <yu> երկհնչյունը (*բաղաձայն* + *ձայնավոր* կապակցությունը) և քմային <ü> ձայնավորը արտասանությամբ բավական մոտ են միմյանց, ուստի փոխառությունների ժամանակ տվյալ լեզվում համապատասխան հնչյունի բացակայության դեպքում սովորաբար փոխարինվում են մեկը մյուսով: Այսպես, Ժ. Ֆր. *ս*, Ժ. գերմ. *ü* քմային ձայնավորը ժամանակակից հայերենում տառադարձվում է *jnz*, ռուսերենում՝ ю (yu) հնչյունակապակցությամբ. հմմտ. Hübschmann անձնանվան տառա-

⁶ Տե՞ս Բ. Ա. Серебренников, *Вероятностные обоснования в компаративистике*, М., 1974, с. 109-112:

⁷ Տե՞ս Ռ. Մաքսլետոյան, նշվ. աշխ., էջ 14-15:

⁸ Տե՞ս Ռ. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 20:

դարձումը՝ հայ. *Հյուբշման*, ռուս. ГюбшманЕ Իսկ հուն. υ-ն, որը 5-րդ դարում հնչել է արդի ֆր. *ë*, գերմ. *ü* ձայնավորի նման (իրականում հ.-ե. **u* > հուն. υ (= *ü*) հնչյունական անցումը տեղի է ունեցել շատ ավելի վաղ⁹), Մ. Մաշտոցը տառադարձել է *իւ* երկբարբառով. հմմտ. հուն. Κυριακος > հ. հայ. *Կիւրակոս*, հուն. λαβυρινθος > հ. հայ. *Հաբիրինթոս* և այլն¹⁰։ Մյուս կողմից, Ղարաբաղի խոսվածքներում, որոնք ունեն քմային *ò* (*ü*) ձայնավոր, ռուս. *блюдо*, *индюшка* և նման բառերը արտասանվում են *բժըժդ*, *հժնթժղ*¹¹, այսինքն՝ ռուս. ю (*yu*) հնչյունակապակցությունը փոխարինվում է քմային *ò* (*ü*) ձայնավորով։ Բայց եթե ընդունենք, որ գրական արևմտահայերենում *սիւն* (*sün*), *հիւր* (*hür*), *ալիւր* (*alür*) և նման ձևերում <*yu*> երկհնչյունը քմային <*ü*> ձայնավորով փոխարինվում է օտարախոս արտաբերության ազդեցությամբ, այդ դեպքում անբացատրելի է մնում, թե ինչու նույն բանը տեղի չի ունենում նաև *-ութիւն* (*-ut'yun*) ածանցում և բառակցքի դիրքում՝ *իւր* (*zur*), *իւղ* (*yuð*) և այլն։ Մանավանդ որ այն լեզուները, որոնց արտասանական բազայի ենթադրյալ ազդեցությանը կարող էր վերագրվել արևմտահայերենում <*ü*> ձայնավորի առկայությունը (այն է՝ ֆրանսերենը, գերմաներենը և թուրքերենը), քմային <*ü*> ունեն նաև բառակցքի դիրքում։

Մեզ անհամոզիչ է թվում նաև այն տեսակետը, ըստ որի՝ արևմրտահայերենի քմային *իւ* (*ü*) ձայնավորը դիտվում է որպես բարբառներից գրական լեզվին անցած երևույթ։ Իհարկե, հ. հայ. *իւ* երկբարբառը արդի բարբառներում երեք կարգի փոփոխության է ենթարկվել՝ *իւ* > *ի*, *իւ* > *ու*, *իւ* > *ò* (*ü*)¹²։ Բայց հայտնի է նաև, որ հ. հայ. *իւ* > բբռ. *ò* (*ü*) հնչյունական զարգացումը բնորոշ է Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառներին¹³։ Մինչդեռ գրական արևմտահայերենի հիմքում ընկած Պոլսահայ բարբառում *իւ* > *ò* (*ü*)

⁹ Տե՛ս **П. Шантрен**, *Историческая морфология греческого языка*, М., 1953, с. 283, **Н. Rix**, *Historische Grammatik des Griechischen: Laut- und Formenlehre*, 2. Auflage, Darmstadt, 1992, S. 46:

¹⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց գրերը*, Ե., 1984, էջ 588, 586:

¹¹ Տե՛ս **Մ. Աղաբեկյան**, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 3, Ե., 2010, էջ 100:

¹² Տե՛ս **Հ. Մուրադյան**, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, *Հնչյունաբանություն*, Ե., 1982, էջ 189-193, հմմտ. նաև՝ **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 95-96:

¹³ Տե՛ս **Հ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 189:

փոփոխություն չի նկատվում. Պոլսահայ բարբառում հ. հայ. *իւ*-ի դիմաց բառասկզբում և *-ութիւն* ածանցի դեպքում առկա է *ի* ձայնավոր (*իւր* > *իր*, *մեծութիւն* > *մէնծութին* և այլն), *դ*-ից առաջ՝ *է* ձայնավոր (*գիւղ* > *քէղ*, *ծիւղ* > *ջէղ*), իսկ մնացած դեպքերում՝ *ու* ձայնավոր (*արիւն* > *արուն*, *հարիւր* > *հարուր*, *ձիւթ* > *ձութ*, *ձիւն* > *ձուն*, *աղբիւր* > *ախպուր*, *ալիւր* > *ալուր*, *հիւսել* > *հուսէլ* և այլն)¹⁴: Ուստի գրական արևմտահայերենի քմային *օ* (յ) ձայնավորի բարբառային ծագումը քիչ հավանական է: Մեր կարծիքով, գրական արևմտահայերենի *իւ* կապակցության երկակի արտասանությունը հ. հայ. *իւ* (ië) իջնող երկբարբառից հետագայում առաջացած *իու* (Çu) բարձրացող երկբարբառի օրինաչափ հնչյունական զարգացման արդյունք է՝ պայմանավորված դիրքային տարբերությամբ: Ի դեպ, *իու* (Çu) երկբարբառից հնչյունական տարբեր պայմաններում քմային <ü> ձայնավորի և <yu> երկհնչյունի առաջացումը տիպաբանական տեսանկյունից միանգամայն հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ երկբարբառները լեզվի պատմական զարգացման ընթացքում կարող են ոչ միայն մենաբարբառացման ենթարկվել, այլև տարրալուծվել երկու անկախ ձայնավորների, վերածվել *բաղաձայն* + *ձայնավոր* կապակցության և այլն¹⁵:

Ինչպես հայտնի է, հին հայերենի երկբարբառները հետագայում հայերենի բանավոր-խոսակցական բոլոր տարբերակներում համընդհանուր կերպով վերածվել են պարզ ձայնավորների: Հ. Մուրադյանը այդ մասին գրում է. §Այժմ չկա հայերենի մի բարբառ, որտեղ հին երկբարբառները պարզված չլինեն. ամենուրեք այժմ նրանց փոխարեն ունենք պարզ հնչյուններ: Այսպես՝ *աղ*-ի փոխարեն այժմ *ա* կամ *է* է, *իւ*-ի փոխարեն՝ *ու* (օ) կամ *ի*, *էա*-ի փոխարեն՝ *է* կամ *ա*, *աւ*-ի փոխարեն՝ *օ* կամ *ու* (զարգացած *օ*-ից) և այլն: Երկբարբառների դիմաց երկհնչյուններ ունեն միայն գրական լեզուները...¹⁶: Իսկ արդի գրական լեզուներում երկհնչյունների առկայությունը, ըստ Հ. Մուրադյանի, բացատրվում է նրանով, որ §երկբարբառների վերացմամբ և նրանց՝ պարզ ձայնավորների վերածվելու ընթացքին զուգահեռ, հին երկբարբառների մի մասը, գրական հին տեքստերի

¹⁴ Տե՛ս Հ. Աճառյան, *Քննություն Պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 30-31:

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Ե., 1971, էջ 442:

¹⁶ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 140-141:

բանավոր վերարտադրության ժամանակ, վերաարժեքավորվում է որպես երկինյուններ, և այդ արտասանությունն է, որ սկսում է օգտագործվել գրական լեզուների մեջ և ավանդաբար հարատևում է մինչև մեր օրերը¹⁷:

Մենք ընդունում ենք <yu> երկինյունային արտասանության առաջացման վերաբերյալ Հ. Մուրադյանի տեսակետը, բայց որոշ վերապահությամբ. պետք է ենթադրել, որ հետագայում հ. հայ. *յլ* (iĕ) իջնող երկբարբառը, նախքան երկինյունային արտասանությունն ձեռք բերելը, վերածվել է *յու* (Çu) բարձրացող երկբարբառի: Ըստ Մ. Աբեղյանի՝ սկզբնական <iĕ> իջնող երկբարբառը բարձրացող <Çu> երկբարբառի էր վերածվել դեռևս հին հայերենում: Սակայն Մ. Աբեղյանն իր այդ տեսակետը հաստատող որևէ փաստարկ չի բերում և, բացի այդ, բարձրացող <Çu> երկբարբառի և <yu> երկինյունի տարբերակում չի կատարում՝ երկբարբառային արտասանություն վերագրելով նաև արդի գրական հայերենին. ՏԲայց գրաբարում արդեն արտաբերության ուժն անցել է ՌԻ ձայնավորի վրա, ինչպես հաճախ լինում է, և ընկնող *ԻԻ* (iĕ) երկբարբառը դարձել է բարձրացող *ՅՌԻ* (Çu) երկբարբառ... Այս արտաբերությամբ էլ այս երկբարբառը գրաբարից մտել է նոր գրական լեզվի մեջ, ինչպես՝ Տալիւր¹, Տիւր¹, ... Տսիւն¹, որոնք արտասանվում են՝ ալյուր, յուր, ... սյուն¹⁸:

Մենք հակված ենք կարծելու, որ հ. հայ. *յլ* (iĕ) իջնող երկբարբառը *յու* (Çu) բարձրացող երկբարբառի է վերածվել համեմատաբար ավելի ուշ: Ինչպես հայտնի է, միջին հայերենի շրջանում *միւս* բառը մի շարք վկայություններում հանդիպում է *միուս* գրությամբ, և սովորաբար ենթադրվում է, որ տվյալ դեպքում *յու* կապակցությամբ արտահայտվում է <yu> երկինյունը¹⁹: Իրականում դժվար է հաստատապես ասել, արդյոք *յու* գրության դեպքում գործ ունենք <yu> երկինյունի±, թե± բարձրացող <Çu> երկբարբառի հետ, իսկ երկինյունային արտասանությունն ավելի ուշ է առաջացել: Հարկ է նշել, որ Ա. Այտընյանը արևմտահայ աշխարհաբարի նախաբաղաձայնական դիրքի *յլ* կապակցությանը *յու* հնչյունական արժեք է

¹⁷ Նույն տեղում, էջ 155:

¹⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁹ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. 1, Ե., 1972, էջ 104, Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 188:

վերագրում. §Ի ձայնաւորը նախընթաց *խ*իով մը (*իւ*) *իու* կը հնչէ՝ քանի որ հետը բաղաձայն մ'ունի. այսպէս. *իւր*, *իւրաքանչիւր*, *նիւթ*, *էութիւն*, *հարիւր*, *հիւսէլ*²⁰: Բիարկէ կարելի էր մտածել, որ ²⁰ՄԻԱՅ-ՄՅԱ *իու* տառադարձմամբ նկատի ունի ոչ թէ երկբարբառային <Շւ>, այլ երկհնչյունային <յւ> արտասանւոյթունը: Բայց դա քիչ հավանական է, քանի որ արևմտահայերէնի <յւ> երկհնչյունը ավանդաբար տառադարձվում է *էու* կապակցությամբ²¹: Բացի այդ, եթէ նկատի ունենանք, որ Պոլսահայ բարբառում գրական լեզվից փոխառյալ *բիւր* բառն արտասանվում է *փիյուր*²², այլ ոչ թէ *փէուր* (= *փյուր*), ապա այդ հանգամանքը նույնպէս թերևս անուղղակի կերպով վկայում է արևմտահայերէնի *իւ* կապակցության երբեմնի *իու* (Շւ) երկբարբառային արտասանւոյթան մասին:

Իու (Շւ) երկբարբառից քմային <ü> ձայնավորի առաջացման ժամանակագրության վերաբերյալ կարելի է որոշ ենթադրություն անել: Հայտնի է, որ գրական արևմտահայերէնում օտար բառերի քմային <ü> և <ö> ձայնավորները տառադարձվում են *իւ*-ի և *էօ*-ի միջոցով²³: Ա. Այտընյանը այդ մասին գրում է. §Ասկէ գաւտ՝ նոր յարմարագրութիւնն օտար բառերու ճշդագոյն հնչմանը համար ընդունած է *էօ* եւ *իւ* երկբարբառները, որ հայերէնէ օտար ձայներ են. գորօրինակ այս բառերուս մեջ. *Լըտոիւ. Պոիւնն. Պոիէօ... Լիւպէքք. Գէօրկէյ... եւ այլն*²⁴: Նկատենք, որ Ա. Այտընյանը մեջբերված հաստատում արդի հայերէնին խորթ է համարում ոչ թէ *իւ* երկբարբառը, այլ *իւ* կապակցությամբ տառադարձվող քմային <ü> ձայնավորը: Մինչդեռ հայերէն բառերի դեպքում նախաբաղաձայնական դիրքի *իւ* կապակցությանը նա, ինչպէս տեսանք, *իւ* (= *իու*) երկբարբառային արտասանւոյթուն էր վերագրում: Արդ, քանի որ Ա. Այտընյանը քմային <ü> և <ö> ձայնավորները հայերէնին խորթ է համարում, ապա դրանից թերևս կարելի է հետևեցնել, որ հին հայերէնից ժառանգված բառերի *իւ* կապակցւոյթունն այդ ժամանակ (19-րդ դ. 50-

²⁰ Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի*, Ե., 1987, մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 371:

²¹ Տե՛ս Թ. Գազանձեան, նշվ. աշխ., էջ 20, Թ. Զոլաքեան, նշվ. աշխ., էջ 6, Կ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 78-79:

²² Տե՛ս Զ. Աճառյան, *Քննություն Պոլսահայ բարբառի*, էջ 30-31:

²³ Տե՛ս Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան, նշվ. աշխ., էջ 42:

²⁴ Ա. Այտընյան, նշվ. աշխ., մաս (2-րդ)՝ Քերականութիւն..., էջ 346:

60-ական թթ.)²⁵ դեռևս քմային <ü> ձայնավորի արտասանություն չի ունեցել, այսինքն՝ *Հս (հու) բարձրացող երկբարբառ* > ü *քմային ձայնավոր* հնչյունափոխությունն ավելի ուշ է տեղի ունեցել:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ բառասկզբի դիրքում *հու* (Հս) երկբարբառը վերածվել է *բաղաձայն + ձայնավոր* կապակցության՝ <yu> երկհնչյունի, իսկ միջբաղաձայնական դիրքում մենաբարբառացման է ենթարկվել, կարծում ենք՝ այդ երևույթը տիպաբանական տեսանկյունից կարելի է համեմատել արդի բարբառներում հին հայերենի շեշտակիր *է (e)* և *ո (o)* ձայնավորներից առաջացած *իէ (ie)* և *ուօ (uo)* երկբարբառների հետագա նմանատիպ երկակի փոփոխության հետ²⁶: Միայն թե բառամիջում *հու* (Հս) երկբարբառի մենաբարբառացման դեպքում քմային <ü> ձայնավորն առաջացել է երկբարբառի բաղադրիչների առնմանական հնչյունափոխությամբ, ճիշտ նույն կերպ, ինչպես որոշ բարբառներում հ. հայ. *իւ >* բրբռ. *օ* (ü) հնչյունական զարգացման դեպքում: Իսկ *-ութիւն* ածանցի պարագայում Հս (*հու*) > ü հնչյունափոխությանը, ըստ երևույթին, խոչընդոտել է նախորդող վանկի ոչ քմային *ու (u)* ձայնավորի առկայությունը: Ի դեպ, հասկանալի է, որ բարբառներում նույնպես հ. հայ. *իւ* երկբարբառը *-ութիւն* ածանցի կազմում հաճախ սովորական միջբաղաձայնական դիրքից տարբեր հնչյունական զարգացում է ունեցել, որը, մեր կարծիքով, դարձյալ պայմանավորված է նախորդող վանկի *ու (u)* ձայնավորի առնմանական կամ տարնմանական ազդեցությամբ: Այսպես, Գորիսի և Հաղրութի բարբառներում բառամիջում սովորաբար տեղի է ունեցել *իւ >* *օ* (ü), իսկ *-ութիւն* ածանցի դեպքում՝ *իւ >* *ու* հնչյունական զարգացում²⁷: Համշենի բարբառում բառամիջում սովորաբար առկա է *իւ >* *ու*, իսկ *-ութիւն* ածանցի դեպքում՝ *իւ >* *ի* հնչյունափոխություն²⁸: Կաքավաբերդի և Կարճևանի բարբառներում *իւ* երկբարբառը բառամիջում սովորաբար դար-

²⁵ Նկատի ունենանք, որ Ա. Այտընյանի §Քննական քերականությունը՝ առաջին անգամ լույս է տեսել 1866 թ. Վիեննայում:

²⁶ Տե՛ս Մ. Ավետյան, Արդի բարբառներում հին հայերենի շեշտակիր *է* և *ո* ձայնավորների արտացոլման հարցի շուրջ. – *Պատմաբանասիրական հանդես*, Ե., 2014, 3, էջ 210-223:

²⁷ Տե՛ս Ալ. Մարգարյան, *Գորիսի բարբառը*, Ե., 1975, էջ 70-71, Ա. Մ. Պողոսյան, *Հաղրութի բարբառը*, Ե., 1965, էջ 34-35:

²⁸ Տե՛ս Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 39:

ձել է քմային ò (ü) ձայնավոր, մինչդեռ *-նլթհւն* ածանցի կազմում ունենք *հւ > ի* հնչյունափոխություն²⁹:

Այսպիսով, վերը կատարված քննության արդյունքում մենք հանգում ենք այն եզրակացության, որ գրական արևմտահայերենում *հւ* կապակցության երկակի արտասանությունը հ. հայ. *հւ* (iĕ) իջնող երկբարբառից հետագայում առաջացած *հու* (Çu) բարձրացող երկբարբառի օրինաչափ հնչյունական զարգացման արդյունք է՝ պայմանավորված դիրքային տարբերությամբ. *հու* (Çu) բարձրացող երկբարբառը, որը բառասկզբի դիրքում վերածվել է <yu> երկհնչյունի, միջբաղաձայնական դիրքում (բայց ոչ *-նլթհուն* ածանցի կազմում) երկբարբառի բաղադրիչների առնմանական հնչյունափոխությամբ մենաբարբառացման է ենթարկվել՝ *հու* (Çu) > (ü): *հու* (Çu) բարձրացող երկբարբառը <yu> երկհնչյունի է վերածվել նաև *-նլթհուն* ածանցի կազմում, քանի որ տվյալ դեպքում քմային <ü> ձայնավորի առաջացմանը խոչընդոտել է նախորդող վանկում ոչ քմային *ու* (u)-ի առկայությունը:

Sargis Avetyan – On the question of the Manifestation of the Old Armenian Diphthong *հւ* in Literary Western Armenian. – According to the most common view, the preconsonantal *հւ* in Modern Western Armenian is realized as a sequence <yu> word-initially and in the suffix *-նլթհւն*, and as a palatal vowel <ü>, otherwise. However, the appearance of the palatal <ü> in Literary Western Armenian is usually attributed to the influence either from some Armenian dialects, or from foreign languages.

An attempt is made to show that neither the palatal <ü> in some Armenian dialects nor the alleged foreign influence could have been the possible source of Literary Western Armenian <ü>. It seems more likely that the rising diphthong *հու* (Çu), which goes back to Old Armenian falling diphthong *հւ* (iĕ), was monophthongised to the palatal vowel <ü> between consonants (except in the suffix *-նլթհուն* where the appearance of the palatal <ü> was avoided due to the existence of the non-palatal vowel <u> in

²⁹ Տե՛ս Ն. Մուրադյան, *Կարավաթերդի բարբառը*, Ե., 1967, էջ 63-64, Ն. Մուրադյան, *Կարճնանի բարբառը*, Ե., 1960, էջ 47:

the preceding syllable), whereas word-initially it changed to the sequence <yu>. Interestingly, both developments have typological parallels.

Саргис Аветян – К вопросу о проявлении древнеармянского дифтонга *hɪ* в литературном западноармянском языке. – Согласно более распространённому мнению, предконсонантный *hɪ* в современном литературном западноармянском в начале слова и в суффиксе *-nɪɾhɪɫ* произносится как <yu>, а в остальных случаях – как <ü>. Однако появление данного палатального гласного в литературном западноармянском обычно приписывается влиянию или некоторых армянских диалектов, или других языков.

Делается попытка показать, что ни армянский диалектный <ü>, ни предполагаемое иноязычное влияние не могли быть возможным источником палатального <ü> в литературном западноармянском. Кажется более вероятным, что восходящий дифтонг *hɪɫ* (Çu), происходящий от древнеармянского нисходящего дифтонга *hɪ* (iĕ), в позиции между согласными (но не в суффиксе *-nɪɾhɪɫ*, где появлению палатального <ü> препятствовало наличие непалатального гласного <u> в предшествующем слоге) монофтонгизировался в палатальный гласный <ü>, а в начале слова превратился в звукосочетание <yu>. Примечательно, что обе фонетические развития имеют типологические параллели.

ԱԾԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ.
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

Հայտնի է, որ արդի հայերենի, ինչպես նաև գրաբարի բառապաշարը ուսումնասիրված է տարբեր հայեցակետերից, տարբեր նպատակադրումներով ու տարբեր ընդգրկումներով: Ինչ վերաբերում է հայ բարբառների բառագիտությանը, ապա զգալի արդյունք կա հատկապես բառապաշարային խնդիրների ուսումնասիրության հարցում, իսկ բառակազմական խնդիրները մասամբ են միայն քննության առարկա դարձել: Ինչպես հայտնի է, ապագա բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում¹ հայերենի բարբառների բառապաշարի տարածքային տարբերություններին որոշակի տեղ է հատկացված, ինչը լուրջ համեմատություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Բառակազմական խնդիրներն այդ ծրագրում հարցման հատուկ առարկա չեն դարձել, սակայն բառանվանողական նյութերի գրանցումներում կարելի է գտնել որոշ տեղեկություններ նաև բառակազմության վերաբերյալ: Այդ ամենին եթե հավելենք նաև բարբառագիտական մենագրություններում, ազգագրական- բանահյուսական ուսումնասիրություններում, հայ ժողովրդական հեքիաթներում առկա նյութերը, կարելի է ասել, որ հայերենի բարբառների բառակազմական իրողություններն ուսումնասիրելու համար ունենք հուսալի շտեմարան:

Բառագիտությանը վերաբերող ուսումնասիրություններում մշտապես նշվում է վերջածանցների առատությունը նախածանցների համեմատ, կամ, ասենք, որոշ ածանցների գործառական բարձր հաճախականությունը: Հայտնի է, որ հայերենն ի սկզբանե քիչ նախածանցներ է ունեցել: Կարելի է ասել, որ համահայերենյան գործառույթ են դրսևորում *ան-* և *չ-* ժխտական նախածանցները:

Իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակա-

¹Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977:

շրջան»² աշխատության մեջ ակադ. Գ. Զահուկյանը բառակազմական իրողությունները քննարկելիս նախաձանցներին վերաբերող հատվածում հետևյալ միտքն է հայտնում. «Այն հանգամանքը, որ իրանական փոխառությունների մեջ նույնպես հանդիպում են **ան-** ժխտականով կազմություններ՝ ձայնավորով սկսվող հիմքերից առաջ (բաղաձայններից առաջ հանդես է եկել **ան-**ի **ա-** տարբերակը. հմմտ. **ակամայ**), հիմք է տալիս իրանական համատիպ կազմությունների հայանալու, իբրև հայկական կառույցներ ընկալվելու և, սրա հետ կապված, **ան-**ի բառակազմական դերի աշխուժացման համար: Այս առումով իրանական ձայնավորակիր հիմքերի դեպքում դժվար է որոշել **ան-** ժխտականով կազմությունների՝ պատրաստի կերպով փոխառված, թե հայկական հողի վրա հանդես եկած լինելու հարցը»³: Ընդ որում՝ Զահուկյանը հակված է դասական հայերենում առկա նմանատիպ ձևերը հայերենի հնագույն շրջանի հետ կապելու: Ապա խոսելով **ան-** նախաձանցի մասին՝ գտնում է, որ այն ամենագործուն և արդյունավետ նախաձանցն է հայերենի բոլոր փուլերում և շարունակում է նորանոր կազմություններ տալ առայսօր:

Մեր փնտրտուքը հայերենի բարբառներում բացահայտում է հետևյալը: Թե՛ արևելյան և թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում **ան-** նախաձանցը ամենագործուն և ամենամեծ հաճախականություն դրսևորող նախաձանցն է: Առանձնապես գործածական են որևէ բանի առկայությունը ժխտելու իմաստով նախաձանցավոր ձևերը՝ **անտուն**, **անտեղ**, **անհեղ**, **անմեղ**, **անհեղումեղ**, ինչպես նաև բայական հիմքերով կառույցները: Ընտրողաբար օրինակներ ներկայացնենք տարբեր խմբակցություններում ընդգրկված բարբառներից: Արևմտյան խմբակցության հարավ-կենտրոնական բարբառախմբի մեջ մտնող Մշո բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ բերվող բանահյուսական նյութերում հաճախադեպ են **ան-** նախաձանցով բառաձևերը, ինչպես.

Անըրվա բ' ուռտ, անեպէլ միս, անհալէլ յէղ մարտ ուր իրզան նըշանց չիդս⁴: Համարժեք օրինակներ բերենք նաև Արևելյան

² Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 357:

⁴ Տե՛ս Ս. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 212:

խմբակցության մեջ մտնող Ղարաբաղի բարբառով.

Անպէնք գիրեզի պէն կանէ:

Անփօշ վարթ կրնի , անփօշ մարթ չինիլ⁵:

Խոսքի շղթայում կրկնաբանությունից խուսափելու համար **ան-** ժխտականով բառին զուգահեռ գործածվում է բառին ժխտական իմաստ հաղորդող **առանց** նախադրությունը, ինչպես.

Անշօն շէն ա տէսալ, առանց փաղ շօռ ա կյամ:

Ժխտական ածանցով բառակազմական հետաքրքիր օրինակներ փնտրելիս առանձնացրել ենք ձայնավորով սկսվող **աղ** բառի **ալ** զուգաձևության հետ միանալիս առաջացած հետաքրքիր և առաջին հայացքից տարօրինակ թվացող՝ **անալի-անլի** և դրափոխությամբ՝ **ալանի-ալնի** բառաձևերը: Բառիմաստը երկու դեպքում էլ նույնն է՝ **աղը պակաս** կամ **առանց աղի** : Առաջին ձևն առկա է արևելյան բարբառներում, իսկ երկրորդը՝ արևմտյան: Բերենք օրինակներ.

Ալնի ըր, խանձրահամ լը վըրէն դըվից (Մասունի Սպաղանք գ. խոսվածքով):

Աղի-անալին չէմ ջօգըմ (Օրևանի Նոքի խոսվածքով):

Անտիոքի բարբառախմբի Քեսաբի բարբառում գործառող հետաքրքիր ձև է **ան+ասուն** հայտնի իմաստով գործառող **էսսէօն** բառանվանումը: Այս բառում անհնարին է գտնել **ան-** նախաձանցի հետքը:

Կարնո բարբառի Շիրակի տարածքի խոսվածքներով գրառված բանահյուսության մեջ *դժոխք* իմաստով գործառող **հ'անատագ** բառը սովորաբար գործածվում է **սէվ հ'անատագ** կայուն բառակապակցության կազմում՝ *անդունդ , վիհ* բառիմաստով: Շատ տարածված է անեծքներում՝ *Սէվ հ'անատագն էրտաս, չըդառնաս*: Ակնհայտ է բառի **ան+հատակ** կազմությունը՝ այդ տարածքի խոսվածքներին բնորոշ հավելական ձայնեղ **հ**-ով:

Ան- ածանցը բառին ժխտական իմաստ է հաղորդում նաև փոխառյալ արմատին ավելանալով: Իսկ բարբառները, ինչպես գիտենք, բառային փոխառությունների դիմում են գործուն բառապաշարում պակասող բառերը լրացնելու, ավելի ճիշտ՝ իմաստային նրբերանգներ արտահայտելու նպատակով: Ազգագրական տարբեր գոտիներն ներկայացնող ժողովրդական հեքիաթներում համատա-

⁵ Տե՛ս Մ. Պետրոսյան, *Արցախյան առածանի*, Ստեփանակերտ, 1999, էջ 4:

րած են *անբախտ, անճար, անդարդ,անթասիր* և նմանատիպ այլ ածականներ:

Ան- ժխտական նախածանցով հայերենի բարբառներում հաճախադեպ են նաև դիպվածային բառաձևերը՝ որևէ բանի կամ հատկանիշի առկայությունը ժխտող: Բերենք օրինակ Արցախի բանահյուսական պատառիկներից .

Անդօնաղ տօնը ավերակ տօն ա:

Նախածանցների սակավությամբ կարելի է պատճառաբանել իրանական լեզուներից փոխառյալ *բէ* ժխտական նախածանցի լայն գործառույթը հայերենի բարբառներում, ինչպես, ասենք, Արարատյան բարբառի խոսվածքներում՝ *բէխաբար, բէքէֆ, բէբախտ, բէխէր, բէղօվիպօ, բէնամուս, բէսամօ* և այլն: Սակայն այդ *բէ* նախածանցը միայն փոխառյալ արմատներին չէ , որ ավելանում է բառի իմաստը ժխտելով: Նույն կերպ բնիկ հայերեն արմատներին է կցվում, ինչպես, ասենք, հետևյալ օրինակներում՝ *բէնուշ, բէուսում, բէշրնօրք* և այլն⁶: Այդ բէ ժխտական ածանցով կրկնավոր բարդություններ կազմելը բնորոշ է հայերենի բարբառներին: Բերենք օրինակ Սշո գավառի Մկրագոմ գյուղի խոսվածքով՝

Վախտ-բէվախտ գ՛իկեր մըր տուն:

Հաճախականության տեսակետից հաջորդ տեղում չ- նախածանցն է, որի ձևաբանական արժեքը եթե ժխտական խոնարհմանը մասնակցելն է, ապա բառակազմական արժեքը ածականներից և բայահիմքերից ածական կազմելն է, ինչպես՝ *չբեր ,չտես, չհաս,չկամ* և այլն: Բերենք մեկ օրինակ Վանի բարբառով գրառված պարերգից.

Խօրած վարթապէտ կասի՝ չըխասի:

Թե խաս,թե չըխաս՝ մօյ ձիյ կաբուլ ի:

Նախագրային շրջանի հայերենի բառապաշարը քննելիս ակադ. Գևորգ Զահուկյանը վաղնջահայերենից եկող նախածանցներից *տ-* ի գործառույթի մասին այն միտքն է հայտնում, որ այդ ժխտական ածանցն աստիճանաբար անարդյունավետ է դարձել, ուստի և դուրս մղվել կամ գործածվել է *ան-*ին զուգահեռ՝ *տգեղ-անգեղ,տհաս-անհաս, տքնիմ-անքուն* և այլն: Ընդ որում՝ ածանցները

⁶ Տե՛ս Ռ.Սարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե.,1989,էջ 99:

Ժամանակի ընթացքում կարող են նորից կենդանանալ կամ կորչել ⁷:

Գրաբարի բառապաշարին նվիրված ուսումնասիրության մեջ անվանի լեզվաբան Լ.Հովհաննիսյանը, առանձնացնելով ծագումնաբանական շերտերը, հայերենի բնիկ կամ հնդեվրոպական բառաշերտը որակում է իբրև հայերենի բառագանձը, որի ուսումնասիրության հարցում ամենամեծ ավանդը ակադ. Գևորգ Ջահուկյանինն է: Այա ներկայացվում է գրաբարի փոխառյալ բառապաշարը՝ խորությամբ քննելով հատկապես իրանական փոխառությունները՝ նշելով, թե ճիշտ չէ օտար ձևային հայերեն ձևային կառույցը փոխառություն համարելը, եթե օտար ձևային անկախ կիրառություն չունի⁸: Նշենք, որ ինչպես Ջահուկյանը, այնպես էլ Լ. Հովհաննիսյանը **ան-** նախածանցը հայաբանություն են համարում:

5-րդ դարում վկայված իրանական փոխառություններում **դժ-** նախածանցով բառերիը հիմնականում եղել են բարձր ոճի բառեր և բարբառներում չեն գործառնել՝ **դժգոյն, դժպատեհ, դժնդակ**:

Barnasyan Jemma – Affixation in Armenian Dialects: the Prefixes. - As in the Armenian language in general, among the word-formative means affixation and stem-composition was constantly used in Armenian dialects as well. All-Armenian language reality is the plenitude of suffixes as compared with prefixes. We've gathered precious information from Armenian national folklore and dialectological monographs concerning affixations that have high frequency of usage in Armenian dialects.

Барнасян Джемма – Аффиксация в армянских диалектах: Префиксы. - Как в армянском языке вообще, в армянских диалектах из словообразовательных средств постоянно употребляли аффиксацию и словосложение. Общеармянская языковая действительность – изобилие суффиксов по сравнению с префиксами. Из армянского народного фольклора и диалектологической монографий мы собрали ценную информацию об аффиксациях, проявляющих высокую частоту употребления в армянских диалектах.

⁷ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 358:

⁸ Տե՛ս Լ.Հովհաննիսյան, *Գրաբարի բառապաշարը*, Ե., 2006, էջ 46:

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԲԱՌԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏԵՔՍՏՈՒՄ**

Տեքստի լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 60-ական թվականներին: Այն պայմանավորված է լեզվաբանության զարգացման ներքին գործոններով: Սկզբնական շրջանում ուսումնասիրվում էին տեքստը, նրա կառուցվածքը, լեզվական միջոցները, կապակցված տեքստ ստեղծելու օրինաչափությունները: Տեքստաբանության մեջ կան տեքստի ըմբռնման տարբեր կարծիքներ: Միասնական կարծիք չկա նաև տեքստի նվազագույն միավոր ընդունելու և անվանելու հարցում:

Այսպես՝ Մ.Տիցման տեքստը սահմանում է որպես նախադասությունների ցանկացած հաջորդականություն (S_1 --- S_n), արտահայտված հաղորդակցային իրադրությունում, և նախադասությունից նրա տարբերությունը տեսնում է հետևյալ կերպ.

1) տեքստերը կարող են բնութագրվել որպես գեղարվեստական,

2) մի շարք տրամաբանական գործողություններ կարող են կատարվել միայն նախադասություններով (негация),

3) միայն տեքստերն ունեն պատմողական (нарративную) կառուցվածք,

4) շատ իմաստաբանական միկրոկառուցվածքներ հնարավոր են միայն տեքստում: Տեքստում լեզվաբանությունն ուսումնասիրում է ընդհանուր իմաստի ստեղծման և վերականգնման միջոցները, որոնք գտնվում են առանձին նախադասությունների շրջանակում¹:

Գ. Զահուկյանը սկզբնապես լեզվի մակարդակները նույնպես սահմանափակում էր նախադասությամբ, գտնելով, որ տեքստին բառիս բուն իմաստով հատուկ չեն այնպիսի կարգեր, որոնք հանդես չեն գալիս նախադասության մակարդակում: Սակայն հայերենի կառուցվածքի բոլոր մակարդակների վերլուծությունը բերեց այն

¹ Հստ **Գ.Զահուկյանի**՝ *Прологомены к субстанциональной лингвистике* գրքի, Մ., 1999, էջ 288:

եզրակացության, որ լեզվական կարգերը (կատեգորիաները) տարբեր չափերով հանդես են գալիս բոլոր մակարդակներում, և այդ առումով տեքստի մեջ այդ կարգերի արտահայտությունը ավելի լիակատար բնույթ է կրում²:

Գ. Զահուկյանը (և ոչ միայն) տեքստը հասկանում է որպես բարձր մակարդակի, երկպլանային միավոր՝ անկախ նրանից արտահայտության պլանը ինչ միջոցներով է իրականացվում՝ գրավոր, բանավոր, կինետիկական և ինչպիսի գործառական ոլորտի է այն վերաբերում³:

Տեքստաբանության ժամանակակից ուղղություններում տրվում է տեքստի հետևյալ սահմանումը.

«Տեքստը համակարգված կառուցվածքային բարձրագույն ձև է, որ բովանդակում է հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային (կոմպոզիցիոն), իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) միասնություն, վերամշակված է համապատասխան լեզվի գործառական և ոճական նորմերի»⁴:

Ինչպես նշեցինք, միակարծություն չկա նաև տեքստի նվազագույն միավորի առանձնացման և անվանման մեջ: Ոմանք անվանում են պարբերություն (ուրիշները, պարբերություն ասելով, ի նկատի ունեն միայն գրավոր արտահայտությունը), մյուսները՝ գերնախադասական (գերֆրագային՝ ՇՓԵ) միասնություն, շարահյուսական բարդ ամբողջություն, միկրոտեքստ, դիսկուրս և այլն:

Գ. Զահուկյանը տեքստի նվազագույն միավորը համարում է պարբերությունը (հինույթ): «Հինույթի կամ հինույթների մեկ միասնական ամբողջությունը, որը հանդես է գալիս որպես ավարտուն տեքստ (հենք)՝ լիահինույթ»⁵:

«Գերնախադասական (գերֆրագային՝ ՇՓԵ) միասնություն, շարահյուսական բարդ ամբողջություն, միկրոտեքստ, պարբերություն), խոսքի հատված՝ երկու և ավելի ինքնուրույն նախադասությունների հաջորդականությամբ, միացած թեմայի ընդհանրու-

² Գ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 63:

³ Г.Б. Джаукян, *Прологомены к субстанциональной лингвистике*, М., 1999, էջ 287:

⁴ В.А. Маслова, *Современные направления в лингвистике*, М., 2008, էջ 27:

⁵ Գ. Զահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 63:

թյամբ՝ իմաստային դաշտում: Այն կարող է համընկնել պարբերության հետ, կարող է՝ ոչ»⁶:

Այժմ արդյունավետ կերպով քննարկվում են կապակցված տեքստի զանազան տեսակներն ու միջոցները (տրամաբանական, գուգորդական և այլն), որոնցում «կապակցման գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են: Սրանք կապում են գերնախադասական (գերֆրագային) միասնությունների ավելի մեծ հատվածներ, պարբերություններ և այս պլանով ձեռք են բերում ներտեքստային կապի (կոգեզիայի) կարգավիճակ»⁷:

Նախադասությունների կապակցման բառական միջոցներ են շաղկապները, շաղկապական բառերն ու բառակապակցությունները, որոնք նաև տեքստի բաղկացուցիչների կապակցման միջոցներ են: Այս դերով հանդես են գալիս նաև նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից դերանունները, շատ գոյականներ, ածականներ, մակբայներ և այլն, տարբեր նախադասություններում մեկ ընդհանուր անդամը, որոնք, բացի նախադասության մեջ կատարած իրենց շարահյուսական դերից, ունեն կապակցական արժեք՝ հարաբերության մեջ մտնելով տեքստ կազմող նախադասությունների հետ (վերջիններիս քննությունը մեր նպատակից դուրս է):

Դրանք են՝

ա) համադասական շաղկապները (և, ու, բայց, սակայն, իսկ և այլն),

բ) ստորադասական շաղկապները (որ, որովհետև, որպեսզի և այլն),

գ) շաղկապական բառերը և կապակցությունները (ինչ վերաբերում է, այսպիսով, այսպես ուրեմն, օրինակ և այլն):

Այս տեսանկյունով դիտարկենք Մերուժան Սիմոնյանի «Հուր-հուր թիթեռի պատմությունը» գրքից հետևյալ հատվածը.

«Անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը (1)...

Հուր-հուրի աշխարհ գալուց դեռ շատ առաջ մասրաքոլի մայր արմատը խոր թաղվել, ճյուղավորվել էր բլրի սրտում (2): Ժամանակ

⁶ St' u <http://Hapemark-narod.ru/les/435a.html>, *Лингвистический энциклопедический словарь, Сверхфразовое единство*:

⁷ **И.Р.Гальперин**, *Текст как объект лингвистического исследования*, М., 1981, էջ 78:

անց նրա արմատները հասունացել, ամենքն արդեն ինքն իր հերթին ճյուղավորվել, սնում էին մասրաքուր (3):

Որ մասրաքուր գարնան շեմին շղարշաթև, թափանցիկ, ծաղկազօծ է դառնում, մայր արմատի և նրա որդոց շնորհիվ է (4): Մա աշխարհի վրա այնքան հայտնի իրողություն է, որ այս մասին, թվում է, խոսելն անգամ ավելորդ է (5): *Բայց արի ու տես*, որ հայտնի իրողություններից զատ, աշխարհում կա նաև նախախնամություն (6)...

Եվ նրա կամոք՝ անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը, եղել էր *նրա կամոք՝* և որդի արմատը մատնվել էր ծաբավի, տապի, կարծրատու միջատների աղմուկ աղաղակին ու հալածանքին (7): *Նրա կամոք* արդեն որքան ժամանակ էր որդի արմատը լուռ համբերությամբ տանում էր հալածական գոյությունը (8):

Եվ օրը հասավ՝ որդի արմատը տեսավ, որ անձնատուր է լինում ու ձայնեց անգոր (9):

Երրորդ պարբերության 4-րդ նախադասությունը նախորդի հետ կապված է *որ* շաղկապով՝ ստորադասական հարաբերությամբ: 5-րդ նախադասությունը *սա* ցուցական դերանվամբ՝ փոխարինման բառով է կապակցվում նախորդ նախադասության հետ: 6-րդ նախադասությունը *բայց արի ու տես* ներհակական շարահյուսական կառույցով է կապակցվում նախորդի հետ՝ արտահայտելով հավելական հարաբերություն: Չորրորդ պարբերությունը *և* միավորական շաղկապով և *նրա կամոք* փոխարինման բառով է կապվում երրորդ պարբերության 6-րդ նախադասության հետ, իսկ *անձրևաջուրը սրբել տարել էր բլրակի հողը* կրկնության միջոցով կապակցվել է առաջին պարբերություն-նախադասության հետ: 8-րդ նախադասությունը *նրա կամոք* բառակապակցության կրկնությամբ է կապված 7-րդ նախադասության հետ: Հինգերորդ պարբերությունը *և* միավորական շաղկապով է կապվում չորրորդ պարբերության հետ՝ արտահայտելով համադասական հարաբերություն: Ինչպես տեսնում ենք, պարբերությունը կազմող նախադասությունների կապն ավելի սերտ է, քան պարբերությունները կապակցող կապի միջոցները:

Բերենք ևս մի օրինակ Մերութան Սիմոնյանի ստեղծագործություններից: «Սև աքլորականչի համաստեղությունը» ժողովածուի

մանրապատումներից մեկում գրված է. «*Երբ* եկա այստեղ, ինչ-որ բան առջևում էր, անհայտությամբ լի: Հիմա անցյալ է, հիշողություն, իսկ առջևում կրկին նույն անհայտությունն է: Դեռ որքան մարդ կգա ծովափնյա այս փոքրիկ գյուղը:

Բսկ ծովն օր ու գիշեր շարունակ ջնջելու է կարմիր ավազների հուշերը»:

Պարբերությունը սկսվում է ստորադաս նախադասությամբ, որը ժամանակային հարաբերությամբ կապված է համադաս բաղադրիչներով նախադասությունների հետ: Հակադրությունն ընդգծելու նպատակով պարբերությամբ առանձնացված է *իսկ ծովն օր ու գիշեր շարունակ ջնջելու է կարմիր ավազների հուշերը* համադաս բաղադրիչով նախադասությունը, որն սկսվում է *իսկ* ներհակական շաղկապով: Այս երկու զուգորդվող պատկերացումները (հիշողություն, անհայտություն) կապվում են հոգեբանական հարաբերությամբ, որին ներհակական հարաբերությամբ կապվում է *իսկ ծովը* համադաս բաղադրիչով նախադասությունը:

Մի հատված էլ բերենք Ս. Աբրահամյանի «Ժամանակակախից գրական հայերեն» գրքից:

Շատ ինքնատիպ է թվականների կազմությունը (1): *Եթե* նկատի ունենանք, որ ամեն մի թիվ մի թվական է, ապա կստացվի, որ որքան թիվ է հնարավոր կազմել, այնքան էլ թվական կա (2): *Բսկ* հնարավոր թվերի քանակն անսահմանափակ է (3): Եթե նկատի ունենանք քանակականներից կազմվող մյուս թվականները նս, ապա պարզ կդառնա, որ սահմանափակ քանակությամբ արմատներով ու ածանցներով կարելի է կազմել անսահմանափակ թվով թվականներ (4): *Այսպիսով* միլիոնավոր ու միլիարդավոր թվականները կազմվում են արմատական թվականների տարբեր դասավորություններով (5): Ուրիշ ոչ մի խոսքի մասի հատուկ չէ այսպիսի ազատ կազմությունը (6):

Երկրորդ նախադասությունը 1-ի հետ կապված է պայմանի հարաբերությամբ՝ *եթե* շաղկապով: 3-րդ նախադասությունը ներհակական հարաբերությամբ է կապված 2-րդ նախադասության հետ՝ *իսկ* շաղկապով, իսկ 4-րդ նախադասությունը պայմանի հարաբերությամբ է կապված 3-րդ նախադասության հետ՝ *եթե* շաղկապով: *Այսպիսով* շաղկապական բառով են կապվում նախորդ նախադա-

սությունների հետ 5-րդ, 6-րդ նախադասությունները՝ արտահայտելով ընդհանրացման կամ հետևության հարաբերություն:

Այս առումով քննենք «Ավանգարդ» թերթից բերված հոդվածներից հետևյալ հատվածները.

«Իրական կոչումը ի վերուստ է տրվում (1): *Ու թե* նվիրյալն էս այդ կոչումի, ու մեծ է վաստակդ՝ գնահատանքը չի ուշանում (2): *Իսկ* ամենաանաչառ գնահատանքը ճանաչումն է, համաժողովրդական սերն ու վստահությունը (3):

Այս ամենի առջև սոսկ պայմանական են մյուս տիտղոսները (4) (Ավանգարդ, 11.6.2015):

2-րդ նախադասության *ու թե* բաղադրյալ շաղկապի *թե*-ի պայմանական հարաբերություն արտահայտելը թուլացնում է *ու* շաղկապի միավորական իմաստը: 3-րդ նախադասությունը՝ *իսկ* համադասական շաղկապով, ներհակական հարաբերությամբ է կապված 2-րդ նախադասության հետ: Երկրորդ պարբերությունն սկսվում է *այս ամենի* դերանվանական (փոխարինման) կապով, որը հանդես է գալիս իր շարահյուսական պաշտոնով, որի բովանդակությունն արտահայտված է նախորդ պարբերությունում: Նրանով կապակցվում են երկու պարբերությունները:

«.....Բացակայում են ՀԵ, ՂԲ, ՂԳ դավանաբանական խոշոր գլուխները (1): *Օրինակ*՝ Վ. Գևորգյանի թարգմանության մեջ ՂԳ-ի քսանչորս ենթագլուխներից ներառված է երեքը (2): *Իսկ* ՂԴ և ՂԵ գլուխները ամբողջական չեն ներառվել (3): *Եվ* նույն պատճառով երկու խոշոր թարգմանիչների մոտ էլ դավանաբանական ենթագլուխներ են պակասում ԼԳ և ԼԴ գլուխներից (4):

Եվ նշածս երկու խոշոր թարգմանիչները ստիպված էին տուրք տալ, որպեսզի Մատյանը կարողանային լույս աշխարհի հանել, թեկուզև պակասով, թեկուզև «պոեմ» անվան տակ, ինչը քիչ հարիր է կենդանի աղոթամատյանին (5): *Այս առումով* Խերանյանի թարգմանությունը դավանաբանությամբ առողջ ու լուրջ է և հավատարմատար (6): Գևորգյանը, ցավոք, Մատյանը աղոթամատյան չէր համարում, այլ ընդունում էր միայն՝ որպես հանճարի արտահայտություն (7): *Այնուամենայնիվ*, պիտի խոնարհվել այն քաջության առաջ, որ այս թարգմանիչները գործեցին՝ բանականորեն այդ խանգարված ժամանակներում (8): *Թեկուզև*՝ ոչ ամբողջականորեն,

թեկուզ «պոեմ» անվան տակ՝ լույս աշխարհի հանեցին հավատաց-
յալի բալասան այս սքանչելի հավատի ոսկին (9):

*Արդ, ընթերցենք ու վերընթերցենք Նարեկը՝ անկեղծ խոստո-
վանությամբ մաքրելով մեր հոգիները և ուժ գտնենք՝ գեթ այդուհետ
գերծ մնալու աշխարհիկ մեղքերից, որոնք մարդու հոգին են սպա-
նում (10) (Ավանգարդ, 11.6.2015):*

Տեքստի 2-րդ նախադասությունը *օրինակ* շաղկապական բա-
ռով է կապակցվում 1-ին նախադասության հետ՝ արտահայտելով
մասնավորման հարաբերություն: 3-րդ և 4-րդ նախադասությու-
նների *իսկ, և* շաղկապների կապակցական դերի մասին նախորդ
օրինակներում խոսել ենք:

Եվ նշածս շաղկապական բառով 2-րդ պարբերությունը կապ-
վում է 1-ին պարբերության հետ՝ արտահայտելով միավորական
հարաբերություն: 6-րդ նախադասությունը *այս առումով* կապակ-
ցությամբ կապ է ստեղծում 5-րդ նախադասության հետ և ցույց
տալիս երկու թարգմանիչների թեկուզ պակասով, պոեմ անվան
տակ Մատյանի լույս աշխարհի հանելը, հետևաբար պատճառի
պարագա է: 8-րդ նախադասությունը *այնուամենայնիվ* զիջական
շաղկապով է կապակցվում 7-րդ նախադասության հետ՝ արտահայ-
տելով զիջական հարաբերություն: *Թեկուզ* զիջական շաղկապով է
կապակցվում 9-րդ նախադասությունը 8-րդ նախադասության հետ՝
արտահայտելով նույնպիսի հարաբերություն:

Հոդվածագիրը, այլ հարցի մասին խոսելով, ավելի մեծ անցում
է կատարում՝ օգտագործելով *արդ* շաղկապական բառը, որով
ներտեքստային կապ է ստեղծվում նախորդ պարբերությունների
հետ: Այս շաղկապական բառը հատուկ է գիտական ոճին:

Բերենք մի հատված արտգործնախարար Է. Նալբանդյանի
բրազիլական «Էստադաո» թերթին տված հարցազրույցից:

«Մենք կարծում ենք, որ բոլոր հարցերը պետք է կարգավորվեն
երկխոսության, բանակցությունների և ոչ թե ուժի կիրառման, այդ
թվում՝ տնտեսական հարկադրանքների միջոցով:

Ինչ վերաբերում է սփյուռքին, Ռուսաստանում ունենք մեծ
հայկական (փիս,՝ հայկական մեծ) համայնք՝ մոտ 2,5 միլիոն մարդ:
Ինչպես նաև Ուկրաինայում բնակվող մոտ 500 հազար հայեր
ունենք» (ՀՀ, 8.7.2015):

Ներտեքստային կապի միջոց է նաև շաղկապի, շաղկապական բառի ու նախադասության (նախադասությունների) կրկնությունը: Այս առումով քննենք Վ.Դավթյանի «Անկեզ մորենի» բանաստեղծությունների շարքը, որ իր ծննդավայրի և կենսագրության մասին է: Նախերգանքն սկսվում է. «....*Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում*, Իմ ցավի մեջ ու հույսի կապույտ աստղեր են կաթում» և ավարտվում՝ «....*Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում*, Այդ աստղային պատրանքից ցավիս մեջ ցավ է կաթում» տողերով: Այս բարդ նախադասությունը կազմված է երկու համադաս բաղադրիչով նախադասություններից և մեկ բաղադրիչ ստորադաս նախադասությունից, որը ժամանակային հարաբերությամբ է կապված նախորդ նախադասության հետ: Բարդ նախադասությունը՝ *և* շաղկապով և կրկնությամբ, նախերգանքի վերջը կապում է սկզբի հետ, միայն թե այս անգամ բանաստեղծը «կոպերը փակելիս ցավի ու հույսի մեջ կապույտ աստղեր կաթալու աստղային պատրանքի» փոխարեն նրա «ցավի մեջ ցավ է կաթում»: Ներտեքստային նույնպիսի կապակցման միջոցի ենք հանդիպում Վ. Դավթյանի «Օուխ ծխանի» պոեմում, որտեղ պոեմի վերջը և բնաբանը կապված են իրար հետ *և* շաղկապի և բարդ համադասական նախադասության կրկնության միջոցով: Այն կազմված է երկու համադաս բաղադրիչներով նախադասություններից, որոնք արտահայտում են միավորական հարաբերություն:

Եվ խզշոմ էր, խզշոմ Արտաշատի բարդին:

39

որպես մեկ ամբողջության, մասերի բնութագրումներն են՝ միավորական հարաբերությամբ:

Ինչպես՝ *Եվ* մի աշխարհ մնաց այնտեղ.

Եվ մնացին ակնադբյուրներ

Եվ լճակներ,

Եվ մնացին արահետներ... (Եվ մի աշխարհ մնաց այնտեղ)

Եվ ոլորվում է մեր քարավանը,

Եվ ինչ եմ տեսնում վերջին անգամ... (Եփրատ)

Կամ՝

Ու մինչև հիմա չգիտեմ հաստատ,

Դեղին տենդ է դա, երագ է, թե՞ հուշ... (Փուշը)

Ու ես ասում եմ. – Կանգնիր առավոտ,

Ես էլ եմ գալիս...

Ու ես չգիտեմ, դա անլսելի

Զնգոցն է քարի... (Կանչ)

Բերված օրինակներում ոչ միայն շաղկապներն ու շաղկապական բառերն են տեքստային կապի միջոցներ, այլև կրկնությունը և փոխարինումը (ցուցաբառերը):

Պարզելով տեքստ կազմող նախադասությունների կառուցվածքը, կապակցումը՝ նկատել ենք, որ նրանց միջև առկա են նույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության բաղադրիչների միջև⁸: Սակայն բարդ նախադասության ոչ ինքնուրույն բաղադրիչների կապերը սովորաբար ավելի սերտ են, քան գերնախադասական (գերֆրագային՝ ՇՓԵ) միասնությունը կազմող նախադասությունների կապերը, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին պարբերությունների կապերը: Վերջիններիս կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին հատվածների, գլուխների կապերը:

Այս քննությունը կարևոր է նաև նախադասության և նրա կիրառության ամբողջական պատկերը ցույց տալու առումով:

⁸ **Ա.Բաքսեղյան**, *Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ ՋԼՄ-ների լեզվում*, Լրաբեր հաս. գիտ., 2014, 2, էջ 200-206:

Барсегян Амалия - Словесные средства сочетания предложений в тексте.- В статье из словесных средств предложения рассматриваются союзы и союзные слова, как средства внутритекстовой связи, внутри сверхфразовых единств, между абзацами, отдельными частями и главами.

Стало заметно, что сходства связей уменьшается, что обуславливается наибольшей самостоятельностью предложений.

Barseghyan Amalya - Verbal Means of a Combination of the Sentences in the Text.- In this article are touched upon the conjunctions and conjunction words of verbal means of the sentences as a means of textual connection, within super-phrasal unity, between paragraphs, parts and chapters.

It was noticeable that the similarity of the connections is reduced, which caused by the greatest autonomy of the sentences.

**ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՑԹՈՒՄ (ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Պ. Սադոխինը, «սահմանված է, որ հաղորդակցման բնույթը, ձևը և ոճը մեծապես կախված են շփման առաջին բաղադրից, իսկ երբեմն՝ վայրկյաններից: Գոյություն ունեն բազում... պարզ հնարքներ, որոնք թույլ են տալիս ցանկացած իրավիճակում դյուրացնել հաղորդակցման ամբողջ հետագա ընթացքը պայմանավորող սկզբնական փուլը: Այդ հնարքներից է... հաճոյախոսությունը (ընդգծումը իմն է – Լ. Բ.)»:¹

Թեմայի ընտրությունը պայմանավորված է վերջին տարիներին միջանձնային և միջմշակութային արդյունավետ հաղորդակցման զանազան կողմերի քննության հանդեպ աճող հետաքրքրությամբ, տարբեր տեսակի խոսողական ակտերի հաղորդակցային-գործաբանական հայեցակետերի, ինչպես նաև խոսքային վարվելակարգի զանազան ձևերի ավելի խորը վերհանման անհրաժեշտության գիտակցմամբ: Ուսումնասիրության **առարկա** հանդիսացող հաճոյախոսության խոսողական ակտը ասվածի լույսի ներքո հույժ կարևոր է և **արդիական**:

Հոդվածի **նպատակն է** վերլուծել հաճոյախոսության խոսողական ակտը հայկական լեզվամշակույթում, վերհանել դրա առանձնահատկությունները: Հայերս ծայրահեղությունների ժողովուրդ ենք: Մի կողմից, տոնական սեղաններին կանանց հասցեին հնչում է շռայլ գովասանք. մենք անգամ աշխարհում նմանը չունեցող «կանանց միամյակ» ենք սահմանել, երբ ամեն օր գովաբանում ենք, ժպիտներ, ծաղիկներ ու հաճոյախոսություններ ենք նվիրում կնոջը: Մյուս կողմից, առօրյա կյանքում մի տեսակ դժվարությամբ ենք հաճոյախոսում միմյանց. այստեղ դեր ունեն կենցաղային դժվարությունները, նաև մեր հոգեկերտվածքը: Ուզում եմ այստեղ մեջբերել

¹ **А.П. Садохин**, *Межкультурная коммуникация*, М., 2010, էջ 139:

հայ մեծագույն դերասան ու հասարակական գործիչ Սոս Սարգսյանի խոսքերը: «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին տված հարցազրույցում [2009 թվական, դեկտեմբեր, թիվ 50] նա ասում է. «Փրկարար սուտը՝ հզոր բան է: Անգամ տգեղ կնոջը կարելի է հաճոյախոսություն անել, ուրախացնել նրան: Իմ ժողովուրդն ունի պետական... ճշմարտություն»:

Իսկ ինչպե՞ս ենք մենք ընկալում հաճոյախոսությունները, եթե դրանք լավ, անկեղծ հաճոյախոսություններ են: Դիտարկումները ցույց են տալիս, որ հայերը, հատկապես հայ կանայք սիրում են հերքել հաճոյախոսությունները՝ ասելով. «Ոչ, այդպես չէ», «Ինչ եք ասում, հակառակը» և այլն: Այստեղ զգացվում է հոգեկերտվածքը. անվստահությունը զրուցակցի նկատմամբ, միտվածությունը ինչ-որ թակարդ, ինչ-որ գաղտնի, քողարկված իմաստ վերհանելուն, ինչպես նաև մեր կաշկանդվածությունը, հաճոյախոսություններ ստանալու փորձի պակասը: Հարկ է ընդգծել, որ ասվածը մեծապես վերաբերում է միջին ու բարձր տարիքի կանանց: Մերօրյա երիտասարդ սերունդը՝ ի դեմս դեռատի կանանց, օրիորդների ու աղջնակների մեծ արժանապատվությամբ, երախտագիտության խոսքերով են ընդունում հաճոյախոսությունները՝ թերևս ամենաթափանց ամերիկյանացման ազդեցության ներքո:

Կառուցվածքային-բովանդակային առումով հայկական հաճոյախոսությունների առանձնահատկություններից է հաճոյախոսություն-համեմատությունների առատությունը, երբ մարդը համեմատվում է, օրինակ, արևի, լույսի, կրակի, ոսկու, Աստծո, թագավորի, տաճարի, հոգու, լեռան, պոեզիայի, երաժշտության հետ: Օրինակ, «Դու գեղեցիկ ես ինչպես *բանաստեղծությունն* ու խորը, ինչպես *երաժշտությունը*»: Օրիորդին հաճախ համեմատում են ծաղիկների, վարդի հետ, մարդու խոսքը՝ նեկտարի, մեղրի: Հայկական մշակույթում երբեմն հաճոյախոսություն է կնոջը տղամարդու հետ համեմատելը, նրան տղամարդկային հատկանիշներ վերագրելը («Նա տղամարդ կին է»):

Հատկանշական է, որ շատ մշակույթներում որպես հաճոյախոսություն գործածվում են համեմատությունները կենդանական աշխարհի ներկայացուցիչների հետ, ընդ որում՝ այն, ինչ հաճոյախոսություն է համարվում մեկ մշակույթում, կարող է միանգա-

մայն անհասկանալի և անգամ վիրավորական լինել մյուսում: Այսպես, ռուս մշակույթում *птичка, рыбонька, сокол, орленок* (թռչնակ, ձկնիկ, բազե, արծվիկ) փաղաքշական, գովաբանող անուններ են:² Ըստ Ի. Ն. Գորելովի և Կ. Ֆ. Մեդովի, «այլ մշակույթի կրողների վրա շատ տարօրինակ տպավորություն կարող են թողնել կանանց հասցեին արվող որոշ հաճոյախոսություններ: Հնդկաստանում կնոջը կարելի է հաճոյանալ՝ նրան համեմատելով կովի հետ, իսկ նրա քայլվածքը՝ փղի քայլվածքի հետ: Ճապոնուհու համար լավ հաճոյախոսություն է համեմատությունը օձի հետ, բաշկիրուհու համար՝ ձկնի ու շարժումների կատարելությունը մարմնավորող տգրուկի: Ռուսական մշակույթում «Гусыня» (սագ) դիմելաձևը վիրավորանք է կնոջ համար: Եգիպտոսում դա քնքուշ հաճոյախոսություն է»:³ Հայաստանում տղամարդու համար հաճոյախոսություն կարող է լինել նրան առյուծի, արծվի հետ համեմատելը: Երեխային փաղաքշորեն անվանում են գառնուկ, իսկ ջեյրանի հետ համեմատությունը հաճոյախոսություն է կնոջը:

Հայ և ռուս գեղարվեստական գրականությունից հավասար թվով (200-ական օրինակ) քաղված հաճոյախոսական դիսկուրսների՝ մեր անցկացրած վերլուծությունը ի հայտ բերեց, որ մարդու **արտաքին տեսքին վերաբերող հաճոյախոսությունները** երկու լեզվամշակույթներում հանդիպում են գործնականում նույն քանակով (ընդհանուր քանակի համապատասխանաբար 15 և 14 տոկոսը): Հատկանշական է, որ արտաքինի առանձին տարրերին վերաբերող հաճոյախոսությունների մեջ հայերենում գերակշռում են աչքերը, հայացքը բնութագրող հաճոյախոսությունները: Նման հաճոյախոսություններ անելիս խոսում են բարի, խելացի, դյուրող, մոգական, հաճախ անգամ քաղցր հայացքի մասին: Պատահական չէ, որ բանաստեղծների ու գրողների կողմից բազմիցս գովերգված, կորսված հայրենիքի անհուն կարոտն ու տխրությունը կրող *հայի աչքերն* են հանդես գալիս որպես հայերի մշակութային կողի, հայ ինքնության կարևորագույն էթնիկական հատկանիշներից մեկը: Հարկ է նաև նշել, որ գովելով մարդու աչքերը, հայացքը, հայկական մշակույթում

² Տես՝ **М. Феллер**, *Как рождаются и живут слова*, М., 1964, էջ 59:

³ **И.Н. Горелов, К.Ф. Седов**, *Основы психолингвистики*, М., 2005, էջ 132:

միաժամանակ ներակայորեն դրվատվում է նաև նրա խորաթափանցությունը, խելքը: Հայերենում տարածված են գրուցակցի ձայնին վերաբերող հաճոյախոսությունները՝ այն բնորոշելով որպես հաճելի, քաղցր: Ընդհանուր առմամբ արտաքին տեսքին վերաբերող հայերեն հաճոյախոսություններում լայնորեն գործածվում են հոմանիշները, մակդիրները, ածականների գերադրական աստիճանները և այլն, ինչը հայերի զգացմունքայնության արտացոլումն է:

Մարդու **ներքին, բարոյական որակներին վերաբերող հաճոյախոսությունները** նույնպես գործնականում նույն քանակով են հանդիպում հայկական (20 տոկոս) և ռուսական (18 տոկոս) լեզվամշակույթներում: Հատկանշական է, որ նման հաճոյախոսություններն ավելի շատ են, քան արտաքինին վերաբերողները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու ներքին, բարոյական որակներից հայկական մշակույթում առավել հաճախ դրվատանքի են արժանանում ազնվությունը, արդարությունը, բարությունը, խղճատությունը, բարեսրտությունը, մարդկայնությունը, մեծահոգությունը, խիզախությունը, բարեպաշտությունը, հնազանդությունը:

Դառնալով գրուցակցի **ազգականների հասցեին արվող հաճոյախոսություններին**, որոնք հայկական լեզվամշակույթում գերակայում են ռուսականի նկատմամբ (համապատասխանաբար 7 և 4 տոկոս), պետք է նշել, որ հայկական մշակույթում նախ և առաջ գովում են զավակներին: Դա բացատրվում է հայերի ընդգծված սիրով երեխաների նկատմամբ, որոնք ընտանեկան աստիճանակարգում զբաղեցնում են անվիճարկելի առաջին տեղը: Եվ, հաճոյախոսելով զավակին, մենք դրանով իսկ մեծարում ենք ծնողին:

Ինչ վերաբերում է մարդու **մասնագիտական որակներին կամ որոշակի ունակություններին առնչվող հաճոյախոսություններին**, ապա դրանք հայկական մշակույթում շատ ավելի քիչ են, քան ռուսականում (համապատասխանաբար 10 և 22 տոկոս): Այդպիսի հաճոյախոսություններում հայերենում գերակշռում են *տաղանդավոր, շնորհալի, հմուտ* և նման մակդիրները: Կոնկրետ բովանդակությամբ այս խմբի հաճոյախոսությունները բնութագրում են երաժրշտական ընդունակությունները, հոետորական վարպետությունը, բանաստեղծական շնորհը, խոհարարական ունակությունները:

Ի տարբերություն այս վերջին խմբի, **ընդհանրական հաճոյա-**

խոսությունները, որոնք համադրում են մարդու գովեստը միաժամանակ մի քանի չափորոշիչներով, ինչն ուժեղացնում է հաճոյախոսության զգացմունքային ուժը, հայկական մշակույթում ոչ միայն գերակայում են ռուսականի նկատմամբ (համապատասխանաբար 30 և 19 տոկոս), այլև տոկոսային առումով ամենամեծ խումբն են կազմում բոլոր տեսակների մեջ:

Հասարակության տարբեր սոցիալական շերտերը, տարիքային ու սեռային տարբեր խմբերը ներկայացնող ութսուն հայերի շրջանում անցկացված հարցումը⁴ վերհանել է հետևյալը. 1) 20-35 տարիքային խմբում կանանց մեծամասնությունը (20-ից 15-ը) գերադասում է ոչ թե անել, այլ ստանալ հաճոյախոսություններ: Այս տարիքային խմբի տղամարդիկ նույնպես գերադասում են հաճոյախոսություններ ստանալ, թեև ավելի քիչ չափով (20-ց 11-ը): Ուշագրավ է, որ ավելի բարձր տարիքային խմբում (35-50) երկու սեռերի ներկայացուցիչների մեծամասնությունը գերադասում է հաճոյախոսություններ անել: 2) 20-35 տարեկան կանայք ու տղամարդիկ առաջին հերթին գովում են մարդու արտաքինը (20-ից 13-ը), մինչդեռ 35-50 տարիքային խմբում «Ամենաշատը մարդկանց հատկանիշներից ի՞նչն եք գովում» հարցին երկու սեռերի հարցվածները տվել են գործնականում նույն պատասխանները. հարցված 20-ական տղամարդկանցից ու կանանցից համապատասխանաբար 15-ն ու 13-ը նշել են մարդու որոշակի ունակությունները (տղամարդիկ հիմնականում գովում են սեփական կանանց խոհարարական հմտությունը), հետո գալիս են մարդկային որակները, ինտելեկտը: Մյուսները գովում են մարդու արտաքինը, սակայն, ի տարբերությունը ավելի երիտասարդ հարցվածների, նշում են նաև գրուցակցի ճաշակը:

Հայկական, ռուսական ու անգլիական լեզվամշակույթներում հաճոյախոսության խոսողական ակտի առավել խորը զուգադրական վերլուծության նպատակով վերլուծել ենք համապատասխան բառարանային հոդվածները, հաճոյախոսություններին առնչվող դարձվածքները, բառակապակցությունները, առածներն ու ասացվածքները, ինչպես նաև հաճոյախոսական դիսկուրսի նմուշներ հա-

⁴ Որպես հիմք ընդունվել է Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի ուսանող Մարիա Չեկուչյանի անցկացրած հարցումը:

յերենում, ռուսերենում և անգլերենում: Վերլուծությունը թույլ է տվել անելու հետևյալ եզրահանգումները. ա) աքսիոլոգիական (գնահատողական) բնութագրման տեսանկյունից առավել դրական երանգավորումը հաճոյախոսությունն ունի անգլիական լեզվամշակույթում, իսկ առավել բացասականն ու սուբյեկտիվը՝ հայկականում: Իսկ ռուսական լեզվագիտակցության մեջ հաճոյախոսությունը գերակշռող դրական երանգավորումների կողքին ունի նաև բացասականը՝ կապված ինչպես հասցեատիրոջ գերագնահատելու, այնպես էլ հաճոյախոսության հեղինակի շահախնդիր նպատակադրումների հետ, բ) հայերի ու անգլիացիների շրջանում հաճոյախոսելու առումով դիտարկվում է ավելի մեծ զսպվածություն, գ) անգլիական մշակույթում, ի տարբերություն հայկականի ու ռուսականի, հաճոյախոսությունը կրում է ավելի շատ ձևական բնույթ, դ) հայկական ու ռուսական լեզվագիտակցության մեջ, ի տարբերություն անգլիականի, հաճոյախոսությունը կապված է լինում խողովակի՝ անձնական շահ հետապնդող մտադրության հետ, ե) անգլիական լեզվագիտակցության մեջ հաճոյախոսությունը կապվում է առաջին հերթին հավանության արժանացնելու հետ, ինչը բացակայում է հայկականում, զ) ի տարբերություն հայկականի, անգլիական և ռուսական մշակույթներում հաճոյախոսությունը կապվում է քաղաքավարության և հարգանքի հասկացությունների հետ, է) հայկական լեզվագիտակցության մեջ, ի տարբերություն ռուսականի ու անգլիականի, հաճոյախոսությունը **հիմնագուրկ** գովասանք է, ը) հաճոյախոսությունները ռուսական և հատկապես հայկական մշակույթներում, ի տարբերություն անգլիականի, ընդունվում են ավելի մեծ «դիմադրությամբ»:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ հայկական, ռուսական ու անգլիական լեզվամշակույթներում հաճոյախոսության խոտողական ակտի գործառնության ողջ նմանությամբ հանդերձ, հայկական լեզվամշակույթում կիրառվող հաճոյախոսություններում առկա են էական տարբերություններ, որոնք արտացոլում են հայերի ազգային հոգեկերտվածքը և ուրույն աշխարհընկալումը:

Իսկ ավարտել ուզում եմ Բուլատ Օկուջավայի խոսքերով.

«Եկեք հաճոյախոսենք միմյանց: Չէ՞ որ այդպես պարզում ենք սիրո երջանիկ պահեր»:

Brutian Lilit – Compliments in the Armenian Linguoculture (in the Comparison with Russian and English). – In the paper, the speech act of a compliment in the Armenian linguoculture is analysed in the comparison with Russian and English compliments. The comparative analysis has revealed the peculiarities of Armenian compliments which reflect the specific mentality of the Armenians.

Лилит Брутян – Комплименты в армянской лингвокультуре (в сопоставлении с русской и армянской). – В статье анализируется речевой акт комплимента в армянской лингвокультуре в сопоставлении с русскими и армянскими комплиментами. Сопоставительный анализ выявляет особенности армянских комплиментов, отражающие специфику менталитета армян.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ ՍՏՈՐՈԳՄԱՆ ՄԵՋ

Առանցքային արտահայտություններ՝ ստորոգում, քերականական կարգ, նշան, ազդանշան, քողարկյալ և արտարկյալ ստորոգումներ, վանկակազմի ստորոգում, գերհամադրական ստորոգում:

Աշխատանքի խորագիրը հուշում է, որ երկու էական հասկացության հետ գործ ունենք՝ ա) քերականական կարգերի և բ) ստորոգման:

Ա) Ընդունված է քերականական կարգերը, քերականության ավանդական բաժանման համապատասխան, երկու խմբով ներկայացնել՝ ձևաբանական կարգեր, շարահյուսական կարգեր: Այս բաժանումը պետք է ընդունել վերապահությամբ: Չենք կարող ասել, իհարկե, թե չկան ձևաբանական և շարահյուսական կարգեր: Պարզապես բանն այն է, որ թեև ունենք զուտ շարահյուսական կարգեր, սակայն զուտ ձևաբանական կարգեր չկան, և վերջիններս ձևաբանական են ո՛չ նրա համար, որ միայն այդպիսին են, այլ նրա, որ նաև՝ ձևաբանական են, որովհետև դրսևորվելով խոսքում՝ բառահարաբերման դերով և շարահյուսական կապակցության ապահովմամբ անմիջականորեն նպաստում են հաղորդակցության ձևավորմանն ու ծավալմանը: Եթե ասվածին էլ ավելացնենք Շառլ Բալլիի այն նուրբ նկատումը, թե կամայական քերականական հարաբերության հիմքում կա ստորոգում¹ (որն ինքնին շարահյուսական կարգ է, որին դեռ կանդրադառնանք), ապա կարող ենք քիչ թե շատ ամբողջացած համարել մեր նախնական դրույթը:

Քերականական կարգերի բնորոշման լեզվաբանական հարաչափերն են իմաստակրությունը, իմաստների արտահայտման քերականական միջոցները, միջկարգային անշփոթելիությունը, հակադրվող եզրերի՝ քերությունների պարտադիր առկայությունը (առնվազն երկեզր հակադրություն), որոնցից գոնե մեկը նշութակիր է²: Այս

¹ **III. Балли**, Общая лингвистика и вопросы французского языка, М., «Иностранная литература», 1955, с. 120:

² Հմմտ. **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք», 1969, էջք 116 – 122:

ամենի ընդհանրացումը կլինի նշանագիտական հետևյալ բնորոշումը, որ նաև լեզվաբանական է. **քերականական կարգն իր ներսում հակադրվող նշաններ ունեցող նշան է:**

Բ) Շ. Բալլիի՝ վերի հիշատակումը ստորոգման խորքային կամ, որ տվյալ դեպքում նույնն է, քողարկյալ (իմպլիցիտ) հատկությանն է վերաբերում, որին ավելի վաղ անդրադարձել է Մանուկ Աբեղյանը՝ առանց տերմինավորման³: Մեր ուսումնասիրությունը, սակայն, կսկսենք արտարկյալ (էքսպլիցիտ) կամ մակերեսային ստորոգումից:

Ստորոգման տարածված բնորոշումը սա է. ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային: Թող թույլ տրվի ասել՝ սա ստորոգման ոչ թե ճշմարիտ, այլ ճշմարտանման բնութագիրն է, որով էլ պայմանավորված է մեր օրերում Մ. Աբեղյանի՝ նախադասության մեկ գլխավոր անդամի տեսության անտեսումը: Բանն այն է, որ ստորոգման համար որքան «ընչությունն» է կարևոր, նույքան էլ՝ ինչպիսությունը (= որքան՝ *ինչ*-ը, նույնքան՝ *ինչպես*-ը): Ստույգ է այն, որ հատկանիշ է վերագրվում ենթակային, բայց իչպե՞ս է վերագրվում: Կարծում ենք՝ հարցի պատասխանը կօգնի՝ ստեղծագործաբար դարձ կատարելու դեպի արեղյանական ուսմունք:

Կամայական մակերեսային ստորոգման մեջ ստորոգիչը (էական կամ օժանդակ բայը) հավասարության (գուցե ավելի ճիշտ է ասել՝ հավասարեցման) ազդանշան է: Եթե ասում ենք՝ *եղբայրս ուսուցիչ է*, ապա տվյալ խոսքի արդյունքի մեջ նույնացնում ենք «եղբայր» և «ուսուցիչ» առարկայական հասկացությունները, և այդ նույնացումը՝ որպես առարկաների հավասարեցում, ապահովում է «է» ստորոգիչը: Բերված օրինակը մակերեսային ստորոգումներից թերևս ամենամակերեսայինն է: Սակայն այս մակերեսայնությունը մի ուրիշ խորք ունի, որը չարտարկելու՝ չբացահայտելու դեպում կբխվենք հակասության պատին: Ինչպես նշվեց, համաձայն տարածված սահմանման՝ ստորոգումը **հատկանիշի՝** վերագրում է, մինչդեռ մեր օրինակում գործ ունենք երկու **առարկայական** հասկացության հետ՝ *եղբայր* և *ուսուցիչ*: «Եղբայրս» ենթակային «ուսուցիչ» հասկացությունը վերագրվում է որպես «ուսուցող» հատկանիշ՝

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 1965, էջ 369:

չվանելով իրենից առարկայնությունը: Այն, որ վերագրյալի մեջ պահպանվում է առարկայական հասկացությունը, հայերենում շատ հեշտ որոշվում է առարկայանիշ հարցի օգնությամբ. «**Ի՞նչ է եղ-բայրս**»:

Գ) Սակայն եթե բնականոն է միջառարկայական **հավասարումը**, ապա կարծես մեկ այլ հակասության ենք բախվում այն դեպքում, երբ վերագրյալը բուն հատկանշակիր բառ է լինում՝ ածական: Այսպես՝ «Տունը շքեղ է» օրինակում գործ ունենք «տուն» առարկայի և «շքեղ» հատկանիշի հետ, որոնց հարցում տրամաբանորեն հավասարության մասին խոսք լինել չի կարող: Սակայն նույն տրամաբանությունն օգնում է մեզ՝ համապատասխան կառուցվածքում («Տունը շքեղ է») ևս բացահայտելու առարկայնության չափաբաժին, որին նույնպես օգնում է հարցումը: Դիտարկվող նախադասության մեջ բայ-ստորոգյալի անվանական բաղադրիչին առարկայական հարց ենք տալիս՝ *տունն ի՞նչ է*: Անգամ այն դեպքում, երբ հարցը հատկանշային հիմքով է, դարձյալ առարկայացված է՝ *տունն ինչպիսի՞նչ է*, և առարկայացումը տեղի է ունենում՝ շնորհիվ որոշիչ հոդի: Այսպիսով՝ եթե նախորդ կետի օրինակում վերագրվողը («ուսուցիչ») հատկանշացվող առարկա է, ապա «Տունը շքեղ է» օրինակում հակառակի հետ գործ ունենք. «շքեղ» հատկանիշն է առարկայնաբար վերագրվում «տունը» ենթակային: Ասվածի հիման վրա հետևյալ բնորոշումը կտանք. ստորոգումը հատկանշացվող առարկայի կամ առարկայացված հատկանիշի վերագրումն է ենթակային: Անկախ այն բանից՝ առարկան է հատկանշացվում, թե հատկանիշը՝ առարկայացվում, **վերագրումը կատարվում է առարկայնաբար**, և սա պարտադիր պայման է ստորոգման համար ստորոգական կառուցվածքի երկու բաղադրիչների միջև ստորոգչի հավասարական ազդանշումն ապահովելու առումով: Ի մի բերելով նախորդ և այս կետերի բնորոշումները՝ ստորոգումը կվերասահմանենք այսպես. **ստորոգումը առարկայացված հատկանիշի կամ հատկանշացված առարկայի վերագրումն է ենթակային առարկայնաբար**:

Վերագրվելիս առարկայական կերպավորումը պարտադիր պայման է, որովհետև հավասարության ապահովման համար կամ համարժեք (համահավասար) հատկանիշներ պիտի ունենանք, կամ այդպիսի առարկաներ: Ենթակայի հատկանշացումը բացառված է,

քանի որ գործողության՝ որպես հատկանիշի առարկան է, ուրեմն՝ բայ-ստորոգյալի անվանական մասի՝ վերագրվող հատկանիշի՝ առարկայացում պիտի լինի նշված հավասարության (հավասարեցման) համար:

Մինչև հիմա բերված օրինակներում ստորոգական բաղադրության երկու բաղադրիչի հարաբերությունն էր ուշադրության կենտրոնում, որը, ինչպես քանիցս ասվեց, հավասարական հարաբերություն է: Առանց ստորոգչի՝ ենթական և բայ-ստորոգյալի անվանական բաղադրիչն իրենց հավասարայնությամբ հիշեցնում են հարթաչափական (անհատելի) զուգահեռներ, այսինքն՝ չեզոք բաշխման հարաբերության մեջ են: Սրանք կապակցվում են միայն ստորոգիչ բայի միջնորդավորմամբ, նրա հանգուցավորմամբ: Ասվածով վերահաստատվում է այն դրույթը, որ նախ՝ համադասությունը կապակցություն չէ⁴, ապա՝ կապակցությունը պայմանավորված է մի՛միայն **տարադասական** (= գերադաս / ստորադաս) հարաբերությամբ⁵:

Դ) Չուտ կառուցվածքաբանորեն գերադաս դիրքում է ստորոգիչը: Ստորոգումը, ըստ բառի ներքին ձևի ընկալման, այլ բան չէ, քան «ասելիքը **վար** բերելը»: Լեզվական համակարգի **վերնոլորտից** է իջնում **Է**-ն (est-ը), **էացնում** ասելիքը, հետևաբար զուտ կառուցվածքաբանորեն ունենք ստորոգական եռանդամություն՝ ա) **ստորոգիչ** (էական կամ օժանդակ բայ), բ) **ստորոգյալ**, արեղյանական ըմբռնմամբ (այսինքն՝ բայ-ստորոգյալի անվանական բաղադրիչը), գ) **ստորոգելի** (ենթակա): Ենթական, այսպիսով, ստորոգելի է, քանի որ **ենթակա է ստորոգյալ դառնալու**: Ասել է՝ այս նոր ըմբռնմամբ ենթական և (արեղյանական) ստորոգյալը **փոխատեղելի** անդամներ են, ինչպես՝ *Տունը շքեղ է: ≍ Շքեղը տունն է:* Այս փոխատեղումը հնարավոր է համակարգայի՝ հնարավորությամբ: Լեզվի համակարգի հիշյալ վերնոլորտում ստորոգական կառուցվածքի եռանդամությունը ստորոգչի և հավասարագոր երկու ստորոգելիների ներգործություն է: Ի տարբերություն խոսքում ստորոգելի / ստորոգյալ հակադրության՝ վերնոլորտում ունենք երկու անտարբեր ստորո-

⁴ Տե՛ս **III. Բալլի**, անդ, էջ 116: Л. Теньер, Основы структурного синтаксиса, М., «Прогресс», 1988, էջ 24:

⁵ Լ. Տենիերը նշում է, որ կապակցությունը կախվածության հարաբերություն է, որ իրար է միացնում գերադաս և ստորադաս տարրերը: Տե՛ս Л. Теньер, անդ:

⁶ Համապատասխանության նշան:

գելի՝ իբրև «տուն» և «շքեղ» հասկացությունների ստորոգացման հավասարաչափ հնարավորություն: Խոսողության պահին է հաղորդողի գիտակցությունն ակնթաթորեն թելադրում, թե հնարավոր երկու ստորոգելիներից ո՞ր մեկն է խոսքային արտահայտության մեջ ստորոգյալի, և ո՞ր մեկը՝ ստորոգելիի դեր ստանձնելու՝ խոսքում իսկ շարունակելով պահպանել վերջինիս ստորոգյալ դառնալու հնարավորությունը մեկ այլ համարժեք հաղորդակցության պահի: Ըստ այդմ՝ զուտ կառուցվածքային եռանդամությունը մեր գիտակցության մեջ բեկվում է տրամաբանական երկանդամության, որի բաղադրիչներից գերադաս է նա, որի կազմում առկա է ստորոգիչը, այսինքն՝ հանգույցն ու ստորոգյալը միասին, իսկ ստորադասը ստորոգելի-ենթական է և **ենթակա** է բայ-ստորոգյալին: Այսպիսով՝ մեզ համար ընդունելի է Մ. Աբեղյանի՝ միայն բայ-ստորոգյալը նախադասության գլխավոր անդամ համարելու տեսակետը⁷: Ի դեպ, դա ընդունելի է նաև լեզվով մեզ տրված տրամաբանական փաստարկմամբ. չի կարող գլխավոր անդամ լինել մի բան, որի անունը **ենթակա** է: Արդ՝ ասվածը տրամաբանական վախճանակետին հասցնելու համար նախադասության գլխավոր անդամը, ի հակադրություն ենթակայի, վերանվանում ենք **գերակա** (= բայ-ստորոգյալ՝ ըստ Մ. Աբեղյանի):

Այսպիսով՝ ստորոգական մակերեսային նվազագույն բաղադրությունը երկանդամ բաղկացություն ունի՝ գերակայի և ենթակայի համակցությամբ: Բերված «Տունը շքեղ է» օրինակում գերական է «շքեղ է» բաղադրիչը՝ ստորոգչի (է) և ստորոգյալի (շքեղ) մեկտեղմամբ, ենթական՝ «տունը» (ստորոգելի): Ենթական նույնպիսի լրացում է գերակայի համար, ինչպիսին են խնդիրը, պարագան: Ենթակայի և սրանց տարբերությունը ստորոգական գործունեության մեջ հենց ենթակայի առաջնային կարևորությամբ է պայմանավորված: Այդ կարևորությունը, սակայն, հիմք չի կարող լինել՝ ստորադաս անդամը գլխավոր համարելու:

Ե) Վերը հիշատակվեց Շ. Բալլիի հայտնաբերած կարևորա-

⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, անդ. էջ 361: Մ Աբեղյանից հետո (նրանից անկախ) այս նույն տեսակետն են ընդունել, օրինակ, Շ. Բալլին և Լ. Տենիերը (տե՛ս նշվ. աշխ.): Մեզանում Մ. Աբեղյանի տեսությունն է որդեգրել և զարգացրել է. Աթայանը: Տե՛ս Զ. Աթայան, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, Миткб 1968, с. 198 – 199.

գույն մի դրույթ, որ վերաբերում է քերականական բոլոր հարաբերությունների հիմքում ստորոգման առկայությանը. «Հնդեվրոպական լեզուներում ցանկացած քերականական հարաբերություն բայական է: Ողջ քերականությունը պարփակված է բայի մեջ, և հակառակը, ամեն մի բայ ինչ-որ բան է արտահայտում կամ բովանդակում քերականությունից, որովհետև այն հանգույց է կամ հանգույց է պարունակում»⁸: Եվ իսկապես, ասվածը դյուրությամբ հնարավոր է ցույց տալ նշված լեզուների բազմաթիվ օրինակներով: Բնականաբար մեր օրինակը հայերենից ենք բերում՝ փոխակերպների համընկնելիության կաղապարով.

Տնակ $\cong$ փոքր տուն $\cong$ (այն, որ) տունը փոքր է:

Դիմավոր բայը՝ որպես գերիշխող անդամ, իր «իշխանության ու հսկողության» տակ է առնում նախադասության բոլոր անդամների, հետևաբար և բոլոր խոսքի մասերի քերականական կարգերը: Ուշադրություն դարձնելով մեզ քիչ թե շատ ծանոթ լեզուների վրա՝ դժվար չէ նկատելը, որ, Է. Ադայանի արտահայտությամբ, «ձևերի ճոխությամբ», «քերականական կարգերի բազմազանությամբ» հավասարը չունի բայը⁹: Հարկ է նկատել, որ այս իրողությունն արդյունք է բայի «ծավալապաշտության», քանի որ նրա բոլոր կարգերը «առգրավված-զավթված» են մյուս խոսքի մասերից: Այսպես՝ դեմքի կարգը բային է անցել անձնական դերանունից, սեռը՝ գոյականից, թիվը՝ գոյականի միջնորդությամբ՝ թվականից, վիճակի կարգը՝ ածականից, ժամանակի և կերպի կարգերը՝ մակբայից, եղանակը՝ մակբայի միջնորդավորմամբ՝ վերաբերականից. եթե ասվածին էլ ավելացնենք, որ բայի ելակետային ձևը՝ անորոշ դերբայը՝ որպես գործողության բացարձակ անվանում¹⁰, հոլովվում է գոյականի հոլովումներից միայն մեկով, այսինքն՝ ունի հոլովի և հոլովման քերականական կարգեր, պատկերը երևի կամբողջանա: Պետք է նկատել, որ անհրաժեշտ «զավթողականություն» է սա, նույնիսկ «իշահ» «կարգատու» խոսքի մասերի, որովհետև զիջելով իրենց քերականական կարգերը՝ ոչ միայն կորուստ չեն ունենում այդ խոսքի

⁸ III, **Բառք**, անդ, էջ 120:

⁹ Տե՛ս Է. Ադայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1967, էջ 304:

¹⁰ Անդ, էջ 347:

մասերը, այլև վերահաստատում են իրենց «սեփականությունը» ստորոգման միջոցով: Խոսողը նյութը հաղորդելիս բայի միջոցով խոսքում (նախադասության մեջ) հանդես եկող համապատասխան խոսքի մասերին է վերադարձնում դրանց կարգերը, և հաղորդակցումը հենց այդպես է ապահովվում: Առանց բայաստորոգական կենտրոնի կամ միջուկի՝ մնացյալ խոսքի մասերն անկենդան բառեր են, սոսկ հարացուցային միավորներ: Առանց այդ միավորների՝ բայը հարաբերվելու եզրեր չունի: Նույնիսկ միադիմի բայերի դեպքում խորքային գոյականի հետ հարաբերման հնարավորությամբ է բայական «ինքնագործառում» լինում (հմտ. *անձրևում է = անձրև է գալիս*): Բայի շնչավորմամբ են վերարթնանում և հարաբերվում մնացյալ խոսքի մասերը:

Բայի այլակարգ յուրացումները ոչ միայն ինքնանպատակ չեն, այլև տրված են նրան վերուստ: Քիչ առաջ ակնարկած վերնոլորտի «է»-ն համատեղում է այդ բոլոր կարգերը որպես տարորոշելի միավորների ներհյուսում: Համոզվելու համար բավական է թերթել մեր բառարանները՝ «է»-ի իմաստներին ծանոթանալու: Նա և՛ գերագույն էՈՒԹՅՈՒՆ է, և՛ առարկա՝ որպես գոյ, և՛ հատկանիշ՝ որպես ընթացավորիչ:

Ձ) Անդրադառնալով ստորոգման և քերականական կարգերի հարաբերակցությանը՝ ստորոգումը կարող ենք ներկայացնել գոյավիճակային շերտավորմամբ: Ըստ այդմ՝ կունենանք կայական, գորութենական և գործուն ստորոգումներ: Առաջին երկուսը քողարկյալ ստորոգումներ են և քողարկելության հատկանշով հակադրվում են վերջինին, որն արտարկյալ ստորոգում է: Մյուս կողմից, սակայն, ընդհանրություն ունեն երկրորդ և երրորդ գոյավիճակները, որոնք, անկախ քողարկյալ թե արտարկյալ լինելու հանգամանքից, դրսևորվում են վերբառային մակարդակներում՝ հակադրվելով առաջինին, որը բացահայտվում է բառաձևերում:

Քերականական կարգերի տեսանկյունից **կայական է ներկարգային** ստորոգումը: Այս ստորոգումը հատուկ է ձևաբանական հարացույցներ կազմավորող կարգերին, որոնցում անշարժ հանդիպադիր հարաբերության մեջ են դրանց քերույթները՝ որպես հնավոր կապակցիչներ:

Քողարկյալ ստորոգումներից **գորութենականը** արտարկյալի

համեմատ ներկայանում է երկու խմբով՝ **նախաստորոգային** և **հետ-ստորոգային** կարգեր: Նախաստորոգային է ստորոգման ենթակա գոյականը կամ գոյականական (ծավալված) շարույթը, հետստորոգային են՝ ա) մակբայը կամ մակբայական շարույթը՝ որպես ստորոգման հետագա ծավալում, բ) դերբայը կամ դերբայական դարձվածը՝ որպես ապաստորոգացում:

Քերականական կարգերի տեսանկյունից **գործուն** է՝ ա) բացարձակ արտարկյալ ստորոգումը, որը ստորոգման բուն մակերեսային տիպն է՝ այն, ինչը ներկայացվեց վերը տրամաբանական երկանդամության և զուտ կառուցվածքային եռանդամության հարաբերակցությամբ, բ) այսպես կոչված՝ առաջին աստիճանի քողարկմամբ ստորոգումը, որի միջուկը դիմավոր բայն է, սակայն կամ առաջնային գործորդը¹¹ (ակտանտ)՝ ստորոգելին (ենթական), կամ ստորոգյալը քողագերծման կարիք ունի¹²:

Ե) Համասեռության (իզոմորֆիզմ) սկզբունքով ստորոգում կարող ենք հայտնաբերել լեզվական կառուցվածքի ստորին և վերին եզրային մակարդակներում:

Վանկազմի ստորոգման յուրօրինակ ստորոգիչ է վանկարարը, որը ինքնուրույն վանկ ձևավորելու դեպքում համասեռություն ունի պարզ դիմավոր ձևով արտահայտված գերակայի հետ (հմմտ. *Վազեց, գամ* նն), իսկ բաղաձայնի հետ վանկ ձևավորելու հատկությունը համասեռ է բաղադրյալ դիմավոր ձևով արտահայտված պարզ գերակային, ինչպես նաև բաղադրյալ գերակային:

Հարացուցային հնչյունը (հնչույթը) կայական ինքնաստորոգմամբ է օժտված (ինչպես, օրինակ, ամեն մի բառ), դրսևորվող հնչյունը՝ ներվանկային ու միջվանկային հարաբերությունների «ստորոգացմամբ»:

Ծավալուն խոսքում «լուռ» ստորոգական հարաբերություն կա նախորդ և հաջորդ բոլոր նախադասությունների միջև: Յուրաքանչյուր անցումային դադար՝ իր կապակցիչ գործությամբ, հաստոմն է ստորոգական էացման: Միաժամանակ այստեղ հակադրության չեզոքացում է տեղի ունենում լեզվաբանական և հոգեբանական ստորոգումների միջև, որովհետև ամեն անցումին հաջորդում է նոր

¹¹ Տե՛ս **Ղ. Դեմիր**, նույն տեղում, էջ 250:

¹² Տե՛ս **Մ. Աբեղյան**, նույն տեղում, էջ 369 («Ծան.» հատվածը):

իրագեկումը, ուստի նախորդ նախադասությունը ենթակա-ենթահիմքն է, հաջորդը՝ գերակա-մականքային:

Այս ամենը նորովի է հանգեցնում հայրենական լեզվափիլիսոփայության մեջ տասնամյակներ առաջ բացահայտված **գերհամադրական ստորոգման**¹³ գաղափարին: Լեզվի ողջ էությունը բոլոր գործառույթներով, տոգորված է ստորոգայնությամբ. ստորոգումը լեզվի շունչն է ու շնչառությունը, նրա ոգին է:

David Gyulzatyan - The Integration of Grammatical Categories in Predication. - *Key words: predication, an attribute, substantiated, grammatical category, subject, a cross-categorical interaction.* Predication is not the mere ascription of an attribute to the subject; rather, it is the ascription of a substantiated attribute. There is no grammatical category beyond predication. This is due to the "expansive" quality of the verb, which essentially has no grammatical category of its own, but by appropriating grammatical categories, it ensures a cross-categorical interaction, thereby ensuring communication. On the other hand, however, the language commences with the "est", the Aristotelian potentiality, wherein all these categories slumber, which actualize in speech thanks to their predicability.

Давид Гюлзатян - Совмещение грамматических категорий в предикации. -

Ключевые слова: предикация, атрибут, объект, грамматические категории, подлежащее, межкатегориальные отношения.

Предикация – это передача атрибута, как объекта, подлежащему. Нет грамматической категории, которая была бы вне предикации. Это обусловлено «объемностью» глагола, который, по сути, не имеет собственных грамматических категорий, и, осваивая их, формирует межкатегориальные отношения, с помощью которых обеспечивается коммуникация. С другой стороны, однако, язык начинается с глагольного конструктора – аристотелевского неподвижного первичного двигателя, в котором покоятся все эти категории, воспроизводящиеся в речи благодаря предикации.

¹³ Տե՛ս **Է. Աթայան**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 222:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ «ԳՐԻՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հայոց եկեղեցին դարերի միջով գրեթե անփոփոխ մեզ է հասցրել իր կարևորագույն երկու հարստությունները՝ ծիսակարգը և հոգևոր երաժշտությունը: Հոգևոր թեման, ինքնին պարտադրել է հարազատ մնալ գրոց լեզվին, ուստի ժամերգություններին, պատարագին ուղեկցող շարականների, կցուրդների, մեսեդիների տեքստերը ի սկզբանե գրվել են դասական հայերենով, ապա ավանդաբար շարունակել շարադրվել դրանով՝ նաև հետագա դարերում: Միայն շարականների հեղինակների թիվը մինչև XV-րդ դարն անցնում է երկու տասնյակից:

Հոգևոր երաժշտությունը միջնադարյան Հայաստանում դասավանդվել է բավականին խորությամբ, ինչի մասին վկայում են առանձին երաժշտական «ուսումնարաններ»-ի գոյությունը, բազմաձևավալ մասնագիտական վերլուծությունների առկայությունը, ինչպես նաև այն փաստը, որ եկեղեցու հայրերը խիստ հոգածություն են հանդես բերել հոգևոր երգի ուսուցման հանդեպ: Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարան»-ում «Տեր զի բազում» սաղմոսի առնչությամբ կարդում ենք, որ սաղմոսի 4-դ մասն ըստ Հովհան Օձնեցու «պետք է միշտ «միաձայնությամբ» լինի, երբեմն «ի թիւ՝ խոնարհ ձայնի» և երբեմն էլ ավելի հանդիսավոր երգեցողությամբ»¹, չնայած նույն աշխատության «եկեղեցական պաշտամունքների բացատրություններ» մասում հեղինակն այդ վկայությունները համարում է **«ոչ լիակատար են և ոչ ամբողջական գրվածներ»** և վկայակոչում դրանք վերապահությամբ. «Հին մատենագիրներից, - գրում է նա, - Յոհան Օձնեցին և Խոսրով Անձևացին որոշ տեղեկություններ և հրահանգներ են տվել ժամերգությունների վերաբերյալ, սակայն նրանց գրածները ավելի շատ ծառայում են հին ժամանակների կարգ ու կանոնը

¹ Մ. Օրմանյան, *Ծիսական բառարան*, Ե., 1992թ., էջ 133:

ուսումնասիրելու, քան թե վերջին ժամանակների ծեսը բացատրելու, նաև ոչ լիակատար են և ոչ ամբողջական գրվածքներ են, ուստի երբեմն և չափավոր կերպով կարող ենք օգտվել դրանցից և դրանց նմաններից»²:

Նշանավոր հայագետը շարունակելով մխիթարյան հայրերի վարքագիծը (Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին մխիթարյան հայրերի կողմից նկատվել են իբրև միարարական շարժման հակառակորդներ և դրանով պայմանավորված՝ շրջանցվել է նրանց ողջ գրական ժառանգությունը)՝ քննության չի արժանացրել մասնավորապես Տաթևացու մեծածավալ աշխատությունները, այս դեպքում՝ երաժշտագիտական վերլուծությունները, մինչդեռ այս ոլորտում Գրիգոր Տաթևացին մի կողմից՝ հարցի պատմության շարադրանք ունի, մյուս կողմից՝ տալիս է շարականների և հոգևոր այլ երգերի կառուցվածքի, կատարման խիստ մասնագիտական վերլուծություն և նկարագրություն ու պատեհ առիթով անդրադառնում նաև քերականական կողմին, ստուգաբանում կամ՝ բացատրում այս կամ այն հասկացությունը:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի 9-րդ հատորի ամբողջական պրակներ (45-49-րդ) ամբողջությամբ երաժշտական հասկացությունների, դրանց ծագման, պատմության վերլուծության էջեր են:

Նշանավոր այս աշխատության մեջ հանդիպում ենք հետաքրքիր մի հարցադրման. պատասխանելով այն հարցին, թե այս կամ այն շարականը ով է հեղինակել, Տաթևացին թվարկում է հայտնի շարականների բոլոր հեղինակներին, ապա եզրափակում. «Այսքան շարականս ընդունելի՝ է յեկեղեցի. և աւելին քան զայս՝ խոտելի՝ է և անպիտան»³:

Մեծանուն վարդապետի հիշատակությունը հետաքրքիր է ինքնին. սակայն հատվածի վերջին նախադասությունը հարց է առաջացնում. դրանք «խոտելի և անպիտան» էին ի՞նչ պատճառով՝ թեմայի և բովանդակությամբ, շարադրանքի լեզվի՞, թե՞ երաժշտության: Շարականի դեպքում պարտադիր կարող էին լինել թե՛ գրող լեզվին հարազատ մնալու անհրաժեշտությունը, որ դեռ պարտադիր

² Նույնը, էջ 129:

³ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ. Պոլիս, 1729թ., էջ 638:

պահանջ էր, և թե՛ երաժշտության կանոնականցված պահանջները: Մակայն, ինչպես կարելի է կռահել, շեղումներ եղել են թե՛ լեզվի և թե՛ երաժշտության հարցում, որոնք և խոտանվել են եկեղեցու հայրերի կողմից: Գաղտնիք չէ, որ առաջին հայացքից անմեղ թվացող շեղումները (հատկապես՝ ծիսական, կրոնական, որին խիստ շաղկապված էր հոգևոր երաժշտությունը), կարող էին ենթարկվել խստագույն հավատաքննության՝ դավանաբանական վեճերի մի քանի դար շարունակվելու պատճառով:

Գրիգոր Տաթևացին Տաթևի համալսարանի իր հայտնի երեք «ուսումնարաններից» մեկում անձամբ ուսուցանել է երաժշտություն «Ի միումն **ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերածըշտութիւնս քաղցրալուր ձայնիւ եղանակաւ...** Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւնն: Եւ ի միւսումն՝ զներքին եւ զարտաքին գրեանս»⁴, և ինչպես հատվածն է վկայում, ոչ միայն տեսականորեն է դասավանդել երաժշտություն, այլև ունեցել է «քաղցրալուր ձայն»:

Տաթևացին շեշտում է շարականանագիր հեղինակների առաձնաշնորհի մասին՝ «Որք զծորանս հոգւոյն արբին և ի ժամանակս ժամանակս **երգեցին եղանակաւ զերգս շարականաց**»⁵: Տաթևացու դիտարկմամբ սաղմոսների հիմնական հեղինակը՝ Դավիթ թագավորը, «**հոգէխառնեաց**» դրանք և «ուսոյց երգեցողացն»⁶: Նմանատիպ բնութագրման հանդիպում ենք նաև «Երգ երգոց»-ի նրա հայտնի մեկնության մեջ. «Վասն էր կոչի Երգ երգոց» հարցին նա պատասխանում է, որ ինչպես «ի հարսանիսն **երգ եւ կաքաւ** լինի, այժմ զնոյն պատմէ հոգեպէս»⁷, այսինքն հեղինակն ամենուր շեշտում է շարականների, սաղմոսների ներագրող հոգևոր ուժը:

Անդրադառնալով ձայնին ընդհանրապես՝ Տաթևացին այն բաժանում է հինգ տեսակի: Ըստ նրա ձայնն առկա է նաև ներքին խոսքի մեջ, իսկ ի տարբերություն, օրինակ, սովորական երգի, շարականներում **առաջնային է խորհուրդը, քան ձայնը**. «Ամենայն եղանակք բարբառոց ի հինգ տրամատին: Նա՛խ՝ ամեննին **անձայն**. որպէս

⁴ **Հին ձեռագրերի ինստիտուտ**, *Մատենադարան, ձեռագիր հ. 6607*, էջ 6ա:

⁵ **Գ. Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 637:

⁶ **Նույնը**, էջ 640:

⁷ **Մատենադարան**, *ձեռագիր հ. 1264*, էջ 427 բ:

ներտրամադրեալն ի խորհուրդս: Երկրորդ՝ ամեննին **ձայն առանց բանի**. որպէս գոչումն: Երրորդ՝ որ **բանն առաւել է քան զձայնն**. որպէս երգ շարականաց: Չորրորդ՝ **ձայնն առաւել քան զբանն**. որպէս ձայնաւոր երգք: Հինգերորդ՝ որ **հաւասար է բանն և ձայնն** ի լեզուն. որպէս բարբառ խօսից⁸. վերջինը շաղկապված միտքն է, որտեղ «բանը և ձայնն» հավասար են:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում երաժշտական հասկացություններն ըստ իմաստային դաշտերի խմբավորվում են երեք դաշտերում. **երաժշտական ընդհանուր հասկացություններ, գործիքներ և շարականների, սաղմոսների անվանումներ**: Վերջին խումբը հեղինակը բերում է համատարած գոյականական կիրառությամբ (դրանք թվաքանակով գրեթե վեց տասնյակ են), իսկ «Երեք-սրբեան»-ը անգամ՝ հոլովառությամբ՝ «Երեքսրբենին»:

Ունենք «**ալիլու**», «**գորդայ**» (կամ՝ **գուրդայ**), «**մեսեղի**», «**ովսաննայ**», «**ջուխտ**», «**սաղմոս**», «**Ֆարտ**» փոխառյալ հասկացությունները և սրանցով, փաստորեն, սահմանափակվում է բուն փոխառությունների թիվը: Հեղինակն ինքը, ստուգաբանում է «**ալիլու**», «**ովսաննայ**» բառերը. «Դարձեալ ի յեբրայեցի լեզուն (ալ) ասէ թէ՛ **գայ յայտնեցի**, (էլ) **աստուած**. (ովայ) օրինեցէք և **գովեցէք զկենդանին աստուած**». «Ովսաննայ ի յեբրայեցոցն ի մերս՝ **փրկութիւն լսի**»⁹: «**Մեսեղի**» -ն բացատրում է՝ «կցորդ», ինչպէս հետագայում բացատրել են գրաբարյան բառարանները:

Գրաբարյան բառարաններում համընկնում են նաև «**գուրդա**», «**փոխ**» երաժշտական հասկացությունների բացատրությունները. «Եւ **գուրդայն որպէս ընթերցուածն**: Եւ **փոխն որպէս զլուխն**: **Հանգիստն որպէս մասնաւորքն**. նոյնպէս և **տունքն**»¹⁰:

«**Ֆարտ**» և «**ջուխտ**» հասկացություններին հանդիպում ենք «ձայնը ո՞ր դասունն է հարցի պատասխանի մեջ. «**Ֆարտ**, առաջին ձայնն ա՛ջ դասուն է, և կողմն ահեակ: Եւ յորժամ թիւն երկրորդ լինի որ է՝ **ջուխտ**, առաջին ձայնն ահեակ դասուն է, և կողմն աջ»¹¹:

Մնացյալ դեպքերում հոգևոր երաժշտության բուն հայկական

⁸ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 639:

⁹ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 644:

¹⁰ Նույնը, էջ 636:

¹¹ Նույնը, էջ 641:

ակունքներով պայմանավորված՝ ունենք հայերեն կամ հայերենի բառակազմական կանոններով կազմված կամ տեղայնացված ածանցավոր կամ բարդ բառեր (հիմնականում՝ հարադիր բարդություններ):

1. **Երաժշտական ընդհանուր հասկացություններ.** «անբիծքն», «անձինքն» (անձնավորված, անձին նվիրված շարականներ), «առաւօտու երգն», «երաժիշտ», «երգ», «կանոն», «կանոն գլխին», «կանոնք սաղմոսին» (սրանք կանոններում հավաքված սաղմոսներն են), «կաքաւել», «կողմունք ձայնին», «կողմն առաջին ձայնին», «կողմն երկրորդ ձայնին» (սա կոչվում է «աւագ կողմ»), «կողմն զերրորդ ձայնին» (սա կոչվում է «վառ»), «կողմն չորրորդ ձայնին», «ձայնաւոր երգք», «նուագեն», «շարական վարել», «սաղմոս տուն», «սաղմոսաքաղ փոխեր», «սաղմոսարան», «սաղմոսն շարականք», «տաղք», «փոխեր», «քաղեն»:

Ինչպես նշեցինք, վերլուծություններում առկա են խիստ մասնագիտական մանրամասներ՝ շարականների, սաղմոսների կամ այլ հոգևոր երգերի կատարումների վերաբերյալ: Այսպես օրինակ, «սաղմոսաքաղ փոխերի» առնչությամբ կարդում ենք, որ դրանք «ալելուով» չպետք է ուղեկցվեն, քանի որ սա «սաղմոսաքաղի հաշին է», իսկ «ալելուն միայն սաղմոսին է»¹²: Կամ՝ «առաւօտու երգն» կատարվում է ի դեմս Խաչի: Կամ՝ «Ջարականն ո՞րպէս քաղենք» հարցին՝ պատասխանում է. «Նա՛խ ըստ աւուրց: Երկրորդ՝ համանմանութեան Երրորդ՝ ըստ կարգի»¹³:

Հետաքրքիր է նաև կանոնագլխերի բացատրությունը: Դավթի 147 սաղմոսները բաժանված են 8 մասերի, որոնք կոչվում են «կանոն», իսկ կանոնի 7-րդ կամ վերջին գուբդան կոչվել է «գլխավոր». «Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, **առաջին կանոնին ը** երրորդ գուբդայն օրհնութիւն՝ ՚ի հանդերձելումն ակնարկէ, զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ եգիպտոսի: **Երկրորդն** նոյն խնամակալութիւն և կշտամբութիւն: **Երրորդն** հրոյ սպառնալիք և սատակումն. և դարձեալ աւետեաց հրաւեր: **Չորրորդն** պարտապան

¹² Նույնը, էջ 630:

¹³ Նույնը, էջ 641:

գոհութեան վասն էից փոփոխման. և ոմանց ամօթ պատկառանաց: **Հինգերորդն** հրոյ կիզումն և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան ցօղ 'ի տեառնէ ցօղեալ: **Վեցերորդն** չարչարանաց պատիժ չարչարեցելոց. և ապաշխարողաց թողութիւն. յասելն (ընկեցեր յետս զամենայն թշնամիսն իմ:) **Եօթներորդն** օրհնութիւն հրեշտակաց և փրկութիւն: **Ութերորդն** նոյնպէս զերկոցունց կողմանց յայտնէ զփրկելոց և զկորուսելոց. (օրհնութեամբ նորա լցան տիեզերք.) և դարձեալ (նետաձիգն եղեր 'ի չարս): Այսքան վասն կանոնազլխոցն»¹⁴:

2. Գործիքներ. «աղի», «գործի» (ք), «ստեղիք», «տաւիդ», «ցնծղայ», «փող», «քնար»:

Ըստ հեղինակի, տեղեկանում ենք, որ Դավիթ մարգարեն սաղմոսները կատարում էր քնարի կամ տավղի նվագակցությամբ: Ապա Ասափը և Դիթամը ավելացրեցին ծնծղան: Անաիասը և Եղիազարը փողի նվագակցությունը ավելացրեցին: Իսկ ոմանք էլ, ըստ Տաթևացու՝ «առանց գործեաց երգելին»¹⁵. որն այսպես ասած՝ «ակապելլա» կատարումն էր:

3. Շարականների, սաղմոսների անվանումներ. «զԱղցից կիրակէիցն», «Անթառամ ծաղկին», «զԱյսօր անձառն», «զԱյսօր յարեան», «անձինքն և զհարցն», «զԱնսկիզբն», «զԱստուած անեղն», «զԱւագ շաբաթեանն», «զԶաւագ օրհնութիւնքն», «զԱրարչակներն», «արևագալին շարականներն», «զԱրեգականն», «զԲագումս ի մանկտեացն», «զԵրգեցէքն», «Երեքսրբեանն», «զԵօթանասնիցն», «զԵօթն ձայնիցն», «զԶորս ըստ պատկերին», «Ընդ հոգւոյդ քումն», «զԹոռանցն», «զ'Ի յանսահման ծովէն», «զ'Ի քէն հայցեմքն», «Լոյս զըւարթն», «զԽաղաղութիւնն», «զԽաչին և զեկեղեցոյ», «զԽոտաճարակացն», «զԽորհուրդն անձառ», «զԾաղկազարդի», «զԾննդեանն», «զԿարգ մեծ տօնիցն», «զՄարտիրոսացն», «զՄեղաք յամենայնի», «զՄեծահրաշն», «զՄեծացուցէքն», «զՀանգստեանն», «զՀոգւոյ գալստեան», «զՀրեշտակապետացն», «զՆայեա՛ սիրովն», «զՆինուեացոցն», «զՆորահրաշն», «զՆորոգեալ կղզիքն», «Ուղղիցին», «զՊէնտակոստէին», «զՍուրբն աստուածն», «զՍրբութիւն սրբոցն», «զՎա-

¹⁴ **Նույնը**, էջ 629:

¹⁵ **Նույնը**, էջ 640:

ոին», «գՎարդավառին», «գՎարդավառի ք պատկերն», «գՏեանըն-
դառաջին», «գՓառքն և պլէլուն», «գՓառաւորեալն», «Փառք ի բար-
ձունսն», «գՓոխման առաջին պատկերն», «գՓոխման ք պատկերն»,
«գՕրհնեմք զքեզն», «Օրհնութիւն և փառքն», «Օրհնեա՛ անձն իմ
գտէր, տէր աստուած իմ մեծ եղեր յոյժ» (սա առաջին սաղմոսն է),
«Բարձր առնեմ զքեզ աստուած իմ և թագաւոր իմ» (սա վերջին սաղ-
մոսն է):

Տաթնացու վկայությամբ **շարականը** սկիզբ է առել հինգերորդ դարից, և առաջին շարականի («գԿարգն ապաշխարութեան») հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է: Ժանրը հետագայում այնքան է զարգացել, որ ողջ եկեղեցական ծեսերը, աստվածաշնչյան պատումները, տոները հատիկ-հատիկ, պատկեր առ պատկեր տեղ են գտել շուրջ երկու տասնյակ շարականագիր հեղինակների գործերում. **«Նա իս՝ մեծն մեսրոպը գկարգն ապաշխարութեան. և սուրբն սահակ գաւազ շաբաթեան: Մովսէս քերթօն զծննդեանն, և զմեծացուցէքն, և զտեառնընդառաջին, և զփոխման առաջին պատկերն: Այլ և գկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ՚ի տեսութիւն անթառամ ծաղկին: Իսկ այլք ասեն թէ անանիա շիրակունին է ասացեալ: Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանոսնին: Չայս ամենայն ոմանք անանիայի տան. և ոմանք խորենացոյն: Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, յոհան օձնեցին: Զհռիփսիմեանց անձինքն և զհարցն՝ տէր կումիտասն: Եւ զանսկիզբն, յոհան մանդակունին: Եւ այլք ասեն թէ օձնեցին: Զհանգստեանն, և զմարտիրոսացն, պետրոս գետադարձն: Եւ զբագումս ՚ի մանկտեացն: Զխաչին և զեկեղեցոյ, սահակն որ գնաց ընդ դէմ տաճկաց: Զգորս ըստ պատկերին, գրիգոր մագիստրոսն: Զաւագ օրհնութիւնքն զեօթն ձայնիցն, ստեփաննոս սիրնեցին: Եւ զվառին ներսէս կլայեցին: Այլ և զաղցից կիրակիիցն, և զնիւնուէացոցն, և զծաղկազարդի հարցն, և զհոգւոյ գալստեան դ պատկերն, և զվարդավառի ք պատկերն, և զփոխման ք պատկերն, զիրեշտակապետացն, և զեթանասնիցն, զղևտնդեանցն, զմարգարէից դձ հարցն, և զյովհաննու դձ հարցն, զնորահրաշն, զնայեա՛ սիրովն, զ՚ի քէն հայցեմքն զարևագալին շարականերն, զօրհնեմք զքեզն, զայսօր անձառն, զարարչակներն, զաստուած անեղն, և յոմանց լուսաք**

թէ գտուրք յակոբին այլ: Զայս ամենայն մեծն ներսէս է ասացեալ կլայեցին: Իսկ **գայսօր յարեաւն, գնորոգեալ կղզիքն, և գրոռանցն**, ներսէս լամբօնացին: Իսկ **գլխորհուրդն անճառ, և զմեծահրաշն**, գրիգոր վկայասէրն: Իսկ **գարեգականն**, գրիգոր սկիւռացին: **Զերգեցեքն**, տէր յակոբ կլայեցին: Եւ գոր նախ իմացն, **ըզի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և գտուրք սարգսի օրհնութիւնն**, վարդան վարդապետն: Իսկ զներսէսին մեծի, և **գլխտաճարակացն**, յոհաննէս պլուզն: Եւ զղևոնդեանց մանկունքն դձ, սարկաւագ վարդապետն որ 'ի հաղբատ: Եւ **գարբութիւն սրբոցն** խաչի, ստեփաննոս սիւնեցին»¹⁶:

Սակայն մենք մի տարօրինակ փաստ արձանագրեցինք, երբ փորձեցինք ծանոթանալ բառի ստուգաբանությանը: Մի կողմից, ունենք փաստ, որ ժանրը ծագել է 5-րդ դարում, սակայն պարզվում է, որ մեր շարականագիր վերոնշյալ վարդապետները առնվազն մինչև ութերորդ դարը կամ չեն իմացել, թե ինչ է շարականը, կամ էլ ժանրը օգտագործել են, սակայն՝ առանց անվանման: Այսպես, Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում «Շարական» բառահոդվածի տակ կարդում ենք. «**Ը դարուն Յունաց մէջ, և նրանց օրինակով նաև Հայոց մէջ սովորութիւն դարձաւ միևնոյն տօնին պատկանող զանազան հոգևոր երգերից ընտրելով կամ, եթէ պակասներ կային, լրացնելով՝ կազմել ինը երգերի մի շարք...: -Շարական բառը կանոն բառից աւելի նոր է, մօտաւորապէս ԺԲ դարից, բայց կարող է լինել նաև աւելի հին՝ Ժ դարից**»¹⁷:

Գ. Զահուկյանը բառը դնում է չստուգաբանված բառերի շարքում:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի հեղինակներն այն համարում են փոխառություն երբ. «**շիր**» արմատից:

Բազմաթիվ այլ հայագետներ արաբական ծագում են վերագրել: Մրանց բացատրությունը չընդունելով՝ Ն. Մառն այն ասորական փոխառություն է համարել:

Երեմիա Մեղրեցին տալիս է «կարգ կամ տող» բացատրությունը, որ հետագայում հանդիպում ենք նաև Մ. Աբեղյանի մոտ,

¹⁶ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 637-638:

¹⁷ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե. 1977, էջ 501:

ըստ որի գործ ունենք հայերեն «շար»(ք) բառի հետ՝ -ական մասնիկով¹⁸, որ անառարկելի և անվիճելի է տեսակետ է:

Շարականների վերլուծությունների մեջ խիստ առանձնանում է **«Ջուրբն աստուածն»** կամ, որ ավելի հայտնի է՝ «Երեքսրբեան»-ի մեկնությունը: «Վասն Երեքսրբենին» վերտառությամբ պրակում հեղինակը բերում է ուշագրավ փոքրիկ մի պատմություն, ըստ որի պարզ է դառնում, որ այն հեղինակել է Հովսեփ Արեմաթացին. «այսպէս ասէ Նեքտառիոս հայրապետն հռոմայ թէ՛ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ՚ի խաչէն վասն փայլատակմանցն ՚ի խոցուածոյն: Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ մարմինն սուրբ ի վերայ բազկացն յովսէփայ»¹⁹:

Այն եկեղեցում կատարելու կանոնակարգումը Տաթևացին վերագրում է Իգնատիոս Աստվածագգեացին, երեք անգամ կատարելը՝ Հովհան Ոսկեբերանին: Իսկ հայոց եկեղեցուն ընդօրինակելով՝ այն առաջօր կատարում է ասորի եկեղեցին. **«Այլ և ասորիք ասեն ըստ մեզ զսուրբ աստուածն որ խաչեցար՝ մինչև ցայսօր»**²⁰:

Երաժշտական հասկացությունների Տաթևացու բացատրությունների մեջ հանդիպում ենք նաև նորակազմ բառերի: Հետաքրքիր է դրանցից **«սատանագիւտ»** բառը: Բառիմաստը թելադրում է, որ խոսքը վերաբերում է սատանայի կողմից հնարելուն, սակայն անսպասելի է բացատրության մեջ՝ ինչը հնարելուն: Հատվածից պարզ է դառնում, որ առաջին իսկ երաժշտական գործիքները՝ քնարն ու տավիղը «սատանագիւտ» են, որ ստեղծվել է մարդկանց «իզացնելու», այսինքն հոգեպես թուլացնելու համար, ուստի Դավիթ թագավորը դրանք սպասարկու դարձրեց հոգևոր երգեր կատարելուն. «Վասն է՛ր ձայն և քնար խառնէր դաւիթ ի յերգս հոգւոյն» հարցին հեղինակը պատասխանում է. «Նա՛ խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրինութիւնն աստուծոյ: **Երկրորդ՝ զի սատանայագիւտ էր քնար և**

¹⁸ Նույնը:

¹⁹ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 631:

²⁰ Նույնը

տաւիդ, իգացուցանել զմարդիկ. խառնեաց զնոսա ՚ի բանս հոգւոյն, զի իւր սրովն խոցեաց զինքն և հալածեաց զորպէս ի սաւուղայ»²¹:

Նորակազմ է նաև «կիսափոխ» բառը: Սա գիշերվա ինը ժամերի հսկումներին կատարվող «փոխերին» հաջորդող միջև հանգըստյան վեց ժամերը կատարվող սաղմոսի մաս է. «Իսկ եկեսցեն ունի սաղմոսս թ փոխ բոլոր. պահապան թ ժամուց հանապազորդ գիշերոյն: Եւ վեց կիսափոխն՝ յաւելեալ ժամուցն մինչ ի հանգըստեանն»²²: Որևէ բառարան չունի վկայություն:

Գրաբարյան բառարաններում բացակայում է «անբիծք»-ը՝ իբրև երաժշտական տերմին (տրվում է միայն «անարատ, մաքուր» բացատրությունը). «Անբիծքն վասն մեղաց պատարա գ է. նոյնպէս և յիսներորդ ողորմեայն վասն մեղաց է ալէլու ո՛չ ասի»²³:

Հետաքրքիր է նաև երաժշտական ձայների ծագման պատմությունը: «Ո՞րք գտին ձայնս» հարցին Տաթևացին պատասխանում է. «Ասեն եթէ ստեփաննոս ոմն երաժիշտ զամենայն ձայնս գոյից բաժանեաց իզ. որք են, բառաչել, կառաչել, խխնչել, և այլն նմանապէս: Եւ ստեփաննոսս այս՝ արար գործիք իզ որիշ որիշ. և նոքօք երգէր: Իսկ թիմզիանոս արար մի գործի և իզ աղի: Եւ յետ սորա թովնաս երաժիշտ՝ այլակերպ յօրինէր գործի. որ զամենայն կենդանեաց ձայնս նովաւ երգէին: Իսկ յետ սորա՝ Մինիգրէս արար զառաջին ձայնն, ՚ի հիւսնականէ՝ զտեալ արուեստից: Եւ Փոկեղեղէս եղբայր նորա՝ արար զերկրորդ ձայնն ՚ի դարբնականէ՝. Ապա՝ Մովսէկդիղէս եղբայր սոցա եգիտ զերրորդ ձայնն ՚ի հոսանաց. ապա Պապիանոս քեռորդի սոցա՝ արար զչորրորդ ձայնն ՚ի ծփանաց ծովու: Եւ ապա՝ քինոսփէնէս հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՝ ըզկողմն առաջին ձայնին: Ապա աքիլէս, զատուցանէ՝ զկողմն երկրորդ ձայնին որ կոչի աւագ կողմն: Եւ զերրորդ ձայնին որ կոչի վառ: Ապա՝ նոմինոս, զատուց զկողմն չորրորդ ձայնին. որ է՝ վերջին: Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն որ ուսաւ ՚ի ծովային կենդանեաց»²⁴: «Բառաչել», «կառաչել», «խխնչել»-ը ձայնարկություններ լինելով՝ վերապահությամբ պետք է ընդունել երաժշտ-

²¹ Գ. Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 641:

²² Նույնը, էջ 622

²³ Նույնը, էջ 630:

²⁴ Նույնը, էջ 640:

տական հասկացությունների մեջ, սակայն հարցի պատմության առումով հասկանալի է, որ ձայնն սկսել է մշակվել նմանակումներից և պարզունակ հնչումներից:

Susanna Grigoryan - Musical Terminology Meaning Research in the “Book of Questions” of Grigor Tatevatsi. - The spiritual music in Medieval Armenia was taught very thoroughly, which was proven with already existed special musical “schools”. Grigor Tatevatsi personally taught music in one of the three “schools” of Tatev university, and the entire chapters of his “Book of Questions” /45-th – 49-th/ were dedicated to musical terms and the history of it’s origin. Musical concepts were examined in three semantic fields – original music concept itself, instruments and the names of religious songs, psalms. He also has some newly-formed words, such as satanayagyut, kisapokh.

Сусанна Григорян - Смысловое исследование музыкальных терминов в "Книге вопросов" Григора Татеваци. - Духовная музыка в средневековой Армении преподавалась весьма углубленно, о чем свидетельствует наличие отдельных музыкальных "школ". Григор Татеваци лично преподавал музыку в одной из трех школ Татевского университета, и целые выпуски его "Книги вопросов" посвящены музыкальным понятиям и истории их возникновения. Музыкальные понятия исследовались в трех измерениях – непосредственно музыкальные понятия, инструменты и названия шараканов, псалм. Татеваци создал также новые слова, такие как "сатанаягют", "кисапох".

**ՀԱՅԵՐԵՆԻ ԵՆԹԱՇԵՐՏԱՅԻՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ԲԱՌԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայոց լեզվի բառապաշարի առավել ուսումնասիրված հատվածը՝ հնդեվրոպական ծագման բառային միավորներն են։ Սա պայմանավորված է վերջին երեք դարերի ընթացքում Եվրոպայում համեմատական լեզվաբանության՝ իբրեւ առանձին գիտաճյուղի բուռն զարգացմամբ։ Բացի գիտական պարբերականներում լույս տեսած հազարավոր ստուգաբանական հոդվածներից, 20-րդ դարի սկզբից ի վեր լույս են տեսել հայոց լեզվի 3 ստուգաբանական բառարաններ։ Սրանք հատկապես կամ ի մասնավորին անդրադարձել են հայերենի այսպես կոչված «բնիկ» բառաշերտին։

Սակայն հայոց լեզվի ենթաշերտային (սուբստրատային) բառերը առանձին հետազոտության առարկա երբեք չեն եղել։ Մինչդեռ այս բառային միավորների ուսումնասիրությունը խիստ արժեքավոր է ոչ միայն հայերենի զարգացման պատմության լուսաբանման տեսանկյունից, այլև տարածաշրջանի հին ու նոր՝ մեռած եւ կենդանի տարբեր լեզուների ուսումնասիրման, դրանց միջեւ գոյություն ունեցող հնչյունական օրինաչափությունների վերհանման համար։

Նախքան ենթաշերտային մի քանի բառերի քննությանն անցնելը, փորձենք հակիրճ ձեւակերպել, թե ինչ ենք հասկանում ենթաշերտ ասելով։ Ներկա լեզվաբանական մտքի զարգացման մակարդակում, կոնկրետ հայերենի պարագայում, ենթաշերտ ասելիս սովորաբար ի նկատի է առնվում Հայկական լեռնաշխարհի լեզվավիճակը՝ նախքան հայերենի, որպես ինքնուրույն եւ այդ լեռնաշխարհի ամբողջ տարածքի համար ընդհանուր լեզվի ձեւավորումը։ Այս սահմանման համար որպես հիմք ենք ընդունել 20-րդ դարի հայերկու խոշոր լեզվաբանների՝ Հ. Աճառյանի եւ Գ. Զահուկյանի աշխատությունները¹։

¹ Տե՛ս, հատկապես, **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Պետական համալսարանի հրատարակչություն, Յերեվան, 1940, էջ 202-217։

Ենթաշերտը ոչ թե մեկ միասնական լեզու է կամ նախալեզու, այլ Հայկական լեռնաշխարհի զանազան գավառներում եւ երկրամասերում ժամանակին խոսվող ցեղային առանձին լեզուների ու բարբառների այն ամբողջությունը, որի բառապաշարը եւ քերականական ձեւերը անքակտելիորեն մտել են հայոց լեզվի կոտ համակարգի մեջ: Այդ ցեղային լեզուները եւ բարբառները չեն պատկանել ներկայիս հայտնի որեւէ լեզվաընտանիքի, փաստորեն մեռած լեզուներ են եւ հետեւաբար հայերենը դրանց միակ ժառանգորդն է: Որոշ դեպքերում, սակայն, այդ ենթաշերտը ներկայացնող ցեղային լեզուներից եւ բարբառներից ծագած բառերի զուգաձևերը եւ տարբերակները պահպանվել են նաեւ հարևան լեզուներում: Հայերենի բառապաշարում մի ստվար զանգված կազմող անհայտ ծագման բառերը, որոնք ո՛չ փոխառություններ են, ո՛չ էլ ունեն զուգահեռներ հնդեվրոպական ցեղակից լեզուներում, մեծ մասամբ ծագում են ենթաշերտից: Այսինքն՝ դրանք նույնքան բնիկ եւ հարազատ են հայոց լեզվի համար, որքան հնդեվրոպական ծագման բառերը:

Ստոր բերվում են ենթաշերտային ծագման ութ բառեր կամ արմատներ, որոնք մեծ մասամբ առաջին անգամ են քննվում այդ դիտանկյունից: Եթե խնդրո առարկա բառերի զուգահեռ ձեւերն առկա են հարևան լեզուներում (վրացերեն, պարսկերեն), ապա տվյալ ենթախորագրի ներքո նշվում են նաեւ այդ լեզուների տարբերակները:

հայ. արեթ «դիւրավառ նիւթ» – վրաց აბედი-ო [abed-i] «արեթ»²

Հաբեթասունկը կամ արեթասունկը, որի անվան տարատեսակներն են՝ արեթենի, արեթուկ, ծառի մակաբույծ սունկ է: Աճում է կաղնու եւ այլ սաղարթավոր ծառատեսակների վրա, գործածվում է հատկապես վերքերի արյունահոսությունը կանգնեցնելու համար. լատիներեն անվանումն է՝ polyporus fomentarius³:

Արեթը դյուրավառ նյութ է (polyporus squamosus), որ ստացվում է (h)արեթասնկից՝ հատուկ պատրաստությունից հետո, ավե-

² Վրացերենի տվյալները հիմնականում քաղել ենք հետեւյալ աղբյուրից՝ Ռ. Գորգաձե, Վրացերեն-հայերեն բառարան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005:

³ Ս. Գաբումաձեան, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 1, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 1:

լացնելով այրած կտավ եւ այլ նյութեր⁴:

Աբեթ բառի առաջին հայտնի վկայությունը հայերենում Գրիգոր Նարեկացու մոտ է (10-րդ դ.):

Հրաչյա Աճառյանը վրացական ձեռագրի [abed-i] «աբեթ» ձևը համարում է փոխառյալ հայերենից. նա բերում է նաև այլ քարթվելական զուգահեռներ, սակայն չի ընդունում արմատի՝ քարթվելական ծագման վարկածը, որն առաջարկել էր Ն. Մառը⁵: Գեորգ Ջահուկյանը, ընդհակառակը, հայերենը փոխառյալ է դնում վրացերենից, քանի որ ընդունում է դրա քարթվելական ծագման վարկածը⁶:

Ակնհայտ է սակայն, որ առաջին դեպքում, այսինքն՝ հայերենից փոխառվելու պարագային, վրացերենում կունենայինք *ձեթ-օ [abed-i] տարբերակը՝ շնչել խուլ պայթականով, իսկ երկրորդ դեպքում՝ եթե հայերեն բառը փոխառված լիներ վրացերենից, այն պիտի հնչեր *աբեդ եւ ունենար վերջահար ձայնել պայթական, ինչպես վրացերենում: Ի դեպ, այս ձևն արձանագրված է միջին հայերենում (աբեդ/աբեդ)⁷: Սակայն առաջին հայտնի վկայությունը, ինչպես նշվեց, աբեթ ձևով է:

Մեր կարծիքով, շատ հավանական է, որ հայերենում և վրացերենում գործ ունենք ընդհանուր ենթաշերտային բառի հետ: Ընդ որում, աբեթ բառը հանդիպում է հայերենի նաև արեւմտյան բարբառներում (Հաճն, Խարբերդ, Համշեն, Ջեթրուն), իսկ վրացերենին զուգահեռ ձևերն առկա են մեզրելերենում եւ սվաներենում:

աղանձ «բոված արմտիք» – վրաց. ალანძვა [alanʒva] «խանձում», ალანძვლ-ი [alanʒul-i] «խանձած»

Աղանձը տապակի վրա խարկած ընդդեմն (արմտիք) է՝ ցորեն, ձավար, գարի, սիսեռ ևն. սրանից ունենք նաև աղանձել «խար-

⁴ Նույն տեղում: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀՀԲԲ), Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 1969, հ. 1, էջ 1:

⁵ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. 1, էջ 74:

⁶ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 19:

⁷ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2009, էջ 13:

կել, բովել, խորովել» բայը: Աղանձի վրա հաճախ ավելացնում էին չամիչ եւ տարվա որոշ օրերին գործածում իբրեւ աղանդեր: Հոմանիշներն են՝ խայծառ, խածաղ/խեծաղ, կարկատ, եղի, մուրկ⁸:

Աղանձ արմատի առաջին հայտնի հիշատակությունը 12-13-րդ դարերից է (Մխիթար Հերացի եւ «Գիրք Վաստակոց»):

Հ. Աճառյանը հայերենին վերագրում է հնդեվրոպական (հ.-ե.) ծագում *լոժհ- նախաձևից, որի ժառանգ-ձեւերը ցեղակից լեզուներում նշանակում են «եփել, կերակուր պատրաստել». այս պատճառով՝ վրացերեն ალანჯვა [alanʒva] «խանձում» բառը Աճառյանը փոխառյալ է համարում հայերենից⁹: Մեր կարծիքով, սակայն, իմաստաբանորեն քիչ հավանական է հայ. աղանձ-ի կապը հ.-ե. *լոժհ- նախաձևի հետ: Գ. Զահուկյանը նույնպես չի ընդունում Հ. Աճառյանի բացատրությունը՝ նշելով, որ Պոկոռնու բառարանում *լոժհ- արմատ չկա: Գ. Զահուկյանն առաջարկում է այլ հ.-ե. Ստուգաբանություն՝ *polntio- նախաձևից, որի արմատն է, ըստ նրա՝ *pel- «ալյուր, փռչի, ալյուրից շիլա». վրացերենի մասին նա որեւէ բան չի գրում¹⁰:

Թվում է՝ առավել հավանական է ընդհանուր ենթաշերտային ծագում ենթադրել նշված բառերի համար: Հայերենում աղանձ- արմատը տարածված է թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան բարբառներում¹¹:

**հայ. աղերս- – վրաց. ალერს-ო [alers-i] «փայփայանք, շոյանք»,
ալջընօս-ო [alersian-i] «քնքուշ, սիրալիր»**

⁸ Գ. Աւետիքեան, Խ. Մխրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, էջ 33; Մ. Զախչախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Տպարան Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837, էջ 22; Մ. Գաբամաճեան, նշվ. աշխ., էջ 24; Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1912, էջ 18; Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 73; Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1, էջ 39; ԺՀՀԲԲ, 1969, հ. 1, էջ 33; Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երեւան, 2009, էջ 19:

⁹ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 120-121:

¹⁰ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 34:

¹¹ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 121:

Հայերենում աղերս բառն ունի երկու հիմնական իմաստ՝ 1. սաստիկ աղաչանք՝ պաղատանք, եւ 2. առընչություն, կապակցություն: Հնում ունեցել է նաեւ «ընծա, շնորհք, կաշառք» իմաստը¹²:

Թերևս, աղերս բառի տարբերակներն են՝ Մշո բարբառում վկայված աղերիլ եւ Վանա բարբառում վկայված աղաղիլ «աղաչել, պաղատել, աղերսել» բառերը, որոնք իր բարբառային բառարանում ընդգրկել է Հ. Աճառյանը¹³:

Հայ. աղերս- արմատի հոմանիշներն են՝ աղերսանք, աղաչանք, թախանձանք, խնդրանք, հայցուածք, ողորանք, պաղատանք, թախանձ, ողոր¹⁴:

Աղերս բառը հայերենում առաջին անգամ վկայված է Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ (5-րդ դար):

Հ. Աճառյանը թեև հայերենի ծագումը համարում է անհայտ, բայց վրացերենը փոխառյալ է դնում հայերենից¹⁵: Գ. Ջահուկյանը *աղ- արմատի համար ենթադրում է հ.-ե. ծագում՝ *el- բնաձայնական նախաձևից, սակայն անբացատրելի է մնում -երս վերջավորությունը. վրացերենի մասին ոչինչ չի գրում¹⁶:

Իսկապես, վրացերենը հնչյունաբանորեն կարող էր փոխառյալ լինել հայերենից, եթե չլիներ իմաստային զգալի հեռավորությունը: Ուստի, կարծես, առավել հավանական է թվում ընդհանուր ենթաշերտային ծագումը երկու լեզուների համապատասխան ձևերի համար: Հայերենում աղերս- արմատը հայտնի է Մեղրիի եւ Մշո բարբառներում¹⁷, այսինքն թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան:

հայ. աղիւս – վրաց. ალიზ-ო [aliz-i] «հում աղյուս» – պարսկ. آليز

¹² Ս. Գաբումաճեան, նշվ. աշխ., էջ 27-28; Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1, էջ 43; Հայոց լեզվի բարբառային բառարան (ՀԼԲԲ), Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2001, հ. 1, էջ 38; Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2006, էջ 12:

¹³ Հ. Աճառեան, ՀԳԲ, էջ 75:

¹⁴ Գ. Աւետիքեան, Խ. Միլլմէլեան, Մ. Աւգերեան, ՆԲՀԼ, էջ 37-38; Յ. Գալստեան, Բառարան գանձարան հայերէն լեզուի (ԲԳՀԼ), Գահիրէ, 1938, էջ 9; Ռ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 12; Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., Երևան, 2009, էջ 19:

¹⁵ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 126-127:

¹⁶ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 36:

¹⁷ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 127; ՀԼԲԲ, հ. 1, էջ 38:

[āxīz] «հում աղյուս»

Աղյուսը՝ կաղապարի մեջ շինված, ջրով շաղախված եւ ապա հնոցի մեջ թրծած եւ/կամ արեւի տակ չորացրած կավահողի ուղղանկյուն կտոր է, որը քարի փոխարեն գործածվում է իբրև շինանյութ՝ պատ շարելու համար: Լինում է հարդախառն (եթե հում է) կամ առանց հարդի (եթե թրծած է)¹⁸:

Հումանիշներն են՝ ագուռ (թրծած) եւ ալիզ (չթրծած՝ հում)¹⁹:

Հայերենում աղիւս բառն առաջին անգամ վկայված է Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ (5-րդ դար):

Հ. Աճառյանը հայերենի համար ենթադրում է փոխառություն փոքրասիական մի հին լեզվից, իսկ վրացերեն եւ պարսկերեն ձևերը փոխառյալ է դնում հայերենից²⁰: Սակայն Գ. Ջահուկյանը չի ընդունում այս տեսակետը, քիչ հավանական է համարում նաեւ հ.-ե. Ծագումը²¹:

Հայերենից փոխառված լինելու պարագային՝ վրացերենում եւ պարսկերենում սպասելի էին վերջահար /-s/ խուլ շփականով ձևերը եւ ոչ /-z/ ձայնեղով: Բացի այդ, ոչ մի կերպ չի բացատրվում /ւ/ կիսաձայնի կորուստը /ի/ ձայնավորից հետո եւ երկբարբառի վերածումը պարզ ձայնավորի:

Այդպիսով, առավել հավանական է թվում ընդհանուր ենթաշերտային ծագումը կամ պարզապես տարածաշրջանի մշակութային բառ լինելը: Հայերենում աղիւս տարածված է արեւմտյան բարբառներում²²:

Ինչ վերաբերում է ալիզ «հում աղյուս» բառին՝ վկայված Թիֆլիսի բարբառում²³, ապա ակնհայտ է, որ այն փոխառյալ է վրացերենից (ձԼՕԹ-օ [aliz-i] > ալիզ):

¹⁸ Գ. Աւետիքեան, Խ. Միրմէկեան, Մ. Աւգերեան, ՆԲՀԼ, էջ 40; Ս. Գաբամաճեան, նշվ. աշխ., էջ 29; Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1, էջ 44; ԺՀՀԲԲ, 1969, հ. 1, էջ 14, 41:

¹⁹ ԺՀՀԲԲ, 1969, հ. 1, էջ 14, 41; Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., 2009, էջ 21:

²⁰ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 130-131:

²¹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 37:

²² Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 130:

²³ ՀԼԲԲ, 2001, հ. 1, էջ 16:

հայ. ամայի – վրաց. ამაო [amao] «ապարդյուն, ունայն», ამაობა [amaoba] «ունայնություն»

Ամայի-ն ածական է՝ «անմարդաբնակ, ավերակ, անմշակ» նշանակությամբ: Այս բառի հոմանիշներն են՝ անմարդաբնակ, անբնակ, անապատ, ավերակ, անշեն, անմշակ, խոպան, ապալեր(կ), պարապ²⁴:

«Ամայի» բառի առաջին հայտնի վկայությունը Մովսես Խորենացու «Յաղագս պիտոյից» աշխատության մեջ է:

Հ. Աճառյանը «ամայի» բառը համարում է անհայտ ծագման բառ, սակայն վրացերեն ձևը փոխառյալ է դնում հայերենից²⁵: Գ. Ջահուկյանն էլ, իր հերթին, «ամայի» բառը միացնում է ամ-ալ «լցնել» արմատին²⁶, ինչը, սակայն, իմաստաբանորեն անհամատեղելի է կարծես:

Վրացերենի «ապարդյուն, ունայն» նշանակությամբ մոտ գործածություն հայտնի է նաեւ գրաբարում՝ «պարապ տեղը, իզուր»:

Ամենայն հավանականությամբ, նշված բառերի համար պետք է ենթադրել ընդհանուր ենթաշերտային ծագում: Նույն աղբյուրից կարող էր ծագել նաեւ Վանի թագավորության սեպագրերում մեկ անգամ գործածված *amei* բառը²⁷, որի նշանակությունը պարզ չէ:

Ի դեպ, ամայի բառը հայերենում տարածված է թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան բարբառներում:

Նախորդ հինգ ենթախորագրերի տակ քննարկված հայերեն բառերը եւ դրանց այլալեզու զուգահեռ ձևերը ժամանակին միմյանց հետ համեմատվել են նաեւ նախորդ հետազոտողների կողմից, սակայն նրանց կողմից տրվել են այլ մեկնաբանություններ: Հաջորդ քննարկվելիք բառերը առաջին անգամ են բաղդատվում:

հայ. աւ- «խենթություն, մոլեգնություն». աւ- «շվարում, շփոթություն», աւաղ «ափսոս, նիհար, տկար, վատուժ» – վրաց. ავ- [av-]

²⁴ Ս. Գաբամաճեան, նշվ. աշխ., էջ 37; Յ. Գալայեան, ԲԳՀԼ, էջ 11; Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1, էջ 55; Ս. Սուքիասյան, նշվ. աշխ., 2009, էջ 24:

²⁵ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 144-145:

²⁶ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 42:

²⁷ Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (КУКН), Ереван, 2001, с. 128, 434.

ժխտական նախածանց, ձց-օ [av-i] «չար, կատաղի»

Հայերենում աւ- արմատը պահպանված է աիլ «ցնորվել, խենթանալ» բայի մեջ, որից գրաբարում կազմված էր հատկապես աւեալ «ցնորված, խենթ» բառը, գուցե նաեւ՝ *աւանդիլ չպահպանված բայից աւանդող «ցնորված, մոլեգնած» ենթակայական դերբայը։ Թվում է, թե կարծես աւաղ անյայտ ծագման բառի մեջ նույնպես կարելի է տեսնել աւ- արմատը։

Աւեալ «ցնորված» ձևը առաջին անգամ վկայված է Բարսեղ Կեսարացու թարգմանության մեջ։

Հ. Աճառյանը աւ- արմատի ծագումը համարում է անհայտ, թեև աիւն բառը միացնում է աւ-ին²⁸։ Մինչդեռ Գ. Ջահուկյանը՝ աւ- «խենթություն, մոլեգնություն» արմատը բխեցնում է հ.-ե. *aμ- «սիրել, հաճել, կարիք ունենալ, ցանկանալ, տենչալ, նպաստել, օգնել» նախածնից եւ նույնպես աիւնը-ը միացնում է աւ-ին²⁹։

Ամենայն հավանականությամբ, եթե հաշվի ենք առնում հայերենի եւ վրացերենի տվյալները, առավել իրատեսական է թվում համապատասխան երկու բառարմատների ենթաշերտային ծագումը։

հայ. բարձ- «բարձրություն» – վրաց. აბარბაცება [abarbaceba] «երերալով բարձրանալ»

հայ. բարձ- «բարձրություն» - վրաց. აბრზანება [abrzaneba] «ստիպել տեղից վեր կենալ բարձրանալ»

Բարձ- արմատը հայերենում բազմաթիվ բարդ եւ ածանցավոր բառեր է կազմում։ Այստեղից է նաեւ՝ -ր աճականով բարձր ածականը, որ նշանակում է ուղղահայաց դիրքով՝ ներքևի կետից մինչև վերին կետը զգալի հեռավորություն ունեցող, դեպի երկինք ուղղությամբ ձգվող³⁰։ Նույն ձևից է՝ արեւմտահայերեն բարձրկէկ «քիչ բարձր» ածականը³¹։

Բարձ- արմատի առաջին հայտնի վկայությունը Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ է (5-րդ դ.)։

²⁸ Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 360-361։

²⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 98։

³⁰ Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1, էջ 346։

³¹ Ա. Մարգարյան, Արեւմտահայերենի բառարան, Երևան, 1991, էջ 54։

Հ. Հյուբշմանը, Հ. Աճառյանը եւ Գ. Զահուկյանը բարձ-ր արմատին վերագրում են հ.-ե. ծագում *bhrǵ'h- նախաձեւից: Վրացերենի մասին չեն գրում³²:

Այնինչ վրաց. ձեռնագրած [abarbaceba] բառի մեջ, ամենայն հավանականությամբ, առկա է *ծա-ց- [bar-c-] արմատի կրկնությունը, ինչը հենց բառին հաղորդել է երեքալու նրբերանգը, իսկ ձեռնագրած [abrzaneba] բառի մեջ տեսնում ենք ծ(ս)ր-ծ- [b(a)r-ʒ-] արմատը: Այսպիսով, վրացերենում վկայված են *bar- «բարձրության» արմատի՝ երկու տարբեր աճականներով ձևեր՝ *ծա-ց- [bar-c-] եւ ծ(ս)ր-ծ- [b(a)r-ʒ-]:

Հետաքրքրական է, որ վրացերենում եւ հայերենում պահպանված այս նույն արմատը հանդիպում է նաեւ Վանի թագաւորության սեպագրերում՝ *barʒ-i / *barʒ-u ձևերով՝ հետեւյալ բարդ բառի մեջ՝ bar-zu-di-bi-du-(ú)-ni կամ bar-zi-di-bi-du-(ni), որը նշանակում է տաճարական համալիրի մի կառույց³³: Սեպագրային այս ձևերից առաջինը՝ *barʒ-u հնչյունապես ճշգրտորեն արտացոլված է գրաբարում բարձր բառի -ու հոլովման մեջ՝ բարձ-ու:

Բարձ- արմատի քննությունը վրացական և սեպագրային գուգահեռների ներգրավմամբ, ցույց է տալիս, որ հնարավոր է ենթաշերտային եւ հնդեվրոպական նախաձևերի բաղադրումը կամ ընդհանուր ծագումը նոստրատիկ նախահիմքից:

հայ. բիզ – վրաց. ձեռնագրած [abzek’a] «վեր ցցել, տնկել», «վեր բարձրացնել», ձեռնագրած-օ [abzek’il-i] «ցցած, վեր բարձրացրած»

Բիզը պարզ գործիք է՝ փայտե կոթով, մետաղե սրածայր սլաքով, գործածվում է գլխավորապես կոշկակարության մեջ կաշի ծակելու եւ կարելու համար, երբեմն նաեւ խազելու ու փորագրելու համար: Հոմանիշներն են՝ հերին, հերոն:

Մագերը բիզ-բիզ կանգնել արտահայտությունը նշանակում է «մագերը ցցվել, տնկվել». ասվում է զարմանք եւ սարսափ նկարագրելու համար՝ անակնկալ պատահարի ժամանակ: Հայոց խոսակցական լեզվում բավական տարածված է նաեւ բզիկ-բզիկ անել - «պատառոտել, ծվատել» բաղադրյալ բայը³⁴:

³² Հ. Աճառեան, ՀԱԲ, 1926, հ. 1, էջ 413-415; Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 121:

³³ Н. Арутюнян, КУКН, с. 440.

³⁴ Մ. Գաբումաճեան, նշվ. աշխ., էջ 314-315; Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., 1944, հ. 1,

Բիզ բառը գրական աշխարհաբարում վկայված է Երեւանի առաջին պարբերաթերթում՝ «Պսակ»-ում (1880/06/07, No 13), իսկ «Բարբառային աշխարհաբարում» ավելի վաղ՝ Խաչատուր Աբովյանի մոտ («Պարապ վախտի խաղալիք», 1841 թ.)³⁵:

Ստ. Մալխասյանցը՝ հայ. բիզ բառը համարում է ծագած թուրքերեն *biz* «խայթոց» բառից: Ըստ երեւոյթին, այդ կարծիքին են եղել 20-րդ դարի մեր մյուս լեզվաբանները նույնպես, եւ այդ պատճառով բառը տեղ չի գտել հայերենի ստուգաբանական բառարաններում: Այս հարցում թերեւս դեր է խաղացել նաեւ բառի՝ ուշ վկայված լինելը:

Ինչնէ, թուրքերենից ծագած լինելու մեկնությունն իմաստաբանորեն քիչ հավանական է կարծես: Վրաց. *აბზეკა* [*abzek'a*] եւ *აბზეკილი*-*ი* [*abzek'il-i*] բառերի համադրումը հայերենի հետ թույլ է տալիս վերականգնել վրաց. **bz-ek'* արմատը, որի առաջին բաղադրիչը, ինչպես երևում է, նույնական է հայերեն բառի հետ:

Այսպիսով, նշված բառերի համեմատական քննությունից հետո՝ հավանական է թվում հայերենի եւ վրացերենի ընդհանուր ենթաշերտային ծագումը: Ընդ որում, հայերենում բիզ արմատը տարածված է թե՛ արևմտյան, թե՛ արևելյան բարբառներում³⁶:

Торк Далалян - Этимология некоторых армянских субстратных слов. - В статье рассматривается происхождение восьми армянских слов и корней, этимология которых в большинстве случаев не совсем была ясна. Основываясь на существование параллелей в грузинском и персидском языках, предполагается о субстратном происхождении данных форм.

Tork Dalalyan - Etymologies of Some Armenian Substratum Words. - We discuss in this paper eight Armenian words and roots which's etymologies in most cases have been obscure to some extent. Basing on the existence of parallels in Georgian and Persian languages we assume the substratum origin of these forms.

էջ 100, 370; **Ա. Սուրբասյան, Ս. Գալստյան**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ հրատարակչություն, Երեւան, 1975, էջ 127; **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, հ. 1, էջ 867:

³⁵ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am

³⁶ ՀԼԲԲ, 2001, հ. 1, էջ 193:

**ՀԱՅԵՐԵՆԻ ԱՄԲԻՈՆԸ ՓԱՐԻԶԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵՆՏՐԱՆԻ
ԼԵԶՈՒՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

Հայերենի ամբիոնը Փարիզում բացվել է Նապոլեոն Բոնապարտի հատուկ հրահանգով: Այդ ամբիոնը բացելու նախաձեռնողը եղել է Շահան Զրպետը, որը 1798-ին ծանոթացել է Նապոլեոն Բոնապարտի հետ և նրան էլ հայտնել է իր փափագը՝ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոն բացելու մասին: Այդ ամբիոնի բացման և հետագա ընթացքի մասին մանրամասն գրված է Ֆրանսիայի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերի երկու աշխատություններում¹: Առաջինը կոչվում է «Հայերենի ամբիոնը Արևելյան կենդանի լեզուների հատուկ դպրոցում», երկրորդը՝ «Հայաստանի շուրջը»: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ Ֆրեդերիկ Մակլերը կրկնեց իր 1911 թվականի նոյեմբերի 14-ի Փարիզի Արևելյան կենդանի լեզուների հատուկ դպրոցի հայերենի դասընթացի բացման արարողության ժամանակ կարդացած ծավալուն զեկուցումը՝ 1917 թվականին լույս տեսած «Հայաստանի շուրջը» մեծարժեք գրքում: Պատճառը մեկն է. հայագետը կարևորեց հայերենի դերը 1915 թվականի հայերի ցեղասպանությունից հետո՝ միաժամանակ ազդարարելով, թե մեկ ու կես միլիոն ոչնչացված անմեղ հայերը եղել են այդ հինավուրց ու շատ հարուստ լեզվի ու քաղաքակրթության կրողները:

Ֆ.Մակլերի՝ հայոց լեզվի ամբիոնին նվիրված հետազոտությունը յուրօրինակ խրախույս էր բոլոր նրանց, որոնք որոշել էին գիտահետազոտական բնագավառում ընտրել հայերենը:

Ըստ որում Մակլերը հավասարապես կարևոր է համարում օտար հայագետների համար ոչ միայն հին հայերենի՝ գրաբարի յուրացումը, այլև հայերենի նոր շրջանի երկու ճյուղերի՝ արևմտահա-

¹ **F.Macler**, *La chaire d'Arménien l'école spéciale des langues orientales vivantes*, Paris, 1912, **F.Macler**, *Autour de l'Arménie*, Paris, 1917, p.1-65. Տե՛ս նաև **Ա.Դոկուխանյան**, *Ֆրեդերիկ Մակլերը հայագետ*, Երևան, 2011, էջ 57-74:

յերենի ու արևելահայերենի իմացությունը: Դրա առհավատչյան այն կարևոր ու գլխավոր գիտական իրողությունն է, որ հայերենի քերականությունը համեմատական առումով շահեկան է ուսումնասիրելու հնդեվրոպական լեզուները, ծանոթանալու միջնադարի ընդհանուր պատմությանը, եկեղեցու պատմության վերաբերյալ փաստեր քաղելու, հիանալի ձևով պատկերացնելու հեթանոսական պաշտամունքի ձևերը, արևելյան ժողովրդական բանահյուսությունը, ցույց տալու համար այն կապը, որ կար արվեստի և ճարտարապետության միջև:

Արևելյան կենդանի լեզուների հատուկ դպրոցում հայերենի ուսուցման դասընթացն ավարտելու համար ընդամենը երեք տարի էր հատկացվում: Այդ ժամանակահատվածում ուսանողները պետք է յուրացնեին ոչ միայն գրաբարը, այլև աշխարհաբարը, որը սովորական խոսակցական լեզու չէր, այլ խիստ ձևափոխվել էր ու կատարելագործվել գրաբարի ազդեցության տակ:

Տեղին է հիշատակել մի կարևոր փաստ: Հայ գրականության դասականներից Ռափայել Պատկանյանը եղել է Լազարյան ճեմարանում Մկրտիչ Էմինի աշակերտներից և ուշագրավ հուշեր է թողել իր սիրելի ուսուցչի մասին:² Հայտնի փաստ է, որ Էմինն իր աշխատությունները գրում էր գրաբարով, ռուսերեն ու ֆրանսերեն: Նույնիսկ Խաչատուր Աբովյանն իր երկու նամակներն՝ ուղղված Էմինին, գրել է գրաբարով: Սակայն Էմինը նախանձախնդիր էր աշխարհաբարի կատարելության խնդրում և շարունակ հետևում էր վերջինիս հարստացմանը: Այդ մասին վկայում է Ռափայել Պատկանյանը, և հայտնի է, որ Էմինի ջանքերով աշխարհաբարի մեջ մտան և ցարդ գործածվում են **դասարան, թեյ, սուրճ, դասախոսություն, համալսարան** և այլ բառեր:

Ֆ.Մակլերը բարեխղճորեն ներկայացնում է հայագիտության անցած ճանապարհը եվրոպական երկրներում՝ Բուալիա, Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա:

Դեռ 1322 թվականին հայերենն այնքան էր կարևորվում կա-

² Տե՛ս *Մկրտիչ Էմինի երկասիրությունները հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840-1855թթ.) հայկաբանի մի պատկերով և կենսագրական նյութերով*, Մոսկվա, 1898, էջ 201-212:

թուլիկների համար, որ Ավինյոնում նստող կաթոլիկ եկեղեցու պապը հայերենի ուսուցիչներ էր պահանջել Կիլիկիայի թագավոր Լևոն Հինգերորդից, որոնք պապի վստահելի մարդկանց հայերենի դասեր պիտի տային:³

XVI դարի հռչակավոր արևելագետ Գիյոմ Պոստելը, որը մեծ ճանապարհորդ էր և հմուտ հետազոտող, հրատարակել է բազում գրքեր: 1538-ին Փարիզում լույս տեսած մի աշխատության մեջ, որը 75 էջից էր բաղկացած⁴, Պոստելը խոսում է աշխարհի 12 լեզուների մասին՝ եբրայերեն, ասորերեն, հին քաղդերեն, արաբերեն, եթովպերեն, վրացերեն, բոսնիերեն, հայերեն, լատիներեն և այլք ու հայերենին հատկացնում է իր հետազոտության հինգ էջերը՝ նշելով, թե հայերենն ունի արտասանական դժվարություն:

XVIII դարում Քոլեջ ֆրանսի պրոֆեսոր աբբա Գիյոմ Վիլեռոյը, որը եբրայերեն էր ուսուցանում, գիտեր նաև գրաբար, իսկ նրա աշակերտը՝ աբբա Պիեռ-Սիմոն Լուռդեն, որը նույն հաստատության եբրայերենի պրոֆեսոր էր, մեծ եռանդով սկսում է գրաբար սովորել և կազմում է չափազանց ծավալուն հայ-լատիներեն բառարան, որը, սակայն, չի կարողանում տպագրել:

Հետաքրքիր է, որ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի պատմությունը զուգակցվում է հայ ժողովրդի պատմության արժանահիշատակ դրվագներով, հայ մատենագիրների ու գրողների համառոտ բնութագրմամբ և հատկապես Ֆրանսիայի գիտնականների հայագիտական ժառանգության հիմնական գործերի հիշատակումով:

Իհարկե, առաջին հերթին ժամանակագրական հերթականությամբ կարևորվում են այն հայագետները, որոնք եղել են Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայերենի ամբիոնի վարիչները:

Շահան Ջրպետը գրել էր հայերենի քերականություն և նրա մտահղացմամբ ու առաջարկով բացվեց հայերենի ամբիոնը, և ինքն էլ դարձավ այդ ամբիոնի հայերենի հիմնական դասախոսը: Ջրպետը հետագայում տեղափոխվում է Թիֆլիս (1826թ.) և մինչև մահը

³ F. Macler, *La chaire d'Arménien...*, p. 11.

⁴ Նույն տեղում:

1838թ., դասավանդում է Ներսիսյան դպրոցում:

Շահան Զրպետի մասին եզակի հիշողություններ է թողել Գաբրիել Սունդուկյանը, որը 1832 թվականից դառնում է նրա մասնավոր աշակերտը՝ վեց տարի սովորելով հայերեն, ֆրանսերեն, նաև լատիներեն ու իտալերեն: Զրպետի կինը՝ բնիկ ֆրանսուհի և փարիզուհի, այդ վեց տարիների ընթացքում կատարելագործում է Սունդուկյանի ֆրանսերենը:⁵ Զրպետից հետո՝ 1830-ից մինչև 1862 թվականը հայերենի ամբիոնը գլխավորում է Լը Վայան դը Ֆլորիվալը, որի հայագիտական ժառանգությունը մեծ չէ: Նա գրաբարից ֆրանսերեն է թարգմանել Սովսես Խորենացուն (1841) և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1852):⁶

Լը Վայան դը Ֆլորիվալին փոխարինում է մեծ հայագետ Էդուարդ Դյուլորիեն, որը թողել է հսկայական հայագիտական ժառանգություն և ապացուցել է Հայաստանի գրականության ու մշակույթի միջազգային արժեքը:

Էդ.Դյուլորիեն սերտ կապերի մեջ էր Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանության անդամների հետ: Դյուլորիեն այն հայագետներից էր, որոնք բարձր էին գնահատում հայ պատմիչների մատյանները, որովհետև վերջիններս իրենց երկերում պահպանել են այնպիսի իրադարձությունների հիշատակներ, որոնք անտեսվել են հույն և հռոմեացի պատմիչների կողմից: Սահմանակից սկյութական ու թաթարական ցեղերին հայ պատմիչները ճանաչում են, նորովի հոգատարությամբ ու ճշգրտությամբ ներկայացնում են այդ ժողովուրդների տեղաշարժերը: Նույնը կարելի է ասել արաբական, թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքների և խաչակիրների մասին: Դրանց մասին արժանահավատ փաստեր են հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին, Աստղիկը, Ղևոնդ պատմիչը, Արիստակես Լաստիվերցին, Կիրակոս Գանձակեցին, Մաղաթիա Աբեղան, Վարդան Վարդապետը և շատ ուրիշ հայ հեղինակներ, որոնք անձանոթ են մնացել եվրոպական հմուտ գիտնականներին:

Զեկուցման մեջ նշվում են Էդ.Դյուլորիեի հիմնական աշխա-

⁵ Տե՛ս **Ա.Ղուլիսանյան**, *Ֆրեդերիկ Մակլերը հայագետ*, էջ 152:

⁶ **F.Macler**, *La chaire d'Arménien...*, p. 12.

տությունները՝ հատկապես նրա կատարած հիմնարար աշխատությունը՝ նվիրված հայ հեղինակների երկերում եղած այն նյութերին, որոնք վերաբերում են խաչակրաց արշավանքներին:

Էդուարդ Դյուլորիեին հայերենի ամբիոնի վարիչի պաշտոնում փոխարինում է Օգյուստ Կարիերը, որը հայտնի դարձավ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» խիստ քննադատությամբ:⁷

Կարիերի վարկածի դեմ ըմբոստացան բազմաթիվ հայ գիտնականներ, նաև անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը, որը լիովին հերքեց Կարիերի վարկածը և Խորենացուն վերադարձրեց V դար:⁸

Կարիերը վախճանվում է 1902-ին, և նրան փոխարինում է Անտուան Մեյեն, որը զբաղվում է բացառապես հայոց լեզվի խնդիրներով: Չմոռանանք, որ նրա արժանավոր ուսանողը դարձավ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը:

Ֆրեդերիկ Մակլերի զեկուցումը նվիրված է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայերեն լեզվի ամբիոնին մինչև 1911 թվականը՝ այսինքն ամբիոնի 100-ամյա հոբելյանը: Ամբիոնի հետագա ընթացքի մասին մեծարժեք տեղեկություններ է թողել մեծ հայասեր ու հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին: Անտուան Մեյեին փոխարինում է հենց ինքը՝ Ֆրեդերիկ Մակլերը, որն այդ պաշտոնը վարում է մինչև 1937 թվականը: Նրան փոխարինում է Անտուան Մեյեի ոչ պակաս արժանավոր աշակերտ Ժորժ Դյումեզիլը, որ մասնագիտացել էր նաև հայերենի բարբառներում:

1949-ին Ժորժ Դյումեզիլին փոխարինում է Ֆրեդերիկ Ֆեյդին և ղեկավարում է ամբիոնը մինչև 1977 թվականը:

Մեսրոպ Մագիստրոսը Գալուստ Տեր-Մկրտչյանի հիշատակին նվիրված հոդվածում շատ է կարևորում օտարերկրյա հայագետների այցելությունը Հայաստան և հատկապես Էջմիածնի մատենադարան: Նա հատուկ նշում է. «Միաբան Գալուստը այդ մասնագետ այցելուների մեծագույն մասի համար ուսուցիչ և ուղղություն

⁷ Օգյուստ Կարիերի կարծիքի վերջին հերքումը տե՛ս **Ա.Մուշեղյան**, *Մովսես Խորենացու դարը*, Երևան, 2007, էջ 4, 9, 10, 15, 302, 329, 342:

⁸ Տե՛ս «*Հանդես ամսօրեայ*», 1902, էջ 1-6, 80-90, 129-132, 193-198, 236-240, 1903, էջ 30-36, 152-157, 215-218, 317-320, 325-330:

տվող է հանդիսացել և երբեմն նաև հրահրել է նոցա եռանդը: Անգլիացի պրոֆեսոր Կոնիքեր, ֆրանսիացի Մեյե և Մակլեր, գերմանացի դոկտոր Լեման, Դումբերգ, ակադեմիկոս Մառ, դոկտոր Կարստ և այլն Գալուստի հետ կապված մնացին ոչ միայն իբրև լոկ մասնագետներ, այլ իբրև լավ բարեկամներ»⁹:

Այդ ժամանակներում Հայաստան այցելելը չուներ ներկայիս ոչ հարմարավետությունը և ոչ էլ ճամփորդական արագությունը: Բավական է հիշել, թե ինչպիսի դժվարությունների հանդիպեց Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, երբ 1848-ի հունվարի 11-ին Թիֆլիսից մեկնեց Երևան և 40 օր Էջմիածնում ունեցավ ստեղծագործ աշխատանքի երջանիկ օրեր: Թեպետ ցրտաշունչ ձմեռ էր, և վանքի մատենադարանը չէր տաքացվում, նա Հովհաննես Շահխաթունյանցի անձնվեր աջակցությամբ ծանոթացավ իրեն անհրաժեշտ հայկական ձեռագրերին: Այդ ճամփորդությունը նկարագրել է իր նոթերում, որոնք լույս տեսան 1849-ին Ս.Պետերբուրգում:¹⁰

Ֆրեդերիկ Ֆելդին ևս այցելել է Հայաստան: Առաջին անգամ 1963-ին: Նրա արժանավոր աշակերտը Ժան-Պիեռ Մահեն հիշեցնում է, թե որքան դժվար էր օտարերկրացիների համար այցելել Խորհրդային Հայաստան, սակայն Ֆելդին հաղթահարում է բոլոր արգելքները, տեսնելու համար այն երկիրը, որն այնքան սիրել էր:

Ֆելդի վրա խոր տպավորություն է թողել 1915 թվականի սարսափելի եղեռնից հետո վերածնված Հայաստանը: Նրան հիացմունք է պատճառել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան՝ իր բոլոր ինստիտուտներով, Երևանի պետական համալսարանը, մյուս բուհերը և առաջին հերթին Մաշտոցի անվան հոյակապ Մատենադարանը: Ֆելդին հավաստում է, թե երևակայությունից վեր է Հայաստանի գիտության ծաղկուն վիճակը. կա Գիտությունների ազգային ակադեմիա՝ իր գիտնականների պատկառելի բանակով ու տարբեր ինստիտուտներով. «Այս երկու բառերու՝ «հայկական» և «ակադեմիա» բառերու զուգակցումը բազմանշանակալի է ինձի համար, որպես Ձեր անցյալի պատմությունը իմացողի»¹¹:

⁹ Մեսրոպ Մազիստրոս, *Հողվածների ժողովածու*, Ս.Էջմիածին, 2009, էջ 557:

¹⁰ Sté u M. Brosset, *Rapports sur un voyage Archéologique dans la Géorgie et l'Arménie (exécuté en 1847-1848)*, st. Petersbourg, 1849, p. 15-152.

¹¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, թիվ 4, էջ 261:

Մի գրույցի ժամանակ Ֆեյդին խոստովանել է, թե Արևմուտքի մեջ հայերի կողմից հայագիտությունը նվազելու վրա է, և ինքը ուրախ է, որ Հայաստանը ժամանակին է բռնել հայագիտության ջախը, ու այստեղ հայագիտությունը զարգանում է ճիշտ այնպես, ինչպես ֆրանսագիտությունը Ֆրանսիայի մեջ, գերմանագիտությունը՝ Գերմանիայի մեջ՝ հավասար կերպով:¹²

Ֆեյդին, որպես հայագետ, բազմաճյուղ հետաքրքրություններ ուներ՝ հայոց լեզվի ուսուցման խնդիրներ, հայ գրերի գյուտի պատմություն, պատմագիտական հետազոտություններ, գրականագիտական հետազոտություններ, հայ ժողովրդական բանահյուսություն և թարգմանություններ:

Ֆեյդիի ուսուցիչը ևս՝ Ֆրեդերիկ Մակլերը, որը հայ դատի նվիրյալ պաշտպաններից էր, մեծ եռանդով զբաղվել է հայոց լեզվի ուսուցման խնդիրներով:

Հիանալի ձևով հասկանալով, թե օտարազգի հայագետը միայն հայ անցյալի մատենագրությամբ չպետք է զբաղվի, այլև հաղորդակից պետք է լինի ժամանակակից հայ լեզվաբանությանը, գրականությանը, բանասիրությանը, Մակլերը գրում է «Ժամանակակից հայերենի քրեստոմատիա», որը լույս է տեսնում 1932-ին Փարիզում:¹³

Նախաբանում կա բնաբան՝ քաղվածք 1883-ին Փարիզում լույս տեսած պարսկերենի քրեստոմատիայից. «Մամանին լսել է Աբու Թուրաբ Ալի բեն Թահիր Կերմինուց. «Կերմինիեհը իմ հայրենիքն է. այն իր անունը ստացել է արաբներից նվաճվելու ժամանակ, երբ վերջիններս տեսել են ծառերի և վտակների բազմաքանակ լինելը, բացականչել են. «Կերմինեհ, ճիշտ Հայաստանի նման է»:¹⁴

Այս բնաբանը, որ Մակլերն ընտրել է, նպատակ ունի օտարազգի ուսանողի մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի Հայաստանը:

Նախաբանում Մակլերը նշում է, թե գրաբարը զբաղեցրել է բազմաքանակ բանասերների, գիտնականների, ուսանողների սերունդների: Սակայն հայերն ունեն նոր լեզու, որն արտահայտում է

¹² Նույն տեղում:

¹³ **F. Macler**, *Chrestomatie de l'Arménien moderne avec vocabulaire*, Paris, 1932, 399 p.

¹⁴ Նույն տեղում, p. 7.

այդ ազգի նոր գաղափարներն, ու դարձել է նոր գրական լեզու:

Այդ նոր լեզուն ծնվեց ու քաղաքացիական իրավունք ստացավ Արևելյան Հայաստանում, որը պարսկական տիրապետությունից անցավ Ռուսաստանին, և Աբովյանը պահանջեց գրել նոր լեզվով, ու դարձավ ժամանակակից հայերենի հայրը: Նա արևելահայերենի ձևավորման ու զարգացման կենտրոններ է համարում Էջմիածինը, Երևանը, Թիֆլիսը և Բաքուն:

Արևելահայ լեզվի կողքին զարգացավ արևմտահայ ժամանակակից լեզուն՝ գլխավոր կենտրոններ ունենալով Կոստանդնուպոլիսը, Ջմյուռնիան, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները:

Մակլերն էական մեծ տարբերություններ չի տեսնում արևելահայերեն և արևմտահայերեն լեզուների միջև, որովհետև գրական այդ լեզուներից որևէ մեկը իմացողը հեշտությամբ հասկանում է մյուսին:

Նրա կարծիքով օտար հայագետը պետք է լիովին հասկանա այդ երկու լեզուները, դրա համար էլ քրեստոմատիայի նյութերը բաժանում է երկու մասի: Առաջին մասում գետեղում է արևելահայ գրողներին ու բանաստեղծներին, իսկ երկրորդ մասում՝ արևմտահայ:

Առաջին հատվածում կան ժողովրդական հեքիաթներ, գրույցներ, Ստեփանոս Պալասանյանի «Հայոց պատմությունից» հատվածներ և հայ գրողներ Վ.Փափագյանի, Ավ.Ահարոնյանի, Բաֆֆու, Շիրվանզադեի, Խ.Աբովյանի երկերից առանձին կտորներ և բանաստեղծություններ Ալ.Ծատուրյանից, Ղ.Աղայանից:

Արևմտահայ գրականությունը ներկայացնում են Մ.Մամուրյանը, Հովհ.Գազանյանը, Ս.Տյուսաբը, Ռ.Զարդարյանը, Հ.Պարոնյանը, Մ.Օրմանյանը, Հ.Ասատուրը, Զ.Եսայանը, Լ.Բաշալյանը, Մ.Պորտուգալյանը, Ե.Դուրյանը, Պ.Դուրյանը, Վ.Թեքեյանը, Մ.Պարսամյանը, Ռ.Որբերյանը, Ա.Փանոսյանը, Հր.Նազարյանը, Սիամանթոն, Դ.Վարուժանը, Ա.Զոպանյանը և այլք:

Քրեստոմատիային կցված է շատ հարուստ հայերեն-ֆրանսերեն բառարան:¹⁵ Բացատրված են գրեթե բոլոր բառերը: Քրեստո-

¹⁵ Նույն տեղում, էջ 241-393:

մատիայի բնագրերի վերջում Ֆ.Մակլերը գետեղել է իր բացատրությունները՝ կապված 1922 թվականին Խորհրդային Հայաստանում իրականացված ուղղագրական փոփոխությունների հետ, որոնք առնչվում էին **յ** և **լ** տառերի գործածության հետ: Ուղղագրական նոր կանոնի համաձայն բառակցքի **յ** կիսաձայնով սկսվող բոլոր բառերը, որոնք արտասանվում էին **հ** տառով, պետք է գրվեին **հ**-ով: Օրինակ՝ յամբ=**հ**ամբ, յաջող=**հ**աջող, յուլվ=**հ**ուլվ և այլն:

Այն գոյականները և բայերը, որոնք վերջում ունեին չարտասանվող **յ** կիսաձայնը, արդեն գրվում են առանց դրա: Օրինակ՝ չգտայ=**չ**գտա, կարդայ=**կ**արդա, կերայ=**կ**երա և այլն: Ծառայ=**ծ**առա, քահանայ=**ք**ահանա, տղայ=**տ**ղա, վկայ=**վ**կա, սատանայ=**ս**ատանա և այլն:

Շատ հստակ և բազմաթիվ օրինակներով Մակլերը բացատրում է արևելահայերենի նոր ուղղագրությունը, որը մեծագույն օգնություն էր այդ լեզուն սովորողների համար:

Մեծ քանակ են կազմում նաև հայերենի ամբիոնը երկար տարիներ գլխավորած Ֆրեդերիկ Ֆեյդիի՝ հայերենին վերաբերող լեզվաբանական աշխատությունները: Դրանց մեջ կարևոր են հատկապես երկուսը՝ առաջինը արևմտահայերենի քերականությունն է, և երկրորդը՝ արևմտահայերենի դասագիրքն է, որը լույս է տեսել 1948-ին և 1969-ին: «Բազմավեպում» լույս են տեսել նրա տետրակները՝ նվիրված հայերենի քերականության տարբեր խնդիրներին (տե՛ս «Բազմավեպ», 1952, 1956, 1967, 1969, 1976): Այս տետրակներից վերջինը նա հարգանքով ու բարեկամական սիրով նվիրել է Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին: Տետրակը բաղկացած է 54 էջից և նվիրված է գրաբարի բայական համակարգին. „Le système du verbe Arménien classique”:

Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայերենի ամբիոնի վարիչները եղել են բազմազիտակ բանասերներ, իմացել են բազմաթիվ հին ու նոր լեզուներ, ծանոթ են եղել համաշխարհային գրականության գլուխգործոցներին և ամենակարևորը՝ տիրապետել են միջնադարի մտածողության համակարգի երբեմն ոչ հեշտ ընկալելի խորհրդանիշերին: Բոլոր վերոհիշյալ հայագետների գիտական առաջընթացը եղել է շարունակական՝ երիտասարդությունից մինչև կյանքի վերջը:

Վաղ շրջանի հայագետների մասին խոսելիս Ֆրեդերիկ Մակլերը չի մոռանում ֆրանսիացի և ֆրանսերենով գրող Մաթյուրին Լա Կրոզին, որը հնության պրոֆեսոր էր և Պրուսիայի արքայի գրադարանավարն ու հնագետը: Նա սովորել էր գրաբարը և գրել է երկհատորանոց հայերենի բառարան: Մակլերը չի մոռանում նաև Լա Կրոզի 1739-ին գրած և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող այն գիրքը, որում հայագետը խոսում է Եթովպիայի ու Հայաստանի եկեղեցիների պատմության մասին („Histoire du christianisme d’Ethiopie et d’Arménie” - «Եթովպիայի և Հայաստանի քրիստոնեական պատմություն»):

Ֆրանսիացի հայագետները հայոց լեզվի ուսուցումը կազմակերպում էին հայ գրականության լավագույն հեղինակների ստեղծագործությունների բնագրերի յուրացմանը զուգընթաց և հասնում էին ցանկալի արդյունքի: Նրանք հմուտ լեզվաբաններ լինելով նաև հայ գրականության օրինակելի գիտականեր էին: Հետևենք նրանց օրինակին և նվիրմանը:

Долухаян Аэлита - Кафедра армянского языка парижской высшей школы живых восточных языков. - Кафедра армянского языка была основана в Парижской Высшей школе живых восточных языков по специальному приказу Наполеона Бонапарта, по просьбе Шаана Джрпета. В 1911 г. в Париже было отмечено столетие основания этой кафедры, а Фредерик Маклер выступил с большим докладом, отметив имена заведующих кафедрой, ученых, подготовленных там и вклад, внесенный ими в развитие арменоведения в Европе. Заведующими армянской кафедрой были Вайан де Флоривал, Эдуард Дюлорье, Огюст Карьер, Антуан Мейе, Фредерик Маклер, Жорж Дюмезиль, Фредерик Фейди.

Французские арменоведы проводили преподавание армянского языка на основе изучения текстов произведений лучших представителей армянской литературы. Будучи искусными языковедами, они были в то же время прекрасными знатоками армянской литературы.

Dolukhanyan Aelita - The Chair of Armenian Language of Paris High School of Living Eastern Languages. - The Chair of Armenian language was founded in Paris High School of living Eastern languages on the order of

Napoleon Bonaparte, at the request of Shahan Jerpet. In 1911 the centennial of the Chair foundation was celebrated in Paris and Frédéric Macler made a long report, mentioning the names of the Heads of the Chair, the scholars trained there and their contribution to the development of Armenian studies in Europe. The Chair was headed by Vaillant de Florival, Edouard Dulaurier, Auguste Carrière, Antoine Meillet, Frédéric Macler, Georges Dumezil and Frédéric Feydit.

French armenologists used to teach Armenian language studying the works of the Armenian literature best representatives. Being skilled linguists, they were at the same time excellent connoisseurs of Armenian literature.

ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մտածական բայերը՝ իբրև մտավոր գործունեության և դրա հետ սերտորեն առնչվող տարատեսակ գործողությունների արտահայտիչ, **մտքերի** ձևակերպման և **հաղորդակցման միջնադարային ձևավորման** իմաստով հետազոտության անսպառ աղբյուր են:

Արդի հայերենում **մտածական բայերի** (այսուհետ՝ **ՄԲ**) վերաբերյալ որևէ համալիր հետազոտություն չկա. **իմաստային խմբավորման փորձերի** կամ **տերմինի հիշատակման** (իմա՝ **ՄԲ**) հանդիպում ենք **շարահյուսագիտության** մեջ՝ խնդրառության, ուրիշի ուղղակի խոսքի ուսումնասիրության հետ կապված¹: **Հ. Օհանյանը նշում է**, որ շատ լեզվաբաններ այս կամ այն հարցի լուսաբանման կապակցությամբ կատարել են բայերի դասակարգումներ, բայց քանի որ բուն նպատակը չի եղել դասակարգումը իմաստային հատկանիշով, ուստի շատ բայեր դուրս են մնացել խմբավորումից: Հայ քերականագիտության մեջ բայական մի շարք խմբերի տրվել են համապատասխան անվանումներ, առանց, սակայն, հատուկ ուսումնասիրության ենթարկելու, ինչպես, օրինակ՝ **իմացական, զգացական, մտածական, վիճակային, հարկադրական, ակտիվ գործողության, օժտվածության և այլն**²: Մենք ուսումնասիրել ենք վերոնշյալ բայերը **իմաստային տեսանկյունից**՝ դիտարկելով այն իբրև **բառաիմաստային խումբ** (այսուհետ՝ **ԲԻԽ**)՝ կազմակերպված **դաշտային սկզբունքով՝ միջուկի (նույնացուցիչ),** եզրամասի, հատվող

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Ե., 1957, *Հայերենի շարահյուսություն*, Ե., հ. 1, 1958, Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Ե., 1962, Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, Վ. Քոսյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Ե., 1975, Հ. Հարությունյան, *Գառավառումը ժամանակակից հայերենում*, Ե., 1983 և այլք:

² Տե՛ս Հ. Օհանյան, *Մտածական և հոգեվիճակային բայերի խնդրառությունը ժամանակակից հայերենում*, Լեզվի և ոճի հարցեր, X, Ե., 1987, էջ 14:

միավորների փոխհարաբերությունների հաշվառմամբ:

Հոդվածի նպատակն է ուրվագծել արդի հայերենի ՄԲ-երի **ԲԻՄ**-ի սահմանները՝ հիմք ընդունելով դասակարգման **իմաստային չափանիշը**, այսինքն՝ **բառարանային բացատրությունը**: Խմբավորումը կատարել ենք՝ նկատի առնելով **միասնականացնող կարգային-բառային հետևյալ իմակը**. «Օբյեկտիվ իրականության երևույթները մտքով պատկերացնել, ընկալել, վերացարկել, գուգադրելով, վերլուծելով ու հետևություններ անելով դատել»: Մտածական **ԲԻՄ**-ի բառացանկը կազմել ենք, ըստ Է. Ադայանի Արդի հայերենի բացատրական բառարանի³ (այսուհետ՝ **ԱՀԲԲ**), համատարած ընտրանքի եղանակով: ՄԲ-երը դասակարգել ենք **իմաստահարացուցային, շարակարգային և գործաբանական** սկզբունքներով: Իմաստահարացուցային դասակարգումը կատարել ենք երկաստիճան համակարգով՝ առաջին աստիճանում արդի հայերենի բայական բառապաշարի մտածական **ԲԻՄ**-ը բաժանելով երեք դասի՝ առաջնային, երկրորդային և փոխաբերական մտածականների: Առաջնային մտածականների դասին ենք վերագրել այն բայերը⁴, որոնք, որպես մտածական **գործընթացի** արտահայտություն, արձանագրված են **ԱՀԲԲ**-ում իրենց առաջին, երկրորդ, երբեմն նաև երրորդ⁵ նշանակություններով (1921): Երկրորդային մտածականների դասին ենք վերագրել այն բայերը, որոնք արձանագրված են **երրորդ-չորրորդական** կամ **այլ** նշանակություններով (185): Փոխաբերական մտածականների դասին ենք վերագրել այն բայերը, որոնք արձանագրված են **փոխաբերական** նշումով (271): Դասակարգման **երկրորդ** աստիճանում **առաջնային մտածականների հարացույցը** խմբավորել ենք ըստ **ենթահարացույցների**⁶՝ նկատի ունենալով **մըտածողության**

³ Տե՛ս Է. Ադայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

⁴ Դասակարգելիս հիշյալ բառարանից քաղել ենք միայն **համադրական** բայերը:

⁵ Մտածական որոշ բայեր իրենց **երրորդ** նշանակությամբ հաճախագործածության շնորհիվ մտնում են **առաջնային մտածականների** դաս, սակավագործածությամբ՝ **երկրորդային**:

⁶ Հարացուցային հարաբերությունների վերլուծության համար անհրաժեշտ նախապայման է լեզվական **միավորի իմաստային կառուցվածքը**, այսինքն՝ նրա **բաղադրիչայնությունը** (իմա՝ բառաիմաստային տարբերակների (**ԲԻՏ**) առկայությունը): Թեև **ԲԻՄ**-ի որևէ խմբի **սեռային իմակը** կրկնվում է բոլոր **ԲԻՏ**-երում, բայց դրանք իրենց հերթին, ըստ **տեսակային իմակների**, ի հայտ են բերում նաև **իմաստային հակա-**

գործընթացի տարբեր իրավիճակները: Ի տարբերություն առաջնային մտածականների՝ երկրորդային և փոխաբերական մտածականները գորկ են իմաստային հակադրությունից, որովհետև միայն խոսքային իրադրության մեջ են ձեռք բերում **մտածականության հատկանիշ** և կապ ունեն **խոսքային տարբերակայնության** հետ, հետևաբար դուրս են մնում **հարացուցային դասդասումից**:

Հ. Օհանյանը հիշյալ բայերի խնդրառությունը ուսումնասիրելիս իմաստային դասակարգման փորձ է արել՝ ՄԲ-երի քանակը հասցնելով 50-ից 60-ի և խնդրառությունը առավել հստակ ներկայացնելու համար դասակարգել է դրանք՝ առանձնացնելով հետևյալ մանրախմբերը՝ **մտածության** (մտածության պրոցեսը՝ **մտածել, դատել, խորհել, մտորել, միտք անել, մտմտալ**), **իմացության** (իմանալու, գիտենալու նշանակություն՝ **իմանալ, գիտենալ, ճանաչել**), **հասկացման** կամ **կռահման** (հասկանալը, ըմբռնողությունը, կռահելը՝ **հասկանալ, գիտակցել, գլխի ընկնել, կռահել, ըմբռնել, պատկերացնել, կշռադատել**), **զգայության** (ճանաչողության ստորին աստիճանը՝ **զգալ, զգայել, ընկալել**)⁷, **հիշողության** (հիշողություն, մտապահում՝ **հիշել, վերհիշել, մտապահել, մտաբերել, մտահան անել, մոռանալ**), **մտահանգման** (եզրակացություն, եզրահանգում՝ **մտահանգել, եզրակացնել, եզրահանգել, եզրակացության գալ, եզրակացություն անել**)⁸:

Ռուսագիտության մեջ **մտածական բայերին** (глаголы мысли/мышления, ментальные глаголы, глаголы интеллектуальной деятельности ևն) անդրադարձել են շատերը, որոնց հետազոտությունները, սակայն, մասնակի են և վերաբերում են հիշյալ բայերի այս կամ այն տեսակին կամ դրանց առնչվող այլ խնդիրների⁹: Պայմանա-

դրություններ, և այդ հակադրամիասնությունն էլ ծնում է **ենթահարացույց, խումբ, ենթախումբ, շարք** ևն: Տե՛ս **Ռ. Դոխտյան, Առացական բայերի բառիմաստային խումբը արդի հայերենում**, Ե., 2014, էջ 22-23:

⁷ Կարծում ենք, որ այս տեսակը մտնում է **զգացական բայերի ԲԻՆ**՝ ՌԴ:

⁸ Տե՛ս **Հ. Օհանյան**, նշվ. հոդվ., էջ 31-33:

⁹ Տե՛ս **Л. Бабенко**, *Функциональный анализ глаголов говорения, интеллектуальной и эмоциональной деятельности* (на материале художественной речи А. Платонова), Автор. дисс. канд. филол. наук, Ростов-на-Дону, 1980, **Н. Гарипова**, *Опыт лексико-грамматической характеристики сочетаемости глаголов мышления*, Учен. зап., Башк. Ун-т, 1964, Вып. 18, **М. Дмитриевская**, *Глаголы знания и мнения*, Автор. дисс. канд. филол.

կանոթեն ամբողջական ուսումնասիրություն կատարել է Լ. Վասիլևը՝ ՄԲ-երը բաժանելով հետևյալ տեսակների՝ **մտածական պրոցեսի**, **մտածական ակտի արդյունքի**, **միջուկային «պատկերացնել»**, **միջուկային «ենթադրել»**, **միջուկային «վճռել»**, **միջուկային «հավատալ»**, **միջուկային «հասկանալ»**, **միջուկային «սխալվել» նշանակությամբ բայեր**, **գիտելիքի** և **հիշողության բայեր**¹⁰: Վերջինս **հարացուցային** սկզբունքը համադրել է **շարակարգայինի** հետ, որը, մեր կարծիքով, այնքան էլ նպատակահարմար չէ. մենք կողմնակից ենք **սկզբունքների անխառն կիրառմանը** և մեր աշխատանքում հստակ տարրորոշում ենք դրանք:

ՄԲ-երի **հարացույցը** մենք բաժանում ենք հետևյալ **ենթահարացույցների**՝ բուն մտածական, ըմբռնման կամ հասկացման, իմացական, ստեղծագործական, միտումնավոր մտածողության, դատողության, հիշողության:

Բուն մտածական բայերի ենթահարացույց. մտածողությունն այն իմացական գործընթացն է, որի օգնությամբ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայտել երևույթների ներքին էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները¹¹: Ձևավորվում է **մտածողության իմաստահավելիչով** (այսուհետև՝ **իմ-իչ**)՝ արտահայտելով հետևյալ **իմաստային բանաձևը** (այսուհետև՝ **ԻԲ**). **«Մեկի կամ մի բանի մասին մտածել»**: **Նույնացուցիչը** (այսուհետև՝ **նույն-իչ**) **մտածել-ն** է, որի շուրջը խմբավորվում են **խոկալ**, **խորհրդածել**, **խորհել**, **մտախոհել**, **մտանցել**, **մտմտալ**, **մտորել** բայերը՝ մտածմունքի տարբեր ծավալներով և մտածական բազմապիսի երանգներով, որոնց նրբիմաստները (մտքերով տարվելու, կշռադատելու, մտահոգվելու ևն) նյութականանում են մնացյալ ենթահարացույցներում¹²: Բաղկացած է **մտածական ընդհանրական (տևա-**

наук, М., 1985, **М. Пименова**, *Семантико-синтаксический аспект ментальных глаголов*, Автор. дисс. канд. филол. наук, СПб., 1985 ևն:

¹⁰ Տե՛ս **Լ. Васьков**, *Семантика русского глагола*, М., 1981, էջ 122-168:

¹¹ Տե՛ս **Ա. Նալչաջյան**, *Հոգեբանության հիմունքներ*, Ե., 1997, էջ 259:

¹² Օրինակ, **խորհել-ը** իր առաջնային իմաստով նշանակում է **մտածել**, բայց ունի նաև **մտքում դատելու, կշռադատելու նրբիմաստները**, որոնք առաջնային են դառնում դատողական ենթահարացույցում՝ դատել և կշռադատել **նույնացուցիչներով** ևն:

կան) գործընթացի և մտածողության արդյունքի բայերի խմբերից: *Մտածական ընդհանրական գործընթացի խումբ*. մտածողությունը միշտ ուղղված է դեպի որևէ խնդրի լուծումը, և եթե խնդիրը բարդ է, ապա դրա բացահայտումը պահանջում է որոշակի տևականություն: Ձևավորվում է *մտածական ընդհանրական գործընթացի տևականության իմ-իչով*¹³՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Մտավոր լարում պահանջող տևական նպատակադիր աշխատանքով որևէ խնդիր լուծել»: Նույն-իչը աշխատել-ն է՝ աշխատակցել, գործածել, զբաղվել, պարապել բայերով¹³: *Մտածողության արդյունքի բայերի խումբ*՝ մտածողության արդյունքի իմ-իչով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Տարատեսակ մտքերին մտովի առարկայական կերպարանք տալ»: Նույն-իչը առարկայացնել-ն է՝ իրայնացնել, մարմնավորել, նյութականացնել բայերով:

Ըմբռնման կամ հասկացման բայերի ենթահարացույց՝ ըմբռնման կամ հասկացման իմ-իչներով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Ըմբռնել՝ հասկանալ, մտքով յուրացնել»: Նույն-իչներն են ըմբռնել-ը և հասկանալ-ը՝ գիտակցել, ընկալել, յուրացնել, խելամտել բայերով: Բաղկացած է կռահման, իմաստավորման կամ վերագրման, տրոհման բայերի խմբերից: *Կռահման բայերի խումբ*՝ կռահման իմ-իչով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Անձնական դիտողությունների՝ կողմնակի երևույթների՝ հատկանիշների հիման վրա մի բան մտքով հասկանալ, գլխի ընկնել»: Նույն-իչը կռահել-ն է՝ գուշակել, կանխագգալ, նախագգալ, նկատել բայերով: *Իմաստավորման կամ վերագրման բայերի խումբ*՝ իմաստավորման, վերագրման իմ-իչներով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Իմաստ՝ նշանակություն տալ, իմաստով օժտել, այս կամ այն իմաստը վերագրել»: Նույն-իչները իմաստավորել-ը և վերագրել-ն են՝ անձնավորել, առնչել, կերպավորել, նշանակավորել, վերաբերել բայերով: Ներկայանում է իմաստագրկման ենթախմբով՝ իմաստագրկման իմ-իչով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Իմաստից զրկել, անիմաստ՝ աննպատակ՝ ավելորդ դարձնել»: Նույն-իչը իմաստագրկելն է՝ անիմաստանալ, բովանդակագրկել, գաղափարագրկել, իմաստագրեծել բայերով: *Տրոհման բայերի խումբ*՝ տրոհման իմ-իչով՝ հետևյալ *ԻԲ-ով*. «Որևէ բան բաժանել մյուսից՝ հեշտացնելով մտքի ճիշտ ըմբռնու-

¹³ Հոդվածի ծավալը նկատի ունենալով՝ յուրաքանչյուր տեսակի համար բերում ենք 3-ից 5 օրինակ:

մը»: Նույն-իչը տրոհել-ն է՝ աղյուսակել, բաժնեհատել, բացորոշել, սահմանազատել բայերով:

Իմացական բայերի ենթահարացույց. մտածողության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ թույլ է տալիս հիշողության մեջ կուտակված գիտելիքներն ու անմիջական ընկալումները օգտագործել իմացական նոր արդյունքների (մտքերի, եզրակացությունների, ընդհանրացումների, կոնստիտուցիաների) հասնելու համար¹⁴. ձևավորվում է *իմացության իմ-իչով՝* հետևյալ ԻԲ-ով. «Որևէ երևույթի, առարկայի և այլնի մասին որոշակի գիտելիքներ ունենալ, իրազեկ լինել»: Նույն-իչը իմանալ-ն է՝ գիտենալ, իրազեկվել, ճանաչել, տեղեկանալ բայերով: Բաղկացած է ունկնդրելու, ուսանելու, հավելման, հավատալու, թերահավատության, մտավոր զարգացման բայերի խմբերից: *Ունկնդրելու բայերի խումբ՝* ունկնդրելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ մեկին կամ մի բան ունկնդրել՝ լսել որևէ բան իմանալու նպատակով»: Նույն-իչը ունկնդրել-ն է՝ ականջել, անսալ, լսել բայերով: *Ուսանելու բայերի խումբ՝* ուսանելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Կարդալով՝ վարժությամբ՝ լսելով ևն մի բան յուրացնել, գիտելիքներ ձեռք բերել, սերտել»: Նույն-իչը ուսանել-ն է՝ ընթերցել, մտավարժել, սերտել, սովորել բայերով: *Հավելման բայերի խումբ՝* հավելման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բան հավելել՝ ավելացնել արդեն իմացածի վրա»: Նույն-իչը հավելել-ն է՝ ավելադրել, առնել, ներմուծել բայերով: *Հավատալու բայերի խումբ՝* հավատալու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Հավատ ընծայել, հաստատուն համոզմունք ունենալ մեկի կամ մի բանի նկատմամբ, վստահել, որևէ կրոնի, դավանության, ուսմունքի հետևել»: Նույն-իչը հավատալ-ն է՝ դավանել, համոզվել, հետևել, վստահել բայերով: *Թերահավատության բայերի խումբ՝* թերահավատության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի թերի հավատալ, կասկածել»: Նույն-իչը թերահավատել-ն է՝ երկբայել, երկմտել, կասկածել, վարանել, տարակուսել բայերով: *Մտավոր զարգացման բայերի խումբ՝* մտավոր զարգացման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Առաջադիմել, ստորին կամ վատ վիճակից դեպի ավելի բարձր կամ լավ դիմել, զարգանալ մտավոր տարբեր ուղղություններով»: Նույն-իչը զարգանալ-ն է՝ առաջադիմել,

¹⁴ Տե՛ս Ա. Նալչաջյան, նշվ. աշխ., Ե., 1997, էջ 259:

գերազանցել, աշխարհաբարացնել, կատարելագործել, մաթեմատիկականացնել բայերով:

Ստեղծագործական մտածողության ենթահարացույց. ստեղծագործական մտածողությունը մտածողության բարձրագույն արտահայտությունն է, ենթադրում է մտավոր գործունեության ծավալի անսահմանություն, երբ մարդը մտովի կարող է ընդգրկել այնպիսի երևույթներ, որոնց մտապատկերը դեռևս հասանելի չէ շատերին. այն միայն ստեղծագործող անհատի մենաշնորհն է թերևս: Ձևավորվում է ստեղծագործական մտածողության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ստեղծագործական աշխատանքով մշակույթի արժեք (արտադրանք) ստեղծել»: Նույն-իչը ստեղծագործել-ն է՝ արարել, երկնել, հեղինակել, մտահղանալ, ստեղծել բայերով: Բաղկացած է ստեղծագործական երևակայության և հայտնագործման բայերի խմբերից: *Ստեղծագործական երևակայության բայերի խումբ*. երևակայությունը հիշողության մեջ կուտակված մտապատկերներից նոր մտապատկերներ և նրանց նոր զուգորդություններ ստեղծելու և այդ եղանակով անձի համար նշանակալից խնդիրների լուծումները որոնելու ներհոգեկան պրոցես է...¹⁵: Ձևավորվում է ստեղծագործական երևակայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մտովի երևակայել, պատկերացնել»: Նույն-իչը երևակայել-ն է՝ հնարամտել, մտապատկերել, պատկերացնել բայերով: Ներկայանում է հնարման բայերի ենթախմբով՝ հնարման իմ-իչով (սակավ դրական, առավելապես՝ բացասական իմաստով)՝ հետևյալ ԻԲ-ով. «Իրականությանը չհամապատասխանող բան հորինել»: Նույն-իչը հնարել-ն է՝ բաղբաղել, հորինել, նենգահյուսել բայերով: *Հայտնագործման բայերի խումբ*՝ հայտնագործման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ երևույթ երևան հանել, բացահայտել, գյուտ անել»: Նույն-իչը հայտնագործել-ն է՝ գտնել, գյուտարարել, հայտաբերել, հնարագործել բայերով:

Միտումնավոր մտածողության բայերի ենթահարացույց. ունի բացասական երանգավորում. ձևավորվում է միտումնավորության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մտքում դիտավորությամբ՝ դիտմամբ, որոշ նկատառումներով՝ միտումով մի բան հղանալ»: Նույն-իչը դիտավորվել-ն է՝ դավել, նկատառել, նյութել բայերով: Ներկայանում

¹⁵ Տե՛ս Ա. Նալչաջյան, նշվ. աշխ., Ե., 1997, էջ 55:

Է *աղճատման բայերի խմբով՝* աղճատման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բան աղավաղել, նենգափոխել»: Նույն-իչը աղճատել-ն է՝ աղավաղել, խեղաթյուրել, կեղծել, նենգափոխել բայերով:

Դատողության բայերի ենթահարացույց, մտածողությունը թույլ է տալիս մի շարք կոնկրետ առարկաների ընկալման հիման վրա եզրակացություններ կատարել նրանց դասերի ընդհանուր հատկությունների մասին և այնուհետև այդ ընդհանուր պատկերացումները կիրառել նոր առարկաների նկատմամբ: Ահա թե ինչու մտածողության շնորհիվ մարդու իմացության սահմանները անսահմանորեն ընդլայնվում են¹⁶: Ձևավորվում է դատողության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Դատողություններ անելու ունակություններն ու կարողությունները օգտագործել՝ օրյեկտիվ իրականության ու առարկաների միջև եղած կապերն ու հարաբերությունները պատճառաբանել կարողանալու համար»: Նույն-իչը դատել-ն է՝ կշռադատել, մտազննել, տրամաբանել բայերով: Բաղկացած է վերացարկման, հետազոտության, սահմանման, դասակարգման, մեկնաբանման կամ բացահայտման, ենթադրության, ծրագրման, բացառման, մտահանգման, մտածական գործընթացի բնույթի փոփոխման կամ վերածման խմբերից: *Վերացարկման բայերի խումբ՝* վերացարկման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի վերաբերյալ վերացարկում կատարել»: Նույն-իչը վերացարկել-ն է՝ աբստրահել, մտահայել, վերառել բայերով: *Հետազոտության բայերի խումբ՝* հետազոտության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Գիտական քննության ու վերլուծության ենթարկել որևէ բանի իմացության՝ ճանաչման՝ բացահայտման նպատակով, ուսումնասիրել, քննել»: Նույն-իչներն են հետազոտել, քննել-ը՝ գրաքննել, դիտարկել, ուսումնասիրել բայերով: *Մահմանման բայերի խումբ՝* սահմանման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի բնորոշումը՝ բնութագրությունը տալ, որևէ բանի էությունը բնորոշող սահմանում տալ»: Նույն-իչը սահմանել-ն է՝ բանաձևել, բնորոշել, բնութագրել, նկարագրել բայերով: Բաղկացած է հաստատման, որոշման կամ վճռելու, գնահատման ենթախմբերից: Հաստատման բայերի ենթախումբ՝ հաստատման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մի բանի ստույգ՝ ուղիղ լինելը, հաստատել»: Նույն-իչը հաս-

¹⁶ Տե՛ս ն. տ., էջ 260:

տատել-ն է՝ հավաստել, ճշգրտել, ստուգել բայերով: Որոշման կամ վճռելու ենթախումբ՝ որոշման կամ վճռելու իմ-իչներով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բան որոշ հատկանիշներով՝ տվյալներով են պարզել, սահմանել»: Նույն-իչներն են որոշել-ը և վճռել-ը՝ լուծել, կարգել, որոշարկել, վճռահատել բայերով: Ներկայանում է անորոշության շարքով՝ անորոշության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բան չկարողանալ ստուգապես որոշել, սահմանել, ապակողմնորոշվել»: Նույն-իչը ապակողմնորոշվել-ն է՝ մոլորվել, շփոթվել, սխալվել բայերով: Գնահատման բայերի ենթախումբ՝ գնահատման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի, մի բանի հարգը՝ արժեքը ճանաչել, արժեքավորել»: Նույն-իչը գնահատել-ն է՝ արժևորել, գերագնահատել, թերագնահատել, վերագնահատել բայերով: *Պատկարզման բայերի խումբ*՝ դատակարգման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որոշ տարբերակիչ հատկանիշների կամ հատկությունների հիման վրա որևէ բան դասերի՝ կարգերի՝ խմբավորումների բաժանել»: Նույն-իչը դատակարգել-ն է՝ դասել, դասդասել, համակարգել, շարադասել բայերով: Բաղկացած է տարբերակման, միավորման, բաղդատման ենթախմբերից: Տարբերակման բայերի ենթախումբ՝ տարբերակման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի քննության՝ ուսումնասիրության ժամանակ տարբեր կարգի տարբերը՝ երևոյթները են առանձնացնել, զատորոշել միմյանցից»: Նույն-իչը տարբերակել-ն է՝ այլազանել, բազմամասնել, զատել, հատկացնել բայերով: Միավորման բայերի ենթախումբ՝ միավորման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Առանձին տարրերից՝ մասերից՝ միավորներից ամբողջություն կազմել»: Նույն-իչը միավորել-ն է՝ բանահավաքել, զուգամիավորել, կապակցել, համակցել բայերով: Բաղդատման բայերի ենթախումբ՝ բաղդատության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Զուգադրելով մեկի և մյուսի տարբերությունները՝ նմանությունները և առավելությունները որևէ բան երևան բերել, բաղդատել»: Նույն-իչը բաղդատել-ն է՝ զուգադրել, զուգակշռել, համադրել, համեմատել բայերով: *Մեկնաբանման կամ բացահայտման բայերի խումբ*՝ մեկնաբանման և բացահայտման իմ-իչներով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բնագիր բացատրել՝ պարզաբանել, լուսաբանող, քննադատական դատողություն անել որևէ բանի վերաբերյալ»: Նույն-իչներն են մեկնաբանել-ը և բացահայտել-ը՝ արտահայտել, լուսաբանել, ծանոթաբանել, հայտնաբերել, պարզա-

բանել բայերով: *Ենթադրության բայերի խումբ*՝ ենթադրության իմ-ի-չով՝ հետևյալ ԻԲ-ով. «Նախնական դատողություններ անել որևէ բանի մասին»: Նույն-իչը ենթադրել-ն է՝ դիտել, կարծել, կանխենթադրել, համարել բայերով: Ծրագրման բայերի խումբ՝ ծրագրման իմ-ի-չով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ գործունեության ծրագիր կազմել»: Նույն-իչը ծրագրել-ն է՝ կանխամտածել, ձգտել, մտադրվել, նպատակամղվել բայերով: Բացառման բայերի խումբ՝ բացառման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Բացառություն անել, հանել՝ հեռացնել որևէ բանի կազմից»: Նույն-իչը բացառել-ն է՝ բացարկել, ժխտել, հերքել, մերժել բայերով: Մտահանգման բայերի խումբ՝ մտահանգման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ դատողությունից կամ ստացած տպավորությունից անհրաժեշտ հետևություն անել, եզրակացնել»: Նույն-իչը մտահանգել-ն է՝ արտածել, եզրահանգել, եզրակացնել, մակածել բայերով: Բաղկացած է փաստարկման և ամփոփման ենթախմբերից: Փաստարկման բայերի ենթախումբ՝ փաստարկման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բան փաստերով հիմնավորել՝ պատճառաբանել, ապացուցել»: Նույն-իչը փաստարկել-ն է՝ ապացուցել, հիմնավորել, փաստաբանել, պատճառաբանել բայերով: Ամփոփման բայերի ենթախումբ՝ ամփոփման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ուսումնասիրությունը՝ շարադրանքը ընդհանուր բնույթի եզրակացություններով ներկայացնել»: Նույն-իչը ամփոփել-ն է՝ ամբողջացնել, բովանդակել, եզրափակել, ընդհանրացնել բայերով: Մտածական գործընթացի բնույթի փոփոխման կամ վերածման բայերի խումբ՝ փոխակերպման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մտածական գործընթացի որևէ արդյունքի (միավորի) բնույթը փոխել, վերածել, այլակերպել մի այլ արդյունամիավորի»: Նույն-իչը փոխարկել-ն է՝ ածանցել, առասպելականացնել, առնմանել, բառաբարդել, թարգմանել բայերով:

Հիշողության բայերի ենթահարացույց՝ հիշողության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկին կամ մի բան հիշողության մեջ պահել, չմոռանալ»: Նույն-իչը հիշել-ն է՝ մտաբերել, մտաբեռնել, մտակոչել, մտապահել, վերհիշել բայերով: Բաղկացած է մտազբաղության և մոռացման բայերի խմբերից: Մտազբաղության բայերի խումբ՝ մտազբաղության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Կենտրոնացած կերպով միտքը մի բանով զբաղեցնել»: Նույն-իչը մտազբաղվել-ն է՝ մտազարվել, մտամոլորվել, մտատարվել, մտասնեռվել բայերով:

Ներկայանում է մտատանջության բայերի ենթախմբով՝ մտատանջության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Միտքը չարչարել, տանջել որևէ խնդրով՝ մի բան հիշելու նպատակով»: Նույն-իչը մտատանջվելն է՝ մտալլկվել, մտահոգվել, մտահուզվել, մտապաշարվել բայերով: *Մոռացման բայերի խումբ*՝ մոռացման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ինչ-ինչ պատճառներով մեկին կամ մի բան միտքը չպահել, հիշել չկարողանալ»: Նույն-իչը մոռանալն է՝ անտեսել, մտազանցել, մտահանել, մտացրվել բայերով:

Շարակարգային սկզբունքով բացահայտվում են ՄԲ-երի կապակցելիության հարուստ առանձնահատկությունները: ՄԲ-երը բազմիմաստ են, այսինքն՝ միևնույն բայը, շնորհիվ իր բառաիմաստային տարբերակների, տարբեր խոսքաշարերում դրսևորում է տարբեր նշանակություններ: Խոսքաշարային շրջապատը ծառայում է արտահայտած իմաստի ճշգրտմանն ու կոնկրետացմանը: ՄԲ-երի շարակարգային կառույցը գործում է մտածող սուբյեկտի և մտքի առարկայի միջոցով մտածական ակտի արդյունքում: ՄԲ-երին հատուկ են ենթակաառության, ստորոգառության, խնդրառության և պարագաառության արժույթները¹⁷: Ըստ ՄԲ-երի հետ կապվող տարբեր բնույթի գործորդների (ակտանտ) քանակի՝ կարելի է տարբերել զրո արժույթից (Շատ գիտես, քիչ խոսիր) մինչև եռարժույթ ՄԲ-եր: ՄԲ-երը ունեն շարահյուսական կապի երկու տեսակ՝ գործողի (սուբյեկտային՝ Գող^{ենթ}) և գործորդի (խնդրային կամ օբյեկտային՝ Գորդ^{աղի}): Հասցեստիքոջ (Գորդ^{հսց}) դիրքը հատուկ չէ ՄԲ-երին: ՄԲ-երի հարացույցում գործում են շարակարգային հետևյալ բանաձևերը՝ Գող^{ենթ} + ՄԲ^{ստ} (Ես մտածում եմ, ՊՄ, 139)¹⁸, Գող^{ենթ} + ՄԲ^{ստ} + Գրդ^{աղի}¹⁹ (Ով սահմանում է նոր օրենք ու կարգ... ՊՄ, 58), Գող^{ենթ} + ՄԲ^{ստ} + Գրդ^{անուղի} (Երբ (ես) հիշում եմ քո մասին, սիրտս լցվում է

¹⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 466-467:

¹⁸ Պ. Մևակ, *Մարդը ափի մեջ*, Ե., 1963:

¹⁹ Բանաձևում գործածվում են հետևյալ պայմանական արտահայտությունները. Գող-գործող, այսինքն՝ ենթակա, ՄԲ^{ստ} - ստորոգյալ՝ արտահայտված ՄԲ-ով, Գրդ-գործորդ, այսինքն՝ ուղիղ կամ անուղղակի խնդիր, որոնց անվանումները տրվում են համառոտագրությամբ:

լացով), **Գողենթ** + **ՄԲ**^{տո} + **Գրդուլիս** + **Գրդանուլիս** (*Ես քո մասին* արդյոք *ի նչ* եմ մտածում, ՊՄ, հ.1, 1982, 235):

Գործաբանական սկզբունքով բացահայտվում են **ՄԲ**-երի կիրառական առանձնահատկությունները, որոնք կապված են մտքերի իրացման հետ, որի արդյունքում էլ ձևավորվում է **խոսքը**: **ՄԲ**-երի **ԲԻՄ**-ը սերտորեն առնչվելով այլ **ԲԻՄ**-երի հետ՝ հատվում է՝ առաջացնելով **երկրորդային** և **փոխաբերական** մտածականներ: Այլ **ԲԻՄ**-երի բայեր ձևավորում են **ՄԲ**-ի **ԲԻՄ**-ի եզրամասը, որովհետև, առաջնային նշանակությամբ պատկանելով այլ **ԲԻՄ**-ի, **ՄԲ**-ի **ԲԻՄ** են մտնում իրենց **երկրորդային** կամ **փխբ**. նշանակություններով, այսինքն՝ ինտելեկտուալ նշանակությունը նրանց **իմաստային կառուցվածքում** եզրային է: **Մտածական ԲԻՄ**-ը սերտորեն կապված է **ասացական ԲԻՄ**-ի հետ, որովհետև մտքի խոսքային ճիշտ դրսևորումը նպաստում է հաղորդակցման իրականացմանը: Դա պայմանավորված է խոսքի և մտածողության փոխհարաբերությամբ, **խընդրառական որոշ կապերի ընդհանրությամբ**, **ասացական և մտածական բայերի սուբյեկտի ընդհանրությամբ** (Ես մտածում եմ/Ես ասում եմ), **խոսքային իրադրության պահանջով այդ բայերի փոխադարձ փոխարինմամբ** (պայմանավորված **ուրիշի ուղղակի խոսք ներմուծելու կարողությամբ**²⁰), մինևույն բայի միջոցով և՛ **մտածական**, և՛ **ասացական գործընթացների արտահայտմամբ**: **ՄԲ**-երը հատվում են նաև **գրավոր խոսքի ասացականների**²¹ հետ, որովհետև վերջիններս՝ իբրև մտքի՝ բառայնորեն ձևավորված գրավոր (չհնչող) արտահայտման գործընթաց, ավելի մոտ են մտածականներին, քան բանավոր խոսքի ասացականները: **Խոսքային իրադրության** պահանջով **ներքին խոսքից** անցում է կատարվում դեպի **գրավոր**, ապա **բանավոր խոսք** (կամ՝ **ներքին խոսք**→**բանավոր խոսք**→**գրավոր խոսք**). **Գործաբանական այս շղթայում** էլ առաջանում են **իմաստային համաձուլվածքները** (ինչպես, օր., *բնութագրել, գրախոսել, եզրակացնել*,

²⁰ Ձենը գնաց դըմբդըմբալով՝ Դավթի ականջն ընկավ հորում. Հայ-հայ, **ասավ (մտածեց)**՝ փոխարինումը մերն է) հորեղբայրս է՝ Մասմա սարից ինձ է գոռում (Հ. Թումանյան, հ. 4, Ե., 1991, էջ 35). երկու դեպքում էլ՝ **ասաց/մտածեց**, արժույթը չի փոխվում:

²¹ Տե՛ս **Ռ. Դոխայան**, *Գրավոր խոսքի ասացականները արդի հայերենում*, Ջահուկյանական ընթերցումներ, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2013թ., մայիսի 22-24). -Եր.: Էդիթ Պրինտ, 2013, էջ54-55):

ենթադրել, ծանոթագրել, հիմնավորել, ձևակերպել, նկարագրել, շարադրել, որոշել, սահմանել, վերլուծել են)²²:

Մտածական ԲԻՄ-ը առնչություններ ունի **զգացական ԲԻՄ**-ի հետ, որովհետև, բացահայտելով երևույթների պատճառական կապերն ու օրինաչափությունները, մենք անցնում ենք զգայական իմացությունից այն կողմ, խորացնում մեր պատկերացումները բնական ու հասարակական գործընթացների վերաբերյալ, այդուհանդերձ այս **ԲԻՄ**-երի սահմանները այնքան էլ հստակ չեն տարրորոշվում՝ պատճառ դառնալով յուրատեսակ հատումների համար: **Ստեղծագործական մտածականների ենթահարացույցի բայերը** հատվում են **ԶԲ**-երի **երազանքի** խմբի բայերի հետ, օր. **երևակայելը և պատկերացնելը** կան երկու հարացույցներում էլ: Կամ՝ **ճանաչելը** հավասարապես կապվում է թե՛ իմացության, թե՛ զգայական ընկալման հետ, իսկ ըմբռնելը իր մեկ իմաստով ճանաչողական բայ է, մեկ այլ նշանակությամբ՝ հասկացման կամ կռահման²³:

ՄԲ-երը հատվում են նաև **վարքի ԲԻՄ**-ի բայերի հետ, ինչպես օրինակ՝ **երեխայանալ, թեթևամտել, մանկանալ, վերաբերվել** են:

Մտածական բայերի իմաստային դասակարգումը փորձ է՝ **խոսքային գործունեությունը** առավել հստակ պատկերացնելու, վերոնշյալ բայերի միջոցով նախ՝ մտքում խոսքը տրամաբանորեն կառուցելու, ապա՝ ճիշտ ու տեղին կիրառելու համար:

Дохоян Рузанна - Семантическая классификация глаголов мышления современного армянского языка. – В современном армянском языке не проводилось комплексного изучения глаголов мышления. Попытки семантических группировок этих глаголов или упоминание термина (глаголы мышления) встречаются только в работах по синтаксису. В статье вышеупомянутые глаголы мы изучали с семантической точки зрения, рассматривая как ЛСТГ, организованную полемым принципом. Мы очертили границы, формируя парадигму глаголов мышления, которую разделили на следующие подпарадигмы: истинные

²² Տե՛ս **Ռ. Դոխոյան**, *Մտացական և մտածական բայերի իմաստային առնչությունները*, Ջահուկյանական ընթերցումներ-2009, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2009թ., ապրիլի 28-29). -Եր., Նաիրի, 2009, էջ 61:

²³ Տե՛ս **Հ. Օհանյան**, *Մտածական բայերի խնդրատության մի քանի հարցեր*, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, Ե., 1984, N 3, էջ 53:

мыслительные, познавательные, рассудительные, глаголы восприятия и понимания, воспоминания, творческого, тенденциозного мышления. В свою очередь, подпарадигмы разделили на соответствующие группы, подгруппы, ряды. Цель исследования глаголов мышления – дать более четкое представление о роли и употреблении этих глаголов в процессе речевой деятельности.

Dokhoyan Ruzanna- The Semantic Classification of the Verbs of Thinking in Modern Armenian. - There is no complex research of the verbs of thinking in modern Armenian. We only meet the attempts of those semantic groups or the mentioning of the term (verbs of thinking) in the syntax. We have studied the above -mentioned verbs in the article from the semantic point of view observing them as a word-semantic group organized by a field principle. We have outlined the borders forming the semantic paradigm of the verbs of thinking which we have divided into following subparadigms: original verbs of thinking, those of comprehension or understanding, recognition, judgment, creative, intentional thinking, memory. We have divided the following into appropriate groups, subgroups, series. The classification of the verbs of thinking aims to imagine clearly the process of speech activity.

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին դեռ անցյալ դարում հայերենը բնութագրել է որպես «մի զարմանալի յուրահատուկ շնորհ ունեցող լեզու, որ ի վիճակի է ազատորեն և ստույգ արտահայտելու միաժամանակ **գիտական** ճշտորոշ միտքը, **փիլիսոփայական** գաղափարները և **բանաստեղծական** նրբին, բազմերանգ կիսաստվերները»: «.... Իմ գիտցած լեզուների մեջ հայերենը բացառիկ է.... նախ՝ որպես զարմանալի **տրամաբանական** լեզու, ապա նաև՝ իր **ճկունությամբ**, նոր բառեր կազմելու դյուրությամբ»: Իսկ Ֆեյդին այդպես ասելու իրավունք ունի, քանի որ տիրապետել է եվրոպական ու ասիական մի շարք լեզուների:

Անցյալ դարի 70-ական թթ. Ֆեյդին ամերիկացի հայագետ Սոլ-տեքսի հետ միասին գրել է. «Մենք վստահ ենք, որ բառերի ճշգրիտ իմաստը տվող մի լեզու եթե կա, ապա դա հայերենն է, և առաջարկում ենք ՄԱԿ-ի միջազգային լեզու ընտրելիս նախապատվությունը տալ նրան»:¹

Գրական հայերենն իր այս հատկությունները ձեռք է բերել հազարամյակներ շարունակ ազատ ու անկախ զարգացման, մաքրության ու ինքնաբավության շնորհիվ: Եվ որպեսզի հայերենը չկորցնի իր այս առավելությունը, պետք է շարունակել նրա զարգացման ավանդույթները՝ նպաստելով նրա ինքնամաքրմանը և կատարելագործմանը:

Խոսքը հայերենի նախ և առաջ **բառակազմական համակարգի** մասին է, որը կարող է առավել կատարելագործվել, եթե հայերենը անխոչընդոտ կիրառվի կյանքի ամենատարբեր ոլորտներում և չաղարտվի այլ լեզուների ճնշմամբ:

Կարծիք կա, թե հայերենը կարող է աղբյուրներենի, ուղբերենի և այլ լեզուների նման բավարարվել անգլերենից ու ռուսերենից

¹ https://hy.wikiquote.org/wiki/Ֆրեդերիկ_Ֆեյդի

անսահմանափակ փոխառություններով, ու դա լեզվի զարգացման ավելի հեշտ ճանապարհ է:

Իսկապես դա ավելի հեշտ է թվում: Բայց նախ պարզենք, թե ում համար է դա հեշտ:

Հեշտ է այդ բառապաշարը մշակողների համար: Շատ ավելի հեշտ է այլ լեզուներից պատրաստի բառեր վերցնելն ու տառադարձելը, քան հայերեն նոր բառեր կերտելը կամ պատճենելը:

Հեշտ է նաև այդ բառապաշարին այլ լեզուներով արդեն ծանոթ մարդկանց համար: Նրանք սովորելու նոր բան քիչ կունենան:

Իրավիճակը շրջադարձորեն փոխվում է, երբ խնդիրը դիտարկում ենք **մատաղ սերունդների** դիտանկյունից: Առաջին անգամ տվյալ հասկացությանը հայերեն գրականության միջոցով ծանոթացողի համար անհամեմատ նախընտրելի է հայերեն բառը, քան փոխառությունը ինչ-որ մի անծանոթ կամ կիսածանոթ լեզվից: Նախընտրելի է, քանի որ հայերեն բառը փոխառության համեմատ ապահովում է ինքնըստինքյան հասկանալիություն, դյուրին յուրացում, խնայողություն, ինչպես նաև լեզվական համակարգին հարմարվածություն, ազգային միասնություն: Քննարկենք այս կետերը առանձին-առանձին:

1. **Ինքնըստինքյան հասկանալիություն:** Նորակազմ բառերը իրենց արդեն ծանոթ բաղադրիչների շնորհիվ **թափանցիկ** են, այսինքն՝ ի սկզբանե ունեն հասկանալիության որոշակի ներուժ, ինչից զուրկ են փոխառությունները: Դա պատկերացնելու համար համեմատենք հետևյալ բառերը.

դիդակտիկա – ուսուցաբանություն,

վիտամին – կենսանյութ,

մանդատ – իրավագիր,

գրաֆիտ – գրաքար,

կոնցենտրատ – խտանյութ,

էմպատիա – հուզակցություն,

կատարսիս – ինքնամաքրում,

ինվեստոր – ներդրող,

օնլայն – առցանց:

Փոխառություններն ինքնին և ի սկզբանե ոչինչ չեն հուշում և կարող են հասկանալի դառնալ միայն համարժեք հայերեն բառերի

կամ դրանց բառակապակցական բացատրությունների օգնությամբ: Այսպես՝ **սարկոֆագ**-ը պետք է հասկանալ ու հիշել որպես «քարե տապան՝ **քարատապան**», **Ֆունգիցիդ**-ը՝ «սունկ սպանող նյութ՝ **սնկասպան**», **իխտիոլոգ**-ը՝ «ձկների գիտակ՝ **ձկնագետ**» և այլն: Իսկ եթե երբեմն կարծես թե ինչ-որ բան հուշում են, ապա դա կարող է խաբուսիկ լինել: Օրինակ՝ **կորդերալետ**-ը («պարախումբ») թվում է բալետի տեսակ, միչդեռ այստեղ **բալետ** բաղադրիչը մեզ ծանոթ իմաստը չունի, **կատասպուլտ**-ը («ինքնանետիչ») թվում է պուլտի տեսակ, միչդեռ այստեղ էլ **պուլտ** բաղադրիչը մեզ ծանոթ իմաստը չունի:

2. **Դյուրին յուրացում:** Բնականաբար բառը որքան թափանցիկ է, այնքան լավ է տպավորվում և արագ յուրացվում: Մինչդեռ դրանց օտար համարժեքները, ինքնաստիճյան հասկանալիության հատակությունից միանգամայն զուրկ լինելով, յուրացվում են ոչ թե տրամաբանորեն, այլ զուտ մեխանիկորեն և հավելյալ ջանքերի հաշվին: Օրինակ՝

երկամյա – բիենալե,
ապագայագետ – ֆուտուրոլոգ,
ներծոր – էնդոկրին,
դիտանկյուն – ռակուրս,
նախագտում – քասթինգ,
բնակախումբ – պոպուլյացիա
էկզոտիկ – տարաշխարհիկ,
էվակուացիա – տարհանում:

3. **Խնայողություն:** Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն դրույթը, որ փոխառության փոխարեն նորակազմությունների կիրառումը խնայողության միջոց է: Այդ կերպ լեզուն և մեր հիշողությունը ազատագրվում են տասնյակ հազարավոր օտար բառերից, որոնք ունեն արմատների արժեք և առանձին-առանձին հիշվելու կարիք: Մինչդեռ նորակազմությունները, բաղադրվելով հայտնի կաղապարներով, հայտնի արմատներից ու ածանցներից, ինքնըստիճյան հասկանալիության շնորհիվ հիշողությունը ծանրաբեռնում են աննշան չափով: Հետևաբար օտար բառերը միանգամայն ավելորդ բեռ են լեզվի և հիշողության համար:

4. **Լեզվական համակարգին հարմարվածություն:** Այս

չափանիշը կարելի է դիտարկել որպես քերականական հարմարվածություն, բառակազմական սերոդունակություն, հնչյոթային համապատասխանություն, արտասանական հարազատություն: Մրանցից առավել կարևորը **բառակազմական սերոդունակությունն** է:

Համեմատենք *էնցիա* և *հույզ* բառերը: *Հույզ*-ը ոչ միայն ավելի կարճ է, այլև արտադրողական է: Նրանից ինքնաբերաբար կազմվում են ածանցավոր՝

- գոյականներ՝ *հուզում, հուզմունք, հուզականություն, հուզվածություն,*

- ածականներ՝ *հուզական, հուզիչ, հուզումնավետ, անհույզ, համահույզ,*

- մակբայներ՝ *հուզականորեն, հուզաբար,*

- բայեր՝ *հուզել, վերահուզել, հուզականանալ,*

- ինչպես նաև բազմաթիվ բարդություններ՝ *հուզալից, հուզումնալից, հուզաշատ, հուզագուրկ, հուզաբորբոք, հուզաթաթալ, հուզախառն, հուզախտով, հուզահակ, հուզաշխարհ, հուզավառ, հուզաբար, հուզարտահայտչական, հուզումնաբեկ, հուզումնակոծ, հուզակցություն, սաստկահույզ, փոթորկահույզ, մրրկահույզ, մշտահույզ, սրտահույզ, սիրահույզ, ծովահույզ, մտահույզ* և այլն,

- որոնք իրենց հերթին կարող են ածանցվել՝ *հուզաշատություն, հուզարարում, հուզաշխարհային, հուզավառվել, հուզազրկվել, հուզարտահայտչականորեն, հուզարտահայտչականացում* և այլն (ընդհանուր թվով՝ 45 բառ):²

Մինչդեռ *էնցիա*-ից գրեթե ոչ մի բառ չի կազմվում, հետևաբար հարկ է լինում փոխառել դրա օտարալեզու ածանցյալներ՝ *էնցիոն, էնցիոնալ, էնոտիվ*, որպեսզի դրանցից մի կերպ կազմվեն մի քանի նոր բառեր՝ *էնցիոնալացում, էնցիոնալություն, էնցիոնալորեն, էնպատիա*:

Իսկ հայերեն կազմություններից շատերը և հատկապես բայերը անփոխարինելի են: Ուստի օտար բառը նախընտրողը տիպված է լինում իրար կողքի գործածել, օրինակ, *էնցիա*-ն և *հուզվել*-ը: Բայց այդ պատճառով մթագնում է դրանց իմաստային կապը, և

² Բառերն ընտրված են **Է. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանից» (Ե., 1976):

քողարկվում է ծագումնաբանական առնչությունը՝ *հույգ – հուզվել*:

Մերոդունակ բառերից արդեն պատրաստի կադապարներով ինքնըստինքյան ստացվում են **բառակազմական համակարգեր** (հարացույցներ), կամ այդ բառերը ներառվում են համակարգերի մեջ և լեզվակրի միտքն ու հիշողությունն ազատում մեծաքանակ ածացանկներ կազմելու, իմաստով հարաբերակից բառեր գտնելու ջանքերից: Այս հատկությունը, որպես կանոն, բնորոշ չէ փոխառություններին, որոնք ամլացնում են բառակազմական կադապարները, հաշմում բառակազմական համակարգերը:

Բերենք բառակազմական մանրահամակարգերի մեկական օրինակ գեղարվեստի, լեզվաբանության և տեղեկագիտության ոլորտներից հայերեն, անգլերեն և ռուսերեն զուգահեռներով:

Գեղարվեստի ոլորտից

գեղանկար	գեղանկարային	գեղանկարիչ	գեղանկարչություն	գեղանկարչական
գծանկար	գծանկարային	գծանկարիչ	գծանկարչություն	գծանկարչական
խճանկար	խճանկարային	խճանկարիչ	խճանկարչություն	խճանկարչական
սրբանկար	սրբանկարային	սրբանկարիչ	սրբանկարչություն	սրբանկարչական
մանրանկար	մանրանկարային	մանրանկարիչ	մանրանկարչություն	մանրանկարչական
յուղանկար	յուղանկարային	յուղանկարիչ	յուղանկարչություն	յուղանկարչական
ջրանկար	ջրանկարային	ջրանկարիչ	ջրանկարչություն	ջրանկարչական
որմանկար	որմանկարային	որմանկարիչ	որմանկարչություն	որմանկարչական
յուսանկար	յուսանկարային	յուսանկարիչ	յուսանկարչություն	յուսանկարչական
դիմանկար	դիմանկարային	դիմանկարիչ	դիմանկարչություն	դիմանկարչական
բնանկար	բնանկարային	բնանկարիչ	բնանկարչություն	բնանկարչական
խարանկար	խարանկարային	խարանկարիչ	խարանկարչություն	խարանկարչական

painting	painting	painter	painting	(of) painting
graphics		draftsman, drawer, draughtsman	graphics	graphic
mosaic	mosaic	mozaicist	mosaic	mosaic
icon	iconic	iconographer	iconography	iconographic
miniature	miniature	miniaturist	miniature	miniaturistic
oil painting	oil painting	oil painter	oil painting	(of) oil painting
watercolor, wash drawing, aquarelle	watercolor	watercolorist, wash drawer	watercoloring, wash drawing	(of) watercoloring
fresco, mural, wall-painting	fresco	wall-painter	wall-painting	fresco, mural, wall-painting

photo, photograph	photographic	photographer	photography	(of) photography
portrait	portrait	portraitist	portraiture, portrait- painting	(of) portrait- painting
landscape	landscape	landscape- painter	landscape- painting	(of) landscape- painting
poker-work, pyrography	poker-work, pirography	poker-worker, pyrographer	poker-work, pyrography	poker-work, (of) pyrography

живопись	живописный	живописец	живопись	живописный
графика (м. ч.), рисунок	графический, рисуночный	график, рисовальщик	графика, рисунок	графический, рисуночный
мозаика	мозаичный	мозаист, мозаичник	мозаика	мозаичный
икона	иконный	иконописец	иконопись	иконописный
миниатюра	миниатюрный	миниатюрист	миниатюра	миниатюрный
живопись маслом	маслянный	художник по маслу	живопись маслом	
акварель	акварельный	акварелист		
фреска	фресковый	художник пишущий фрески, альфрейщик	фреска	фресковый
фотография	фотографический	фотограф	фотография	фотографический
портрет	портретный	портретист	портрет	портретный
пейзаж	пейзажный	пейзажист	пейзаж	пейзажный
выжигание, пирография	пирографический	пирографист	выжигание, пирография	пирографический

Հեղվարանության ոլորտից

գոյական	գոյականական	գոյականացում	գոյականակալ	գոյականակերտ
ածական	ածականական	ածականացում	ածականակալ	ածականակերտ
թվական	թվականական	թվականացում	թվականակալ	թվականակերտ
բայ	բայական	բայացում	բայակալ	բայակերտ
մակբայ	մակբայական	մակբայացում	մակբայակալ	մակբայակերտ
դերանուն	դերանվանական	դերանվանացում	դերանվանակալ	դերանվանակերտ
դերբայ	դերբայական	դերբայացում	դերբայակալ	դերբայակերտ

noun	nominal	nominalization	noun derived	noun-forming, noun derivation
adjective	adjectival	adjectivation,	adjective	adjective-

		adjectivization	derived	forming, adjective derivation
numeral	numeral	numeralization	numeral derived	numeral derivation
verb	verbal	verbalization, verbification	verbal	verb-forming, verb derivation
adverb	adverbial	adverbialization, adverb formation	adverb derived	adverb- forming, adverb derivation
pronoun	pronominal	pronominalization	pronoun derived	pronoun derivation
participle	participle	participalization	participal derived	participal- forming, participal derivation

существительное	Субстантивный	субстантивация, субстантивирование	отсуществительное	субстантивирующий (суффикс)
Прилагательное	адъективный	адъективация, адъективизация, адъективирование	отприлагательное	адъективирующий (суффикс)
числительное	Нумеральный	нумерализация		
глагол	глагольный	вербализация, отглаголивание	Отглагольное, девербативное	глагольный (суффикс)
наречие	наречный, адвербиальный	адвербиализация, отнаречивание		(суффикс) образующий наречие
местоимение	Местоименный	Прономинализация		
причастие	причастный, инфинитивный			

Տեղեկագիտության ոլորտից

տպել	տպիչ	տպում
պատճենել	պատճենիչ	պատճենում
ծրել	ծրիչ	ծրում
փոխարկել	փոխարկիչ	փոխարկում

որոնել	որոնիչ	որոնում
տողադարձել	տողադարձիչ	տողադարձում
մշակել	մշակիչ	մշակում
ցուցարկել	ցուցարկիչ	ցուցարկում
զննել	զննիչ	զննում
գտել	գտիչ	գտում
տեղադրել	տեղադրիչ	տեղադրում
ուղղագրել	ուղղագրիչ	ուղղագրում

print	printer	printing
copy	copier	copying
scan	scanner	scanning
convert	converter	converting
search	search engine, searcher	searching
hyphenate	hyphenator	hyphenating
process	processor	processing
display	monitor, display	displaying
browse	browser	browsing
filter, filtrate	filter	filtering
install	installer	installing
spell check, spell-check	spell checker, spell-checker, spellchecker	spell checking, spellchecking

печатать	принтер	печать, печатание
копировать	копировальное устройство, ксерокс	копирование
сканировать	сканер	сканирование
преобразовать	преобразователь, конвертер, конвертор	преобразование, конвертация
искать	искатель, поисковик	поиск
переносить, делать перенос, писать через дефис	<i>переносчик</i> , расстановщик переносов	перенос, расстановка переносов
обрабатывать	обработчик, процессор	обработка
отображать	монитор	отображение
просматривать	браузер, просмотрщик	просмотр
фильтровать	фильтр	фильтрация
устанавливать	установщик, <i>инсталлятор</i> , <i>программа</i> установки	установка, инсталляция
проверять орфографию	спеллчекер	проверка орфографии

Հայերենը իր լեզվական համասեռության շնորհիվ այս երեք դեպքում էլ կատարյալ է, ամբողջական, ինքնաբավ և ապահովում է հասկացական ու լեզվական համակարգերի համաձևություն: Մինչդեռ ռուսերեն մանրահամակարգերը իրենց անհամասեռության պատճառով թերի են (կան բաց վանդակներ), ոչ ճկուն, անմիջից-նակ, երկիմաստություններով, համանուններով, կադապարից շեղվող ձևերով, անհարկի հոմանիշներով ու տարբերակներով լի:

Թերությունները առաջանում են փոխառությունների հետևանքով, որոնք զուրկ են սերողունակությունից և իրենց հետ բերում են օտար ածանցյալներ կամ հարկադրում բավարարվել նկարագրական բառակապակցություններով, որոնք հաճախ կամայական են, վիճելի և անհարմար: Փոխառությունները փաստորեն ավերում են բառակազմական հարացույցները:

Նույնը կպատահի, եթե հայերենում էլ ներմուծենք փոխառություններ՝ *նատյուրմորտ, պեյզաժ, ակվարել, գրաֆիկա, ֆրեսկա* և այլն:

Անգլերենը միջին տեղ է գրավում հայերենի և ռուսերենի համեմատ:

Հայերենի այս ինքնաբավությունից շահում է լեզուն ինքը՝ ձեռք բերելով բառակազմական համակարգի ճկունություն, իմաստային դաշտերի համակարգվածություն, այլ լեզուներից անկախություն:

Անդրադառնալով միայն վերջինիս (անկախություն)՝ պետք է նկատենք, որ արևելահայերենը դեռ լիովին չի հաղթահարել կախվածությունը արևելյան լեզուներից (պարսկերենից, արաբերենից, թուրքերենից), իսկ այժմ զգալի կախվածություն ունի ռուսերենից, քանի որ մեծաթիվ են ռուսերենի միջնորդությամբ կատարված, ռուսերենին հարմարված և ռուսերենից տառադարձված փոխառությունները՝ *լամինացիա, խրոնոլոգիա, տոննա, տեխնիկա, բլոկիրովկա* և այլն, որոնք հայերենին մասամբ պարտադրում են բառակազմական ու հնչադարձական որոշ միջոցների կիրառում նաև այլ լեզուներից փոխառություն կատարելիս՝ *ինստալյացիա, պարկովկա, ռեստարտ, կրեատիվ, դատաբեյզ, տրի-դե, էմ-պե-տրի* և այլն:

Ռուսերենն ինքը կախման մեջ է լատիներենից, հին հունա-

րենից, ինչպես նաև գերմաներենից, անգլերենից, ֆրանսերենից, իտալերենից:

Արևելահայերենը այժմ սկսել է կախման մեջ ընկնել անգլերենից:

Որևէ այլ լեզվից կախվածությունը սովորաբար լինում է ժամանակավոր, և պարբերաբար առիթ է լինում փոխելու կախվածության կողմնորոշումները:

Լեզվական կողմնորոշման փոփոխության հետևանքով՝

*բիրժա-ն դառնում է բորսա,
կոնֆերենցիա-ն՝ կոնֆերանս,
ինստալյացիա-ն՝ ինսթոլեշըն,
տոննա-ն՝ թոն,
ցիկլ-ը՝ սայքլ,
մուլտի-ն՝ մալթի,
պարկովկան-ն՝ փարքինգ,
խրոնոլոգիա-ն՝ քրոնոլոջի,
սխեմա-ն՝ սքեմ,
ցինիկ-ը՝ կինիկ,
մատրիցա-ն՝ մատրիքս,
պրոյեկտ-ը՝ փրոջեքթ,
վիզուալ-ը՝ վիժուալ* այլն:

Հայտնի չէ, թե դեռ ինչ լեզուներ կտիրապետեն աշխարհում և կփորձեն բռնանալ հայերենի նկատմամբ: **Բնքնաբավ** քաղաքականության դեպքում ազդեցությունների փոփոխության նկատմամբ լեզուն ձեռք է բերում **անընկալունակություն** (իմունիտետ): Ամեն փոփոխության հետ հարկ չի լինում վերանայելու փոխառությունների կազմը, եղանակները, հիմքերը:

5. Ազգային միասնություն: Հայերը ցրված են աշխարհով մեկ: Ամեն երկրում հայերենը կրում է տեղի պետական լեզվի ազդեցությունը (թուրքերենի, արաբերենի, պարսկերենի, հունարենի, ֆրանսերենի, իսպաներենի, ռուսերենի կամ անգլերենի), նրանից փոխառություններ կատարում:

Այդ պատճառով ռուսահայի հայերենը դժվարհասկանալի է սիրիահայի համար, ֆրանսահայինը՝ թուրքահայի համար և այլն: Հետևաբար պետք է խուսափել փոխառություններից և զբաղվել **հա-**

մագգային համաձայնեցված բառակերտումամբ, որպեսզի հայերենը առավել չմասնատվի ու չճյուղավորվի, միասնական լինի ազգի համար:

Լեզվի սեփական միջոցների վրա հիմնված նորակազմությունները դրսևորումներն են լեզվի ներքին պահանջի, իրացումներն են այդ լեզվի **ինքնամաքրման, համակարգայնացման, բանականացման, միասնականացման, խնայողության** միտումների³:

Մինչդեռ փոխառությունները հետևանք են արտաքին ազդեցությունների ու ճնշումների, ինչպես նաև մասնագետների նախապաշարվածության, անկարողության, ծուլության, վերասերված լեզվազգացողության ու ճաշակի:

Իրենց պետական լեզուն սիրող, հարգող և խորապես գնահատող երկրներում՝ Ֆանսիայում, Թուրքիայում և այլուր, լեզվի մաքրության և փոխառությունները նորակազմություններով փոխարինելու գործը ոչ թե նվիրյալ անհատների հույսին է թողնված, այլ պետականորեն իրականացվող ծրագիր է:

Գործում են այդ նպատակով ստեղծված պետական հաստատություններ, որոնք կազմում են օտար բառերի **սև ցուցակներ**, դրանց փոխարինման համար հավաքում նորակազմությունների կամ մոռացված բառերի առաջարկներ, կազմակերպում այդ առաջարկությունների հանրային քննարկումներ, ընտրում լավագույն տարբերակները և օրենքի ուժով պարտադրում դրանց գործածությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Որքան էլ երբեմն անխուսափելի թվան փոխառությունները, պետք է հիշել, որ փոխառությունը (**«պարտքով վերցված բառը»**)

³ Տե՛ս նաև **Է. Ադայան**, *Տերմինագիտություն*, Ե., 1978: **Ռ. Իշխանյան**, *Ակնարկներ հայերենի տերմինաշինության*, Ե., 1981: **Ռ. Իշխանյան**, Հայերենի տերմինաշինության հարցեր, – *Լրաբեր հասարակական գիտությունների*, Ե., 1969, 7, էջ 87-103: **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը, – *Լրաբեր հասարակական գիտությունների*, Ե., 1971, 9, էջ 93-98: **Հ. Բաբսեդյան**, *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, Ե., 1988, էջ 5-27: **Հ. Զաքարյան**, Օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում, – *Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտությունների*, Ե., 2002, 1, էջ 133-140:

Ժամանակավոր երևույթ է, մինչև սեփական համարժեքի հայտնվելը և տարածվելը: Հետևաբար **միշտ պետք է հնարավորինս խուսափել փոխառություններից՝** ձգտելով լեզվի ներքին պաշարների հիման վրա գտնելու համարժեք միջոցներ: Դրա ուղիներն են.

- նոր բառի **ստեղծում**,
- օտար բառի **պատճենում**,
- եղած բառին նոր **իմաստի հավելում**,
- հնացած բառի գործառական **թարմացում**,
- մոռացված բառի **վերակենդանացում**,
- բառակապակցության **վերածում հապավման** և այլն:

Оганес Закарян – Принципы пополнения словарного запаса армянского языка. – По мере развития языка необходимость в образовании новых слов в армянском языке преимущественно удовлетворяется с помощью, с одной стороны, собственных новообразований, с другой стороны – заимствований из других языков. Вследствие этого часто возникают параллельные формы. Из них заимствованный вариант удобен для специалиста, который знаком с данным понятием на иностранном языке и привык к этой иностранной форме. Однако для того, кто впервые знакомится с этим понятием, гораздо предпочтительнее созданный собственными языковыми средствами вариант, который, по сравнению с заимствованным вариантом, отличается приспособленностью к системе языка, понятен сам по себе, легко усваивается, наделен свойствами не перегружать память и способствовать национальному единству. Словообразовательная система армянского языка настолько гибка, что самопроизвольно образуются словообразовательные парадигмы. Между тем, заимствования, как правило, разрушают эти парадигмы, излишне перегружают систему языка и память человека. Вот почему необходимо по возможности избегать заимствований и дать предпочтение их армянским эквивалентам.

Hovhannes Zakaryan – Principles of replenishment of vocabulary of the Armenian language. – In the process of development of language the need for formation of new words in Armenian language is generally satisfied on the one hand by means of new formations, and on the other hand – foreign-language loans. Because of this, parallel forms often arise. The loan-word is convenient for specialists who are familiar with this concept in a foreign language and have got used to this form. However for those, who get

acquainted with this concept for the first time, the word form created by his or her own language means is much more preferably which, in comparison with the borrowed word, differs in fitness to system of language, is clear in itself, is easily acquired, is allocated with properties not to overload memory and to promote national unity. The word-formation system of the Armenian language is so flexible that word-formation paradigms are spontaneously formed. Meanwhile, loans, as a rule, destroy these paradigms, excessively overload system of language and memory of the person. That is why it is necessary to avoid loans whenever possible and to give preference to their Armenian equivalents.

**ՄԻՐՏԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՆՈՐ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ
ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Միտ գոյականը բառակազմական լայն հնարավորություններ է հանդես բերում միջին հայերենի շրջանում: Իբրև կազմախոսական բառ՝ այն ամենից հաճախ կիրառվել է միջնադարյան բժշկարաններում (12-17-րդ դդ.), որտեղ *սիրտ*-ը առանձին կիրառություններից բացի հանդես է գալիս ածանցավոր, բաղադրյալ նոր կազմություններում, ինչպես նաև բառակապակցություններում: Սույն ուսումնասիրության համար դիտարկել ենք Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն», Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» (12-րդ դ.), Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց», Իշող քահանայի «Գիրք ի վերայ բնութեան», թարգմանական «Բժշկարան ձիոյ», նաև՝ «Գիրք վաստակոց»¹ (13-րդ դ.), Ամասիացու «Անգիտաց անպէտ», «Օգուտ բժշկութեան» (15-րդ դ.), Ասար Մեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» և Բունիաթ Մեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանները (16-17-րդ դդ.):

Առանձնացրել ենք «սիրտ» բաղադրիչով չորս տասնյակ նոր կազմություններ, որոնք ստեղծվել են միջին հայերենի շրջանում և հիմնականում կիրառվել են հենց բժշկարաններում: Վերջիններիս գերակշռող մասը արձանագրված է «Միջին հայերենի բառարան» - ում² (24 բառ): Այդ իսկ պատճառով դրանց կանոնադառնանք առավել համառոտ: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել հատկապես բառակապակցությամբ արտահայտված և հարադիր նոր կազմություններին, որոնք տեղ չեն գտել նշված բառարանում: Դրանք հիմնականում դարձվածային արժեք ունեցող բառակապակցություններ են:

¹ «Գիրք վաստակոց» թարգմանական երկը մի փոքր վերապահումով ևս ընդգրկել ենք բժշկարանների շարքում, քանի որ վերջինս, բույսերին և պտուղներին առնչվելով, սերտ կապ ունի նաև բժշկության հետ:

² Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009:

Նախ անդրադառնանք մեկ բառով արտահայտված նոր կազմություններին, որոնք, հաճախակի գործածվելով բժշկարաններում, տերմինի արժեք են ստանում: Ածանցման եղանակն այստեղ աչքի չի ընկնում. առանձնացրել ենք միայն *սիրտ* բաղադրիչով վերջածանցմամբ կազմված չորս բառ՝ *սրտային*³ «սիրտն ամուր», *սրտով*⁴. գործածվել է ածականական՝ «սրտոտ, անվախ»⁵ և «սրտանց» (ԲՁ 81) մակբայական կիրառություններով, *սրտութիւն* «բարկութիւն, զայրույթ» (ԲՁ 77), *սրտուկ*⁶ «բույսի միջուկ, ծուծ»: Նկատենք, որ վերջին բառը առանց *-ուկ* վերջածանցի էլ «Գիրք վաստակոց»-ում կիրառվել է նոր՝ «մրգի միջուկ» իմաստով. «Առ նոր սերկևիլ...և այնու ճեղքեա ՚ի չորս և հան *սիրտն*» (Էջ 126): ՄՀԲ-ում, սակայն, *սիրտ* բառի այս նոր իմաստը տեղ չի գտել, չնայած որ ածանցավոր *սրտուկ*-ը կա⁷:

Բառաբարդման եղանակով կազմվել են *սրտածած* «սրտի դողոց» (ԱՍՕԲ 63), *սրտառաջ*⁸ «կուրծք», *սրտայրգալ* «սրտի գդալ» (Գր.130) *գոյականները* և *սրտբաց* «սիրտը բացող, ուրախացնող» (ԲՁ 85), *սրտհեշտ* «սրտի համար հաճելի» (ԱՍՕԲ 42) ածականները: Բարդ բառերից վերջածանցի հավելմամբ են կազմվել *սրտայցալութիւն* «սրտի ծակոց» (ԱԱԱԱ 31), *սրտհեշտութիւն*⁹ «հոգու անդորր», *սրտնեղանք*¹⁰ «սրտնեղութիւն», *սրտկտրեք* «սրտի աման»

³ Տե՛ս **Ամիրզովլաթ Ամասիացի**, Օգուտ բժշկութեան, Ե., 1940, էջ 24, Անգիտաց անպետ, Վիեննա, 1926, էջ 369: Այսուհետև տվյալ բժշկարաններից բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ համապատասխանաբար ԱՍՕԲ և ԱԱԱԱ համառոտագրություններով:

⁴ -Ով հոլովական վերջավորությունը միջին հայերենում նաև վերջածանց է. տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 255, **Ղազարյան**. Միջին հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 205:

⁵ Տե՛ս Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, Ե., 1980, էջ 77: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԲՁ համառոտագրությամբ:

⁶ Տե՛ս Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 51, 130, 139:

⁷ Տե՛ս ՄՀԲ, էջ 722:

⁸ **Գրիգորիս**, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց, Ե., 1962, էջ 57: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում Գր. համառոտագրությամբ:

⁹ Տե՛ս ՄՀԲ, էջ 722:

¹⁰ **Աբուսայիդ**, Յադագս կազմութեան մարդոյն, Ե., 1974, էջ 217: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում Աբուս. համառոտագրությամբ:

(Գր. 57) գոյականները: Բայական վերջավորությամբ են ստեղծվել ***սրտեղնեղ*** «սրտնեղվել» (ԲՁ 73) և ***սրտահեշտացուցանեղ***¹¹ «սփռվել» բայերը:

Ի դեպ նկատենք, որ նման որոշ բառեր հաճախ կիրառվել են և՛ հարադրությամբ և՛ համադրությամբ, ինչպես՝ *սրտի դգալ – սրտայդգալ, սիրտը եղնեղ – սրտեղնեղ, սրտի հեշտութիւն – սրտհեշտութիւն*:

Միջնադարյան բժշկարաններում, ինչպես և բնորոշ է միջին հայերենին առհասարակ, շատ գործուն են հարադրական բարդությունները, որոնցից թվային գերակշռությամբ աչքի են ընկնում հատկապես հարադրավոր բայերը: Դրանց շարքում մեզ հետաքրքիր են *սիրտ* գոյականով և տարբեր բայերի հարադրությամբ զգալի թվով կազմությունները: Առանձնացրել և քննել ենք 19 հարադրություններ, որոնցից միայն 7-ն են տեղ գտել ՄՀԲ-ում. *սիրտն անցնեղ* «ուշաթփվել», *սիրտն ի վեր բերեղ* «փսխել», *սիրտը խառնակեղ* «սիրտը խառնել», *սիրտը կոտորիլ* «խեղձանալ», *սիրտը հասնեղ* «մահանալ», *սիրտը նեղնալ* «սրտնեղվել», *սրտին շարժեղ* «սրտ-խառնոց»: Ինչպես տեսնում ենք, բերվածները բոլորն էլ վերափմաստավորում ստացած դարձվածքներ են, որոնք ժողովրդական մտածողության արդյունք են: Միայն «սիրտը խառնել» նշանակությամբ այստեղ կիրառվել են *սիրտը խառնակեղ, սիրտը շարժեղ*, իսկ «փսխել» իմաստով՝ *սիրտ դարձնեղ, սիրտ ձգեղ, սիրտն ի վեր բերեղ*, դարձվածքները:

Նկատենք, որ օրգանիզմում կատարվող ֆիզիոլոգիական տարբեր երևույթները պատկերավոր նկարագրական ձևով ներկայացնելու այս միտումը սովորական է բժշկարանների համար. չէ որ ժողովրդական լայն գանգվածներին հասանելի լինելու խնդիրն այս շրջանում ամենից ավելի ուներ հենց բժշկությունը:

Պետք է նշել, որ *սիրտն* իբրև կազմախոսական բառ՝ բժշկարաններում գործածվել է երկու իմաստով՝ *սիրտ* և *ստամոքս*: Նկատենք, որ *սրտի* «ստամոքս» նշանակությունը գալիս է հենց ժողովրդական մտածողությունից. կարելի է ենթադրել, որ ստույգ

¹¹ Մխիթար Հերացի, Ջերմանց Մխիթարություն, Վենետիկ, 1832, էջ 15: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

չիմանալով սիրտ օրգանի տեղը՝ մարդիկ հաճախ ստամոքսի ցավերը և մարսողական խնդիրները վերագրել են սրտին: Դրանով կարելի է բացատրել *սիրտը խառնել*, *սիրտ թափել* և մի շարք այլ դարձվածքների իմաստը: Կարծում ենք, որ հենց այստեղից էլ առաջ է եկել վերաիմաստավորումը և բառակապակցության անցումը դարձվածքի: *Սիրտ* բառի «ստամոքս» իմաստը գտնում ենք Ստ. Մալխասյանցի բառարանում, որպես բառի 3-րդ իմաստ՝ գավառական բառ կամ նշանակություն նշումով¹²: Է. Աղայանը իբրև սիրտ բառի 6-րդ իմաստ ևս նշում է «մարդու և կենդանիների մարսողական օրգան, ստամոքս»՝ դարձյալ ժողովրդական նշումով¹³: Միս. Հերացու աշակերտ և հետևորդ Գրիգորիսը, իր «Քննություն բնութեան մարդոյ և նորին ցավոց» բժշկարանում մանրամասն անդրադառնալով սիրտ-ստամոքս առնչությանը, բժշկագիտորեն բացատրում է, որ սրտի և ստամոքսի հիվանդությունները փոխկապակցված են և դրա պատճառն այն է, որ ստամոքսի և կերակրափողի միացման տեղը՝ *ստամոքսբերանը*¹⁴ (ընդգծումը մերն է) մոտ է սրտի ներքևի փոսորակին՝ սրտագդալին և վերջինիս ցավը հաճախ շփոթվում է սրտի ցավի հետ. «զի թէ ցաւեր սիրտն, նայ մեռաներ մարդն, այլ ցաւ է, որ պատահէ ստամոքբերնին»¹⁵:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել սիրտ-ով կազմված բառակապակցությունների իմաստային երկու խումբ.

1. կազմություններ, որոնք վերաբերում են սրտին, ինչպես՝ *սիրտը ելնել* «բարկանալ», *սիրտն ի վեր վազել*, *սիրտն ի վեր քաշել* «կծկվել», *սիրտը խաղալ* «հուզվել», *սիրտը հասնել* «կյանքը սպառվել», *սիրտը նեղնալ* «սրտնեղվել» և այլն,

2. կազմություններ, որոնք վերաբերում են ստամոքսին, ինչպես՝ *սիրտն ի վեր բերել*, *սիրտ դարձուցանել* // *դարձնել գալ* «փսխել», *սիրտը խառնակել* «սիրտը խառնել», *սրտայշարժ լինել* «ստամոքսի մեծանալը կամ փոքրանալը», *սիրտը շարժել* «սիրտը խառնել» և այլն:

¹² Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ.4, Ե., 1945, էջ 219-220:

¹³ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, հ.2, էջ 1306:

¹⁴ ՄՀԲ, էջ 718:

¹⁵ Տե՛ս Գրիգորիս, Քննություն բնութեան մարդոյ և նորին ցավոց, Ե., 1962, 130-131;

Ինչպես արդեն նշեցինք, միջնադարյան բժշկարաններում հանդիպում են դրաձվածային արժեք ունեցող հարադիր նոր կազմություններ, որոնք տեղ չեն գտել ՄՀԲ-ում (նաև ՆՀԲ-ում), մի քանիսն էլ արձանագրված են «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ում կամ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում: Վերջիններս կարելի է ասել՝ բժշկարաններում բժշկական տերմինի արժեք ունեն: Ներկայացնենք դրանք.

Միրտ դարձուցանել // դարձնել և *սիրտը ձգել* համարժեք հարադրությունները, որ արձանագրված չեն բառարաններում, բժշկարաններում հանդիպում են «փսիսել» իմաստով. «*Միրտ դարձուցանելոյ* դեղ: Ինչ-որ ուտել կամ ինչ որ խմել *սիրտն դարձուցանել*»¹⁶: «...և քուն չկարել լինել *ի սրտին* շարժելոյն և դարցնելոյն» (Գր.48): «Մարդ, որ *սիրտն* շարժել և *ձգել* ..վատ նշան է» (Գր. 210):

Միրտը ելնել «բարկանալ» դարձվածքը ՄՀԲ-ում գտնում ենք միայն համադրական *սրտելնել* ձևով: Այն կիրառվել է 12-րդ դարի բժշկարաններում. «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն *ի սիրտը ելնելուն լինի*» (ՄՀՋՄ 16): «*Միրտ ելնելն* և բարկութիւնն և ուժ բռնաւորութեան ի լեղոյն է» (Աբուս 216):

Միրտն ի վեր վազել և *սիրտն ի վեր քաշել* դարձվածքները վերաբերում են «սրտի կծկվել»- ուն. «Նշանն այն է, որ *սիրտն ի վեր վազել* զերդ մորթած հավ»¹⁷: «Եւ թվենայ հիւանդին, թէ *սիրտն ի վեր կու քաշեն*» (Գր 148):

Միրտն ի վեր գալ բայը, որ «փսիսել» իմաստով կիրառել է Ամիրդովլաթ Ամասիացին (*ՍՍՕԲ 58*), *արձանագրված է ՀԼԲԲ-ում*¹⁸:

Միրտը խաղալ «հուզվել» դարձվածքը, որ դարձյալ գտնում ենք Ամասիացու մոտ (*ՍՍՕԲ 481*), բերվում է ՀԼԴԲ-ում ¹⁹ և ՀԲԲ-ում²⁰:

¹⁶ Տե՛ս Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, Ե., 1993, էջ 221:

¹⁷ Տե՛ս Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան տումարի, Ե., 1987, էջ 84: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԲՄ համառոտագրությամբ:

¹⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Ե., 2008, էջ 345:

¹⁹ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 526:

²⁰ Ստ. Մալխասեանց. Հայերեն բացատրական բառարան, հ.4 , Ե., 1945, էջ 220:

Միրտը շարժել դարձվածքը, որ բառարաններում ²¹ գտնում ենք միայն «հուզել» իմաստով, Գրիգորիսի բժշկարանում կապվելով ստամոքսի հետ՝ գործածվել է «սիրտը խառնել» նշանակությամբ. «Երբ *սիրտն շարժի* և ձգե զայն, նայ երնջկտալն և հեծկտուկն կտրի»։ (Գր.125)

Մրտայշարժ լինել հարադիր կազմությունը ևս ստամոքսին է վերաբերում և նշանակում է «ստամոքսի մեծանալը կամ փոքրանալը». «Զի հաստ կերակուրն աւիրէ ստամոքն, որպէս կանայքն երբ յղանան, նայ *սրտայշարժ լինին*» (Գր.127):

Միրտ բաղադրիչով հարադրավոր բայերի շարքում առանձնացրել ենք չորս բառ-տերմիններ, որոնք ձևավորվել են տրական հոլով+ անորոշ դերբայ (որոշյալ կամ անորոշ առումով) հարադրությամբ և համարժեք են անվանական հասկացություններին, քանի որ գործողության փոխարեն երևույթ են ցույց տալիս, ինչպես՝ *սրտին դողալ, սրտին խաղալը, սրտին ձգել, սրտին ստրոփտալ, սրտին ելնել* և այլն։ *Մրտին դողալ* և *սրտին տրոփտալ / տրոփելն սրտին* կազմությունները արաբերեն *խաֆադան-ի* «արագ սրտ-խփոց» հայերեն համարժեքներն են, որոնք բոլորն էլ անվանական արժեք ունեն, ինչպես՝ «Խաֆադան, որ է *սրտին դողալն*, տաք է այլ կու լինի, ի պաղ է այլ կու լինայ (ԲՄ 88)։ Վասն խաֆադանի, որ՝ *սրտին տրոփտալն*»։ (ԲՄ 84)։ «Եւ տրոփելն *սրտին* այս է պատճառն, որ ջրայեան գիջութիւնն արգիլեալ է յայն մաշկն» (Գր. 120)։ *Մրտին խաղալ* դարձվածքը, ի տարբերություն *սիրտը խաղալ-ի* (հուզվել), հանդիպում է «*սրտխառնոց*» իմաստով. «Եւ այս ցաւերս պատահին կոլնջին՝ յոլով խոցտուկ, և *սրտին խաղալ*, և վերաբերութիւն, և պնտութիւն փորոյն» (Գր. 141)։ *Մրտին ձգել // ձգել սրտին* «փախում» դարձվածքը հանդիպում է Գրիգորիսի բժշկարանում. «Զի թէ էլայունս ի ուռիցէ լինի՝ յոլով ցաւ, և խոցտուկ, և փքրել առեացն, և *ձգել սրտին*, և ձգել աղբն» (Գր. 142):

Միջնադարյան բժշկարաններում կիրառվել են նաև երկու բառերի հարադրությամբ կազմված կայուն բառակապակցություն-

²¹ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 530, Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, հ. 2, էջ 1307:

ներ, որոնք ունեն մեկ բառային իմաստ: Բժշկարանների հանգամանալի քննությունը ցույց է տալիս, որ վերջիններս մեկ հասկացություն արտահայտող բառ-տերմիններ են, իբրև այդպիսին ունեն մեկ բառի արժեք և ևս արժանի են ուշադրության: Սույն հոդվածի շրջանակում առանձնացրել ենք այդպիսի վեց բառակապակցություն, որոնցից միայն *սրտի աման* «սրտապարկ» (ԱՍՕԲ 293, ԲՄ 88) և *սրտի դգալ* «կրծքավանդակի ներքևի փոստրակ մասը» (Գր. 125) կազմախոսական տերմիններն են տեղ գտել ՄՀԲ- ում: Գրիգորիսի բժշկարանում գտնուում ենք ևս չորսը՝ կազմախոսական *սրտի անդամ* և ախտաբանական *սրտի ելունդ*, *սրտի ուռից* և *սրտի թալնալ* բառ-տերմինները:

Սրտի անդամ բառակապակցությամբ Գրիգորիսը արտահայտել է «*սրտանոթ*» հասկացությունը. *անդամ* բազմիմաստ գոյականը, որ ունի մարմնի մաս և օրգան իմաստները, տվյալ բառակապակցության մեջ փաստորեն ստացել է անոթ իմաստը. «...և այլ նշան՝ *սրտին*՝ ամեն *անդամքն* թուլնան վասն պլղամեն գիջութեան» (Գր. 60):

Սրտի ուռից բառակապակցությամբ նա արտահայտել է «սրտի բորբոքում» հասկացությունը. «Թե *սրտի ուռիցն* պինդ լինի, նայ թալցն գմարդն. և յետև թալնալոյն՝ արթննայ և մեռնի» (Գր. 121):

Սրտի ելունդ տերմինով նա արտահայտել է բժշկության մեջ հայտնի սրտապարկի բորբոքման ելունդավոր տեսակի (կոծիծավոր էնդոկարդիտ)²² հասկացությունը, իսկ *սրտի թալնալ* (գրբ. թուլանալ) բառ-տերմինի տակ ըստ երևույթին հասկացել է «սրտամկանի թոռշոմածություն» հիվանդությունը²³. «Եւ (սրտի) *թալնալն* այն է գորաստ Գաղիանոս և Բագարատ, զի արձակի անասնական զօրութիւն յանկարծակի և ընդ մինն վաթի» (Գր. 121): «Եւ լինի *թալնալն* ի կանանցն ի յայնժամն, որ որովայնն ծննդականին խեղդի»: (Գր. 122): Նկատենք, որ նշված բառ-տերմինները, ընդգրկված լինելով բժշկարանի «*Վասն սրտին նեղերոյն պատճառացն եւ նշանացն*»²⁴ գլխում, հաճախ կիրառվել են միայն երկրորդ բաղադրիչով՝ այդպիսով ար-

²² Ա. Կծոյան, Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցավոց, Ներածություն, Ե., 1962, էջ LXVI:

²³ Տե՛ս Նույն տեղում:

²⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 119-123:

տահայտելով ընդհանուր բառակապակցության իմաստը:

Այսպիսով, ամփոփելով վերն ասվածը՝ նշենք, որ միջնադարյան բժշկարաններում «սիրտ» բաղադրիչով գործածված չորս տասնյակ նոր կազմություններից 16-ը դարձվածային արժեք ունեցող և բառակապակցությամբ արտահայտված կազմություններ են, որոնք տեղ չեն գտել ՄՀԲ-ում: Վերջիններս բժշկարաններում ստացել են բժշկական տերմինի արժեք:

Тадевосян Асмик - Образования новых слов с компонентом “сирт” (сердце) в лечебниках средневековья.- В статье рассматриваются слова, образовавшиеся с компонентом “сердце” (40 слов), которые употреблялись в лечебниках средневековья (12-17вв.). В этих лечебниках анатомическое слово *сердце* кроме одинарного применения, часто используется в производных, составных новообразованиях, а так же словосочетаниях. Особое внимание уделяется аналитическим сложным словам и словосочетаниям, которые не нашли место в “Словаре среднеармянского языка”. Эти новообразования в лечебниках часто имеют смысл медицинского термина.

Hasmik Tadevosyan - New Formations with Component “Sirt” (Heart) in the Medical Books of Middle Ages.- This article studies the words formed with the component “heart” (40 words), which were used in the medical books of middle ages (12-17c.). In these medical books the anatomical word “heart” is used not only as a single word, but also in derivatives, compounds, and word combinations . The special attention is given to analytical compound words and word combinations, which are not found in the “Dictionary of Middle Armenian”. These neologizmes often have meanings of medical terms.

**ՄԱԿԲԱՅԻ ԱՐԺԵՔՈՎ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Պատկերավոր համեմատությունները (ՊՀ) լեզվական այնպիսի կառույցներ են, որոնք արտահայտում են համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով:

Մասնագիտական գրականության մեջ այս կարգի կապակցությունները կոչվում են նաև *համեմատություն դարձվածային միավորներ կամ համեմատություն դարձվածային արտահայտություններ*¹:

ՊՀ-ները գործառական լայն հնարավորություններ են դրսևորում մեր լեզվի բոլոր շրջաններում. գրաբարում հանդես են գալիս դասական և հետդասական հայերենի ինքնուրույն և թարգմանական երկերում, միջին հայերենի գրական հուշարձաններում, արդի գրական հայերենում՝ բնութագրվելով ռճական որոշակի դերով:

Այդօրինակ կապակցությունները գրաբարում բնութագրվում են յուրահատուկ իմաստներով, որոշակի տարբերակներով ու կառուցատիպերով, որոնք ընդհանրություն ունենալով հայերենի տարբեր գոյավիճակների համանման կառույցների հետ, միաժամանակ բնութագրվում են որոշակի տարբերակիչ գծերով:

ՊՀ-ները, իբրև լեզվական միավորներ, բնութագրվում են որոշակի հատկանիշներով, ուստի կարելի է դրանք դասակարգել ըստ ներբառությային իմաստային հարաբերությունների (հոմանիշներ, հականիշներ), ըստ ձևաբանական արժեքի (ածականական, բայական և մակբայական), ըստ տարբերակների (բառական, քերականական, քանակական), ըստ շարահյուսական գործառությունների (ենթակա, վերադիր, խնդիր, պարագա և այլն):

¹ Հմմտ. **Խ.Բաղիկյան**, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., 1986, էջ 126-127, 140, 260-263: **Ա. Գ. Назарян**, *Фразеология современного французского языка*, М., 1987, էջ 111-125, 194-199: **Պ. Բեդիրյան**, *Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները*, Ե., 1990, էջ 50-51:

Խոսքիմասային արժեքը հատուկ է ինչպես ազատ կապակցություններին, այնպես էլ կայուն պատկերավոր (դարձվածային) արտահայտություններին: Երբ խոսվում է դարձվածքների կամ ՊՀ-ների ձևաբանական արժեքի մասին, նկատի է առնվում կապակցության միջոցով ձևավորված հասկացությունը, այլ ոչ թե նրա՝ բառ խոսքի մասին համարժեք լինելը²:

Գրաբարի անվանողական ՊՀ-ները տարբերակվում են հիմնականում ածականական, բայական և մակբայական տեսակների: Հմմտ.

ա) **ածականական**. քաղցր քան զմեղու խորիսխ, բազում քան զհեր գլխոյ, չար քան զթոյնս օձից, սուր՝ հատու՝ ազդու քան գուր երկսայրի,

բ) **բայական**. սիրել իբրև գուրբ, իբրև զջուր հոսել(իմ), քան զաւագ բազմանալ, իբրև զխոտան ի բաց թողուլ,

գ) **մակբայական**. որպէս լոյս առ խաւար, որպէս յորձան ինչ սաստիկ, զօրէն ի խաւարէն զերծեալ(ք) և այլն³:

Այդ արժեքներով ՊՀ-ները գործառական լայն դրսևորումներ ունեն հայերեն առաջին թարգմանական լայնակտավ մատյանում՝ Աստվածաշնչում, որտեղից էլ անցել են Ե դարի պատմիչների երկերին՝ ամբողջացնելով նրանց ստեղծագործությունների պատկերավորման համակարգը:

Ելնելով այն հանգամանքից, որ ՊՀ-ները հայոց լեզու և հայ գրականություն են թափանցել Աստվածաշունչ մատյանից և հինգե-

² Տե՛ս **Պ.Ս.Բեդիքյան**, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 133:

³ Աստվածաշնչում բայական ՊՀ-ների թեմայով տողերիս հեղինակը զեկուցումով հանդես է եկել 2014-ին Էջմիածնում կայացած «Եկեղեցի և կրթություն» միջազգային գիտաժողովում՝ նվիրված Գևորգյան հոգևոր Ճեմարանի հիմնադրման 140-ամյակին: Ածականական ՊՀ-ների մասին տե՛ս մեր՝ «*Ածականական համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում*» հովդածը (Վանաձորի Հովհ.Թումանյանի անվ. պետական համալսարան, 3-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2014, էջ 94-105):

³ Թարգմանական երկերից իբրև բնագիր ենք ընտրել Սուրբ Գիրքը, տե՛ս «*Աստուածաշունչ մատենան հին և նոր կտակարանաց*», Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, Երևան, 1997:

րորդ դարի պատմագիրների աշխատություններից՝ մենք նպատակահարմար ենք համարում այդ կարգի կառույցների լեզվաբանական քննությունը կատարել գրաբարի (դասական և հետդասական) ինքնություն և թարգմանական երկերի բնագրերի շրջանակներում⁴:

Սույն հոդվածում ուսումնասիրության նյութ կդարձնենք միայն մակբայի արժեքով ՊՀ-ները՝ փորձելով վեր հանել դրանց իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում:

Գրաբարում մակբայական ՊՀ-ների կառուցվածքային պլանում հանդես են գալիս հատկանշային խոսքի մասերը, իսկ որպես սպասարկու բառեր գործառվում են *իբրեւ, որպէս, քան, նման, զօրէն, օրինակ իմն, չափ, պէս* նախադրությունները, ինչպես նաև *զ, ի, ըստ* նախդիրները:

Մակբայական ՊՀ-ները գրաբարում հանդիպում են երկու կարգի կառուցատիպերով: Մի դեպքում նրանց արտահայտության պլանում առկա է մակբայական բաղադրիչ, մյուս դեպքում այդպիսի բաղադրիչներն չկան:

Մակբայական բաղադրիչ ունեցող կապակցությունները համարվում են երկգագաթ կամ երկբնեռ կառույցներ: Այդպիսի կապակցությունների արտահայտության պլանում գործառապես կենսունակ են *որպէս* և *քան* նախադրությունները, ինչպես՝

<i>արագ քան</i> զմիտս	<i>արագագոյն քան</i> զարեգակն
<i>արագապէս</i> որպէս թռչունք	<i>անողումաբար</i> որպէս գազանք
<i>քաջաբար</i> որպէս զարծուի	և այլն:

Հմմտ. Զիա ըդ *արագագոյն քան զարեգակն* զշանձնաւոր լուսինն ասիցեն (Եզն., 215): Եւ ինքն *քաջաբար որպէս զարծուի* կանչեալ դիմեաց ի վերայ (Յովհ. Մամ., 41):

Մակբայական բաղադրիչ չունեցող ՊՀ-ները կազմված են *նախադրությունից* կամ *նախդրից* և *գոյականի հոլովածներից*: Դրանց արտահայտության պլանում գործառապես կենսունակ են

իբրեւ, քան, որպէս նախադրությունները, *ի, ըստ* նախդիրները և *օրինակ իմն* բաղադրյալ կառույցը: Այդպիսի կապակցությունները համարվում են միագագաթ կամ միաբևեռ կազմություններ, ինչպես՝

իբրև զածուխ	քան զածուխ
իբրև զՏէր	ըստ կամացն
իբրև զծառայ	օրինակ իմն որպէս փոթորիկ
ի նմանութիւն տաճարի	ըստ նմանութեան Աստուծոյ և այլն:

Օրինակ՝

Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի *իբրեւ զծառայ* առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ (Եզն., 14): Թխացան *քան զածուխ* տեսիլք իւրեանց, եւ ոչ ոք ճանաչէր զնոսա (Ողբ. Դ. 8): Դստերք նորա զարդարեալք եւ պաճուճեալք *ի նմանութիւն տաճարի* (Սաղ. ԺԽԳ. 12): Որ *ըստ նմանութեան Աստուծոյ* արարան (Յակո. Գ. 9):

Մակբայական ՊՀ-ների գերադաս անդամի դերում կարող են հանդես գալ հատկանշային այլ խոսքի մասեր:

1. Փոխանուն ածականներ.

իբրև զայսահարս	որպէս զբարբարոսս	իբրև զուրբ
որպէս զշանթահար	օրինակ իմն կիսամահ	իբրև կանխագէտ
իբրև զանգէտս	որպէս զպասքեալ ծարաւիս	և այլն:

Օրինակ՝ Ոչ *իբրև զանգէտս* գործեցաք անխորհուրդ զայնպիսի մեծ և ահաւոր գործ (Փարպ., 80): Դուք, այսուհետեւ, *իբրեւ զկանխագէտս*, զգուշասջիք, զի մի՛ ... անկանիջիք յաստեաց հաստատութեանն (Բ. Պետ. Գ. 17):

2. Բայեր.

ա) անորոշ դերբայ.

իբրեւ ի չարէ խորշել (սատակել)	իբրեւ ի հիւղն լինել
իբրեւ ի ներքուստ համբառնալ	մահու չափ մարտնչել և այլն:

Օրինակ՝

Ապա յղութեանն զնա չէր նա արժանի առնել, այլ անդէն *իբրեւ ի չարէ խորշել և սատակել* (Եզն., 372): Զի իբրեւ ի վերուստ ի խոնարհ իջանէ, և դարձեալ յելանելն՝ *իբրեւ ի ներքուստ ի վեր ելեալ համբառնալ* (Եզն., 373):

բ) անցյալ դերբայ.

իբրև զմեռեալ	որպէս յաստուծոյ յաղթահարեալ
--------------	-----------------------------

իբրև ի քնոյ ընդոստուցեալ որպէս ի խաւարէն գերծեալք
իբրև ի ժառանգ մնացեալ իբրև ի մօրէ կերպարանս առեալ
որպէս արեամբ պսակեալ որպէս ընդ մարդոյ մարտուցեալ
որպէս հինից և ասպատակաց պարսպեալք և այլն:

Օրինակ՝ Զի իջգալ *իբրև զմեռեալ*՝ ընկալցին գնա դժոխքն
(Եզն., 374): *Որպէս ի խաւարէն գերծեալք* ի լոյս (Փարպ., 16): *Որպէս
ընդ մարդոյ մարտուցեալ*, եւ *որպէս յաստուծոյ յաղթահարեալ* (ՆՀԲ,
2, 536):

գ) ենթակայական դերբայ.

որպէս զմի անգամ խաբող (Խոր., 262):

3. Գոյականի թեք հոլովաձևեր.

ա) տրական հոլով.

իբրև գորդուցն

իբրև զինու

որպէս Աստուծոյ

և այլն:

Օրինակ՝ Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց՝ *որպէս
Աստուծոյ* (Փարպ., 145):

բ) բացառական հոլով.

իբրև ի պղծոյ

իբրև ի հրոյ

իբրև յամենեցունց բերանոյ

իբրև յինքեան քաջութենէ

իբրև յերեսաց Տեառն

իբրև ի խոտանէ և այլն:

Օրինակ՝

Եւ ի մտոյ հրաժարեցոյց *իբրև ի պղծոյ* և *ի խոտանէ իմեքէ*
(Եզն., 374):

գ) գործիական հոլովով.

իբրև հեղեղաւք անձրևաց

գօրէն երկաթապիւնոյ կապանաւք

գոր օրինակ ձիւն սպիտակութեամբն իբր այրութեամբ

զահ տեառն գիտելով չափ

իբրև հանդերձիւ և այլն:

Օրինակ՝ Եւ այսպէս եկեղեցի Քրիստոսի, *իբր այրութեամբ* իմն
անխնամ մնացեալ և լռեալ ի տօնից տարեկանաց (Յհ. Կթ., 278):

դ) ներգոյական հոլովով.

իբրև ի թանձրամած խաւարի

իբրև ի գիշերի մութ

իբրև զկենդանի ի գերեզմանի

գունակ ի խաղս գնդակաց և

այլն:

Օրինակ՝ Եւ ի միջօրէի *իբրև ի գիշերի մութ* և մէզ և մառախուղ
և խաւար պատեալ պաշարէր զԱսքանազեանս ազն (Յհ. Կթ., 219):

Մակբայական ՊՀ-ներում կենսունակ գործածություն ունի *զ նախդիր + հայցական հոլով* ձևակազմական կադապարը, ինչպես իբրև զԲաբելոնի հնոցին բոց որպես գորդին ուրացող:

Մակբայական ՊՀ-ների կառուցվածքային պլանում կենսունակ է Ն անվանական հոդը, որ հանդես է գալիս հայցական հոլովի հետ, ինչպես.

իբրև ի վերայ աւագակին	ըստ կամացն
ըստ հոգևոր առաքինութեանն	յանց ըստ հրաման
օրինադրին ըստ նմանութեան ժամանակին	ի նմանութիւն
խորանին	

ըստ նմանութեան Նաբուգոդոնոսորայ արքային և այլն: Օրինակ՝

Հստ հոգևոր առաքինութեանն ամենեքեան երկնաքաղաքացիք

(Եդ., 194): Շինել տաճար *ի նմանութիւն սրբոյն խորանին* (ՆՀԲ, 2, 432): *Հստ նմանութեան ժամանակին*, որպէս ասացին նմա մօզքն (ՆՀԲ, 2, 433):

Մակբայական ՊՀ-ների տարբեր կառուցատիպեր են կազմում գոյականական բաղադրիչները (կամ փոխանվանաբար գործածված այլ խոսքի մասերը), որոնք հանդես են գալիս կա՛մ միայն եզակի, կա՛մ միայն հոգնակի թվով:

Այսպես, հետևյալ մակբայական ՊՀ-ների գոյական բաղադրիչները հանդես են գալիս միայն եզակի թվով. հմմտ.

իբրև զմարդ	իբրև զանձրել // զտեղատարափ
------------	----------------------------

իբրև գորոմն ի մէջ ցորենոյ	որպէս զԱստուած
---------------------------	----------------

իբրև Աստուած ճշմարիտ	նման Յուդայի
----------------------	--------------

արագագոյն քան զարեգակն ըստ օրինակի ծիածանի

ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ և այլն:

Օրինակ՝ *Իբրեւ զմարդ* խոնարհ երեւեալ (Ագաթ., 579): Եւ անմեկնելի ի մարդկութենէ իւրմէ *իբրև Աստուած ճշմարիտ* յԱստուծոյ ճշմարտէ՝ յարեալ (Ղեւ., 94):

Կան ՊՀ-ներ, որոնց անվանական անդամները հիմնականում հոգնակի թվով են հանդես գալիս, ինչպես՝

իբրև ամուլք հաւանք և հաւասարք	իբրև գփայտահարս
իբրև զգուարթունս	իբրև զվայրենիս
իբրև զհրեշտակս	որպէս զբարբարոսս

իբր ի մէջ թշնամեաց
նման աստուածոց

գորէն վաճառականաց
որպէս վարակեալ ինչ

շղթայիւք

գունակ ի խաղս գնդակաց

շանց գունակ:

Օրինակ՝ Խոտաբուտ կենօք *իբրեւ գվայրենիս* ընդունէին
զկերակուրն մեծաւ խնդութեամբ (Եղ., 201): Ի մահուան անկարեկից
և անհարց մեռանին, *իբր ի մէջ թշնամեաց* (Պիտ.):

Կան ՊՀ-ներ, որոնց անվանական բաղադրիչները թվային
սահմանափակություն չունեն.

քան գառիւծ(ունս)

իբրն գդել(ս)

իբրն գոչխար(ս),

որպէս մեղու(ս)

իբրն գանասուն(ս)

իբրն գքաջայր(ս),

իբրն գծի(ս)

իրն գջորի(ս),

որպէս //քան

գարծուի(ս)

իբրն գմանուկ(ս)

որպէս ծնող(ք),

իբրն գգառն // -

գառին(ք):

Օրինակ՝ Եւ անցեալ *որպէս գարծուի* սրաթն ընդ գետն (Խոր., 179):

Առաջինն՝ իբրեւ գմատակ առիւծ թելաւոր, եւ թելք նորա *իբրեւ
առիւծոյ* (Դանի. Է. 4): Սաւուղ եւ Յովնաթան ... ոչ մեկնեցան ի
մահուան իւրեանց. թեթևագոյնք *քան գարծուիս*, գորացան առաւել
քան գառիւծունս (Բ. Թագ.. Ա. 23):

Մակբայական ՊՀ-ների կառուցատիպերի մէջ որոշակի շերտ
են կազմում այն արտահայտությունները, որոնց գերադաս
բաղադրիչներն ունեն հավելական բաղադրիչներ: Նման
կառույցներում գերադաս բաղադրիչներին հարող հավելական
անդամները լրացյալների նկատմամբ ցուցաբերում են թվային և
հոլովական համաձայնություն, ինչպէս՝

իբրեւ գխաշն լքեալ

իբրն գաղբերս մշտնջենաբուխս

իբրեւ գճրագ լուցեալ

ըստ կարծեաց մտաց իւրեանց

իբրեւ գհօտ մակադեալ

իբրն ոչխարք մոլորեաք

իբրեւ գխաշինս յաւիտենականս

իբրն գջահս վառեալս

իբրն գգագանս վայրենիս // -արինախանձս // - արինաբբուս և այլն:

Օրինակ՝ Եւ որ շէնն մնասցէ՝ եղիցի *իբրեւ գհօտ մակադեալ* եւ
իբրեւ գխաշն լքեալ (Եսայ. ԻԷ. 10): Եւ կան *իբրեւ գխաշինս յաւի-
տենականս* (Յովբ. ԻԱ. 11): Եւ ոմանք *ըստ կարծեաց մտաց իւրեանց*
համարին, թէ ի վերայ չափոցն աստեղաց կացին (Բարս., 11):

Հատկանշային ՊՀ-ները կարող են հանդես գալ նաև խոսքի-մասային երկակի գործառնությով՝ ցուցաբերելով ածական // մակբայ խոսքիմասային տարարժեքություն⁵:

Այդօրինակ ՊՀ-ները հիմնականում միագագաթ կապակցություններ են, որոնց խոսքիմասային ած. // մկբ. արժեքներն իրացվում են խոսքային միջավայրում: Դիտարկենք տարարժեքություն (երկարժեքություն) դրսևորող հետևյալ ՀԴԱ-ները.

որպես ծառ (հաստատուն - ած., հաստատուն կերպով - մկբ.),

որպես նապաստակ(ք) (վախկոտ - ած., վախենալով - մկբ.),

որպես բազմութիւնք ջրոց // նման յորդառատ անձրեւի (հորդառատ - ած., ուժեղ հորդելով - մկբ.),

մահու չափ (անսահման - ած., սասատիկ, չափազանց - մկբ.),

որպես ոսկի ի բովս (շատ թրծված - ած., շատ թրծվելով - մկբ.),

որպես հուր ինչ մոլեկան հրդեհի (խիստ այրող - ած., խիստ այրելով - մկբ.),

գոր օրինակ որպես լոյս առ խաւար (խիստ լուսավոր - ած., խիստ լուսավորելով - մկբ.),

նման առիւծու // իբրեւ գառիւծ (քաջ, փխբ. առաջնորդ - ած., քաջաբար - մկբ.),

նման մեղուի (ժրաջան - ած., ժրաջանորեն - մկբ.),

նման Յուդայի (դավաճան - ած., դավաճանաբար - մկբ.),

նման Աստուծոյ (օգնող, պահպանող - ած., օգնելով, պահպանելով - մկբ.),

նման գայլոց (շատ ազահ - ած., ազահաբար - մկբ.),

Բնագրային օրինակներ.

Մահու չափ - 1. „անսահման,, - ածական. Մեղք՝ որ *մահու չափ* են (Փարպ., 191): Վրէժ *մահու չափ* դովաւ խնդրեսցի (Զաք., Ե. 3): 2. „սաստիկ, չափազանց,, - մակբայ. Եւ մեք ելցուք *մահու չափ* մարտնչել ի վերայ օրինացն (Բ. Մակ. ԺԳ. 14):

Իբրեւ գառն - 1. „խոնարհ,, - ածական. Երթայք, ահա առաքեմ զձեզ *իբրեւ գառն*ս ի մէջ գայլոց (Ղուկ. Ժ. 3): 2. „խոնարհաբար,, -

⁵ Խոսքիմասային տարարժեք բառերի մասին տե՛ս **Լ.Խաչատրյան**, *Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ*, Ե., 1985, էջ 32-54: **Լ.Մ.Խաչատրյան**, *Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, Ե., 1996, էջ 84-201:

մակբայ. Եւ *հրբեւ զառն* անմեղ վարեալ ի սպանդ, ոչ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ չար (Երեմ. ԺԱ. 19):

Իրբեւ զառիւծ – 1. փխբ. „առաջնորդ,, - ածական. Զի ես եմ *հրբեւ զառիւծ* ի վերայ տանն Յուդայ (Ովսե. Ե. 14): 2. „առյուծի նման,, - մակբայ. Որսացեալ եմ *հրբեւ զառիւծ* (Յովբ. Ժ. 16):

Այսպիսով, մակբայական ՊՀ-ները, որպէս հատկանշային բնույթի արտահայտություններ, լայն գործածություն ունեն գրաբարի ինքնուրույն և թարգմանական աշխատություններում:

Գրաբարի մակբայական ՊՀ-ները բնութագրվում են որոշակի կառուցատիպերով, որոնց մեջ առանձնանում են երկգագաթ և միագագաթ կառույցները, դրանց ենթատիպերը, որոնք հատկանշվում են բաղադրիչների կառուցվածքային գործոններով, քերականական հատկանիշներով, նախդիր-նախադրությունների խնդրառական դերով և այլն:

Մակբայական ՊՀ-ները, անկախ կառուցատիպերի բազմազանությունից, գրաբարի ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ ունեն արտահայտված ոճական նշանակություն: Դրանք միաժամանակ որոշակի բնութագրական դեր են խաղում տվյալ ժամանակաշրջանի պատմագեղարվեստական ստեղծագործությունների պատկերավորման համակարգը բնութագրելիս:

ՊՀ- ները, որոշակի բացառություններով, հայոց լեզու և գրականություն են թափանցել առաջին հերթին Աստվածաշունչ մատյանից, ապա հինգերորդ դարի ինքնուրույն պատմագիտական երկերից: Ըստ այդմ, նման կապակցությունների իմաստակառուցվածքային ուսումնասիրությունը կարող է բացահայտել ինչպես հայեցի պատկերավոր լեզվամտածողության ծագումնաբանությունը, այնպես էլ այդօրինակ կառույցների սերիչ կաղապարներն ու մասնակաղապարները:

Хачатрян Лалик - Сравнительно-устойчивые обороты (СУО) со значением наречия в древнеармянском языке. - В рамках сравнительно-устойчивых оборотов (СУО) со значением наречия подавляющее большинство составляют сочетания составленные с двумя знаменательными компонентами (двухвершинные СУО), у которых доминантный компонент в основном является наречием, как: *արագ քան զմիտս, ան-*

դորմարար որպես գազանք, *քաջարար* որպես զարծուի և т.д.

В ряду СУО определенный слой составляют те сочетания, которые составлены с одним знаменательным компонентом /одновершинные СУО/, как: *իրբեւ զառիւծ*, *որպէս զանգէտս* и т.д.

В одновершинных конструкциях знаменательный компонент часто выражается в косвенной форме, как: *որպէս Աստուծոյ*, *իրբեւ ի բոցոյ*, *իրբեւ հեղեղաւք* и т.д.

Некоторые наречные СУО совмещают частеречные значения прилагательного и в синтаксическом уровне характеризуются как полисемичные единицы.

В авторских текстах СУО имеют стилистически-выразительную окраску.

Khachatryan Lalik. - Fixed expressions (RFE) with the value of the adverb in the old Armenian language - Relatively fixed expressions (RFE) with the value of the adverb the catagorematic words with two significant components (binomial RFE) subordinate link-words compose overwhelming majority in which the dominant component is basically an adverb, as *արագ քան զվիտս*, *անդորմարար* որպէս գազանք, *քաջարար* որպէս զարծուի and so on.

Those RFE-s comprise some layer, that consist of a single significant components (unipolar RFE), such as *իրբեւ զառիւծ*, *որպէս զանգէտս* and so on.

In the unipolar combinations significant component is often expressed in the oblique forms, such as *որպէս Աստուծոյ*, *իրբեւ ի բոցոյ*, *իրբեւ հեղեղաւք* and so on.

Some adverbial RFE-s combine the values of part of speech of adjective and in the level of syntax are viewed as morphological polysemy.

In the author's text RFEs have underlined stylistically-expressive value.

**ՏՆՆԻՔ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ- ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառանուններից է **տանիք**-ը: Ըստ Գ.Զահուկյանի՝ բնակարան, տուն, կահկարասի բառիմաստային թեմատիկ խմբի հնդեվրոպական բառանուններից են նաև **ձեղունը, տանիքը, ցիվը**¹:

Տանիք հասկացության բառագուգարանությունները բարբառային հայերենում կազմում են հիմնականում բառային չորս խումբ՝ **տանիք, կտուր, ձաձուգ, էրթիգ**: Փաստված են նաև այլ բառանուններ, որոնք սահմանափակ տարածում ունեն:

Ձեղուն բնիկ հայերեն բառանունը Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքած բարբառային նյութերում մեզ չի հանդիպել: Սակայն Հ.Աճառյանը վկայել է, որ Ակնի բարբառում առկա է **ձեղուն** բառի **ձ'ողունք** գուգարանությունը, իսկ Տրապիզոնում՝ **ձեղուն**-ի **ցրխինք** համանիշը²: Ակնի բարբառի **ձողունք** բառաձևը Պ.Բեդիրյանին հիմք է տվել եզրակացնելու **ձեղուն** բառի բուն հայկական **ձող** արմատից առաջացած լինելը: Ըստ Բեդիրյանի՝ բառիմաստի զարգացումով **ձող**՝ գերան իմաստից առաջացել է **ձեղուն** բառանունը: Այս առումով գիտնականը մեր խնդրո առարկա բառանունների շրջանակներում հետաքրքրական դիտարկումներ է անում՝ համարելով, որ «Իմաստի նման անցման դրդապատճառներից հիմնականն այն է, որ առաստաղի գերանները կատարում են ամբողջ կտուրի հենարանի դեր և որպես հիմնական ֆակտոր իրենց անունը տվել են ամբողջ առաստաղին (այսինքն՝ տեղի է ունեցել անցում մասից ամբողջին)³»: Նույնպիսի բառիմաստային հարաբե-

¹ Գ.Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ:ՆԺ), Ե., 1987, էջ 212:

² Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ.3, Ե., 1977, էջ 148:

³ Պ.Բեդիրյան, *Բառիմաստային զարգացումները հայերենում*, թեկնածուական

րակցությամբ են բաշխված 1. *աճատ* «առաստաղի մանր գերաններ» իմաստով արաբական փոխառությունը, որն *օճորք* բառաձևով հանդես է գալիս բարբառային հայերենում որպես *առաստաղի* նշանակելի: 2. *Բարդիից* առաջացած *փօրքու* բառաձևը, որը հայերենից անցել է թուրքերենին, այնուհետև հետ առնելով Ղարաբաղի բարբառում, ինչպես նաև այլ խոսվածքներում (օր.՝ Գավառում) դարձել է *փօրքու*՝ կտուրի վրա հաստատված այն հաստ գերանները, որոնց վրա լցնում են հողը: 3. *Կոճ* բառանունը ճյուղերը կտրտված ծառի բուն իմաստից բառիմաստային զարգացումով ձեռք է բերել գերան, դրանդի, (Խոտրջուրում՝ շենքի *քիվ*) ընդհուպ նաև առաստաղ նշանակությունները:

Ի դեպ, *առաստաղ* հասկացության բառանունները քննելիս մենք անդրադարձել ենք վերոբերյալ բառանվանը, որը Ղարադաղի որոշ խոսվածքներում փաստված է *կուճըգերան*՝ որպես առաստաղ, իսկ Կապանի Վերին և Ներքին Խոտանանում՝ *կօճ/կըճըկերան*⁴:

ձեղուն բառի քննությանը անդրադառնում է նաև Է.Աղայանը: Նա, փաստելով Հ.Աճառյանի կողմից վկայված «Վարք Ս.Գեորգյազ Գօրավարին» գրքի ձեռագրական *ձեղունս* և *ձողունս* տարբերակները, ինչպես նաև Ակնի բարբառի *ձողունք* և Տրապիզոնի *ցըխինք* բառերը նույն նշանակությամբ, կարծում է, որ այդ օրինակները խոսում են հօգուտ *ձեղ* և *ձող* արմատների առնչակցության: Եվ կարծում է, որ Բեդիրյանի ստուգաբանությունը հավաստի է, և *ձեղուն* բառը հայերեն ձող բառի հետ կապվում է հինի. *g'hel* արմատին⁵:

Ցըխինքը՝ որպես *ձեղուն* հասկացության նշանակելի, Հ.Աճառյանը փաստել է նաև Համշենի բարբառում, որը, ըստ նրա, ներկայացնում է *ձեղուն* բառը և շատ անկանոն է: Հայերեն գաւառական բառարանում հիշյալ բառանվանը տրվում է հետևյալ բացատրությունը. «Ցիխնք Տրապիզոն. Տան առիքը, երդիքին ներսի մասը, ուր շարունակ մուր զարնելով, սև մուր կապած է: = ձեղուն⁶»:

ատենախոսություն, Ե., 1955, էջ 290:

⁴ *Ջահուկյանական ընթերցումներ*, Ե., 2010, էջ 131-132:

⁵ Է.Աղայան, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 108-111:

⁶ Հ.Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 35, 242, *Հայերեն գաւառական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 1056:

Ս.Ամատունու բառարանում *ցըխինք*-ը դիտարկված է *երդիկ* հասկացության բառագուգաբանություն («Գողն էօր տնէն, եզը *ցըխնքէն* հօնէ կու»)՝: Մեր կարծիքով, այստեղ ևս վերախմաստավորման արդյունքում *ձեղունք* ձեռք է բերել երդիկ իմաստը:

Կտուր: Հ.Աճառյանը *կտուր* բառը չի ստուգաբանում, նշում է, որ այն հին մատենագրության մեջ ավանդված չէ, և ներկայացնում է բառի՝ «տուներու վրայի հարթ, հողածածկ տանիք նշանակությունը»: ՀԱԲ-ում լեզվաբանը նշում է նաև, որ բառն առկա է հայերենի բարբառներում, և որ 12-րդ դարում վկայել է Ուռհայեցին *քարակտուր* ձևով՝ «բերդի քարեղեն տանիք» իմաստով⁷: Գ.Զահուկյանը, քննելով *ձեղուն* բառի ծագումնաբանությունը, գրում է. «Եթե նկատի առնենք չեղնոյ, չեղնոյ կրիա (կրիայի) պատյան, (փայտե) ծածկ, կրծքավանդակ, կուրծք, փայտե պաշտպանողական սարք՝ նավից ափ իջնելու համար զուգահեռ ձևերի առկայությունը, այլև հայ. *կտուր* և *կտրել* բառերի իմաստային առումները, թերևս հնարավոր է **g'helunā*-ի տակ բերվող ձևերը միավորել **g'hel*-«կտրել» արմատի տակ բերվող ձևերի, և այսպիսով՝ *ձեղուն, ձողունք, ձլել* (ակոսել) բառերի կապը համարել սկզբնական (այսինքն՝ **g'helunā*-ի տակ բերվող ձևերը ածանցումներ համարել **g'hel*-ից)»: Գիտնականը հավելում է նաև, որ իմաստային հիմունքով Է.Աղայանը ճիշտ է համարում Պ.Բեդիրյանի՝ *ձեղուն*-ը *ձող*-ի հետ կապելու փորձը, մանավանդ որ կա *ձողունք* ձայնդարձային ձևը⁸: Այսինքն՝ եթե ճիշտ համարենք Զահուկյանի այս մեկնաբանությունը, ապա բարբառային *կտուր* բառը թերևս աղերսներ ունի բնիկ հնդեվրոպական *ձեղուն* բառանվանման հետ: Չնայած այս ամենին՝ Ստուգաբանական բառարանում գիտնականը կտուրը համարում է անհայտ ծագման բառ¹⁰:

Որպես *տանիք* հասկացության նշանակելի՝ *կտուր* բառածևր տարածական մեծ ընդգրկում ունի: *Կտուր*-ը հայերենի բարբառներում դրսևտրված է մի շարք հնչատարբերակներով՝ *կըտուր, կուտուր, կըտեր, կըտօր, կըղուր, գըղուր*: Այն ընդգրկում է հայ

⁷ Ս.Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 178:

⁸ Հ.Աճառյան, *ՀԱԲ*, հտ. 2, էջ 678, ՀԳԲ, էջ 620:

⁹ Գ.Զահուկյան, *ՀԼՊ*: ՆԺ, էջ 170:

¹⁰ Գ.Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 433:

բարբառների արևելյան խմբակցության Արարատյան բարբառախմբի Երևանի, Բայազետի, Ջուղայի բարբառները (*կըստուր*), Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի (*կըստոր*) և Ագուլիս-Մեղրու բարբառախմբի խոսվածքները (Ագուլիս, Կարճևան՝ *կըստոր*, Նախիջևանի Շոռուք գ.՝ *կուստուր*, Գորիսի Խնածախ, Շահումյանի Բուզլուխ գ.՝ *կըստրէր*):

Բարբառների մի ստվար մասում *տանիք* հասկացության բառանուն է *տանիք* բառաձևը: Ըստ Հ.Աճառյանի՝ *տանիք*-ը *տուն* բառից առաջացած բառաձև է, իսկ *տուն*-ը բնիկ հայերեն բառ է՝ հնխ. *dōm* ձևից սերված: *Տուն* (սեռ. *տան*)+*իք* ածանց=*տանիք*: ՆՀԲ-ում այն լծորդված է համարվում լատիներեն *տո'մուս*, հունարեն *տոսո'ս* բառերին, որ և *տանիք* է նշանակում¹¹:

Տանիք բառանունը ևս հայերենի բարբառներում աշխարհագրական լայն ընդգրկում ունի՝ բարբառների արևմտյան խմբակցության գրեթե բոլոր բարբառախմբերում՝ Կիլիկիայի, Համշենի, Վանի միջբարբառախմբեր, Անտիոքի և Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերի խոսվածքներ, ինչպես նաև բարբառների արևելյան խմբակցությունից՝ մասամբ Խոյ-Մարաղայի բարբառախումբ: Այստեղ ևս հնչյունական տարբերակները բազմազան են.

1. *Տանիկ*: Մուշ (Հաղզոն, Մկրագոմ, Հացիկ և այլն), Մասուն (Հազգո, Մոտկանի Կրխու գ.), Ալաշկերտ (Յոնջալու, Իրիցու գ.-եր)։

2. *Ղանիք*: Մասունի բարբառին բնորոշ հնչյունական առանձնահատկությամբ պայմանավորված՝ բառասկզբի խուլ հնչյունի ձայնեղացմամբ տարբերակ, որն առկա է Մասունի Արփի, Իշխանաձոր, Ընգուզնակ, Գոմք և այլ գ.-երում:

3. *Տըն³⁄₄ք*: Կրգենի խոսվածքում վկայված *տըն³⁄₄ք* հնչատարբերակում դրսևորված է *ք* ձայնավորի փակություն կամ վերին բարձրացում:

4. *Տանիս*: Այն *տանիք* բառի գրաբարյան հոգնակի հայցական հոլովաձևով տարբերակն է՝ *տանիք>տանիս*, և փաստված է հիմնա-

¹¹ Հ. Աճառյան, ՀՄԲ, հ. 4, էջ 428: Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.Բ, Վենետիկ, 1837, էջ 891:

կանում Վանի միջբարբառախմբի խոսվածքներում (Վան ք., Արձակի Լիմ գ., Հայոց ձորի Հորմորուր գ., Շատախ և այլն): **Տանիս**-ի տարածական շառավղի մեջ ներառված են նաև Մուշի, Բիթլիսի, Խիզանի, Սպարկերտի խոսվածքները: Խոյ-Մարաղայի բարբառախմբում բառն առկա է **տընիս** հնչատարբերակով, Մարաղա ք.-ում և Նախիջևանի Ազա գյուղում՝ **տինիս**: Շատախի, Աբաղայի շրջանի Խաչան գ.-ի, ինչպես նաև Գավառի խոսվածքներում **տանիս**-ը վկայված է տվյալ խոսվածքներին բնորոշ շրթնայնացած ա ձայնավորով տարբերակը՝ ° (**տ° նիս**), իսկ Մոկսի Մամոտանց ենթաշրջանի Ապարանց գ.-ում՝ երկբարբառային կամ եռաբարբառային արտասանությամբ՝ **տանըէիս**:

Ղեներ: Հայերենի բարբառներում **ղեներ** բառաձևը՝ որպես **տանիք** հասկացության զուգաբանություն, առկա է արևմտյան խմբակցության Անտիոքի բարբառախմբի Քեսաբի (**ղըներ(ք)**), Հաջընի (**ղենեյ**), Սվեդիայի (**ղծնծրկ/ղծնոյրկ**) խոսվածքներում և Անտիոքի Բեյլանի Սովալուխ և Աթըխ գյուղերի (**ղինիք**), Փոքր Ասիայի բարբառախմբի Խարբերդի (**տինեյ**), Եդեսիայի (**ղենեյ**), Չմշկածագի (**ղենեյ**), Արաբկիրի (**տենեյ**), Սևերեկի (**ղենեյ**) խոսվածքներում:

Գ.Ջահուկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների շարքում առանձնացնում է **տենեյ** բառաձևը. **տենեյ (ղենեյ?)** - տանիքի հարթ կտուր (Արաբկիր, Կյուրին, Մալաթիա, Չարսանջակ, Ախլցխա): Նա զուգահեռներ է տալիս հնդեվրոպական այլ լեզուների հետ, օրինակ՝ մ.վ.գերմ. tener «ձեռքի ափ», հ.լատ. danea – «հարթակ, հրապարակ, կալ», թերևս լիտվ. denis «տախտակամած» և այլն: Այնուհետև վկայակոչում է հ.-ե. dhen-ը՝ «ձեռքի ափ, գետնի հարթ տեղ, հարթ տախտակ», dhenr «գետնի մեջ հարթ իջվածք»¹²: Գիտնականը արձանագրում է նաև, որ բառարաններում բարբառային բառերը բերված են սկզբնային խուլով, մինչդեռ ենթադրելի է սկզբնական ձայնեղ, այսինքն՝ **տենեյ>ղենեյ**:

Տանիք հասկացության բառազուգաբանություն է փաստված նաև **էրթիգ** բառանունը: Մենք ժամանակին անդրադարձել ենք հիշյալ բառանվանը, որի բուն նշանակությունն է՝ տան կտուրի մեջ թողած բացվածք, որ ծառայում է իբրև լուսամուտ և օդանցք: Պար-

¹² Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1978, էջ 316:

զապես պիտի նշել, որ այս դեպքում հավանաբար գործ ունենք փոխաբերացման հիմքի վրա ստեղծված բառանվանման հետ: **Էրթիզը** կղզիացված գործառում է Փոքր Ասիայի բարբառախմբի մի շարք խոսվածքներում (Կարինի բարբառ՝ Գյումրի, Ջավախք՝ շնչեղ ձայնեղ **հ**-ով **հ'երտիզ**, Ակն, Երզնկա, Շապին-Կարահիսար՝ **երթիզ**, Սեբաստիա՝ **երթի ի** և այլն):

Բարբառային հայերենում **տանիք** հասկացության դիմաց որոշ խոսվածքներում գործածվում է **ծածուկ** կամ **ծածկ** բառանունը: Հ.Աճառյանը ՀԳԲ-ում Երևանի խոսվածքում փաստել է **ծածկ** բառը, որը նշանակում է «կտուրին վրայի մասը»¹³: Ս.Ամատունու բառարանում **ծածք** բառահոդվածում տրված է հետևյալ մեկնությունը՝ «Ար. Շրկ. Շինութեանց յարկ, Ծածք առաստաղին կան յամբողջութեան, Կան բազմաթիւ սենեակներ, որոնց ոչ մէկը ծածկ չունի»¹⁴:

Ծածկ բառանվան արմատական ձևն է **ծածուկ**-ը: Այդ է վկայում նաև հայերենի բարբառներում առկա **ձաձուկ** բառաձևը: Բառի հստակ ստուգաբանությունը չկա: ՆՀԲ-ում այն կապվում է **ցաձուկ** բառի հետ: Հ.Աճառյանը **ծածուկ**-ի համար տալիս է հետևյալ բացատրությունը. «գաղտնի, թաքուն, անեզաբար. ծածուկք - ունի նաև թաքստոց, ծածուկ տեղ»¹⁵ իմաստը: Թերևս թաքստոց, ծածուկ տեղ իմաստից էլ **ծածկ**-ը ձեռք է բերել **տանիք** իմաստը:

Հայերենի բարբառներում **ծածկ** բառանունը՝ որպես **տանիք** հասկացության բառաձև, մեկուսացված գործառում է Համշենի բարբառում (Համշենի, Ճանիկի Օրդուի խոսվածք, Տրապիզոն՝ **ձաձուկ**): **Ծածկ** բարբառային տարբերակով առկա է Խոտրջուրի Միջինթաղ գ.-ի (**ծածք**), ինչպես նաև Սասունի Հոսներ, Քոփ գյուղերի (**ձ'ասկ, ձացք** - ամբողջական տանիքը) և Աշտարակի (Կարբի՝ **ծ'սկ**, Փարպի, Օշական՝ **ծասկ**) որոշ խոսվածքներում:

Նիկոմեդիայում առկա է **դունին վրա** կապային կառույցով բառաձևը (Նիկոմեդիայի Պարտիզակ ք., Արմաշ գ., Ասլանբեկ՝ **դունին վրա**, Ադաբազար՝ **տ/դան վըրա**): Հավարիկում փաստված է **տունին գուլուխ** բառակաղապարը:

¹³ Հ.Աճառյան, ՀԳԲ, էջ 502:

¹⁴ Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 300:

¹⁵ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.3, էջ 437:

Ցրվիք: Հայերենի բարբառներում որպես **տանիք** հասկացության բառանուն բառարաններում վկայված է **ցրվիք** բառանունը, որը ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերում այս իմաստով մեզ չի հանդիպել: ՀԱճառյանը փաստում է հիշյալ բառանվան առկայությունը գավառականներում (Ղարաբաղ, Ղարադաղ՝ **ցեկք** «կտուր», Ալաշկերտ, Մուշ **ցրվիք**, Խարբերդ **ցրվիք** «տանիք», Մոկս **ցրվիցք** «քիւ, տան կտուրի դուրս կարկառեալ մասը», **տանիք** իմաստով բառն առկա է նաև Ակն, Ապարան, Արաբկիր, Բաղեշ, Բինկյան, Զեյթուն, Կարին, Մաշկերտ, Սասուն, Տիգրանակերտ, Քղի¹⁶: Զեյթունում **ցրվիք** բառից է բաղադրված **ցիվիյճալք**, **ցիվիքճալք**՝ քիվ, կտուրի ծայրը իմաստով բառանունը)¹⁷:

Ցրվիք բառանունը արձանագրված է նաև Ս.Ամատունու բառարանում (Ալաշկերտ, Շիրակ Շիրվանջուղ գ.) շինության տանիքի դեպի բակի կողմը ընկած մասը, նաև տան սրահի դեպի բակը մեկնված գերանների ծայրը իմաստներով¹⁸: Ա.Ղարիբյանը Մալաթիայի բարբառով բերված մի նմուշում ես փաստել է **ցրվիք** բառանունը **քիւ** իմաստով (Քելվոս (Գևորգը) **դէնէրին ցրվիքէն** թող անցնի Ափրամ ամուլին դունը)¹⁹: ՀԼԲԲ-ում ներկայացված է **ցիւ** բառի տարածքային ընդգրկումը, ինչպես նաև հնչատարբերակները. «**Ցրվիք, ցիվք**, Կր., Սլթ., Խրբ., Դրս. (Քղի), Ակն, Արբ., Տգր.՝ **Ցեկ**, Ղրբ.՝ **Ցեկք**, Ղրբ.՝ **Ցիվիք**, Ն.Ն.՝ **Ցրվէք**, Հճն.՝ **Ցրվիշկ**, Շատախ՝ **ցուվք**»:

Հարկ է նշել, որ բարբառներում այն դրսևորվել է մի քանի նշանակությամբ 1. տան կտուրի՝ պատից դուրս երկարած մասը (Ա՛ խօխա **ցիքէն** վեննը մի կենալ՝ վեր կըննիս): 2. Կտուր, տանիք, 3. Ղրբ. Որևէ բանի ծայրային՝ եզրային մաս (Բաղին չորս դօլը պեցուր չափար ըրած, էտ չափարին **ցիքին** պտկներին էլ մարդի քալլեք՝ նի կոխած): 4. Անդունդի պռունկ, գահավանդ (Մուղայիթ կաց էտ **ցիքան** ծորը չըննիս)²⁰:

Ակնհայտ է, որ բառանունները ժամանակի ընթացքում իմաստային զգալի փոփոխությունների են ենթարկվում, մասնավորապես

¹⁶ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 458:

¹⁷ Հ.Աճառյան, Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2010, էջ 341:

¹⁸ Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 644:

¹⁹ Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 415:

²⁰ ՀԼԲԲ, հ. 2, Ե., 2010, էջ 283:

տեղի է ունենում հնդեվրոպական որոշ բառերի իմաստի նեղացում, իմաստային անցումներ, հատկապես փոխաբերական իմաստի մղում առաջնային պլան:

Նույն կերպ էլ *ցրվիք* բառանունը բարբառային հայերենում բացի վերը հիշատակած իմաստներից ունի նաև այլ նշանակություններ: Մեր նախորդ հրապարակումներում արձանագրել ենք, որ Սասունի որոշ խոսվածքներում փաստված է *ցրվիկ* բառանունը՝ որպես *ջրհորդան* հասկացության նշանակելի: Բառիմաստային հետաքրքիր զուգորդումների հետևանք է Մարտունու Ջուլաքար գ.-ի խոսվածքում առկա *ցրվիք*-ը: Այն գոմին կամ մառանին կից ծածկ ունեցող, սակայն առանց պատերի շինությունն է, որտեղ խոտ, փայտ, աթար, բահ, ձյուն մաքրելու թի և գյուղական կենցաղում գործածվող այլ իրեր են պահվում:

Ցրվիք բառից բաղադրված ունենք *ցրվքրոեխ, ցրվքրայրտոկ, ցրվքատակ* բառաձևերը, որոնք գործածական են Ղարաբաղի բարբառում: *Ցրվքատեխը* որևէ բարձրության (լինի դա շենքի թե շենքի կատար և այլն) պռունկը՝ եզրն է (*Ցրվքրոեխէն* վենը մի՛ կենալ, պատառ ե՛տ կաց): *Ցրվքատակ*-ը որևէ բարձրության տակը՝ հատակն է (Խոխան *ցեքան* վեր ընգճավ *ցրվքատակը*, ամմա վէշ մին պան չիլավ)²¹: *Ցրվքը* Ղարաբաղի բարբառում հիմնականում գործածվում է *քիվ* իմաստով:

Ա.Սարգսյանը Ղարաբաղի բարբառի բառարանում արձանագրել է գրաբարյան *ցիւ*՝ տան ծածկ իմաստով բառանվան *ցրէվէք* բառակազմական տարբերակի միայն վերին ծայր՝ կատար իմաստը: *Ցիւ* բառանունը փոխաբերացմամբ հիշատակված բառարանում փաստված է նաև հետևյալ դարձվածներում. 1. *Ցրէվքան վէր ըղնէլ*, այսինքն՝ մեծ դժբախտության հանդիպել, ծանր վիճակի մեջ ընկնել (Հօրօբէրը *ցէվքան* վէր ա ընգալ, հա՛մ կավն ա ըստակալ, հա՛մ արտը էրվալ), 2. *ցրէվէն պըսկէն*՝ շատ բարձր տեղ (Խըծապէոթ էն ա *ցրէվէն պըսկէն*)²²: Ամենայն հավանականությամբ այս դարձվածքները բառիմաստային նուրբ անցումների հետևանք են:

Ձահուկյանը, քննելով խնդրո առարկա *ցիվ* և *քիվ* բառանուն-

²¹ ՀԼԲԲ, հ.Ձ, էջ 284:

²² Ա.Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 748:

ները, դրանք ևս ամփոփել է բնակարան, տուն, կահ-կարասի իմաստային թեմատիկ խմբի բուն հնդեվրոպական բառանունների շարքում: Հնդեվրոպական ի ածանցը, ըստ նրա, հաճախ հանդես է գալիս *h-p* ձևով (այսինքն՝ *ghu+h+p= gnuhp*)²³:

Բացի վերոհիշյալ բառանուններից հայերենի բարբառներում արձանագրված են սահմանափակ գործածություն ունեցող այլ բառանուններ:

Որպես կոնաձև տանիք կամ գմբեթ են դիտարկված Վանում՝ *կուրա*, Մուշում *խուրա* բառանունները²⁴, իսկ Էրզրումի Անթապ, Քոշկ գյուղերի խոսվածքներում *Օուրա*-ն հացատան տանիքն է: Հ.Աճառյանը *կուլայ* «գմբեթ» իմաստով բառը արաբական փոխառություն է համարում՝ *qubba*²⁵: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում *կուլա* բառին բարբառային հայերենում վերագրվում է հավելյալ իմաստային-գործառական բաշխում, որն է *տանիք*-ը: Ի դեպ, Գավառի տարածաշրջանում գիտարշավների ժամանակ մեզ հաճախ է հանդիպել *կուրով տուն* բառակապակցությունը, որը գործածվում էր գմբեթաձև տանիք են ունեցող տների համար:

Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի որոշ խոսվածքներում առկա են *չուվրստան* (Հաղրութ, Մարտունու Եմիշճան գ.), *թախտափուշ* (Գորիսի Քարահունջ, Վաղատուր, Խնձորեսկ գ.-եր. ի դեպ, *թախտափուշ*-ը թիթեղյա տանիքն է), Նուխի ք.-ում՝ *չարդախ* և *կտուր* բառաձևերը, իսկ *չաթը*՝ նույն իմաստով, գործածվել է Նիկոմեդիայի Խասկալ գ.-ում: Ենթադրում ենք, որ բացի *կտուր*-ից՝ հիշյալ բառերը փոխառություններ են:

Ռոդոսություն *տանիք*-ը *քիրեմիդ*, Գանձակում *կըրամիդ* (որպես թեք կտուր) հնչատարբերակներով է արձանագրված, որոնք, մեր կարծիքով, աղերսվում են *կղմինդր* (keramis, -idos) հունարեն փոխառության հետ: Այսինքն՝ *կղմինդր* բառը թրծած տափակ ու բարակ աղյուս՝ տան կտուրը ծածկելու համար իմաստից բառիմաստային զարգացումներով ձեռք է բերել *տանիք* նշանակությունը:

Քննելով *տանիք* հասկացության բառանունները՝ հարկ ենք

²³ Գ.Ջահուկյան, ՀԼՊ: ՆԺ, Ե., 1987, էջ 264:

²⁴ ՀԼՔԲ, հ.Գ, էջ 199, Ս.Բաղդասարյան, Մուշի բարբառը, Ե., 1958, էջ 239:

²⁵ Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1951, մաս 2, էջ 195:

համարել հրնթացս անդրադառնալ տանիքի հետ կապված մի քանի այլ բառերի, որոնք նախկինում մեր ուշադրությունից դուրս են մնացել:

Երզնկայի բարբառում փաստված են *խաչկու/խաչկունք* բառանունները՝ որպես տանիքի կենտրոնից բացված լուսամուտ, այսինքն՝ երդիկ²⁶: Նույն իմաստով էլ *խաչք* բառաձևն է արձանագրված Կարինի բարբառում²⁷: Հիշյալ բառանունները ակնհայտորեն առնչվում են հ.-ե. *խաչ* արմատի հետ: Անգամ Եվդոկիայում գավառական թուրքերենում հայերենից փոխառված է *խաչուկ* բառը, որը գյուղական տների առիքներին դրված խաչաձև գերանն է²⁸:

Սալաթիայի բարբառում Թ.Դանիելյանը արձանագրել է *լou-ձագը*՝ որպես լույսի անցք, պատուհան²⁹:

Մի շարք բարբառներում (Երզնկա, Տիգրանակերտ) վկայված է նաև տանիքի լուսամուտի կափարիչ իմաստով *խափանք*³⁰ բառանունը: Հ.Աճառյանը թուրքական փոխառությունների մեջ հիշատակում է *գաբանքը*՝ «փեղկ» նշանակությամբ³¹: Այնուհետև անդրադառնալով *գաբանք* բառի բառիմաստներին՝ գրում է, որ Ն.Նախիջևանում *գաբանք* նշանակում է «տան ճակատի փոքրիկ բացվածքը՝ ձեղունի լուսավորության համար, որ կարող է ապակեպատ լինել կամ ոչ, և որ ձմեռները խցկում են, որպեսզի ձյուն չմտնի»: Մեկ այլ վկայությամբ՝ *գաբանքը* գյուղական տների և օդանների երդիկների կափարիչն է, որ շինվում է շրջանակի մեջ առնված տախտակից, որը ցերեկը վար քաշելով բացում են, գիշերը վեր քաշելով փակում: Հ.Աճառյանի կարծիքով, համաձայն այս մեկնությունների, *գաբանքը* նույնանում է թրք. *kepenk* ձևի հետ, որի իմաստն է պատուհանի կամ դռան փեղկ, որ անձրևի և շոգի ժամանակ փակում են: Սակայն Պոլսում բառը նշանակում է «հին տների մեջ սանդուղքի գլխին շինված լայն փեղկ, որ գիշերները փակելով երկրորդ

²⁶ Դ.Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 155:

²⁷ Հ.Մկրտչյան, *Կարևո բարբառը*, Ե., 1952, էջ 148:

²⁸ Հ.Աճառյան, *ՀԱԲ*, հ. 2, էջ 335:

²⁹ Թ.Դանիելյան, *Սալաթիայի բարբառը*, Ե, 1967, էջ 220:

³⁰ Դ.Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, էջ 155, Ա.Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 211:

³¹ Հ.Աճառյան, *ՀԼՊ*, մաս 2, էջ 276:

հարկը առաջինից բաժանում են և որի վրա անկողին գցելով նաև պառկում են (սա միջոց է, որպեսզի առաջին հարկը մտած գողը նաև երկրորդ հարկ չկարողանա բարձրանալ)»: Աճառյանը կարծում է՝ քանի որ *գափանքի* առաջնային իմաստն է թաքստոց, ծուղակ, ապա այն թուրքական արմատներով հնարավոր չէ մեկնաբանել, ուստի պետք է ենթադրել, որ ծագում է հայերեն **կափանք* «թակարդ, կափարիչ, խուփ բառից», արմատը *կափ* «փակել, խփել», որից ունենք *կափուլ* «թակարդ», *կափարիչ* և այլն³²: Եվ գիտնականը եզրակացնում է, որ *գափանքը* հայերենից անցել է թուրքերենին և հետո թուրքերենից՝ նորից հայերենին³³:

Այսպիսով՝ ամփոփելով *տանիք* հասկացության բարբառային բառաձևերի քննությունը՝ կարող ենք արձանագրել, որ դրանցից հայ բարբառներում առավել գործածականները եղել են հիմնականում անհայտ ծագման *կտուր* և բնիկ հայերեն կամ հնդեվրոպական ծագման *տանիք*, *դիներ* բառանունները: Ընդ որում՝ *դիներ*-ը փաստվում է որպես գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատ, որն առկա է միայն բարբառներում: *Ցլվիք* բնիկ հայերեն բառանունը բառիմաստային յուրօրինակ զարգացումներ է ձեռք բերել՝ *տանիքից քիվ*, *քիվից* մինչև *ջրհորդան* և այլն: Հետաքրքրական է նաև *կտուր* և *ձեղուն* բառանունների ծագումնաբանական առնչակցությունը: Բարբառային հայերենում *տանիք* հասկացությունը դրսևորված է նաև բառիմաստային հետաքրքիր զուգորդումներով առաջացած բառաձևերով, ինչպես՝ *ձեղուն, ծածուկ, էրթիկ, կուրա, կըրամիդ* և այլն:

Khachatryan Hasmik - Functional-geneological study of the words reflecting the concept of **roof** in Armenian dialects.- The Article examines the words reflecting the concept of **roof** in the dialects of Armenian the most used of which are *կտուր/ktur* which is of unknown origin and *տանիք* and *դիներ* which are native Armenian. In Armenian dialects *ցվիք* native Armenian word has acquired different meanings, such as *roof/տանիք/*, *cornice/քիվ/* and *gutter/ջրհորդան/*. The words *ձեղուն, ծածուկ, էրթիկ, կուրա, կրամիդ* have changed their meanings into **roof** as well. In

³² Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.1, Ե., 1971, էջ 495-496:

³³ Հ.Աճառյան, ՀԼՊ, մաս 2, էջ 284:

Armenian dialects there are also some foreign and borrowed words for the concept of roof, such as *կրրամիդ*, *կուրա*, *թախտափուշ*, *չարդախ*, etc.

Хачатрян Асмик - Функционально-этимологическое исследование словоформ понятия *տանիք* в армянских диалектах. - В данной статье исследуются зафиксированные в армянских диалектах словоформы понятия *տանիք* (танік –крыша), наиболее употребительными из которых является слово неизвестного происхождения *կտուր* (ктур – крыша, кровля) и исконно армянские *տանիք* и *դինէր* (динёр - крыша). Исконно армянская словоформа *ցվիք* (цвик) приобрела своеобразные семантические ответвления – от *տանիք* до *քիվ* (кив), от *քիվ* до *ջրհորդան* (джхордán). В результате переосмысления формами слова *տանիք* стали семемы *ձեղուն* (дзегу́н), *ծածուկ* (цацу́к), *էրթիկ* (эрти́к), *կուրա* (куба́), *կրամիդ* (крамíд). В армянских диалектах встречаются также заимствованные и иностранные словоформы *կրրամիդ* (кэрамíд), *կուրա*, *թախտափուշ* (тахтапу́ш), *չարդախ* (чарда́х) и др.

**ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՇԱՂԿԱՊԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ժամանակակից հայերենի շաղկապները իմաստային և ոճական բազմաթիվ հնարավորություններով օժտված կապակցության միջոցներ են: Բազմագործառույթ շաղկապները վճռական ու նշանակալից դեր են կատարում բարդ նախադասության առանձին մասերի կապակցման, իմաստային փոխհարաբերությունների ձևավորման, դրանց բնույթի բացահայտման մեջ:

Տարբնույթ նախադասություններում իրենց իմաստաբանական և կիրառական յուրահատկություններով առանձնանում են բազմիմաստ ստորադասական շաղկապները: Դրանք, ունենալով շարահյուսական իմաստատարբերակիչ արժեք, կարող են կապակցել շարահյուսական տարբեր գործառույթներով բնորոշվող նախադասություններ:

Բազմագործառույթ ստորադասական շաղկապները իրենց հիմնական իմաստային հարաբերության արտահայտման հետ զուգընթաց նշում են նաև այլ հարաբերություններ: Միևնույն շաղկապով կապակցված կախյալ նախադասությունները իմաստային-լրացական տարբեր հարաբերություններով կապվում են գլխավորի հետ, որը կանխորոշում է ամբողջ բարդության կառուցվածքը, կապակցվող մասերի ձևակազմական արտահայտությունները:

Իմաստային տարբերակումը կատարվում է այն բանի հիման վրա, թե շաղկապները կապակցման ինչ բառերի, բառախմբերի ինչ կարգերի հետ են կապակցվում, դիմավոր բայերի եղանակային և ժամանակային ինչ ձևերի հետ են զուգորդվում: Իմաստային տիպերի բացահայտման համար դեր են խաղում կապակցվող նախադասությունների, շաղկապների շարադասությունը, երբեմն էլ համատեքստը: Կարևորվում են ստորոգյալի կառուցվածքի և լրացյալի բառաքերականական բնույթը գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունների դեպքում, ինչպես նաև բայի սեռը և բայիմաստը՝ բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններում:

Ժամանակակից հայերենում տարաբնույթ նախադասությունների մեջ այլևայլ գործառնություններով հանդես են գալիս հիմնականում որ, թե, եթե, մինչ(և), քանի, քանի դեռ, քան, քանի որ, որովհետև, մանավանդ, մանավանդ որ, ինչ է թե, թե ինչ է, միայն, միայն թե շաղկապները:

Մենք հողվածում քննում ենք բազմագործառնությո որ, թե ստորադասական շաղկապների կիրառությունը բարդ նախադասության ոլորտում:

Իրենց դերով առանձնանում են որ, թե մեկնական շաղկապները, որոնք քիչ բացառությամբ մասնակցում են գրեթե բոլոր տեսակի կախյալ նախադասությունների կապակցմանը: Այս շաղկապները «ցույց են տալիս, որ իրենցով կապակցվող լեզվական միավորը նախորդին լրացում-մեկնությունն ու բացատրությունն է»¹:

Շարահյուսական նույն գործառնությունն ունենալով՝ որ և թե շաղկապներն իրարից տարբերվում են վերաբերմունքային-ճանաչողական հատկանիշով: Որ շաղկապը վերաբերմունքի հաստատական, իսկ թե-ն երկբայական-անհավանականության իմաստային երանգ է արտահայտում: Թե-ով կապակցված երկրորդական նախադասություններում կիրառվում են հիմնականում (ոչ՝ բացառապես) հարցական-հարաբերական դերանուններ, ընդ որում գերադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել ժխտական կամ հաստատական բնույթի: Հաճախ թե-ով կապակցվող կախյալ նախադասություններին գերադասի մեջ համապատասխանում է երկբայական, ոչ հաստատական իմաստով բայ-ստորոգյալ: «Թե շաղկապի երկբայական իմաստը ավելի շեշտելու և նույնիսկ անհավանական դարձնելու նպատակով երբեմն գործածվում է համապատասխան իմաստ արտահայտող եղանակավորող բառ, հատկապես իբր բառը»²:

Որ, թե շաղկապներով կապակցվող ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության՝ 1) որևէ բայի կամ բայական կապակցության, 2) որևէ գոյականի կամ գոյականական

¹ Մ.Ե.Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 2002 թ., էջ 398:

² Տե՛ս Մ. Գ. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշները ժամանակակից հայերենում*, Եր., 1965, էջ 454-455:

կիրառություն ունեցող որևէ անդամի, ինչպես նաև անվանական որոշակի արտահայտությունների, կառույցների, բաղադրյալ կապակցությունների, 3) հարաբերյալների:

Քննենք կառուցվածքային այս տեսակներն առանձին-առանձին: 1) Մեկնական ը, թ շաղկապներով կապակցվող մասը լրացնում է գերադաս նախադասության հիմնականում հոգեկան գործունեություն նշող որևէ բայի, որը կարող է լինել՝ ա) ներգործական և բ) ոչ ներգործական: Գլխավորի մեջ բացակայում է այն անդամը, որի գործառույթով հանդես է գալիս կախյալ նախադասությունը:

Եթե գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու բառ գործածվում են ասացական (հայտնել, պատասխանել), հասկացական-իմացական (իմանալ, ըմբռնել), զգացական (սիրել, հարգել), կամային (կամենալ, որոշել, ուզենալ) իմաստ արտահայտող ներգործական սեռի բայեր, ապա կախյալ նախադասությունը բնությամբ լինում է ուղիղ խնդիր:

Բերենք օրինակներ. «Եվ ստիպում ես ինձ գոռալ՝ ասել, Որ դու այրում ես Տրոյայի պես» (ՊՄ): «Պատմեի, թե այս աշխարհում ինչեր եմ քաշել» (Հ Ս): «Բայց տեսել եք, որ չունեմ ես ոչ մի երգ առանց Ձեզ» (Հ Ս): «Տեսե՞լ եք, թե ոնց է սպանում մարդն իր նմանին» (Կ Հ): «Նա զգում է, որ գործը դժվարությամբ գլուխ կգա»: Կամ՝ «Նա զգում է, թե գործը ինչպիսի դժվարությամբ գլուխ կգա»: «Ես կուզենայի, որ իմ սիրածը Ծաղկի պես քնքուշ ու անուշ լինի» (ՀՇ): «Ես որոշել եմ, թե ինչպես եմ վարվելու նրա հետ»:

Քիչ չեն այն կապակցությունները, որոնցում կախյալ նախադասությունը կարող է նախադաս գործածվել: Օրինակ՝ «Որ մեռնում էր նա, ես գիտեի»: «Թե ինչ է նրա վերջնական նպատակը, ոչ ոք չի կարող կռահել»:

Ինչպես գիտենք, ասացական բայերի լրացնող կախյալ նախադասությունների բնորոշ հատկանիշն այն է, որ յուրովի ներկայացնում են ուրիշի ուղղակի կամ անուղղակի խոսքը: Նշենք, որ անուղղակի հարցում պարունակող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գլխավորի՝ հոգեկան գործունեություն արտահայտող բայերի հետ կապվում են ք շաղկապով:

Երբ գերադաս մասում գործածվում է ներգործական սեռի կամայական նշանակություն ունեցող բայ, և երկրորդական

նախադասության ստորոգյալը առնչվում է գերադասի ստորոգյալի բայիմաստի հետ, ունենում ենք նպատակի պարագա կախյալ նախադասություն: Օր. «Կանչում եմ, որ նորոգես այս տունը»: Նպատակային հարաբերության ձևավորմանը նպաստում է հատկապես երկրորդական նախադասության ստորոգյալի եղանակաժամանակային արտահայտությունը. այն ձևավորվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով: Ժամանակային տեսակետից նրա գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը: Որ ընդհանրական շաղկապը նպատակային հարաբերություն է արտահայտում, երբ կապվում է ներգործական սեռի բայերի, բայական կապակցությունների հետ: Օրինակ. Ասես մի օր կերտել եմ քեզ, որ մարմարե քո տեսքով Անհաս տենչի, անհագ սիրո արձան դառնաս, Արարատ(ՄԿ): Վառեց մումը՝ թե իբր սառած-փետացած մատները տաքացնի(ՀՄ): Թե-ով կապակցությունները ավելի հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին (այդ մասին կխոսենք համապատասխան տեղում): Նշենք նաև, որ նպատակի պարագա երկրորդական նախադասությունը որ շաղկապով կապակցվելու դեպքում գործածվում է վերջադաս (միջադաս՝ դերբայական, բայական որևէ անդամի լրացնելիս):

Որ, թե շաղկապներով կախյալ նախադասությունը կարող է լրացնել գլխավոր նախադասության որոշ կարգի չեզոք (ոչ ներգործական) սեռի բայերի: Եթե կախյալ նախադասությունը կապվում է չեզոք սեռի միադիմի երրորդ դեմքի բայերի հետ (թվալ, երևալ, պատահել, մնալ), ունենում ենք ենթակա երկրորդական նախադասություն: Այս կարգի բարդ նախադասությունների գերադաս բաղադրիչները հիմնականում կազմված են լինում բայ-ստորոգյալից (երբեմն մեկ-երկու լրացումից): Բերենք օրինակներ. Երևում է, որ այսօր շատ ես աշխատել: Ա՛խ, թվում է, թե այնտեղ եմ հիմա (ՀՄ):

Այս շաղկապներով կախյալ եզրը կարող է լրացնել գլխավորի՝ հոգեկան գործունեություն արտահայտող չեզոք սեռի բայերի (կասկածել, սպասել, ունկնդրել, հավատալ) և բնույթով լինել հանգման խնդիր: Օր. Գրեթե չէի հավատում, որ երբեմնի վտիտ ու փխրուն այդ աղջնակը շնորհալի դերասանուհի է դարձել: Սպասում եմ, թե ով պիտի գա:

Բերենք օրինակ վերաբերության խնդիր երկրորդականով.

Հավատացած էր, որ ահա ուր որ է հասնելու են ափ (ՌՀ): Վիճում էին, թե ով է մասնակցելու այդ երեկոյին, ով՝ ոչ:

Միջոցի խնդիր. Գեթ մխիթարվիր, որ նույն համն ունեն քրտինք ու արցունք (Պ Ս): Ես շատ եմ հետաքրքրվում, թե ինչպես է պարապում եղբայրս:

Սահմանափակման խնդիր. Համոզված էի, որ ժառանգության մի որոշ մասը պիտի ստանա իր կինը: Համոզված էիր, թե նա քո ամենալավ, ամենաբարձր բաղձանքների իրագործողն է:

Հոգեկան այլևայլ վիճակներ արտահայտող մի շարք չեզոք սեռի բայերի (վախենալ, զգուշանալ) բառիմաստներով պայմանավորված՝ կախյալ նախադասությունը լինում է պատճառի պարագա: Օր. Զգուշանում էի, որ հանկարծ որևէ մեկին չնեղացնեմ: Վախենում էինք, թե անձրև կգա: Այսպիսի բայերի լրացնող նախադասությունները ուսումնական մի շարք ձեռնարկներում համարվում են նաև անջատման խնդիր³:

Հետևանքի պարագա. Ովքե՞ր են գալու, որ այդպես արագ-արագ նախապատրաստվում են: Որքա՞ն շատ էին հիացել այդ տեսարանով, որ մինչև այժմ չեն մոռանում այն: Սրանք լրացնում են հարցական և բացականչական նախադասությունների: Թե-ով նախադասությունները գործածական չեն:

Որ ընդհանրական շաղկապը նպատակային հարաբերություն է արտահայտում ֆիզիկական հատկանիշ նշող մի շարք չեզոք սեռի բայերի հետ կապվելիս: Օր. Մենք պայքարում ենք, որ աշխարհում լինի խաղաղություն: Գնացել եմ տուն, որ իբր հանգստանամ: Կամ՝ Կաշխատեմ, որ գյուղում մանկապարտեզը վերաբացվի: Եթե երկրորդական նախադասության շարադասությունը փոխենք, կփոխվի նաև նրա իմաստը և բնույթը: Ինչպես. Որ գյուղում մանկապարտեզը վերաբացվի, կաշխատեմ: Այս դեպքում երկրորդականը բնությամբ պայմանի պարագա է: Շարադասությունը, թերևս սակավ, իմաստային կարևոր դեր է կատարում բարդ նախադասությունների համակարգում:

³ Տե՛ս՝ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն*, հ. 3, Եր., 1967, էջ 668: Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Եր., 2003, էջ 324-325:

Բացատրական որ, թե շաղկապները կապվում են նաև կրավորական սեռի բայերի հետ: Այս դեպքում ստորադաս նախադասություններն իրենց գործառնությունով կարող են լինել ենթակա: Ենթակա երկրորդական նախադասության գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալը (ասացական, մտածական) կիրառվում է եզակի երրորդ դեմքով: Բերենք օրինակներ. Նրանց կողմից արդեն հաղորդվել է, որ հարավային քամիները օդի տաք հոսանքներ են բերել Հարավային Կովկաս (յր): Որոշվեց, թե եկողներից քանիսն են մնալու (յր): Կարող է գործածվել կրավորական սեռի երրորդ դեմքի բայերի հետ, որոնք ունեն չեզոք սեռի իմաստ: Օր. Նրա համար պարզվեց, որ բոլորն իրեն խաբում են:

Վերը նշվածները որ, թե շաղկապների գլխավոր կիրառություններն են: Այս շաղկապները կարող են արտահայտել նաև այլ հարաբերություններ: Որ, թե շաղկապներով կապակցված երկրորդական նախադասությունները պատճառի, պայմանի, հիմունքի, ժամանակի, նպատակի իմաստ են արտահայտում հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից և անցել են գեղարվեստական գրականությանը: Բերենք օրինակներ:

Պատճառի պարագա երկրորդական նախադասություն. Կնոջ վրա թոնթորաց, թե կովին ծարավ է թողել: Զայրանում էր, որ փախցրել էին աղջկան: Որ, թե շաղկապները համարժեք են որովհետև շաղկապին: Կամ՝ Որ այդպես է, լավ նայիր քեզ: Այս որ շաղկապի մեջ առկա է նաև պայմանի իմաստ, և կախյալ նախադասությունը կարող է ընկալվել որպես պայմանի պարագա: Այսպիսի նախադասությունների իմաստային տիպերի բացահայտման համար դեր է խաղում համատեքստը:

Պայմանի պարագա. Փորձանքը որ գա, հանկարծ կգա: Թե կուզես, լոիր, թե կուզես, ռոնա՛, թե կուզես, ծամիր սեփական լեզուդ (ՊՄ): Իբրև պայման ներկայացվող գործողությունը, երևույթը նախորդում է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությանը, երևույթին: Որ, թե շաղկապները համարժեք են եթե շաղկապին:

Նպատակի պարագա. Բանաստեղծին թողեց մենակ... իրեն պես, որ իրեն պես մոիկ անի ամեն մեկին ու կյանքին (ՀԹ): Ավետիքը շարունակ աչք էր ածում շուրջը, թե հովիվներ երևան, հոտ

տեսնի մակադած (ՎԽ):

Ժամանակի պարագա. Ագնո որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու (Հ Մ): Մուրթ որ ընկնի, խարույկ կվառենք (լր): Ժամանակի պարագա ստորադաս նախադասության գործողությունը նախորդում է գերադաս նախադասության գործողությանը: Որ շաղկապը համարժեք է ևրբ դերանվանը: Կամ՝ Որ վառարանը չի վառվում, սենյակում ցուրտ է: Այստեղ որ շաղկապն արտահայտում է նաև պայմանի իմաստ: Եվ համատեքստն է դեր խաղում իմաստային տիպերի որոշման հարցում:

Հիմունքի պարագա. Անձրև է գալու, որ արևը ծակում է: Որ լույսը վառվում է, նշանակում է եկել են: Որ շաղկապը համարժեք է քանի որ շաղկապին:

Թե-ով ժամանակի, հիմունքի պարագա երկրորդական նախադասությունները պակաս գործածական են:

Թե շաղկապը ունի մի այսպիսի յուրահատկություն: Ինչպես գիտենք, ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ հաղորդվում է նաև ուրիշի ուղղակի խոսքը: Հաճախ թե շաղկապով երկրորդական նախադասությունը միանում է գլխավորին, որի մեջ բացակայում է ասացական բայը, բայց մտքով հասկացվում է: Այդ թե-ն փոխարինում է ասացական բային: Օրինակ՝ Ուրիշ մարդ մոտեցավ, թե՝ Նոյ, ազատի ինձի, դու լավ մարդ ես (ԱԲ): Սա հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին:

2) Կառուցվածքային այլ տիպ են ներկայացնում որ, թե շաղկապներով կապակցված նախադասությունները, երբ լրացնում են գերադաս նախադասության ոչ թե բային, այլ գոյականին, գոյականական կիրառություն ունեցող որևէ անդամի⁴: Բերենք օրինակներ.

Որոշիչ երկրորդականով. Նա դիմում է գրել, որ իրեն աշխատանքից ազատել են: Նրանց պատասխան են տվել, թե իրենք ամենայն պատրաստակամությամբ ուրախ են աշխատել մեզ հետ (լր): Հատկացուցիչ երկրորդականով. Անհրաժեշտություն չկա, որ նա այցելի մեզ: Հատուկտոր թեփերն ապացույց էին, թե ժամանակին

⁴ Գոյականական անդամ ասելով նկատի ենք ունենում դերանունով, գոյականաբար գործածված բառով արտահայտված անդամները:

մարգագետնի սևահողերում աճել է կաղնին:

Բացահայտիչ երկրորդականով: Իբրև լրացյալ հանդես են գալիս անձնական առաջին և երկրորդ դեմքի դերանունները: Օր. Դուք, որ նվիրվել եք այդ գործին, արժանի եք ամենաչերմ վերաբերմունքին: Նա պատմեց իր հետ պատահածը, թե ինչպես է օգնել ճանապարհը կորցրած անձանոթներին: Ուր-ով կապակցված ստորադաս նախադասությունները կարող են լրացնել որոշակի արտահայտությունների, անվանական կառույցների: Բերենք օրինակներ. Խաղաղություն, որ աշիկներն իր բանա դաշտում, մի տուղտ, մի բալիկ (ՊՍ): Շնորհակալություն, որ մեզ միշտ հիշում եք: Երանի Ձեզ, որ ոչինչ չգիտեք: Ամոթ քեզ, թե այդպես ես մտածում: Փափոքը շատ, ա՛յ Աստված, որ հրաշք բաներ ես ստեղծել

Նման բառերի, արտահայտությունների լրացնող նախադասությունները բնույթով լինում են նպատակի, պատճառի կամ հիմունքի պարագա: Թե-ի գործածությունը սահմանափակ է այս կառուցվածքի նախադասություններում:

Հաճախ կախյալ նախադասությունը կարող է լրացնել անվանական ստորոգյալի, որի հանգույցը գործածվում է բացառապես եզակի երրորդ դեմքով: Որպես վերադիր հանդես են գալիս հիմնականում ածականը, գոյականը: Պայմանավորված վերադիրների բայիմաստով, առաջադրվող հարցերով՝ այդպիսի նախադասությունները լինում են ենթակա, խնդիր, պարագա: Բերենք օրինակներ. Ենթակա երկրորդական նախադասությամբ. Լավ է, որ եկար: Սուտ է, թե իբր Երեմը տարբեր մարդկանց մոտ շոշափել է քաղաքական հարցեր: Որպես վերադիր կարող է հանդես գալ որևէ գոյական, ժամանակի մակբայ: Ինչպես՝ Դեկտեմբերին էր, որ տեղի ունեցավ երկրաշարժը: Երեկ էր, որ անհոգ ու երջանիկ խաղում էր բակում: Հաճախ ուր շաղկապով նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության մեջ արտահայտված դերանվանը. Ինչի՞ց է, որ դու միշտ ուշանում ես:

Միջոցի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցության դեպքում գերադաս մասում որպես վերադիր հանդես են գալիս այն որակական ածականները, որոնք ունակ են առնելու գործիական հոլովով ձևավորված խնդիր (մեծ, ուրախ): Օր. Ռազմիկը միանգամայն հպարտ է, որ ինքն այժմ հայոց կանոնավոր բանակի զինվոր է:

Հանգման խնդիր. Ես արժանի՞ չեի, որ դու ներկա լինեիր իմ հարսանիքին:

Պատճառի պարագա. Ես շատ գոհ էի, որ կարող էի անցյալի միջով բացատրել ներկան:

Հետևանքի պարագա. Ես խելո՞ք չեի, որ ինձ չընտրեցիք:

Այս դեպքում քե-ով կապակցություններ չենք ունենում:

3) Որ, քե շաղկապների բազմագործառությանը նպաստում են գլխավոր նախադասության մեջ գործածվող հարաբերյալները: Դրանք ցուցական, երբեմն անորոշ դերանուններ են, դերանվանական կապակցություններ, բառախմբեր: Կախյալ նախադասությունը նյութականացնում է հարաբերյալի իմաստը՝ որոշակի բովանդակություն հաղորդելով նրան: «Հարաբերյալի կապակցական դերն իրացվում է նրանով, որ այն ակնարկում է երկրորդական նախադասության իմաստը, ինքն ունենալով վերացական իմաստ՝ շարահյուսական այն դերն է կատարում, ինչ որ երկրորդական նախադասությունը, որը որոշակիորեն արտահայտում է հարաբերյալի ակնարկած իմաստը»⁵:

Որ, քե-ով կապակցվող այսպիսի նախադասությունները հանդես են գալիս համարյա բոլոր գործառույթներով:

Այն դերանունը (հոլովի կարգից գուրկ) ձևական ենթակա, ուղիղ խնդիր է դառնում՝ նշանակելով մի բան անող, լինող, գործողությունը կրող առարկա, երևույթ: Բերենք օրինակներ:

Ենթակա երկրորդական նախադասությամբ. Նրան հուզում էր և այն, որ դու չես իմացել այդ մասին: Նրան հուզում էր և այն, թե ինչու այդ մասին չես իմացել:

Ուղիղ խնդիր. Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր (ՊՄ): Եվ այն չգիտեր, թե որ երկրում էր առևտուր անում: Կամ՝ Ես ուզում էի այն, որ մեկ էլ կանչեր: Ուշագրավ է նշել, որ կամային բայերի գործածության դեպքում այն հարաբերյալի փոխարինումը այդ դերանունով հիմնովին փոխվում է բարդ նախադասության կապակցվող մասերի իմաստային փոխհարաբերությունը: Ինչպես. Ես ուզում էի այն, որ մեկ էլ կանչեր: Այս դեպքում երկրորդական նախադասությունը բնությունով նպատակի

⁵ Ս. Աբրահամյան, *Հայոց լեզու, շարահյուսություն*, Եր., 2004, էջ 142:

պարագա է: Այս, այդ դերանունները «գուրկ լինելով այն վերացական ու անորոշ նշանակությունից, որ հատուկ է այն դերանվանը, և ակնարկելով որևէ կոնկրետ, նախապես հիշատակված ցանկություն կամ պահանջ՝ հանդես են գալիս սեռի խնդրի բուն նշանակությամբ, որի պատճառով երկրորդական նախադասությունը ձեռք է բերում նպատակի նշանակություն»⁶: Իհարկե, այսպիսի գործածությունը խրախուսելի չէ և տարածված է հատկապես ժողովրդախոսակցական լեզվում:

Ստորոգելի կախյալ նախադասությունը կարող է արտահայտել առարկայացված գործողություններ, ինչպես նաև որակական, քանակական հատկանշի կամ հատկանշի հատկանշի իմաստ: Առաջին դեպքում լրացնում են այն հարաբերյալին, երկրորդ դեպքում՝ այնքան, այնչափ, նույն, նույնքան, այնպես, այնպիսի հարաբերյալներին, որոնք հանդես են գալիս որպես վերադիր: Օր. Խեղճ մարդու միակ իղձը այն է, որ մտնես ծնողներիդ տունը: Նրա միակ մտահոգությունն այն է, թե ինչպես կընթանա գործողությունը: Տպավորությունն այնպիսին է, որ շատ քիչ է առաջ շարժվել մեր գրականությունը: Այնտեղ ամեն ինչ այնպես էր, որ կարծես մեջը մարդ կա, գլխարկի տակ՝ գլուխ: Նրան այնպես էր թվում, թե սենյակը լիքն է մարդկանցով:

Հաճախ որոշ կարգի բայերի բայիմաստի հետ պայմանավորված՝ ցուցական դերանունները հանդես են գալիս հոլովական թեք ձևերով: Օր. Այդ խորթությունը նրանից է, որ Միքայելը բավական աճել և չափահաս էր դարձել (ստորոգելի): Այս ամբողջը նրա արդյունքն է, որ բոլորն աշխատել են անձնվիրաբար (հատկացուցիչ): Ես հասա նրան, որ կորցրի իմ հավատն ու վստահությունը (հանգման խնդիր): Իր ուժերի նկատմամբ կասկածը ծնվեց նրանից, որ երեկ ակոսի մեջ ծնկները կքոտեցին: Նրանից, թե ձեռքերն ինչ բույր ունեն, կարելի է իմանալ՝ սիրում է մարդը, թե՞ չի սիրում (անջատման խնդիր): Իրեն մխիթարում էր նրանով, որ նյութական կորուստներ չունեցավ: Մպառնում էր նրանով, թե կդատեն ամենախիստ ձևով (միջոցի խնդիր): Արդարացվեց նրանով, որ ի վերջո ճանաչեց իրեն (ներգործող խնդիր): Դա լավ է այն բանով, որ վերա-

⁶ Գ. Գաբրելյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում*, Եր., 1963, էջ 194:

կանգնեց իր վարկը (սահմանափակման խնդիր): Մեր գործի հաջողությունը կախված է նրանից, թե ինչքան լուրջ ենք վերաբերվում դրան (պատճառի պարագա):

Լայն տարածում ունեն այն մեկնական, բացատրական երկրորդական նախադասությունները, որոնք՝ ա) այն, այնպիսի հարաբերյալների միջնորդությամբ կապվում են գոյականների, բայանունների հետ (նշելով այս կամ այն հատկանիշը), բ) այնպես, այնքան և նման հարաբերյալներով՝ բայի հետ (արտահայտելով որակական, քանակական հատկանիշներ): Ըստ այդմ էլ լինում են՝ ա) որոշիչ և բ) ձևի պարագա, չափ ու քանակի պարագա: Բերենք օրինակներ.

Որոշիչ երկրորդականով. Նա իր հոգում կրում է այն մեծ սարսափը, որ սեփական աչքերով տեսել է հոր սպանությունը: Նա ժպտաց այն մտքից, թե քանի տարի է՝ այդ ծառը կանգնած է այդտեղ(ՎՍ): Նշենք, որ այս կիրառությամբ թե շաղկապը ավելի է տարածված, քան որ-ը:

Կամ՝ Այնպիսի լռություն էր, որ մենք ականայից սկսեցինք վախենալ: Այսպիսի կախյալ նախադասությունները արտահայտում են գերադաս բաղադրիչի որոշյալի այս կամ այն հատկանիշից բխող հետևանքը:

Չափ ու քանակի պարագա. Եվ մոտենալով այնքան հեռացանք, որ ետ կանչելու էլ բառ չմնաց (ՀՍ):

Ձևի պարագա. Նա այնպես է խոսում, որ ոչինչ չի հասկացվում: Այդ օրից այնպես էր ձևացնում, թե իբր նրան չի էլ տեսնում:

Եթե այսպիսի կապակցություններում երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը արտահայտված է լինում ըղձական եղանակով, ապա ըստ բնույթի լինում է նպատակի պարագա: Օր. Այնպես է քայլում, որ չարթնացնի փոքրիկներին:

Թե շաղկապի գործածությունն այս հարաբերյալների հետ տարածված չէ:

Հաճախ կախյալ եզրը կարող է լրացնել գերադաս նախադասության չափի, ձևի պարագաներին՝ ցույց տալով նրանց արտահայտած հատկանշի աստիճանը: Օրինակ. Այդ երաժշտությունը այնքան դյուրիշ է, որ մարդ ուզում է անընդհատ լսի (չափ ու

քանակի պարագա): Ոտքերը փոխում է այնպես կաքավաքայլ, որ կարծես ափսոսում է կոխել գետինը (ձևի պարագա):

Հաճախ որպես հարաբերյալ հանդես են գալիս դերանվանական կապակցություններ, հոլովակապային կառույցներ. այն քանից, այդ ամենից, այն քանով, այն պատճառով, այն մասին, նրա համար և այլն: Բերենք տարբեր բնույթի նախադասությունների օրինակներ:

Այն քանից, այդ ամենից և նման հարաբերյալների լրացնող անջատման խնդիր կախյալ նախադասությունները սովորաբար դառնում են անջատման, սկզբնավորման իմաստ ունեցող բայերի լրացում: Ինչպես՝ Նա պատմությունն սկսեց այն քանից, թե ինչպես է առաջին անգամ որսի գնացել: Նա պատմությունն սկսեց այն քանից, որ առաջին անգամ է որսի գնացել:

Միջոցի խնդիր. Մայրիկին հուսադրում էին այն քանով, որ նրա որդին կենդանի է:

Վերաբերության խնդիր. Մենք խոսում էինք այն մասին, որ պետք է զուգակցել միտքն ու սիրտը: Նա պատմեց այն մասին, թե ինչպես է հանդիպել ճանապարհը կորցրած անծանոթների: Նման կառույցներում, երբ որպես երկրորդական նախադասության լրացյալ սովորաբար գործածվում են ասացական, մտածական բայեր, հարաբերյալի բացակայության դեպքում ունենում ենք ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն:

Պատճառի պարագայով. Նրանք շուտ մեկնեցին այն պատճառով, որ նախապատրաստվեն խորհրդակցությանը: Անդրանիկը մոայլվել էր նրա համար, որ հուսահատություն էր նկատվել զինվորների դեմքերին (ՍՍ):

Նպատակի պարագայով. Հանձնաժողովը կազմվել է այն նպատակով, որ ստուգի բաժնի աշխատանքները: Նրա՝ համար, որ չորանանք այստեղ, աճեցինք մենք (ՄԼ): Նրա համար հոլովական կառույցը գործածվում է նաև պատճառի պարագա երկրորդական նախադասություններում: Տարբերությունը կրկին այն է, որ նպատակի պարագա երկրորդական նախադասությունում ստորոգյալը գործածվում է ըղձական եղանակով:

Ձևի պարագայով. Այդ առթիվ շատ մակերեսային դատողություն է արել մասնավորապես այն ձևով, թե աշխարհը փուչ է,

լավությունն էլ է կորչում, վատությունն էլ: Այրել է արտասուքը, այրել է այն ձևով, որ օդի մեջ նույնիսկ հնչյուն չլսվի:

Պայմանի պարագայով. Ես կգամ միայն այն պայմանով, որ դու էլ գաս:

Հիմունքի պարագայով. Նրան կհեռացնեն այն հիմունքով, որ խախտել է աշխատանքային պայմանագիրը:

Թե շաղկապի գործածությունը այս կառույցների հետ տարածված չէ:

Այսպիսով՝ բազմագործառույթ շաղկապները հարստացել ու հարստանում են բազմապիսի նշանակություններով, իմաստային բազմազան նրբերանգներով՝ արտահայտելով արդի հայերենի շրջանին անհրաժեշտ շարահյուսական հարաբերություններ:

Nune Khachatryan - Polyfunctional conjunctions in Modern Armenian. -Polyfunctional conjunctions retain a decisive and essential role in joining separate parts of complex sentences, shaping semantic relations and revealing their character. The article analyses application of polyfunctional subordinate conjunctions in the sphere of complex sentences.

Together with expressing their primary semantic relations, polyfunctional subordinate conjunctions also mark other relations. The semantic differentiation performed by conjunctions depends on the type and categories of connective words and word phrases, on the mood and tense forms of finite verb conjunctions they connect with.

Нуне Хачатрян - Полифункциональные союзы в современном армянском языке. - Полифункциональные союзы обладают ключевой значимостью в соединении отдельных частей сложного предложения, в оформлении семантических отношений и в выявлении характера их семантического взаимодействия. В статье анализируется применение полифункциональных подчинительных союзов в сложных предложениях.

Полифункциональные союзы, кроме передачи основных семантических отношений, также маркируют иные отношения. Их семантическая дифференциация обусловлена типом соединительными слов и словосочетаний, их категориями, временными формами и формами наклонения личных глаголов, с которыми полифункциональные союзы сочетаются.

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՓՈԽԱՌՎԱԾ ԲԱՌԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ 15-ՐԴ ԴԱՐԻ
ՀԻՇՍԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Սույն ուսումնասիրությունը վերաբերում է ձեռագրերի 15-րդ դարի հիշատակարաններում արձանագրված այն փոխառյալ բառերին, որոնք, ըստ բառարանային տվյալների, չեն վկայվել մինչև 12-րդ դարը գրված գործերում: Դրանք որոշ վերապահությամբ կարելի է համարել միջին հայերենում կատարված փոխառություններ:

Թե՛ նախորդ դարերի և թե՛ 15-րդ դարի յուրաքանչյուր հիշատակագիր հիշատակագրության ավանդույթի համաձայն ձգտել է հետևել գրաբարյան օրինաչափությանը, սակայն հիմնականում պահպանելով գրաբարի քերականական համակարգը՝ կամա թե ակամա գրական վկայագիր են հաղորդել ժամանակի խոսակցական լեզվին կամ իրենց բարբառին հատուկ և հատկապես գրաբարին անծանոթ օտար ծագման բառերի: Սակավ են այն հիշատակարանները, որոնք գրված են միջին հայերենով: Եղածներն էլ մեկ-երկու նախադասությունից են բաղկացած: Ուղղակի պետք է նկատել, որ գրաբարով գրված որոշ հիշատակարաններում մեծ չափերի են հասնում միջինհայերենյան իրողությունները: Ընդ որում՝ կանոնավոր կրթություն չունեցող անհատները, որոնց ընդօրինակությամբ է ձեռագրերի զգալի մասը, գրելով մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հիշատակարաններ՝ առավել հաճախ են գործածել իրենց կենցաղ ներթափանցած և հարազատ դարձած օտար բառեր, մինչդեռ ուսյալ հիշատակագիրները՝ հայ գրականության և մշակույթի կարկառուն ներկայացուցիչներ, հոգևոր տարբեր աստիճաններ ունեցող անհատներ, վարդապետներ և այլք, ի տարբերություն նախորդների, գրել են սովորածավալ հիշատակարաններ և գրաբարի հետևողությամբ հնարավորինս զերծ մնացել նման բառերից: Այսպիսով, գրաբարին անծանոթ օտար բառերը, գործածված լինելով բարբառներում, մեծ մասամբ գրաբար չիմացող բարբառախոսների միջոցով են մուտքագրվել հիշատակարաններ:

Պետք է նկատի առնել նաև, որ փոխառությունների մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերաբերում են փոխատու լեզվի մշակութային, կենցաղային զանազան հասկացություններին: Դրանք ազգային տիտղոսներ, կոշումներ, դրամական միավորներ և նույնաբնույթ այլ իրողություններ նշանակող բառերն են, որոնք հայ լեզվաբանության մեջ հայտնի են «էկզոտիկ բառեր» կամ «տարաշխարհիկ բառեր»¹ տերմինով: Բնականաբար, ի տարբերություն օտար ծագման այլ բառերի, որոնք ունեն գրական համարժեքներ, վերջիններիս գործածությունը անխուսափելի է: Ահա օրինակ. *սոմ* - թուրք. *soma* < իտալ. «դրամական միավոր». «Ետուն վանաց սուրբ Անտոնի & *unib*» (Ա 414):

Եթե արդի հայերենի համար հստակ տարբերակելի են փոխառություն և օտարաբանություն հասկացությունները, ապա նախորդ լեզվափոփոխության համար առանձնակի դժվարություն է հարուցում այդպիսի դասակարգում կատարելը՝ մի կողմից պատկերացում չկազմելով ժամանակին այդ բառերի տարածվածության և հարազատության մասին, մյուս կողմից նկատի առնելով այն, որ դրանց ճնշող մեծամասնությունը մինչև օրս էլ գործուն է հայերենի բարբառներում:

15-րդ դարի հիշատակարաններում արձանագրված փոխառությունները հիմնականում արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառեր են: Շատերը միաժամանակ հատուկ են եղել հիշյալ երեք լեզուներին էլ, ինչպես և կփաստենք ստորև: Սա է պատճառը, որ բառարաններում որոշակի հստակություն չկա նշյալ լեզուներից որևէ մեկից փոխառյալ լինելու առումով:

Քանի որ հայ գրավոր մշակույթը դարեր շարունակ հիմնականում պատմագիտական և կրոնաեկեղեցական բովանդակություն է ունեցել, հետևաբար ժողովրդի կենցաղն ու նիստուկացը ներկայացնող բազում բառեր, այդ թվում դրանց՝ ժամանակին լայն տարածում գտած օտար համարժեքները չեն գրառվել: Այդ բացը մասամբ լրացվում է հիշատակարանների շնորհիվ, որոնցում գրիչները հաղորդում են կենցաղային մանրամասներ: Բառարանային տվյալների համաձայն՝ ստորև բերվող փոխառությունների գերակշիռ մասի

¹ Տե՛ս **Ֆ. Խլդաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ա մաս, Ե., 2009, էջ 192:

միակ վկայությունները ձեռագրերի հիշատակարաններից են:

Հիշատակագրությունների ժամանակագրական ընթացքին հետևելով՝ կարելի է նկատել, որ աստիճանաբար առավել մեծ չափերի է հասնում բարբառային-խոսակցական, դրանց մեջ նաև օտար բառերի գործածությունը: Դա մի կողմից պայմանավորված է նրանով, որ հետագայում մասամբ խախտվել է հիշատակագրության մեջ լեզվական բանաձևերի ու կաղապարների պահպանման դարավոր ավանդույթը, իսկ մյուս կողմից, ինչպես և նկատել է Է. Մկրտչյանը, մինչ 14-15-րդ դարերը «Որևէ մեկին հիշելու կամ ինչ-որ մեկի հիշատակին նվիրաբերելու մասին չափազանց քիչ է նշվում, իսկ սովորական, առօրյա դեպքերի մասին ոչ մի խոսք չի ասվում»²: Մինչդեռ 15-րդ դարերի հիշատակարաններում ընդունված են դրանք, որոնք և պայմանավորել են առօրյա խոսակցության մեջ գործածվող օտար բառերի մուտքը:

15-րդ դարի հիշատակարաններում վկայված օտար բառերն ընդհանուր առմամբ ՆՀԲ-ում³ արձանագրված չեն: Իսկ եղած մի քանի օրինակներն էլ այլ գործերի նշագրմամբ են: Հայտնի է, որ բառարանագիրներն օգտագործել են հիշատակարանների բառանյութը, բայց, ինչպես և նկատվում է, ոչ ըստ ամենայնի. հատկապես չեն արձանագրվել օտար բառերը: Վերջիններս հիմնականում տեղ են գտել ՄՀԲ-ում⁴:

Հիշյալ դարի հիշատակարանները Լ. Խաչիկյանի ջանքերով հրատարակվել են երեք հատորով⁵: Յուրաքանչյուրի վերջնամասում համապատասխանաբար տրվել են գործածություն գտած օտար բառերի ցանկեր, սակայն ոչ միայն դրանցում ընդգրկված չեն բոլոր օրինակները (օր.՝ *սօհր* - պարսկ. «կնիք», Գ 137), այլև շատերի բացատրությունը, ինչպես և կարելի է նկատել, խաբսխված չէ գիտա-

² Տե՛ս Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում*, Ե., 1980, էջ 63:

³ Գ. Աւետիքեան, Խ. Մխրմելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-1837*:

⁴ Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

⁵ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ. Խաչիկյան, մասն Ա, Ե., 1955, մասն Բ, Ե., 1958, մասն Գ, Ե., 1967:

կան հիմքերին՝ շատ դեպքերում հենված լինելով կոնտեքստից բխեցրած ենթադրությունների վրա (օր.՝ **յատար** - արաբ. «ուշադիր» (Բ 115), մինչդեռ ՄՀԲ-ն բացատրում է «դեղագործ»՝ որպես բնագրային վկայություն բերելով լոկ հիշյալ օրինակը):

Հիշատակագրողները, անդրադառնալով տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, կառավարման գործընթացին, կրոնաեկեղեցական համակարգին, իրավական, շուկայական փոխհարաբերություններին և այլ բնագավառների, կիրառել են համապատասխան իմաստային դաշտերին բնորոշ օտար անվանումներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշատակարաններում գործածված փոխառյալ բառապաշարում զգալի թիվ են կազմում հատկապես անձնանիշ բառերը: Դա պայմանավորված է նրանով, որ հիշատակագիրները նշել են թե՛ իրենց պաշտոնը կամ զբաղմունքը և թե՛ իրենց գրեթե բոլոր մերձավորների ու տարբեր մարդկանց, որոնք որոշակի ներդրում են ունեցել այս կամ այն ձեռագիրը ձեռք բերելու գործում կամ նպաստել են գրառումներին: Այդպիսով գրական վկայություն են ստացել «պաշտոն, արհեստ, զբաղմունք, մասնագիտություն» նշանակող զանազան օտար անվանումներ: Այսպես. **աթմաքչի** - թուրք. «հացագործ, հացթուխ». «Յիշեցեք ի Քրիստոս և աստուած-ողորմի ասացեք զվերջին ստացող սուրբ Աւետարանիս՝ **աթմաքչի** մղտեսի Յոհանին» (Գ 520). ՄՀԲ-ում տրված բնագրային երկու վկայություններից մեկը հիշյալ օրինակն է, իսկ մյուսը 17-րդ դարի հիշատակարանից է, **նաղարաճի** - պարսկ. «նաղարա նվագող, դափահար, թմբկահար». «Քրիստոս աստուած քո միւսանգամ գալըստեանդ յիշեայ զստացող սուրբ Աւետարանիս գէլմէլիքն և զկողակիցն իւր զ**նաղարաճի** Ամինատինն» (Գ 104), **ճառահպաշի** - արաբ., թուրք. «վիրաբուժապետ». «Կատարեցաւ Բժշկարանս կամօք պարոն Ռամատան **ճառահպաշիին**» (Գ 13), **պօստանճիպաշի** - թուրք. «պետական բարձր պաշտոնյա». «Եւ զիս՝ զանարժան ծառայս **ճառահպաշի** համ **պօստանճիպաշի** յիշեցեք ի տէր» (Գ 13), **բարդար** - պարսկ. «հանձնարարություն կատարող, իրագործող (անձ)». «Եւ դարձեալ անդրէն **բարդար** յըըրկեցին ալեկոծեալ երկիրս Արճիշոյ» (Գ 257), **մուքերի**. «Եւ զայլ աշխատաւորք վանացս՝ զտնտես Պապն, զ**մուքերի** Աբրահամն և զայլն, Աստուած

նոցա աշխատանացն վարձս հատուցանե» (Գ 82). բառը վկայված է ՄՀԲ-ում և բացատրված «ոտքի վրա ծառայող, տարբեր հանձնարարություններ կատարող սպասավոր», սակայն ծագումը նշված չէ, ՀԱԲ-ում⁶ տրված է *մուքերիկ* տարբերակը՝ բացատրվելով՝ «խոհարարի օգնական, որ է մոխիր թափող, թոնիր մաքրող ու վառող, ջուր բերող ևն անձը», այնուհետև մեկ բնագրային օրինակ է բերվել, որում, սակայն, պարզ չէ տվյալ նշանակությունը: Որպես հիմնավորում վերը նշված իմաստին վկայվել է հետևյալը. «Բառիս իմաստը տալիս է գուռ. – Երև. մուքուրիկ, մքրուկ՝ նոյն նշ.», ապա և հավելվել. «Ըստ այսմ անստոյգ է Քաջունի, հտ. Գ. 170 մուքերիկ «իշապան»: Համաձայն ՀՄԲ-ի⁷ բառն արաբական ծագում ունի և նշանակում է. «գրաստ, գրաստավար (եշ, ջորի քշող)» (արաբ. muqerik), ուստի և. «Ճիշտ չէ Աճառյանը (ՀՄԲ, 3, 365), որ «անստույգ» է համարում Քաջունու բացատրությունը՝ *մուքերիկ* «իշապան», *Հպաշի* – թուրք. «նահանգապետ» (Գ 19), *թանդաշի* – պարսկ. «հարկեր գանձող, հարկային վերակացու» (Գ 11) ևն:

Ապրուստի միջոց չունենալու, ունեցվածքը կորցնելու, կողոպուտի ենթարկվելու, տարբեր միջոցներով ձեռագիր ձեռք բերելու, իրենց, հարազատներին ու մերձավորներին որպես բարի հիշատակ և Աստծու ողորմությանն արժանանալու համար եկեղեցիներին նվիրատվություն անելու մասին շարադրանքը նախապայման է հանդիսացել գրական վկայություն հաղորդելու «ունեցվածք, ապրուստի միջոց, գույք» նշանակող օտար բառերի, ինչպես. *ըռզակ* – արաբ. «ապրանք, ինչք, հարստություն, պաշար». «Եւ քաղաքացիքս ամէն թողաք զտուն և *ըռզակ*» (Բ 274), «...գնեցի իմ հալալ *ըռզակովն* զսուրբ Աւետ/արանս/ յիշատակ ինձ, և կենակցին իմոյ Խասկանն» (Գ 128), *մուլք* – արաբ. «անշարժ գույք, կալվածք, սեփականություն». «Ես՝ Թաճդին, Հասանի որդիս, գնեցի զջաղացն Շամօյէն՝ հայի և տաճկի վկայութեամբ, և բնական *մուլք* տուի սուրբ Յովանիսին, ինձ բարի յիշատակ, և իմ ծնողաց...» (Ա 475), նաև՝ Ա 109, Ա 582 ևն, *ֆարգհանդայ* – պարսկ. «եկեղեցուն օգտագործման համար տրված գույք». «Ով որ հակառակէ յետ իմ անցման...դաւէ ու տալապ անէ՝

⁶ **Հ.Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 1971-1979:

⁷ **Գ. Զահուկյան**, *Հայերէն ստուգաբանական բառարան*, 2010:

յեկեղեցոյ *Ֆարգհանդէն* հանէ ու ցրէ՝ նա զանէծք օձին և զԿայենին, զՅուդային և զՆեոնան առցէ» (Գ 137), *սաղվաթ* – ըստ ՄՀԲ-ի՝ թուրք. *sevkiyat* < արաբ. «առաքում, ուղարկում, փոխադրում». «...եւ բեռին տալիքն ընդ *սաղվաթ* ընդ ամեն խարճ, մինչև Բասենու սինօն՝ զան որ պիտ առնուն՝ զան յիստակ գրեն» (Ա 345). այն նաև արձանագրված է ՀԼԲԲ-ում⁸ և բացատրված է «հեռու տեղից բերված նվեր», *շուքրանայ* – արաբ., պարսկ. «շնորհակալության փոխարեն վարձատրություն». «Եւ առի *շուքրանայ* գրոցս ԲՌ դահեկան» (Ա 15), *ամանաթ* – արաբ. «ավանդ, պահ տրված իր» (Գ 132), *արմադան* – պարսկ. «նվեր, ընծա (հատկապես հեռու տեղից բերված)» (Գ 10), *նաֆադայ* – արաբ. «ապրուստ, կենսամիջոց, ուտեստ» (Ա 626), *խազինայ* – արաբ., պարսկ. «զանձ, հարստություն» (Բ 443, Բ 444) են: Հիշատակարաններում լայնորեն գործածվել է *ռիսլ* (Ա 580 են) բառը, որը նշանակում է «կրոնական հաստատությանը՝ եկեղեցուն նվիրված անշարժ կալվածք՝ գույք՝ առարկա»: Ուսումնասիրված հիշատակարաններում տեղ են գտել նաև վերջինիս հետևյալ հնչյունական տարբերակները՝ *ռիսֆ* (Բ 405, Գ 136), *ռդֆ* (Ա 528), *ռդբ* (Ա 345), *վախն* (Ա 449), *վախմ* (Գ 130), *վադֆ* (Բ 49), *ռհֆ* (Ա 402) (< արաբ., պարսկ. *vaqf*, *vağf*):

Պատերազմական իրավիճակում ապրող, պաշարման, գերեվարության ու դաժան հարկահանության ենթարկվող սովյալ ու տառապյալ հիշատակագիրները չէին կարող անհաղորդ մնալ ողբալի իրականությանը և մեզ չավանդել պատմական կարևոր տեղեկություններ ժամանակի իրադարձությունների և դրանց աղետալի հետևանքների մասին: Ահա և այդպիսի նկարագրությունները ուղեկցվել են համապատասխան օտար բառերի կիրառմամբ: Այսպես. *խասար* // *հիսար* – արաբ. «բերդի, քաղաքի պաշարում» (Ա 344), *հիլար* – պարսկ. «ասպատակ, արշավանք, հարձակում» (Ա 461), *սուրկուն* – թուրք. «աքսոր, տարագրություն» (Բ 389), *խադի* // *եադի* – արաբ. «թշնամի, ապստամբ» (Գ 96, Գ 236), *շիւան* – պարսկ. «ողբ, սուգ». «Զանբաւ կոծս և զսուգս և զաղիողորմ *շիւան* լալոցն ով կարէ պատմել և ընդ գրով արկանել» (Բ 39), *դազայ* – արաբ. «աղետ,

⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2012:

փորձանք, չարիք»։ «Ի թվականիս Հայոց ՋԼԶ., յաւուրքն, որ զԲաղէշ *ղազայ* կանէր քուրդ» (Գ 98), նաև՝ Ա 280, Գ 81 նն. բառն արձանագրված է նաև ՀԼԲԲ-ում՝ Կր., Մշ., Սս. բարբառների նշումով, *փիատայ* – պարսկ., թուրք. «հետևակ»։ «Եւ ած ի վերայ տաճիկ մի *փիատայ*, և փախստական արարեալ զկրօնաւորքս» (Գ 259) նն։

Մեկ այլ խումբ են կազմում պետական, իրավական ոլորտը ներկայացնող փոխառությունները. *ասախ* – թաթար., պարսկ. «օրենք» (Ա 282), *հուք* – արաբ., պարսկ., թուրք. «հրաման»։ «*Ասախ* արար, *հուք* և հրաման ոչ կոտորել զամենեսեան» (Ա 282), *խրեր* // *խրեր* – արաբ. «վճիռ, որոշում, կարգադրություն, դատավճիռ» (Ա 28, Ա 445, Բ 12), *դամղայ* // *թամղէ* – պարսկ., թուրք. «մաքս, մաքսատուրք, առևտրաարդյունաբերական հարկ»։ «Եւ այլ եկեղեցեացն ձիթագին տուինք *դամղին* փոխան» (Գ 11) , «Որ զձկան *թամղէն* և զընկուզի բաղլեցին» (Բ 404) նն։

Ամիրդովլաթ Ամասիացին «Ուսումն բժշկութեան» աշխատության հիշատակարանում ակամա անդրադարձել է բժշկությանն ու դեղագործությանը վերաբերող մի քանի տերմինների։ Նախ *բժշկարան* կամ մի շարք հիշատակարաններում շրջանառվող *հեքիմարան* բառի փոխարեն գործածել է նշյալ իմաստն ունեցող *ախրապատին* արաբական բառը, այնուհետև ներկայացրել նշված բնագավառին վերաբերող նույնպես արաբական ծագում ունեցող հետևյալ օրինակները՝ *յատար* – արաբ. «դեղագործ» (Բ 115) *յաշեայ* – արաբ. «բուսաբան» (Բ 115), *թարքիպ* – բաղադրյալ «դեղեր պատրաստելու եղանակները» (Բ 116, Բ 286), արաբ., պարսկ., թուրք.՝ *մուֆրատար* // *մուֆատար* // *մֆուրատար* – «դեղագիտություն»։ «ի Ախրապատին առանց *մուֆատարի* չի լինար» (Բ 115), ըստ երևույթին՝ տրված տարբերակային ձևերն առկա են միննույն հիշատակարանում, որտեղից էլ ամրագրվել են ՄՀԲ-ում։

Հիշատակարաններում, բնականաբար, տեղ են գտել նաև առօրյա երևույթներ, փոխհարաբերություններ և տարբեր հատկանիշներ անվանող փոխառություններ, որոնք հատուկ են նշված ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին։ Այսպես՝ *խալապա* – արաբ. «վեճ, վիճաբանություն» (Գ 399), *դաւէ* // *դաւի* – արաբ. «վեճ, վիճաբանություն» (Ա 8, Ա 22, Բ 329, Գ 361 նն), որից և՛ *դաւեքար* -պարսկ. «զանգատավոր, պահանջատեր»։

«Այսօրէ յետ անտարանիս ոչ ով դաւեքար չելնի, ոչ իմոց, և ոչ օտարաց» (Ա 422), **զահմաթ** – արաբ. «նեղություն, դժվարություն, հոգս» (Ա 386, Ա 548, Ա 607 նն), **դաստէ** // **դաստայ** – պարսկ. «մի ձեռք, կապ, կապոց, փաթեթ» (Բ 34, Գ 119), **պէթաթ** – պարսկ., թուրք. «վատթար» (Գ 115), **սալլահ** – արաբ. «հիմար, ապուշ» (Ա 145), **ջուխտ, ջուխտակ** – արաբ. «գույգ» (Բ 87, Բ 215), **ջուխտակ** ու **ֆրտ** – արաբ. «գույգ ու կենտ» (Ա 129), **քուլիճայ** – արաբ., թուրք. «գուտ, անխառն, մաքուր» (Ա 629), **մախնուր** – արաբ. «գինով, հարբած, խումար» (Գ 417), **մաշխուլ** // **մաժդուլ** – արաբ. «զբաղված, զբաղված» (Բ 80, Գ 486), **բախիլ** – արաբ., պարսկ. «նախանձոտ, ժլատ» (Ա 285), **նադտ** – արաբ. «կանխիկ» (Բ 67), **մալուլ** – արաբ. «տխուր» (Գ 521), **մասթուր** – արաբ. «պարկեշտ, մաքրաբարո, անարատ» (Գ 129), **մահրում** // **մահրամ** – արաբ. «զրկված» (Ա 363, Բ 249, Գ 71), **ջումլայ** – արաբ., պարսկ. «գումար, ամբողջը» (Գ 329). այս բառն արձանագրված է նաև ՀԱԲ-ում, որտեղ նշված է. «հնապէս մէկ անգամ գործածել է Կոնկտ. հրտր. Էմինի..., յետին հայերէնի մէջ անելի սովորական է». Աճառյանի գրառումից պէտք է հետևություն անել, որ այն ավելի վաղ ավանդված բառ է, ուստի չպէտք է տրվեր ՄՀԲ-ում, չնայած որ մեզ հայտնի չէ, թե ինչու են այդկերպ վարվել վերջինիս հեղինակները: Ակնհայտորեն **ջումլայ** բառը կապված է արդի հայ բարբառներում գործածվող **գյումրա** «ամբողջը, ամբողջությամբ, առատորեն» բառի հետ, սակայն վերջինս անգամ ՀԼԲԲ-ում վկայված չէ:

Առկա են նաև այլ լեզուներից փոխառյալ հետևյալ բառերը՝ **ֆրա** – իտալ. fra < լատ. frater «հոգևոր եղբայր (ունիտորական միաբաններին տրված կոչում)» (Ա 16, Գ 15), **սինսոն** – հուն. «սահման, սահմանագիծ» (Ա 345):

Մի խումբ փոխառյալ բառեր մասնակցել են բառակազմությանը. դա վկայում է նշյալների՝ ժողովրդախոսակցական լեզվի մեջ տարածվածության մասին: Հատկապես մեծ թվով են ներկայանում օտար արմատներից բայական վերջավորությունների միջոցով և բայերի հարադրությամբ կազմված համադրական և հարադրական բայերը: Ահա օրինակներ՝ **համադրական բայեր**՝ **հսարել** // **խսարել** // **հեսարել** – «պաշարել» (< արաբ., Ա 287, Ա 515 նն), **մլքել** – «տիրել, սեփականացնել» (< արաբ., թուրք., պարսկ., Ա 376), **բաղլել** – «անվավեր դարձնել, չեղյալ համարել» (< արաբ., Բ 405), **պարիշիլ** –

«հաշտվել» (<թուրք, Գ 237), *խալտիլ* – «սխալվել» (<արաբ., Գ 359), *խարջել* // *խարճել* – ծախսել (<արաբ., պարսկ., Գ 403, Ա 632) ևն, *հարադրական բայեր՝ խաս առնել* – «որևէ կալվածք ենթակա դարձնել արքունիքին» (<արաբ., պարսկ., Ա 337), *թարխան առնել* – «հարկերից ազատել» (<պարսկ., Ա 337). «Յոյժ ողորմած էր ազգիս Հայոց, ևս առաւել մեր գեղիս Ագուլեաց, իւր *խաս արար*, և մէկ տարի *թարխան արար*» (Ա 337), *բթըլմալ առնել* – «բռնագրավել պետական գանձատան օգտին» (<արաբ., պարսկ., Գ 293), *սապապ լինել* – «պատճառ դառնալ» (<արաբ., պարսկ., Ա 402), *տամահ անել* – «աչք ունենալ մի բանի վրա, փափագել» (<արաբ., պարսկ., թուրք., Բ 277), *բունիաթ դնել* – «հիմնադրել, սահմանել» (<պարսկ., Ա 566), *ջապիւր կտրել* – «պարսպել, պարիսպ քաշել» (<պարսկ., Գ 236). նույնական ծագում ունի հայերենի բարբառներում տարածված *չափառ* բառի հետ, որն ամրագրված է ՀԼԲԲ-ում, *սայար լինել* – «սատար լինել», նպաստել (<պարսկ. saye, Գ 339), *տալապ անել* – «պահանջել, ցանկանալ» (<արաբ., Գ 137), *մուրատ տալ* – «իղձը կատարել» (արաբ., պարսկ., թուրք., Գ 81) ևն: Այնուհետև նկատվում են հետևյալ կազմությունները՝

Ան-՝ անասախ – «անօրեն, անիրավ» (< թաթար., թուրք., Ա 281), *անմըրուաթ* – «անգույթ» (<արաբ., Ա 282). գործածվել է նաև նույնի օտար նախածանցով կազմությունը՝ *պէմրուաթ* – պարսկ. «անգույթ» (Գ 538), *անշադաւաթ* – «անսիրտ, անխիղճ, դաժան» (<արաբ., պարսկ., Ա 282), *անսլէհ* – «անզեն» (<արաբ., Բ 169):

-*Ուրթիւն՝ թասպուրթիւն* – «մոլեռանդություն, անհանդուրժողություն» (<արաբ.,

Ա 353, Գ 109), *տամահուրթիւն* – «ազահություն, ընչաքաղցություն» (<արաբ., թուրք., պարսկ., Ա 345), *դարաչուրթիւն* – «զրպարտություն, սուտ մեղադրանք» (<թուրք., Գ 137) ևն:

Բառաբարդում՝ *հասրաթ* բառից՝ *հասրաթամեռ* // *հասրաթամահ* «կարոտից մեռած, կարոտամեռ» (<արաբ., պարսկ., թուրք., Բ 6, Բ 235, Գ 142, Գ 255):

Աննշայ բառը կազմված է *ան-* ժխտական նախածանցով և *նշայ* բառով, որն արաբական փոխառություն է և նշանակում է «օսլա»: Վերջինից կազմվել է նաև *նշայել* «օսլայել», որն արձանագրվել է թե՛ նախորդ դարերի և թե՛ 15-րդ դարի հիշատակարաններում (Բ

418, Գ 339): *Նշայ* և *նշայել* բառերը նշված բացատրություններով և բնագրային համապատասխան վկայություններով արտացոլվել են նաև ՄՀԲ-ում: Մինչդեռ *աննշայ* բառը վերջինում բացատրվել է «անպետք, անորակ»՝ ելնելով հենց հիշյալ վկայությունից. «Այս թուղթս և մեկ այլն *աննշայ* է, զինչ օգուտ է գրելն» (Բ 114): Ընդ որում՝ վերջինիս մեկ գործածություն էլ առկա է 13-րդ դարի հիշատակարաններից մեկում. «Խոշորութեան գրոյս չմեղադրել, զի թուխթս *յաննշա* է»⁹: Ինչպես ակնհայտ է, ՄՀԲ-ի բացատրությունը սխալ է՝ հենված կոնտեքստից բխող մոտավոր բացատրության վրա:

Դիտարկված փոխառյալ բառերը, համաձայն ՄՀԲ-ի, գերակշիռ մասով տվյալ ժամանակաշրջանի համար եզակի վկայություններ են: Վերջիններս եթե ոչ այդ շրջանում, ապա հետագայում լայնորեն կիրառվել և ամրակայվել են այս կամ այն բարբառում, ուստի և արձանագրված են ՀԼԲԲ-ում: Շատերն առանձնակի հարագատությամբ գործածվում են նաև առօրյա խոսակցական լեզվում: Փաստորեն հիշատակարանները մեծ կարևորություն ունեն նաև օտար բառերի մուտքը, տարածվածությունը համապատասխան ժամանակային կտրվածքով պարզելու առումով: Այսպիսի ուսումնասիրությունները, անշուշտ, լույս կսփռեն հայոց լեզվի պատմության մի շարք կարևոր հարցերի վրա:

Хачатрян Валентин -Использование заимствованных слов в средне-армянском языке в колофонах 15-го века.- В статье рассмотривались те заимствованные слова в колофонах 15-го века, которые согласно словарям были письменно зафиксированы в средноармянском языке. Последние были классифицированы по значениям, а также был произведен анализ отдельных единиц.

Khachatryan Valentin -The Usage of Loan Words in Middle Armenian in the Handwritten Colophons of the 15th Centaury. - In this article there have been discussed the loan words used in the handwritten colophons which have been considered as literary words due to the dates of dictionaries. There have been done the semantic classification and analyzing of separate units.

⁹ Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ* (ԺԳ դար), կազմ. Ա. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 377:

**ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԲԱՌԱՄԿԶԲԻ ԲԱՂԱԶԱՅՆԱԿԱՆ
ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայերենի բարբառներում հպական ու հպաշփական բաղաձայնները ըստ ձայնի և աղմուկի հարաբերության ունենում են համակարգային տարբեր դրսևորումներ, ինչը և հիմք է դարձել բարբառների հնչյունաբանական դասակարգման¹: Բայազետի բարբառն ունի քառաստիճան համակարգ՝ ք, բ, պ, փ, ընդ որում՝ այդ համակարգը տարբեր կերպ է դրսևորվում բարբառի հինհայերենյան և նոր բառաշերտերում: Եթե հինհայերենյան բառաշերտի² բառակցքում բացակայում են պարզ ձայնեղները, և հանդես են գալիս շնչեղ ձայնեղներ (ք՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛), ապա նոր բառապաշարում ընդհանրապես բացակայում են շնչեղ ձայնեղները, և բառակցքում հանդես են գալիս պարզ ձայնեղներ (ք, գ, դ, ձ, ջ): Դրսևորումների տարբերություններ կան նաև բառամիջում ու բառավերջում: Բայց առավել հետաքրքրական է, որ հպականների ու հպաշփականների համակարգը Բայազետի բարբառի բառակցքում հանդես է բերում նաև զուգորդելիության յուրահատկություններ, այսինքն՝ բառակցքի (հասկանալի է, որ խոսքը վերաբերում է նաև միավանկ բառերին) հպական կամ հպաշփական որևէ բաղաձայնի միշտ չէ, որ կարող է հաջորդել նույն կարգի ցանկացած այլ բաղաձայն³: Այդ օրինաչափությունները տարբեր են հինհայերենյան և նոր բառաշերտերում:

Ըստ այդմ՝ Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում գործառում են բառակցքում հպական ու հպաշփական բաղաձայնների զուգորդման հետևյալ օրինաչափությունները.

¹ Տե՛ս **Ա.Նարիկյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 57-62, 120-131:

² Հինհայերենյան արմատներով ձևավորված բարբառային բառերը ևս վերագրում ենք այս բառաշերտին:

³ Բառակցքի հպական կամ հպաշփական երկու բաղաձայնների միջև հանդես եկող ձայնավորը որևէ դեր չունի զուգորդելիության օրինաչափությունների ձևավորման գործում:

ա) Բառասկզբի շնչեղ ձայնեղ բաղաձայններին որպես կանոն հաջորդում են շնչեղ խուլ հպականներ ու հպաշփականներ (բ'աց, բ'ոց, բ'ուք, բ'ուք, գ'աթա, գ'ացի, գ'ութան, ձ'ուք, ձ'էթ): Չայնեղներն այս դիրքում բացառված են: Այստեղ նախնական ձայնեղներն էլ են շնչեղ խլացել, ինչպես՝ բ'ափելական (բաբելական), գ'աքաթ (գագաթն), գոք (գոգ), գոթի (գողի), դ'աթար (դադար), դ'ըթում (դդում), ձ'օք (ձագ), ձ'իք (ձիգ), ջ'ոչ (ջոջ), գ'ըթալ (գդալ): Այն, որ բարբառումս բառասկզբի շնչեղ ձայնեղին չի կարող հաջորդել ձայնեղ հպական կամ հպաշփական, հավաստվում է ոչ միայն օրինակների բացակայությամբ, այլ նաև հնչյունափոխական հակադարձ իրողության առկայությամբ: Այսպես, *գիտենալ* բայը բարբառումս պետք է դրսևորվեր շնչեղ ձայնեղ *գ'* հնչյուն ունեցող ձևով, մանավանդ որ նույն արմատով ունենք *գ'իտունիկ* բառը: Սակայն բառամիջի *ե* ձայնավորի անկումով *տ* – ն հայտնվել է *ն* – ի հարևանությամբ և բարբառումս գործող օրինաչափությամբ ձայնեղացել, և որպեսզի չձևավորվի անհամատեղելի հաջորդականություն (շնչեղ ձայնեղ հպական – ձայնեղ հպական), նախորդ բաղաձայնը վերածվել է պարզ ձայնեղի (գ'իտենալ > գ'իտնալ > գիդնալ), ու չնայած այնուհետև տեղի է ունեցել նաև *ն* – ի անկում, բաղաձայնական հաջորդականությունը պահպանել է իր ձևը բերած որակը՝ *գիդալ*:

Շնչեղ ձայնեղներին բարբառում սակավ դեպքերում են հաջորդում պարզ խուլեր (բ'օպիկ, գ'աձ, գ'ետ, գ'ետին, դ'ատել /վատություն անել/, ձ'ուկ, ջ'օկ, գ'իտունիկ):

բ) Բառասկզբի շնչեղ խուլերին նույնպես որպես կանոն հաջորդում են շնչեղ խուլեր (թափ, թեք, թըթու, թիթըմնեկ, թոք, թուր, թուրօկ, չափ, ցեց, ցից, փափուկ, փեթօկ, փըթիր, փըթըթել, փըչել, քիթ, քիչ, թեփ և այլն): Այս դիրքում պարզ խուլեր շատ քիչ են հանդիպում (փատըտել, թիկունք, քած, քըծիր), մանավանդ որ նախնական խուլերը հիմնականում ձայնեղացել են (ցաձըր, փագ, փեդ, փիդել, փիդուռ, փըդել):

գ) Բառասկզբի պարզ խուլերին առավել հաճախ հաջորդում են նույն կարգի բաղաձայններ (ծօկ, ծէծել, ճիճըմնեկ, ծըպկ, կօկուդ, կէծակ, կօպիկ, կօտու, կըճեփ, կօճակ, կուտ, կըպել, կըտուր, ճօկաթ, ճիպոթ, ճըկուր, ճիճու, ճուտ, պօկաս, պօպընձվել, պօճառ, պըտի, տօկ, տօպկել, տիկ և այլն): Ավելի քիչ են այն դեպքերը, երբ

հաջորդող բաղաձայնի դերում շնչեղ խուլեր են (ծփ, ծեփ, ծոց, կօթ, կօքավ, կրթան, կոթ, ճոթ, ճրչալ, ճութ, տփակ, տըփել, տըքալ, ծըփալ, կութ): Սակավ բառերի այս դիրքի նախնական ձայնեղները վերածվել են շնչեղ խուլերի (պօքել, տեքըր, ծեք, ճրքնավոր), և այդպիսով այս դիրքում ևս նախնական ձայնեղները բացառվել են: Սակայն ձայնեղացման հետագա գործընթացը ընդգրկել է նաև այս դիրքի խուլերը որոշ բառերում (ծըձաղ, կօղդել, ճրբըղվել, ճրբուռ, պօղայել, պօղըռել, պօղասխան, պօղարաք):

Այսպիսով, հինհայերենյան բառաշերտում բառասկզբի շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ հպականներին ու հպաշփականներին որպես կանոն հաջորդում են շնչեղ խուլ բաղաձայններ, իսկ պարզ խուլերին՝ պարզ խուլեր: Ծնչեղ ձայնեղներին պարզ ձայնեղներ հաջորդել չեն կարող, շնչեղ խուլերին և խուլերին ձայնեղներ հաջորդում են նախկին խուլերի ձայնեղացման արդյունքում: Ծնչեղ ձայնեղներին ու շնչեղ խուլերին պարզ խուլեր սակավ են հաջորդում, ավելի շատ են այն դեպքերը, երբ պարզ խուլերին հաջորդում են շնչեղ խուլեր: Այլ կերպ ասած՝ օրինաչափ են հետևյալ հաջորդականությունները՝ շնչեղ ձայնեղ+շնչեղ խուլ (բ'աց), շնչեղ խուլ+շնչեղ խուլ (թափ), պարզ խուլ+պարզ խուլ (պօտ), պարզ խուլ+շնչեղ խուլ (կօթ), հնչյունափոխությունների հետևանքով ձևավորված հաջորդականություններ են՝ շնչեղ խուլ+ձայնեղ (փագ), պարզ խուլ+ձայնեղ (պօղասխան): Սակավ դեպքերում իրացվող հաջորդականություններ են՝ շնչեղ ձայնեղ+պարզ խուլ (ձ'ուկ), շնչեղ խուլ+պարզ խուլ (քըծիք), իսկ շնչեղ ձայնեղ+ձայնեղ հաջորդականությունը (բ'աբ) բացառված է:

Ընդհանուր առմամբ երևան է գալիս բառասկզբի դիտարկվող բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման մի օրինաչափություն, ըստ որի՝ որպես կանոն գուգորդելի են լարվածությամբ նույնական կամ մոտ հնչյուններ⁴, կամ ավելի լարված հնչյուններին հաջորդում են պակաս լարված հնչյուններ, այլ կերպ ասած՝ ավելի

⁴ Ա.Հ.Խաչատրյանը ըստ լարվածության հատկանիշի կատարում է բաղաձայնների այսպիսի խմբավորում. §1. Ուժեղ (լարված) խուլեր՝ պ, տ, կ, ծ, ճ, 2. թույլ ձայնեղներ՝ բ, գ, դ, ձ, ջ, 3. թույլ շնչեղներ՝ փ, թ, ք, 4. լարված խուլ շփականներ՝ ֆ, ս, շ, խ, հ, 5. թույլ ձայնեղ շփականներ՝ վ, գ, ժ, դ՝ (Ա.Հ.Խաչատրյան, *Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն*, Ե., 1988, էջ 91) :

սովորական է բառակցքի բաղաձայնական հաջորդականություններում արտասանական լարվածության պահպանումը (երբ իրար հաջորդող բաղաձայնները ըստ լարվածության նույնական են) կամ նվազումը (երբ հաջորդող բաղաձայնը նվազ լարված է, քան նախորդողը), մինչդեռ լարվածության աճը (երբ հաջորդող բաղաձայնը ավելի լարված է, քան նախորդողը) անսովոր է կամ հազվադեպ: Ընդ որում՝ այդ օրինաչափությամբ կարող են բացատրվել ինչպես շնչեղ ձայնեղներից հետո ձայնեղների շնչեղ խլացման, այնպես էլ խուլներից ու շնչեղ խուլներից հետո խուլների ձայնեղացման գործընթացները (երկու դեպքում էլ տեղի է ունեցել բաղաձայնի անցում ավելի պակաս լարվածության հնչյունի՝ բ>փ, պ>բ), մանավանդ որ հակառակ գործընթացներ (շնչեղ խուլների ձայնեղացում, ձայնեղների խլացում) տեղի չեն ունեցել:

Բայազետի բարբառին պատմաաշխարհագրականորեն մերձավոր Արարատյան, Մշո, Խոյ-Մարադայի, Վանի և Դիադինի բարբառներից որևէ մեկում բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման կամ հնչյունափոխական իրողությունների դրսևորման արտասանության լարվածությամբ այսպիսի պայմանավորվածություն չենք նկատում: Սակայն Բայազետի բարբառում վեր հանված իրողությունները թույլ են տալիս ավելի ընդհանրական բնույթի որոշ եզրահանգումներ կատարել:

1. Գրաբարի բառապաշարի՝ ձայնեղ հպականներով ու հպաշփականներով սկսվող բառերի դիտարկումը⁵ ցույց է տալիս, որ բնիկ խիստ սակավաթիվ բառերում (գոգ /ասա՛/, ձագ, գեջ, դադար, դեղնել) է երկրորդ բաղաձայնը ձայնեղ հպական կամ հպաշփական: Ընդ որում՝ *դադար* և *դեղնել* բառերը կրկնավորներ են՝ դար-դար⁶, դև-դև⁷: Նման հաջորդականություններ կան բնաձայնական մի քանի բառում (բաբե, բաջաղ, բբել, բբչալ, բջել, դդին)⁸, գործածական մի

⁵ Ըստ Հ.Աճառյանի «Ձայերեն արմատական բառարանի» (այսուհետ՝ ՀԱԲ) ընձեռած նյութի:

⁶ Տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 610-611:

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 645:

⁸ Բայազետի բարբառում բնաձայնական բառերի սկզբում հանդես են գալիս պարզ ձայնեղներ, ինչպես՝ բօռալ, բօրբռալ, գրոգրալ, դրնդրնալ, բրռալ, բրբրբռալ, բբլ-բբլալ և այլն:

շարք փոխառյալ (բագին, բադ, բդեշխ, գագաթն, գուր) ու չստուգաբանված (բիբ, բջիջ, գաբ, գգուել, գոգ, դագադ, դդում, դեգերել, ձագար, ձիգ, ջոջ) բառերում, սակայն ավելի հաճախ հանդիպում են միանգամյա կամ հազվադեպ վկայությունն ունեցող փոխառյալ, անհայտ նշանակությամբ ու ծագումով, միայն մեկ երկու հանդիպող և նման այլ բառերում (բաբ, բաբայ, բադիան, բբոօշ, բդեդ, բդուգ, բեդեկ, բիբկան, բոբոդոն, բոբ, գաբասա, գադիշ, գբայաթ, գեդդուր, գիգ, գոբադին, գուբբայ, գուգ, դաբբան, դագինիճ, դգուոն, դեգան, դդան, դուդան, ձագի, ջաբոցել և այլն): Հասկանալի է, որ բառերի վերջին խումբը որևէ կերպ չի կարող դեր խաղալ գրաբարի բառասկզբի հնչյունական հաջորդականությունների ձևավորման առանձնահատկությունները մեկնաբանելիս, սակայն բնիկ, նաև փոխառյալ ու չստուգաբանված բառերում հաջորդող ձայնեղ բաղաձայնների խիստ սակավությունը մեզ թույլ է տալիս ընդհանրություն տեսնել Բայազետի բարբառի և գրաբարի բառասկզբի հնչյունական հաջորդականությունների ձևավորման օրինաչափություններում և ընդունելի համարել այն տեսակետը, համաձայն որի՝ գրաբարի բառասկզբում գործառել են շնչեղ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ⁹, որոնցից հետո, ինչպես Բայազետի բարբառում, ձայնեղ հպականների ու հպաշփականների գործառությունը արտաբերականորեն խոչընդոտվել է:

2.2. Մուրադյանը բառամիջում ու բառավերջում հայերենի ձայնեղների շնչեղ խլացումը համարում է թերևս այլ հնչյունափոխական երևույթների մեջ ամենահինը, «...որ տեղի է ունեցել դեռևս այն ժամանակներում, երբ ձայնեղները շնչեղ արտասանություն ունեին նաև բառամիջի և բառավերջի դիրքերում»¹⁰, և այդպիսով փորձ է արվում հիմնավորելու ձայնեղների շնչեղ խլացումը ենթադրվող խլացման փոխարեն: Մինչդեռ Բայազետի բարբառում մեր դիտարկած՝ բառի արտասանության ընթացքում արտաբերական լարվա-

⁹ Կարծում ենք՝ ինչպես Բայազետի բարբառում, գրաբարում ևս այս օրինաչափությունից բացառություն են կազմել ձայնարկություններն ու բնաձայնական բառերը՝ իրենց սկզբում ունենալով ձայնեղներ:

¹⁰ Տե՛ս **2. Մուրադյան**, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, *Հնչյունաբանություն*, Ե., 1982, էջ 299:

ծության աստիճանական նվազման օրինաչափությունը¹¹ թույլ է տալիս ենթադրել, որ հայերենի բառամիջում և բառավերջում ձայնեղների պատմականորեն շնչեղ խլացումը նույնպես կարելի է բացատրել լարվածության թուլացմամբ, եթե նկատի ունենանք, որ շնչեղ խուլերը ձայնեղների համեմատ պակաս լարված հնչյուններ են: Ուստի տվյալ դիրքերում շնչեղ խլացումը ամեննին էլ չի ենթադրում նախնական շնչեղ ձայնեղների առկայություն: Մյուս կողմից, հիշյալ օրինաչափության գործողության պայմաններում ձայնեղները չէին կարող վերածվել ավելի լարված խուլ բաղաձայնների: Այսպիսով, հայերենի բառամիջում և բառավերջում նախնական ձայնեղների պատմական փոփոխությունը և շնչեղ խուլերի վերածումը հետևանք է բառի արտասանության ընթացքում արտաբերական լարվածության աստիճանական թուլացման միտումի գործողության:

Ինչ վերաբերում է Բայազետի բարբառի նոր բառաշերտին, ապա այստեղ գործառում են հետևյալ օրինաչափությունները.

ա) Բառասկզբի ձայնեղներին հաճախ հաջորդում են նույն որակի բաղաձայններ (բ°բ°, բ°դեվ°, բաջանաղ, բեգրել, բեջրել, բեջուո°, բիձ°, բուղ, բոգ, բոդ, գ°գ°յիչ, գ°դ°, գոջի, դաբաղ, դ°բըր, դ°դ°րգուն, դըբըլխուս, ձ°ձ°, ջ°գ, ջ°ջի, ջէբ, ջէջիմ, ջիգ°ր), բայց այդ դիրքում սակավ չեն նաև շնչեղ խուլերը (բաթմիշ, բէչ°, բըթել, բիթոն, բիթուն, բուրուկկա, դաթան, դաչա, դուք°ն, դիք, դոփիկ) և պարզ

¹¹ Ի դեպ, արտասանության թուլացման վերաբերյալ դիտարկում ունի նաև Է.Աղայանը, սակայն նա այդ երևույթը դիտարկում է միայն բառավերջում՝ պայմանավորված բառերի միջև դադարին արտասանական ապարատի նախապատրաստումով: «Այդ նախապատրաստման հետևանքով էլ, ահա,- գրում է Է.Աղայանը,- վերջին հնչյունի արտասանության մեջ առաջանում է որոշ թուլացում, կամ ուղղակի բառի արտասանությունը դադարում է նախքան վերջին հնչյունն արտաբերելը: Եթե թուլացումն արտահայտվում է միայն օդի հոսանքի ուժի թուլացմամբ, ապա դա կարող է առաջ բերել ոչ թե հնչյունի փոփոխություն, այլ միայն հնչյունի ուժգնության փոփոխություն, բայց եթե բառավերջի հնչյունը ձայնեղ է, այդ թուլացմանը հաճախ կարող է միանալ նաև ձայնալարերի տատանումների դադարումը ավելի շուտ, քան հարկավոր է, որ պայմանավորված է դարձյալ բառավերջի դադարին նախապատրաստվելով: Այս դեպքում, բնականաբար, բառավերջի ձայնեղ բաղաձայնը գրկվում է ձայնից, որի շնորհիվ էլ վերածվում է խուլի: Այդ երևույթը հիանալի կերպով կարելի է ցուցադրել ռուսերենում, ուր բառավերջի ձայնեղներն արտասանվում են իբրև խուլեր» (Է.Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 266):

խուլերը (բակ, բատարէ, բրկըռտալ, բիկ, բուտկա, դակումենտ, դակազատ, դակումկա, գուտար):

բ) Շնչեղ ձայնեղներին նույնպես ավելի հաճախ հաջորդում են նույն որակի բաղաձայններ (թաթ, թ^օփուկ, թ^օք, թիք^օ, թութուզ, թութուն, թութուշ, թօթխար, թօթօլ, թօփ, չ^օթին, չափալաղ, չ^օք, չիթ, չրփիկ, չրփլաղ, չրփխել, չրքել, չօփ, չօք, ցեթ, ցեփ, ցրփնել, ցուցանք, փաթուսխա, փաչա, փէքօլ, փըթիր, փըթխել, փութ^օ, ք^օչ^օլ, ք^օփ^օն^օկ, ք^օքուկ, քէչ^օ, քիքիր, քօշ, քօփ^օկ, քօք): Այս դիրքում հազվադեպ չեն ձայնեղները (թաբախ, թ^օբ^օռուկ, թ^օդ^օ, թըբէթ, չաբալամիշ, չ^օգուշ, չ^օդըր, չիբան, չօբան, ցիգան, փէջ, փուջ, փիձել, փուդ, փօղրաթ, ք^օբ^օ, քըջուջ, քուդի), բայց սակավ են հանդիպում պարզ խուլեր (թէտկել, չէտվեր, չօտկ, փէճատ, քօծ):

գ) Թէն պարզ խուլերից հետո նույնպես առավել հաճախադեպ են նույն որակի բաղաձայնները (ծըծան, ծըպտուն, կ^օկափորել, կ^օտանգա, կըճեփ, կըճէ, կիտուռ, կուճուռել, կօկօլ, կօտկօտ, ճ^օպ, ճըտել, ճիկ, ճիճըռնեկ, ճուճին, պ^օճինգա, պ^օպիլօզ, պեծ, պ^օճ, պեճ, պըտուկ, պուճաղ, պուճուճակ, պուպուկ, տ^օպակ, տըկըռ, տիկին, տիպիշնի, տիտօղիկ, տուճ, տուտուզ, տօտօքի), բայց սովորական են նաև շնչեղ խուլերը (ծըփել, կ^օթա-կութա, կ^օչաղ, կ^օփաղ, կըթուն, կըփչոն, կըփըռտոց, ճըթըռել, ճըփճըփալ, ճոթ, պ^օչել, պէչէնի, պօթ, պօչուկ, տ^օփել, տըփել, տըքալ) և ձայնեղները (ծըգլըվըգել, կ^օբլի, կ^օդըր, կըդ^օ, կըդէ, կըդի, կուզլա, կուզում, ճըբռուկ, ճըգըռել, պ^օգրիշկա, պ^օդայական, պ^օդըռուշկա, պ^օդօշ, պէդալ, պէդլի, պըդդունց, պուդրի, տ^օբուրէտկա, տըզլոզ, տօբրակ, ծ^օբլի):

Փաստորեն, նոր բառապաշարում թէն ավելի զուգորդելի են ըստ ձայնի և աղմուկի նույնական հպականներն ու հպաշփականները, սակայն ըստ այդ հատկանիշի զուգորդելիության սահմանափակումներ հիմնականում չկան: Միայն շնչեղ խուլերից հետո դիրքը սակավ գործածական է մնացել պարզ խուլերի համար:

Բայագետի բարբառի հինհայերենյան և նոր բառաշերտերում բառակզրի դիտարկվող բաղաձայնական հաջորդականությունների դրսևորումների գուցադրումը, այսպիսով, երևան է հանում առավել ընդհանուր հետևյալ իրողությունները.

ա) երկու դեպքում էլ ավելի զուգորդելի են ըստ ձայնի և աղմուկի հարաբերության նույնական հպականներն ու հպաշփա-

կանները, բացառություն են կազմում շնչեղ ձայնեղները, որոնք նույնական հնչյունների չեն հաջորդում, որովհետև հանդես են գալիս միայն բառասկզբում.

բ) եթե հին բառաշերտում հաջորդող դիրքում ձայնեղ բաղաձայններ գրեթե չեն հանդիպում կամ էլ հանդիպում են ձայնեղացման արդյունքում, ապա նոր բառաշերտում ձայնեղ հպականները և հպաշփականները զուգորդելի են նախորդող և՛ ձայնեղների, և՛ շնչեղ խուլերի, և՛ խուլերի հետ.

գ) և՛ հինհայերենյան, և՛ նոր բառաշերտերում հաջորդող շնչեղ խուլերը զուգորդելի են նախորդող ձայնեղ, շնչեղ խուլ և խուլ հպականների և հպաշփականների հետ.

դ) եթե հինհայերենյան բառաշերտում պարզ խուլեր սակավ էին հանդիպում շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ հպականներից ու հպաշփականներից հետո, ապա նոր բառապաշարում ձայնեղներից հետո խուլերը սովորական են, սակայն սակավ են հանդես գալիս շնչեղ խուլերից հետո:

ե) եթե հինհայերենյան բառաշերտում դիրքի կամ բաղաձայնների արտաբերական լարվածությունը էական նշանակություն ունի բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման, նաև հնչյունափոխական իրողությունների իրականացման գործում, ապա նոր բառաշերտի հաջորդականություններում սահմանափակումները հիմնականում չեն գործում:

Viktor Katvalyan - About Consonant Sequences in Bayazet Dialect at the Beginning of the Word.- In the sequences of occlusives and affricates in the old Bayazet dialect, the articulatory tension remains (when the consonants succeeding each other are identical in tension) or decreases (when the subsequent consonant is less tense than the previous one). This pattern may explain the processes such as accoustic dazzles and aspiration of sonants after sonant spirants, as well as vocalization of voiceless consonants after the aspirates and sonants. Historic accoustic dazzle and aspiration of sonants in the middle and at the end of the word in the Armenian language may also be explained by the decrease in tension.

There are no restricted collocations of the above mentioned consonants at the beginning of the word in the new vocabulary of the dialect.

Виктор Катвалян - О консонантных последовательностях начала слов в Баязетском диалекте.- В последовательностях смычных и аффрикатах начала слов в старой лексике Баязетского диалекта артикуляционная напряженность сохраняется (когда следующие друг за другом согласные тождественны по напряженности) или уменьшается (когда последующий согласный менее напряженный, чем предыдущий). Этой закономерностью могут объясняться процессы как оглушения и аспирации звонких после звонких спирантов, так и озвончения глухих после придыхательных и глухих. Историческое оглушение и аспирация звонких в середине и в конце слов армянского языка тоже можно объяснить уменьшением напряженности. Ограничений сочетаемости упомянутых согласных в начале слов новой лексики диалекта не имеются.

Հովհաննիսյան Լավրենտի (Հայաստան,
ԳԱԱ Լեզվի ինստիտուտ)

**ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՂԻՇԵԻ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ**

Եղիշեն «Մեկնություն Արարածոց»¹ աշխատության մեջ տալիս է մի շարք լեզուների, այդ թվում, հայերենի գնահատական-բնութագրումը. «Ուստի եւ գեղեցկաբանություն եղեւ ի մի խոշոր լեզուն. փափուկ՝ հելենն, սաստիկ՝ Հռոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, գեղեցկազարդ՝ ականն, ծաղրական՝ գուրն, տափախաւս, խաւարաձայն՝ եգիպտացին, ճըճուողական՝ հնդիկն, համեղական՝ հայն» (817):

Այս վկայությունը չնչին փոփոխություններով տեղ է գտել ուշ շրջանի հեղինակների գործերում (Վարդան Արևելցի, Մխիթար Այրիվանեցի, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթևացի)²:

Անշուշտ, Եղիշեն նկատի է ունեցել հիշյալ լեզուներին բնորոշ լեզվաքերականական, գործառական էական առանձնահատկությունները, թե ի՞նչ, շատ դեպքերում մնում է անբացատրելի: Մեր հոգվածը այդ հարցի պարզաբանման մի փորձ է, բնավ չհավակնելով անքննադատ ընդունելության:

Նախքան պարզաբանման փորձերին անդրադառնալը, նշենք, որ Եղիշեն քաջատեղյակ էր մի շարք լեզուների, շրջանառության մեջ է դրել բազմաթիվ նոր բառեր ու քերականական տերմիններ, ծանոթ էր անտիկ դարաշրջանի լեզվական ուղղություններին³:

Անցնենք բուն հարցին: Եղիշեն հունարենը բնութագրում է *փափուկ* ածական-որոշիչով, Վ.Արևելցին՝ *փափկազոյն*, Մ.Այրիվանեցին՝ *փափկական*, Հ.Երզնկացին՝ *փափկախաւս*: ՆՀԲ բերում է Երզնկացու վկայությունը՝ *փափկախաւսը* մեկնելով «Ոյր փափուկ է

¹ «Մեկնություն Արարածոց» (Մատենագիրք Հայոց, Ա., հտ., Ե. դար, Անթելիաս-Լիբանան, 2003: Կա նաև այլ նոր հրատարակություն հայերեն անգլերեն թարգմանությամբ, Ե., 2004):

² Տե՛ս **Լ.Խաչիկյան**, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Ե., 1992: **Ա.Այվազյան**, Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը, Ե., 2001:

³ Տե՛ս **Լ.Խաչիկյան**, նշվ. աշխ.:

խօսքն՝ բարբառն՝ լեզուն», որը ըստ էության, որևէ լեզվական հատկանիշ չի բացահայտում: *Փափուկ* որպես լեզվաբանական տերմին չկա և Ա. Մուրադյանի գրքում⁴:

Գրաբարում *փափուկ, լերկ, նուրբ* բառերը հոմանշային եզրեր ունեն, վերջին երկուսը նաև լեզվաբանական տերմիններ են՝ հունարեն համապատասխանակը՝ *φιλός*, որը բազմիմաստ է: Հունարենի՝ բառարանում նշվում է 10 իմաստ, որոնցից վերջինը քերականական տերմին է՝ «պարզ շնչեղագուրկ, կամ թույլ շնչեղություն ունեցող»⁵:

Թերևս Եղիշեն նկատի է ունեցել հունարենի հնչյունական համակարգում խուլ բաղաձայնների գերակայությունը ձայնեղների համեմատությամբ:

Ա. Այտընյանը *փափուկ* է համարում հունարենի աստիկյան բարբառը՝ կապ տեսնելով ժողովուրդների և նրան լեզվի միջև. «Առատ գաղափարաց տեր ժողովուրդ մ'ը առատ ու ճոխ լեզուի ալ տեր է... Հին աշխարհի մեջ Ելլադայի նուրբ ու փափուկ աստիկերենը և Լատիոնի հզօր և պերճ լատիներենը՝ Յունաց գեղեցկասեր մտացն ու Հռոմայեցւոց յաղթասեր բնաւորութեանը ճշգրիտ հայելիներն էին»⁶:

Սաստիկ՝ հռովմայեցին – Սաստը՝ ՆՀԲ բացատրում է. «Բան սաստիկ, խիստ, ցատումն, յանդիմանութիւն», իսկ *յաղթասիրելը* – «ջանալ յաղթել հակառակասիրութեամբ, վիճել»: (Նկատի ունենք Այտընյանի *հաղթասէր* ածականը):

Բառարանային այս բացատրությունները բնորոշ են հատկապես հռետորական ոճին, ճարտասանական արվեստին: *Սաստիկ* բնորոշումով Եղիշեն ակնարկում է ճառերի, բանավիճային գործերի լեզվական առանձնահատկությունները, որտեղ դեր է խաղում և շեշտը, շեշտադրությունը: Արդեն 5-րդ դարում լատիներենի շեշտի

⁴ Ա. Մուրադյան, *Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինարանության ստեղծման գործում*, Ե., 1971, էջ 354:

⁵ Дворецкий И.Х., *Древнегреческо-русский словарь*, т. II, М., 1958, էջ 1799:

⁶ Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987, էջ 34:

համար բնութագրական էր համարվում ոճային պահը (силовой момент)⁷:

Սպառնական հոնին – 5-րդ դ. հայ պատմագրության մեջ որոշ տեղեկություններ կան հոների մասին: Կովկասյան հոները անվանվում էին նաև *խայլընդուրներ*, *խայլանդուրներ*: 469 թ. Բալկանյան թերակղզի ներխուժելու անհաջող փորձերից հետո, հոները՝ որպես ժողովուրդ, աստիճանաբար անհետանում են, սակայն *հոն(եր)* բառը երկար ժամանակ մնում է որպես քոչվորներին տրվող անվանում⁸:

Հանրագիտական բառարաններում, պատմագրության մեջ հոների դաժանությունների, քստմենլի արտաքինի ու անբարո վարքի մասին տեղեկություններից զատ, հաճախ շեշտվում է հոների առաջնորդ Աթիլայի սպառնալիքները ուղղված Հռոմին:

Այդ սպառնալիքները և դաժանությունները արտացոլված են տարբեր բնույթի գեղարվեստական և գրական գործերում: Հիշենք Վերդիի «Աթիլա» օպերան, հայ գրականությունից՝ Զարենցի «Աթիլա» պոեմը

«...Էլ չեք մոռանա, չեք հեգնի էլ ինձ | Հոների արքա հզոր Աթիլին

Ես կրկին ահա քանդում եմ, վառում | քաղաքներ, գյուղեր փլչում են իմ դեմ:

Եվ այս անգամ ես՝ գոռ, անհաղթ արդեն՝ | մի կարմիր գիշեր կմտնեմ Հռոմ:

Ա. Իսահակյանը «Աթիլան և ի սուրը ստեղծագործության մեջ, ի շարս այդ գազանակերպի դաժանությունների նկարագրության, ունի և հետևյալ տողերը.

«Արդ, դողացեք, սասանեցեք Արևմուտքի խարդախ ցեղեր:

Դուք հեստ Հռովմ մեղկ Բյուզանդիոն | Բերում եմ ժանտ վախճանը ձեր»:

Երկրներին ու ժողովուրդներին ուղղված հոների այդ սպառնալիքներն է նկատի ունեցել Եղիշեն, թերևս նաև արշավանքների ժամանակ այդ հրոսակների արձակած սարսափազդու ճիչերն ու աղաղակները:

⁷ См. у Тронский И.М., *Историческая грамматика латинского языка*, М., 2001, էջ 68:

⁸ *Большая Советская Энциклопедия*, N 7, 1972, էջ 450:

Աղաչական՝ ասորին – Բանասիրության մեջ տարաբնույթ փաստերով հիմնավորված է ասորերենից թարգմանված «Վկայք Արևելից»-ի լեզվաոճական մեծ ազդեցությունը Եղիշեի «Պատմության» վրա: «Արևելեան վկայք շատ ազդած են Եղիշեի մտաց վրայ. կարծես թե իրեն սիրած ընթերցման գիրքը եղած ըլլա. կարդացած միջոցո շատ տեղ ինքն իրենդ կը հարցնես. Եղիշեի էջ մը կ'ընթեռնում արդեօք. Եղիշե ասկից ազդուած է ոչ միայն լեզուին, իմաստներուն և դարձուածներուն, այլ և իր անուշ ու տիրական ոճին» (Բազմավեպ, 1905, էջ 359):

«Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը իսկապես Եղիշեի Պատմության գրական աղբյուրներից մեկն է: Եղիշեն երբեմն ընդօրինակում է Աբրահամի ոճը, նրանից փոխառում որոշ բառեր, դիպուկ արտահայտություններ և համեմատություններ»⁹:

Ասորական գրականության և ասորերենիի ազդեցության գործոնով, սակայն, չի բացահայտվում *աղաչական* բնութագրման իսկությունը:

Կարծում ենք՝ պետք է փնտրել ասորերենի հետ առնչվող այլ գործառույթ.

«Աստվածաշնչի թարգմանության զուգընթաց թարգմանել են եկեղեցու մեջ ընդունված աղոթքները, որոնք կարող են լինել հունարեն կամ ասորերեն»¹⁰:

Ըստ երևույթին, դրանք նախապես (կամ մեծ մասամբ) թարգմանվել են ասորերենից: Գրաբարում *աղոթել* և *աղաչել* հոմանիշներ են (ՆՀԲ-ն *աղոթել* մեկնում է. «աղոթս առնել... աղաչել, պաղատել», *Աղաչել*-ը՝ «աղերսել, մաղթել, աղօթել»), հ.-ե. նույն արմատի տարբերակային ձևերը¹¹: Հնարավոր է նաև, որ Եղիշեն նկատի է ունեցել Միջագետքում մ.թ. 4-րդ դարում ձևավորված ասորական *māṣallāyāna* «աղոթական, աղոթողներ» կոչված աղանդը: Հավելենք, որ Եղիշեի *աղաչական ասորին* կապակցությունը կա հետագա դարերի բոլոր վկայություններում, բայց զարմանալիորեն աղաչական բառը չկա Նոր հայկազյան բառարանում:

⁹ Լ.Տեր-Պետրոսյան, *Աբրահամ խոստովանողի* «Վկայք Արևելիցը», Ե., 1976, էջ 71:

¹⁰ Մ.Աբեղյան, *Երկեր*, Գ., Ե., 1968, էջ 103:

¹¹ Բառի ստուգաբանությունը տե՛ս Գ.Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 35:

Պերճական՝ պարսիկն, գեղեցկազարդ՝ ալանն – Այս երկու լեզուներին տրված որակումները, ըստ էության, նույնական են: Դա պատահական չէ, որովհետև երկուսն էլ իրանական լեզուներ են, իսկ Իրան և Ալան բառերն էլ ստուգաբանորեն նույն արմատի տարբերակներ են՝ հին իրան. *ary@na-ից: Սկյութերենում և նրա որոշ բարբառներում տեղի է ունեցել ry>l անցումը¹²:

Եղիշեն ծանոթ էր իրանական մշակույթին, գրականությանը, գրադաշտական կրոնին վերաբերող մի շարք բառեր առաջին անգամ հայ մատենագրության մեջ շրջանառության մեջ է դրվել Եղիշեի կողմից: Նա անշուշտ գիտեր նաև, որ հայերենի բառապաշարի մի զգալի շերտ փոխառված է իրանական լեզուներից: Այնպես որ, պարսկերենի վերաբերյալ նրա գնահատականը հայեցողական չէ, այլ ունի իրական հիմք: Այդ գնահատականը ուշագրավ է մեկ այլ առումով: Լինելով քրիստոնեության մաքառող պաշտպան, ընդվզելով իրանի կողմից հայերին գրադաշտություն պարտադրելու դեմ, խորապես գիտակցելով, որ Մասանյան Իրանի և Հայաստանի թշնամական հարաբերությունների հիմքում կրոնական հակասությունն էր, որի կիզակետը Ավարայրի ճակատամարտն եղավ՝ մեր՝ «բարոյական», թշնամու իրական հաղթանակով, Եղիշեն թշնամու լեզվի գնահատման հարցում, արդեն ոչ թե մարտնչող ու ժխտող հակառակորդ էր, այլ իրողությունը չքաղաքականացնող ուսյալ անձ: Մի բան, որն այնքան էլ բնորոշ չէր միջնադարի ոչ միայն հայ, այլև օտար շատ պատմագիրների համար:

Ծաղրական գուրն – Հ.Երզնկացու տարբերակում՝ *գուրն*: Գոթերենը գերմանական լեզուներից մեկն է: 4-րդ դարում ստեղծվել է այբուբեն, որով և թարգմանվել է Աստվածաշունչը: Ուսումնասիրողները հին գերմաներենի որոշ իրողություններ վերականգնում են գոթերենի տվյալներով:

Անհասկանալի է, թե ինչու Եղիշեն այդ լեզուն համարում է ծաղրական¹³: Մենք էլ չկարողանալով պարզել այդ բնորոշման

¹² St' u *Основы иранского языкознания. Древнеиранские языки*, М., 1979, էջ 11:

¹³ Գերմաներենի վերաբերյալ բացասական գնահատական ունի Մխիթարյան միաբաններից Պ. Հովնանյանը. «Կոպիտ բարբառ, որ մինչև ութնետասներորդ դարուն մեջերը յօրինուածոյն և ուղղագրութեան կողմանէ շատ պակասութիւններ ունէր» (St' u **Հ.Պողոս Յովնանեան, Մարդկային լեզուին եւ ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը**, Վիեննա, 1857, էջ 111:

լեզվաքերականական հիմնավորումը, այնուամենայնիվ փորձենք տալ որոշ, գուցե և ոչ ընդունելի մեկնություն:

1. Ուսումնասիրողները նշում են, որ գոթերենի այբուբենի հիմքը հունարենի և մասամբ լատիներենի տառերն են: Գո՞ւցե այդ է ծաղրական համարելու պատճառը: Մանավանդ որ, Աստվածաշունչն էլ գրված է այդ այբուբենով:

2. Գ. Տաթևացու տարբերակում *գութն*-ի փոխարեն *մունդն* է, որը հավանորեն գերմաներեն *mund* «բերան» բառն է: Այս դեպքում նկատի է առնվել թերևս գոթերենի հնչյունների և նրանց արտասանության առանձնահատկությունը. «Գոթերենի հնչյունների 1/3-ը ձայնավորներ են, որոնց կազմության և արտաբերման գործում կարևոր դեր է խաղում լեզվի շարժումը հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով»¹⁴:

Տափախաւս, խաւարաձայն՝ եզիպտացին – Այլ հեղինակների վկայություններում երկու ածականների փոխարեն մեկն է՝ բառաձևային և հնչյունական տարբերակներով (Վ. Արևելցի՝ *խարափաձայն*, Մ. Այրիվանեցի՝ *խարխափական*, Հ. Երզնկացի, Գ. Տաթևացի՝ *խափարաձայն*)¹⁵:

ՆՀԲ չունի *տափախաւս* և *խաւարաձայն* բառերը, իսկ *խափարական* և *խափարաձայն* գլխաբառերը զետեղված են մեկ բառահոդվածում՝ «Ունող զհնչին կամ զձայն խոշոր և թանձր կամ դժուարալուր» բացատրությամբ:

Արմատական բառարանում նշվում է, որ *խափար* «թաւ, թանձր» բառը անկախաբար չի գործածվում և հանդիպում է *խափարաձայն* և *խափարական* բաղադրություններում¹⁶: Երկու բառարաններն էլ որպես միակ վկայություն հղում են Վ. Արևելցուն և Հ. Երզնկացուն:

Գրաբարում *թանձր* և *թաւ* բառերը հոմանիշներ են. վերջինս նաև քերականական տերմին է՝ շնչեղ խուլ բաղաձայնները, նաև *խ*-ն¹⁷:

¹⁴ С.И.Дубинин, Готский язык, Самара, 2006, էջ 18, 22:

¹⁵ Տարբերակները նշել ենք ըստ Ա.Այվազյանի գրքի:

¹⁶ Հ. Աճառյանի արմատական բառարանում *խափար* ստուգաբանված չէ: Անկախ ստուգաբանական փորձերից՝ Գ. Ջահուկյանը *խարափ* և *խափար* համարում է տարբերակներ: (Տե՛ս *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 320, 325):

¹⁷ Տե՛ս Ա.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 193:

ՆՀԲ-ն տալիս է մի լրացուցիչ մեկնություն ևս. «մօտ ի Խափշիկ և Խպտի ազգս և ի հնչին *խաֆ* տառի և կամ *խապա*, այս ինքն թանձր» (Տե՛ս ՆՀԲ, *խափարական* բառահոդվածը):

Ուրեմն՝ *խափարական*, *խափարաձայն* բնորոշմամբ շեշտվում է եզրիպատերենի *խուլ* բաղաձայնների գործառական դերը:

Անբացատրելի է մնում բնագրագիտական մեկ հարց.

Ինչո՞ւ Եղիշեի վկայած *տափախաւս*, *խաւարաձայն* բառերը դուրս են մնացել ուշ շրջանի այլ հեղինակների գործերից՝ փոխարինելով *խարափաձայն*, *խափարական*, *խարափական* բառերով:

Ճրճուողական՝ հնդիկն – Բառակապակցությունը առկա է բոլոր տարբերակներում, բայց ՆՀԲ չի վկայել: Կա Առձեռն բառարանում «Ճնճուկի ձայնի նման» բացատրությամբ: Արմատական բառարանը փակագծերում հավելում է «լեզու»: (Տե՛ս *ճճուել* բառահոդվածը): Ինչպես տեսնում ենք, բառարանների նշած բառիմաստներով չի պարզվում հնդկերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունը: Կարծում ենք Եղիշեն նկատի է ունեցել հնդկերենի բաղաձայնական համակարգում *Ճ, Չ, Զ* հպաշփական հնչույթների հաճախականությունը: Համեմատության համար բերենք Խ.-Ե. ծագման մի քանի բառերի հնդկերեն և այլ լեզուների համապատասխանակները.

հնդկ. cakra «անիվ» – հուն. κσκλοσ, հնդկ. paŭca- հուն. πεντα- հայ. հինգ, հնդկ. parccati «հարցնում է»- ավեստ. pŕrasti- հայ. Հարցանեմ, հնդ. í©nu «ծունկ», հուն. γζvÊ, միջ. պրս. zanuk – հայ. ծունկ(զ), հնդկ. rī́ «թագավոր» – լատիներեն rex:

Նշված բաղաձայնների հաճախականությունը նկատելի է նաև հատուկ անուններում: Հերթը, բնականաբար, հասավ հայերենին՝ *համեղական՝ հայն*:

Բերենք այլ հեղինակների տարբերակները. «Հայն՝ համեղ եւ ամենազարդ և համեմական» (Վ.Արևելցի), «հայն՝ համեմական» (Մ.Այրիվանեցի), «համեղական հայն» (Հ.Երզնկացի, Գ.Տաթևացի):

ՆՀԲ-ի *Համեղական* բառի բացատրությունը հետևյալն է. «Ախորժական, համեղ և Հեշտալուր, «համեղական հայն», այսինքն լեզու հայոց, տե՛ս և համեմական»: *Համեմականի* բացատրությունն է. «Ուր գոն համեմք, համեմեալ, ախորժական»: Բնագրային միակ օրինակը Վ.Արևելցու վերոհիշյալ նախադասությունն է: (Տե՛ս ՆՀԲ *համեղական* և *համեմական* բառահոդվածները):

Ինչպես տեսնում ենք, բառարանագիրները *համեղական* բառում տեսնում են *համ* «զգայարաններից մեկը», և համեղ, համեղական մեկնում «քաղցր, ախորժելի», որը այս դեպքում չափազանց առարկելի է: Գրաբարում *համ* ձևությամբ ունի նաև «ամբողջ, համայն, բոլոր» իմաստները. (ծագում է հ.-ե. *sam-, sm-ից), որը առկա է մի շարք բաղադրություններում *համակ* «ամբողջովին, լիովին» *համակայ* «միասին», *համայն* «բոլոր», *համատարած* «բոլոր կողմերում տարածված» և այլն:

Եղ ձևությամբ էլ *եղանիլ* բայի արմատն է, որից՝ *եղական* «ստեղծված», *եղանակ* «կերպ, ձև»:

Ուրեմն՝ *համեղական*՝ *հայն* նշանակում է բոլոր լեզուների հատկանիշները ունեցող: Եղիշեն էլ է այդ հաստատում՝ «*համեղական*՝ *հայն*, որ կարելի է գտնել յինքն ամփոփել», իսկ Գ. Տաթևացին կրկնելով Եղիշեին շարունակում է «... և բոլոր խօսիլ, և այլքն՝ ոչ՝ որպես ասացաւ ի վերոյ»¹⁸:

Հայերենին տրված այս գնահատականը, առաջին հերթին, վերաբերում է գրաբարի հնչյունական համակարգին, որը հնչյունադարձության և տառադարձության ավելի լայն հնարավորություն ունի, քան համեմատվող որևէ լեզու:

Hovhannisyan Lavrenti – On Evidense by Yeghishe about languages. – There is the characteristic estimation of various languages in “The Interpretation of the Genesis”: Greek is delicate, Assyrian is suppliant, Egyptian is obscur, Armenian is sweet. In the article are revealed hidden linguistic values of similar words.

Оганнисян Лаврентий. – О свидетельстве Егише о языках. – В “Комментарии бытия” Егише дает оценку – характеристику некоторых языков: греческий – *хрупкий*, ассирийский – *умоляющий*, египетский – *мрачный*, армянский – *вкусный (сладкий)*.

В статье разъясняются “скрытые” лингвистические значения этих слов.

¹⁸ Եղիշեի և Տաթևացու այս և այլ հատվածների մասին տե՛ս Ա.Այվազյան, *նշվ.աշխ.*, էջ 30-31:

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ ՆՈՒՑՆԱՆԻՇՆԵՐԻ՝ XVIII դԱՐԻՑ
ԱՎԱՆԴԱՄԾ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հումանիշների՝ XII-XVII դդ. ավանդված ձեռագիր բառարանների (այսուհետև՝ ՁԲ) առնչված հետազոտողները հավաստում են, որ դրանց «մանրագնին ուսումնասիրությունը ի հայտ կբերի բավական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականության ու ժողովրդական խոսվածքի մեջ»¹: Նոր կամ նորակազմ բառեր առկա են նաև նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ՁԲներում: Այս բառարանները չունեն բնագրային օրինակներ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատել հայերենի բառակազմության կադապարային կառույցների առանձնահատկություններով և հետազայում՝ XVIII դ. հետո, լույս տեսած բառարաններով:

Աւար. կապուտ. կողոպուտ. ապուր. յափշտակութիւն նույնանիշային շարքը (այսուհետև՝ ՆՇ) համապատասխանաբար եզրափակում են *ասպատակութիւն* և *ասպատակասփռութիւն* բառերը (Ձեռ. Ձեռ. 775, 54բ. 873, 197բ)²՝ երկուսն էլ՝ «Իրան. *aspataka- ձևից, իբր պիլ. *aspak «ձիով արշաւանք, ասպատակութիւն.... »³: *Ասպատակութիւն* բառը XVIII դ. հետո հրատարակված բառարաններից արձանագրված է Մ. Զախջախյանի կազմած բառարանում: Այն, իբրև «չեթեճութիւն. Scorería, guásto, sacco»⁴, ասել է՝ «հարձակում, ավարատություն», առանձնացվում է աստղանիշով (*-ով), այսինքն, ինչպես նշում է հեղինակը, «.... աստղանիշ բառքն և նշանակութիւնքն չեն նախնի մատենագրաց, այլ արդիք և նորահնարք» (ՁԲ, էջ 9): Բառը հիշատակում են Ս. Գաբամաճյանը՝ «ասպատակ ընելը.

¹ Գ.Գասպարյան, *Հայ բառարանագրության պատմություն*, Ե., 1968, էջ 36: Ռ.Ղազարյան, *Լեզվաբանական ուսումնասիրություններ*, Ե., 2010, էջ 156:

² Փակագծերում նշվում են ձեռագրի համարը և էջը: Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

³ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 273:

⁴ Մ.Զախջախեան, *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական* (այսուհետև՝ ՁԲ), Վենետիկ, 1837, էջ 9:

յարձակում»⁵, Ս.Մալխասյանցը՝ «Ասպատակի կատարած գործը. ձիաւոր խմբով արշաւելը թալանելու նպատակով»⁶, արդի հայերենի բացատրական բառարանները՝ «Ասպատակելը, ասպատակվելը», նաև «Ավարառություն» նշանակություններով⁷: Այն առկա է նաև արևմտահայերենի բառարաններում «Ձիաւոր զօրքով կողոպուտի արշաւանք» իմաստով⁸:

Ասպատակասփռութիւն-ը *ասպատակ*, *սփիռ* արմատներով և *-ութիւն* վերջածանցով բաղադրություն է: Այն, ամենայն հավանականությամբ, կազմվել է գրաբարի տպագիր բառարաններում⁹, ՀԱԲ-ում (հ. 1, էջ 272), ՄՀԲԲ-ում (հ. 1, էջ 237) «ասպատակախումբ ուղարկել, ձիաւոր զօրք սփռել՝ կողոպտելու համար» նշանակությամբ վկայված *ասպատակ սփռել* վերլուծական կազմության կից գրությամբ¹⁰: Վկայված չէ բառարաններում:

Սեղեխ. հումանի. բոգ ՆՇ-ն (Ձեռ. Ձեռ. 566(I), 270ա. 775, 74ա. 873, 213բ. 3110, 107ա. 6762, 124ա) ավարտվում է *բոգարած* բառով: Հ.Աճառյանը հիշատակում է այն «նոր բառեր»-ի շարքում (ՀԱԲ, հ. 1, էջ 8)՝ նշելով, որ Սուչավայում գործառում է «*բոգտըրած*» տարբերակը (ՀԱԲ, հ.1, էջ 460): Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ից «պոռնիկ պահող, անառակ, անբարոյական» նշանակությամբ *բոգրած* բառային տարբերակն է արձանագրում «Միջին

⁵ Ս.Գաբրիելյան, *Նոր բառագիրք հայերեն լեզուի* (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ.Պոլիս, 1910, էջ 175:

⁶ Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), Ե., 1944, հ. 1, էջ 237:

⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1969, էջ 187: Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 272:

⁸ Գ.Ճերեճեան, Փ.Կ.Տոնիկեան, Ա.Տեր-Խաչատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, հ.1, Պէրոյթ, 1992, էջ 195: Պ.Ճիգմեճեան, *Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հ. 1, Հալէպ, 1957, էջ 457: Ա. Կռանեան, *Բառգիրք հայերեն լեզուի*, Պէրոյթ, 1998, էջ 40:

⁹ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 315: *Առձեռն բառարան հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 119: Ռ.Ղազարեան, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ ԳԲ), հ. 1, Ե., 2000, էջ 186: Ռ.Ղազարեան, *Գրաբարի դարձվածաբանական բառարան* (այսուհետև՝ ԳԴԲ), Ե., 2012, էջ 42:

¹⁰ Երկու հումանիշ բառերի կցումով համանման կազմություն է նաև միայն Ձեռ. 775-ում (57ա) վկայված է *հոր. վիրապ. վիհ. խորափիտ* ՆՇ-ի հենաբառ *գուրանոր*-ը (մյուս ՁԲ-ներում՝ *Գուր*). այն, թերևս, սխալագրություն է:

հայերենի բառարան»-ը¹¹: Մ.Մեբաստացին բառը բացատրում է «բոզ պահող, բոզի էտնէն ընկնող»¹²: Ըստ բառարանային տվյալների՝ *բոզարած*-ը առկա է հայերենի բարբառներում՝ Արարատյան, Նախիջևանի՝ «բոզաբոյծ»¹³, նաև Կարնո՝ «պոռնկություն անող, պոռնիկների հետ կենակցող»¹⁴ նշանակություններով: ՄՀԲԲ-ն առանց որևէ նշումի առադրում է՝ «բոզերի յետնից ընկած» (ՄՀԲԲ, հ.1, էջ 381): *Բոզարած*-ը հիշատակված իմաստներով վկայում են նաև արդի հայերենի բացատրական բառարանները՝ ԱՀԲԲ-ի՝ «(ժղ.) Կնամոլ» հավելմամբ (ԺՀԼԲԲ, հ.1, էջ 333. ԱՀԲԲ, էջ 198): Հատկանշական է, որ բառը արդի հայերենում պահպանվել է ՆՇ-ում առկա հնչյունական տարբերակով:

Ձեռ. Ձեռ. 775 (75ա), 873 (214բ), 3110-ում (108ա)՝ *Սքանչելի. հրաշալի. սխրալի. ափշելի. նորասքանչ. մեծասքանչ. հրաշագան. նորահրաշ. մեծահրաշ. սոսկալի. զարմանալի. զարմանահրաշ* ՆՇ-ում, առկա *գերակարող* բառը¹⁵ Հ. Աճառյանի հավաստմամբ «յուն. ὑπερ-» մասնիկին համապատասխան, «յետոսկեղարեան շրջանին» շատ գործածելի *գեր*- նախամասնիկով¹⁶, *կար* «ուժ, կարողություն» (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 542) արմատով և *-ող* ածանցով բաղադրություն է: Ըստ ՄՀԲԲ-ի՝ *գեր*-ը «Գործ է ածվում (ոչ ոսկեղարեան հեղինակների մօտ) բարդությունների սկզբում՝ ցոյց տալու համար ածականների գերադրական աստիճանը» (ՄՀԲԲ, հ. 1, էջ 426): Ուրեմն *գերակարող*-ը «ամենակարող»-ն է. այն կարելի է դասել հայերենում գործուն *գեր(ա)* նախաձանցով¹⁷ + գոյական նախատիպ հիմքով (*կար*) ածական բաղադրություններ կազմող

¹¹ Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), հ. 1, Ե., 1987, էջ 122:

¹² Մ.Մեբաստացի, *Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն ուր մեկնին բառք հայկազեան լեզուի սոսկ աշխարհաբառ կամ տաճկական բառիք* (այսուհետև՝ ԲԳԱ), Վենետիկ, 1769, էջ 80:

¹³ Ս.Ամատունի, *Հայոց բառ ու բան* (այսուհետև՝ ԱՀԲՈԻԲ), Վաղարշապատ, 1912, էջ 110:

¹⁴ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 1, Ե., 2001, էջ 204:

¹⁵ Ձեռ. Ձեռ. 3450-ում (72ա), 9992-ում (4ա)՝ նույն ՆՇ-ում, *գերունակ* բառն է:

¹⁶ Հ.Աճառյանի կարծիքով՝ *գեր*- նախամասնիկով «....ստրկօրէն թարգմանուած են բազմաթիւ բառեր. ինչ.գերակատար=ὑπερτέλειος....(սրանց թիւը Առձեռնում 192 է), բոլորն էլ յետին». ՀԱԲ, հ. 1, էջ 539:

¹⁷ Ինչպէս նշում է Ս.Գալստյանը, «*Գերա*- տարբերակը հին կազմություններում դրվել է բաղաձայնով սկսվող նախատիպերի վրա». Ս.Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 216:

բառակազմական կաղապարին: Ըստ Ս. Գալստյանի՝ այդ բաղադրությունների բառակազմական նշանակությունն է «նախատիպ ածականի արտահայտած հատկանիշի ծայրագույն բարձր, գերադրական աստիճան»¹⁸:

Էռացուցանել բայն ակնհայտորեն *Կցել. առակցել. յարել. յօղել. միաւորել (միայարել) ընդ նմա. կամ միայցուցանել. Շաղկապել. շարակցել. շարայարել. պատուաստել. շարահիւսել. Մերձեցուցանել. կապակցել. կապել. սոսընձել* (Ձեռ. Ձեռ. 775, 64բ. 873, 200բ) ՆՇ է ներառվել «կցել, զօղել» նշանակությամբ: Հ.Աճառյանը «նաև իրար զօղել» նշանակությամբ *եռցնել* բայը համարում է «նոր բառ»՝ համեմատության համար առաջարկելով Հ. Օձնեցու «Ատենաբանութիւն» երկում առկա «...*եռալ* «սիրով միանալ, զօղիլ»»-ը (ՀԱԲ, հ. 2, էջ 31): ԲԳԱ-ն նաև ունի «մեկգմէկու հետ հալելով կըպցնել» բացատրությունը (ԲԳԱ, էջ 115): ՄՀԲԲ-ն *եռացուցանել*-ը հղում է «բարբառային բառ» նշումով *յեռել*-ին, որի իմաստներից է «կցել, կապակցել, զօղել»-ը (ՄՀԲԲ, հ. 1, էջ 567, հ. 3, էջ 405): Արդի հայերենի բացատրական բառարաններում վկայված *եռացնել* համանուններից երկրորդը «Մետաղա մասերի իրար շփվող մակերեսները շիկացնելով հալել ու ձուլել միմյանց. գողել» նշանակությամբ է (ՄՀԲԲ, էջ 331. ԺՀԼԲԲ, հ.1, էջ 558): Թերևս կարելի է ենթադրել և հավանական համարել, որ *կցել* հենաբառով ՆՇ-ում առկա *եռացուցանել*-ով նախապատրաստվում է «եռքով կցել» միացնել. մետաղները շիկացնելով կցել՝ գողել» նշանակությամբ *եռակցել* բայի գործածությունը արդի գրական հայերենում:

Ձեռ. Ձեռ. 566(I) (254ա), 3110 (95բ), 6762-ում (113ա-113բ) *եռացուցանել*-ի փոխարեն *հեռացուցանել* բայն է, որի առկայությունը կարելի է բացատրել գրչագիրն ընդօրինակողի՝ *եռացուցանել* բայի «կցել, միացնել» նշանակության չիմացությամբ. նա պարզապես լրացրել է *կցել. մերձեցուցանել. սոսնձել* և համանշանակ մյուս բայերին հականիշ *հեռացուցանել*-ը (նույն ՁԲ-ներում հականիշով է

¹⁸ Ս.Գալստյան, նշվ. աշխ., էջ 217-218:

եզրափակվում նաև *Զբաղիլ. պատաղել. պարապել. դատարկանալ* ՆՇ-ն (Ձեռ. Ձեռ. 566(I), 243բ. 6762, 107ա))¹⁹:

Միևնույն ՆՇ-ում առանձնանում է նաև *առակցել*-ը: ԲԳԱ-ն մեկնում է «կցցել» (ԲԳԱ, էջ 115): Բայը վկայվում է լատինաբան հայերենում՝ *առ-* նախածանցով նորակազմ բառերի շարքում²⁰, Արսէն Դպիրի «Գիրք սահմանաց» երկից (XVIIIդ.): Ս. Գաբամաձյանը հավաստում է «բանի մը կըցուած. աւելցած» նշանակությամբ *առկցեալ*-ը (ԳՆԲՀԼ, էջ 169)՝ աստղանիշով, որը նրա հավաստմամբ «կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀԼ, էջ Ը): ՄՀԲԲ-ն *առկցել* տարբերակը նույնպես հիշատակում է աստղանիշով, որն այս դեպքում, սակայն, «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» է փաստում (ՄՀԲԲ, հ. 1, էջ 229): Արդի հայերենի բացատրական բառարաններում *առկցել*-ը «կցել, իրար հետ կապակցել՝ միացնել» նշանակությամբ է (ԱՀԲԲ, էջ 107. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 180): Բառը հիշատակում է նաև «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը՝ «Տե՛ս Կապակցել» հղումով²¹:

Գարշապար. ներբան. կրունկ ՆՇ-ում առկա է *թաթոսից* բաղադրությունը (Ձեռ. Ձեռ. 566, 239բ. 775, 56ա. 873, 189բ. 3110, 81ա. 6762, 104ա): ՆՀԲ-ն *թաթք ոտից*-ի բազմաթիվ վկայություններ է քաղում «Աստվածաշունչ» մատյանից (ՆՀԲ, հ. 1, էջ 790): *Թաթոս* բառն արձանագրած բառարանը Մ. Քաջունուն է²²՝ «ի գաղղիերէն» Tarsipéde» բացատրությամբ, որ նույն «նախագարշապար, ոտնաթաթ»-ն է²³: Նկատի առնելով Հ. Աճառյանի՝ *ոտնաման* «նոր բառ»-ի համար «հնից ունինք **ոտից աման**...» դիտարկումը՝ կարելի է ենթադրել, որ հենց կից գրությամբ այս *թաթոսից* բաղադրությունից էլ հետագայում Հ.Աճառյանի նշածի նմանությամբ, սակայն շրջուն կառույցով՝ *թաթոսից*→*ոտից թաթ*→*ոտնաթաթ*, կազմվել է արդի հա-

¹⁹Տե՛ս **Ն.Նովիաննիսյան**, Բառիմաստային փոփոխություններ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններում.- *Ջահուկյանական ընթերցումներ*, Ե., 2015, էջ 104-105 :

²⁰ **Վ.Համբարձումյան**, *Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.)*, Ե., 2010, էջ 216-217:

²¹ **Ա.Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 82:

²² **Մ.Քաջունի**, *Բարգիք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց* (այսուհետև՝ ՔՄ), հ. III (Համառոտ հայերեն գաղղիերեն), Վենետիկ, 1893, էջ 75:

²³ **К.Ганшина**, *Французско-русский словарь*, М., 1977, стр. 821.

յերենի բացատրական բառարաններում առկա *նունաթաթ*-ը (ԱՀԲԲ, էջ 1144. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 113)²⁴:

Միայն Ձեռ. 873-ում (215բ)՝ *Վնասել. մեղանչել. չարիս հասուցանել. չար ինչ առնել նմա* ՆԾ-ում է առկա *խոչել* բայը՝ ամենայն հավանականությամբ *խոչ* «Քար կամ փայտ սրածայր՝ արգել և վնասիչ ոտից.... արգելք» արմատից (ՆՀԲ, հ. 1, էջ 966): Եթե ընդունելի է բայի՝ այս արմատից կազմված լինելը, կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը կազմել է *խոչել* բառը, և նկատի առնելով *խոչ* արմատի «արգել և վնասիչ ոտից» վերը նշված իմաստը՝ «վնասել» իմաստով: Թեև կարելի է նաև հավանական համարել Հ. Աճառյանի՝ «Գիրք վաստակոց»-ից քաղած *խոչառ լինել* հարադրության («անասունների ոտքը բան մտնելով կամ վնասուելով՝ կաղ ի կաղ քայլելը». ՀԱԲ, հ.2, էջ 397) կամ ՄՀԲԲ-ում արձանագրված *խոչառել* բայի («ոտքը մեխի գալ, մեխը ոտքը մտնել (պայտելու ժամանակ)». ՄՀԲԲ, հ. 2, էջ 285)՝ տառերը հապավելով ոչ ճիշտ ընդօրինակել՝ արտագրելը:

*Գլխաւոր. նախապետական. սկզբնական. գլուխ. պետ. նախապատիւ. նախամեծար. գերապատիւ. գերագոյն. գահագլուխ. ծայրագոյն. գահերէց. վեհագոյն*²⁵. *վերագոյն. բարձրնոտիք. գերագանց* ՆԾ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 270ա. 873, 189բ. 3110, 81բ. 6762, 104բ) առանձնանում է *մանաւանդագոյն*-ը: Հետաքրքիր բաղադրություն «աւելի, յատկապէ՛ս» նշանակությամբ, մակբայական կիրառությամբ *մանաւանդ* արմատով և ածականի գերադրական աստիճան կազմող *-(ա)գոյն* ածանցով: Ամենայն հավանականությամբ, կազմվել է ՆԾ-ում առկա *գերագոյն*՝ «Վերագոյն. վեհագոյն. գերագոյն.... գերքան» (ՆՀԲ, հ. 1, էջ 542), և *վերագոյն*՝ «Որ ի վեր է և առավելեալ քան զայլս. վերնագոյն. բարձրագոյն. վեհագոյն. գերագոյն. գերագանց. զօրագոյն....» (ՆՀԲ, հ. 2, էջ 803), բառերի նմանությամբ՝ նշելով «առաջնորդ, ղեկավար, գլխավոր»: *Մանաւանդ* արմատով «նոր վերջածանցավոր բառեր»-ից *մանաւանդաբար և մանաւանդական*

²⁴ Բառը վկայում է նաև Հ. Բարսեղյանը. տե՛ս Հ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական- ուղղախոսական, տերմինաբանական բառարան*, Ե., 1973, էջ 746:

²⁵ Ընդգծված *վեհագոյնն* բառի առնչությամբ հարկ է ներկայացնել Հ.Աճառյանի դիտարկումը, որը հղվում է Ա.Վարդանյանին. ըստ Հ.Աճառյանի՝ «Ոսկեդարեան հեղինակների մօտ պատահած *վեհ, վեհագոյն* հազվագիտ բառերը պետք է ուղղել՝ *վեր, վերագոյն*». (ՀԱԲ, հ. 4, էջ 327):

նորակազմ բառերն է առանձնացնում Վ. Համբարձումյանը «լատինաբան հայերենում»՝ համապատասխանաբար Գեորգ Միլայիմի «Գիրք վիճաբանութեան» (1734թ.) և «Մատթեոս եւ Ղուկաս» Վանանդեցիների «Բնաբանութիւն իմաստասիրական» (1702թ.) աշխատանքներում²⁶:

Բառարաններում չի վկայվում *Բնակարանաց տեսակք* հենաբառով ՆՇ-ից *միայնատուն* բառը (Ձեռ. Ձեռ. 775, 55բ. 873, 188բ. 3110, 75բ. 6762, 103բ): Բաղադրված է Հ.Աճառյանի հավաստմամբ *մի* արմատի՝ «մինակ, առանձին, լոկ» նշանակությամբ «ածանցման մեջ» ներկայացող ձևից և *-այն* մասնիկից կազմված *միայն*-ով (ՀԱԲ, հ. 3, էջ 316-317) և *տուն* բառով: Անդրադառնալով *միայն* -ից առաջացած *մեն*- ձևին (*միայն* > *մեյն* > *մեն*, *մեն*) և նշելով, որ «*մեն*- ձայնափոխութիւնը տեղի էր ունեցել Ոսկեդարից էլ առաջ, այնպէս որ Ե դարուն գործածուում էր իբրև գաւառական ձև»՝ Հ. Աճառյանի կարծիքով՝ «.... իսկապէս արժեն *միայնամարտ*, *միայնաոր*, *միայնակեաց* ևն, ինչպէս որ իրօք գործածուած են մատենագրութեան մեջ» (ՀԱԲ, հ. 3, էջ 317): Ուրեմն և կարելի է ընդունելի համարել ՆՇ-ում *միայնատուն* բառի առկայությունը, որին համանման ձևերը, ինչպէս հավաստում է Հ.Աճառյանը, «գործածուած են մատենագրութեան մեջ»: *Միայն*-ով կազմված *միայնակոյի* «մենամարտիկ», *միայնատեսակ* բառերն է հիշատակում Միս. Սեբաստացին (ԲԳԱ, էջ 263): Իսկ *միայնատուն*-ը վկայում են ՀԼՀԲ-ն «տե՛ս Առանձնատուն» հղումով (ՀԼՀԲ, էջ 457) և Հ. Բարսեղյանի կազմած բառարանը²⁷:

Ներքնակ բառն է առկա *Անկողին (և այլք որք այսմ պատկանին) մահիճ. լեհեպ. ծածկարան. բարձ. սաւան. պաստառակալ* ՆՇ-ում (Ձեռ. 566(I), 236ա. 775, 54ա. 873, 186բ. 6762, 101բ -102ա): Այն հիշատակում են Գ. Փեշտըմալճեանը («տե՛ս ի վերոյ Ներքանոյ = դնելի ինչ ի ներքոյ. որպէս բազմական, անկողին (մինտեր)»)²⁸, «հզվդ. բառ կամ նշանակութիւն» և «Տ. Ներքանոց, Ներքնակ» նշումներով ՍՀԲԲ-ն (հ. 3, էջ 459), նաև ՀԼՀԲ-ն՝ *Ներքնակ* բառահոդվածում՝

²⁶ Վ. Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն*, էջ 224: Տե՛ս նաև Վ. Համբարձումյան, *Գրաբարի գործառությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.*, Ե., 1990, էջ 202-203:

²⁷ Հ.Բարսեղյան, նշվ. բառ., էջ 665:

²⁸ Գ. Փեշտըմալճեան, Բաղդիք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՓԲ), հ. 2, Կ. Պոլիս, 1846, էջ 404:

դարձյալ «հզվդ.» նշումով (էջ 487): *Ներքնակ*-ը հիշատակում է նաև ԲԳԱ-ն՝ «տեօշէկ. մինտէր» բացատրությամբ (ԲԳԱ, էջ 294): Արդի հայերենի բացատրական բառարանները *ներքնակ* բառ չեն արձանագրում: *Ներքնակ*-ի առնչությամբ, թերևս, հարկ է անդրադառնալ *ներքնակ* բառին, մանավանդ որ իբրև բառային տարբերակ՝ այն առկա է Ձեռ. 3110-ում՝ նույն ՆԾ-ում (76բ): Գրաբարի տպագիր բառարաններում այն բացատրվում է իբրև «Ներքին ագանելի ի ներքոյ պարէգօտի. բաճկոն. վտաւակ», «տակէն հագնելիք», «տակի զգեստ» (ՆՀԲ, հ. Բ, էջ 422. ԱԲ, էջ 616. ԳԲ, հ. 2, էջ 282): Նույնն են նշում ԲԳԱ-ն (էջ 294), ՋԲ-ն (էջ 1017), ՓԲ-ն (էջ 405), Կոմիտաս Ոսկյանը²⁹: Ա. Խոսրոբաշեանցն արդեն առադրում է "матрацъ, тюфякъ"³⁰: Նույն, սակայն ոչ առաջնային իմաստն է առանձնացնում ՄՀԲԲ-ն՝ «Մեծ տոպրակ, մէջը լցրած բուրդ կամ բամբակ կամ խոտ, տափակեցրած և կարած վերնից ներքև, որ տարածում են քնելիս» (ՄՀԲԲ, հ. 3, էջ 457): Հ.Աճառյանը, արձանագրելով գրաբարյան *ներքնակ*-ը, «գւռ.» նշումով բառերի շարքում իբրև «նոր բառ» կրկին առանձնացնում է *ներքնակ*-ը, սակայն առանց բացատրության (ՀԱԲ, հ.3, էջ 443-445)՝ ամենայն հավանականությամբ նկատի առնելով *վերմակ*-ին հականիշ *դռշակ*-ը: Ասել է՝ Հ. Աճառյանն արձանագրում է երկու *ներքնակ* բառ: Թվարկելով իմաստափոխության հիմունքները՝ Է.Աղայանը իմաստափոխությունը հանգեցնում է որևէ առարկայի (երևույթի, հատկանիշի, գործողության և այլնի) հասկացության անվանումը մի այլ առարկայի հասկացությանը փոխադրելուն և տարածելուն, այսինքն՝ «տվյալ բառը մի այլ առարկայի հատկացնելուն», ուրեմն և *ներքնակ*-ի դեպքում կարելի է դիտարկել իմաստների փոխհաջորդում, այսինքն՝ «բառի հին իմաստի կորուստ և նոր իմաստի ձեռքբերում»³¹: Հարկ է նշել, որ արդի հայերենի բացատրական բառարաններում (ԱՀԲԲ, էջ 1070. ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 32) *ներքնակ*-ի նոր իմաստն առաջնային է, մինչ

²⁹ Ոսկեան Կոմիտաս, Առձեռն բառագիրք հայերեն-գաղղիերեն (այսուհետև՝ ԱԲՀԳ), Կ. Պոլիս, 1893, էջ 594:

³⁰ Ա.Խոսրոբաշեանց, Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ (այսուհետև՝ ԽԲՀՌ), հ. 2, Մոսկուա, 1838, էջ 234:

³¹ Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 101,106:

արևմտահայերենի՝ XX դ. հրատարակված բառարանները³² վկայում են *ներքնակ*-ի գրաբարյան իմաստները, և միայն Պ. Ճիզվեճեանի՝ 1992թ. հրատարակած բառարանը բառի 6-րդ իմաստ է նշում՝ «անկողնի այն մասը՝ որուն վրայ կը պառկինք՝ կը քնանանք (մեր վրայի ծածկոցը՝ վերմակ)»³³:

Կերակրել. ջամբել. դարմանել. սնուցանել. ռոճիկ տալ. կամ տալ նմա ուտել (եթէ պիտոյ իցէ) արբեցուցանել. արբուցանել. տալ նմա ըմպել՝ (Ձեռ. Ձեռ. 566(I), 253ա. 775, 64ա. 873, 200ա. 3110, 95ա. 6762, 112բ) և *Սնուցանել. բուծանել. դարմանել. կերակրել. տալ նմա ուտել. բռնել. պարուրել. ռոճիկ տալ. ուտեստ տալ* (Ձեռ. Ձեռ. 566(I), 270ա. 775, 74ա. 873, 213բ. 3110, 107բ. 6762, 124ա) ՆՇ-ներում առկա են համապատասխանաբար *նպար* և *պարէն* արմատներով և բայական *-ել* վերջավորությամբ բաղադրված *նպարել* և *պարէնել* բայերը: Բառարանները վկայում են *նպարակել*-ը՝ «նպարակօք թոշակել, պաշարօք լնուլ» (ՆՀԲ, հ. 2, էջ 453), «առատ պաշար տալ» (ԱԲ, էջ 626), «նպարեղէնով՝ պարէնով ապահովել, պարէնաւորել» (ԳԲ, հ. 2, էջ 300), և *պարէնաւորե(հ)լ*-ը՝ «գտանել զպարէն և ճարակել» (ՆՀԲ, հ. 2, էջ 632. ԱԲ, էջ 691), «սընուել» (ԳԲ, հ. 2, էջ 406. տե՛ս նաև ՀԱԲ, հ. 4, էջ 61) նշանակություններով: *Նպարել* և *պարէնել* բայերն առկա են ԲԳԱ-ում՝ «ապրուստ տալով պահել. կերցնելով պահել» բացատրություններով (ԲԳԱ, էջ 299, 337), ՄՀԲԲ-ում, երկուսն էլ՝ «տե՛ս» հղումով՝ «տե՛ս Նպարակել» («պարէնաւորել, ճանապարհի համար հարկաւոր ուտելէղէնը մատակարարել» (ՄՀԲԲ, հ. 3, էջ 486)) և «տե՛ս Պարէնաւորել» («Պարէն՝ ուտելէղէն մատակարարել, պարէն տալ: Ուտեստի և այլ մթերքներ պատրաստել, պաշար պատրաստել» (ՄՀԲԲ, հ. 4, էջ 81)): Հարկ է նշել, որ *պարէնել*-ը՝ «սնուցանել պարենիւք. կերակրել» իմաստով հիշատակում է ՓԲ-ն (էջ 573), իսկ *նպարել*-ը՝ «ՇՄ. Կերակրել» հղումով՝ ԽՀՌԲ -ն (հ. 2, էջ

³² Խոսքը վերաբերում է ԳՆԲՀԼ-ին (էջ 1023), Յ.Գայեանի (Բառարան-գանձարան հայերէն լեզուի (Գահիրէ, 1938, էջ 365), Ա.Տէր Խաչատուրեանի, Հ. Գանգրունու և Փ.Կ. Տօնիկեանի (Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1968, էջ 610), Գ.Ճերէճեանի, Փ.Կ. Տօնիկեանի և Ա.Տէր Խաչատուրեանի (նշվ. բառ., հ. 2, էջ 378), Ա. Կոսնեանի (նշվ. բառ., էջ 336) կազմած բառարաններին:

³³ Պ. Ճիզվեճեան, նշվ. բառ., 1992, հ. 2, էջ 1114:

248): Երկու բայերն էլ ՀԼՀԲ-ում «հզվդ.» նշումով են (ՀԼՀԲ, էջ 493, 543): *Պարենել*-ը հիշատակում է նաև Հ. Բարսեղյանը³⁴:

Տան մասունք հենաբառով ՆՇ-ն (Ձեռ. Ձեռ. 566(I), 273բ. 775, 76բ. 873, 216ա. 6762, 126բ) եզրափակում է *պարտիզակ* բառը՝ բաղադրված *պարտեզ* արմատով և *-ակ* նվագափառաբշական ածանցով: XVIII դ. ավանդված մյուս ՁԲ-ներում առկա է նվագափառաբշական *-իկ* ածանցով *պարտիզիկ*-ը (այն առկա է ՆՀԲ-ում, ԱԲ-ում, ՀԱԲ-ում, ԳԲ-ում և այլն): «Փոքրիկ պարտեզ» իմաստով *պարտիզակ*-ն ունեն միայն ԱՀԲԲ-ն (հ. 4, էջ 90), ՄՀԲԲ-ն (հ. 4, էջ 90), ԺՀԼԲԲ-ն (հ. 4, էջ 196), վերջին երկուսը՝ «հզվդ.» նշումով:

Խոնարհ. նուաստ. զիջեալ. ստորնագոյն. խոնարհագոյն ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 249բ. 775, 62բ. 873, 198բ. 3110, 92ա. 6762, 111ա) *վայրագոյն* բառը՝ «խոնարհ, պարկեշտ, համեստ» նշանակությամբ է: Այն բաղադրված ըստ Հ. Աճառյանի «ընդարձակ զարգացում կրած» *վայր* բառով, որի 4-րդ նշանակությունն է՝ «վարը, ցածը, տակը, ներքն» (ըստ Հ. Աճառյանի՝ այն առաջանում է «հոդ, գետին իմաստից»։ ՀԱԲ, հ. 4, էջ 300), և ածականի գերադրական աստիճան կազմող *-(ա)գոյն* ածանցով: Այս բառի դեպքում, սակայն, չի արդարացվում Հ. Աճառյանի՝ *վայր* արմատին առնչվող «նիւթական ցածրութեան գաղափարին հետևում է բարոյական ստորութեան գաղափարը» դիտարկումը (ՀԱԲ, հ.4, էջ 301)՝ պայմանավորված *վայրագոյն*-ի՝ տվյալ դեպքում նշանակության բևեռացմամբ՝ «պարկեշտ, համեստ»: Հետաքրքիր զուգադիպությամբ *վայրագոյն*-ը հանդիպում է միայն ՆՀԲ-ում *խոնարհագոյն* և *ստորնագոյն* բառերի բացատրության մեջ՝ «առաւել խոնարհ (ըստ ամենայն նշ). ցածագոյն. ստորնագոյն. վայրագոյն....», «կարի ստորին կամ ներքին. վայրագոյն» (ՆՀԲ, հ. 1, էջ 962, հ.2, էջ 751. ընդգծ.՝ Ն.Հ.):

Նորակազմ է նաև *օդ, պար* արմատներով և բայական *-ել* վերջավորությամբ բաղադրված *օդապարել*-ը, որ հանդիպում է *Թոչել. վերաթնել. սլանալ. ճախրել. բարձրանալ. թռանել* ՆՇ-ում (Ձեռ. Ձեռ. 566(I), 246ա., 60ա. 873, 195ա. 3110, 88բ. 6762, 108բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են միայն *օդապար*-ը և *օդապարիկ*-ը՝ «Որ պարէ ընդ օդս՝ իրօք կամ նմանութեամբ....»

³⁴ Հ.Բարսեղյան, նշվ. բառ., էջ 774:

նշանակությամբ (ՆՀԲ, հ. 2, էջ 1023. ԱԲ, էջ 842. ԳԲ, հ. 2, էջ 648): *Օղապար* բառահոդվածի վերջում *օղապարել* բայն է առկա XVIII դ. հետո հրատարակված բառարաններից ԳՆԲՀԼ-ում (էջ 1386), արևմտահայերենի՝ 1992թ. լույս տեսած բառարանում³⁵, նաև ՀԼՀԲ-ում՝ «Տե՛ս Օղաճախրել» հղումով (ՀԼՀԲ, 2009, էջ 1222), ԱՀԲԲ-ում՝ «բնստ.» նշումով և «օդում պարել՝ պտույտներ գործելով ճախրել» նշանակությամբ (էջ 1585):

Այսպիսով, XVIII դ. ավանդված ՁԲ-ներում արձանագրված նորակերտ բառերի մեծ մասի գոյությունը հավաստվում է XVIII դ. հետո հրատարակված բառարաններով:

Hovhannisyan Nazik- Newly Created Words in XVIII Century Manuscript Dictionaries of Synonyms.- In the XVIII century manuscript dictionaries of synonyms are fixed some words, which were not testified in the printed dictionaries of the Armenian and are created newly.

The words ասպատակութիւն and ասպատակասփռութիւն (pillage, plunder(ing)), բոգարած (paramour), գերակարող (omnipotent, all-powerful), եռացուցանել (to weld), առակցել (to join, unite, connect), թաթոսից (foot), խոչել (to damage), մանաւանդագոյն (main, chief), միայնատուն (mansion; detached house), ներքևակ and ներքնակ (mattress), նպարել and պարէնել (to feed, nourish), պարտիզակ (little garden), վայրագոյն (resigned), օղապարել (to fly) are considered.

Оганесян Назик- Новые слова в рукописных словарях синонимов XVIII века. - В рукописных словарях синонимов XVIII века встречаются новосозданные слова, которые незафиксированны в изданных словарях армянского языка.

Рассмотренны слова ասպատակութիւն и ասպատակասփռութիւն (грабеж), բոգարած (любовник, любовница), գերակարող (всемогущий), եռացուցանել (сваривать), առակցել (соединять, присоединять), թաթոսից (ступня), խոչել (вредить), մանաւանդագոյն (главный), միայնատուն (особняк), ներքևակ и ներքնակ (матрас, тюфяк), նպարել и պարէնել (кормить, питать), պարտիզակ (садик), վայրագոյն (покорный), օղապարել (летать).

³⁵ Գ.Ճերեմեան, Փ.Կ.Տօնիկեան, Ա.Տէր Խաչատուրեան, նշվ. բառ., հ. 2, էջ 1131:

ՈՐՈՇՅԱԼ ՀՈԴԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզվի մեջ կան բառիմաստի կոնկրետացման, խոսքիմասային իմաստի, շարահյուսական պաշտոնների տարբերակման բառային ու քերականական տարբեր միջոցներ: Սույն ուսումնասիրության մեջ այդ առումով իբրև քերականական միջոց մեզ հետաքրքրում են որոշիչ հոդերը, որոնք «անմիջականացնող, իրադրությունը որոշող արժեք ունեն (առարկայացուցիչներ, ակտուալիզատորներ). դրվելով անունների վրա՝ այդ վերջամասնիկները որոշում են անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը, ցույց տալիս, որ խոսողը որոշում է այդ անունների նշանակած առարկաները (կամ հենց իրենք անունները)՝ ըստ հաղորդակցողներին ծանոթ լինելու աստիճանի կամ հաղորդակցողների հետ ունեցած առնչության»:¹

Առհասարակ որոշյալ հոդերի բառային, քերականական, ինչպես և ռճական-արտահայտչական արժեքները բազմազան ու բազմապիսի են: Նրանց հիմնական գործառույթն այն է, որ դրվելով գոյականների վրա՝ ցույց են տալիս, որ խոսքը խոսողի և խոսակցի համար որոշակի, խոսքի մեջ արդեն հիշատակված և կոնկրետ իրադրության մեջ դրված ծանոթ, հայտնի առարկայի մասին է: Օրինակ՝ **Տղան** հոր համար հայրենիքից բերեց մի բուռ հող: Մակայն որոշյալ հոդերով կարող են գործածվել նաև խոսքի մեջ առաջին անգամ հիշատակվող գոյականները: Դա նշանակում է, որ տվյալ գոյականներով արտահայտված առարկաներն արդեն հայտնի, ծանոթ են խոսողին, խոսակցին և որոշակի են ըստ իրադրության: Օրինակ՝ **Փողոցն** անցանք զգուշությամբ: **Հյուրերը** ժամանել են: **Հրապարակը** մարդաշատ էր: Նման դեպքերում որոշիչ հոդը կատարում է մասնավորեցնող դեր: Այս գործառույթից բացի՝ հոդը ունի նաև ընդհանրացնող նշանակություն. ցույց է տալիս հասկա-

¹Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 139:

ցությունը որպես այդպիսին: Օրինակ՝ **Առյուծը** կենդանիների թագավորն է, իսկ **արծիվը**՝ թռչունների արքան:

Որոշյալ հոդերի հիմնական գործառույթներից մեկն էլ այն է, որ նրանք արտահայտում են ծավալային ամբողջություն՝ դրվելով նյութ ցույց տվող գոյականների վրա: Օրինակ՝ **Ջուրը** թափի՛ր: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է ամբողջին: Որոշիչ հոդի այս գործառույթը տարածվում է նաև հոգնակի թվով գործածված գոյականների վրա: Օրինակ՝ **Ոսկիները** անհրաժեշտ էր տարբերակել:

Որոշյալ հոդերը էական տարր են նաև փոխանվանական կաղապարներում: Դրանք ոչ գոյական խոսքի մասերին տալիս են գոյականական նշանակություն: Օրինակ՝ **բարին, հինգը, բարձրացողը, նստածը, բուրբը** և այլն: Որոշ ածականների, ենթակայական և հարակատար դերբայների փոխանվանական կիրառությունը հանգեցրել է խոսքիմասային իմաստի երկփեղկման. նրանց մեջ զարգացել է նաև առարկայական նշանակությունը: Դրանցից են՝ **երիտասարդ, աղքատ, գիժ, գերի, հարուստ, հիվանդ, ազգայնական, դպրոցական, զինվորական, համալսարանական, ասամունքող, ծառայող, արդյունաբերող, խորոված** և այլն:

Նշված կիրառությունները որոշյալ հոդերի հիմնական գործառույթներն են, որոնք հայ լեզվաբանության մեջ մանրամասն ուսումնասիրված են (Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը», Հ. Պետրոսյան, «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության», Ս. Աբրահամյան, «Ժամանակակից հայերենի քերականություն», Մ. Աստրյան, «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» և այլք): Իրենց հիմնական գործառույթներին (մասնավորեցնող, ընդհանրացնող, ծավալային ամբողջություն ցույց տվող, առարկայական նշանակություն հաղորդող) զուգահեռ՝ որոշյալ հոդերը կատարում են նաև իմաստային այլ գործառույթներ, որոնք կա՛մ ուսումնասիրված չեն, կա՛մ ուսումնասիրված են մասնակիորեն՝ լեզվական այլ երևույթների հետ կապված:

Ժամանակակից հայերենում կան իմաստային ամբողջություն ներկայացնող այնպիսի բայական հարադրություններ՝ կայուն կապակցություններ, որոնց անվանական բաղադրիչի հոդով գործածությունը պատճառ է դառնում կայուն հարադրությունների վերածմանը սովորական շարահյուսական կապակցությունների: Անցումը

պայմանավորված է լինում նաև բաղադրիչների իմաստային առանձնահատկությամբ և նրանց՝ շարահյուսական առանձին պաշտոնների ստանձնումով: Օրինակ՝ **գլխի ընկնել** (հասկանալ)-**գլխին ընկնել**, **կողքի ընկնել** (համառել)-**կողքին ընկնել**, **լույս տեսնել** (հրատարակվել)- **լույսը տեսնել**, **դեմ կանգնել** (հակադրվել)-**դեմը կանգնել** և այլն: Բերված օրինակներում առաջին եզրերը կայուն հարադրություններ են: Սրանց բաղադրիչները թեև ձևականորեն անկախ են, բայց կազմում են մեկ ամբողջություն՝ արտահայտելով փոխաբերական իմաստ: Անվանական բառի հոդով գործածությունը դառնում է հարադրության քայքայման ձևային ցուցիչ: Կայուն հարադրությունը վերածվում է սովորական շարահյուսական կապակցության, որի բաղադրիչները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ և ազատ կերպով հանդես գալիս շարահյուսական այլևայլ կապակցություններում:² Օր. **Լույս տեսավ** հեղինակի առաջին ժողովածուն: - Դուրս գալով նկուղից՝ նա **լույսը տեսավ**: Այս նախադասությունների մեջ ընդգծված արտահայտությունների ձևային տարբերությունը պայմանավորված է միայն հոդով, որն էլ պատճառ է դարձել, որ հարադրված մասերը իմաստային կապով և բառական արժեքով տարբերվեն: Առաջին նախադասության մեջ գործ ունենք մեկ բարդ բառի, իսկ երկրորդում՝ երկու ինքնուրույն բառերի հետ: Առաջինում բաղադրիչներն ունեն միասնական ընդհանրացած իմաստ, իսկ երկրորդում դրանք մի ընդհանուր բառի բաղկացուցիչ մասեր չեն, այլ անկախ են և՛ ձևով, և՛ իմաստով, ուստի և նրանց մեջ բացահայտ է շարահյուսական կապը, իբրև առանձին ստորոգյալի և ուղիղ խնդրի կապ: Առաջին նախադասության ընդգծված միավորը բայական հարադրություն է, տվյալ նախադասության պարզ ստորոգյալը, իսկ երկրորդ նախադասության մեջ ընդգծվածը խնդրառությամբ կապակցված սովորական բառակապակցություն է (լույսը – ուղիղ խնդիր, տեսավ – պարզ ստորոգյալ):

Նույն ձևով կան դարձվածքային արժեք ունեցող այնպիսի հարադրություններ, որոնց գոյականական բաղադրիչների՝ որոշիչ հոդ ունենալ-չունենալով պայմանավորվում է նրանց՝ տարբեր

²Տե՛ս **Ա.Արքահամյան**, *Բայր ժամանակակից հայերենում*, Ե., 1962, էջ 174:

իմաստներին հարելը: Այսպես՝ **առաջ գալ**-ծագել, սերել, առաջադիմություն ցույց տալ // **առաջը գալ**-երևալ, պատկերանալ, իրեն վիճակվել, հատուցվել, **գլուխ պահել**-ծուլություն անել // **գլուխը պահել**-մի կերպ կառավարվել, **խելքի գալ**- սթափվել, զգաստանալ, համոզվել // **խելքին գալ** -խենթանալ, մտադրվել, հասկանալ, **կյանք տալ**- կենդանացնել, աշխուժացնել // **կյանքը տալ**-կյանքը զոհաբերել, նվիրել, մի բանի համար ֆիզիկական և հոգեկան բոլոր ուժերը նվիրել, **հոգի տալ**- անսահմանորեն նվիրված լինել մի բանի, նվիրվածությամբ մի բան անել, պատրաստ լինել կյանքը տալու մի բանի, սաստիկ ցանկանալ // **հոգին տալ**-հոգին ավանդել, մեռնել, **հաց ուտել**-եկամուտ, շահ ստանալ// **հացը ուտել** – նման լինել, նույն բախտին, վիճակին արժանանալ, վատ արդյունք սպասվել, պատժվել, **ձեռք առնել**- ծաղրի առարկա դարձնել, վրան ծիծաղել, կատակել, մի բան ձեռնարկել, // **ձեռքը առնել** -ստանձնել, բուռը հավաքել, **շունչ տալ**- կենդանություն տալ // **շունչը տալ**-անձը զոհաբերել, **հասակ առնել**-մեծանալ // **հասակն առնել**-մեծահասակ դառնալ, **սիրտ առնել**- քաջալերվել // **սիրտն առնել**- սիրաշահել, **ոսկոր կտրել** – նիհարել, հալվել-մաշվել // **ոսկորը կտրել**- շատ աշխատանք թափել, չարչարվել և այլն:³ Բերված օրինակներից պարզ երևում է, որ անվանական բաղադրիչը, հոդ ընդունելով, ազդում է հարադրության բառական իմաստի վրա, սակայն չի քայքայում հարադրությունը: Օրինակ՝ Հայ զինվորն իր **շունչը տվեց (անձը զոհաբերեց)** հայրենիքի անվտանգության համար: Նա իր աշխատասիրությամբ **շունչ տվեց** (կենդանություն տվեց) ծարաված այգիներին: Երկու նախադասություններում էլ ընդգծված միավորները հարադրություն են՝ բառիմաստի տարբերությամբ:

Ժամանակակից հայերենում կան շարահյուսական հիմունքով գոյացած բայական այնպիսի հարադրություններ էլ, որոնց անվանական բաղադրիչի հոդ ընդունելը չի ազդում հարադրական բառի բառական միասնության վրա, հոդը չի փոխում հարադրության իմաստը և չի քայքայում այն, երկու տարբերակներն էլ մնում են իմաստային նույն դաշտում: Օրինակ՝ **ականջը/ը տանել** – ձանձ-

³Ներկայացվող դարձվածքների իմաստները բերված են ըստ Ա. Մ. Սուքիասյանի, Ա. Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի», Ե., 1975:

րացնել, լսողությունը հոգնեցնել, **անկողին/ը/ արատավորել**– ամուսնական ուխտին դավաճանել, **աչք/ը/ տնկել**—հայացքը կենտրոնացնել, ուշադրությամբ մի բանի նայել, մի բանի վրա աչք ունենալ, ապավինել, նախանձով նայել մի բանի, **գլուխ/ը/ տաքացնել**—որևէ բանի հասնելու համար շատ չարչարվել, մի բանի շատ ձգտել, իրար անցնել, մի բանի մասին շատ մտածել, դժվարությամբ գլխի ընկնել և այլն:

Ժամանակակից հայերենում հոդը երբեմն գործածվում է խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերի կիրառությունները սահմանագծելու համար: Այսպես՝ ածականական ծագում ունեցող և ածական-գոյական տարարժեքություն դրսևորող մի շարք բառերի իմաստները նույն նախադասություններում կարող են տարորոշվել հոդի գործածությամբ: Օրինակ՝ Եկողը **երիտասարդ** է:/ածական/ - Եկողը **երիտասարդն** է:/գոյական/: Մակբայական և այլ ծագում ունեցող մի շարք անիսկական կապեր և կապական բառեր, ինքնին չլինելով նախադասության անդամ, ստանալով որոշյալ հոդ, ձեռք են բերում մակբայական-պարագայական գործածություն: Այդպիսի բառերից են՝ **առաջ, առջև, դիմաց, դուրս, մեջ, մոտ, շուրջ, վրա, դեմ** և այլն: Օրինակ՝ 1.Շենքի **առաջ** հավաքել էին մարդիկ: /կապ/ - Շենքի **առաջը** հավաքել էին մարդիկ: /մակբայ/ 2.Նրա **դեմ** ոչինչ անել չես կարող: /կապ/ - Բացվել է **դեմը** աշխարհի հեռուն: /մակբայ/ 3. Նրանց հանեցին հայրենիքից **դուրս** /կապ/: - **Դուրսը** հարազատ ոչինչ չկար: /մակբայ/ 4.Դռնից **ներս** անմիջապես հյուրանոցն էր: /կապ/ - **Ներսը** մույժ էր: /մակբայ/: 5.**Շուրջ** երկու տարի պտտվում էր: (կապ) -**Շուրջը** երկու տարի պտտվում էր: (տեղի մակբայ:)

Հոդը կարող է առաջ բերել նաև ածական-մակբայ (**Մոտ** մարդ չկար: /ածական/ - **Մոտը** մարդ չկար: / մակբայ/, գոյական-վերաբերական (**Վե՛րջ**, էլ ոչինչ չես անի: /գոյական/ -**Վերջը**, էլ ոչինչ չե՞ս անի: /վերաբերական/, թվական –անորոշ դերանուն (**Մեկ** նշանակեց: /թվական/-**Մեկը** նշանակեց: /դերանուն/) խոսքիմասային տարարժեքություն: Այն երբեմն նաև նույնաբաղադրիչ նախադասության մեջ ներխոսքիմասային տարարժեքության տարր է: Օրինակ՝ **Առաջ** դպրոց էր: (ժամանակի մակբայ) -**Առաջը դպրոց էր:** (տեղի մակբայ)

Մնալով իմաստային նույն խմբում՝ **վեր** և **վար** մակբայներից

ոչ միայն ձևով, այլև իմաստով որոշ չափով տարբերվում են **վերը և վարը**: Եթե անհոդ ձևերն ուղղության շատ թույլ իմաստ ունեն, ապա հոդով ձևերը գուրկ են այդ իմաստից և պարզապես ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը կամ գտնվում է տվյալ առարկան, հատկանիշը: Օրինակ՝ **Նա երբեմն նայում էր վեր:** - **Վերը**, կապույտ երկնքում, աստղերն են շողշողում: Թափով իջավ **վար:** - **Վարը** տարածվել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ:

Երբեմն բառի խոսքիմասային իմաստը կարող է պայմանավորված լինել լրացյալի հոդով կամ առանց հոդի գործածությամբ: Այսպես՝ **«Մի թերթ պոկեցի»** նախադասության մեջ **մի** բառը անհոդ լրացյալի մոտ ընկալվում է և՛ անորոշ դերանուն, և՛ թվական, իսկ հոդով լրացյալի մոտ՝ միայն թվական՝ **«Մի թերթը պոկեցի»**:

Ինչպես բառի կապական կամ դերանվանական իմաստի տարբերակման գործում հոդը երբեմն կատարում է կարևոր դեր: Օրինակ՝ **«Նա սավառնում է ինչպես արծիվ»** նախադասության մեջ **ինչպես** բառը, լինելով կապ, իր խնդրի հետ կատարում է ձևի պարագայի պաշտոն: Երբ հոլովառու բառը գործածվում է հոդով, ապա վերածվում է ենթակայի, որի կողքին արդեն **ինչպես** բառը դիտվում է իբրև հարաբերական դերանուն, որով կապակցվում է գեղջված ստորոգյալով ձևի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորին: Օր.՝ **Նա սավառնում է, ինչպես արծիվը**:

Որոշյալ հոդերն ունեն նաև նախադասության անդամի շարահյուսական գործառնությո՞ւն տարբերակելու հատկություն: Այսպես՝ լրացում-լրացյալ հարաբերության մեջ գտնվող որոշ բառակապակցություններում հոդի գործածությունը փոխում է ինչպես բաղադրիչների շարահյուսական հարաբերության բնույթը, կապակցման եղանակները, այնպես էլ նրանց ունեցած պաշտոնները: Օրինակ՝ կան ուղղական հոլովով դրված զբաղմունք, մասնագիտություն, կոչում, ազգակցություն ցույց տվող բառեր, որոնք լրացնում են հատուկ անուն գերադաս անդամին (**սպարապետ Վազգեն**), կամ էլ հատուկ անունն է լրացնում հիշյալ իմաստային խմբերի մեջ մտնող բառերին (**Վազգեն սպարապետ**): Եթե նման կապակցություններում որոշչային կիրառություն ունեցող բառերը ստանում են հոդ, ապա որոշիչ-որոշյալ հարաբերությունը (**կապակցման եղանակը՝ առդրություն**) փոխվում է բացահայտիչ –բացահայտյալ հարաբե-

րության (կապակցման եղանակը՝ համաձայնություն): Օրինակ՝ **Վազգեն սպարապետը** առանձնանում էր իր մարտական արվեստով: - **Վազգենը՝ սպարապետը**, առանձնանում էր իր մարտական արվեստով: Առաջին նախադասության որոշիչը երկրորդ նախադասության մեջ դառնում է ենթակա, իսկ ենթական բացահայտիչ:

Ժամանակակից հայերենում կան եղանակիչի արժեք ունեցող բայեր, որոնք պահանջում են անորոշ դերբայ լրացում: Դրանցից **արգելել, բարեհաճել, մոռանալ, սկսել, շարունակել, գերադասել** և մի քանի այլ բայեր, երբ հարադրվում են անհոդ անորոշ դերբային, կազմում են բաղադրյալ ստորոգյալ: Նույն բայերի կողքին հոդառու անորոշ դերբայը վերածվում է ուղիղ խնդրի: Դա ավելի է ընդգծվում, երբ դերբայը դրվում է դիմավոր բայից առաջ: Օրինակ՝ **Ուսուցիչը շարունակում է բացատրել: // Ուսուցիչը շարունակում է բացատրելը: / Ուսուցիչը բացատրելն է շարունակում: Նա գերադասում է լռել: // Նա գերադասում է լռելը: / Նա լռելն է գերադասում: Արգելեց խոսել: // Արգելեց խոսելը: // Խոսելը արգելեց: Մոռացավ հիշեցնել: // Հիշեցնելը մոռացավ:**

Ածականից, մակբայից կամ մի այլ խոսքի մասից և բայական հանգույցից կազմված լավ է, վատ է, անհնարին է, հնարավոր է, հաճելի է, տհաճ է, դժվար է, հեշտ է, ապարդյուն է և նման մի շարք կառույցներ անհոդ անորոշ դերբայի հետ կազմում են միակազմ անդամ նախադասության գերադաս անդամ: Նույն կառույցներում անորոշ դերբայը, ստանալով հոդ, կատարում է ենթակայի պաշտոն: Փոխվում են ինչպես բառերի շարահյուսական գործառույթները, այնպես էլ նախադասությունների կազմությունը: Միակազմ անդամ նախադասությունը վերածվում է երկկազմ նախադասության: Օրինակ՝ **Հաճելի է նկարել: // Հաճելի է նկարելը: Դժվար է ներկայացնել: // Դժվար է ներկայացնելը:**

Նախադասության անդամների շարահյուսական պաշտոնների և նրանց կապակցման եղանակների փոփոխությունը, պայմանավորված հոդի գործածությամբ, կարելի է ցույց տալ՝ համեմատելով **«Երգում է Կոմիտաս»** և **«Երգում է Կոմիտասը»** նախադասությունները: Առաջին նախադասությունը գեղջված ենթակայով նախադասություն է, որի փոխանուն ուղիղ խնդիրը (Կոմիտաս) խնդրառությամբ կապակցված է գերադաս անդամին: Երկրորդ

նախադասության մեջ նույն բառը դարձել է ստորոգյալին համաձայնությամբ կապակցված ենթակա:

Հողի գործածությամբ տարբերվում են և բաղադրյալ ստորոգյալից հետո թվարկվող բազմակի ենթականները բացահայտիչներից, օրինակ՝ «Իմ սիրած քաղաքներն են **Երևանը, Մոսկվան, Փարիզը**» և «Իմ սիրած քաղաքներն են՝ **Երևան, Մոսկվա, Փարիզ**»:

Որոշ կառույցներում անորոշ դերբայը, **պես** կապի կողքին դրվելով որոշյալ առումով, կատարում է ժամանակի պարագայի, իսկ անորոշ առումով՝ ձևի պարագայի պաշտոններ: Օրինակ՝ **Երգելուն պես** սկսեց լացել: // **Երգելու պես** սկսեց լացել:

Որոշյալ հողի գործածությունը ձևաբանական և շարահյուսական մակարդակներում որոշակիորեն սահմանափակված է կամ, ընդհակառակը, նրա գործածությունը պարտադիր է տվյալ գործածությո՞ւյթը կատարող լեզվական միավորի համար: Կան բառեր, որոնք ընդհանրապես հող չեն ստանում, օրինակ՝ **աստված** (միայն ուղղականում), **կանայք, պարոնայք, մարդիկ, անձինք, -անք, -ենք, -ունք, -ոնք ածանցներով անեզական գոյականները՝ Արամենք, Վարդանանք, Վեդունք, մերոնք** և այլն: Կան և բառեր, որոնց դեպքում հողը կատարում է բառայնացման արժեք, օրինակ՝ ընդամենը, ընդհակառակը/ն/, սառը, դառը, խառը,ինքը, ամենքը, ամեն մեկը, ոչ մեկը, վաղը և այլն:

Ժամանակակից հայերենում որոշյալ հողերի գործածությունը կապված է նաև հողառու բառի վերադրի բնույթից: Որպես այդպիսի դեր կատարող վերադիրներ կարող են հանդես գալ.

1.Այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, ո՞ր, ո՞րերորդ, քանի՞երորդ, բոլոր, ողջ, ամբողջ, համայն, այսինչ, այնինչ դերանունների հետ իբրև լրացյալ գործածվող գոյականները կամ գոյականաբար գործածված բառերը: Օրինակ՝ Արդեն **ո՞ր երբորդ մարդը** կրկնում էր **նույն հարցը: Ողջ մարդկությանը** խաղաղություն է անհրաժեշտ: **Ողջ, ամբողջ** դերանունները, սակայն, զուգակցվելով **մի** անորոշ դերանվան հետ, պահանջում են անորոշ առումով լրացյալ: Օրինակ՝ **մի ամբողջ աշխարհ, մի ողջ երկիր**:

2.Ածականի գերադրական աստիճանը՝ Նա իրեն **ամենաերջանիկ հայն** է համարում:

3.Դասական թվականները՝ **Վեցերորդ զիշերը** մոլորված մի

պտտահողմ անցավ մեր ժայռերի վրայով:

4. Ուղղական հողովով դրված գոյական որոշիչները՝ **Տիկին Աննան** հայրենակիցներին հրաժեշտ տվեց: Սովորաբար որոշյալ լրացյալ է պահանջում և հատուկ անուն որոշիչը՝ **Աննա մորթույրը** հրաշալի կին է:

5. Հատկացուցիչը՝ Այդ օրը **երկնքի աստղերն** այնքան շատ էին, որ թվում էր, թե երկինքը հյուսված էր աստղերից: Երբ տվյալ հոլովածնը գործածվում է հատկանշային իմաստով, լրացյալը սովորաբար դրվում է անորոշ առումով: Օրինակ՝ Պատերազմում թրծված այդ կինը **տղամարդու ձայն** ունի: Նա կարոտել է **մոր գրկի**: Ես հավաքել եմ **դաշտի ծաղիկներ**: Քննարկվող հարցի տեսակետից հետաքրքրական է, որ այդպիսի վերադիրները նույնիսկ երբեմն կարելի է փոխարինել համապատասխան հարաբերական ածականներով՝ **տղամարդկային ձայն**, **մայրական գիրկ**, **դաշտային ծաղիկներ** և այլն:

6. Որոշակի հարաբերությամբ առարկա ցույց տվող ցուցականության իմաստ ունեցող մի շարք բառեր՝ **միջին, վերջին, հաջորդ, հետևյալ, նշված, վերոնշյալ** և այլն: Օրինակ՝ **Վերջին գիրքը** նվիրեցի **հաջորդ երեխային**:⁴

Որոշյալ առումով ուղղականաձև կամ տրականաձև կապվող բառ են պահանջում **առ, ի վար, ի վեր, նախքան, չհաշված, առնթեր, գուզընթաց, ընդառաջ, կից, հակառակ, համաձայն, համապատասխան, հավասար, նայած, չնայած, չնայելով**, իսկ անորոշ առումով՝ **զերդ, ի, չանցած, առանց, առթիվ, առջև, դեմ, դիմաց, երեսից, ընդդեմ, ընթացքում, ըստ, ժամանակ, ի դեմս, ի թիվս, ի հեճուկս, ի տարբերություն, ի փառս, հանձին, հանուն, կողմից, համար, հասցեին, հետ, հետևանքով, հիման վրա, հոգուտ, համեմատ, հանդեպ, ձեռքից, մասին, մեջ, միջև, միջոցով, մոտ, ներքո, նկատմամբ, նպատակով, շնորհիվ, շուրջ /ը/, չափ, պատճառով, պես, վերաբերմամբ, վերաբերյալ, տեղ, փոխարեն, փոխանակ կապերն ու կապական բառերը:**

Որքան, ինչքան, քանի, ինչպիսի, որպիսի, ամեն մի, ինչ-որ,

⁴ Տե՛ս **Հ. Պետրոսյան**, Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Ե., 1976, էջ 173-179:

ինչ-ինչ, ուն, մի, ուրիշ, այլ, որոշ, որևէ, որևիցե, մի քանի, մի երկու, ոչ մի դերանունները ևս գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ:

Կան հոլովաձևեր՝ բացառական, գործիական, ներգոյական, որոնք միշտ գործածվում են առանց որոշյալ հոդերի, և քանի որ հոդը ուղղակիորեն կապվում է հոլովի գործառության հետ, բնականաբար նախադասության այն անդամները, որոնք արտահայտվում են նշված հոլովներով, գործածվում են առանց որոշիչ հոդի:

Կան և հոլովաձևեր (ուղղական, տրական), որոնց հոդով կամ առանց հոդի գործածությունը բխում է տվյալ նախադասության մեջ նրանց արտահայտած քերականական իմաստից: Այսպես՝ հոդառու չեն գոյականի **ուղղական հոլովով արտահայտված որոշիչը**՝ ուսուցիչ Գրիգորյան, վարպետ Մինաս, բանաստեղծ Թումանյան, նկարիչ Սարյան, **տեղի, ժամանակի, նյութի և այլ իմաստ արտահայտող գոյականների տրական հոլովաձևով արտահայտված որոշիչը**՝ սարի ծաղիկ, դաշտի շուշան, անտառի սունկ, թեյի բաժակ, գինու թաս և այլն, հատկացուցիչը՝ կյանքի գինը, քաղաքի համայնապատկերը, **բուն բացահայտիչը, եթե բացահայտյալը արտահայտված է հատկացական տրականով**՝ «Նրա դստեր՝ Անահիտի աղջկա հետ բաղուց եմ ծանոթ» , **մասնական բացահայտիչը**՝ « Նա՛ իբրև հայրենակից, ինձ շատ հարազատ է», «Նրան՝ իբրև հայրենակցի, հարգում են բոլորը», **նպատակի տրականը**՝ «Գնաց աղբյուրը՝ ջրի», **տրական կողմնակի ենթական**՝ «Դռան բացվելուն պես եկավ», **անվանական անդամ նախադասության գերադաս անդամը**, որի կողքին դրված չեն **ահա** վերաբերականը և այլ անդամներ՝ «Հայրենիք», «Մուրբ կոթողներ» բայց՝ «Ահա մեր հայրենիքը», «Ահա մեր սուրբ կոթողները» և այլն:

Որպես հանգույց գործածվող **դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, երևալ, կոչվել, հռչակվել, ճանաչվել, ձևանալ, մնալ, անվանել, նշանակվել, առաջադրվել** և այլ վերացական բառերի կողքին վերադիրը հիմնականում դրվում է անորոշ առումով, մանավանդ երբ այն վերացական բայից հետո է՝ **դարձավ ուսուցիչ, համարվեց հեռու, ձևացավ դերասան, առաջադրվեց պատգամավոր** և այլն:

Սրանց հակառակ՝ **ժամանակի տրականը** գործածվում է

հոդով՝ **լուսաբացին, ծեզին, մայրամուտին, հունվարին, ամռանը, գարնանը** և այլն: Սրանց հոդառությունը պայմանավորված է գերազանցապես նրանով, որ նրանց արտահայտած հասկացությունները գործողությունը առնում են որոշակի ժամանակային հաջորդակետությամբ, ներկայացնում են <<որոշյալ>> ժամանակակետ՝ **Մայրամուտին** արևը բոքր է լինում:

Մաս և կես բառերը ենթակայի կամ խնդրի պաշտոնում գերազանցապես հոդառու են, հաճախ նաև հոդ չպահանջող վերադրի առկայությամբ: Օրինակ՝ Ժառանգության **մի որոշ մասը** պիտի ստանա կինը: **Մեծ մասը** բաժին կհասնի երեխաներին:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում որոշիչ հոդերի բառային, քերականական և ոճաարտահայտչական արժեքները բազմազան են, նրանք կարող են լինել ինչպես բառիմաստի կոնկրետացման, մասնավորման, այնպես էլ խոսքիմասային իմաստի, շարահյուսական պաշտոնների տարբերակման միջոց:

Ghazaryan Hasmik -Semantic and Functional Features of the Definite Article.- Semantic and functional features of the definite articleLexical, grammatical, as well as stylistic and expressive value of Armenia definite article is diverse and versatile. In Standard Modern Armenian definite article together with its main functions (specification, generalization, reflecting volume integrity and communicating substantial meaning) performs other functions. As an element of lexical and grammatical conversion it exhibits the feature of differentiation of the function of members of the sentence.

Газаря Асмик- Семантико-функциональные особенности определенного артикл. - Семантико-функциональные особенности определенного артикля разнообразны и многообразны. В современном армянском литературном языке определенный артикль, кроме присущих ему основной функции (конкретизирующей, обобщающей, обозначающей объемное единство, предающее предметное значение) выполняет иные семантические функции, являясь элементом лексической или грамматической конверсии и в этой связи обнаруживая также особенность разграничения функции члена предложения.

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Արցախի տեղանվանական համակարգում հնդեվրոպական ծագման հիմքերով կազմված անունները մեծ թիվ են կազմում: Հայկական բարձրավանդակի՝ համապատասխան հիմքերով կազմված տեղանունների բավականաչափ մեծ թվի առկայության փաստը Ջահուկյանը բացատրում է նրանով, որ հայերը, հիմնականում չփոխելով գործածության մեջ եղած տեղանունները, ամեն մի նոր հիմնադրած վայր անվանակոչում էին կամ հայտնի տեղանունների՝ լեռան, գետի անուններով, կամ անձնանուններով, կամ էլ հայկական համապատասխան լեզվամիջոցներով¹: Եվ Արցախի տեղանվանական համակարգում բոլոր պատմաշրջաններում էլ թե՛ նոր անվանումների և թե՛ վերանվանումների դեպքում այդ երևույթն օրինաչափորեն գործում էր:

Թերևս այն իրողությունը, որ Հայկական բարձրավանդակի տեղանուններում վկայված հնդեվրոպական ծագման բառերի զգալի մասը աշխարհագրական օբյեկտների անվանում է՝ տեղանիշ անուն, բնորոշ է նաև Արցախի տեղանվանական համակարգին: Այդ միավորներն իրենց կիրառական ակտիվությամբ ցայսօր էլ առաջնային են: Դրանք են **ձոր/ծոր/20/, թաղ/8/, քար/11/, սար/7/, գոմ/կ'ում//4/, հող/5/, ջուր/ճուր/7/ աղբյուր/ախպուր/4/, գետ/կ'ետ/4/, տեղ/տը'դ/** հիմնական ձևույթները, որոնցով բաղադրված բնականությունների թիվն անցնում է **7 տասնյակից²**: Այսպես՝ **ձոր** աշխարհագրական անվամբ բաղադրված է թվով **20** հին ու նոր բնականուն, **քար** բաղադրիչով՝ թվով **11** բնականուն, **թաղ** եզրով՝ **9** բնականուն, **սար** եզրով՝ **7**, **ջուր** եզրով՝ **7** բնականուն, **աղբյուր**՝ **4**, **գետ/կ'ետ**՝ **3**, **հող**

¹ **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 412:

² «ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ 1998թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենքի /2011թ. ապրիլի 1-ի ՀՕ-Ն օրենքների լրացումներով ու փոփոխություններով/ հավելված թիվ 2:

եզրով՝ **6** բնականուն, **գոմ** եզրով՝ **6**:

Ընդ որում տեղանիշ այդ միավորները հաճախական կիրառություն ունեին ինչպես հին բնականունների կազմություններում, այնպես էլ շարունակում են մնալ ամենակենսունակ եզրերը նոր բնականավայրերի անվանակոչումներում: Եվ սա փաստում է այն իրողությունը, որ բնականունները անվանակոչելիս կարևոր կողմնորոշիչ է մնում տարածքի աշխարհագրական բնութագիրը: Անշուշտ, արդի տեղնավանագիտությունն ավելի հարուստ է և բազմանշանակ, բայց և հին ժամանակներից գործող օրինաչափություն է, որ անվանումը տրվում էր՝ տվյալ տարածքի աշխարհագրական բնութագիրը հիմք ընդունելով:

Այսպես՝ Հաղրութի շրջանի բնականուններում **ձոր** եզրով բաղադրված բնականունները թվով **6**-ն են/**Ձորագյուղ, Բանաձոր, Խանձաձոր, Ծամձոր, Մարիամաձոր, Ուխտաձոր**/, իսկ Քաշաթաղի շրջանում՝ **9**-ը/**Բերձոր, Աղաձոր, Մեղվաձոր, Դրախտաձոր, Ուխտաձոր, Իշխանաձոր, Ծոբաձոր, Ձորափ, Աղբրաձոր**/, ընդ որում վերջիններս */բացի Բերձորից/* նոր բնականուններ են՝ վերանվանումներ: Երկու դեպքում էլ բնականվանումների հիմք են դարձել այդ շրջանների աշխարհագրական նկարագրի իրողությունները: Այդպես նաև Մարտակերտի շրջանի բնականուններում թվական նկատելի կշիռ ունեն անտառային նկարագիր տվող անվանումները՝ **Մնակահող, Թրլղու, Կիչան, Քոլատակ/քոլ-անտառ/, Կոճողոտ**: Հայտնի է, որ Մարտակերտի շրջանն իր անտառային ֆոնդով Արցախի Հանապետության անտառային ծածկի մեծ մասն է զբաղեցնում³:

Նշված տեղանիշ միավորներից **գոմ** եզրն է, որի տեղանվանակերտության գործառույթն այսօր գրեթե մարած է. այդ եզրով փաստաթղթային-իրավաբանական ճանապարհով տեղանուն կերտելու հնարավորությունը խիստ սահմանափակ է, թույլ է նաև բնական ճանապարհով առաջանալու հնարիությունը՝ պայմանավորված հասարակատնտեսական նոր հարաբերություններով: Սա նշանակում է նաև, որ տեղանիշ յուրաքանչյուր եզր տեղանվանա-

³ **Մելքումյան Ս.**, *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրություն*, «Լույս», Երևան, 1998, էջ 51:

կերտության կենսունակությունն ունի, եթե նրա արտահայտած բառական իմաստը և դրանով նշվող իրողությունը ժամանակային որևէ պարագծով չեն սահմանափակվում:

Անշուշտ, տեղանունը հասցե է, այն մատնանշում է կոնկրետ օբյեկտ. սա նրա հիմնական իմաստն է: Բայց և յուրաքանչյուր միավոր դառնում է տեղանվանահիմք՝ իր նյութական նշանակությամբ: Հետո միայն իբրև տեղանուն, ինչպես նշում է Վ.Նիկոնովը, իմաստով կտրվում է տեղանվանահիմք միավորի բառիմաստից, և առաջնային իմաստն է դառնում հասցեականությունը⁴:

Արցախի տեղանվանական համակարգում հաճախական կիրառությամբ հանդես են գալիս նաև բնակավայրի տեղագրական առանձնահատկությունը նկարագրող հնդեվրոպական ծագման բառամիավորներ. ինչպիսիք են՝ *մեծ, հին, նոր, վերին/յերե/, ներքին/նրքե/, մյուս* և այլն:

Այսպես՝ պատմական Արցախի 12 նահանգներից երեքը՝ *Մեծ Առանքը, Մեծ Կունքը և Մյուս Հաքանդը* այդպիսի բաղադրություններ էին: Ընդ որում, այս բոլոր բնութագրիչ եզրերը՝ *մեծ, մյուս* և այլն, նաև պատմական կարևոր տեղեկանք են տալիս այդ գավառանունների մասին. *մեծ* որոշիչով կարող է տարբերվել մի տեղանունը արդեն իսկ գոյություն ունեցող նույնանուն մեկ այլ տեղանունից, որն ավելի հին է, քան որոշիչով տարբերակվողը: Եվ այս դեպքում նշանակություն չունի *մեծը* տեղանվան տարածական բնութագիրն է տալիս, թե մեկ այլ հատկանշային առանձնահատկություն է նշում: Նույնը հավաստում է պատմական աղբյուրը: Բ. Ուլուբաբյանը նշում է, որ *Մեծառանքը կազմված է Առան տեղանունից, սա էլ, ըստ ավանդության, Առան Միսակյան այն առաջին իշխանի անունից է, որ Վաղարշակ թագավորի կողմից կուսակալ էր կարգված Հայաստանի հյուսիսարևելյան գավառների վրա*⁵: *Սկզբնապես Առան է կոչվել Խաչենագետի և Թարթառի ստորին ավազաններն ընդգրկող տարածքը: Հետագայում պարսիկ և արաբ մատենագիրները Առան անունով էին կոչում նաև Կուրի ձախափնյակը*⁶:

⁴ **Никонов А. В.**, Введение в топонимику, “Наука”, Москва, 1965, стр 58.

⁵ **Ուլուբաբյան Բ.**, *Խաչենի իշխանությունը X-XVI դդ.*, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ, Ե., 1975, էջ 31:

⁶ **Նույնը**, էջ 40:

Այդպես նաև **Մյուս** եզրը կցվել է **Հաբանդ**-ին՝ Մյունիքի նույնանուն գավառանունից արցախյանը տարբերելու համար: Նույնը հաստատում է պատմական տեղեկանքը. «*Ասկէ կը հետեւի, որ Արցախի Հաբանդ գաւառը, զոր Խոր. աշխարհագրութիւնը միւս Հաբանդ կանուանէ⁷ Միւնեաց Հաբանդ գաւառէն զանազանելով, Մովսէսէն և անկէ քաղող մատենագիրներէն⁸ Փոքր Միւնիք անուանուած է*»/ընդգծումը մերն է/⁷

Ներքին և վերին տեղագրական բնութագրերը հիմնականում միննույն բնակավայրի երկու մասերն են առանձնացնում: Գրեթե բոլոր բնակավայրերում բնական ճանապարհով առաջացած այսպիսի տարբերակում առկա է, բայց այն փաստաթղթային վավերացում չի ստանում և մանրատեղանվան կաղապարում է գիտակցելի: Իբրև բնականուն՝ փաստաթղթային-իրավաբանական վավերացում ունեն **Վերին Սգնեք-Ներքին Սգնեք, Վերին Հոռաթաղ-Ներքին Հոռաթաղ** բնականունները:

Այսօր Արցախի բնականուններում տեղագրական առանձնահատկություններ նշող այդ եզրերով կազմությունների թիվը հասնում է **29**-ի, որից **նոր** բառային միավորով կազմված **14** բնականուններ պատմական հին բնականունների նույնականությամբ են ստեղծվել. ինչպես՝ **Նոր Կարմիրավան, Նոր Հայկաջուր, Նոր Բրաջուր, Նոր Մարաղա, Նոր Ղազանյի** և այլն: Այս դեպքում **նոր**-ով վերանվանումները համապատասխան բնակավայրերից տարիանված բնակչությանը հղվող վերաբնակեցման յուրօրինակ կանչ են դառնում:

Վերանվանված այդ բնակավայրերից մեկում զուգակից առկա են **նոր** ու **վերին** բնութագրիչ եզրերը. **Նոր Վերինշեն (Շահումյանի շրջանում** կար **Վերին շեն ավան**, որը ժամանակավորապես գտնվում է հակառակորդի հսկողության տակ: Այսօրվա Շահումյանի (նախկին Քարվաճառի) շրջանում հիմնադրվել է նոր բնակավայր՝ **Նոր Վերինշեն գյուղը**): Ակնհայտ է, որ այս դեպքում համադրական կազմության մեջ ինքնաբեր լուծվել են բաղադրիչների իմաստները, և **վերին** բաղադրիչն այլևս գիտակցելի չէ իր բնութա-

⁷ **Հիւրջման Հ., Հին հայոց տեղոյ անունները:** Հայոց աշխարհին պատմական տեղեկագրութեան մասին ուսումնասիրութիւններով /Թարգմ.՝ Հ. Բ. Պիլեգիկճեան. – Վիեննա: Մխիթարեան տպարան, 1907, էջ 100-101:

գրող, որոշարկող նշանակությամբ, այլ դարձել է տեղանվան բաղադրիչ: **Նոր** եզրն է այս դեպքում բնութագրիչը:

Բոլոր այս կազմություններում **նոր**-ի մինչտեղանվանական՝ բառական իմաստը որոշակի է, մինչդեռ համադրական բարդություններում՝ **Նորջեն**, **Նորաշենիկ**, **Նորագյուղ**, **նոր** միավորը կորցրել է իր բառական նշանակությունն ու դարձել տեղանվան բաղադրիչ և իբրև այդպիսին՝ դադարել հասարակ անվան ընդհանրական իմաստ ունենալուց: Ինչպես Յու. Ա. Կարպենկոն է նշում. «Տեղանվանը բնորոշ չէ իմաստաբանական ընդհանրացումը, որը հատուկ է հասարակ անուններին: Կարևոր է տեղանվանական և ոչ տեղանվանական ստուգաբանական մեկնության տարբերությունը հատկանշել. ստուգաբանելով հասարակ անունը՝ մենք տալիս ենք այդ անունը կրող բոլոր առարկաների, երևույթների ծագումը, մինչդեռ մեկնելով տեղանունը՝ մենք բացահայտում ենք միայն մեկ օբյեկտի՝ տվյալ օբյեկտի անվան ստուգաբանությունը»⁸: Սա բնութագրում է տեղանվանը բնորոշ մի կարևոր առանձնահատկություն ևս. այն, որ նույն հիմքով կազմված տեղանուններից յուրաքանչյուրում տվյալ եզրն անկրկնելի է, ոչ նույնական երկրորդին, և բնութագրում է միայն անվանակիր տվյալ օբյեկտը կամ վայրը. ինչպես՝ **Մեծ շեն** և **Մեծ Թաղեր** տեղանուններում **մեծ** բաղադրիչը նույնիմաստ չէ. Առաջին դեպքում **մեծ**-ով է բնութագրվել այդ բնակավայրը, որովհետև դեռ 12-13րդ դդ. այդ գյուղն ունեցել է մի քանի 1000 ծուխ:⁹ Իսկ երկրորդին **մեծ** բնութագրիչը տրվել է առանձին «թաղերի» հետագա միավորումից հետո¹⁰. այս դեպքում **մեծ**-ն ամբողջացնող բնութագիրն ունի:

Արցախի տեղանվանական համակարգում մեծ թիվ են կազմում նաև անձնանվանահիմք տեղանունները/**մոտ երկու տասնյակ**/. ինչպիսիք են՝ **Մադաթաշեն**(եղել է գեներալ, ռուսական բանակի փառաբանված զորավար Վալերիան Մադաթովին պատկանող անասնազոմերի տեղը. այստեղից էլ առաջացել է այժմյան անվանումը)¹¹, **Մխիթարաշեն**(անվանումը կապված է Մխիթար Սպարա-

⁸ Карпенко Ю.А., *Лингвистика-география-история*. - Сов.сल्याновед., 1970, N 4, с. 66.

⁹ Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 173:

¹⁰ Մելքումյան Ս. Ա., նշված աշխատությունը, էջ 252-253:

¹¹ Նույնը, էջ 138:

պետի հետ. այս գյուղի մոտակայքում Մի. Սպարապետի գլխավորած զորքը ջախջախել է պարսիկների մեծաքանակ զորքին: Մի ժամանակ կոչվել է նաև Ըրկըթալի¹²: Արկաթալուշեն- անվանումն առաջացել է Երկաթալի ձոր անունից/ըստ Մատենադարան, ձեռ. 2734)¹³, **Մեղիշեն, Մարգուշան**(մինչև 1952թ. գյուղը կոչվել էր Մարգուշան: Հիմնադրվել էր 1906թ. և կոչվել տեղի հողատեր Ավան Յուզբաշովի դստեր՝ Մարգուշայի անունով. ապա վերանվանվել էր Լենինական)¹⁴, **Հարությունագումեր**(բնակիչները Վանք գյուղից են տեղափոխվել և ի պատիվ նրանցից ամենահեղինակավորի՝ Հարությունի, այն կոչել է Հարությունագումեր կամ Հարությունաշեն)¹⁵, **Մարտունի**(Ալ. Սյասնիկյանի մականունն էր) և այլն:

Անձնանվանահիմք այս տեղանունների մի մասը անվանակոչվել է հիմնադիրների անունով, մի մասը վերանվանում է՝ ի պատիվ նշանավոր անձանց, դեմքերի: Հատկանշելի է այն փաստը, որ Արցախի տարածքում չկան անձնանվանահիմք հին բնականություններ, որոնց հիմնադիրը օտարազգի լիներ, և տեղանունը այդ օտար տարրի երբեմնի տեղաբնակ լինելու կասկածը կամ մտածումը հարուցեր:

Ուսումնասիրելով հնդեվրոպական արմատների կենսունակությունը Արցախի տեղանվանական համակարգում՝ բացահայտվում է այն իրողությունը, որ հնդեվրոպական ձևույթներով բաղադրված անունները բոլոր ժամանակներում կազմել են այդ համակարգի հիմնական շերտը:

Անշուշտ, Արցախի տեղանվանական համակարգը հայկական տեղանվանական ընդհանուր շերտի մի հատվածն է, որի նկարագրով հնարավոր է ճանաչել ու բացահայտել ինչպես հայկական տեղանվանական համակարգին բնորոշ իրողություններ, այնպես էլ տեղային յուրահատուկ դրսևորումներ: Թերևս առանձնահատկություններից հատկանշելի է այն, որ Արցախի տեղանվանական համակարգի շերտագրությունն անխառն չէ. բնականաբար, հիմնական ֆոնը բնիկն է՝ հայկականը, բայց և եղել են տարբեր շերտեր,

¹² **Նույնը**, էջ 141:

¹³ **Մարգայան Սլ.**, *Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ*, «Հայ Էդիթ», Ե., 1996, էջ 66:

¹⁴ **Մելքումյան Ս. Ա.**, նշված աշխատությունը, էջ 160:

¹⁵ **Նույնը**, էջ 187:

որոնք եկամուտ ստվերներ են մնացել հիմնական ֆոնին: Հատկապես ջրանունների կենսագրության մեջ այդ շերտերը նկատելի են: Այսպես՝ Արցախի հիմնական գետերն են՝ **Տրտուն / ներկայիս Թարթառ/**, **Խաչենը**, **Կարկառը**, **Մեղրագետը**, **Իշխանագետը**, **Ամարասը**, **Խոնաշենը**, **Վարանդան** և այլն:

Յուրաքանչյուրի պատմալեզվաբանական կենսագրությանը կանոնադառնա՞նք առանձին հոդվածներով: Ընդհանրական բնութագրից փաստվում է այն իրողությունը, որ արմատական տեղանվանական համակարգին ժամանակի ընթացքում պատվաստվել է եկամուտը. գրեթե բոլոր ջրանունները վերանվանվել են պատմական տարբեր շրջաններում. վերանվանման հիմնական ձևերն էին թարգմանությունը, հնչյունական նմանողությունը. ինչպես՝ Տրտուն՝ Թարթառ (հնչյունական նմանողությամբ), Կարկառը՝ Գարգար, Մեղրագետը՝ Բալուջա/Բալուչայ/(թարգմանությամբ), Իշխանագետը՝ Կուրու չայ (թարգմանությամբ), Բարակը՝ Ինջա, Ամարասը՝ Աղ-օղլուն (Սուրբ Գրիգորիսի՝ Ամարասում թաղված աճյունի համար): Օտարաստեղծ այս տարբերակները ժամանակի ընթացքում գրանցվել ու պաշտոնական կարգավիճակ են ստացել: Ու պատմության անվի ընթացքին համաքայլ՝ նորից վերանվանվել են: Այս փոփոխություններով հանդերձ՝ ջրանուններն այսօր էլ իրենց սկզբնային վիճակի մասին կարևոր տեղեկանք են հաղորդում՝ թե վկայված պատմական փաստագրություններով, թե լեզվական հնագույն տարրերի պահպանումով: Բացի այդ, գրեթե բոլոր գետանունները հիմք էին դարձել նաև համանուն բնականությունների, ինչպիսիք էին **Խոնաշենը**, **Վարանդան**, **Խաչենը**, **Ամարասը**, **Կարկառը**: Այս բնականություններից **Վարանդան** ու **Խաչենն** են մնացել այսօրվա պաշտոնական բնականվանացանկում, ընդ որում **Վարանդա** պատմական անվամբ վերանվանվել է հիմնադրված նոր բնակավայր, **Խաչեն** է վերանվանվել **Սեյդիշենը(Սեյտին /Սեյտի բեկ/** Հասան Ջալալի իշխանի տոհմի շառավիղներից է¹⁶: Սրա անունից էր Ասկերանի շրջանի Սեյդիշեն գյուղի անվանումը):¹⁷ **Խոնաշենը** ներկայիս **Մարտունին** է,

¹⁶ **Ուլուքաբյան Բ.**, նշված աշխատությունը, էջ 351-354:

¹⁷ **Սարգսյան Սլ.**, նշված աշխատությունը, էջ 67:

իսկ **Ամարասն ու Կարկառը** իբրև հնագույն բնակատեղիներ են նշվում:

Նաև այսպես՝ բնականունը ջրանվամբ, ջրանունը՝ բնականվամբ պահպանել են պատմական իրողությունները, որոնք լեզվական իրողությունները բացահայտելու լուրջ կովաններ են դառնում:

Այսպիսով՝ Արցախի տեղանվանական համակարգում հնդեվրոպական արմատների առկայությունն ու դրանց մեծ չափով տարածվածությունը փաստում են, որ Արցախի տեղանվանական համակարգի բնութագիրը հիմնավորապես համընկնում է հայկական ընդհանուր տեղանվանական համակարգի բնութագրին, և լեզվական բոլոր օրինաչափություններով էլ տեղանվանական ընդհանուր տիպն ու շերտագրումն են առկա: Սա ևս հերթական լիարժեք հավաստիքն է նրա, որ Արցախը հայալեզու տարածք էր, հայկական մեկ միասնական ընդհանուր տարածքի մաս:

Лусинэ Маркарян - Индоевропейские корни в топонимической системе Арцаха.- При изучении индоевропейских корней в топонимической системе Арцаха выявляется следующий факт: имена, в состав которых входят индоевропейские морфемы, во все времена составляли основной слой топонимической системы Арцаха.

Наличие этих корней и их широкая распространенность свидетельствуют о том, что характеристика топонимической системы Арцаха, в основном, совпадает с характеристикой общей армянской топонимической системы. Кроме этого, по всем лингвистическим закономерностям в ней присутствуют общий топонимический тип и стратиграфия.

Lusine Margaryan - Indo-European roots in the Artsakh toponymic system. -

While studying the Indo-European Roots in the Artsakh Toponymic System the following fact is revealed: names, which include the Indo-European morpheme, at all times constituted the core layer of Artsakh toponymic system.

The presence of these roots and their wide prevalence indicate that the characteristic of the Artsakh toponymic system mainly coincides with the general characteristic of the Armenian toponymic system. In addition, according to all the linguistic regularities, it contains general toponymic type and structure.

**ՏԱՐԱՐԺԲ ԵՐԿՐՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Լեզվական միավորի համանունությունը նրա ձևախմբման փոխհարաբերությունների արդյունք է, որը կարող է դրսևորվել լեզվի բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Վերջին երկու մակարդակներում դրսևորվող համանունությունը ունի քերականական համանունություն անվանումը:

Բառային համանունությունը լեզվաբանական գրականության մեջ ավելի լավ է ուսումնասիրված, քան քերականականը:

Հայ լեզվաբանության մեջ քերականական համանուններից առավել ուշադրության են արժանացել ձևաբանական համանունները: Ձևաբանական համանունությունը հայ լեզվաբաններից անդրադարձել են Գ. Սևակը, Ա. Աբրահամյանը, Էդ. Աղայանը, Գ. Գարեգինյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Ասատրյանը, Ս. Աբրահամյանը, Լ. Խաչատրյանը, Ն. Պառնասյանը¹ և այլք:

Համանունություն երևույթը, լեզվական որ մակարդակում էլ որ քննվի, անմիջականորեն կապվում է բազմիմաստության հետ:

Բառային բազմիմաստության և համանունության սահմանագատումը միշտ համարվել է համանունության հետ կապված ամենադժվար հարցը և եղել իմաստաբանության հարցերով զբաղվող լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Բառային բազմի-

¹ **Սևակ Գ.,** *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, **Աբրահամյան Ա.,** *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, **Աղայան Էդ.,** *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, **Գարեգինյան Գ.,** *Շաղկապները ժամանակակից հայերենում*, **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, **Ասատրյան Մ.,** *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, **Աբրահամյան Ս.,** *Չթերվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, **Խաչատրյան Լ.,** *Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, **Պառնասյան Ն.,** *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*:

մաստությունը համանունությունից տարբերելու համար կիրառվում են հետևյալ չափանիշները.

1. ստուգաբանական, որի ժամանակ հիմք է ընդունվում բառերի ծագումնաբանական կապը,

2. ձևաբանական, որը հիմնված է ձևակազմական ու բառակազմական կադապարների և իմաստների բառաշարահյուսական կապերի հաշվառման վրա,

3. իմաստաբանական, որը հաշվի է առնում իմաստների հարաբերակցությունը, բառի իմաստային կառուցվածքը²:

Քերականական բազմիմաստության և համանունության տարբերակման հիմքում պետք է դրվի բառի, բառաձևի կամ լեզվական կառույցի քերականական իմաստը: Խոսելով քերականական բազմիմաստության և համանունության տարբերակման մասին՝ Գ. Ջահուկյանը նշում է. «Առաջինը կապված է հարացուցային, երկրորդը՝ շարակարգային հարաբերության հետ: Եթե տվյալ միավորը կարելի է դիտել որպես տարբեր հարացույցների անդամ, ապա մենք գործ ունենք համանունության հետ: Եթե տվյալ միավորի իմաստային տարբերությունները կախված են տարբեր կոնտեքստներից, ապա մենք գործ ունենք բազմիմաստության հետ»:³ Գ.Ջահուկյանը համանուն է համարում այն բոլոր քերականական ձևերը, որոնք միաժամանակ արտահայտում են մեկից ավելի քերականական իմաստ:⁴

Քերականական համանունությանը անդրադարձել են նաև Մ. Ասատրյանը,⁵ Ա. Աբրահամյանը,⁶որոնք ևս քննել են ձևաբանական մակարդակի միավորները:

Շարահյուսական համանունություն երևույթը հանգամանակից քննել է Ն.Պառնասյանը:⁷ Պառնասյանը մանրամասն քննում է քե-

² Պառնասյան Ն., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979, էջ 21:

³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 104:

⁴ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 203-204:

⁵ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Ե., 1973:

⁶ Աբրահամյան Ա., Հայերենի քերականական համանունության շուրջ, ՊԲՀ, հ. 1, 1974:

րականական բազմիմաստության և համանունության տարբերակման հարցը՝ անդրադառնալով այս հարցի վերաբերյալ թե՛ ռուս, թե՛ հայ լեզվաբանության մեջ եղած կարծիքներին:⁸ Այս հարցում համամիտ լինելով Գ. Ջահուկյանի կարծիքին՝ Պառնասյանը գրում է. «Եթե տվյալ ձևությո՜ւնը, արտահայտելով տարբեր քերականական իմաստներ, գտնվում է հարացուցային նույն տեղում, ապա առկա է բազմիմաստության երևույթը, իսկ եթե նույն հնչյունակազմն ունեցող ձևությո՜ւնը երևան է գալիս տարբեր հարացույցներում՝ միաժամանակ արտահայտելով քերականական տարբեր իմաստներ, առկա է համանունության երևույթը»:⁹

Այսպիսով՝ Պառնասյանը սահմանում է քերականական համանունությունը հետևյալ կերպ. «Քերականական համանուններ ասելով հասկանում ենք այն քերականական ձևայինները, բառաձևերը և շարահյուսական կառույցները, որոնք, լինելով նույն արտահայտության պլանում, տարբերվում են բովանդակության պլանում, այսինքն՝ տարբեր են իրենց իմաստով և ունեն գործառության ու զուգորդելիության տարբեր ոլորտներ»:¹⁰

Քննելով շարահյուսական համանունությունը՝ Պառնասյանը մի կողմից՝ ներկայացնում է կառուցվածքով, բառային կազմով և հնչերանգով լրիվ նույնական նախադասություններ, որոնք, կապված հաղորդակցական տարբեր դեր կատարելու հետ, առաջացնում են շարահյուսական համանունություն, մյուս կողմից՝ վերլուծում է շարահյուսական նվազագույն միավորների՝ բառաձևերի ու կապական կառույցների տարբեր շարահյուսական հարաբերություններ ցույց տալու և նախադասության մեջ տարբեր պաշտոններ կատարելու երևույթը, որը ևս առաջացնում է շարահյուսական համանունություն:¹¹ Առաջին դեպքում շարահյուսական համանունությունն առաջացնում է նախադասությունը, երկրորդ դեպքում՝ նախադա-

⁷ Պառնասյան Ն., *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում*, Ե., 1970 և *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*, Ե., 1979:

⁸ Պառնասյան Ն., *Քերականական համանունները ժամանակակից հայերենում*. Երևան, 1979, էջ 15-33:

⁹ Տե՛ս նույնը, էջ 23:

¹⁰ Տե՛ս նույնը, էջ 21:

¹¹ Տե՛ս նույնը:

սության անդամը: Պառնասյանը քննում է նաև երկրորդական նախադասությունների համանունության երևույթը, բայց այնպիսի երկրորդական նախադասությունների, որոնք լրացնում են տարբեր գլխավոր նախադասությունների:¹²

Բոլոր դեպքերում էլ խոսքային միջավայրը հանդես է գալիս որպես քերականական համանուն իմաստների տարբերակման միջոց: Սակայն քերականական համանունություն կարող է առաջանալ նաև խոսքային միևնույն միջավայրում, և այս դեպքում լեզվական միավորի քերականական իմաստի ըմբռնումն ու տարբերակումը լեզվական որևէ գործոնով պայմանավորված չէ: Նշանակում է՝ առաջանում է բացարձակ համանունություն:

Պետք է նշել, որ քերականական համանունության քննությունը գերազանցապես կատարվում է լեզվական մակարդակում, այսինքն խոսքային տարբեր միջավայրներում:

Սույն աշխատանքում քննում ենք բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող երկրորդական նախադասության համանունությունը նույն գերադասի առկայությամբ՝ փորձելով տալ նաև նման երկրորդականների առաջացման պատճառները:

Երկրորդական նախադասությունների համանունության առաջացումը հիմնականում պայմանավորված է կապակցող շաղկապների բազմիմաստության, գլխավոր նախադասության մեջ հարաբերյալի բացակայության, երկրորդական նախադասության գլխավորի տարբեր անդամների միաժամանակ վերաբերելու հնարավորության, նախադասության շարահարական կապակցության և այլ հանգամանքների հետ:

Մի շարք երկրորդական նախադասությունների համանունության երևույթը քննվել է մասնագիտական գրականության մեջ:¹³ Բավական տարածված են այն երկրորդական նախադասությունները, որոնք կարող են համատեղել հետևյալ հարաբերությունները՝ ենթակա-վերաբերության խնդիր, ուղիղ խնդիր-վերաբերության

¹² Տե՛ս նույնը, էջ 118- 121:

¹³ Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ.3, Ե., 1976, Աբրահամյան Ս., *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 2004, Պապոյան Ս., Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 2009:

խնդիր, որոշիչ-հատկացուցիչ, ժամանակի պարագա-պայմանի պարագա, պատճառի պարագա-հիմունքի պարագա, որոշիչ-բացահայտիչ, անջատման խնդիր-պատճառի պարագա: Ենթակա-վերաբերության անուղղակի խնդիր հարաբերությունների համատեղումը պայմանավորված է գերադաս նախադասության մեջ ասացական-մտածական բայի առկայությամբ, որը կրավորական սեռի է, նաև հարաբերյալի բացակայությամբ¹⁴, կապակցող շաղկապի բազմագործառնությամբ արժեքով:

Բերենք օրինակներ:

Հաղորդվեց (ինչ/ինչի մասին), որ տեղումներ են սպասվում:

Հայտարարվեց (ինչ/ինչի մասին), որ բոլորի ներկայությունը պարտադիր է:

Եթե գերադաս նախադասության մեջ գործածվում է ներգործական սեռի ասացական-մտածական բայ, և բացակայում է հարաբերյալը, ստորադաս բաղադրիչը կարող է ընկալվել և՛ որպես սեռի, և՛ որպես բայիմաստի խնդիր՝ արտահայտելով ուղիղ և վերաբերության խնդիրների իմաստներ:¹⁵ Օրինակ՝

Էմման սկսեց մտածել, թե ինչ կապ կարող է լինել գինվորականի ու

Զազունյանի միջև:

Աղամբ խորհում էր, թե որտեղից դա գիտեր Լիլիթը:

Իսկ ես երազել անգամ չէի կարող, որ քեզ երբևիցե կարող եմ այստեղ պատահել:

Որոշիչ-հատկացուցիչ, անջատման խնդիր-պատճառի պարագա, հանգման խնդիր-նպատակի պարագա համանուն երկրորդական նախադասությունների առաջացումը պայմանավորված է պարզ նախադասության կազմում նշված հարաբերությունները համատեղող համանուն անդամների գոյության հնարավորությամբ: Պարզ նախադասության մեջ անորոշ դերբայի սեռական տրական հոլովածներ կարող է համատեղել որոշիչ և հատկացուցչի իմաստներ

¹⁴ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 328:

¹⁵ Տե՛ս նույն տեղում և Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 2009, էջ 156:

(մեկնելու մտադրություն), իսկ մի շարք բայերի (բողոքել, տրտնջալ, դժգոհել և այլն) բայիմաստով պայմանավորված՝ բացառական հոլովով անդամը ունի թե՛ անջատման խնդրի, թե՛ պատճառի պարագայի իմաստ (բողոքել վատ ընդունելությունից): Նախ քննենք որոշիչ-հատկացուցիչ համանունությունը:

Հայտնի է, որ հատկացուցիչ երկրորդական նախադասությունները արտահայտում են ոչ միայն պատկանելության, ծագման ու սերման, այլև վերաբերության հարաբերություն: Վերաբերության հարաբերություն արտահայտող երկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասության մեջ լրացյալի դերում հանդես են գալիս ապացույց, խորհուրդ, հույս, տպավորություն, առիթ և այլ գոյականներ: Հարաբերյալի բացակայության դեպքում այս տիպի նախադասությունները կարող են համարվել թե՛ հատկացուցիչ, թե՛ որոշիչ երկրորդական նախադասություններ:¹⁶ Բերենք օրինակներ:

Ահավասիկ քեզ մի ապացույց, որ ես ընկել եմ մեռելների աշխարհը:

Ես իմ հիվանդներին խորհուրդ չեմ տալիս, որ ճաշից հետո պառկեն քնելու:

Եվ ահա զարթնեց հույսը, թե շուտով նորից կառնեն մանգաղն ու գերանդին:

Տպավորություն ստեղծվեց, թե ամեն ինչ բարեհաջող է:

Որոշիչ-հատկացուցիչ համանուն երկրորդական նախադասությունների գոյությունը պայմանավորված է նրանով, որ փոխակերպման ժամանակ երկրորդական նախադասությունների բայ-ստորգյալը վերածվում է սեռական տրական հոլովով անորոշ դերբայի, որը կարող է դիտվել թե՛ որպես որոշիչ, թե՛ որպես հատկացուցիչ:

Ինչպես ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների համար սովորական է պայմանի իմաստային երանգ արտահայտելը, այնպես էլ պայմանի պարագա երկրորդականների համար տարածված է ժամանակի իմաստ արտահայտելը:¹⁷ Մակայն

¹⁶ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 310-311:

¹⁷ Տե՛ս Աբրահամյան և այլք, նշվ. աշխ., էջ 740, Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 180, Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 336:

երբեմն պայմանի և ժամանակի հարաբերությունները այնքան միա-
ձուլված են լինում միևնույն երկրորդականի մեջ, որ դժվար է լինում
բնույթը որոշել: Ժամանակի-պայմանի պարագա համանուն երկ-
րորդականը գլխավորին կարող է կապակցվել էրբ հարաբերա-
կանով, որ շաղկապով, երբեմն էլ՝ շարահարությամբ: Բերենք օրի-
նակներ:

Որ տեսնում ես ուժերդ տկար են, պետք է հպատակվես
բարձր, անխմանալի օրենքներին:

Երբ իմանաս, կհանգստանաս:

Դժվար է քայլել, երբ խավար է:

Այսդ թեքեցիք բանիդ տերը չես:

Վերջին նախադասության մեջ թեքեցիք բայաձևը գործածված
է ապառնու նշանակությամբ (թեքես):

Այն, որ ընդգծված նախադասությունները թե՛ ժամանակի, թե՛
պայմանի հարաբերություն են արտահայտում, հաստատվում է
դրանք փոխակերպելու դեպքում ն՝ պայմանի, ն՝ ժամանակի պա-
րագայի հարաբերություն արտահայտող անդամ ստանալով: Այս-
պես՝ տեսնելով կամ տեսնելու դեպքում, իմանալով կամ իմանալու
դեպքում և այլն:

Երբ երկրորդական նախադասությունը լրացնում է ներքին
ապրումներ, հոգեվիճակ ցույց տվող այնպիսի բայերի, ինչպիսիք են
զգուշանալ, նեղանալ, երկյուղել, գոհ լինել, գանգատվել, խուսափել,
վախենալ, ձանձրանալ, քաշվել, ապշել և այլն, կարող է արտա-
հայտել թե՛ անջատման խնդրի, թե՛ պատճառի պարագայի իմաստ:
Որոշ լեզվաբաններ նման բայերի լրացում երկրորդականները հա-
մարում են միայն անջատման խնդրի,¹⁸ կան նաև նման բայերի
լրացում երկրորդականների համանունությունը ընդունող լեզվա-
բաններ:¹⁹

Կարծում ենք՝ այդ դեպքում ևս համանունության մասին կա-
րելի է խոսել միայն այն դեպքում, երբ գլխավորի մեջ բացակայում է
հարաբերյալը: Համեմատենք՝

¹⁸ Տե՛ս Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 324:

¹⁹ Տե՛ս Աբրահամյան Ս. և այլք, նշվ. աշխ., էջ 668, 723, Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.,
նշվ., աշխ., էջ 158, 170:

1. Վախենում էի նրանից, որ հիասթափվում է:

2. Վախենում էի այն պատճառով, որ հիասթափվում է:

3. Վախենում էի, որ հիասթափվում է:

Հասկանալի է, որ առաջին նախադասության մեջ ունենք անջատման խնդիր երկրորդական, իսկ երկրորդում՝ պատճառի պարագա երկրորդական, մինչդեռ երրորդ նախադասության երկրորդականը համանուն է՝ նշված երկու հարաբերությունների իմաստներով:

Եթե երկրորդական նախադասությունը վերաբերում է անձի, ապա այն միանշանակ անջատման անուղղակի խնդիր է, այս դեպքում հարաբերյալի առկայությունը պարտադիր է:

Այսպիսով՝ անջատման խնդիր-պատճառի պարագա համանունություն առաջանում է քննվող բայերի իմաստի պահանջով, հարաբերյալի բացակայության և գլխավոր նախադասության մեջ իրի առում լրացյալ ունենալու պայմաններում: Բերենք օրինակներ:

Ես սաստիկ վախենում եմ, որ նրա հիվանդությունը թորախտ լինի:

Նա գոհ է, որ արտահայտում է իր մտքերը:

Անշուշտ, հասկանում ես ինձ և չես նեղանա, որ այդ փողերը չեմ ընդունում:

Աղջիկը ձանձրանում է, որ իրեն այդ գործընթացին մասնակից չեն դարձնում:

Հետո սկսում է զանգատվել, որ մրսում է:

Զգուշանում եր, որ հանկարծ որևէ մեկին չնեղացնի:

Անորոշ դերբայի տրականով արտահայտված անդամը որոշակի իմաստով բայերի մոտ (պատրաստվել, նախապատրաստվել, տրամադրվել) արտահայտում է թե՛ հանգման խնդրի, թե՛ նպատակի պարագայի իմաստ (նախապատրաստվել մեկնելու): Նույնպիսի համանունություն առաջանում է, երբ այդ անդամը փոխակերպվում է երկրորդական նախադասության ստորոգյալի: Օրինակ՝

Շորերս հավաքեցի և նախապատրաստվեցի, որ մեկնեմ:

Տեղեկություններ հավաքեցի և տրամադրվեցի, որ աշխատանքի անցնեմ:

Պատճառի և հիմունքի պարագա երկրորդական նախադասությունների առնչությունը հաստատում են հարցը քննող լեզվաբա-

նական բոլոր աշխատությունները, նույնիսկ երբեմն դրանք համարվում են միևնույն բնույթի երկրորդական նախադասությունների ենթատեսակներ:²⁰ Այս երկու բնույթի երկրորդականները ունեն կապակցող ընդհանուր շաղկապներ, գլխավոր նախադասության հանդես եկող ընդհանուր հարաբերյալներ, պատճառականության ընդհանուր իմաստ, սակայն պատճառի պարագա երկրորդականները արտահայտում են իրական կամ բնական պատճառը, իսկ հիմունքի երկրորդականը՝ անհատական-կամային կամ տրամաբանական հիմունքը:²¹ Սակայն միշտ չէ, որ պատճառն ու հիմունքը հստակորեն սահմանգատվում են. մի շարք կառույցներում պատճառն ու հիմունքը համատեղում են:²² Օրինակ

Թեման լավ ներկայացրեց, քանի որ լավ էր նախապատրաստվել:

Արագ կարողացավ կողմնորոշվել, քանի որ ծանոթ էր տեղանքին:

Բացահայտիչ երկրորդական նախադասությունները սովորաբար ներկայացվում են որոշիչ երկրորդական նախադասությունների հետ հակադրության միջոցով:²³ Որոշիչ երկրորդական նախադասությունները նկարագրում են առարկայի կամ երևույթի այնպիսի հատկանիշը, որը նրան հատուկ կարող է լինել միայն տվյալ պահին և չհանդիսանալ նրա էական հատկանիշը կամ խոստովի կողմից չհամարվել այդպիսին, իսկ բացահայտիչ երկրորդական նախադասությունները ցույց են տալիս առարկայի այնպիսի հատկանիշ, որ մշտական, էական է կամ խոստովի կողմից դիտվում է իբրև այդպիսին:²⁴ Եթե պարզ նախադասության անդամ բացահայտիչն իր շարադասական-շարահյուսական հատկանիշներով որոշակիորեն տարբերակված է որոշիչից, բարդ նախադասության կառուցվածքում բացահայտիչ ու որոշիչ ստորադաս նախադասությունները այդ-

²⁰ Տե՛ս Աբրահամյան և այլք, նշվ. աշխ., էջ 719, Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 338:

²¹ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 339:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս Աբրահամյան Ա. և այլք, նշվ. աշխ., էջ 645, Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 304:

²⁴ Աբրահամյան Ա. և այլք, նշվ. աշխ., էջ 645:

պիսի որոշակիությամբ սահմանազատված չեն :²⁵

Գլխավոր նախադասության մեջ առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանուն լրացյալ ունեցող երկրորդական նախադասությունը բացահայտիչ է, իսկ գոյական(հասարակ կամ հատուկ) լրացյալ ունեցող երկրորդականը կարող է արտահայտել թե որոշային, թե բացահայտչային հարաբերություններ: Այսպիսով՝ առաջանում են որոշիչ-բացահայտիչ համանուն երկրորդականներ:

Բերենք օրինակներ:

Մենք պաշտպանում ենք այս երկիրը, որ անհիշելի ժամանակներից հայ ազգի բնօրրանն է:

Նրան կպած քայլում էր կինը՝ Զահանիրանը, որը Պարթևաց աշխարհի արքա Հրահատ Արշարունու դուստրն է:

Նեառն, որ իմ մանկության ընկերն էր, կարող էր ինձնից մեծ բանաստեղծ դառնալ:

Այն հանգամանքը, որ երկրորդական նախադասությունը իմաստային ու քերականական տեսանկյունից կարող է միաժամանակ վերաբերել գլխավոր նախադասության գոյականով ու բայով արտահայտված անդամի, առաջացնում է երկրորդական նախադասության համանունություն գոյականական անդամի և բայական անդամի լրացումների միջև: Այդ կերպ առաջացել են հետևյալ համանուն երկրորդականները.

1.Որոշիչ-վերաբերության անուղղակի խնդիր.

Իրիկնադեմին հետախույզները լուր բերին, որ Ռշտունյաց ջոկատը ճանապարհ է ընկել:

Միաժամանակ լսեց լուրեր, որ պարսիկ զորագնդերը գրավել են ամրոցները:

Նա դիմում է գրել, թե իբր իր հետ վարվում են անարդարացի:

Ընդգծված երկրորդական նախադասությունները լուր և դիմում գոյականներին լրացնելու դեպքում ունեն որոշչային, իսկ ստորոգյալին լրացնելու դեպքում՝ վերաբերության խնդրի իմաստ: Հա-

²⁵ Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 158:

մանունությանը նպաստել է նաև որ և թե շաղկապների բազմագործառնության լինելը:

2.Որոշիչ-պատակի պարագա.

Տվեց նրան հանձնարարություն, որ գորքերը միավորեն:

Ինձնից հրաման տար պարսից գորահրամանատարին, որ զինվորներին քաշի քաղաքից:

Սպասում է մի հարմար պահի, որ կարողանա գնալ իշխանուհու մոտ: Դուք այստեղ հացի կտոր անգամ չեք գտնի, որ ուտեք:

3.Որոշիչ-պատճառի պարագա.

Նա անհանգստանում է սիրելի ընկերուհիների համար,որ այդքան կուրորեն անձնատուր են եղել այդ սիրուն:

Ուստի նա անհուն երախտագիտություն է զգում դեպի աղջիկները, որ իրենց այցելություններով ազատեցին իրեն հուսահատությունից:

Գուցե մեղավորը Զազունյանն էր, որ խորշում էր այդ զինվորականից:

Ընդգծված երկրորդական նախադասությունների համանունությունը հաստատվում է նրանով, որ նրանց փոխակերպած տարբերակները կարող են լինել որոշյի և պատճառի պարագայի պաշտոն կատարող դերբայական դարձվածներ: Օրինակ՝ «Նա անհանգստանում էր այդ սիրուն այդքան կուրորեն անձնատուր եղած սիրելի ընկերուհիների համար» և «Նա սիրելի ընկերուհիների համար անհանգստանում էր այդ սիրուն այդքան կուրորեն անձնատուր լինելու պատճառով»:

Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալի դերով հանդես են գալիս երրորդ դեմքի անձնական դերանունները և ցուցական դերանուններից նրանք, որոնց արմատի կազմության մեջ կա և հնչյունը, ինչպես՝ այն, այնպես, այնքան և այլն: Ըստ Ս. Աբրահամյանի՝ հարաբերյալի արժեք ունեն նաև որոշյալ դերանունները՝

բոլորը, այն ամենը, ամեն բան, այն բոլորը²⁶, որոնց առկայության դեպքում ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կարող են գիտակցվել նաև որպես որոշիչ: Օրինակ՝ Մենք տեսանք բոլորին, ովքեր վերադարձել էին:

Գլխավոր նախադասության բայով արտահայտված լրացյալը կարող է ունենալ սեռով ու բայիմաստով պայմանավորված լրացում երկրորդականներ: Հնարավոր է, որ երկրորդական նախադասությունը տրամաբանորեն համատեղի երկու իմաստները և ընդունի համապատասխան հարցերը: Այս դեպքում ևս առաջանում է համանունություն, ընդ որում հարաբերյալի բացակայությունը և բազմագործառույթ շաղկապի առկայությունը դարձյալ պարտադիր պայմաններ են: Բավականին տարածված են ուղիղ խնդիր-նպատակի պարագա համանունությունը: Բերենք օրինակներ:

Շատ խնդրեցի, որ նա էլ մասնակցի:

Հատուկ իմ կողմից կատվիրեք, որ իրենց գորագնդերը շարժեն դեպի Մուշ:

Նա բոլորի ներկայությամբ հայտարարեց, որ իրեն աշխատանքի ընդունեն:

Մենք նույնպես սկսում ենք հորդորել, համոզել, խնդրել, որ նրանք թողնեն իրենց վատ սովորությունները:

Նա բացահայտորեն ասաց, որ իրեն ճիշտ հասկանան:

Ինչպես նշել ենք, համանուն երկրորդական նախադասությունները պարտադիր կապակցվում են բազմագործառույթ շաղկապներով: Որոշ երկրորդական նախադասությունների համանունության առաջացման պատճառը պայմանավորված է միայն շաղկապով: Այսպես՝ մինչև շաղկապը կարող է արտահայտել և ժամանակի, և չափի հարաբերություն: Այս շաղկապով երբեմն կապակցվում են այնպիսի երկրորդականներ, որոնցում չափի և ժամանակի հարաբերությունները հավասարապես առկա են:²⁷ Բերենք օրինակներ:

Լիլիթը խաղում է գոհարներով, մինչև լիալուսինը բարձրացավ ծառերի հետևից:

²⁶ Տե՛ս նույնը, էջ 163:

²⁷ Տե՛ս Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., նշվ. աշխ., էջ 168:

Ես կհասնեմ շուկա, մինչև դուք ձեր գործ ավարտեք:

Դուք ամեն ինչ նախապատրաստեք, մինչև ես տուն հասնեմ:

Գուցե ձգձգենք, մինչև տեսնենք ինչ կլինի:

Վերջին օրինակում ընդգծված երկրորդականը, բացի ժամանակի և չափի հարաբերությունից, ունի նաև նպատակի իմաստ:

Բազմագործառույթ է նաև էրբ շաղկապական բառը: Այն կարող է կապակցել ենթակա և ստորոգելի, գոյականական և բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններ: Եվ քանի որ նրա արտահայտած հիմնական իմաստը ժամանակային է, ուստի յուրաքանչյուր դեպքում այս կամ այն բնույթի երկրորդական նախադասությանը հաղորդում է ժամանակային հարաբերության իմաստ: Երբեմն ժամանակային հարաբերությունը այնքան ընդգծված է լինում, որ հավասարվում է մյուս հարաբերություններին: Այսպես առաջանում են հետևյալ համանուն երկրորդականները.

1. Պատճառի պարագա-ժամանակի պարագա.

Երբ տեսավ Վասակի խայտառակությունը, Վարդանը որոշեց միջամտել:

Շատ եմ ջղայնանում, երբ ինձ անհանգստացնում են:

Ամբողջ մարմնով դողում էին, երբ նա հաշիվ է պահանջում իրենց հանձնված գործերի մասին:

Կատաղության պես մի բան շարժվեց նրա սրտում, երբ Պետրովին իշխանուհու մոտ գտավ

2. Պատճառի պարագա-ժամանակի պարագա-անջատման խնդիր.

Ես սարսափում եմ, երբ լսում եմ նրա խուլ հագի ձայնը:

Նա շատ էր քաշվում, երբ տեսնում էր իշխանուհու կիտած հոնքերը:

Խենթանում եմ, երբ երևակայում եմ այդ ամենը:

Որ շաղկապի բազմագործառույթ լինելը առաջացնում է պայմանի պարագա-պատճառի պարագա համանուն երկրորդականներ: Բերենք օրինակներ:

Որ (Եթե/Քանի որ) արևը ծակոտում է, անձրև է գալու:

Որ լույսը վառել է, նշանակում է եկել է:

Համանունությանը նպաստում է այն հանգամանքը, որ թե՛ պայմանի, թե՛ պատճառի պարագա երկրորդական նախադասությունների գործողությունները նախորդում են գլխավոր նախադասության գործողությանը, բացի այդ՝ գլխավոր նախադասության գործողությունը երկուսի համար էլ հանդես է գալիս որպես հետևանք:

Հետաքրքիր է այն, որ տվյալ դեպքում համանուն երկրորդական նախադասության ստորոգյալը հիմնականում արտահայտվում է ներկա ժամանակով, երբեմն՝ անցյալ: Ապառնի ժամանակով արտահայտվելու դեպքում ունենք միայն պայմանի պարագայի իմաստ:

Պայմանի պարագա-պատճառի պարագա համանուն երկրորդական նախադասությունները կարող են կապակցվել նաև շարահարությամբ, ընդ որում թե՛ շաղկապով, թե՛ անշաղկապ կապակցության դեպքում հնչերանգը, բացարձակապես նույնը լինելով, նպաստում է նշված համանունության առաջացմանը: Բերենք շարահարական կապակցությամբ օրինակներ:

Սպարապետ ես՝ ճարը գտիր:

Կարող ես՝ օգնիր:

Ձեր երկրում եք՝ հայ կմնաք:

Սահ եք հրամայել՝ մահ կտանք թշնամիներին:

Գոյական+անորոշ դերբայ կադապար ունեցող մի շարք հարադիր բայեր, հանդես գալով լրացյալի դերում, կարող են ունենալ համանուն երկրորդական նախադասություն լրացումներ: Համանունությունը պայմանավորված է նրանով, որ երկրորդական նախադասությունները կարող են ընկալվել թե՛ հարադիր բայի գոյական բաղադրիչի լրացում, թե՛ ամբողջ հարադրության: Ստացվում է գոյականական անդամի լրացում- բայական անդամի լրացում համա-

նունություն: Այդպիսի հարադիր բայերից են հույս ունեմ, կասկած ունեմ, հույս տալ, խորհուրդ տալ և այլն: Մի կողմից՝ անվանական բաղադրիչը (հույս, խորհուրդ և այլն) որպես գոյական ստանում է որոշիչ ու հատկացուցիչ երկրորդական նախադասություն լրացումներ, մյուս կողմից՝ ամբողջ կառույցը, ունենալով հարադիր բայի արժեք, ստանում է խնդիր կամ պարագա երկրորդական նախադասություն լրացում: Բերենք օրինակներ:

Ամենքը հույս ունեն, որ Մեծ տիկինը կմոռանար իր վիշտը (որոշիչ- հատկացուցիչ-ուղիղ խնդիր):

Հույս ունեմ, որ զանազան զգացմունքներով դա ինձ կհաջողվի (որոշիչ-հատկացուցիչ-ուղիղ խնդիր):

Սակայն նա կասկած ուներ, որ Միհրներսեհը բանակ է կազմում Հայաստան ուղարկելու մտքով (որոշիչ- հանգման խնդիր):

Խորհուրդ է տալիս, որ շատ չհուզվեմ (որոշիչ- նպատակի պարագա):

Այսպիսով՝

1. Քերականական համանունությունը կարող է դրսևորվել թե՛ լեզվական, թե՛ խոսքային մակարդակներում:

2. Երկրորդական նախադասությունների համանունությունը, որը շարահյուսական համանունության դրսևորումներից է, կարող է արտահայտվել նաև նույն գերադասի առկայությամբ:

3. Երկրորդական նախադասությունների համանունություն կարող է առաջանալ գլխավոր անդամ և լրացում (ենթակա-վերաբերության խնդիր), գոյականական անդամի լրացում (որոշիչ-բացահայտիչ, որոշիչ-հատկացուցիչ), բայական անդամի լրացում (խնդիր-խնդիր, խնդիր-պարագա, պարագա-պարագա), գոյականական անդամի լրացում-բայական անդամի լրացում (որոշիչ-խնդիր, որոշիչ- պարագա) երկրորդականների միջև:

4. Երկրորդական նախադասության համանունության առաջացումը պայմանավորող գործոններից են կապակցող շաղկապի բազմագործառնությունը, հարաբերյալի բացակայությունը, երկրորդական նախադասության գլխավորի տարբեր անդամների միաժամանակ վերաբերելու հնարավորությունը, նախադասու-

թյունների շարահարական կապակցությունը, լեզվական որոշ կառույցների տարարժեք ընկալումը և այլն:

Minasyan Shogher - Homonymity of Subordinate Clauses on the Verbal Level. - The article reviews homonymous subordinate clauses of Modern Armenian in the verbal speech context. Homonymous subordinate clauses are analysed according to their subtypes and the reasons of their origination.

Минасян Шогер - Омонимичные по типу придаточные предложения на речевом уровне. - В статье рассматриваются омонимичные по типу придаточные предложения в идентичном речевом контексте. Анализируются подтипы омонимичных по типу придаточных предложений и приводятся причины их возникновения.

**ՀԱՎԵԼԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՀԱՐԱՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Բայական կառուցատիպերի մեջ ուրույն խումբ են կազմում հարադրական բայերը, որոնց քննությունը ցույց է տալիս, որ դրանց դարձվածային-ոճական արժեքը հաճախ պայմանավորված է լինում հավելական բաղադրիչների առկայությամբ: Հավելական բաղադրիչներով հարադրությունները յուրահատուկ կառուցատիպեր են բայական համակարգում:

Նշված կառուցատիպերը հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին, ուստի դրանք բնորոշ են այդ ոճով ստեղծագործող հեղինակների երկերին:

Հարադրական բայերը, որպես ելակետային միավորներ, իմաստա-ոճաբանական առումով այլ հատկանիշներ ունեն, քան հավելական բաղադրիչներով իրենց տարբերակները: Այժմ փորձենք վեր հանել հավելական բաղադրիչով բայական հարադրությունների հնարավոր կառուցատիպերի միավորների ոճական-գործառական արժեքը Հ.Թումանյանի հեքիաթներում: Ընդ որում նման կապակցությունների ոճական դերը բնութագրելիս կարելի է քննությունը կատարել երկու կտրվածքով՝ նկատի առնելով այդօրինակ հարադրությունների երկու հնարավոր խմբեր՝ ուղիղ բայիմաստով (սովորական) կապակցություններ և փոխաբերական (դարձվածային) իմաստով կառույցներ:

Ա. *Ուղիղ իմաստով հարադրական բայերի ոճական արժեքը:*

Եթե համեմատելու լինենք բուն հարադրական բայերի հավելական բաղադրիչով կազմությունների իմաստները, կարող ենք ասել, որ երկրորդ շարքի կազմություններն ավելի լայն նշանակություններ են արտահայտում և իմաստային-իմաստաբանական ու ոճական-ոճաբանական առումներով կարևոր դեր են խաղում խոսքաշարում: Դրանք, ի տարբերություն ելակետային կառույցների, խոսքին հաղորդում են իմաստային նոր նրբերանգներ, ժո-

ղովրդական շունչ ու մտածողություն՝ նպաստելով պատկերային որոշակի դրվագի ամբողջացմանը:

Անշուշտ, հավելական բաղադրիչներով ուղիղ իմաստ արտահայտող հարադրական բայերի գործառական-ոճական արժեքը, ըստ էության, պայմանավորված է հարադրական բայերի իմաստային գործոնով: Հավելական բաղադրիչները իմաստային լրացուցիչ երանգ են հաղորդում բուն կապակցությանը: Այդ երանգները կարող են լինել տարբեր հոլովներով արտահայտված քերականական զանազան իմաստներ ու շարահյուսական տարաբնույթ հարաբերություններ:

Այսպես, բաց անել հարադրական բայը «բացել» նշանակությամբ արտահայտում է անցողական սեռի իմաստ և գործածական է ժողովրդախոսակցական լեզվում: Հավելական բաղադրիչն ստանալով կապակցությունն ընդարձակում է գծային պլանը՝ միաժամանակ արտահայտելով ավելի մասնավոր նշանակություն. մյուս կողմից նման կապակցությունները, կորցնելով անցողական բայերի սեռային նշանակությունը, անցնում են չեզոք սեռի:

Հմտ. **բաց անել - աչքերը բաց անել** - «արթնանալ», հմտ. Երիտասարդը հանկարծ **բաց է անում աչքերն** ու վեր կենում կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մինը (Հ.Թ., 3, 214):

Վեր քաշել հարադրությունը «վեր տանել՝ բարձրացնել» իմաստով ներգործական սեռի է, հավելական բաղադրիչով **գլուխը վեր քաշել**, ձեռք է բերել «հպարտանալ, գոռոզանալ» փոխաբերական նշանակություն՝ անցնելով չեզոք սեռի քերականական իմաստի: Հմտ.

- Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,- **գլուխը վեր է քաշում** ծառան (3, 175):

Ինչպես գիտենք, հավելական բաղադրիչները մասնավորեցնում են հարադրական բայերի բազմիմաստ նշանակությունները. իմաստային այս մասնավորեցումը պայմանավորված է հավելական բաղադրիչի հաղորդած փոխաբերական բառիմաստով և ստեղծած շարահյուսական հարաբերությունների բնույթով: Այլ կերպ ասած՝ հավելական բաղադրիչի առկայության դեպքում հարադրական բայն ապրում է բազմիմաստության չեզոքացման գործընթաց:

Այսպես, **շուռ տալ** հարադրությունը, որպես բառարանային միավոր, ունի հետևյալ իմաստները՝ 1. շրջել, մյուս երեսի վրա դարձնել, 2. պտտեցնել, տեղում պտույտ տալ, 3. մի կողմի վրա դարձնել թեքել, 4. տապալել, գլորել 5. փոխել, 6. ման գալ, շրջել և այլն:

Հավելական բաղադրիչով **երես շուռ տալ** հարադրությունն արտահայտում է «նահանջել, ընկրկել, փախչել» փոխաբերական իմաստներ: Հմմտ.

Թշնամու գորքերը, որ առաջուց համբավը լսել էին ու ահը սրտներում էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են, **երես են շուռ տալիս**, - փախի, որ փախի. Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է (3, 225):

Որոշ հարադրական բայեր, որոնք «տեղափոխվել, շարժվել» բայիմաստով և չեզոք սեռի նշանակությամբ են բնորոշվում, ժամանականիշ հավելական բաղադրիչով արտահայտում են ժամանակային չափի գաղափար՝ պայմանավորված հավելական բաղադրիչի բառային որոշակի իմաստով:

Այսպես՝ անց կենալ հարադրական բայը չեզոք սեռի նշանակությամբ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է 31 իմաստով: Ինչպես՝ 1. շարժվել, գնալ մի տեղից մի այլ տեղ, 2. գնալ որոշ ուղղությամբ, 3. հեռանալ, հեռու գնալ, 4. զբոսնել, ոտքով ման գալ, 5. անցյալ դառնալ, 6. հնանալ և այլն:

Հմմտ. -Էս ո՞ւմն է, - հարցնում են ձիավորները:

- Չախչախ թագավորինը, - պատասխանում են հովիվները:

Անց են կենում, հասնում են ընդարձակ արտերի (3, 167):

Այս կիրառությամբ **անց կենալ** հարադրությունն ունի «առաջ շարժվել, առաջ անցնել» իմաստը:

Ժամանականիշ հավելական բաղադրիչով **անց կենալ** հարադրությունն ստանում է **ամիսներ անց կենալ, մի քանի օր անց կենալ** կառուցվածքը «ժամանակը սահել անցնել» իմաստով:

Անց է կենում մի քանի օր, աղվեսը գալիս է թագավորի մոտ խնամախոս՝ թե Չախչախ թագավորը պետք է ամուսնանա, քո աղջկան է ուզում (3, 164):

Այստեղ իշխում է ժամանակային ընթացքի (ընթացայնության) իմաստը:

Հարադիր բայերի հավելական բաղադրիչ կարող են դառնալ տեղանիշ մակբայները՝ մասնավորեցնելով հարադրության բայի-մաստը որոշակի ուղղության շրջանակներում:

Այսպես են կազմված **առաջը դուրս գալ, ետ մտիկ անել** հարադրական բայերը, որոնք բնութագրական են ոչ միայն Հ. Թումանյանի լեզվամտածողությանը, այլև ժողովրդախոսակցական ոճին ընդհանրապես:

Այդ կապակցությունները խոսքին հաղորդում են ոչ միայն ժողովրդական մտածողության երանգ, այլև ստեղծում են համապատասխան խոսքային միջավայր, որն իր հերթին ապահովում է հերոսների (կերպարների) անհատականացումը և հասարակական (սոցիալական) ծագումը:

Հմտ. Ճանապարհին բարեկենդանը **ետ է մտիկ անում**, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է (3. 197):

Ինչպես նկատելի է՝ հավելական բաղադրիչներով վերոբերյալ կապակցությունները հանդես են եկել բայական ուղիղ իմաստներով. դրանք ելակետային հարադրական բայերից տարբերվում են մենիմաստային հատկանիշով այն դեպքում, երբ ելակետային կառույցները բնութագրվում են բազմիմաստ նշանակություններով: Հավելական բաղադրիչը, ինչպես նշել ենք, հարադրական բայի իմաստները կարող է մասնավորեցնել որոշակի հատկանիշի շրջանակներում: Այսօրինակ կառույցները ժողովրդական մտածողությանը հատուկ արտահայտություններ են, որոնք խոսքային միջավայրում ունեն որոշակի նպատակադրում և հանդես են գալիս ոճական-գործառական որոշակի դերով: Եվ ինչպես ցույց են տալիս ժողովրդական հեքիաթների թումանյանական մշակումները, հեղինակը վարպետորեն է գործածել ժողովրդական բառ ու բանը՝ հարազատ մնալով ժողովրդական մտածողության յուրահատուկ երանգներին:

Բ. Փոխաբերական (դարձվածային) իմաստով հարադրական բայերի ոճական արժեքը:

Հարադրական բայերի որոշակի խումբ, պայմանավորված բաղադրիչների փոխաբերական իմաստներով, հանդես է գալիս դարձվածաբանական մակարդակում՝ համալրելով լեզվի դարձ-

վածքների շարքը¹: Հարադրավոր բայերն «իրենց սովորական նշանակություններից բացի գործ են ածվում այնպիսի փոխաբերական նշանակությամբ, որ նրանց տալիս է դարձվածային բնույթ»²:

Այդ իրողությունը լեզվում արձանագրվում է երկու ուղիով, որ պայմանավորված է կապակցության բաղադրիչների փոխաբերական նշանակություններով և հավելական բաղադրիչների դարձվածային իմաստներով:

Ստորև մենք ցույց կտանք Թումանյանի հեքիաթներում գործածված այն դարձվածային բայական հարադրությունները, որոնց դարձվածային իմաստ(ներ)ը պայմանավորված են հավելական բաղադրիչների բովանդակային գործոնով: Ընդ որում, այս կարգի միավորները կարելի է դիտարկել հավելական բաղադրիչների իմաստա-կառուցվածքային գործոններով: Նկատի ունենք մի դեպքում՝ հավելական բաղադրիչների հոլովական արտահայտությունը, մյուս դեպքում՝ նրանց իմաստային (սաստկական և եղանակավորող) երանգները:

1) Հավելական բաղադրիչները հանդես են գալիս ուղիղ և թեք հոլովներով:

Այսպես, հետևյալ դարձվածքներում՝ **սիրտը փուլ գալ, սիրտը ահ ընկնել, ձենն ականջն ընկնել, գործը ձախ գնալ** հավելական բաղադրիչներն արտահայտված են ուղղական հոլովով:

Դիտարկենք այդ դարձվածքների ելակետային հարադրությունների իմաստները և ցույց տանք դրանց վերաիմաստավորման գործոնները: Այսպիսի վերլուծությունը չի հետապնդում միայն իմաստակառուցվածքային քննություն, այն նպատակ ունի ցույց տալու նման կառույցների գործառական-ոճական արժեքը հեղինակի խոսքում:

Այսպես, **փուլ գալ**³ (փլվել, քանդվել), **ահ ընկնել** (վախ տարածվել) հարադրական բայերը հատկանշվում են ուղղակի իմաստներով և դարձվածային (փոխաբերական) արժեք չունեն առանց

¹ Տե՛ս Մ.Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 173:

² Ալ. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, էջ 237:

³ **Փուլ գալ** հարադրական բայը փոխաբերական իմաստով նշանակում է նաև «հուզմունքից լաց զսպել չկարողանալ». հավանական է, հավելական բաղադրիչով դարձվածային իմաստի հիմքում ընկած է հենց այս փոխաբերական նշանակությունը:

հավելական բաղադրիչների: Հավելական բաղադրիչներով, սակայն, դրանք վերածվում են դարձվածային կապակցությունների՝ փոխաբերական իմաստներով:

Հմտ. **սիրտը փուլ գալ** - «սաստիկ հուզմունքից փղձկալ, լացը գսպել չկարողանալ». տեսնում է թե չէ, **սիրտը փուլ է գալի**, էլ չի դիմանում. լաց է լինում ու կռանում է համբուրում (3, 214):

Միրտն ահ ընկնել - «սաստիկ երկյուղ ապրել». գնում է, գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գյուղից հեռացել է. էստեղ **սիրտն ահ է ընկնում** (3, 218):

Ուղղական հոլովով հավելական բաղադրիչը կարող է կապակցություն կազմել այնպիսի հարադիր բայերի հետ, որոնք, առանձին վերցրած, ունեն դարձվածային փոխաբերական նշանակություն: Հմտ. **ականջն ընկնել** և **ձենն ականջն ընկնել**, **ձախ գնալ** և **գործը ձախ գնալ** կապակցությունների իմաստները:

Այսպես, **ձախ գնալ** հարադրական բայը դարձվածային արժեքով նշանակում է՝ «ձախողվել, գլուխ չգալ, չհաջողվել». որից՝ **գործը ձախ գնալ** կապակցությունը «անհաջողության մատնվել, ձեռնարկած գործը գլուխ չգալ» դարձվածային իմաստով: Հմտ.

Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ **գործ**, որ բռնում է, **ձախ է գնում**: Դրա համար էլ անունը դնում են Չախորդ Փանոս (3, 231):

Հարադրական դարձվածային բայերի հավելական բաղադրիչները հեթիաթնեում հանդիպում են նաև թեք՝ գործիական և ներգոյական հոլովներով, ինչպես՝ **հավասար աչքով մտիկ անել**, **փորում սիրտ չմնալ** և այլն:

Մտիկ անել հարադրական բայը փոխաբերական իմաստով նշանակում է «հոգ տանել, ուշադրություն դարձնել». նրանից սերած **հավասար աչքով մտիկ անել** դարձվածքը՝ «արդար դատել, անաչառ լինել»: Հմտ.

-Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ **հավասար աչքով մտիկ անես**, մեկին ավար չանես, մյուսին՝ խավար (3, 148):

Մյուս հարադրական բայը՝ **սիրտ չմնալ** տարբերակով, ունի հետևյալ իմաստները՝ «տրամադրություն ցանկություն լինել», հավելական բաղադրիչով՝ **փորում սիրտ չմնալ** դարձվածային իմաստով նշանակում է՝ «շատ վախենալ, սարսափահար լինել»: Հմտ.

Նազարն ... աչքերը բաց է անում, տեսնում գլխավերևը քա-

ռասուն լորանոց գուրգերն ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած. **փորում սիրտ չի մնում** (3, 221):

Ընդհանրապես հավելական բաղադրիչները հոլովական այլ արտահայտություններ ևս ունեն, սակայն մեր ընտրանքում հանդիպում են միայն վերոբերյալ հոլովաձևային դրսևորումները (ուղղական, գործիական և ներգոյական):

2) Հավելական բաղադրիչներն ունեն աստիճանավորման (սաստկականության) երանգ:

Դարձվածային արժեք ունեցող որոշ հարադրություններ կարող են ստանալ հավելական բաղադրիչներ, որոնք սաստկացնում են կապակցության դարձվածային իմաստը՝ ստեղծելով աստիճանավորման յուրահատուկ արտահայտության ձև: Այդ կարգի կապակցությունները, առավելաբար բնորոշ լինելով ժողովրդախոսակցական լեզվին, անմասն չեն մնացել Հ. Թումանյանի ստեղծագործությունների լեզվական ատաղձից:

Ելակետային հարադրական բայերի և հավելավոր բաղադրիչով կապակցությունների տարբերությունը ոչ միայն իմաստային-իմաստաբանական բնույթի է, այլև ձևաբանական-կառուցվածքային:

Այսպես, **սուգ կապել** հարադրական բայը «սուգ մտնել՝ տխրություն՝ վիշտ ապրել. սգավոր մնալ. սուգ պահել» փոխաբերական իմաստներով դարձվածային միավոր է: Այս կապակցությունը կարող է ստանալ **սև** հավելական բաղադրիչը, հանդես գալ արտահայտության այլ պլանով և իմաստային նոր բեռնվածությամբ: **Սև** գունանուն բաղադրիչը ընդհանրապես կայուն կապակցություններում հանդես է գալիս փոխաբերական նշանակություններով, ընդ որում՝ բացասական իմաստով, ինչպես «ամոթալի» (երախը սև), «չար, դժբախտ» (սև օր (եր)՝ վիճակ), «գաղտնի» (սև ցուցակ), «բացառիկ» (սև աղվես), «խավարամոլ» (սև ուժեր), «վիրավոր, սգավոր» (սև սիրտ) և այլն⁴:

Ահա **սև** գունանուն բաղադրիչը սուգ կապել հարադրական բայի հետ կազմում է դարձվածային կապակցություն՝ սաստկաց-

⁴ Գունանուն բաղադրիչների դարձվածակազմիչ դերի մասին տե՛ս Լ. Խաչատրյան, *Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, Ե., 1996, էջ 98-106:

նելով նրա նախնական իմաստը և հաղորդելով «սաստիկ՝ անդարմանելի վիշտ ապրել. ծանր կորուստ ունենալ» և այլն (3, 213):

Հարադրական բայի դարձվածային իմաստը կարող է սաստկացնել հավելական այնպիսի բաղադրիչ, որ հոմանշային հարաբերություն ունի հարադրության անվանական բաղադրիչի հետ:

Այդպես նաև՝ **պաղատանք անել** հարադրական բայը, թեև առաջին հայացքից կարող է ընկալվել բաղադրիչների ուղղակի իմաստով, ինչպես՝ «պաղատել», սակայն տվյալ կապակցության բայիմաստն ավելին է, քան «խնդրել» իմաստը. այն նշանակում է «սաստիկ խնդրել, ջերմեռանդորեն աղերսել»:

Պաղատանք անվանական բաղադրիչի հետ հոմանշային գույզ է կազմում **աղաչանք** գոյականը: Վերջինս, հանդես գալով հարադրական բայի կառուցվածքում, կարող է նոր երանգավորում հաղորդել հարադրության նախնական իմաստին, ինչպես՝ **աղաչանք-պաղատանք անել**. «սաստիկ աղերսել՝ խնդրել մեկին (մի բան ստանալու համար): Հմմտ.

Աղվեսը **աղաչանք-պաղատանք է անում**.- Ինձ մի՛ սպանի, -ասում է,- մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես (3, 163):

Նմանատիպ կառույցներում որոշակի երանգ են ստեղծում իրադրական հոմանիշները, որոնց «մերձավոր» նշանակությունները դրսևորվում են շարահյուսական միջավայրում. տվյալ բնագրից դուրս դրանք իբրև հոմանիշներ չեն ընկալվում, ինչպիսին են **ձեռք ու ոտք, արյուն և մահ, կյանք և ազատություն** և այլ բառագույզերը:

Այսպես, **ոտքերը թուլանալ** հարադրական բայը «վախենալ, երկյուղել» իմաստ(ներ)ով դարձվածային միավոր է, **իսկ ձեռն ու ոտը թուլանալ** կապակցությունն արդեն սաստկացնում է ելակետային հարադրության նախնական իմաստը՝ նշանակելով «սաստիկ վախից մարել, սարսափահար լինել»: Հմմտ.

Նազարը որ վագրին չի տեսնում – լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, **ձեռն ու ոտը թուլանում են** ու, թըրմի, ծառից ընկնում է գազանի վրա (3, 222):

Հովհ. Թումանյանի ոճին յուրահատուկ շեշտեր են վեր հանում այս կարգի շարահյուսական միավորները. խոսքը ոչ միայն դիտարկվող դարձվածքների իմաստներին է վերաբերում, այլև ժո-

դովրդական մտածողությանը բնորոշ դարձվածքների համատեղ գործածությանը, ինչպես՝ **լեղին ջուր կտրել – աչքերը սևանալ – ձեռն ու ոտը թուլանալ**, որոնք գծային պլանում ստեղծում են աստիճանավորում (գրադացիա):

Դարձվածային միավորները այլ կողմից էլ են բացահայտում Հովհ. Թումանյանի լեզվամտածողության առանձնահատկությունները. հարադրական բայերի դարձվածային իմաստներն ու նշանակությունները առավել շեշտելու նպատակով հեղինակը դրանք գործածում է հավելական բաղադրիչներով՝ դրանով իսկ ընդգծելով այդ դարձվածքների ժողովրդական ակունքները: Դարձվածքներ, որոնք կազմում են ժողովրդական բառ ու բանի անքակտելի մասը:

3) Հավելական բաղադրիչներն ունեն եղանակավորող (երանգավորող) նշանակություն:

Որոշ հարադրական բայերի իմաստային կառուցվածքում հավելական բաղադրիչները կարող են արտահայտել եղանակավորող երանգներ: Այդպիսի կապակցություններում հավելական բաղադրիչների շարահյուսական կապերը համեմատաբար թույլ են լինում. դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ եղանակավորող գործառույթ⁵ ունեցող բառերը նախադասության անդամ չեն դառնում: Հովհ. Թումանյանի հեքիաթներում հանդիպում են այդ կարգի հարադրական բայեր, որոնց հավելական բաղադրիչներն ունեն եղանակավորող գործառույթ:

Այսպես, **խեղճ գալ** հարադրական բայն ունի «խղճալ, խղճահարվել, մեղքը գալ» իմաստներ. **եկ** հավելական բաղադրիչով կազմվել է **եկ խեղճ արի** եռանդամ կապակցությունը, որտեղ **եկ** բաղադրիչը չունի բայական ուղիղ իմաստ ու ստորոգումային գործառույթ⁵: Վերոբերյալ կապակցության մեջ **եկ** բաղադրիչն արտահայտում է «խնդրում եմ, համաձայնիր» եղանակավորող իմաստ՝ հանդես գալով եղանակիչ բայի դերում: Հմմտ.

-Լսի՛ր,- ասում է,- մա՛րդ ախպեր... **եկ խեղճ արի**, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ (3, 180):

Հավելական բաղադրիչների դերով հանդիպում են դերանուններն ու որոշակի արտահայտություններ՝ հարցական երանգով,

⁵ Հմմտ. – Դե, ե՛կ, վարդապե՛տ, ու մի՛ խենթանա (ՊՄ):

ինչպես՝ **ի՞նչ, ի՞նչ պակաս (է)** և այլն:

Այսպես, **լույս տալ** հարադրական բայն ունի «լուսավորել, չորս կողմը լույս սփռել, լույս ճառագել» իմաստներ: Նրա հետ կապակցություն է կազմում **ի՞նչ պակաս (է)** հարցական երանգի արտահայտությունը՝ կազմելով **ի՞նչ պակաս է լույս տալիս** քառանդամ արտահայտությունը՝ «արեգակին կամ լուսատուին ոչնչով չգիջել» փոխաբերական իմաստներով: Հմմտ.

Արևը մեր մտավ, բայց տես նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ. սա **ի՞նչ պակաս է լույս տալի** ... (3,173):

Նմանապես՝ **միտք անել** հարադրությունը «մտածել, խորհել» իմաստով լայն գործածություն ունի ժողովրդական լեզվում. Հավելական՝ **ի՞նչ** բաղադրիչով կազմում է եռանդամ կապակցություն՝ **ի՞նչ էս միտք անում**, որ նշանակում է «իզուր ես չարչարվում, զուր մի տանջվիր»: Այս կառուցատիպը բնորոշ է հատկապես ժողովրդախոսակցական լեզվին: Հմմտ.

- Բարի օր, ախպերացու, էդ **ի՞նչ** ես մոլորվել, **ի՞նչ էս միտք անում**, - հարցնում է Հրեշը (3, 181):

Եղանակավորող դերով հավելական բաղադրիչներն այլ դրսևորումներ էլ ունեն ժողովրդախոսակցական լեզվում, սակայն Հովհ. Թումանյանի հեքիաթներում հանդիպում են դիտարկված դեպքերը միայն:

1. Հարադրական բայերը հեքիաթներում հանդես են գալիս ուղիղ և դարձվածային (փոխաբերական) իմաստներով:

2. Հարադրական բայերը, անկախ իմաստային դրսևորումներից, կարող են հանդես գալ հավելական բաղադրիչներով և ընդարձակել կապակցության թե՛ գծային և թե՛ բովանդակային կողմերը:

3. Հավելական բաղադրիչները կարող են ավելանալ

ա) ուղիղ իմաստով հարադրական բայերին,

բ) դարձվածային (փոխաբերական) իմաստով հարադրություններին:

4. Հարադրական բայերը ժողովրդական լեզվամտածողության դրսևորումներ են և առավելաբար գործածվում են այդ ոճով ստեղծագործող հեղինակների երկերում, մասնավորապես դրանք տարաբնույթ արտահայտություն ունեն Հովհ. Թումանյանի հեքիաթներում:

Мирумян М. - Структурные типы сопоставительных глаголов с избыточным компонентом в сказках Ог. Туманяна. - Сопоставления с избыточными компонентами свойственны народно-разговорному языку и характерны для сказок О. Туманяна. Стилистическая роль таких соположений характеризуются двумя срезами, с учетом два возможных групп таких соположений.

1. прямым значением глагола (обычный) (как: բաց անել – աչքերը բաց անել, վեր կենալ – փոթորիկ վեր կենալ),

2. с метафоричным (фразеологическим) значением (как: փուլ գալ – սիրտը փուլ գալ, ահ ընկնել – սիրտը ահ ընկնել, ձախ գնալ – գործը ձախ գնալ).

Сопоставительные глаголы с избыточным компонентом, с разнообразием типов строения и с разными проявлениями значения становятся особыми стилистическими средствами в сказках О. Туманяна.

.Mirumyan M. - Structural Types Comparison Verbs With Redundant Components in Fairy Tales by Hov. Tumanyan. - Juxtaposition with redundant components is peculiar to folk-spoken language and are typical of fairy tales by H. Tumanyan. Stylistic role of juxtaposition is characterized by two slices, taking into account the two possible groups such juxtaposition:

1 direct meaning of the verb (normal) (as բաց անել – աչքերը բաց անել, վեր կենալ – փոթորիկ վեր կենալ),

2 with metaphorical (a phrase) value (as, փուլ գալ – սիրտը փուլ գալ, ահ ընկնել – սիրտը ահ ընկնել, ձախ գնալ – գործը ձախ գնալ) and so on.

Coordinative verbs with redundant components, with a variety of building types and with different manifestations of the values are the special stylistic means in the tales of Hovhannes Tumanyan.

ՄԱՆՐՈՒՄՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Մանրուսումը կամ **Մանրուսմունքը** հայ միջնադարյան հոգևոր երգարվեստին և խազագիտության ուսուցմանն առնչվող երաժշտաժիսական մատյան է: Տերմինը Նոր հայկազյան բառարանում տրված է «Մանր» բառահոդվածի ներքո՝ «Մանր ուսմունք» անջատ գրությամբ, և բացատրվում է. «Երգք ժամագրոց, որպես թագաւորք, ակէլութ, մեսեդիք, ժամամուտք, կացուրդք, փառեր, հարցնափառեր, յառանձին գրքուկ ամփոփեալ ի նախնեաց»՝ նկատի ունենալով գրեթե ողջ խազգիրքը¹: «Միջին հայերենի բառարան»-ում **մանրուսմունք**-ը տրվում է եկեղեցական նշումով և բացատրվում որպես «Ժամագրքի երգերը պարունակող գիրք»²:

Երաժշտաժիսական այս մատյանը ձևավորվել է XI դարի վերջում Կիլիկիայում և արտացոլում է իր ժամանակի հոգևոր երգարվեստում տեղ գտած նոր միտումներն ու իրողությունները: Կոմիտասի բնութագրումով՝ «Հին երաժիշտները Մանրուսում ասելով հասկանում էին՝ ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խազերի մասին»³: Այսինքն՝ մեր միջնադարյան երաժիշտները հասկացել են խազգրքերի մեջ մտնող հարյուրավոր երգերի ամբողջությունը: Շուրջ մեկ դար հետո՝ XII հարյուրամյակի երկրորդ կեսին, մանրուսման արվեստը այնպիսի ծավալ է ստանում, որ Ն. Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում քահանայական ձեռնադրության պարտադիր և գլխավոր պայմաններից մեկը համարում է «Ձեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնուլ, եւ զմանր ուսմունսս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս, եւ ապա զալ ի ձեռնադրութիւն քահանայութեան»⁴:

«Մանրուսում» բառը երկիմաստ է: Մի դեպքում նշանակում է

¹ Գ.Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ.Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 207:

² Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 494:

³ Կոմիտաս, *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ*, Գիրք Ա, Ե., 2005, էջ 62:

⁴ Ն. Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, Էջմիածին, 1865, էջ 79:

նուրբ և արվեստավոր երգեցողության ուսմունք, մյուս դեպքում՝ ճոխ խազագրված մատյան՝ խազգիրք, որ ամփոփում է բարդ մելիզմային բնույթի երգերը: Կարելի է ենթադրել, որ «մանրուսմունք» կամ «մանրուսում» նշանակում է նուրբ կամ նրբառճ իրողություններին վերաբերող ուսմունք, ինչպես որ միջնադարում գործածվել է «նուրբ գրեանք» հասկացությունը՝ փիլիսոփայական երկերի իմաստով⁵: Պատահական չէ, որ միջնադարյան հեղինակները, սկսած Շնորհալույց, գործածում են «մանրուսման արուեստ» հասկացությունը:

Պետք է նշել, որ առ այսօր Մանրուսման գրքերը թե՛ բանասիրական, թե՛ բնագրագիտական առումով դեռևս բավարար ուսումնասիրված չեն: Ինչպես գրում է Կոմիտասը. «Մանրուսումն լիակատար իմացողներ թերեւս թուով շատ քիչ են եղել, որոնք եւ թագստի են պահել իրենց գիտութիւնը... Եթէ երաժիշտները, որոնք *փիլիսոփայ* կամ *խմաստուն* էին կոչուում այն ժամանակի լեզուով, չթագցնէին... մեր ձեռքը հասած կլինէր գոնէ մի քանի օրինակ եւս ձեռնարկ հին խազերի եւ եղանակների մասին, որոնք Մանր ուսման նիւթ են: Մեր այս կարծիքը հաստատում է մի յիշատակարան... Չոր (զարուեստ Մանրուսման) ի մանկանց եկեղեցւոյ սակաւք գնոյն գիտեն»⁶: Այսինքն՝ հայկական վանքերում մանրուսման արվեստը գաղտնի փոխանցվող գիտելիք է եղել:

Սովորաբար մանրուսման եղանակներն ամփոփվում են խազգրքերի վերջում «Ուղիցիք միահամուռ» խորագրի ներքո և աչքի են զարնում անսովոր, առաջին հայացքից խորհրդավոր անվանումներով: Առաջինը դրանց անդրադարձել է Ղ. Ալիշանը⁷, հետո՝ Կոմիտասը⁸, այնուհետև՝ Ռ. Աթայանը⁹, Ն. Թահմիզյանը¹⁰, Ա. Արևշատյանը¹¹: Հետագոտելով բազմաթիվ խազգրքեր՝ Ղ. Ալիշանը

⁵ Հմմտ. **Յ. Անասեան**, *Հայկական մատենագիտություն*, հ. Ա, Ներածություն, Ե., 1959:

⁶ **Կոմիտաս**, նշվ. աշխ., էջ 63:

⁷ **Ղ. Ալիշան**, *Միտան եւ Լեւոն Մեծագործ*, Վենետիկ, 1885, էջ 254:

⁸ Նշվ. աշխ., էջ 55-75:

⁹ **Ռ. Աթայան**, *Հայկական խազային նոտագրությունը*, Ե., 1959, էջ 82-83, 89-92:

¹⁰ **Ն. Թահմիզյան**, *Կոմիտասը և հայ հոգևոր երգարվեստի հարցերը*, Կոմիտասական, հ. Ա, Ե., 1969, էջ 159-217:

¹¹ **Ա. Արևշատյան**, *Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ*, Ե., 2003, էջ 23-29:

առանձնացրել է ավելի քան 70 եղանակի անուններ և կազմել դրանց այբբենական ցանկը՝ «ի գրօսանս բանասիրաց»: Ալիշանից հետո Կոմիտասը, ի մի բերելով բոլոր անունները, կազմում է դրանց այբբենական լրացված ցանկը՝ վերնագրելով՝ «Ուր ձայնի նրբութիւնները», և մանրուսման եղանակների թիվը համարում 152¹²: Կոմիտասից հետո մանրուսման եղանակների ուսումնասիրությամբ զբաղվում է հատկապես Ն. Թահմիզյանը: Քննելով այդ ձայնեղանակները՝ նա առանձնացնում է դրանք ըստ կիրառական, ծիսական բնույթի և ուսումնասիրում՝ համադրելով տարբեր խազգրքեր և ուշադրություն դարձնելով հատկապես եղանակների թվին¹³: Եզրակացությունները, անշուշտ, հետաքրքիր են, քանի որ երբեմն միևնույն եղանակը կարող է ունենալ երկու տարբեր անվանում և հակառակը՝ մեկ անվանումը կարող է նշել տարբեր եղանակներ տարբեր ձայներում: Մանրուսման եղանակներին անդրադարձել է նաև Ա. Արևշատյանը՝ քննելով «հայ միջնադարյան մատենագրության մեջ պահպանված ելևեջային հարսությունը, միջնադարյան հոգևոր երգաստեղծության մեջ ձևավորված բազմապիսի բնորոշ մեղեդիական դարձվածքների ամբողջությունը»¹⁴: Ակնհայտ է, որ բոլոր հետազոտողներին հետաքրքրում էր հատկապես ձայնեղանակների թիվը, որը տարբեր հաշվարկներով տատանվում է 120-ից մինչև 152: Թվում է, թե այդ քանակը չի համապատասխանում հայկական ութձայնի համակարգին, սակայն Կոմիտասը պարզաբանում է, որ «Եղանակների տեսակների զատ զատ անուանակոչութիւնը շատ վաղ ժամանակներից է յայտնի. մի սովորութիւն, որ յատուկ է եղել միշտ արեւելեան ազգերին՝ Հայերին, Պարսիկներին, Քրդերին, Արաբներին, Տաճիկներին եւ այլն, որոնք մինչեւ այժմ եւս գործածում են բացի Հայերից. մեր եղանակների լոկ անուններն ու անյայտ խազերն են մնացել ձեռագրերի մէջ»¹⁵:

Սույն հոդվածում փորձել ենք քննել մանրուսման եղանակների անվանումները՝ դրանք դասակարգելով ըստ իմաստային կամ թեմատիկ խմբերի: Ըստ այդմ առանձնացրել ենք՝

¹² Կոմիտաս, նշվ. աշխ., էջ 68:

¹³ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 186-187:

¹⁴ Ա. Արևշատյան, նշվ. աշխ., էջ 5:

¹⁵ Կոմիտաս, նշվ. աշխ., էջ 64:

ա) Անվանումներ, որոնք պայմանավորված են համապատասխան հոգևոր տոներին կատարվելու հանգամանքով: Այդպիսին են **Առաւօտերգ, Կիրակամոյի, Եկեղեցոյ, Խաչի, Գալստեան** մանրուսաման եղանակների անունները¹⁶:

բ) Անվանումներ, որոնք որոշակի երգերի սկզբնաբառեր են կամ երգերին առավել բնորոշ բառեր: Օրինակ՝ **Այսօր մտանէ** անունը Ծաղկազարդի երգերց մեկի սկզբնաբառերն են, կամ «Գարբիէն աւետօք», «Թագաւոր փառաց» կամ «Թագաւոր յաւիտեան», «Սայլն այն իջանէր» երգերի սկզբնաբառերից մանրուսաման եղանակների անվանումներ են **Գարբիէլ-ը, Շնորհագարդ-ը, Թագաւոր-ը, Սայլ-ը**¹⁷:

գ) Անվանումները, որոնք պայմանավորված են կիլիկյան վանքերում ձևավորված լինելու հանգամանքով: Դրանք են՝ **Կարմիր վանեցի** կամ **Կարմիր վանքեցի, Սուրբ Նշանեցի** կամ **Սուրբ Նշանէ**:

դ) Անվանումներ, որոնք հատկանշվում են երգեցողների անուններով՝ **Կիրակոս երեց, Մամկոն, Սարկաւագ, Մովսէս, Յովանիսուկ, Միքայէլ, Շահեան, Շաւառն, Տարունեցի, Արեւեցի**:

Մանրուսման եղանակների այս շարքը կարելի է համալրել՝ հետազոտողների կողմից արդեն իսկ արձանագրված անվանումներին ավելացնելով միջնադարյան գրիչների կողմից հիշատակված խազգրքերի խմբագիրների անունները՝ **Առաքելցի**¹⁸, **Կարապետցի**¹⁹, **Կոստանդէ**²⁰: Վերջիններս գրիչների կողմից հիշատակված են որպէս մանրուսման եղանակների հմուտ գիտակներ, որոնց կազմած խազգրքերը ճանաչվել են իբրև չափանմուշ:

ե) Առանձին մանրեղանակների բնույթն արտահայտող անվանումներ: Դրանք հիմնականում նվազական, փաղաքշական բառեր են՝ **Քնքշակ, Լալկան, Գոյնիկ, Գունիկ, Յեղմուկ**:

զ) Չայնեղանակներ՝ կազմված նվագարանների անուններից՝ **Սրինկ, Փող, Մնծղայն, Գոճնակ**:

է) Չայնեղանակներ՝ կենդանիների անուններից՝ **Առեռ, Արջ,**

¹⁶ Հմմտ. **Ն. Թահմիզյան**, նշվ. աշխ., էջ 198-201:

¹⁷ Հմմտ. **Ա. Արևշատյան**, նշվ. աշխ., էջ 38-39:

¹⁸ *ԺԵ դարերի ձեռագրերի հիշատակարաններ*, Մասն I (1401-1450), Ե., 1955, էջ 390:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 130:

²⁰ *ԺԴ դարերի ձեռագրերի հիշատակարաններ*, Ե., 1950, էջ 88:

Գայլ, Եզնակ, Ձի, Կատու, Ջորի, Ոչխար, Ուղտն:

ը) **Ձայնեղանակներ՝ թռչունների անուններից՝ Արծիւ, Աղաւնեկ, Բազէ, Ծիծեռն, Կաքաւն, Վարուժնակ, Յինայ:**

թ) **Ձայնեղանակներ՝ միջատների անուններից՝ Բոռ, Կրետ, Մեղու, Մառեղ, Պիծակ:**

Եթե դրանց հավելենք **Դարբին, Գետ, Երկաթ, Ծով, Ջաղաց, Ջուլիակ** անվանումները, ապա կարելի է որոշ աղերսներ փնտրել դեռևս հեթանոսական շրջանում ձայնի մասին կազմավորված պատկերացումներում: Հայկական երաժշտության ձայների կարգավորումը վերագրելով Ս. Պարթևին՝ Ղ. Ալիշանը գրում է. «Ըստ թուոյ տասն արարածոց ի չորից ձայնից Ժ բարդեցաւ. եւ չորս ձայնք ի չորս տարերցս ունին զգոյս. որպէս եւ Ա ձայն ի հողոյն, եւ Բ-ն ի ջրոյն, Գ-ն ի յօդոյն, Դ-ն ի հրոյն. եւ ի չորս ձայնիցն բաժանեաց չորս կողմ. վառ եւ վերջ երկու ստեղին: Որք ունին եւ այլ յատկութիւնս. զի Ա ձայնն ի հիւսնականէն է, Բ-ն՝ ի դարբնէն, Գ-ն՝ ի գետոց, Դ-ն՝ յաղբերաց, Ե՝ յերկաթոյ, Ջ՝ ի ծովու ծփանաց, Ը՝ յանասնոց, Ը՝ ի գազանաց, Թ եւ Ժ՝ ի հաւուց»²¹: Ինչպես նկատում է Ա. Արևշատյանը, հայկական ձայնեղանակների համակարգը «հիմքում ունենալով հեթանոսական շրջանում կազմավորված պատկերացումները, որոնք ձայնեղանակները կապում էին երկնային լուսատուների, չորս տարերքների, բնության զանազան երևույթների, կենդանական աշխարհի, արեւեստների, մարգարենների կամ հույն դիցաբանությունից և պատմությունից հայտնի երաժիշտների ու գիտնականների անունների հետ, վերախմաստավորվում է հետագա դարերում ըստ քրիստոնեական նոր գաղափարախոսության և գեղագիտական նոր պահանջների»²²: Անցյալի արմատներն այնքան խորն են և կենսունակ, որ շարունակում են գոյատևել ողջ միջնադարի ժամանակաշրջանում և թափանցել նույնիսկ եկեղեցական միջավայրում ստեղծվող մեկնությունների և գործնական ձեռնարկների մեջ:

Մանրուսման եղանակների ցանկում կան նաև անհասկանալի բառեր, անուններ, որոնք դժվար է ընդգրկել իմաստային որևէ խմբում:

²¹ Ղ. Ալիշան, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, 1873, էջ 88:

²² Ա. Արևշատյան, նշվ. աշխ., էջ 11:

Չոր, Չորուկ անվանումը հնարավոր է՝ առնչվի «պահք» հասկացությանը: ՆՀԲ-ը վկայում է. «...Պահոց եւ աղօթից հետեւելով, չոր ճաշակելով», որտեղից էլ գործածվում են **չորակեաց, չորաճաշակ, չորակեր լինել** բառերը. «Չոր ուտելեօք կամ հացիւ եւեթ ապրիլ. Հրաժարիլ ի պարարտ կերակրոց. Ոչ է պարտ զքառանորդսն մեծի Հինգաշաբաթին լուծանել, այլ չորակեր լինել»²³: Անդրադառնալով Մանրուսման երգերի «աղաչական-գղջական բնավորութեանը»՝ Ն. Թահմիզյանը նշում է, որ «սրանք եւս, մի շարք խազգրքերում դուրս մնալով «Ուղիցիների» կարգից, անցել են «Մեսեղիք ապաշխարութեան» բաժինը, դարձեալ նոյն անուններով եւ նոյն խազերով...ըստ բոլոր տուեալների, կիրառական երգերի շարքին պէտք է դասել նաեւ «Չորը» կամ «Չորուկը»²⁴: Չի բացառվում, որ **Չոր**-ը (իտ. secco)՝ որպէս տերմին՝ **չ**, համառոտ նշումով վերաբերի նաև ձայնի հնչողության երանգներին²⁵:

Մեռելքաշ անվանման **քաշ** բաղադրիչը՝ որպէս խազանուն, ըստ գործառնության՝ գրեթե նույնանում է **երկար**-ին: Հոգևոր երգարվեստում **երկար**-ը ցույց է տալիս երկարացման միջոցով ընդգծվող «մեծ» վանկը. «Հայկական խազագրութիւններում,- գրում է Թահմիզյանը,- «երկար» խազով նշանակւում է մետրական երկու միավորի արժեքով վանկը, որը կարող է հնչյունավորւել հենց մէկ երկար ձայնով»²⁶: Հետաքրքիր է, որ բարդ խազավորումները քննելիս Թահմիզյանն առանձնացնում է «ծանրատրոպ» կոչվող անվանումը և բացատրում որպէս «ծանր, քաշ, դանդաղ կատարվող «տրոպ», իսկ **տրոպ**-ը հուն. և լատ trope, tropos/tropus բառից է, որ նշանակում է «եղանակ», «մեղեդի»²⁷: Հնարավոր է, որ **մեռելքաշ**-ը մանրեղանակ է՝ նախատեսված հոգեհանգստյան կարգի ժամանակ մի պահ միայն կատարելու համար:

Միջին հայերենում գործածվում են գոյականի հոգնակի թվի, հոլովների կազմության այնպիսի տիպեր, որոնք իրենց տեսակով

²³ ՆՀԲ, հ. 2, էջ 577:

²⁴ Ն. Թահմիզյան, *Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը*, Փասատենա, 1994, էջ 184:

²⁵ Ն. Թահմիզյան, *Արդի խազաբանութիւն*, Փասատենա, 2003, էջ 118:

²⁶ Ն. Թահմիզյան, *Արդի խազաբանութիւն*, էջ 131:

²⁷ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 258-259:

բացառիկ են կամ եզակի: Այդ առումով հետաքրքիր է Մանրուսման եղանակներում վկայված **Տիրոցի ձագ** անվանումը: **Տիրոցի** բառաձևը վկայում է հոգնակերտ ձևայինների հնարավոր տարբերակների անցումների մասին: Միջին հայերենում հոգնակերտ ձևայինները գործածության ոլորտով սահմանազատված չեն, դրսևորվում են որպես միևնույն քերականական իմաստն արտահայտող ձևային ազատ տարբերակներ: Օրինակ՝ **աչք-աչեք-աչունք-աչվի-աչվեր-աչվներ-աչվնի**²⁸: Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում **ք-ոք-ոնք** հոգնակերտ ձևայինների հնարավոր անցումներն են, որոնք դրսևորվում են **շատք-շատոք-շատոնք** բառաձևերում²⁹ և հոլովվում են սեռականում **շատոց** ձևով: Նկատի ունենալով միջին հայերենում հոգնակի կազմության անմիջականությունը՝ չենք բացառում նաև **Տեր** բառի գրաբարյան հոգնակի **տեարք**-ի փոխարեն **տիրոք** ձևի գործածությունը, մանավանդ՝ միջին հայերենի մատենագրության մեջ հիշատակվում են **շատոց, մարդոց, տիրոջոց** ձևերը³⁰: Ընդ որում վերջինս ունի սեռ.-տր. հոլովի արտահայտման կրկնակի դրսևորում՝ եզակի (ոջ) և հոգնակի (ոց): Մ. Աբեղյանը ևս նշում է հայերեններում գործածվող **շատոք, շատոց** բառերը և օրինակը բերում է հայերեններից. «Աւիրենք շատոց տուն ու տեղ»³¹: Հակված ենք **Տիրոցի ձագ** մանրեղանակի անվանումը բխեցնել **տէր** բառից:

Մանրուսման եղանակների անվանումներից է նաև **բբաւոր**-ը: Միջին հայերենի բառարանում այն վկայված չէ: ՆՀԲ-ը մեկնում է. «Մահակ. ստուար գաւազան», համարժեք է հուն. *ράβδος, ξυλον* և լատ. *lingum, fustis* բառերին³²: **Բիր**-ը գործածվում է V դարի մատենագրության մեջ, Աստվածաշնչում. «Ամբոխ բազում՝ սրովք եւ բբաւք» (Մտթ. ԻԶ, 47): Առանձնացնելով երկրագործությանն առնչվող բնիկ հ.-ե. անվանումները՝ Գ. Ջահուկյանը **բիր**-ը ներառում է բարբառային, գործառական և բառային տարբերակներում՝ որպես

²⁸ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Ե., 1975, էջ 61-62:

²⁹ Նշվ. աշխ., էջ 62:

³⁰ Նշվ. աշխ., էջ 70:

³¹ Մ. Աբեղյան, *Երկեր*, Բ, Ե., 1967, էջ 56-57:

³² ՆՀԲ, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 490:

հումանիշներ (**բիր-ձաղկ-ջին-գաւազան-մահակ-ջալոտ(ի)**)³³: «Բիր-ը համարվում է բնիկ հայերեն բառ՝ *bhi-ro-՝ bhel-«խփել» արմատից, գրում է Ջահուկյանը, բայց հավասար իրավունքով կարող է համարվել իրանական փոխառություն, մանավանդ եթե կապված է բահ-ի հետ (*bher-«ծակել, կտրել, ճեղքել», եթե ոչ *bhdeh-ից՝ «փորել»³⁴: Հ.Աճառյանը առնչություններ է նկատում **բահ** բառի հետ³⁵:

Բիր-ը՝ որպես ածական, ունի նաև «կոշտ, կոպիտ, բիրտ» նշանակությունները: Ստ. Մալխասյանցը վկայում է նաև Գ.Սրվանձ-տյանցի «Գրոց ու բրոց»-ը բացատրելով որպես «Գրական և ժողովրդական, գեղջկական»³⁶: Եթե հիմք ունենանք նաև այն դրույթը, որ մանրուսման «մեղեդիական բանաձևերը շատ անգամ քաղվում էին նաև աշխարհիկ տարածված երգերից»³⁷», ապա կարելի է ենթադրել, որ անվանումը աղերսներ ունենա ժողովրդական կամ գեղջկական մեղեդիների հետ կամ էլ լինի ժողովրդական մեղեդիների բնորոշ մանրեղանակ:

Այսպիսով, Մանրուսման մատյաններում վկայված յուրօրինակ, ինքնատիպ, մասամբ նաև խորհրդավոր անվանումների մեկնությունը հնարավորություն է ընձեռում հետազոտելու հին և միջին շրջանի հայերենի գործառական ոլորտները՝ ելնելով ամենից առաջ լեզվական չափանիշներից:

Gayane Mkhitarian - The Names of "Manrusum" Modes.- The "Manrusum" is a musical and sacral book and is formed at the end of XI century in Kilikia. The term "Manrusum" has two meanings: first is a doctrine of sacred chanting art and second is a luxurious drawnd neumes-book. The original and unique names of "Manrusum" Modes had been in the center of attention of various researchers. Some of the names are

³³ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 393:

³⁴ Նշվ. աշխ., էջ 551:

³⁵ Հմմտ. Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 452:

³⁶ Ս. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1944, էջ 371:

³⁷ Ա. Մրեշատյան, Գոմիտասի անդրանիկ երաժշտագիտական հոդվածը և նրա նշանակությունը.- *Էջմիածին*. - Ը-Թ, 1996, էջ 147:

examined in this article as it allows to explore functional fields of Old and Middle Armenian based on linguistic criterias.

Мхитарян Гаяне - Названия ладов "Манрусум".- "Манрусум" -это музыкально-ритуальная книга, которая сформировалась в Киликии в конце XI века. Термин "Манрусум" имеет два значения: во первых - это доктрина священного искусственного песнопения и во вторых - это роскошно нарисованная невменная нотация. Оригинальные и уникальные имена ладов "Манрусум" были в центре внимания различных исследователей. В этой статье осматриваются некоторые имена, поскольку это позволяет исследовать функциональные сферы старого и среднего армянского языка основанных на лингвистических критериях.

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԼԵԶՈՒՆ

Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դ.) նամակների և բանաստեղծությունների¹ լեզուն դասական գրաբար է, բայց և հայտնի է որպես մույժ ու խճողված: Մարկվարտը բնորոշել է այդ հեղինակին որպես «հայկական Լիկովորոն»² (Լիկովորոնը մ.թ.ա. երրորդ դարում Ալեքսանդրիայի գրադարանում աշխատած հույն բանաստեղծ էր, որի «Ալեքսանդրա» պոեմն աչքի էր ընկնում ծայրահեղ խորթնաբանությամբ): Դրանք դժուարհասկանալի են ինչպես լեզվական, այնպես էլ բովանդակային առումով, քանի որ լի են այլաբանություններով, ակնարկներով, մթին հատվածներով, հայտնի և անհայտ աղբյուրներից մեջբերումներով ու վերապատումներով, ինչը երբեմն սաստկացվում է բառախաղերով և բաղաձայնայնությի (ալիտերացայի) չարաշահումով:

Մագիստրոսի երեք՝ «Գամագտական» (Մագ. 6(2Է)), «Մրգուզ փանաք» (Մագ. 39ա(2Զ)) և «Գանգիւն բախիւն» (Մագ. 39բ(2Ե)) սկսվածքներով բանաստեղծությունների գրեթե բոլոր բառերն են անհասկանալի. այդպիսիք են նաև 44(ԾԹ) նամակի բանաստեղծական հատվածները: Դրանք հանելուկներ են, Հ. Աճառյանի բնորոշմամբ՝ «եզիպտական մեհենագիր գրութեանց նման անիմանալի բաներ»: Բառերի մեծ մասն անծանոթ է, և գրիչները, չհասկանալով, խիստ աղավաղել են բնագրերը, դարձնելով է՛լ ավելի անհասկանալի: Հ. Աճառյանը վերծանել

¹ Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, *Թուղթք և չափաբերականք*, աշխատասիրությամբ Գ. Մուրադեանի, *Մատենագիրք հայոց*, ԺԱ դար, ԺԶ հատոր, Երևան, 2012, էջ 85-385. այսուհետ՝ Մագ., նամակի համարը՝ արաբական թվանշանով (վակագծերում տառերով բերվում է նույն միավորի համարն ըստ հին հրատարակության՝ *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, բնագիրն առաջաբանով եւ ծանոթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, բացի Մագ. 1-ից և Մագ. 2-ից, որոնք այս հրատարակության մեջ չկան) և նախադասության թիվը:

² Տե՛ս Hippolytus, *Werke*, 4-ter Band, *Die Chronik*, hergestellt von. A. Bauer, nebst einem Beitrag von J. Markwart, Leipzig, 1929, S. 426:

է «Մրգուզ փանաք»-ը³: «Գամագտական»-ը փորձել են վերծանել երկու այլ հմուտ բանասեր՝ Նորայր Բյուզանդացին⁴ և Մենեվիշյանը⁵: Ավելացնենք, որ ՆԲՀՀ-ի հեղինակները «զանց են առել» այդ «անիմանալի» բառերը: Դրանցից, շատերը բնականաբար չկան նաև Լ. Հովհաննիսյանի կազմած՝ ՆԲՀՀ-ի լրացման⁶ մեջ:

Նամակներում ևս Գրիգոր Մագիստրոսն օգտագործել է բացառիկ բառեր, որոնք այլ հեղինակների մոտ ավանդված չեն: Երբեմն դրանց իմաստը հստակ չէ. այն վերականգնվում է ընդհանուր կոնտեքստից: Նշենք մի քանիսը. «կեղերջական» (Մագ. 8(ՀԲ), 21(Բ).34, 22(ԿԱ).18, 84 (ԼԶ).24՝ «գանգատական, ցաւագին»), «յաճաչու» ((Մագ. 21(Բ).33, 60(ԽԸ).16, 61(ԻԲ).14, 70(Զ).1՝ «թափառական»), «տորբանեմ» (Մագ. 6(ՁԷ).1), «տորբանական» (Մագ. 21(Բ).3, 44(ԾԹ).15), «քարգոնոսական» (Մագ. 6(ՁԷ).19, 2(Բ).45, 40(Խ).9) և «քարգոնական» (Մագ. 48(ԽԴ).1, 54(ԼԴ).4՝ «արքայական»), «դովար» (Մագ. 52(ԼԳ).2), «տոռական» (Մագ. 31(ԾԲ).3, 6, 9՝ Արտեմիս դիցուհու մակդիրն է, «տավրոսյան», խոսքը Դրիմի Տավրոսյան լեռներում գտնվող Արտեմիսի մեհյանի մասին է, որի հետ կապված առասպելների ակնարկներ կան թղթերում):

Հետևյալ բառերը նորակազմ բարդություններ են, որոնց կառուցվածքը պարզ է, իմաստը՝ ոչ այնքան. «ճանջաճերմակ» (Մագ. 30(ԾԱ).3, 54(ԼԴ).4՝ երիվարի մակդիր), «կռապոզ» (Մագ. 54(ԼԴ).4՝ նոխազի մակդիր), «վրնջապապչակ» (Մագ. 30(ԾԱ).3), «սալասմբակ» (Մագ. 30(ԾԱ).3, 53(Լ Բ).15):

Բացի նշվածներից, «Թղթերում» Գրիգոր Մագիստրոսն օգտագործել է մի շարք հունարէն բառեր՝ հայերէն տառադարձմամբ, ինչը բացառիկ երևույթ է հայ միջնադարյան մատենագրության մեջ: Դրանց մեծ մասը վկայված չէ ոչ Նոր հայկազյան, ոչ էլ Առձեռն բա-

³ Հ. Աճառեան, «Գրիգոր Մագիստրոսի Մրգուզ փանաքի լուծումը», *Հանդէս Ամսօրեայ*, 37 (1923), էջ 241-256:

⁴ Ն. Բիւզանդացի, «Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական» թղթին մեկնութիւն ի նմին իսկ Մագիստրոսէ», *Բանասեր*, 2 (1900), էջ 119-140:

⁵ Մէնեվիշեան, *Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծում*, Վիեննա, 1912:

⁶ *Գրաբարի բառարան*, Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

նարաններում: Օրինակ՝ «աստռանումի» (Մազ. 9(Հ).15՝ «աստղա-
բաշխական աղիւսակ», հմմտ. ἄστρονομία), «մանդալ» (Մազ.
15(ՀԶ).16 – μάνδαλος «կաղին»), «մանիական» (Մազ. 21(Բ).19, հմմտ.
μανικός, μανιώδης «խելագար»), «միւստիոթիոն» (Մազ. 46 (Է).10 – μυσ-
τήριον «խորհուրդ, գաղտնիք»), «սիմեոնիկոն» (Մազ. 26(ՀԱ).30, հմմտ.
σημερινός «այսօրվա»): Դրանց մեջ կան անգամ բայեր՝ «եպիդեմեալ»
(Մազ. 39բ(ՁԵ).5 – ἐπιδημέω «բնակվել, մնալ»), «ետեկնիմ» (Մազ.
6(ՁԷ).3 – τίκτω «ծնել» բայից):

Բառարաններում կարելի է գտնել Մագիստրոսի օգտագոր-
ծած՝ հունարենից փոխառված բառերից մի քանիսը՝ «բրաբիոն»
(Մազ. 51(ԿԴ).5, 61(ԻԲ).1), 63(ԽԲ).6), 65 (ԻԴ).13), 68(Լ).12՝ «մրցա-
նակ», բայց բառն օգտագործված է «շնորհ» կամ նման իմաստով),
«մառուլ» (Մազ. 88(ԼԹ).18 – μαρούλιον «հազար, լատուկ»), «նոմիկոս»
(Մազ. 1.ՁԼԳ – νομικός «օրէնագէտ»), «նումիզմատայ» (Մազ. 26(ՀԱ).8
– νομίσματα (հոգն.). «շրջանառվող դրամ»), «ոքսոմելի» (Մազ. 16(ՀԴ).5
– ὀξύμελι «քացախի ու մեղրի խառնուրդ»), «պոասսոնոց» (Մազ.
4(ԿԷ).67 – προάστειον «արվարձան»), «տիտղոս» (Մազ. 15(ՀԶ).1 –
τίτλος «մակագրութիւն»), «տոնիտոն» (Մազ. 83(Կ).8 – (πυρετός) τριταῖος
«եռօրեայ տէնդ»), «փագրոս» (Մազ. 14(ՀԵ).12, 16(ՀԴ).2 – φάγρος «Նե-
ղոսում ապրող մեծ ձուկ»), «քանոնիկոն» (Մազ. 26(ՀԱ).21 – κανονικός
«կանոնաւոր»):

Որոշ բառեր աղավաղված են կամ անհասկանալի, և
բանասերների կռահումներն օգնել են գտնել դրանց հունարեն
նախատիպը: Վերը նշված «միւստիոթիոն» բառի իմաստը մեզ
հաջողվել է հասկանալ բնագիրը հրատարակության
պատրաստելիս, այն ինչ Կոստանյանցի հրատարակության մեջ (էջ
25) կարդում ենք «միւս Տիւրիոնիւն», երկրորդ բառը՝ որպէս անուն:

Կան բառեր, որոնց հունարեն ծագումը ենթադրելի է,
սակայն դա չի օգնում իմաստը հստակեցնելուն, օրինակ՝ «տիմին»
(Մազ. 9(Հ).20, 25(Ե).46, 26(ՀԱ).16, 60(ԽԸ).15), «տիմիական» (Մազ.
32(ԾԳ).1՝ հավանաբար հունարենն իմաստով «պատվավոր» բառից, չնա-
յած իմաստը մութ է), «պրաքսիս» (Մազ. 78(ՁԳ).4 – πρᾶξις «գործ»,
սակայն բյուզանդացի գորավար Նիկոլայոսի անարգական բնորո-
շումների թվում անհասկանալի է) :

Հույներին Մագիստրոսը անվանում է «արգիացի» (Մագ. 20(Դ).19, 31(ԾԲ).1, 6, 32(ԾԳ).5, 7), ինչը հիշեցնում է հունարեն Ἀργεῖος «Արգոս քաղաքի բնակիչ» բառը: Հոմերոսի մոտ այն նշանակել է պարզապես «հույն». հետևաբար Գրիգորը փորձել է, այսպես ասած, «խոսել հոմերոսյան բառապաշարով»: Իսկ «դովրացի» (Մագ. 26(ՀԱ).18, 29(Ծ).2, 52(ԼԳ).2, 54(ԼԴ).8) բառի կիրառությունը հասկանալի չէ. այն հիշեցնում է Δωρικὸς «դորիական»՝ հունական ցեղերից և բարբառներից մեկի անվանումը: Միայն «Մեկնություն քերականին»⁷ երկի մի նախադասության մեջ է իմաստը միանշանակ. «Ի հոռոմին Դովրացի ոմն անուանեալ լեզու» (Քեր. ԺԳ.75):

Մագիստրոսի օգտագործած հունարեն բառերի թվում կան բյուզանդական պաշտոնների անվանումներ. «անթիպատ պատրկություն», «անթիպատություն», «դուկ»/ «տուկ», «կիտանտ», «մագիստրոս». «պատրիկ», «պրատնսպատրիկ», «պոտաուպաթար», «ռեքտաու», «սինկլիտոս», «վեստ», «տելետիս»⁸:

Մագիստրոսի լեզվում նաև բավական շատ հունաբանություններ կան. Գ. Զահուկեանն այն բնորոշել է որպես «հատու խրթնաբան հունաբան արաբաբան լեզու»⁹: Հունաբանությունն ակնհայտ է, իսկ արաբաբանության մասին թեզը թերևս վերանայման կարիք ունի:

Հունաբանություններն ընդգրկում են հունաբան թարգմանություններից փոխառված և դրանց նմանությամբ հորինված 163 նախածանցաւոր բառ («վերծանել»՝ Մագ. 4(ԿԵ).1, 10(ԿԳ).1, 11(ԽԵ).13, 18(ԺԱ).11, 21(Բ).44, 26(ՀԱ). 15, 40(Խ).1, 42(ՁԲ).4, 43(Ժ).1, 44(ԾԹ).8, 57(ԺԳ).1, 58(Ը).1, 62(ԽԱ).8, 69(ԲԵ).1, «տրամակայել»՝ Մագ. 1.85, 9(Հ).32, 16(ՀԴ).4, «ներմականտաճական»՝ Մագ. 58(Ը).1), նախածանցավոր բառերի «կիսապատճենում»-ների

⁷ Գրիգոր Մագիստրոս, *Մեկնություն քերականին*, աշխատասիրությամբ Գ. Մուրադեանի, *Մատենագիրք հայոց*, ԺԱ դար, ԺԶ հատոր, էջ 386-471 (այսուհետ՝ Քեր., գլխի և նախադասության համարը):

⁸ Ավելի մանրամասն, բնագրային վկայակոչումներով հանդերձ, տե՛ս մեր առաջաբանում՝ *Մատենագիրք հայոց*, ԺԱ դար, ԺԶ հատոր, էջ 118-119:

⁹ Գ. Զահուկյան, *Քերականական եւ ուղղագրական աշխատությունները հին եւ միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954, էջ 217:

երկու տեսակ՝ բարդ բառեր՝ երբ հունարեն նախածանցի դիմաց բառարմատ է («անդրադարձիմ»՝ Մազ. 1.62, 82, 47(ԽԹ). 12, 88 (ԼԹ).6, Քեր. ԺԳ.76, «դժոխադատ»՝ Մազ. 10(ԿԳ).2, Քեր. ԺԳ.68, «դժուարագիծ» Մազ. 26(ՀԱ).16, «ընդդիմահար»՝ 4(ԿԵ).18, 18(ԺԱ).5 «ջրջաբերութիւն»՝ 13(ԾԶ). 8, 45(ՀԸ).13), 66(ԾԵ).1) և բառակապակցություններ՝ նախածանցին համապատասխանող մակբայով («ի բաց բառնալ»՝ Մազ. 39բ ՁԵ).9, 47(ԽԹ).18, Քեր. ԻԲ.20, «ընդդէմ եղեալ»՝ Մազ. 55(ՀԳ).28, «արտաքս հանել»՝ 60(ԽԸ).44) : Կան նաև հունարենից պատճենված բարդ բառեր («քաջողջական»՝ Մազ. 11(ԽԵ).4, «ձիածին»՝ 52(ԼԳ).1, «պարսպամարտ»՝ 53(ԼԲ).2, «անապատասէր»՝ 18(ԺԱ).20, 53(ԼԲ).13, «բարերջանիկ»՝ 19(Գ).26, 69(ԻԵ).1, «եռոտանի»՝ 34(ՀԹ).2, 81(ԼԵ).2) և այլ տեսակի բառային հունաբանություններ :

«Մեկնութիւն քերականին» երկում բնականաբար շատ եզրեր կան Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւնից», որի մեկնությունն է այդ երկը: Նամակներում առատորեն ներկայացված է Դավիթ Անհաղթի տրամաբանական բառապաշարը. «սեռ» (Մազ. 1.ԻԳ, 70 (Զ).8, 87(ԿԶ).10), «յատուկ» (Մազ. 21(Բ). 16, 32(ԾԳ).2, 4), «պատահում» (Մազ. 21(Բ).3, 61(ԻԲ).15) (այս երեքը տերմինաբանական արժեք են ստացել իմաստային պատճենման եղանակով), «տեսակ» (Մազ. 1.ԻԳ, 21(Բ).16, 32(ԾԳ).2, 4, 70(Զ).8, 87(ԿԶ).10), «մակեղուտ անանջատ» (Մազ. 21(Բ).3, 61(ԻԲ).15), «եղուտ» (Մազ. 26(ՀԱ).26), «բոյսք եւ կենդանաբոյսք կամ կենդանիք յատուկ եւ սեռաբար» (Մազ. 55(ՀԳ).3), «կենդանաբոյս» (Մազ. 2.83, 15(ՀԶ).2, 47(ԽԹ).8) և այլն: Հետաքրքրական են Դիոնիսիոս Արեռպագացու թարգմանություններից փոխառյալ հետևյալ բառերը. «աստուածպետական» (Մազ. 4(ԿԵ).1, 8(ՀԲ).16, 9(Հ).34, 18(ԺԱ).1, 21(Բ).7, 22(ԿԱ).1, 43(Ժ).4, 44(ԾԹ).11, 46(Ե).15, 51(ԿԴ)., 59(ԽԶ).2, 67(ԾԵ).6, 80(ԻԹ).8), «զերաբնալէս» (Մազ. 79(ԻԸ).3), «այրական» (Մազ. 4(ԿԵ).32, 20(Դ).3, 24(ԺԹ).29, 46(Ե).10, 57 (ԺԳ).4, 58(Ը).37, 67(ԾԵ).1, 79(ԻԸ).5, 87(ԿԶ).2), «սերտութիւն» (Մազ. 4(ԿԵ).32, 20 (Դ).3, 21(Բ).24, 46(Ե).10, 57(ԺԳ).4, 61(ԻԲ).14, 63(ԽԲ).3, 69(ԻԵ).11, 79(ԻԸ).5, 87 (ԿԶ).2):

Հետևյալ ռճը յունաբանություն է. «երկուս արարիչս հաւանին՝ զմիւսն բարոյ և զմիւսն չարի» (Մազ. 9(Հ).79). «միւսն... միւսն» նշանակում է «մէկը... միւսը»: Այդպէս է հունարենում (ἄλλος... ἄλλος).

մեր ընթերցած հունաբան թարգմանություններում այդպիսի կիրառության չենք հանդիպել, սակայն այն տեսականորեն հնարավոր է:

Գրիգոր Մագիստրոսը կիրառել է նաև քերականական հունաբանություններ, որոնք բոլորն էլ թարգմանություններից են՝ «մի»-ին հոմանիշ «եզ» թվականը՝ «եզաբար» մակբայի կազմում, արհեստական «երկաքանչիւր» դերանունը, տրական հոլովի «ուս» վերջաւորությունն ընդլայնված կիրառությամբ «ի նախնում», «ըստ տեսակում», և այլն, «յաստուածուստ», «յերկնուստ» մակբայները բացառական հոլովի փոխարեն, առանց հոլովիչի՝ «ց» վերջավորությամբ հոգնակի սեռական՝ «արեգակնայինցն», չհոլովվող «իւրաքանչիւր» դերանունը՝ հոլովված՝ «իւրաքանչիւրոցն», կրավորական անորոշ դերբայ՝ «իլ» վերջածանցով՝ «ապականիլ», «դատիլ» և այլն, «եմ» օժանդակ բայի արհեստական անորոշ դերբայը՝ «ել», «ելոյ», կրավորական անցեալ անկատարի եզակի թվի երրորդ դեմքի արհեստական -իւր վերջավորությունը՝ «ապտակիւր», «առաքիւր», «յորջորջիւր», «վերաբերիւր» և այլն, «ա» լծորդության բայերի արհեստական կրավորական ձևեր՝ ի խոնարհիչով. «բառնի»՝ «բառնամ»-ից, «ամբառնի»՝ «ամբառնամ»-ից, «իմանի»՝ «իմանամ»-ից, արհեստական բայական հիմքեր՝ «եղանիմ» («լինիմ» բայի անցյալ կատարյալի «եղ-» հիմքից կազմված ներկա), «ընկալուլ» («ընդունիմ» բայի անցյալ կատարյալի «ընկալ-» հիմքից կազմված ներկա), «առեցելով», «վերառեցեալ» («առնում» բայի անցյալի հիմքն է «առ-», և ոչ թե «առեց-»), արհեստական նախդիր՝ «մակ ոսկւոյ», «մակ յերկին», «մակ կառափին», «մակ երկնի», «մակ տառիդ»¹⁰:

Մագիստրոսը կիրառել է նաև շարահյուսական հունաբանություններ. բոլորն էլ թարգմանություններից են՝ բացականչության սեռական՝ «ո՛ հ մեծի ապշութեան և յամառութեան», «ո՛ երանելի ողջախոհութեան», «ո՛ վ ամենիմաստ արուեստաւորիս», մասնական սեռական՝ «գերակատարդ իմաստից», ենթակայական դերբայի հետ ուղիղ խնդիր (սեռական հոլովի փոխարեն)՝ «վաճառողացն զքեզ», գործող անձի անուն գոյականի

¹⁰ Ավելի մանրամասն, բնագրային վկայակոչումներով հանդերձ տե՛ս մեր առաջաբանում՝ *Մատենագիրք հայոց*, ԺԱ դար, ԺԶ հատոր, էջ 121-122:

հետ ուղիղ խնդիր, որն ավելի կոպիտ և համեմատաբար հազվագյուտ հունաբանություն է՝ «Մտեղծչին զսա», գոյականացված անորոշ դերբայներ՝ «զյաղթելն... զծայրանալն», անցեալ դերբայ՝ «զփակեալն նախահօրն Ադամայ բանայր», ապառնի դերբայ՝ «զլինելոցն», նախդիրների կուտակում՝ «զընդ քոյդ հովանեաւ սաղարթանալն», Դավիթ Անհաղթի թարգմանություններից փոխառած հորդորական «բէր» ձևը, որ հունարեն *φοβε-ի* բառացի թարգմանությունն է. «բէր և յայտոսիկ յարամանեալ ցուցից քեզ», «բէր այսուհետև... արասցուք զսա» և այլն¹¹:

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը լայնորեն կիրառել է հունաբան թարգմանություններում կերտված բառային, ձևաբանական և շարահյուսական հունաբանությունների տեսակներից շատերը: Հատկապես հաճախակի են նախածանցավոր բառերը, որոնք միշտ չէ, որ հանդես են գալիս իրենց նախնական իմաստով:

Մագիստրոսը բառախաղերով և բաղաձայնությով ձոխացրել ու մթնեցրել է իր շարադրանքը: Այսպես, պատմում է արտույտի մասին մի առակ. զգուշանալով, որ երկինքը չընկնի, արտույտը մեջքի վրա պառկած ոտքը տնկել էր երկնքին՝ այն պահելու համար: Նրան պարսավում էին, թե՛ «որով ծղէ ծնգաւք ծառանաս, ծոխ՛կ, քո ծովդ խելաւք» (Մագ. 19(Գ).28): Այստեղ «ծ»-ով սկսվող բառերի կուտակում է, ընդ որում «ծղէ»-ն կամ գոյություն չունեցող բառ է, կամ «ծղի, ծղոյ» բառի աղավաղված տարբերակ. նպատակը «ծ»-ով սկսվող ևս մեկ բառ օգտագործելն է:

Բաղաձայնության շատ օրինակներ կան. «ճուաղանց է ճարակ ճռուողէլ» (Մագ. 20(Դ).17), «զմնուն խցակեալ և խաւարեալ և ի խորս բնակեալ» (Մագ. 5(ԿԸ).4), «վարդապետն քո ծայրագոյն, ի Ծար ծարաւի ծորեալ, ի քէն ջերմունկն ջայլիր ջոկ կապեալ ջնարոհարացդ, ջատագով քաջին ջեռուցանէն» (Մագ. 8(ՀԲ).21), «կասկածանս կարծեաց կարկատեն կաշկանդել, կոհակս կեղծեաց կոփել» (Մագ. 8(ՀԲ).23), «վարդապետն ի Վարդիկն վահանաւորեալ

¹¹ Ավելի մանրամասն, բնագրային վկայակոչումներով հանդերձ տե՛ս մեր առաջաբանում՝ *Մատենագիրք հայոց*, ԺԱ դար, ԺԶ հատոր, էջ 122-123:

վաղվաղեաց» (Մազ. 8(ՀԲ).31), «կոճեաց կեռաքն կոփել, կոկորդակոփ կասեաց» (Մազ. 8(ՀԲ).31), և այլն: Փաստորեն Գրիգորը բառեր է հորինել՝ այս շարքերը լրացնելու համար:

Անդրադառնա՞նք Մագիստրոսի այլ լեզուների իմացությանը: Լ. Խաչերյանի կարծիքով՝ բացի հայերենից նա գիտեր վեց օտար լեզու՝ եբրայերեն, հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն¹²: Ճիշտ է, հունարենի լավ իմացությունը նշելուց հետո ավելացնում է. «նույնը կարելի է ասել, թեև նուազ ընդգրկումով, արաբերենի իմացության մասին»¹³: Այս կարծիքը թերևս որոշ չափով չափազանցված է: Դիցուք, եբրայերենի իմացության ոչ մի նշույլ չենք գտնում, իսկ լատիներենին վերաբերող՝ միայն մեկ սխալ տեղեկություն: Ղ. Ալիշանը նկատել էր Գրիգորի «բառական հմտութիւն»-ը հունարեն, ասորերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներում¹⁴: Գ. Զահուկյանի կարծիքով, նա իմացել է հունարեն, արաբերեն, պարսկերեն¹⁵:

Հունարենի իմացություն ակնհայտ է՝ հունարեն բառեր, քերականական հունաբանություններ, նաև մեզ հաջողվել է հայտնաբերել հունարեն աղբյուրներից ճշգրիտ թարգմանված հատվածներ:

Բացի այդ Գրիգորն անդրադարձել է առանձին հունարեն բառերի բացատրությանը. «գեազարդ խաւարտ, յունարէն ասի մառուլ» (Մազ. 88(ԼԹ).18), «փակեղն, որ է յունարէն» (Քեր. Ա.125), «կաղամար, որ է կալամառ, այսինքն աման գրչի»: Դավիթ քերականից մեջբերված մի հատվածում ասում է. «ողբերգութիւն նոխազերգութիւն ասի ըստ յունականին» (Քեր. Բ.18). և իրոք, *τραγῳδία* բառացի նշանակում է «այծերգություն», ինչը բացատրվում է թատերական ներկայացմանը ծնունդ տված դիոնիսոսյան ծեսերի մեջ այդ կենդանու ներկայությամբ: Հայտնում է, որ ջուլիակությունը հույներն անվանում են «մեսիսիկա» (մինչ հայերը՝ վրացերենի հե-

¹² Լ. Խաչերյան, *Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, կեանքն ու գործունեությունը*, Լոս Անճելըս, 1987, էջ 51:

¹³ Անդ, էջ 52:

¹⁴ Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր*, Վենետիկ, 1873, էջ 25:

¹⁵ Գ. Զահուկյան, *նշվ. աշխ.*, էջ 206:

տնությամբ «մեսխուր») (Քեր. Ա.128): Բառարաններում մեզ չհաջողվեց գտնել այդ բառը. մի գուցե դա 11-րդ դարի խոսակցական հունարենի վկայությո՞ւն է:

«Մեկնութիւն քերականի»-ում Մագիստրոսը մեկնաբանել է հունարենի քերականական առանձնահատկություններ. դիցուք քերականական սեռը, ասելով, որ հայերենում չկա արական, իգական և չեզոք, ինչպես հունարենում (Քեր. ԺԳ.8), նշելով նաև «մալաւասար» բառերը, որոնք միննույն ձևն ունեն արականի և իգականի համար, իսկ քերականական սեռը որոշվում է բնական սեռով: Այս առիթով մեկնության մեջ մեր ուշադրությունը գրավեց մի ուշագրավ փաստ. Գրիգորը նկատել է, որ Թրակացու հունարեն բնագրում որպես մակալաասար բառերի օրինակ բերված են «ծիծեռնակ, արծիվ» (*ἐπίκοινον δὲ οἶον χελιδών, ἀετός*) բառերը, իսկ հայերենում՝ «ծիծեռն, աքիս»¹⁶ (Քեր. ԺԳ.54): Այսինքն, Թրակացու հայերեն թարգմանության մեկնությունը գրելիս, նա ձեռքի տակ է ունեցել նաև հունարեն սկզբնագիրը և այս դեպքում՝ համեմատություն արել:

Բնորոշել է հոդը, ասելով, որ հունարենում այն «նախադասեալ» է և հոլովվում է՝ բերելով երեք սեռի հոդով գոյականների օրինակներ. «ով այիոս ապաւստալոս (*ὁ ἄγιος ἀπόστολος*), այսինքն սուրբ առաքեալ(ք), և է արական», «ի այէ այէ աւդաւկաւս, որ է անուն իգական», «տաւ քսաւլա»՝ չեզոք (Քեր. ԺԳ.9-10): Ադոնցը քերականական մեկնությունների իր հրատարակության մեջ ենթադրել է, որ աղավաղված «ի այէ այէ աւդաւկաւս» հունարեն *ἡ ἄγια Εὐδοκία*-ն է, իսկ «տաւ քսաւլա»՝ *τὸ ξυλόν?*-ը¹⁷: Ի դեպ, մեկ այլ տեղ Գրիգորն անդրադարձել է հունարենի հնչյունական առանձնահատկություններին. «ի յունականին ոչ է է-ն երկայն ըստ մերումս, այլ ի-ն» (Քեր. Զ.108)¹⁸, նաև «յունաց երկուս ունելով ո՝ փոքր եւ ապա յերկուց ոյից կացուցանեն ո(վ) մեծ» (Քեր. Զ.105):

Ստեփանոս Սյունեցուց մեջբերման մեջ Մագիստրոսը գրում է, որ «հունական և հռոմայական լեզուն» ունեն երեք թիվ՝ «միաւո-

¹⁶ Ն. Ադոնց, *Երկեր*, հինգ հատորով, հ. Գ՝ *Հայերենագիտական ուսումնասիրություններ*, Երևան, 2008, էջ 13:

¹⁷ Ն. Ադոնց, *Նշվ. աշխ.*, էջ 238-239, տողատակ:

¹⁸ Սա ակնարկ է դասական երկար է-ի՝ դ-ի, հնչյունափոխված լինելուն (որպես *i*):

րական», «երկաւորական», «բազմաւորական, որպէս թե Պետրոս, Պետրոս, Պետրոս» (Քեր. ԺԳ. 207): Հունարենում իրոք երկակի թիվ եղել է¹⁹: Իսկ «հռոմայական լեզուն» այստեղ լատիներենն է, սակայն տեղեկությունը սխալ է, քանի որ լատիներենում երկակի թիվ չկա:

Հետևյալ հատվածում Մագիստրոսը խոսում է հայերենից հունարենին անցած երկու բառի մասին. «զի ոչ էր սովորութիւն յունաց իւղ գործել և կիթ. և ուսեալ ի մէնջ զմաժուն և նովին անուամբ կոչեն զնա, ոչ գիտելով զստուգաբանութիւն՝ եթե մաժուն, քանզի մաժեալ է, սոյնպէս և անուանի: Եւ ոչ ունելով նոցա սովորութիւն զգենով կապա, ի մէնջ առեալ, ոչ ուղղախաւսեն, այլ անուանեն զնա կովա» (Քեր. Ա.127): Ջահուկյանը նշում է այդ բառի արաբական ծագումը ինչպէս հայերենում, այնպէս էլ հունարենում՝ καβαδίων ձևով²⁰:

Գրիգորը գրում է, որ քանի որ հունարենում «ճ» հնչյունը չկա, ապա թռչունների մասին խոսելիս «յորջորջեն զճուռակն ծուռակ», «ամարն» ջրային թռչունն անվանում են «ամառ», «տուռէճ» գազանի անունն արտասանում են «դուռէծ», իսկ «տահուճ»-ինը՝ «տահուծ»: Ավելացնում է, որ այծյամին կոչում են արաբերենից փոխառյալ «խազալթան» բառով (Քեր. Ա.129-130):

Մագիստրոսը մի քանի անդրադարձ ունի պարսկերեն բառերի իմաստին կամ հնչեղությանը. «Զրադաշտ մոգ պարսից, զոր Զարդահիշտն կոչեն», նույն մասին խոսելիս՝ «Եւ զի պարսկական է անունն «անար» (Մագ. 12(ԾԸ). 1): Այլ տեղ ասում է. «ո՞ւր Շաւարշ ըստ պարսկականին շարի բաշ՝ միշտ ուրախ թարգմանեալ» (Մագ. 24(ԺԹ).29): Նաև նշում է հայերենում պարսկերենից փոխառյալ բառեր. «զգեստս, որպէս դուռա և ռիդե, մարքաբ» (Քեր. Ա.131), սակայն երեքն էլ արաբական ծագում ունեն: Ջահուկյանի կարծիքով, չնայած Գրիգորը լավ գիտեր արաբերեն, սակայն այդ բառերը կարող

¹⁹ Դիոնիսիոս Թրակացու թարգմանությունից արդեն տեղեկանում ենք «երկուորական» թվի մասին, **Ն. Ադոնց, նշվ. աշխ.**, էջ 17. այդտեղից էլ Սյունեցին քաղել է Պետրոս անված երեք թվի օրինակը:

²⁰ **Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում**, էջ 215 և ծան. 1:

Էին փոխառված լինել պարսկերենի միջնորդությամբ²¹: Մագիստրոսի նշած մյուս իրանական փոխառությունները՝ «աւագան», «գաւագան» և «խարագան» (Քեր. Ա.131), իսկապես այդպիսիք են: Ըստ նրա՝ պարսկերենում, ինչպես նաև «յԱդուանից և ի Սիւնեաց լեզուին», շատ են երկանուններն ու եռանունները, «որպէս՝ Նիւ-դաստ, Նիւ-խոսրով, Ջուանխոսրով, Վարագ-խոսրով, Վարագ-տրդատ» (Ճիշտ է, հաստատված մեջբերում է Ստեփանոս Սյունեցուց) (Քեր. ԺԳ.201): Նշված փաստերը թերևս թույլ են տալիս խոսել Գրիգորի՝ պարսկերենին ծանոթ լինելու մասին: Իսկ Բ. Չուգասզեանը համարում է, որ Մագիստրոսը քաջ իմացել է պարսկերեն լեզուն և իրանական էպոսը. նա ուսումնասիրել է իրանական վիպական գրույցներից սեղմ մեջբերումները թղթերում և եկել այն եզրահանգման, որ «դեռևս հինգերորդ դարից հայ իրականությանը հայտնի այդ վեպը ժողովրդի մեջ շարունակել է ապրել նաև հետագայում», և ցույց տվել, որ Գրիգորն օգտվել է իրանական բանավոր գրույցներից, գուցե դրանց տեղական տարբերակներից, որոնց առանձին մանրամասների միակ վկան է²²: Ի դեպ, այս դեպքում որոշ հակասություն կա, քանի որ հայկական տարբերակներից օգտվելու պարագայում պարսկերենի իմացությունը բոլորովին անհրաժեշտ չէր:

Ինչ վերաբերում է ասորերենին, ապա 50(ԻԱ) «Առ վարդապետն Սարգիս» նամակում Գրիգորը պատմում է, թե ինքը թարգմանել է Պլատոնի «Տիմեոս» ու «Փեդոն» տրամախոսությունները և Էվկլիդեսի գործերը, որ գտել է հայերեն թարգմանված Կալիմաքոսի և Անդրոնիկոսի պոեմները, նաև խոստանում, եթե Աստված իրեն երկար կյանք տա, չզլանալ «զմնացեալսն բոլոր յունաց եւ ասորոց թարգմանել»: Այս տեղեկություններն առհասարակ բանասիրության մեջ

²¹ Գ. Զահուկյան, *նշվ. աշխ.*, էջ 214-215, ծան. 3:

²² Բ. Չուգասզյան, «Իրանական վիպական գրույցների արձագանքները Գրիգոր Մագիստրոսի թղթերում», *Տեղեկագիր հասարակական գիտությունների* 12, 1958, էջ 65-69: Ջ. Ռասսելի կարծիքով, Մագիստրոսը կամ ծանոթ է եղել «Շահ-Նամեի» պարսկերեն բնագրին, կամ էլ նրանից բանավոր հատվածներ է լսել, տե՛ս J.R. Russell, "The Šah-nāme in the Armenian Oral Epic," *Armenian and Iranian Studies* (Harvard Armenian Texts and Studies 9), Cambridge MA: Dept. of Near Eastern Languages and Civilizations, Harvard University, and Belmont MA: Armenian Heritage Press, 2004, pp. 1066-1067:

միանշանակ որպես հավաստի չեն ընդունվել²³: Հետևաբար, դժվար է հաստատել, թե Մագիստրոսն ասորերենից թարգմանություններ է արել, իսկ այդ լեզվի իմացության որևէ նշան նրա բնագրերում չկա:

Անդրադառնանք արաբերենին. Մագիստրոսը գրում է, որ ինքը «բազում ջանի» սովորել է «իսմայելականաց» գիրն ու լեզուն և ապա նրանց բանաստեղծական արվեստը (Քեր. Ե.7): Նշում է. որ հոդը «յունաց սովորաբար և իսմայելացոցն նախադասեալ է» (Քեր. ԺԷ.2): Մի քանի առիթով նշել է արաբական բանաստեղծության հանգավորված լինելու փաստը: Այսպես, ավանդաբար «Առ Մանուշէ» կամ «Հագարատողեան» կոչվող պոեմի առաջաբանում գրում է. «Մահմետի ի տուչութենէ հոգւոյն տուաւ, զի նա զայսոսիկ ոգեաց տաղս միայաւո չափաւորութեամբ գծի: Եւ այսպիսի բանիւք հրաշացուցանէր զմահմետականն իւր Կուրան» (Մագ. 1.12-13), «տաղասացութիւնք արաբացոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցեալք, միայաւո աւարտեալ գծի, զոր դուք կափիա անուանէք» (Մագ. 1.14): Հագներգության մասին խոսելիս կրկին անդրադառնում է այն փաստին, որ «իսմայելականք» բանաստեղծություն գրելիս, ի տարբերություն հույների, որոնց չափածոն ունի միայն չափ, «աւարտեն միով գծիւ բազում բանս»: Եվ հայերն արաբներից սովորել են այդպես գրել, այդ պատճառով էլ իրենց հագներգությունն ավելի կատարյալ է, քան հույներիինը (Քեր. Ե.4-6): Անգամ մի այսպիսի լեզենդար տեղեկություն է հայտնում, իբր արաբ պատանիները մինչև չսովորեն կատարյալ «չափ և կշիռ» ունեցող ոտանավոր գրել, նրանց թույլ չեն տալիս ամուսնանալ (Քեր. Ե.10):

Այսպիսով, փաստերը վկայում են, որ Մագիստրոսն իրոք ծանոթ է եղել պարսկերենին և հատկապես արաբերենին, բայց այդ ծանոթությունը չի համեմատվի հունարենի նրա իմացության հետ: Գուցե խորաթափանց իրանագետի և արաբագետի զննող աչքը կկարողանար ավելի առարկայական գնահատական տալ, թե որքանով է նա տիրապետել այդ լեզուներին:

²³ Օրինակ՝ **Ս. Արևշատյան**, «Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը», *Բանբեր Մատենադարանի* 10, 1971, էջ 7-20:

Гоар Мурадян – Язык Григора Магистроса. - Язык писем и стихов Григора Магистроса (XI в.) – классический грабар, однако он известен как темный и трудный для понимания. Он использовал ряд слов, не засвидетельствованных у других авторов, изрядное число греческих заимствований, среди которых – даже глаголы, и множество лексических (наибольшее количество составляют приставочные неологизмы), морфологических и синтаксических калек с греческого, заимствованных из грекофильских переводов. Стиль его произведений усложняется также частой игрой слов и аллитерацией.

Григор несколько раз демонстрирует знакомство с другими языками, особенно в “Комментарии к грамматике” Дионисия Фракийского. Кроме греческого, грамматические черты и отдельные слова которого он обсуждает, он, видимо, обладал некоторым знанием арабского (он высказывается также о рифмованных стихах), и, вероятно, в меньшей степени, персидского. Утверждения филологов о его знании латыни, древнееврейского и сирийского не подтверждаются фактами.

Gohar Muradyan – The Language of Grigor Magistros. -The language of the letters and poems of Grigor Magistros (XI c.) is classical Grabar, but it is famous for its obscurity and difficulty for understanding. He used a series of words not attested by other authors, a significant number of Greek words, even verbs, and a multitude of lexical (the greatest number among them are neologisms with prefixes), morphological and syntactical calques borrowed from translations of the Hellenizing school. He has also complicated the style of his writings by frequent puns and alliteration.

For several times Grigor manifests acquaintance with other languages, mainly in his *Commentary on Grammar* of Dionysius Thrax. Besides Greek, grammatical features of which and some words he discusses, he possibly had some knowledge of Arabic (he also speaks about rhymed verses), and probably less of Persian. The statements of scholars about his knowledge of Latin, Hebrew and Syriac are not confirmed by facts.

ԱՐԵՄՏԱՅԱՅԵՐԷՆԻ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ընդունուած է ըսել, թէ արեւմտահայ գրական լեզուն ունի երկաստաճան իլլազուրկ համակարգ, ուր խուլերը ձայնեղացած են, իսկ ձայնեղները՝ շնչեղացած, գրաւոր խօսքի մէջ ստեղծելով շնչեղներու երկու շարք.

ձայնեղ շնչեղ

Պ Բ=Փ

Կ Գ=Ք

Տ Դ=Թ

Ծ Զ=Յ

Ճ Զ=Չ

Արեւմտահայերէնը կը պահէ աւանդական ուղղագրութիւնը, հետեւաբար այս փոփոխութիւնը հայերէն բառի գրաւոր տեսքին վրայ չ'անդրադառնար, այլ միայն արտասանական երեւոյթ է՝ Բաղաձայնական երկաստիճան համակարգ կրող արեւմտահայը պատ բառը կարդալով արեւելահայը կը լսէ՝ ԲաղՏ, իսկ բաղ բառը՝ ՎիաթՏ, ձագ բառը՝ ԳաթՏ եւ այլն՝

Երկաստիճան համակարգ ժառանգած խօսողներուն համար ձայնեղներու շնչեղացումը կը ստեղծէ ուղղագրական բաւական լուրջ դժուարութիւններ, ինչպէ՞ս կարելի է որոշել՝ Բ՞ թէ Վ, Գ՞ թէ Բ, Դ՞ թէ Թ, Ճ՞ թէ Զ, Զ՞ թէ Թ Այս նոյնացումը կը ստեղծէ նաեւ նոյնահունչ բառերու երկար շարք մը՝ Բերդ-Վերթ, Բուռ-Վուռ, Գայլ-Քայլ, Գերել-Քերել, Դաւ-Թաւ, Դեր-Թեր, Դոյլ-Թոյլ, ձախ-ցախ, ձող-ցող եւ այլն՝

Սակայն իլլազուրկ համակարգը բացարձակ օրինաչափութիւն չէր, որովհետեւ արեւմտահայ իրականութեան մէջ մեծ շրջանակ կը կազմէին եռաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները՝ Այս շրջանակի բարբառախօսները գրական լեզուն պիտի որդեգրէին իրենց խօսած բարբառին բաղաձայնական

համակարգին համահունչՔ Անոնք բաղ բառի ձայնեղները պիտի կարդային իբրեւ խուլեր, իսկ պատ բառի խուլերը՝ իբրեւ ձայնեղներՔ

խուլ	ձայնեղ	շնչեղ
Բ	Պ	Փ
Գ	Կ	Ք
Դ	Կ	Թ
Զ	Ծ	Յ
Ը	Ճ	Չ

Այս համակարգին համաձայն արեւմտահայր պատ բառը կարդալով արեւելահայր կը լսէ՝բաղՏ, իսկ բաղ բառը՝՛պատՏ, ձագ բառը՝՛ծակՏ եւ այլնՔ Շնչեղները յստակ կերպով կը հակադրուին խլացած ձայնեղներուն՝ փուռ-բուռ, թուր-դուր, քոյր-(վարա)գոյր, չորեք(շաբթի)-ջորեկ, ցախ-ձախՔ

Ներկայիս բաղաձայնական եռաստիճան համակարգը տարածուած է արեւմտահայ գրական լեզուն խօսողներու մեծամասնութեան քովՔ Ատոր մէջ հիմնական դեր ունեցած են բաղաձայնական կիլիկեան համակարգի բարբառներըՔ Յայտնի է, որ քսանական թուականներուն Արեւելքի մեր գաղթօճախներուն մէջ, ուր համատեղ կ'ապրէին մեծամասնութեամբ Կիլիկիոյ, Հիւսիսային Ատորիքի ու Արեւմտեան Հայաստանի վերապրողները եւ կրթական կեանքի մէջ գերակշիռ թիւ կը ներկայացնէին խարբերոցի, գէթունցի, հաճընցի, քեսապցի, սուէտիացի, սասունցի, պէլլանցի հայերը, որոնք ձայնեղները կ'արտասանեն խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ, շնչեղները՝ շնչեղՔ Նախ թրքախօսները, ապա երկաստիճան համակարգի բարբառախօսները արեւմտահայերէնը կամաց-կամաց իւրացուցին այս համակարգովՔ Ներկայիս արեւմտահայութեան կարելոր մէկ տոկոսը առանց դժուարութեան կրնայ զանազանել հետեւեալ բառերուն բաղաձայններու եռաստիճանութիւնը՝՛պատ, բաղ, փաթՏ, խո՛ւր, դուր, թուրՏ, լկար, (կու) գար, քարՏ (ձայնեղ-խուլ-շնչեղ շարքով)Ք Ժամանակին, դպրոցականներուն օգնելու համար նմանաձայն բառերու շարքին կը դրուէին շնչեղացած նախկին ձայնեղներով ու բուն շնչեղներով կազմուած բառերու զոյգերը,՝ գերի-քեռի, բարբ-փառք, դեր-թեր,՝ ներկայիս անոնք կը հրամցուին իբրեւ ոչ լրիւ նմանաձայնութիւններ, այլ մօտիկ հնչիւն-

ներք Արեւելքի մեր գաղութներուն համար եռաստիճանի անցումը գրեթէ լրումին հասած երեւոյթ է՝ Երկաստիճանութիւնը պայթա-շփականներու պարագային տակաւին զգալի է տեղ-տեղք 2 եւ 3, 2 եւ 2 գիրերու շփոթը վերացնելու համար մանկավարժները հիմնէ եկող ուղեցոյց մը ունին՝ ձուկի ձը, ցորենի ցը, ջուրի ջը, չամիչի չըՑ, բայց յստակօրէն կ'արտաբերեն 2 խուլը եւ 3 շնչեղը, 2 խուլը եւ 2 շնչեղք

Բաղաձայնական եռաստիճան համակարգի տարածումը հետզհետէ զգալի դարձած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քանաւատայի, Ֆրանսայի եւ Աւստրալիոյ մեր գաղութներուն մէջ եւս, մեծ մասով Արեւելքէն գաղթածներու եւ անոնց նախաձեռնութեամբ 1960-ական թուականներէն ետք կրթական ու հասարակական կեանքին մէջ հայախօսութեան նոր ոյժ ու երանգ տրուելուն շնորհիւՔ

Արեւմտահայ գրական լեզուի բաղաձայնական եռաստիճան համակարգի ընդհանրացումը նկատուած է նաեւ հայրենի լեզուաբաններու կողմէ, որոնք զայն կը կապեն քանի մը հանգամանքներու հետ, ինչպէս խօսողի բարբառային պատկանելիութիւնը, տուեալ գաղթօճախի գերակշիռ լեզուի ազդեցութիւնը, անհատական այլեւայլ յատկանիշներ, ինչպէս նաեւ զուտ լեզուական երեւոյթներ կախուած բառի մէջ հնչիւնի ունեցած դիրքիցՔ Շատեր կը կրկնեն գերակշիռ լեզուի ազդեցութեան գործօնք Կը կարծեմ, որ այդ հանգամանքը չի կրնար ու չէր կրնար վճրորոշ դեր ունենարք Օրինակով մը բաւարարուինք. բաղ բառը կայ արաբերէնի մէջ ու կ'արտասանուի ձայնեղներովք Սիհիւքահայ դպրոցականը արաբերէնը կը կարդայ նոյնպէս ձայնեղներով, բայց նոյն բառը իբրեւ հայերէն բառ կը կարդայ ու կ'արտասանէ խուլերովք Արեւմտահայ գրական լեզուի այս փոփոխութիւնը, ինչպէս տեսանք, ներլեզուական եղելութիւն է, արեւմտահայերէնի ներքին զարգացման օրինաչափութիւն. ոչ թէ որոշ բարբառներու նեղ շրջանակի մը վրայ երեւցող ազդեցութիւն է, այլ՝ անոնցմէ տարածուող ու ընդհանրացող երեւոյթք ՂաՖ կորկորդային պայթական բաղաձայնը գոյութիւն ունի օտար բառերու մէջ. յատկապէս մականուններ ու

¹Ռ. Կ. Սագապետոյեան, Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան 2006, էջ 10Է

տեղանուններ միշտ տառադարձուած են Գ-ով (իբրեւ արաբերէնի եւ թրքերէնի այդ կոկորդայինը)՝ Գարակիլլէան, Գալիագէան, Գատընէան, Գալեմտէրէան, Գարահիսար, Պարտագէան, Գագուսեան, Գահիրէ, Անգարա, Գրըգիսան, բայց այսօր սփիւռքահայր այդ բառերու կոկորդայինը կը կարդայ իբրեւ իր խուլը՝ ԳԷ Այսինքն՝ փոխատու լեզուն ինք ենթարկուած է հայերէն հնչիւնական օրէնքին՝ Ի դէպ, Անտիոքի շրջանի մեր բարբառները հարիւրաւոր տարիներէ իվեր կ'ապրին թրքերէնի եւ արաբերէնի անմիջական շփման շրջանակներուն մէջ ու իբրեւ ազդեցութիւն չունին նման համակարգային փոփոխութիւն՝ Քեսապի բարբառին մէջ Գ-ով եւ Կ-ով միայն չորս հայերէն բառեր կ'արտասանուին այդ հնչիւնով՝ գորտ՝ գՕՐՐՐՐ, գտնել՝ գՕՐՆՆԻԼ, գործելի՝ գՕՐՐԳԻԼԱ, կտրել՝ կՐՏՐԻԼ/գՕՐՐԴԻԼ Կը մնայ մասնակի պարագայ՝ Փոխազդեցական հնչիւնափոխութեան պարագաները դարձեալ վճռորոշ դեր չէին կրնար ունենալ այս փոխանցումին մէջ՝ Ոմանք կ'արտայայտեն այն միտքը, որ արեւմտահայերէնի եռաստիճան բաղաձայնական համակարգի անցումը արեւելահայերէնի ազդեցութիւն պէտք է նկատել, բայց պէտք է անդրադառնալ, որ արեւմտահայերէնի մէջ նոր շարքը խուլ-ձայնեղ-շնչեղ եռաստիճանն է, իսկ արեւելահայերէնի մէջ՝ ձայնեղ-խուլ-շնչեղ եռաստիճանը՝ Այսուհանդերձ կարելի չէ ուրանալ, որ Սփիւքի մէջ, ինչպէս առանձին ընտանիքներու, այդպէս ալ որոշ դպրոցներու, եկեղեցիներու եւ ակումբներու մէջ երկու գրական լեզուներու համատեղ գործածուիլը կրնայ նոյնացման գործընթացի մը վերածուիլ, ո'վ գիտէ

Հայրենի լեզուաբան Ա. Սարգիսեան, որ այս փոփոխութեան գլխաւոր պատճառը կը նկատէ գերակշիռ լեզուներու ազդեցութիւնը (Միջին եւ Մերձաւոր Արեւելք, Յունաստան եւ այլն)՝ Կը գրէ. «Խօսակցական լեզուի ռճական տարբերակներում առանձնացնում ենք եռաշարք՝ պարզ խուլեր, ձայնեղներ, շնչեղխուլեր համակարգի գոյութիւնը»² Սակայն ան նորը կ'ընդունի միայն խօսակցական լեզուին մէջ, արտայայտելով այն միտքը, թէ իբր բեմական խօսքը, պաշտօնական ելոյթները, ռատիոհաղորդումները, վարժարանները

²Սարգսեան Ա., Արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուներ, Երեւան, 1985, էջ 26-27

կը փորձեն պահել երկաստիճան համակարգը³Ք Նման բան ես չեմ նկատած, այսինքն՝ լբադՏ (խուլեր) ըսող արեւմտահայը յանկարծ լփաթՏ (շնչեղ) կարդայՔ Բայց ասիկա ճշմարիտ է օտար բառերու պարագային, ուր տառադարձութիւնը աւանդաբար կը կատարուի իւլագուրկ երկաստիճան համակարգի համաձայն (Բ դէպ, հայատառ թրքերէն գրականութեան մէջ կը գործածուին միայն բուն շնչեղները, եւ ոչ թէ շնչեղացած ձայնեղները, միայն Գ-ին վերապահելով կոկորդային դաՖ բաղաձայնը)Ք Ասիկա յատկապէս կ'երեւի մականուններու պարագային. երբ մականունը իօսակցական կամ բարբառային ձեւով է՝ կ'արտասանէ խուլ, ինչպէս՝ Դըդըզէնք, Ադինք, Դըդընք, Հադուդէնք, Գայբըտէնք, բայց երբ եան ածանցով գրական ձեւին կարգը գայ՝ կը գրէ ու կը կարդայ Թիթիզէան, Աթիկէան, Թրթրէան, Հաթուրէան, Գայփըտէան, նոյնը՝ տեղանուններու պարագային. կ'ըսէ Դարդուս, Բազգա, Դրապլուս, բայց կը գրէ ու կը կարդայ Թարթուս, Բաքբա, Թրիփոլի եւ այլնՔ

Եզրակացնենք, որ արեւմտահայ գրական լեզուի բաղաձայնական համակարգը ներկայիս գերազանցապէս եռաստիճան է՝ խուլ, ձայնեղ, շնչեղ խուլ շարքովՔ Ասիկա մեծապէս կը դիւրացնէ տարրական գրաձանաչութիւնը, երկու համարժէք շնչեղներու շփոթը վերացնելովՔ Սակայն ասիկա չէ անցած օտար բառերու տառադարձութեան, ուր նոր խուլերուն տեղ աւանդաբար կը գործածուին միայն բուն շնչեղներըՔ

ԱՄՓՈՓՈՒՄ

Արեւմտահայերէնի իւլագուրկ համակարգը (ձայնեղ՝ ա, կ, տ, ծ, ճ, շնչեղ խուլ՝ Բ-փ, Գ-ք, Դ-թ, ձ-ց, Զ-յ) բացարձակ օրինաչափութիւն կարելի չէր նկատել, որովհետեւ արեւմտահայ իրականութեան մէջ մեծ շրջանակ կը կազմէին եռաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները: Եռաստիճան համակարգը ներկայիս տիրապետող դարձած է, որովհետեւ 1920-ական թուականներէն ետք Արեւելքի մեր գաղթօճախներուն մէջ համատեղ ապրող հայութեան մէջ գերակշիռ թիւ կը ներկայացնեն խարբերոցի, գէյթունցի, հաճընցի, քեսապցի, սուէտիացի, սասունցի, պէլլանցի հայերը,

³ՆոյնտեղըՔ

որոնք ձայնեղները կ'արտասանեն խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ, շնչեղները՝ շնչեղ (ձայնեղ՝ պ, կ, տ, ծ, ճ, խուլ՝ ք, գ, դ, ձ, ջ, խուլ շնչեղ՝ փ, ք, թ, ց, չ): Հոն խօսողները կը գանազանեն բաղաձայններու եռաստիճանութիւնը՝ լպատ, բադ, փաթՏ, լտո՛ւր, դուր, թուրՏ, լկար, (կու)գար, քարՏ (ձայնեղ-խուլ-շնչեղ շարքով)Ք

Մակայն ասիկա չէ անցած օտար բառերու տառադարձութեան, ուր նոր խուլերուն տեղ աւանդաբար կը գործածուին միայն բուն շնչեղներըՔ

Hakob Cholakyan - Western Consonant System. - It used to say that the Western Armenian has kept only a two-way distinction of stops and affricates — one voiced and one aspirated. For example, Classical has three bilabial stops: /b/ <բ>, /p/ <պ>, and /p^h/ <փ>; Western Armenian, two bilabial stops: /b/ <պ> and /p^h/ <ք> /<փ>.

But researches show us that something has changed due to the influence of those western Armenian dialects who has three-way distinction of stops and affricates; one voiced and two voiceless — a plain version and an aspirated one, but with replacing the classical voiced to plain voicelesses (/b/<ք>/>/p/<ք>), and classical plain voicelesses to voiced ones (/p/<պ>/>/b/<պ>): The aspirated ones remain unchanged (/p^h/ <փ>):

In spite of this change the transliteration of foreign words are still being mostly with two-way distinction of stops and affricates, not with new aspirated ones (ք, գ, դ, ձ, ջ), but with the old ones (փ, ք, թ, ց, չ):

ՄԻՀՐ-ՄՀԵՐ-ՎԱՏՄԻՀՐ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Միհր-ը կենսատու լույսի, մաքրության, բարության,, ավելի ուշ՝ Արեգակի աստվածն է հին արիական ժողովուրդների կրոններում: Ըստ առասպելի՝ ծնվել է Ժայռից (գրադաշտականության մեջ համարվում է Արամազդի որդին), կատարել է բազմաթիվ սխրագործություններ՝ հաղթել է Ոսկե ցլին, կռվել չար ոգիների դեմ: Հետո նա համբարձվել է երկինք և այնտեղից վեց հազար աչքերով և նույնքան ականջներով դիտել ու լսել երկրային բարի արարածներին: Ավելի ուշ համարվել է ազատարար և փրկիչ (մեսիա), որն իր երկրորդ գալստյամբ երկիրն ազատելու է չարից և հրով ու կրակով մաքրագործված երկրում Միհրի ահեղ դատաստանին են արժանանալու բոլոր ննջեցյալները: Մ.թ.ա. 4-2-րդ դդ. ձևավորվել է միհրականությունը: Հռոմեական կայսրության մեջ *Միհրի* ծննդյան օրը դեկտեմբերի 25-ն էր՝ ձմեռային արևադարձի օրը (4-րդ դարում փոխվեց Քրիստոսի ծննդյան տոնի)¹: *Միհրին* նվիրված տոները կրել են միստերիաների բնույթ, կատարվել են այրային տաճարներում՝ *միթրեաներում*: Ընդ որում, այդ միստերիաներին կարող էին մասնակցել զանազան փորձություններով անցած նվիրյալները. Նրանք անցնում են նվիրվելու 7 աստիճան՝ ըստ մոլորակների թվի:

Միհրը հուր երկնայինի՝ արևի ու լույսի և հուր երկրայինի՝ կրակի ու ջերմության աստվածն էր, և ինչպես մյուս արևային աստվածները հնում՝ արդարության և դաշինքի հովանավորը, նաև՝ կրակարանի, ընտանեկան օջախի պահապանը: Ըստ ՆՀԲ-ի²՝ <<Միթրոս (Միւթրոս), որ և Միհր՝ Արեգակն, և սէր, օր ուրախութեան (ՆՀԲ, 2, 275): Միհր-ը բացատրվում է՝ << Արեգակն՝ չաստուած պարսից>>: Միհրը , ինչպես նշեցինք, արդարության հովա-

¹ Հայկական սովետական հանրագիտարան (ՅՍԵՃՈՆ»Ի՝ ՀՄՀ), հ. 7, Ե., 1981, էջ 550, **Գ.Վարդույան, Ե. Մարգարյան**, Կրոնների պատմություն, պրակ Ա, Հին կրոններ, Ե., 2006, էջ 55-56:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-1837թթ.:

նավորն է, դրա համար երդվում, ուխտ³ անում նրա անունով: Նրա անունով երդվելը, ինչպես երևում է մեր մատենագրական տվյալներից, թերևս Միհր-Արեգակի արդար և արդարադատ լինելու հետ է կապված, որ մինչև հիմա պահպանված է . հմմտ. *հորս արև, մորս արև* և այլն, այն է՝ <<Ճիշտ է, ճիշտ եմ ասում>>: Հմմտ. նաև Ն.Շնորհալու <<Առաւօտ լուսոյ, *արեգակն արդար*, առ իս լոյս ծագեա.. >> :

Միհր-ով էին երդվում զրադաշտ պարսիկները, որի մասին բազմիցս վկայում է Եղիշեն՝ <<....վասն հասարակաբաշխ առատութեանն և անաչառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած, զի չիք ի նմա նենգութիւն եւ անիմաստութիւն>>, աշխարհաբար՝ << ... և ընդհանորին բաշխող առատության և անաչառ մատակարարության համար կոչվեց Միհր աստված, որովհետև նրա մեջ չկա նենգություն և անիմաստություն>>⁴ , <<Ի Միհր աստուած երդուալ իմ, խստագոյն ևս խօսիս քան վարդապետսն քո>>՝ <<Միհր աստուծով եմ երդվում, որ դու ավելի խիստ ես խոսում, քան թե քո ուսուցիչները>>⁵, <<Եւ քում թագաւորութեանդ ոչ ինչ վնասեցուք, երդուեալ ի Միհր մեծ աստուած>>⁶:

Հայաստանում տարածված է եղել Միհրի պաշտամունքը ⁷: Միհրին է նվիրված մեհեկան (միհրական) ամսին (այժմ՝ փետրվարի 14) նշվող տոնակատարությունը, որը համապատասխանեցվել է

³ *ծծԷ՛ր մթԷ՛Յ ձծԿ՛Շ* <<Հաստատուն խօսք, խոստումն երդումով կամ առանց երդման, որ մարդ տալիս է իրեն՝ մի բան կատարելու համար, նաև՝ Աստծու դաշն մարդու հետ (այստեղից՝ Հին ուխտ, Նոր ուխտ), վանք, մենաստան, սրբի տուն >> և այլն (տե՛ս Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 3, էջ 593):

⁴ **Եղիշեն**, Վարդանի և հայոց պտերագմի մասին, Ե., 1958, էջ 147:

⁵ Ն.տ., էջ 373-374:

⁶ **Մովսիսի Խորենացու** Պատմություն հայոց, Տիֆլիս, 1913, էջ 276:

⁷ Գարծում ենք, նախքան իրանական Միհրի պաշտամունքի տարածումը Հայաստանում եղել է արևի պաշտամունք, որի մասին վկայում են բանահյուսական տվյալները: Այսպես, Վանում և շրջակայքում տարածված այն սովորությունը, երբ նորապսակները ամուսնության հաջորդ օրը բարձրանում էին տան կտուրը և ողջունում արևին՝ *Էգ, բարև, այ Էգ բարև, Էգն արևուն տանք բարև*. (*Հնձ՞ի՛Հի* (ԻՄ.)՝ §3Ս.մթ՞ ամուսնության հաջորդ առավոտյան նորապսակ գույգի կտուր բարձրանալը և նվագածուների ուղեկցությամբ արևին ողջունելը (ՀԱԲ, 1, 166), նաև՝ մինչև 12-րդ դ. Հայաստանում գոյատևած *արևորդիներ* կոչված աղանդը, որը հեթանոսական արևապաշտության մնացուկ էր:

Տեառնընդառաջին (Տրնդեգ): Տոնի խորհուրդը կրակով սրբագործվելն է, իսկ տոնական խարույկը կոչված է գետինը կրակով ջերմացնելու և տաք օրերի գալուստն արագացնելու: Միհրին է նվիրված Գառնու հեթանոսական Արևի տաճարը (կառուցվել է մ.թ.ա. 1-ին դարում և վարակառուցվել մ.թ. առաջին դարում Տրդատ Առաջին թագավորի օրոք) : Տաճարի 24 սյուները խորհրդանշում են օրվա ժամերը:

Մ.թ.ա. 9-7-րդ դդ. Վանի կամ Արարատյան թագավորության դիցարանը մեզ է հասել *Մհերի դուռ* ժայռախորշի սեպագիր արձանագրությունից՝ ավելի քան 70 դիցանվան և զոհակենդանիների (այծ, ցուլ, կով, ոչխար) նշումով:

Միհրականությունը 4-րդ դարից իր տեղը զիջում է քրիստոնեությանը: Վերջինս ներառում է միհրականության որոշ տարրեր:

Հայերենում Միհր անվան տարբերակներն են *Միթեր*, *Միթր*, *Միրհ*, *Միր*, *Մեհեր*, *Մհեր*: *Միհր* անվանն են աղերսվում հայկական էպոսի հերոսներ *Մեծ Մհերի* և *Փոքր Մհերի անունները*: Նրանք իրենց սխրանքներում նմանվում են Միհրին, ինչպես՝ Մեծ Մհերը սպանում է առյուծին (գրադաշտականության մեջ առյուծը հզորության և սրբազան կրակի խորհրդանիշն է), Փոքր Մհերը դուրս է գալու Վանա Ագռավաքարից (ագռավը կրակը պաշտպանող սրբազան թռչունն է (հմմտ. <<Բոլ է ման գաս վեր աշխարքին. Քո տեղ Ագռավու քարն է>>)⁸ : Հայկական էպոսում Փոքր Մհերի՝ Ագռավաքարում փակվելու հանգամանքը թերևս ինչ-որ չափով աղերսվում է միհրական ծեսերի՝ ժայռախորշերում կամ քարանձավներում կատարելու սովորությին, իսկ այն, որ նա տարին մեկ դուրս է գալիս Ագռավաքարից, թերևս, մեռնող և հարություն առնող բնության հետ.

<<Կ'ասեն՝ տարին էրկու անգամ

Էդ քար իրարուց կը բացվի.

Մեկ անգամ Վարդևորին,

Մեկ անգամ՝ Համբարձման:

Որ քար կը բացվի, Մհեր՝

Քառսուն ավուր ճամփա մեկ ժամվա կ'երթա.

⁸ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1939, էջ 556:

Քառսուն օր վեր քարերին կ'երթա,
Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանդկի,
Չը կարնա քելի, ետ կը դառնա>>⁹ :

Միիր¹⁰ աստծու անունից է *մեհեան* բառը. ծագում է. հս.. պահլ. *meh* ձևից (իրանական գրականության մեջ անվանվում է <<դար ի միհր՝ Միհրի դուռ>>. հմմտ Վանի *Մհերի դուռ* կոչված քարաժայռը, ուր փակված է Փոքր Մհերը): Գ. Ջահուկյանը բառը համարում է իրանական փոխառություն՝ *mehyān* (<**mihrakān*) միհրական, միհր աստծուն նվիրված>>, (ՀՄԲ¹¹, 521, Ջահուկյան¹², 1987, 534): Ղ.Ալի-շանը բառի ծագման համար ավելի հավանական է համարում պարսկ. *մահ, լուսնի մահիկ* բառերը¹³: *Մեհեան* –ն ուներ << Տուն կոոց, տաճար հեթանոսաց, տեղի՝ դից նուիրական>> (ՆՀԲ, 2, 245), ըստ ԱԲ-¹⁴ի՝ << Կոստուն, կուռքի սեղան, ճշմարիտ Աստուծոյ սեղան>>, նեղ իմաստով՝ <<բազին, զոհարան>> իմաստները: ՀԲԲ-ում բառը բազմիմաստ է՝ <<1.Սկզբնապես՝ Միհրի պաշտամունքին նուիրված տաճար, ատրուշան, կրակատուն: 2. Ընդհանրապես՝ հեթանոսների կրոնական պաշտամունքի տաճար: 3. Մեհեանում՝ բազին, սեղան, որտեղ զոհեր էին մատուցանում: 4. Կուռք, հեթանոսական աստծու արձան զանազան նյութերից: 5. Փոքրիկ արծաթե արձանիկ, որ ներկայացնում էր Արտեմիս աստվածուհին, և որը կրում էին գլխարկների վրայ կամ կախում էին վզերից>>¹⁵ (ՀԲԲ,3, 298):

Մեհյան սկզբնապես անվանվել են *Միհր* աստծուն նվիրված տաճարները, սակայն հետագայում բառիմաստի ընդլայնմամբ բառը ձեռք է բերել <<հեթանոսական տաճար>> ընդհանուր անվանումը: *Մեհյան –ով են բաղադրված հետևյալ տեղանունները՝ Մեհենագյուղ, որ, ըստ ՏԲ-ի, գտնվել է Մեծ Հայքի Տարոն գավառում (հիշա-*

⁹ Ն.տ. էջ 558:

¹⁰ Հմմտ. միջին պարսկերեն մեհեկան ամսի անվանումը (հայկական տոմարի 7-ր ամիսը), երբ կատարվում է էր մեծ տոն ի պատիվ Միհրի, և ամիսն էլ կրում էր նրա անունը:

¹¹ Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

¹² Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան , Ե., 1987:

¹³ Ղ.Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 214:

¹⁴ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

¹⁵ Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944-1945, էջ 298:

տակում է Ս.Անեցին՝ 12-րդ դ.), Մեհենակերտ՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Սաշիր գավառում (հիշատակում է Ուխտանես Պատմիչը՝ 10-րդ դ.)¹⁶: Արդի հայերենում *մեհյան* բառն ունի <<հեթանոսական տաճար, կրակատուն>> իմաստները (ԱՀԲԲ¹⁷, 992, ԺՀԼԲԲ¹⁸, 3, 511):

Ժողովրդին հարազատ է եղել *մեհեան բառը*, որի վկայությունը դրանից կազմված հինհայերենյան բազմաթիվ բառերն են՝ *մեհենաբարձ*, *մեհենագիրք*, *մեհենագարդ*, *մեհենագերծ*, *մեհենակապուտ* (մեհյանի նվիրական իրերը գողացող) *մեհենակալ* (մեհյանի վերակացու), *մեհենաշէն*, *մեհենաստեղի* (ՆՀԲ): Օրինակ՝ <<...ուր նշանօքն եղելօք կործանեցան բազինք *մեհենիցն* յայնժամ>>¹⁹, <<Եւ յաճախ ակն աղբերն ի ներքոյ սարաբարձր *մեհենաստեղոյն* Հերակլայ>>²⁰: Միիր-ով են կազմված հետևյալ արական՝ *Միիրան*, *Միիրբարզան* (ըստ Միիրի գործող), *Միիրդատ* (Միիրի տված, հմմտ. Աստվածատուր), *Միիրիար* (Միիրի բարեկամը), *Միիրշապուհ*, *Միիրու* և իգական՝ *Միիրիբան*, *Միիրանոյշ* անձնանունները²¹:

Միիր-ով բաղադրված է *Վատմիիր* բառը:

Վատմիիր-ը, ըստ ՀԱԲ²²-ի, << վատշուէր, գէշ>> իմաստով, գործածված է Թովմա Արծրունու <<Պատմութիւն>>-ում (Պետերբուրգ, 1887, էջ 244): Օրինակը հետևյալն է. <<Նոր ոմն Նաբուգարդան կամ Զամբի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքքշվառեան վատաշուէր, *վատմիիր*>>:

Թ.Արծրունու <<Պատմութեան>> մեջ պատմվում է մի սովորական խաչագողության մասին: Մի նեստորական մտնում է Ոստանի եկեղեցին, գողանում խաչը և փախչում. Ճանապարհին նա այսահարվում է, գլորվում զառիվայրից և մեռնում: Պատմագիրը հայիոյում է նրան՝ համեմատելով հինկտակարանյան չարագործների հետ, այլև որպես ամենագազրելի պիտակ և խիստ վիրավորա-

¹⁶ Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան /այսուհետս՝ ՏԲ/, հ.4, էջ 777:

¹⁷ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

¹⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969-1981:

¹⁹ **Փաւստոսի Բուզանդացոյ** Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883, էջ 7:

²⁰ Նույն տեղում, էջ 33:

²¹ **Հ.Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ.3, Ե., 1942, էջ 332-334:

²² **Հ.Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 312:

կան ու նախատական բառ՝ գործածում է է *վատմի՛հր բառը* (հմմտ. չարյուլիանոս): Խոսքը հռոմեական կայսր Հուլիանոս Ուրացողի մասին է, որ հայտնի է քրիստոնյաների նկատմամբ դաժան հալածանքներով. նա փորձել է վերականգնել հեթանոսությունը, իշխանությունից հեռացրել է քրիստոնյաներին: Քրիստոնեական եկեղեցին նրան անվանել է <<Ուրացող>>²³: Հայ ժողովուրդը Հուլիանոս անվանը ավելացնելով *չար* որոշիչը, ստեղծել է *չարյուլիանոս* բառը, որ հայերենի մի քանի բարբառներում կանայք գործածում էին իրենց չար երեխաներին նախատելու համար²⁴: Նույն գործընթացն է տեղի ունեցել *վատմի՛հր* բառի դեպքում: Քրիստոնեության մուտքով Միհր Արեգակ-աստվածը ստանում է <<վատ>> որոշիչը և գործածվում որպես անարգական, վիրավորական բառ: Աճառյանը համարում է նորագյուտ բառ: Կազմված է *վատ + Միհր* աստծու անունից: Միհրը արևի, լուսնի, կրակի աստվածն էր միհրապաշտների մոտ: Սակայն այդպես չէր կարող լինել քրիստոնեության ժամանակ: Գաղափարախոսության փոփոխության հետևանքով հին աստվածները նսեմանում են: Նույնը տեսնում ենք հայկական էպոսում: Մեծ Մհերը դիվացման հետևանքով դառնում է անիծված Փոքր Մհեր: Նրան անիծում է հայրը՝ Դավիթը. <<Մհեր, դու ինձի հետ կռիվ արիր, Ինձի ամաչեցրիր, կանչեր եմ քաղցրիկ աստված, անմահ ընկիս, անժառանգ>>²⁵: Իմաստային անցումը կատարվել է այդպես: Ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, Առյուծաձև Մհերի և Փոքր Մհերի զրույցները միևնույն զրույցի տարբեր գլուխներն են: Մեծ Մհերը բարի է. նա չունի դիվական գծեր, սակայն Փոքր Մհերն արդեն բնավորության երկվորյուն ունի. կռվում է հոր հետ, նախանձում նրան, հայրը՝ Դավիթը, անիծում է նրան, և Մհերը փակվում է քարայրի մեջ՝ Ագռավաքարում (Ակոփու քար, Վանա քար), և հուր-արև Միհր-Մհերը այնտեղ պետք է մնա մինչև աշխարհի վերջը. <<Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի, Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

²³ ՀՄՀ, հ. 6, էջ 636:

²⁴ << Էս տղեն ընենց չար յուլիանոսն ա, որ էլ չէլած>>: Տե՛ս Սահակ վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 540:

²⁵ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 517:

Ու գարին եղավ քանց ընկուզ մի, Էն ժամանակ հրամանք կա, որ
էլնենք Էդտեղեն>>²⁶ :

Բառիմաստների փոփոխությունը կատարվում է դանդաղ և
աստիճանաբար: Սակայն գաղափարախսության փոփոխության
հետևանքով կատարված իմաստափոխությունները կատարվում են
համեմատաբար արագ, մանավանդ եթե նպատակաուղղված են հին
գաղափարախոսությունը մոռացության տալուն: Բառին ավելաց-
նելով որևէ բաղադրիչ կամ ժխտական մասնիկ՝ կազմվում է նոր
բառ, որն ազդում են ոչ միայն մարդու գիտակցության, այլև ենթա-
գիտակցության վրա. հմմտ. *չարյուլիանոս, վատմիհր, չ ժխտական
մասնիկով կազմված՝ չքահանա, չաստված, խաբեղա* (այսինքն՝
խաբող արեղա) և այլն:

Papikyan Silva -About Mihr-Mher-Vatmihr (BadMihr) Words. - In
religions of ancient Aryan people Mihr is the God of light, purity, kindness,
subsequently the God of Sun and as other solar deities is the patron of justice
and alliance. There are several versions of the name Mihr-Miter, Mitr, Mirh,
Meher, Mher. The names of the heros Mets Mher and Poqr Mher of the
Armenian national epos are connected with the name Mihr. T. Artsruni
testifies the word “vatmihr”, which is used as an offensive word.

Папикян Сильва – О словах Мигр –Мгер – Ватмигр .- В религиях
древнеарийских народов Мигр – бог света, добра, позднее – солнца, а
также покровитель справедливости и союза. Варианты имени Мигр –
Митер, Митр, Мгер. К имени Мигр относятся также имена героев
армянского эпоса Мгера Старшего и Мгера Младшего. Слово
“Ватмигр” оскорбительное по историографу Товма Арцруни (х в.).

²⁶ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 318:

**ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԸ**

Հայերենի նոր փուլի՝ աշխարհաբարի կազմավորման հարցում մեծ դեր են ունեցել հայկական գաղթավայրերն իրենց կրթական, գիտական, հասարակական գործունեությամբ: Բուն Հայաստանում և նրանից դուրս մի քանի խոշոր կենտրոններում մշակվում, հղվվում, կյանքի բոլոր ոլորտների համար տարածում էին գտնում հայերենի տարբերակները: Այդ տարբերակներին ժամանակի հեղինակները տարբեր անվանումներ են տվել՝ «քաղաքացիական» հայերեն (Շրյոդեր), «քաղաքական» (Պ.Դպիր և Հ.Հովսեփ), աշխարհաբար (Միս. Մեբաստացի), կամ՝ աշխարհական, ռամկորեն լեզու և այլն: Մակայն պետք է ասել, որ այդ բնութագրումները լեզվական առումով դեռևս ոչ ամբողջությամբ են հստակեցված և սահմանված: Հստակ է մի բան, որ դրանք նույնական չէին իր ժամանակի բարբառների հետ և, ի տարբերություն բարբառների, ձեռք էին բերել հաղորդակցման առավել լայն շրջանակ տարբեր հայահոծ շրջաններում, ունեին նաև միջհամայնքային հաղորդակության գործառույթ:

16-17-րդ դարերն ընդունելով որպես աշխարհաբարի ուրվագծման փուլ՝ փորձել ենք քննության առարկա դարձնել այդ ժամանակաշրջանի հայահոծ գաղթավայրերն այն առումով, որ դրանք այսպես թե այնպես ազդեցություն են ունեցել լեզվական շփումների վրա՝ գերակշռող դիրք գրավելով միջհամայնքային, քաղաքացիական հայերենի մեջ: Իսկ այդ շրջանում հոծ և ազդեցիկ համայնքներից էին՝ Կ.Պոլիս, Նոր Զուղա, Լեհաստան և Ուկրաինա, Ղրիմ: Փորձ ենք արել լեզվական փաստերի՝ բառապաշարային որոշ իրողությունների, քերականական ձևերի հիման վրա պարզել, թե այս կամ այն գաղթավայրում ստեղծված երկերն ինչ ընդհանուր լեզվական օրինաչափություններով են օժտված, ինչպիսի տարբերակներ են գործածվել հայերենի այս փուլում, և դրանք ինչպիսի հնարավոր մասնակցություն են ունեցել նորմավորված աշխարհաբարի վաղ շրջանի կազմավորմանը:

ՆՈՐ ԶՈՒԴԱ: Նոր Զուղայի հայերը սերում էին զանազան գավառներից ու քաղաքներից: «Էին սոքա յագգէն Հայոց ժողովածու ժողովուրդք...որք էին ի յԱմթայ, ի Բաղիշոյ, ի Մշոյ, եւ ի Բերկրոյ, յԱրճիշոյ, ի Վանայ, յԱրծկոյ, յԵգնկոյ, ի Դերջանայ, ի Բաբերդոյ, յԱրգրումա, ի Սպերոյ, ի Բասենոյ, ի Կաղզուանայ, ի Շիրակուանայ, յԱրարատեան մասնաւոր գաւառացն յամենեցունց»,- գրում է Ա.Դավրիժեցին Նոր Զուղայի հայերի մասին¹: Ուրեմն և՛ այդքան խոսվածք ու բարբառ էլ խաչվում էին իրար ամենօրյա շփումներով:

Նման միջավայրում մշակվում, և լայնորեն գործածվում էր հայերենի խոսակցական տարբերակներից մեկը: Այդ մասին է խոսում Ռ.Իշխանյանը՝ գրելով, որ 18-րդ դարում կար «նոր գրական լեզվի առնելյան ճյուղի երկու տարբերակ՝ *նորջուղայական* և *արարատյան* կամ կովկասյան»²:

Անշուշտ Նոր Զուղայի խոսվածքի հիմքում ընկած էր Զուղայի բարբառն իր հիմնական կառուցվածքով: Վերջինի մասին պատկերացում է տալիս Հոլանդիայի հայ առևտրականների խնդրագիրը³, այն բարբառի հնագույն անխառն նմուշներից է, որը նաև ժամանակով մոտ է մեր քննած շրջանին և հնարավորություն է տալիս որոշակի համեմատություններ կատարել բարբառի և միջհամայնքային խոսակցական տարբերակի միջև:

Խնդրագիրը գրվել է 1658 թվականին, հնչյունական տառադարձումը թեև ներկայիս գիտական պահանջներին չի կարող բավարարել, բայց և հնարավորություն տալիս է որոշ ենթադրություններ անել, ինչպես՝ *լէվ ա* (լավ ա), *խայ* (հայ), *կտէք* (կտաք) և այլն:

Քերականական հիմնական առանձնահատկություններով այն որոշակի նման է ջուղայական խոսակցական տարբերակին, ինչպես՝ *ա* օժանդակ բայի, *-ման* դերբայական ձևի առկայությունը և այլն: Ահա մի հատված այդ խնդրագրից: «*Արդ լինի պարընէրացն որ էն չաղն մուքէլ դունսուլին ամրէք տվել որ գայ, էզն միրումըս դունսուլ ունի մէք ինչ փարսինա խայ կեր ողջ բոլորվեցանք գնա-*

¹ Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց*, Եր., 1990, էջ 352:

² Ռ. Իշխանյան, *Արևելյահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Եր., 1978, էջ 32:

³ Առաքել Սարուխան, *Հոլանդիան և հայերը ԺԶ-ԺԹ դարերում*, Վիեննա, 1926:

ցինք շնախավորեցինք թէ պարոնընին մեզ խսարան աղարկել լէլ ա մեր էլ բանընի կտեսնու»:

Համեմատության համար ներկայացնենք արդեն Նոր Ջուղայում ապրած և ստեղծագործած հայտնի գործիչ Կոստանդ Ջուղայեցու լեզվի ընդհանուր բնութագիրը: Նա 17-րդ դարի երկրորդ կեսին Նոր Ջուղայում հիմել է առևտրական դպրոց, որ հաճախ կոչվել է համալսարան (այստեղ են ուսանել Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը, փիլիսոփայ Սիմեոն Ջուղայեցին, Աստուածաշնչի տպագրիչ Ոսկան Երեւանցին և ժամանակի շատ այլ երևելիներ): Կոստանդ Ջուղայեցին 1687 թվականին գրել է «Բանք ի պետս վաճառականաց» դասագիրքը, ապա բովանդակությունն ընդարձակելով՝ կազմել «Աշխարհաժողով» դասագիրքը: Մենք դիտարկել ենք Մաշտոցյան Մատենադարանում «Յաղագս վաճառականութեան» անվամբ պահվող այդ աշխատության լեզուն:

Նրա քերականական համակարգում առավել ուշագրավ են անկատարի *–ու* մասնիկով բայաձերը՝ *գիտում չէր, ուզում եմ, միաժամանակ կու* մասնիկով ներկայի կազմությունը՝ *կու ջոկիս, կու նմանի, կու տեսնէք*: Առատ են *–ման* դերբայական ձևերը՝ *գնաման, գալման*: Օժանդակ բայի եզակի երրորդ դեմքն ունի «է»՝ *շահն է պիտիլ, անց է կացել*, առավել սակավ «ա»՝ *հասապօլն այ շահն, տեսորումս գրած ալ*: Գալ բայի եզակի երրորդ դեմքի համար՝ *շահն դուրս գոյ*: Մեկ հատված Կոստանդ Ջուղայեցու երկից. «*Ա գեղացի էլ գեղէն ձու էր տանում քաղաքն ձախս (ձայնեղացման մեկ փաստ՝ ծ>ձ), համարել գիտում չէր, Բ համարեց՝ Ա աւելացաւ, Գ համարեց՝ Ա աւելացաւ, Դ համարեց՝ այլվի Ա աւելացաւ, Է–ումն բարբարվեցաւ: Ճանապարհին գնաման, մինն դիպաւ ողջ ձվանքն ջարդվեց: Բռնեց էդ մարդի եախիցն, դազուն տարաւ, պատմեց թէ որպէս էր վերոյ համարեր: Ասաց դագին, թէ՛ այսչափ ձու է, գնայ փողն տուր»⁴:*

Ամենատարածված այս և այլ լեզվական իրողությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Կոստանդ Ջուղայեցու՝ ըստ էության աշխարհաբարի վաղ շրջանը ներկայացնող լեզվի հիմքում շատ բան է ընկած Ջուղայի բարբառի լեզվական համակարգից,

⁴ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր թ. 5994, էջ 79բ:

ի հարկէ՝ հարստացված այլ հատվածների հայերէն խոսվածքների տարրերով:

Նոր Ջուղայի լեզվական ազդեցությունը զգացվում է Աստրախանի հայերի ստեղծած դիվանական փաստաթղթերում⁵, Հովհաննեսի որդի Տեր Դավթի հաշվետումարի և այլ երկերի լեզվում⁶: Վերջինս, ի դեպ, ուսանել է Կոստանդի առևտրական դպրոցում:

Ջուղայի բարբառի՝ Նոր Ջուղայի խոսվածքի հիմքում ընկած լինելու մասին շեշտում է նաև Վ.Մնացականյանը և էլ ավելի առաջ գնալով կարծիք է հայտնում, որ նույնիսկ գրական արևելահայերենի հիմքում որոշակիորեն ընկած է այդ բարբառը. «Նույնիսկ այն հուշարձաններում,- գրում է նա,- որոնց լեզուն բուն իմաստով գրական արևելահայերենն է (որոշ տարբերակային ձևերով) և որոնց հիմքում ընկած է Արարատյան բարբառը, դարձյալ տեղ են գտել Ջուղայի բարբառին հատուկ իրակությունները և զգացվում է այդ բարբառի շունչը», ընդ որում այդպիսի գրվածքներ է համարում Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ», Շրյոդերի բերած նմուշները «Գանձ Արամեան լեզուի» աշխատության մեջ, Զ.Ագուլեցու «Օրագրութիւնը», Եղիա Կարնեցու նամակները⁷:

17-18-րդ դդ. ջուղայեցի և այլ (ագուլեցի, հաճախ՝ կարնեցի, ինչպես օրինակ Ղուկաս Կարնեցու նամակների լեզուն է) հեղինակները մեծ տեղ էին տալիս Ջուղայի բարբառին: Սա նշանակում է, որ Ջուղայի տնտեսական, մշակութային դերով պայմանավորված՝ այդ բարբառը ձեռք էր բերում գրական նորմայի արժեք, ընկնում էր ձևավորվող գրական արևելահայերենի հիմքում կամ առնվազն իր լուծման էր բերում նոր լեզվի կազմավորման հարցում: Դրա արտացոլումը գտնում ենք, օրինակ՝ աշխարհաբարի առաջին պաշտպաններից Զաքարիա Մարտիրոսյանի մոտ, որն իր «Իսկական ճշմարտութիւն» գիրքը (անտիպ է) գրել է ուղղակի Ջուղայի բարբառով. հեղինակը կամ այն համարել է գրական նորմա, կամ (որ քիչ հա-

⁵ Տե՛ս *Հատաստանագիրք Աստրախանի հայոց*, աշխատասիրությամբ Ֆ. Պողոսյանի, Եր., 1967: Հմմտ. Մաշտոցյան Մատենադարանի թ. 7383 ձեռարկի հետ:

⁶ *Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը*, աշխատ. Լ.Խաչիկյանի և Հ.Փափազյանի, Եր., 1984:

⁷ Վ. Մնացականյան, *Վաղ աշխարհաբարը ժամանակակիցների բնութագրմամբ*. - Հայոց լեզու և գրականություն, 7-8, Եր., 1987, էջ 225:

վանական է) տեղյակ չի եղել արևելահայ կամ արևմտահայ նորմավորվող և արդեն որոշակի արդյունք տված բարբառներից կամ միջբարբառային խոսակցական լեզվից: Բերվող հատվածը կարող է ցույց տալ Ջ.Մարտիրոսյանի լեզվական ընտրությունը: «Ես առաջնումն առաջ քանզ էս գիրք շինելն և գրելն շատ ժամանակ էլ էդի ֆքրում, գերայ ես ինձնում ասումի, եթե գրաբառ գրեմ, աղորթայ, որ փոքրիկ ինձ էվելի աշխատանք գններ, համմայ կարդացողաց խմար էլ քողցր և էլ պատուական կուլիներ: Այլ միուս կողմանե խորհրդումի՝ թե աշխարհաբառ գրած թեպետ էնչանք գովելի չեր նման, համայ էլ շահաւետ գններ կարդացողաց խմար»⁸:

Կ.ՊՈԼԻՄ: Աշխարհաբարի ձևավորման առումով գրեթե համանման պատկեր է ի հայտ գալիս Կ.Պոլսի հայերի և հայերեն խոսակցական տարբերակը քննելիս: Կ.Պոլսի առաջին հայ գաղթականներ պետք է համարել Աբրահամ Անկյուրացու «Ողբում» հիշվող Անկյուրիայի հայերին: Հետագայում արդեն բռնի Կ.Պոլիս են բռնագաղթում (հրեաների ու հույների հետ մեկտեղ) Կեսարիայի, Պրուսայի, Ադրիանուպոլսի, Սամսունի, Թոքատի, Ակնի հայերը: Պաշտոնապես առաջին պատրիարք հիշատակվող Հովակիմը նույնպես Պրուսայից էր, որն ըստ Մ.Չամչյանի Կ.Պոլիս էր եկել մի քանի տուն երևելի հայերի հետ: Էվլիյա Չելեբին մայրաքաղաքի հայ վերաբնակիչներին հիշատակում է որպես Թոքատցի (Եվդոկիա), Սվասից (Մեբաստիա), որոնք բնակվել են հիմնականում Սուլու մանաստըրում, այսինքն՝ Ս.Գեորգ եկեղեցու շրջակայքում (Սամաթիա)⁹: Նշված համայնքների հայերն իրենց հերթին ներգաղթած են եղել տարբեր վայրերից: Ջմյոտնիայի հայկական տապանաքարերին, օրինակ, կարելի է տեսնել հին բնակավայրերի անունները՝ Կարբի, Շիկահող, Սրաշեն, Շաշկերտ, Նուխի, Երևան, Ագուլիս և այլն¹⁰:

Կ.Պոլսում հայերի կենտրոնացումը զուգորդվում էր տնտեսական, մշակութային, կրթական գործունեության կենտրոնացմամբ և զարգացմամբ: Հովհաննես Կոլոտ և Հակոբ Նալյան պատրիարքների

⁸ Ջ. Մարտիրոսյանի գրքի առաջաբանը տպագրվել է «Ազգասեր Արարատեանում», 1848, 11, հավելված, որտեղից կատարել ենք մեջբերումը:

⁹ Տե՛ս **Ալբերտ Խառատյան**, *Կոստանդնուպոլսի հայ գաղթավայրը. XV-XVII դարեր*, Եր., 2007, 50-55:

¹⁰ **Հ. Աճառյան**, *Հայ գաղթականության պատմություն*, Եր., 2002, էջ 550:

օրոք այստեղ մեծ թափ են ստանում դպրոցաշինությունը, թարգմանական գործը, գրահրտարակչությունը: Եվ այդ ամենն ուղղակիորեն նպաստում են լեզվի մշակմանն ու բարբառային շերտերի համեմատական նորմավորմանը: Այդ շրջանից ծանոթ աշխարհաբար (ոչ գրաբար) տպագիր և ձեռագիր գրվածքները հիմնականում միատեսակ են վաղ աշխարհաբարյան՝ դեռևս չտարանջատված տարրեր պարունակելու տեսակետից:

Կ.Պոլսի հայերեն լեզվական տարբերակի մասին, ինչպես խոսեցինք Նոր Զուղայի տարբերակի դեպքում, պատկերացում են տալիս Երեմիա Քեոմուրճյանի չափածո մի քանի ստեղծագործություններ, Աւետիք Տիգրանակերտցու «Տէֆթեր գիրք», Սարգիս Վարդապետի «Պատմութիւն Երուսաղէմի» երկերը, դիվանական փաստաթղթեր և այլն:

Որպես Կ.Պոլսի բարբառի նախնական մի նմուշ՝ համեմատության համար դիտարկել ենք Զուար Քահանայի ուղեգրության լեզուն¹¹: Կ.Պոլսեցի քահանայի այս երկը հրատարակվել է ինքնագրից, և գրեթե անխառն ժամանակի հայերեն խոսակցական մի տարբերակ է: Այստեղ առատորեն հանդիպում են են *բ*-ով վաղակատարի ձևեր՝ *մին սահաթ էր մնացեր, մեռեր է, նետեր էին, կը (կու)՝* ներկայի մասնիկ՝ *կու անցընեմ, կ'ինկնի կու տանի, զիս կու նեղէ* և այլն, *մի* անորոշ մասնիկի հետադաս կիրառություն՝ *ոչխար մի և ուլ մի, այ* երկբարբառը դեռևս հանդես չի գալիս *ա*-ի հնչյունափոխված ձևով՝ *երկայթ մ'այլ կայ, նայ այլ մեզ տեսաւ*: Հանդիպում է *-նիս* մասնիկը՝ *մեր անդ նստելնիս եղև լման քսաննինն օր*:

Աչքի է զարնում փոխառությունների առատությունը, միայն մեկ տպագիր էջին 20-ից ավելի փոխառյալ բառեր են գործածվել՝ *ղումանեան տեսնել* (պաշար անել), *դարակօզլի* (սևաչյա), *ջպուխ*, *չիֆտե*, *կեօմրիկճի*, *հախլաշմիշ*, *ախընտի*, *սերպէստ*, *ալապանտայ*, *կեմիստան* և այլն:

Ահա մի քանի հատված Զուար քահանայի ուղեգրությունից. «*Խոստովահանայրս գայ հանդիպի նէ՝ ի նչպէս հարկիս կ'անես. նայ ևս լուսաւորեալ հոգին ասացեր է, թէ քո տէվլէթին լայէիս ինչ է*

¹¹ Զուար Ճիլերճի Օղլու քահանայի Ճանապարհագրութիւն և ուխտ յԵրուսաղէմ. - Բազմավեպ, 1867-1869:

նէ՝ զայն կ'անեն», «այս ի՞նչ ասեն է, որ կու անցնիս», «իմ ըստակն տեղս կու տաք, որ ես աստ տալիք ունիմ, տամ՝ վճարվիմ», «չորս ամիս է եղեր, որ անձրն չէ եկեր»:

Նշված լեզվական իրողություններն ընկած են Կ.Պոլսի միջավայրում ստեղծված երկերի, փաստաթղթերի լեզվի հիմքում: Այսինքն՝ Նոր Զուղայի նման այստեղ նույնպես տեսնում ենք, որ 17-րդ դարում սկիզբ է առնում մի նոր խոսակցական տարբերակ, տարածվում գրավոր աղբյուրներում և ձեռք է բերում համեմատական նորմավորում:

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ: Լեհաստանի, Հունգարիայի հայկական համայնքներում ստեղծվել և պահպանվել են բազմաթիվ բնագրեր, փաստաթղթեր, մի մասը տպագրվել է, մի ստված մասն էլ պահվում է արխիվներում (դրանց հիման վրա, օրինակ՝ Ալեքսանդր Բոժկոն վերջերս տպագրեց Կամենեց-Պոդոլսկ քաղաքի երբեմնի հայ գաղթօջախում ստեղծված հայերեն բնագրերին նվիրված մի հոդված¹²):

Առանձին քննության նյութ է այդ միջավայրում ստեղծված հայերեն աղբյուրների հիման վրա Եվրոպայի հայկական գաղթավայրերում նոր հայերենի մշակման ընթացքի պարզաբանումը: Եղիսաբեթուպոլսի հայկական միջավայրում 17-18-րդ դարերում գրված բազմաթիվ դիվանական արձանագրություններ և հիշատակարաններ է հրատարակել Գրիգոր Գովրիկյանը¹³, որոնցում անխառն կերպով արտացոլված է տեղի հայկական խոսվածքը (Հ.Աճառյանի աշխատություններում այն հայտնի է Ավստրիո-Հունգարիայի կամ Սուլավայի բարբառ անվանումներով): Այդ բնագրերը, նախ, աչքի են ընկնում մեծ թվով փոխառություններով:

Այս առիթով պետք է ասել, որ գաղթավայրերի խոսակցական լեզվական տարբերակները բոլոր դեպքերում աչքի են ընկնում փոխառությունների առատությամբ: Շատ հաճախ փոխառությունների մի մասն իր ժամանակին համագործածական է եղել, այնքան,

¹² **Ալեքսանդր Բոժկո**, *Ուկրաինաբանությունները Կամյանեց-Պոդոլսկ քաղաքի XVI-XVII դարերի հայկական դատարանի վավերագրերի լեզվում*. - Պատմա-բանասիրական հանդես, 2010, 1, էջ 110-115:

¹³ **Հ. Գրիգոր վրդ. Գովրիկյան**, *Հայք Յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ. 1680-1779*, Վիեննա, 1893:

որ շատերը «ներխուժել են» անգամ գրաբար բնագրերի մեջ: Իրենց բնակության երկրների հայերեն տարբերակներում, բնականաբար, գերակշռում են տիրապետող լեզվից կատարվող փոխառությունները, Հունգարիայում՝ հունգարերենից ու գերմաներենից, Կ.Պոլսում՝ թուրքերենից, Նոր Զուդայում՝ պարսկերենից և այլն: Սակայն շատ հաճախ գրեթե անհնար է լինում հստակ որոշել, թե ո՞ր լեզվում է ծագել տվյալ բառը և ո՞ր լեզվից է անցել հայերենին: Այս դեպքում առաջնային չափանիշ պետք է համարել այն, թե ո՞ր երկրում ստեղծված բնագրի հետ գործ ունենք և ենթադրաբար՝ որ լեզվից կարող էր տվյալ բառն անցած լինել հայերենի այդ հատվածի մեջ: Այսպես օրինակ՝ Սիմեոն Լեհացու, Ս. Ռոշքայի պարագայում *բրիվիլէկ* «արտոնություն», *գաբելլան* «հոգևորական», *ձար* «կայսր, ցար», *բիվնիցա* «գարեջրատուն» և բազմաթիվ այլ փոխառյալ բառերի սկզբնաղբյուրը կարող է լինել լեհերենը, անկախ նրանից, թե լեհերենն իր հերթին որ լեզվից է փոխառել տվյալ բառը:

Լեհաստանի, Հունգարիայի հայերեն բնագրերն աչքի են ընկնում մի քանի հիմնական յուրահատուկ գծերով: Զգալի է բաղաձայնների ձայնեղացման երևույթը՝ *հաադատել, կորուստ, դատասդան, ինչքես, ըսդակ, ըսդրագրեցանք, ոսգի*: Հնչյունական այս երևույթը տարածվում է նաև փոխառյալ բառերի վրա՝ *տէքուդադ, բրոդոգոլ, բրիսդավ, նաձիօն, էգօնօմիա, մակիսդրադ* և այլն: Խուլ բաղաձայններից բացի ձայնեղում են նաև շնչեղ-խուլերը՝ *իրիձգին, ձարագայդ, դաշդ, գիտաձվի*:

Խիստ տարածված է փափուկ ր-ի գործածությունը թե՛ ն-ին նախորդող դիրքում, թե՛ այլ դիրքերում, օրինակ՝ *դարնալ, բրնել, արնել, ձերնոց, արանց, խարը, անպատճար, ծարութիւն (ծառայություն), արաքելական* և այլն: Բառասկզբում գրաբարի ո-ն շատ բառերում փոխվել է օ՝ *օջ, օվ, օսգի, Օվանէս, ինչօր*:

Կը-ին մասնիկին զուգահեռ գործածվում է նաև *կի* մասնիկը՝ *կի կարավարին, կի քալէ, կի տեսնունք*: Հաճախ միևնույն նախադասության մեջ են հանդիպում երկու մասնիկները զուգահեռաբար՝ *«ամէնքեանս կու խոստանանք մէկմէկի ու կի կապվինք մեր ձերնագրովն ու մօհրովն»* (95): Վաղակատարը կազմվում է -իլ մասնիկով՝ *քալիլ է, գնացիլ է, հանիլ է* և այլն: Խոսվածքին բնորոշ քերականական մասնիկներից են՝ *պի* (պիտի-պիլար, պի ունենան,

պի գար, չի պի կարենան.), *զէ* (զի), *եփօր*, *վօլ*, *վօլօր*, *հի վօլ* (ամեն մեկը), *հի օր* (որևէ մեկը): Ըստ էության բարբառային այս իրողությունների մի մասը կարելի է հանդիպել վաղ աշխարհաբարը ներկայացնող՝ Ստ. Լեհացու, Ստ. Ռոշթայի ստեղծագործություններում:

ՂԻԽ: Նույն մոտեցմամբ բնագրերը քննելիս հնարավոր է պարզել Ղրիմում հայկական ներկայության և այնտեղ հայերեն խոսակցական տարբերակի հարցը:

Միջնադարում Ղրիմում առկա էր հոծ հայ համայնք: Դեռևս 15-րդ դարի վերջում, համաձայն ոչ հայկական աղբյուրների տվյալների, հայերը կազմում էին Ղրիմի բնակչության մոտ 1/3-ը, այնտեղ ունեին 30-ից ավելի եկեղեցիներ: Ստվար բնակչության առկայությունն է առիթ տվել, որ Ջենովական աղբյուրներում Ղրիմի հարավարևելյան հատվածը հաճախ կոչվել է «Armenia Maritima – Ծովային Հայաստան»¹⁴:

Այստեղ ուշ միջնադարում գործել են բազմաթիվ ստեղծագործողներ՝ գրողներ և տաղասացներ Խաչատուր Կաֆայեցին (1610-1686 թթ.), Վրթանես Կաֆայեցին (XVII դար, ծնունդով Այրարատից), Վարդան Կաֆայեցին (1615-1712), Մարտիրոս Ղրիմեցին (XVII դար) և ուրիշներ: Նրանց ստեղծած տաղերի մեծ մասը գրված է աշխարհիկ ուրույն լեզվով: Այն հայերենի մի խոսվածք էր, որ թեև հետագա շարունակություն չունեցավ (1778 թ. դրիմահայերը տարահանվեցին Նոր Նախիջևան), սակայն վկայում է, որ առանձին վերցրած գաղթավայրում նույնպես մշակվում ու գործածվում էր աշխարհաբարի մի տարբերակ:

Ամփոփենք: Աշխարհաբարի սկզբնավորումը համընկավ հայության՝ տարբեր վայրերում կենտրոնացման հետ, այն որոշ իմաստով այդ տարակենտրոն գոյակցության արդյունքը հանդիսացավ: Աշխարհաբարի ի հայտ գալու շրջանում մեր ժողովուրդը տնտեսական, մշակութային, կրթական առումներով կենտրոնացած էր մի քանի խոշոր գաղթավայրերում, որոնք կազմավորվում էին զանազան վայրերից եկած հայերի հոծ խմբերից: Այս վայրերում մշակվում, հղկվում էր նոր հայերենը՝ իր իմքում ունենալով տվյալ

¹⁴ *Ղիվան հայ վիմագրության*, հատոր VII, Երևան, 1996, էջ 11:

կենտրոնում գործածվող խոսակցական տարբերակի, բարբառի համակարգը:

Աշխարհաբարի ձևավորման այդ վայրերն անվանում ենք «լեզվական կենտրոններ», որպիսիք կարող են լինել Նոր Զուղան, Կ.Պոլիսը, Ղրիմը, Եվրոպայում՝ Տրանսիլվանիա-Լեհաստանը:

Բուն Հայաստանում նման հիմնական կենտրոնն էր Արարատյան նահանգը: Վանը, օրինակ, լինելով գրչության խոշոր կենտրոններից մեկը, լեզվական առումով մեծ արդյունք չի տվել ուշ միջնադարում: Վանի բարբառով (խոսքը բարբառի այս կամ այն հատկանիշը պարունակող բնագրերի մասին չէ) առաջին գրվածքներն ի հայտ են գալիս 19-րդ դարի երկրորդ կեսին, օրինակ՝ Արիստակես Տեր-Սարգիսյանցի *Ֆրանդուխտ վանեցին*¹⁵՝ վեպը, Շերենցի «Վանայ սագը» և այլն¹⁵: Կարինում կամ ծագումով կարինցիների ստեղծած երկերը (Հակոբ Կարնեցի և այլք) հիմնականում գրաբարախառն լեզվավիճակ են ներկայացնում, և դրանք աշխարհաբարի նմուշներ չի կարելի համարել:

«Լեզվական կենտրոններում» ստեղծվել են բազմաթիվ երկեր, գրաբարին զուգահեռ տարբեր հեղինակներ գրել են իր ժամանակի խոսակցական այս կամ տարբերակով, որոնք կրում են հեղինակի բնակավայրի լեզվական ազդեցությունն ու կնիքը:

«Լեզվական կենտրոններում» ստեղծված երկերի լեզվի քննությունն այդպիսով էական նշանակություն է ստանում՝ պարզելու համար, թե ավելի ուշ նորմավորված և գրական դարձած աշխարհաբարն իր սաղմնավորման շրջանում խոսակցական որ տարբերակից ինչ միավոր էր ժառանգում (հնչյունական համակարգ, բառապաշարային շերտ, անվանական ու բայական առանձնահատկություն և այլն), որոնց հանրագումարը տվել է լեզվական նոր որակ՝ վերաճելով նորմավորված գրական լեզվի:

Որպես ընդհանուր եզրակացություն պետք է փաստել, որ վաղաշխարհաբարյան փուլում նոր հայերենը (խոսքը բարբառների մասին չէ) լեզվական կենտրոններում գործածվող լեզվավիճակների, խոսակցական տարբերակների մի փունջ էր, իսկ նորմավորումը

¹⁵ *Արիստակես Տեր Սարգիսեանց, Պանդուխտ վանեցին*, Կ.Պոլիս, 1875, 166 էջ: *Գեորգ Շերենց, Վանայ սագ*, Թիֆլիս, 1885, 189 էջ:

ներկայիս պատկերացմամբ ի հայտ եկավ ավելի ուշ, դա տեսնում ենք 18-րդ դարի կեսերից:

Норайр Погосян – Роль армянских колоний в формировании ново-армянского языка “ашхарабар”. - В формировании нового этапа армянского языка большую роль сыграли крупные армянские колонии. Как в Армении, так и в нескольких центрах за ее пределами были разработаны, распространены те или иные языковые варианты разговорного языка. Эти влиятельные общины были: Константинополь, Новая-Джульфа, Польша, Украина, Крым, которые мы знаем, как “языковые центры”.

В статье мы попытались выяснить какое участие имели те или иные варианты в формировании нового языка. В качестве общего вывода можно сказать, что ново-армянский язык представлял собой набор различных языковых вариантов, которые использовались в разных центрах. Нормирование появилось гораздо позднее – в середине 18-го века.

Norayr Poghosyan – The Role of Armenian Colonies in the Formation of Ashkharhabar (Middle Armenian). - Armenian colonies played a great role in the formation of the new stage of the Armenian language. In Armenia and outside its borders in several centers the different variants of the Armenian language were being elaborated and spread. Among these influential communities were K. Polis, New Jugha (New Joulfa), Poland and Ukraine, Crimea, which are called ‘linguistic centers’.

In the given article we have tried to find out what kind of common linguistic regularities had the works created and what kind of role these variants had in the formation of New Armenian. As a general conclusion, it is mentioned that New Armenian in the early stage of its development was a bunch of variants used in the linguistic centers while its rationing happened a bit later-in the 18th century.

ԺԽՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Ժխտում կարելի է արտահայտել ինչպես արտալեզվական, այնպես էլ լեզվական միջոցներով՝ բառերով և բառահարաբերական ձևությոներով, հնչերանգով: Գրաբարի ժխտման արտահայտությունը կարելի է քննել միայն լեզվական գրավոր մակարդակում, քանի որ այն բացառապես հենված է մատենագրության վրա:

Ըստ Հ. Աճառյանի՝ **ոչ** բառը կազմված է **ո+****չ** միավորներից, որտեղ **ո-**ն բուն բացասականն է, իսկ **չ-**ն անորոշի նշանն է¹: Ըստ Գ. Զահուկյանի՝ **ոչ** բառը համեմատելի է հունարենի *οὐ-χί* համիմաստ ձևի հետ²:

Մի մասնիկը ծագում է հ.ե. **mé* ձևից և պահպանվել է բազմաթիվ լեզուներում (հնդկերեն, իրանական, թոխարերեն, թրակերեն, հունարեն, ալբաներեն)³: Այն առկա է նաև սեմա-հնդեվրոպական և կովկասյան առնչություններում⁴:

Հոդվածում անդրադառնում ենք բառային միջոցներին՝ *մի* և *ոչ* բառերի և վերջինից սերված **չ** երկրորդական ձևային կապակցելիությանը և իմաստային առանձնահատկություններին:

Դեռևս վաղ շրջանի քերականական աշխատություններում ժխտական մասնիկներն անվանվել են մակբայներ՝ ըստ բայ-ստորոգյալի հետ կապակցելիության՝ արտահայտելով ժխտական (**չէ, ոչ, ոչ իւիք, ոչ միով իւիք**), հրաժարական (**չէ, մի, մի իւիք**), արգելական իմաստներ⁵: Սակայն Ա. Այտընյանը նշում է, որ **ոչ** և **չ** մասնիկները կարող են կապակցվել նաև ածական և գոյական անունների հետ

¹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Երևան, 1977, էջ 561:

² Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, Երևան, 1987, էջ 177:

³ Ն. տ., էջ 222:

⁴ Ն. տ., էջ 449, 588, 600, 605:

⁵ pdf, *matenagirq hayoc*, հ. 5, էջ 1236: Քերականութեան գիրք. համառոտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան արիեստի, յամի փրկչին 1666, յԱմստերդամ քաղաքի, էջ 33:

(*չիմաստուն, չաստուած*), ուստի և դրանց միանշանակ մակբայ համարելը թերի է⁶:

Ժխտական խոնարհմամբ բայերի խնդրառությանը հայ լեզվաբանության մեջ առաջինն անդրադարձել է դեռևս Հովհաննես Հովովը՝ «Յաղագս արգելմանց պահանջողութեանց բայից» վերնագրի տակ կանգ առնելով այն դեպքերի վրա, երբ բայը չի ստանում իր պահանջած հոլովով խնդիրը, ինչպես՝ «*Մի՛ երկնչիր, զի....*» փխն. «*Մի՛ երկնչիր յինէն, զի....*»:

Ժխտականության ցուցիչները գրաբար մատենագրության մեջ իմաստային տարբեր երանգներ են դրսևորում տարբեր կապակցություններում:

1. *Ոչ* բառը «լոկ բացասութիւն» իմաստով բացառապես կապակցվում է դիմավոր բայերին նախադաս և ետադաս կիրառություններով, օրինակ⁷՝ *Ոչ գիտէի: Ոչ կամեցաւ: Ոչ եկի լուծանել: Լսէ և ոչ առնէ: Իբրև գոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: Որոճայ ոչ: Յայտնի է, և կարենք ոչ թագուցանել զճշմարտութիւն: Զի՛ նչ օգուտ է, եթէ ունիցի որ անդաստան, և սերմանիցէ ոչ:*

2. Երկրորդ դեմքով կիրառություններում *ոչ*-ը հանդես է գալիս հատկապես ստորադասական եղանակի բայաձևերի հետ և որպես «նշանակ արգելման» իր վրա է կրում հորդորական շեշտը, ինչպես՝ *Ո՛չ փորձիցես զՏէր Աստուած քո:*

3. Ի տարբերություն երկրորդ դեմքով կառույցների՝ առաջին և երրորդ դեմքով կառույցները հիմնականում արտահայտվում են չեզոք հնչերանգով, երբեմն՝ հարցական, ուր նույնպես շեշտակիր միավորը *ոչ* բառն է. ինչպես՝ *Վարդապետս ձեր ո՛չ տայ զերկդրամեան:*

4. *Ոչ* բառը կարող է կրկնադրությամբ կապակցվել նաև գոյականներին, օրինակ՝ *Արգելեալ կային, զի նոցա ո՛չ էլ և ո՛չ մուտ, և ո՛չ զին, և ո՛չ վաճառ:*

5. Նշված կառույցում ժխտումը կատարվել է քերականական մեկ եզրով, սակայն ավելի հաճախադեպ են կրկնակի ժխտման ար-

⁶ Հ. Վրթանիսի Չալըխյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 461:

⁷ Շարադրանքում ներկայացվում են ՆՀԲ-ի օրինակները: Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Ի Վենետիկ, հ. 2., 1837:

տահայտությունները, որոնցում ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը կատարվում է նաև ժխտման քերականական կարգի միջոցով, ինչպես՝ *Զժամանակն՝ որ ի միջի է, և **ն՛չ չորք ամբ ոչ լնուն։ Ոչ յայտնի և ոչ գաղտնի ոչ ամբարշտեցի*** նախադասության մեջ միաժամանակ ժխտվել են ստորոգյալն ու ձևի պարագան։ *Ես և **ն՛չ զմի որ ոչ զհիտեմ*** նախադասության մեջ՝ ստորոգյալը և ուղիղ խնդիրը։

6. Կրկնակի ժխտումը, սակայն, ավելի հաճախ կատարվում է *ոչ և չ* մասնիկների համատեղությամբ, ինչպես՝ *Չնախանձի և **ոչ չ ընդ ումեք երբեք։ Քահանայից գայն պատիւ ետ, որում և ոչ հրեշտակք չէին բաւական։***

7. *Ոչ* բառը կարող է ունենալ նաև անվանողական արժեք՝ նախադասության մեջ հանդես գալով գոյականաբար և հոլովվելով ի վերջադրական հոլովմամբ, ինչպես՝

ա. ուղղական հոլով՝ *Եղիցի ձեր բան, այոն այո՛, և **ոչն ո՛չ**։*

բ. հայցական հոլով՝ *Պետրոս ի լուսցումն ոտիցն՝ պատուոյ սակս ասաց **գոչն։***

գ. բացառական հոլով՝ *Յոչէ՛ ի գոլ ածեալ անցուցանելով։*

դ. գործիական հոլով՝ *Ամենայն բացասութիւն **ոչին** առագրեցեալ՝ զստորասութիւն առնէ բացասութիւն։*

8. *Ոչ*-ը հանդես է գալիս նաև բառակազմական մակարդակում՝ վերլուծական և համադրական կազմություններում, ինչպես՝ ***ոչ որ, ոչ ուստեք, ոչ ուրեք և ոչեղութիւն, ոչէութիւն, ոչէանամ, ոչինչ։***

9. *Ոչ*-ի կրճատմամբ խոսքում գործածվելում է նաև *չ*- ցուցիչը՝ կապակցվելով՝

ա. դիմավոր բայերին, օրինակ՝ *Մարդ **չէր** որ գործէր։ Եւ նա ասէ, **չգիտեմ*** և այլն.

բ. անդեմ բայերին, օրինակ՝ *Չսպանանել զնա։ Չգտեալ հանգիստ։ Չխոսող* և այլն.

գ. անուններին, որի դեպքում արդեն ձեռք է բերում ածանցի նշանակություն։ Այսպես՝ գրաբարում *չ* ածանցով ներկայացվում է մոտավորապես 100 բառ, որոնք ենթադասակարգվում են հետևյալ իմաստային խմբերով.

Անձնանիշ գոյական	Իրանիշ վերացական	Իրանիշ թանձրա	Կենդա- նանիշ	Ածական	Մակբայ
---------------------	---------------------	------------------	-----------------	--------	--------

	գոյական	ցական գոյական	գոյա կան		
չազգ	չազգականու- թին	չզարդ	չգա-զան	չախտորոշա- կան	չահագին
չաստուած	չագնուութին	չխաղոյք		չանձնավոր	չմարդկապէս
չաստուածու հի չգիտուն	չանսացութին			չանսական	
	չանսաւորու- թին			չբարի	
չեպիսկոպոս	չաջողութին			չբարիոք	
չերէց	չարժանու- թին			չբնակաւոր	
չժողովուրդ	չբարեբարու- թին			չբնաւոր	
չքահանայ	չգիտանք			չէական	
չքահանայա- պէտ	չգիւտ			չկենդանի	
	չգոյ			չկեցու	
	չէութին			չհամազգի	
	չխանդաղա- տանք			չձեռնհաս	
	չխոստովա- նութին			չմարդի	
	չկամութին			չմշտնջենաւոր	
	չկեցութին			չմոռացական	
	չհլութին			չյուսայի	
	չմարդութին			չոխակալ	
	չմարթութին			չուղղափառ	
	չմեղադրանք			չունևոր	
	չմեղադրու- թին			չուտելի	
	չմիաբաւութին			չպէտ	
	չյաջողութին			չսուտ	
	չյարութին			չվշտասէր	
	չոխակալութին				
	չվնասակա- րութին				

9. Մի՛ մասնիկը գրաբարում ունի «արգելման և զգուշութեան» իմաստ, որը կարող էր կիրառվել տարբեր եղանակաժամանակային ձևերի հետ, ինչպէս՝

ա. Արգելական հրամայականի, օրինակ՝ *Մի՛ երկնչի՛ր, մի՛ երկնչի՛ք*։ Վերջինս կարող է հանդես գալ նաև ընդմիջարկությամբ, օրինակ՝ *Մի՛ դու արքայ, և մի՛ դու զայդ բանդ այլ առ մեզ ասեք*։

բ. Ստորադասական առաջին ապառնու, օրինակ՝ *Մի՛ ուսիցեք ի նմանե և մի՛ հուս կինիցիք*։

գ. Ստորդասական երկրորդ ապառնու, օրինակ՝ *....մի՛ այսպես չարաչար խորհեցուք*։

դ. Սահմանական ներկայի, օրինակ՝ *Մի՛ աղաչեմ...*

10. Սոսկ ժխտականության (բացասության) իմաստով կիրառվելիս *մի՛* մասնիկը կարող է հարադրվել։

ա. Սահմանական անցյալ անկատարին, օրինակ՝ *Երանի թե մի՛ լինէր ի ձենջ այդ մխիթարութիւն*։

բ. Ստորադասական երկրորդ ապառնուն, օրինակ՝ *Որք մի՛ ճարակեցեն զմահ*։

գ. Անորոշ դերբային, օրինակ՝ *Պարտ էր մի՛ աւելիս գոչել, և մի՛ ստեպ ստեպ հեծել*։

11. Արգելականի *մի* ցուցիչը կարող է հանդես գալ նաև անկախաբար, օրինակ՝ *Ասէ ցնոսա, մի՛, գուցէ մինչ քաղիցէք...*

12. Արգելականի *մի* ցուցիչը կարող է գործածվել նաև հարցական երանգով, օրինակ՝ *Մի՛ ամենեքեան առաքեա՞լք, մի՞ ամենեքին մարգարե՞ք*։

13. *Մի* ժխտականով կազմվում են մի շարք հարադրություններ, ինչպես՝ *մի՛ եղիցի, մի՛ լիցի՝ քա՛վ լիցի* իմաստով, *մի՞ եթէ՝ մի՛ թէ՛* իմաստով, օրինակներ՝ *Ասէ ցնա ծերն. ոչ մի՛ լիցի։ Ո՛չ, մի՛ եղիցի տէր այլ առնել զայդպիսիդ։ Մի՞ եթէ՝ ձրի՞ պաշտե Յովբ գտէր։ Մի՛ եթէ՝ իբրև ի հարևանցի ինչ նայեցար ընդ մեծ ճգնողն*։

Այսպիսով՝ ժխտական բառերը գրաբարում կապակցվում են տարբեր խոսքի մասերի՝ արտահայտելով բացասման տարբեր իմաստներ։

Aren Santoyan, Lilit Pesrosyan - Interconnection of Negative Units in Grabar. – Negation expression of Grabar can only be examined in linguistic written stage, as it is entirely based on the research of Bibliography. Negation in Grabar was implemented with different linguistic units, from

which the interconnection of words “*uḥ*” and “*ny*” are examined in this article with different part of speeches by clarifying that they act with different forms and tones in different applications.

Арен Сантоян, Лилит Петросян - Сочетаемость отрицательных единиц в древнеармянском языке. - Выражение отрицания в древнеармянском языке можно исследовать только на письменном языковом уровне, так как оно опирается исключительно на исследования рукописных памятников. Отрицание в древнеармянском языке осуществлялось при помощи различных языковых единиц, из которых в данной статье рассматривается сочетаемость слов “*uḥ*” (‘не’) и “*ny*” (‘нет’) с разными частями речи. При этом мы приходим к выводу, что они в различном применении указывают на различные формы и оттенки опровержения.

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐԸ ԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Խոսակցական լեզվի առանձնակի և համակարգային քննությունը մեզանում, ինչպես և համաշխարհային լեզվաբանության մեջ, ձևավորվել, ամրակայվել է անցյալ դարակեսին: Այդպիսի ուսումնասիրությունները դեռևս քիչ են: Այդ կարգի առաջին ժողովածուում¹ ամփոփված է երկու աշխատանք. մեկը Թ. Ղարազյուլյանինն է՝ «Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի»: Այստեղ, իսկապես, ակնարկային ձևով էլ 118 էջի սահմաններում հակիրճ ներկայացվում են հարցի ուսումնասիրության պատմությունը, խոսակցական լեզվի տարբեր ըմբռնումները, լեզվական և արտալեզվական բնորոշ հատկանիշներն ու առանձնահատկությունները: Մյուս աշխատանքի («Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում») հեղինակը Հ.Զաքարյանն է: Որպես հանրալեզվաբանական անդրադարձ խոսակցական լեզվին՝ այն մնում է միակը իր տեսակի մեջ, որում գրական հայերենի հետ համեմատության միջոցով բացահայտված իրողությունները, փոփոխություններն ու միտումները խմբավորվում, վերլուծվում, գնահատվում ու բաշխվում են ըստ հասարակական հատկանիշների: Խոսակցական լեզվի զանազան առանձնահատկություններին, խոսքի կառուցման սկզբունքներին, բնութագրական կողմերին ու յուրահատկություններին առնչվող տարաբնույթ հարցեր են քննվում Ն. Մարգարյանի աշխատանքներից մեկում² և մեկուկես տասնյակից ավելի հոդվածներում: Այս շարքում է նաև Լ. Թեյլանի արժեքավոր մի հոդվածը³, որը նվիրված է արդի խոսակցական հայերենի բայա-

¹ Թ.Ա. Ղարազյուլյան, Հ.Լ. Զաքարյան, *Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն*, Ե., 1981:

² Ն.Մ.Մարգարյան, *Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկությունները, Լեզվի և ոճի հարցեր*, 10, Ե., էջ 231-286:

³ Լ.Թեյլան, *Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում*, Ջահուկյանական ընթերցումներ, 2009, էջ 63-74:

կազմության մի քանի կարևոր խնդիրների:

Խոսակցական լեզվի առանձնակի քննության առայժմ վերջին աշխատանքը Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցներ Լ. Ղամոյանի, Մ. Սարգսյանի, Ա. Քարտաշյանի կոլեկտիվ հետազոտությունն է, որը լույս տեսավ անցյալ տարի⁴: Դրանում խոսակցական լեզվի տարաբնույթ դրսևորումները հիմնականում դիտարկվում են ըստ կանոնարկման պահանջների: Թվարկած գործերի ցանկն, անշուշտ, կարող է և թերի լինել, բայց ակնհայտ է, որ խոսակցական լեզվի առանձնակի և համակարգված քննությունը մեզանում աչքի չի ընկնում աշխատանքների առատությամբ: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ մեզանում ավանդաբար լեզվաբանների ուշադրության կենտրոնում են եղել գրական լեզվի օրինաչափություններն ու առանձնահատկությունները, իսկ խոսակցական լեզվի տարբեր փաստերը ներկայացվել են դրանց գուցահեռ, հընթացս, կամ էլ բարբառագիտության, ոճաբանության, լեզվի տեսության ինչ-ինչ հարցերի քննության առնչությամբ: Արդի խոսակցական հայերենի վերաբերյալ նման մոտեցման կիրառության դեպքերը անհամեմատ տարածված են, նույնիսկ առանձին հղումներով մեջբերումներ կատարելու անհրաժեշտություն չկա: Այս դեպքում հատկապես ուզում ենք ընդգծել մի շահեկան ու կարևոր սկզբունք, որ, հետևելով դասական լեզվաբանության մեծերին, իրենց աշխատանքներում հաջողությամբ կիրառում են նաև մերօրյա մի քանի վաստակավոր գիտնականներ՝ առկային ավելացնելով նորը: Խոսքը հայերենի զարգացման մյուս փուլերում ևս խոսակցական լեզվի բնույթն ու գործառության ոլորտները, սահմանները պարզելու, գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերությունը հնարավորինս հստակեցնելու, խոսակցական լեզվի դրսևորման ձևերն ու բնորոշ հատկանիշները բացահայտելու նկատմամբ կայուն ուղղվածության մասին է: Բերենք մի քանի օրինակ:

Լ. Հովհաննիսյանը, որ գրաբարի բառապաշարի (հատկապես՝ հինգերորդ դարի) համակողմանի հետազոտության ասպարեզում

⁴ Լ. Ղամոյան, Մ. Սարգսյան, Ա. Քարտաշյան, *Երևանի խոսակցական լեզուն*, Ե., 2014:

իր որոշակի ներդրումն ունի, երբեք չի սահմանափակվում միայն վկայված գրաքարյան բառերի առանձնացումով: Փաստելով, որ նույնիսկ ամենաընտիր գրաքարով գրված գործերում «առկայանում են ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառեր ու բառաձևեր» և դրանց տարբերակումը հաճախ ամեննին էլ դյուրին չէ, այնուամենայնիվ նա որոշ սկզբունքների ու չափանիշների կիրառումով տարբերակում է գրական նորմին հարող կամ ժողովրդախոսակցական տարբերը, բառախմբերը գրաքարի ինքնուրույն կամ թարգմանական գրականության նմուշներում⁵:

Գրաքարին նվիրված իր աշխատանքներում այս սկզբունքի հետևողական ու արդյունավետ կիրառողներից է Վ. Համբարձումյանը: Այսպես. «Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» գրքում, այդ երկի բառապաշարի հարստությունը բաժանելով երեք խմբի, դրանցից մեկում գետեղում է «ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից ներթափանցած, այլև հեղինակի բառաստեղծամբ կամ ինքնուրույն կիրառությամբ դրսեվորված» բառերն ու բառաձևերը⁶: Տարբեր առիթներով Վ. Համբարձումյանը փաստում է նաև ոչ միայն գրաքարի բառապաշարի, այլև կառուցվածքի մյուս օղակների մեջ ժամանակի խոսակցական լեզվի տարրերի առկայությունը:

Միջին հայերենում գրական և խոսակցական լեզուների տարբերաց գարգացումների, դրանցում եղած փոփոխությունների վերաբերյալ հետաքրքիր ու արժեքավոր դիտարկումներ ունի Լ. Հովսեփյանը: Լեզվաբանական նորագույն մեթոդներով քննելով միջին հայերենի անվանական և դերանվանական հոլովումները, հոլովատիպերը, առկայացման, թվի ու ձևաբանական այլ իրողություններ, տալով դրանց հարացույցներն ու կադապարները, միաժամանակ հաշվի առնելով միջին հայերենի տարբեր ենթափուլերում խոսակցական լեզվի ազդեցության չափերն ու սահմանները, դրսևորման ձևերն ու միջոցները՝ Լ. Հովսեփյանը հանգում է ճիշտ եզրակացության, որ արդյունքում լեզուն «ավելի ու ավելի աշխարհիկ երանգ

⁵ **Լաւրենտի Յովհաննիսեան**, *Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (5-րդ դար)*, Ե, 2007, էջ 66:

⁶ **Վ. Համբարձումյան**, *Հովհան Մամիկոնյանի „Տարոնի պատմության“, լեզուն և ոճը*, Ե., 2013, էջ 23:

է ստանում և ժողովրդական – խոսակցական հիմքին մոտենում»⁷:

Այս ամենով հանդերձ խոսակցական լեզվի ուսումնասիրության բնագավառում առկա մի շարք առարկայական և անձնային դժվարություններին գումարվում են նաև նորերը՝ կապված հարցի վերաբերյալ եղած տարակարծությունների, խոսակցական լեզվի գնահատման, ըմբռնման, առանձնացման չափանիշերի և այդ պատճառով առաջացած տերմինային անմիօրինակությունների հետ, որոնք լրացուցիչ բարդություններ են ստեղծում:

Որոշակի խմբավորումներ կատարելով՝ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Սկզբնական պարզ պատկերացմամբ խոսակցական է համարվում լեզվական հաղորդակցման այն միջոցը, որն առաջին հերթին ծառայում է մտքերի փոխադարձ հաղորդման անմիջական գործընթացին, դրսևորվում է որպես խոսք, խոսելու գործողություն, խոսողություն:

Այս դեպքում խոսակցական լեզվի նշանակությունը զուգորդվում է կենդանի լեզու, խոսվող լեզու, խոսք, համընդհանուր լեզվի խոսակցական տարբերակ, գործառող լեզու և այլ հասկացությունների հետ:

Մեկ այլ դեպքում խոսակցական լեզվի առանձնացման հիմքում դրվում է խոսքի դրսևորման ձևը՝ բանավոր կամ գրավոր: Եվ որովհետև պատմականորեն բանավոր խոսքը նախորդում է գրավորին, և խոսակցական լեզուն էլ, ունենալով նաև գրավոր դրսևորումներ, գերազանցապես գործառում է որպես բանավոր խոսք, խոսակցական է համարվել յուրաքանչյուր լեզու, որը տվյալ հասարակության կողմից գործածվում է իբրև բանավոր հաղորդակցման միասնական ու ընդհանուր միջոց: Իսկ սա նշանակում է, որ զուգորդվում կամ նույնանում են խոսակցական լեզու և բանավոր խոսք, բանավոր լեզու, գրական լեզվի բանավոր տարբերակ, համընդհանուր լեզվի բանավոր դրսևորում ու այլ իրականություններ:

Խոսակցական լեզվի տարբերակման, բնութագրման չափանիշ

⁷ Տե՛ս *Ալեկսարկներ միջին գրական հայերենի պատմության*, Բ, Ե. 1975, էջ 101:

է դիտվել նաև լեզվական նորմը: Հայտարարվել է, որ խոսակցական լեզուն, ի տարբերություն գրական լեզվի, չունի մշակված, կայուն ամրագրված նորմեր, կանոնակարգված չէ, փորձել են այդ հայեցակետով բացատրել նրա էական հատկությունները մի կողմից հակադրելով գրական լեզվին, մյուս կողմից առաջացնելով զուգահեռություն խոսակցական լեզու և չնորմավորված լեզու հասկացությունների միջև: Եթե նույնիսկ մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ խոսակցական լեզուն էլ ունի իր նորմերը, դարձյալ նման մոտեցմամբ, նման հակադրությամբ ու զուգորդումով չեն կարող բացատրվել խոսակցական լեզվի բուն էությունն ու յուրահատկությունները:

Տարբերակման չափանիշերի և տերմինային բազմիմաստության դեպքերի խմբավորման նոր օրինակներ ևս կարելի է նշել, բայց առայժմ բավարարվենք այսքանով, քանի որ հետագա շարադրանքում նույնպես դրանց մասին խոսվելու է: Ավելացնենք միայն, որ հաճախ էլ անհնար է լինում հստակորեն որոշել, թե խոսակցական լեզու տերմինի տվյալ գործածությունը ինչ բովանդակության է և ինչ սկզբունքի արդյունք:

Դժվար չէ նկատել, որ այս տարբեր մոտեցումների հիմքում ինչպես լեզվի կառուցվածքային կողմին, այնպես էլ գործառությանը վերաբերող հատկանիշներն են: Բայց կա նաև զուտ գործառական, ոճաբանական հայեցակետը, ըստ որի խոսակցական լեզուն դիտվում է որպես լեզվի գործառական ոճերից մեկը, ուսումնասիրվում ըստ գործառական մյուս ոճերի նկատմամբ դրսևորած առանձնահատկությունների: Այս դեպքում ևս բերած անվիճելի նպաստների կողքին գործ ունենք տերմինային նոր զուգորդումների հետ: Որոշ դեպքերում տուրք տրվեց ոճերի տարբերակման ավանդական մոտեցմանը՝ բարձր (հանդիսավոր), չեզոք (միջին), ցածր, խոսակցական լեզուն հատկացվեց վերջինին՝ առաջացնելով խոսակցական լեզու – ցածր ոճ զուգորդումը: Այս մոտեցումը տարածում չունեցավ: Որոշ դեպքերում էլ տեսական ըմբռնումների տարբերությունները դարձան տերմինների զուգահեռ գործածության հիմք: Գ. Ջահուկյանն, օրինակ, խոսակցական լեզու է համարում լեզվական հաղորդակցության այն ոլորտը, որը միջին դիրք է գրավում նորմավորված գրական լեզվի և բարբառների համեմատությամբ՝ տեղական ավելի

կամ պակաս երանգավորմամբ, որը միաժամանակ յուրատեսակ հիմք-շտեմարան է գրական լեզվի համար: Նա, բնականաբար, գործառական տարբերակը առաջարկեց կոչել նոր տերմինով՝ առօրյա – կենցաղային⁸: Նույն կերպ վարվեց նաև Ս. Աբրահամյանը՝ գործածելով առօրյա խոսք և առօրյա ոճ անվանումները⁹: Սակայն սպասված արդյունքը չեղավ, շատ արագ առաջացան նոր զուգորդումներ ու անվանումներ ևս՝ առօրյա-խոսակցական, առտնին խոսք, ընտանեկան լեզու, միջբարբառային (վերբարբառային) հաղորդակցության լեզու, անկաշկանդ խոսք և այլն: Իսկ ինչ վերաբերում է տեսական ըմբռնումների տարբերություններին, այդ մասին շատ դիպուկ է նշում Լ. Եզեկյանը. «Չնայած գործառական ոճերի տեսության մեջ տարբեր գիտնականների սկզբունքներն ու մոտեցումները հիմնականում իրարամերժ չեն, բայց և այնպես առանձին հարցերում և հատկապես դասակարգման ժամանակ նկատելի են տարբեր ելակետեր ու դասադասման տարբեր չափանիշներ ու սկզբունքներ»¹⁰: Այդ տարակարծությունները գրական լեզվի գործառական տարբերակների առանձնացման դեպքում չեն խանգարում միասնական տեսակետի ձևավորմանը. անկախ նրանից, թե ինչ չափանիշ է ընտրվում ոճերի դասակարգման համար՝ լեզվի գործառականությունը, գործածության բնագավառները կամ որևէ այլ հատկանիշ, բոլորն էլ արդի գրական հայերենում առանձնացնում են հայտնի հինգ գործառական ոճերը: Տվյալ դեպքում մեզ առավել հետաքրքրում են այն տարակարծությունները, որոնք մնում են առկախ: Մասնավորապես այդպիսին է խոսակցական լեզվի և խոսակցական ոճի փոխհարաբերության խնդիրը: Ակնհայտ է երկու տարբեր մոտեցումների առկայությունը: Լեզվաբանների մի մասը խոսակցական լեզուն՝ համարում է գրական լեզվի գործառական տարբերակներից մեկը՝

⁸Տե՛ս **Գ.Բ.Ջահուկյան, Է.Բ.Աղայան, Վ.Ղ.Առաքելյան, Վ.Ա.Քոչյան**, *Հայոց լեզու*, 1-ին մաս, Ա պրակ, էջ 5-7, նաև՝ **Դ.Բ.Դժաուկյան**, *Универсальная теория языка*, М., 1999, էջ 211-212:

⁹**Ս.Աբրահամյան**, *Հայոց լեզու* (դասագիրք 8-րդ դասարանի համար), Ե., 1998, էջ 120-121:

¹⁰**Լ. Եզեկյան**, *Ոճագիտություն*, Ե., 2003, էջ 26:

նույնացնելով խոսակցական ոճի հետ, իսկ մի մասն էլ հակված է ընդունելու, որ խոսակցական լեզուն չի կարող նույնանալ խոսակցական ոճին և որպես այդպիսին փոխհարաբերել մյուս ոճերի հետ:

Համաձայնելով այս տեսակետերից երկրորդին՝ անհրաժեշտ ենք համարում նշել մի քանի հանգամանքներ: Անշուշտ, մոտեցումների տարբերությունը հիմնականում բխում է ուսումնասիրության առարկայի բնույթից, լեզվից լեզու տարբեր լինելու հանգամանքից, նույնիսկ նույն լեզվի տարբեր փուլերում տարբեր դրսևորումներով հանդես գալու հատկությունից: Այս առումով էլ նախ պետք է պարզել, թե իսկապես նույնական է խոսակցական լեզուն խոսակցական ոճի հետ, արդյոք գտնվում է գրական լեզվի գործառական մյուս ոճերի հավասար շարքում, ինչպիսին են նրա լեզվական և ոճական առանձնահատկությունները, ոճական ուղղվածությունն ու հնարավորությունները, զարգացման միտումներն ու յուրահատկությունները և բազմաթիվ այլ հարցեր, որոնց հաշվառումով միայն կարելի կլինի կատարել եզրահանգում:

Ռուս լեզվաբանությունը, որ հարցի ուսումնասիրության ավելի հարուստ փորձ ունի, առաջ է քաշում խոսակցական լեզվի և խոսակցական ոճի մի քանի էական տարբերություններ:

«Խոսակցական ռուսաց լեզու» գրքում մասնավորապես նշվում է, որ ոճական տարբերակումները (գործառական ոճերի առանձնացումը), ըստ երևույթին, հնարավոր են միայն մեկ համակարգի սահմաններում և խոսակցական լեզուն ոչ թե հակադրվում է գրական լեզվի առանձին գործառական ոճերին, այլ գրական լեզվին ընդհանրապես, հետևաբար հակադրության եզրերից մեկը (խոսակցական լեզուն) չի կարող հավասարեցվել մյուս եզրի բաղադրիչներից մեկի (գրական լեզվի գործառական ոճի) հետ¹¹: Տարբերությունների բացահայտման առումով կարևոր է նաև պնդումը, որ «ի տարբերություն խոսակցական ոճի (և ընդհանրապես գործառական ոճերի)՝ խոսակցական լեզուն թեմատիկ առումով սահմանափակ չէ»¹²:

Նշված հատկանիշներով է առաջին հերթին պայմանավորված

¹¹ *Русская разговорная речь*, М., 1973, стр. 20-21.

¹² **О.Б.Сиротинина**, *Современная разговорная речь и ее особенности*, М., 1974, стр. 25.

խոսակցական լեզուն առանձին, ինքնուրույն համակարգ համարելը՝ ի հակադրություն գրական լեզվի, բայց կան նաև տարբերակման այլ չափանիշեր: Նախ՝ գրական և խոսակցական լեզուներում հանդես եկող նույն միավորները շատ դեպքերում նույնական չեն իրենց գործառությամբ, բացի այդ՝ գոյություն ունի գործառող միավորների քանակային տարբերություն. գրական լեզվի որոշ միավորներ բացակայում են խոսակցական լեզվում և հակառակը:

Խոսակցական լեզվի և խոսակցական ոճի փոխհարաբերության բացահայտումը թերի կլինի առանց արդի լեզվավիճակի հաշվառման, իսկ առկա վիճակով դրանց նույնացումը նպատակահարմար չէ թե տեսական, թե գործնական նկատառումներով: Նույնացումով խզում է առաջանում «ոճ» և «լեզու» հասկացությունների միջև, որոնց դիտարկումը պետք է լինի միասնական: Եթե բացարձակ նույնական չեն լեզուն և ոճը, ապա հարկ չկա այդպիսին համարելու խոսակցական լեզուն և խոսակցական ոճը: Ընդունելով դրանց նույնացումը և նշանակությունների մերձեցումը մի շարք կետերում՝ պետք է անհրաժեշտաբար դիտարկել նաև դրանց մասնավոր հատկություններն ու տարբերությունները:

Բացարձակապես նույնացնել խոսակցական լեզուն գրական լեզվի գործառական ոճերից մեկի հետ նշանակում է այն իր ամբողջ ծավալով ընդգրկել գրական լեզվի մեջ, մինչդեռ այդպես չէ, խոսակցական լեզուն գոյություն ունի ազգային լեզվի կազմում՝ որպես մի ինքնուրույն համակարգ գրական լեզվի կողքին, և կարևորը նրա համակարգային առանձնահատկությունների, գրական լեզվի և վերջինիս գործառական ոճերի հետ ունեցած փոխհարաբերությունների բացահայտումն է:

Նույնացնելով խոսակցական լեզուն ու խոսակցական ոճը՝ համապատասխանաբար նեղացնում ենք դրանցից յուրաքանչյուրի ընդգրկման ու գործառության սահմանները: Եթե խոսակցական ոճը կարող է դրսևորվել խոսակցական լեզվում կամ նրա միջոցով, դա չի նշանակում, որ խոսակցական ոճը հանդես է գալիս միայն այդ ծավալով ու ընդգրկումով: Նույն կերպ՝ եթե խոսակցական լեզուն հաճախ է պայմանավորված խոսակցական ոճով, ապա կարող է ունենալ այլ կարգի դրսևորումներ ևս: Այս դեպքում էլ վերջնական խոսքը պատկանում է դրանց փոխհարաբերությունների մանրա-

զնին քննությանը, ընդհանրական և տարբերակիչ հատկությունների վերլուծությանը:

Կան նաև առանձին դիտողություններ հենց խոսակցական լեզվի՝ ոճական շերտեր, ենթատեսակներ ունենալու մասին¹³: Հարցի այսպիսի դրվածքի դեպքում, իսկապես, նպատակահարմար չէ խոսակցական լեզուն իր ամբողջ ծավալով գրական լեզվի համակարգ տեղափոխելը, նրա ոճական տարբեր շերտերը գրական լեզվի գործառական ոճերի հետ հավասար շարքում դնելը: Ասվածը հաշվի առնելով՝ դիտարկել և փորձել ենք առանձնացնել նաև առկա վիճակով մեր լեզվում միջոճային փոխանցումների՝ ճանապարհով ձևավորված գործառական ենթատարբերակները՝ որոշ պայմանակա-նությամբ անվանելով խոսակցագեղարվեստական, խոսակցա-գիտական, խոսակցավարչական, խոսակցահրապարակային, որոնց քննությունը այս հոդվածի նպատակներից դուրս է:

Sargsyan Nver - Functional Styles and Colloquial Language. - In the present article different approaches of apprehension and evaluation of colloquial language and mainly its stylistic aspects are briefly discussed. The similarities and main differences of colloquial and literary styles (particularly of colloquial style) are described and the problem of varieties formed by interrelations and transmissions between different styles is brought forward. From the carried out analyses we come to the conclusion that the absolute identification of colloquial language and colloquial style in Modern Armenian is rational neither from theoretical nor functional perspectives.

Саргсян Нвер - Функциональные стили и разговорный язык. - В настоящей статье обсуждаются разные подходы понятия и оценки разговорного языка, главным образом стилистические аспекты. Описаны сходства и основные отличия разговорных и литературных стилей (в частности в разговорной речи), выдвигается проблема вариантов, сформированных взаимосвязями и передачами между различными стилями. Необходимые анализы приводят к выводу, что абсолютное отождествление разговорного языка и разговорного стиля на современном армянском языке ни с теоретической, ни функциональной точек зрения не рациональна.

¹³ Տե՛ս Է.Բ.Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 102-103:

Սարգսյան Արմեն (ԼՂՀ, կրթության, գիտության
և սպորտի նախարարություն)

**ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

Լեզուն ազգային մշակույթի, ժողովրդի հոգեբանության և փիլիսոփայության հայելին է: Լեզվի և մշակույթի փոխհարաբերության հարցը միաժամանակ և՛ բարդ է, և՛ արդիական: Իրենց տարբեր կողմերով լեզուն և մշակույթը խաչաձևվում են իրար՝ թափանցելով միմյանց մեջ: Լեզվի և մշակույթի փոխհարաբերության հակասականությունը պայմանավորված է նրանով, որ լեզուն և՛ մշակույթի բաղկացուցիչ մաս է, և՛ միաժամանակ այդ մշակույթի ստեղծման միջոց:

Շատ դեպքերում լեզուն ժողովրդի պատմության միակ աղբյուրն է, այն մեծ ներգործություն ունի ազգային մշակույթի, հոգեբանության և ստեղծագործական գործունեության վրա:

Աշխարհի լեզվական պատկերի ազգային առանձնահատկությունը բացատրվում է ժողովրդի մշակույթով, լեզվի կառուցվածքային առանձնահատկություններով, ինչը առավել վառ արտացոլված է յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանության մեջ:

Աշխարհի դարձվածային պատկեր ասելով՝ պետք է հասկանալ աշխարհի լեզվական պատկերի այն մասը, որը նկարագրվում է դարձվածի միջոցով, ընդ որում յուրաքանչյուր դարձված կատարում է որոշակի գործառույթ շրջապատող իրականության նկարագրության մեջ: Իր զգացմունքայնությամբ աշխարհի դարձվածաբանական պատկերը առավել վառ և հստակ է արտացոլում ժողովրդի ոգին, նրա ազգային ինքնությունությունը, աշխարհի ճանաչողության պատմամշակութային փորձը:

Դարձվածները, արտացոլելով տվյալ ժողովրդի մշակույթի զարգացման երկար գործընթացը, ամրակայում և փոխանցում են սերնդեսերունդ ազգային ավանդույթներն ու կարծրատիպերը: Յուրաքանչյուր լեզվի դարձվածները սերտորեն կապված են տվյալ լեզվով խոսող ժողովրդի մշակույթի պատմության, սովորույթների, գրականության հետ: Այդ կապը առավել հստակ արտացոլված է այն

դարձվածներում, որոնք ունեն հատուկ անուն բաղադրիչ: Հատուկ անուններով կազմված դարձվածները հսկայական տեղեկություն են պարունակում տվյալ հանրության պատմական անցյալի ու ներկայի, սովորությունների, ազգային ինքնատիպության ու հոգեբանության մասին:

Հատուկ անուն բաղադրիչով դարձվածների հիմնական առանձնահատկություններից մեկը բաղադրիչների իմաստային ձուլվածությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես լեզվի իմաստաբանորեն անբաժանելի միավոր:

Հատուկ անուններով կազմված դարձվածներով հարուստ է ինչպես գրական հայերենը, այնպես էլ Ղարաբաղի բարբառը: Ղարաբաղի բարբառի՝ հատուկ անուն բաղադրիչով դարձվածների ուսումնասիրությունը ենթադրում է այդպիսի դարձվածների դասակարգում՝ ըստ լեզվաբանության մեջ առավել ընդունված սկզբունքների:

Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում են հատուկ անունների հետևյալ խմբերը՝ անձնանուններ, աշխարհագրական անուններ, աստվածությունների, երկնային մարմինների, համաստեղությունների անուններ, պատմական իրադարձությունների հետ կապված ժամանակահատվածների անուններ և այլն: Այս սկզբունքով Ղարաբաղի բարբառի՝ հատուկ անուններով կազմված դարձվածները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ աշխարհագրական անուններով և անձնանուններով կազմված դարձվածներ:

Ղարաբաղի բարբառը հարուստ է աշխարհագրական տարբեր անուններով կազմված դարձվածներով, որոնց մեջ, ըստ աշխարհագրական անվան բնույթի, կարելի է առանձնացնել հետևյալ ենթախմբերը.

1. Լեռնանուններով կազմված դարձվածներ՝ *Տրգափաղ տըճնալ* (ուղիղ՝ ձիգ կանգնել)¹, *Քիրսա նըման դըլվումը վըճնը կէնալ* (մեկին մեծապես հովանավորել), *Կօրծը շինիլ Քիրսա սարը* (առատորեն կաթ տալ (կովերի մասին), *Մըռավա լաշը կըկըղել* (զարունը բացվել)։

2. Գետանուններով կազմված դարձվածներ՝ *Քուռը /Արախսը ածել/ քըցիլ* (ապարդյուն կորցնել, անտեղի վատնել), *Քուռէն /Ըրախսեն ճիրան հինջ կըպըկա սէ* (Էսկան տարբերություն չի լինի),

Քուռեն մըկրատը(շատ սուր՝ հատու գործիք), *Քուռը/Արախսը տանել, ծարավ յը՛տ պիբիլ* (մեկին ճարպկությամբ, հնարամտությամբ, խորամանկությամբ գերազանցել), *Քուռեն /Ըրախսեն ճուրը* (վարար, հորդ, առատ), *Թըրդէ տը՛ռնալ* (1.վարարել, հորդանալ, 2. խիստ գայրանալ, կատաղել)։

3. Բնակավայրերի անուններով կազմված դարձվածներ՝ *Մի-բիր դարկել/քըշիլ* (աքսորել), *քը՛թը Տըրըպըզօնալը քի՛նիլ* (շատ մեծամիտ՝ գոռոզ լինել), *Նուխլա սերուն* (բարակիրան և բարձրատոք գեղեցկուհի), *Ղալա/Ակուռի/Սուրթում/Սօղօմ-Գօմօր շինիլ* (հիմնահատակ ավերել), *Ղալա/Ակուռի/Սուրթում/Սօղօմ-Գօմօր տը՛ռնալ* (հիմնահատակ ավերվել)։

4. Սրբավայրերի անուններով կազմված դարձվածներ՝ *Յէրու-սաղեմ քի՛նիլ* (վախճանվել), *Պըթկը՛սապէրքա յը՛կած* (արտոնյալ, ընտրյալ), *Պըթկը՛սապէրք քը՛ցած* (զարմացած, շշմած, չտես)։

5. Տարբեր մանրատեղանուններով կազմված դարձվածներ՝ *Մէջուն արտը քի՛նիլ* (վախճանվել), *Հունգունտունվա պաշար* (մեծ քանակությամբ ուտելիքի պաշար), *Ասկարանա պէրթումը պըլօկ-ված* (չքավոր, թշվառ) և այլն։

1. Օրինակները քաղված են Ա.Սարգսյանի <<Ղարաբաղի բարբառի բառարան>>, Երևան, 2013 զրքից

Առավել տարածված են անձնանուններով կազմված դարձվածները, որոնք պայմանականորեն բաժանել ենք հետևյալ ենթախմբերի։

1. Աստվածաշնչյան անուններով կազմված դարձվածներ՝ *Քըրիստոսա մէխէն թըխել* (ստոր քայլ կատարել), *խաչած Քըրիստոսա ըռանգը*(ղեղին, դեղնագույն), *Ըղամա տէսը*(մեծ քանակությամբ, շատ (մարդկանց մասին)*Ըղամա վէրթի*(մարդ արարած, մահկանացու), *Ըղամէն շուրէրալը* (մերկ), *Ըղամէն վըխտանց* (շատ հնուց, ի սկզբանե), *Միսօն ծիրունի տը՛ռնալ* (խոր ծերության հասնել), *Ըպէլա կառնը* (հեզ, հնազանդ, խեղճ), *Նօյին դուրվին* (հին ժամանակներում), *Պօղօս-Պէտրօս չինիլ նըստա* (անկարող՝ անընդունակ լինել՝ որևէ բան անելու՝ ձեռնարկելու)։

2. Նշանավոր մարդկանց անուններով կազմված դարձված-ներ՝ *ամեն մարթ Հասան չի տըճոնալ* (ամեն ինչ, ամեն ոք չէ, որից հնարավոր է ցանկալի արդյունք ստանալ), *Մանթաշովեն /Մորգանեն ախճիգը/տըղան/թոնը* (1. հարուստ, ունևոր անձ, 2. արտոնյալ անձ), *Նիկալային/ Նաբուն թըվին* (հին ժամանակներում), *Ղաչաղ Նաբի* (նիհար և տգեղ մարդ), *Լենինը մըճալ ա, Հստալինը էն ա սաղ* (դաժանությունները՝ բռնությունները դեռ շարունակվում են), *Լենինը քինան ա, Հստալինը կա* (պատվավոր հյուրերի չեմ սպասում), *մըճ յըճկալ Լենինը մըճալ* (ասում են այն ժամանակ, երբ անհրաժեշտության դեպքում մի բան սպառվում՝ խափանվում է), *Ափլաթուն կարթիլ/կըտըրել* (ճառաբանել, ճառախոսել)

3. Բանահյուսական հերոսների անուններով կազմված դարձվածներ՝ *քըճիչի Հասան* (քեփի սիրահար, խրախճասեր մարդ), *Լօղմանի տըճոնալ* (անունը հոչակվել), *Քաջ Նազար* (վախկոտ մարդ), *Հայկա բալա* (հայորդի), *Պըրլպուղուն առըտօրը* (անշահավետ գործ՝ առևտուր), *Պըրլպուղուն դըզդանը շինիլ* (գործը դիտմամբ ձգձգել), *Սօնեն հավըտըճոնալ* (գործը ձգձգվել), *ամսկեն Հուռի* (շատ ծույլ մարդ)։

4. Գերդաստանների անուններով կազմված դարձվածներ՝ *Նաստունց անա* (հակառակվող, դեմ եղող), *Մըրութանց քաշկը* (շատ տգեղ անձ), *Սուսանանց օջաղը տըճոնալ* (կործանվել, ավերվել)։

5. Տարբեր մարդկանց անուններով կազմված դարձվածներ՝ *Ջաքին ուռաան* (անտեղի՝ անիմաստ արարք), *քածի Մանաս* (կանացի հատկություն ունեցող՝ կնամարդի տղամարդ), *Ըռօլէսին կանտօրը* (խառնաշփոթ՝ աղմկալից տեղ), *ծիպլի Մաստօր* (շատ նիհար՝ վտիտ մարդ), *քառ Թունի* (1. խուլ մարդ, 2. շրջապատի հանդեպ անտարբեր՝ ամեն ինչից անտեղյակ մարդ), *Ըթունին ծունը* (մարտ ամսի վերջին տեղացող ձյուն), *Բըբասանց Համբարցուն վըճենները* (չափից դուրս մեծ ոտքեր), *Պուղուսեն էծը* (կամակատար)։

Ընդհանրապես հատուկ անուն բաղադրիչով դարձվածներին բնորոշ է բաղադրիչների իմաստային ձուլվածության բարձր աստիճանը, որը հետևանք է հատուկ անվան (և ոչ միայն) վերաիմաստավորման։ Արդյունքում որպես դարձվածի բաղադրիչ՝ հատուկ անունը բովանդակային պլանում վերածվում է հասարակ անվան և ենթարկվում նույն օրինաչափություններին, ինչ որ հասարակ անու-

նր: Սակայն Ղարաբաղի բարբառում կան այնպիսի դարձվածներ, որոնցում հատուկ անունը, լինելով դարաբաղցուն հայտնի իր բնութագրական առանձնահատկություններով, որոշ չափով պահպանել է իր իմաստը, այնպես որ դարձվածի իմաստը կարելի է բխեցնել բաղադրիչների իմաստներից: Օրինակ՝ *Մռով (Մըռով)* և *Քիրս(Քիրս)* սարերի հզորությունն ու մեծությունը իրենց արտահայտությունն են գտել *Մըռավա լաշը կըկըղէ* (գարունը բացվել), *Քիրսա նըման դըլվումը վըհներ կենալ* (մեկին մեծապես հովանավորել), *կօրծը շինիլ Քիրսա սարը* (առատորեն կաթ տալ(կովերի մասին) դարձվածներում: *Քուռ (Քուռ)* և *Արաքս (Արախս)* գետերի ջրառատությունը հիմք է հանդիսացել *Քուռեն /Ըրախսեն ճուրը* (վարար, հորդ, առատ), *Քուռեն /Ըրախսեն ճիրան հինչ կըպըկա սէ* (Էսկան տարբերություն չի լինի), *Քուռը /Արախսը ածել/ քըցիլ* (ապարդյուն կորցնել, անտեղի վատնել), *Քուռեն մըկըատը* (շատ սուր,հատուկ գործիք) դարձվածների առաջացման:

Դարձվածների այս խմբին պետք է հատկացնել նաև այնպիսի անձնանուններով կազմված դարձվածները, որոնցում հանդես եկող անձնանունները իրենց ապրած ժամանակաշրջանով և կատարած գործերով հայտնի են բոլորին, ուստի և դարձվածի իմաստը ենթադրելի է բաղադրիչների իմաստներից, ինչպես՝ *Քըրիստոսա մէխեն թըխէ* (ստոր քայլ կատարել), *խաչած Քըրիստոսա ըռանգը* (դեղին), *Ըղամա տեսը* (մեծ քանակությամբ, այսինքն՝ Աղամից հետո ծնվածները), *Ըղամա վէրթի* (մարդ արարած, մահկանացու), *Ըղամեն շուրէրավը* (մերկ), *Ըղամեն վըխտանց* (շատ հնուց), *Ըպէլա կ'առնը*(խեղճ, հնազանդ), *Նօյին/Նիկալային/Նաբուն դուրվին/թըվին* (հին ժամանակներում) և այլն:

Մի շարք հատուկ անուններ, պակաս հայտնի լինելով, կազմում են այնպիսի դարձվածներ, որոնց իմաստը հենվում է հատուկ անվանը բնորոշ արտաքին կամ ներքին առանձնահատկություններից հիմնականի վրա: Օրինակ՝ *Տըզափաղ տըհոնալ* նշանակում է ուղիղ, *ձիգ կանգնել*, քանի որ *Դիզափայտ (Տըզափաղ)* լեռը Արցախում հայտնի է վեր սլացող իր ուղղաձիգ կատարով, *Թըրղէ տըհոնալ* նշանակում է 1.*վարարել, հորդանալ*, 2. *խիստ գայրանալ*, քանի որ լեռնային *Թըրղի (Թըրղէ)* գետը, գարնանային ամիսներին խիստ վարարելով, դառնում է ահարկու:

Որոշ դարձվածների իմաստային հիմքում ընկած է հատուկ անձնական հիմնական գործառույթը: Այսպես՝ *Ափյաթուն կարթիկ/կրտորել* նշանակում է *ճառարանել* (նկատի ունի հայտնի փիլիսոփա Պլատոնին), *Լօղմանիտը՝ոնալ* նշանակում է *հռչակվել*, *անվանի դառնալ* (նկատի ունի բանահյուսության մեջ հաճախ հիշատակվող միջնադարյան արաբ հայտնի ինքնուս բժիշկ Լոխմանոն, ով հռչակված էր իր հրաշագործություններով), *ամմեն մարդ Հասան չիտը՝ոնալ* նշանակում է *ամեն ինչ, ամեն ոք չէ, որից հնարավոր է ցանկալի արդյունք ստանալ* (նկատի ունի Գանձասարի կաթողիկոս, հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Եսայի Հասան Ջալալյանին):

Պատմական այս կամ այն իրադարձության հիմքի վրա են առաջացել *Ղալա շինիլ*(հիմնահատակ ավերել), *Ակուռի տը՝ոնալ* (հիմնահատակ ավերվել), *Ասկարանա պէրթունը պըլօկված* (չքավոր) դարձվածները, որոնցից առաջինում նկատի է առնվել նշանավոր *Շուշի (Ղալա)* քաղաքի ավերումը և հայ բնակչության կոտորածները 1920 թվականին, երկրորդում՝ Մասիսիլանջին գտնվող *Ակուռի* գյուղի կործանումը երկրաշարժից 1840 թվականին, իսկ երրորդում՝ մասնագիտական գրականության մեջ հիշատակվող այն հանգամանքը, որ 18-19-րդ դարերում Ասկերանի բերդի շրջակայքում ավազակները հաճախ էին կողոպտում անզեն անցորդներին:

Բաղադրիչների իմաստային ձուլվածությամբ առանձնանում են այն դարձվածները, որոնց առաջացման հիմքում ընկած են մասնավոր դեպքեր, այս կամ այն պատճառով հայտնի դարձած սովորական մարդիկ: Այս դարձվածների իմաստը հասկանալի է դառնում միայն նրանց ծագման պատմության բացահայտմամբ: Բերենք օրինակներ. *Պըլըպուղուն առքսորը* նշանակում է *անշահավետ գործ*. հայտնի զվարճախոս Պըլըպուղին ձուն առնում և վաճառում է նույն գնով, երբ հարցնում են, թե որն է շահը, ասում է. <<*Թաքի ծերքըս առքսորու մաշի ինի*>>: *Պըլըպուղուն դըզդանը շինիլ* նշանակում է *գործը ձգձգել*. երբ Մելիք-Շահնագարը պատվիրում է Պըլըպուղուն իր հյուրերի համար ճաշ եփել, զվարճախոսը կաթսան կախում է առաստաղից և գետնին կրակ վառում, իսկ հյուրերը, երկար սպասելուց ձանձրանալով, մեկնում են²: *Սօնեն հավը տը՝ոնալ*

նշանակում է *գործը ձգձգվել*։ Մարտունու շրջանի ճարտար գյուղի բնակիչ Սոսան հավը եփելը դիտմամբ ձգձգել է, որպեսզի հյուրը չսպասի³։ **Ըթունին ծունը** նշանակում է *մարտ ամսին վերջին տեղացող ձյուն*։ Մարտունու շրջանի Հերիեր գյուղի բնակիչ Աթունը մարտի 31-ին՝ մի արևոտ օր, ոտքով Ստեփանակերտից ճանապարհվել է գյուղ, սակայն, մնալով հանկարծահաս տեղացող առատ ձյան տակ, մահացել է⁴։ **Սուսանանց օջաղը տը՛ռնալ** նշանակում է *կործանվել, բնաջնջվել*։ Ըստ ավանդության՝ Ասկերանի շրջանի Ալբուլաղ գյուղի բնակչուհի Սուսանը պղծել է գյուղի սրբավայրը, որի արդյունքում Աստված զայրացել և բնաջնջել է նրա ողջ գերդաստանը⁵։ **Զաքին ուռռան** նշանակում է *անտեղի, անիմաստ արարք*։ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ Զաքին, կոլխոզի ժողովի ժամանակ քնելով և հանկարծակի արթնանալով, սկսել է բարձրաձայն <<ուռռա>> բացականչել⁶։

Ղարաբաղի բարբառի՝ հատուկ անուններով կազմված մի շարք դարձվածներ գրական և խոսակցական հայերենի համապատասխան դարձվածների համարժեքներն են⁷, որոնք գործածվում են նույն իմաստով, ինչպես՝ **Սիբիր դարկել /քրշիլ**(աքսորել), **Յէրուսաղէմ քինիլ** (վախճանվել),

2.Ա.Սարգսյան, *Արցախյան զվարճախոսություններ*, Ստեփանակերտ, 2014, էջ 18

3.Ա.Սարգսյան, *Արցախյան ավանդություններ*, Ստեփանակերտ, 2007, էջ 82

4. *նույնը*, էջ 83

5.Ա.Սարգսյան, *Արցախի բանահյուսությունը*, Երևան, 2015, էջ 250

6. *նույնը*, էջ 251

7. հմմտ. Ա.Սուքիասյան, Ս Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Երևան, 1975, Պ.Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Երևան, 2011

Սօդօւ – Գօւօր շինիլ (հիմնահատակ ավերել), **Պօղօւ-Պէտրօւ չինիլ նըստա** (անկարող լինել որևէ բան անելու), **ամպէն Հուռի** (շատ ծուլ մարդ), **Քաջ Նազար** (վախկոտ մարդ), **քր՛փչի Հասսան** (խրախճասեր մարդ) և այլն։

Հատուկ անուններով կազմված դարձվածների քննությունը հնարավորություն է տալիս ավելի խոր հասկանալու ժողովրդի կամ նրա մի հատվածի պատմությունն ու բնավորությունը, հոգեբանությունն ու փիլիսոփայությունը: Ինչքան խորը ուսումնասիրվեն դարձվածների առաջացման հիմքերը և գործածության առանձնահատկությունները, այնքան հարուստ կլինեն պատկերացումները տվյալ ժողովրդի կամ նրա ազգագրական կոնկրետ շրջանի մշակույթի մասին:

Sargsyan Armen - Phraseological Units with Proper Nouns in Karabakh Dialect. - In this article the phraseological units with proper nouns used in Karabakh dialect are analyzed. The author divides these units into two groups: units with geographical and personal names thus classifying them by subgroups. Simultaneously the bases of formation of such idioms are presented.

Саркисян Армен - Идиомы с собственными именами в Карабахском диалекте. - В этой статье рассматриваются идиомы с собственными именами в Карабахском диалекте. Автор разделяет их на две группы - идиомы составленные из географических и собственных имен классифицируя их по подгруппам. В то же время представлены основы образования таких идиом.

ԳՐԱԲԱՐԻ «ՄԻՏՔ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ

Գ. Զահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ «Միտք, մտածողություն» իմաստային խմբում, հետևելով Կ. Բաքի դասակարգմանը, ընդգրկում է 29 բառիմաստային ենթախումբ, որոնցից միայն 12-ն են բայեր կամ բայարմատներ: Այստեղ կանոնադաշտնաբեկապես այն բայերին, որոնք իմաստային և կամ կառուցվածքային տարբերություններ են դրսևորում հայերենում և հնդեվրոպական այլ լեզուներում: Ե՛վ Կ. Բաքի, և՛ Գ. Զահուկյանի առանձնացրած խմբում առաջինը *Mind (միտք)* բառն է: Անգլերենի բացատրական բառարաններում *Mind* գոյականի համար բերվում են *խելք, բանականություն* իմաստները: Անգլերենի ստուգաբանական բառարանում բերվում են *Mind* գոյականի՝ հին անգլերենի *gemynd հիշողություն, հուշ, վերհուշ*, նախագերմանական **ga-mundiz*, որից՝ գոթ. *muns միտք, մտածողություն*, *munan մտածել*, հին հյուս. *minni միտք*, որոնց համար կանխադրվում է հ.-ե. **men- մտածել, հիշել* նախաձևը. բերվում են սկր. *matih միտք*, *munih իմաստուն*, հուն. *μέμνησκα-րոտել*, *μναισκα-կանխագուշակել*, *μνομαι ցանկանալ, ձգտել, մտադրվել*, լատ. *mens միտք, հասկացողություն*, *memini հիշել*, *mentio հիշողություն*, լիտվ. *mintis միտք, իդեա*, հին եկեղեցասլավ. *mineti մտածել կարծել*, բալթ. *hijoti միտք*: Բայը՝ *to mind*, ունի *հիշել, մտապահել* իմաստները¹:

Յ. Պոկորնու բառարանում հայերենի **իմանամ** բայը նշվում է հ.-ե. **men-* նախաձևին հանգող արմատների մեջ²: Հ. Աճառյանը **իմանամ** բայի ծագման մասին խոսելիս բերում է Պ. Լագարդի, Ս. Տերվիշյանի, Ա. Մեյեի կարծիքները՝ ոչ մեկն էլ ստույգ ու վերջնական չհամարելով: Մեյեն համեմատում է հայ. **իմանամ**-ը հրգ.

¹ www.etymonline.com

² **J. Pokorny**, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, I band, Franke Verlag Bern and München, 1959, p. 727.

manom, ինչպես նաև լիտվ. i-manañ ձևերի հետ: Աճառյանը նշում է նաև Հ.Պեդերսենի կարծիքը. վերջինս հայերեն **խմանամ** բայը լատ. emō, erē ձևերի հետ ծագած է համարում հինի. *em- արմատից՝ հղելով Յ. Պոկոռնու բառարանին, սակայն այդ բառարանում *em- նախաձևին հանգող ձևերի մեջ չի նշվում հայերեն **խմանամ** բայը³: Գ. Ջահուկյանը և՛ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ, և՛ «Հայերեն ստուգաբանական բառարանում» նույնպես **խմանամ** բայը համարում է բնիկ հնդեվրոպական և գրում է, որ «հավանաբար հ.-ե. *em- *վերցնել* արմատից». նա բերում է այդ արմատի զուգահեռները հնդեվրոպական այլ լեզուներում՝ լատ. emō, հին իռլ. em *վերցնել, ընդունել*, լիտվ. imti *վերցնել*, հին սլ. imѣti *վերցնել, ունենալ*, և կանխադրում է իմաստային հետևյալ անցումները՝ *վերցնել, բռնել, ըմբռնել*: Նա, ինչպես և Աճառյանը, նշում է նաև Մեյեի կարծիքը՝ *men- *մտածել* ձևից ծագած լինելու մասին, և առարկում է՝ անբացատրելի համարելով բառակզրի **ի**-ի առկայությունը⁴: Նշված լեզուներից ոչ մեկում, որոնցում կան այդ արմատները, Ջահուկյանի նշած *վերցնել-բռնել* իմաստներն առկա են, *ըմբռնել-խմանալ* իմաստային անցումներ վկայված չեն (հմտ. լատիներենի, սլավոնական լեզուների համապատասխան արմատների իմաստները. լատիներենում emō արմատն ունի *գնել, ձեռք բերել* իմաստները⁵, սլավոնական լեզուներում иметь, имѣти, имамъ արմատները նույնպես ունեն *վերցնել, ունենալ* իմաստները)⁶:

Կարծում ենք, որ **խմանալ** բայի ծագման վերաբերյալ ավելի հավանական է Ա. Մեյեի և Յ. Պոկոռնու (հավանաբար հետևելով Մեյեին) կարծիքները. նրանք այն հանգեցնում են հ.-ե. *men- նախաձևին: Յ. Պոկոռնու բառարանում բերվում են *men- նախաձևից ծագած և իմաստային մերձավորություն ունեցող արմատներ հ.-ե.

³ **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, ԵՊՀ հրատ., հ. 2, Ե., 1973, էջ 241 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁴ **Գ.Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, «Ասողիկ» հրատ., Ե., 2010, էջ 285 (այսուհետև՝ ՋԱԲ):

⁵ **И.Х.Дворецкий**, *Латинско-русский словарь*, М., Изд-во «Русский язык», 1976, с. 368.

⁶ **М.Фасмер**, *Этимологический словарь русского языка*, М., Изд-во «Прогресс», т. 2, 1986, с. 129.

գրեթե բոլոր լեզուներից. դա պետք է համարել բնական, քանի որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք *իմանալը* և *գիտենալն* են, չէին կարող գոյություն չունենալ լեզուներում: Հ.-ե. *men- արմատից են հին հնդկ. *mánayatē* *մտածում է*, ավեստ. *manah* *բանականություն, միտք*, հուն. *μαομαι* *ցանկանալ, ձգտել, մտադրվել*, լատ. *memini* *հիշել, մտաբերել*, հին իռլ. *do-moiniur* *մտածել, հավատալ*, գոթ. *man, *munum* *մտածել, համարել*, լիտվ. *menù* *մտածել*, հին եկսլավ. *мѣнѣти* *մտածել*, նույն արմատից՝ *po-mѣnѣti* *հիշել, մտաբերել*, թոխ. *U mnu* *մտածել*, թոխ. *F maŪu* *ցանկանալ, պահանջել*: Պոկոռնին հայերենի *i-manam*-ի համար կանխադրում է *menā-mi ձևը, իսկ լիտվ. *iš-monis*-ը համարում է արմատի լիաձայն, ձայնդարձի բարձր աստիճանով կազմված արմատ:⁷

Հայերենի **իմանալ** բայի իմաստների մեջ և՛ Նոր Հայկազեան բառարանում, և՛ Աճառյանի արմատական բառարանում, և՛ Ջահուկյանի ստուգաբանական բառարանում բերվում են *հասկանալ, մտքով ըմբռնել, խորհրդածել, մտածել, համարել, ենթադրել, զգալ* իմաստները, որոնք համահունչ են հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված իմաստներին: **Իմանալ** բայի բառասկզբի *ի*-ի առկայությունը, որը հիմք է տալիս Ջահուկյանին չընդունելու Ա. Մեյերի կարծիքը, կարելի է բացատրել հայերենին հատուկ օրինաչափությամբ. հիշենք հայերենի **ինն** բառի բառասկզբի *ի*-ն, որը զուգահեռ ունի միայն հունարենում, իսկ հ.-ե. մյուս լեզուներում այն չկա: Ֆ. Վինդիշմանը հայերենի **ինն** բառի *ի*-ն և հունարենի *ἐννέα* բառի *ἐ*-ն համարում է հավելված⁸: Եթե այս բառում կարող էր հավելված լինել, ինչու չի կարելի ենթադրել, որ այս դեպքում ևս *ի*-ն հավելվածային ձայնավոր է:

Հաջորդ բառը և՛ Բաքի, և՛ Ջահուկյանի բառացանկում **think/մտածել**-ն է, որի համար Բաքը նշում է երկու իմաստ. մեկը՝ *խորհել, խորհրդածել* (17.13), մյուսը՝ *կարծել, ենթադրել* (17.14)⁹: Think անգլերենում միայն բայական իմաստ ունի, իսկ *միտք* գոյականական իմաստի համար գործածվում է *thought* բառը: Գ. Ջահուկ-

⁷ Յ. Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 726-728:

⁸ ՀԱԲ, հ. 2, էջ 244:

⁹ C.D.Buck, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, The University of Chicago Press, Chicago-London, 1949, p. 12002-12006.

յանը 17.13 խմբում դնում է **զմտաւ ածել** բայը, իսկ 17.14-ում՝ **ունիմ առ՝ համարել**: **Զմտաւ ածել**-ը, բացի *խորհել, խոկալ, իմանալ* իմաստներից, ունի նաև *կարծել, համարել* նշանակությունները: Հայերենում *մտածել* նշանակությամբ բայերը հիմնականում հարադրություններ են, իսկ **միտ** բառով կազմված են հարադրություններ՝ *միտ առնել, միտ դնել, միտս դնել, ի մտի դնել, ի միտ առնուլ, ի միտս զալ, զմտաւ ածել, ընդ միտ մտանել, ի մտաց անկանել* և այլն, որոնք արտահայտում են իմաստային տարբեր նրբերանգներ¹⁰: Հետաքրքիր է, որ անգլերենում ևս think բառը, տարբեր նախդիրներով գործածվելով, արտահայտում է այնպիսի իմաստներ, որ շատ մոտ են հայերեն հարադրությունների նշանակություններին. օրինակ՝ **to call/bring something to mind** – հայ. *մտաբերել*, **to make up one's mind (about something)** – հայ. *ի մտի դնել հաստատել, վճռել*: Այսինքն՝ հ.-ե. լեզուներում այս արմատը իմաստային նմանատիպ զարգացումներ է ունեցել:

Մյուս բայը, որին ուզում ենք անդրադառնալ, understand/**հասկանալ** բայն է: Գ. Ջահուկյանը այս ենթախմբում, բացի **հասկանալ, ըմբռնել, իմանալ** բայերից, նշում է նաև **մանել** բայը, որը ինքն է ստուգաբանել կապելով հ.-ե. *men- արմատին, չնայած ավելացնում է նաև «եթե այն **մանել** բայի փոխաբերական գործածությունը չէ»¹¹: Աճառյանը **մանել** բայի **մանի** ձևն է միայն նշում՝ գրելով «խօսող» և ավելացնում է, որ կա միայն Երեմիա Մեղրեցու բառարանում¹²: **Մանել** բայը Ս.Մալխասեանցը բացատրում է *հասկանալ* և համարում է ծածկալեզվում գործածվող բառ¹³: **Մանել** բայը իբրև **հասկանալ** բայի հոմանիշ բերված է նաև Ա.Սուքիասյանի հոմանիշների բառարանում¹⁴: Եթե ճիշտ է Գ. Ջահուկյանի՝ **մանել** բայի հ.-ե. *men- նախաձևին հանգելու ենթադրությունը, կարելի է եզրակացնել, որ

¹⁰ Տե՛ս *Նոր բառգիրք հայկագեան լեզուի*, Վենետիկ, 1987, հ. 2, էջ 281-282 (այսուհետև՝ ՆԲՀ):

¹¹ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 278 (այսուհետև՝ ՀԼՊ):

¹² ՀԱԲ, հ.3, էջ 253:

¹³ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, 1945, հ. 3, էջ 251:

¹⁴ Ա.Սուքիասյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967, էջ 370:

*men- արմատը հայերենում արտացոլվել է և՛ **մանել**, և՛ **իմանալ** տարբերակներով:

Հետաքրքիր է հայերեն **մոռանալ** բայի՝ հնդեվրոպական լեզուներում եղած համապատասխանությունները: Կ. Բաքի բառարանում 17.32 համարը forget բայն է: Հ. Աճառյանը **մոռանալ** բային նվիրված բառահոդվածում գրում է, որ ստուգաբանել են Ս. Տերվիշյանը և Ս. Բուզգեն միմյանցից անկախ՝ համարելով բնիկ հնդեվրոպական արմատ՝ հ.-ե. *mer-, *mer-s- նախաձիգ¹⁵: Յ. Պոկոռնու բառարանում բերվում են այդ արմատի՝ հնդեվրոպական մյուս լեզուների՝ հին հնդկերենի, գոթերենի, հին վերին գերմաներենի, հին ֆրիզերենի, լիտվերենի համապատասխանությունները: Չկան անգլերենի՝ այդ արմատից կազմված բառեր¹⁶: Forget-ը անգլերենի ստուգաբանական բառարանում բացատրվում է *մտքում որևէ բան վերականգնել ձախողելը, մտաբերելու ուժ չունենալ, չկարողանալ հիշել*. բայի ծագման մասին նույն բառարանում ասվում է, որ այն կազմված է for- *հեռու, հակառակ* և *gietan< get *բռնել* արմատներից. վերջինի համար վերականգնում են *ghend, *ghod- նախաձևերը (*վերցնել, բռնել* իմաստներով), որից կազմվում է un-get, և ունի *հիշողությունից՝ մտքից կորցնել՝ հանել* իմաստը: Բերվում են հին սաքսոներեն fargetan, դանիերեն vergeten, գերմաներեն vergessen՝ բոլորն էլ *մոռանալ* իմաստով¹⁷:

Հնդեվրոպական այլ լեզուներում *մոռանալ* իմաստն արտահայտվում է այլ արմատներից կազմված բառերով. օրինակ՝ Յ. Պոկոռնու բառարանում բերվում է *lā-նախաձիգ հունարենի λήθω, դոր. λάθω ձևերը՝ *զաղտնի լինել, մոռանալ* իմաստով: Նույն արմատից է լատիներենի lateō, ēre *թաքնվել, պահվել* իմաստով¹⁸: Իսկ հ.-ե. *mer-s-*mor-s- արմատի *(s)mer – *հիշել* արմատից են հին հնդկ. smārati *հիշել*, լատ. memoria *հիշողություն*, memor *հիշող, լավ հիշողություն ունեցող*: Պոկոռնին այս նախաձևի տակ նշում է նաև հայ. **մոքմոք** բառը՝ կրկնությամբ կազմված, և բերում է նաև հունարենի **μερμηρίζω, μέρμερος** *ծանր, դժվար, տանջալի, անտանելի* իմաստով,

¹⁵ ՀԱԲ, հ.3, էջ 346:

¹⁶ Յ. Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 737-738:

¹⁷ www.etymoline.com

¹⁸ Յ. Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 651:

որոնք և՛ կազմությամբ, և՛ իմաստով մոտ են հայերենի **մորմոք** բառին¹⁹: Հ.Աճառյանը բերում է այս արմատի մասին Պոկոռնու ստուգաբանությունը, բայց ինքը որևէ կարծիք չի հայտնում²⁰: Գ.Ջահուկյանը **մորմոք** բառի ծագման վերաբերյալ հղում է Պոկոռնուն գրելով, որ նա այդ բառը հանգեցնում է հ.-ե.**mer-մտածել, հիշել հոգալ* նախաձին, իսկ ինքը կապում է **mer- տրորել, շփել* նախաձևին²¹: Պետք է նշել, որ Ջահուկյանի նշած **mer-* արմատից հ.-ե. մյուս լեզուներում վկայված չեն նմանատիպ իմաստով գուցահեռներ. հմստ. հին հնդկ. *mṛāti -տրորել, շփել, մանրացնել*, հուն. *μαραίνω* թուլանալ, լատ. *հավանգ, սանդ, morbus հիվանդություն*, հին իսլ. *merja խփել*, սերբ. *mŕva փշոտ*, անգլասաքս. *mearo նուրբ, փխրուն*, նորվեգ. *moren, maren փտած, մզլած*, իտեթ. *marriattari մանրացրած, կտորների վերածած*²²: Կարծում ենք, որ *մորմոք* իմաստը ավելի հավանական է կապել Յ.Պոկոռնու նշած *մտածել, հոգալ* իմաստով նախաձևին:

Գ.Ջահուկյանի ցանկում է 17.39 հայերեն **լուծանել (լոյծ)** բառն է, Կ. Բաքը 17.39 նշում է *solve*: Հ.Աճառյանը **լոյծ** արմատը *հալուկ, հեղկային, հալիլուկ, ջրջրկոտ, կակուղ* իմաստներով, որից **լուծանել քանդել, արձակել**, համարում է բնիկ բառ՝ հ.-ե.**leu-* կամ **lou-* արմատից, «աճել է մեր մեջ –*g^e/o* մասնիկով»: Այնուհետև նշում է հունարենի *λύω՝ լուծել, արձակել հալեցնել* իմաստներով, սանսկ. *lunāti կտրել, հեռացնել*, *luná- կտրած, lavi մանգաղ*, լատ. *luō վճարել, re-luō լուծել, so-lvo լուծել, բաժանել*, *luēs լուծույթ, անմաքուր հեղուկ*²³: Գ.Ջահուկյանը **լոյծ** բառը կապում է հնդեվրոպական **leug'-կոտրել, խախտել* արմատին՝ համեմատելով հին հնդկ. *rujāti կոտրում է, ջարդում է*, հին անգլ. *to-lūcan քայքայել, կործանել*, լիտվ. *laučti կոտրել*²⁴:

Հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարաններում (և՛ Պոկոռնու, և Ստարոստինի, և Ուտտլինսի) **leu-* արմատի

¹⁹ Թ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 969:

²⁰ ՀԱԲ, հ. 3, էջ 349-350:

²¹ ԼՀՊ, էջ 239:

²² Թ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 735-736:

²³ ՀԱԲ, հ.2, էջ 293:

²⁴ ՀԱԲ, էջ 300:

համար բերվում է բաժանել (делить) իմաստը²⁵: Յ.Պոկոռնու բառարանում *leu- նախաձևից ծագած արմատների մեջ չի նշվում հայերեն լոյծ-ը, բայց Հ.Աճառյանի՝ հ.-ե. մյուս լեզուներից բերած ձևերը իրենց իմաստներով այդ բառահոդվածում առկա են²⁶: Անգլերենի ստուգաբանական բառարանում ևս solve բառի համար բերվում է նախահնդեվրոպական *se-lu-, որի se-ն *s(w)e- անդրադարձ դերանունն է, իսկ lu-ն հանգում է հ.-ե. *leu- *կորցնել, բաժանել, մասնատել* արմատին²⁷: Ո՛չ Պոկոռնին, ո՛չ Ջահուկյանը և Աճառյանը որևէ օրինակ չեն բերում սլավոնական լեզուներից: Այնինչ Մ.Ֆասմերի բառարանում ուսերեն лучить, лучу բառերը ունեն *բաժանել, ասանձնացնել* իմաստները. նա բերում է նաև հին սլավ. лжчити, հուն. χωρίζεις, բուլղ. лъ'ча *ասանձին, անջատ*, սերբախորվաթ. лýчити, лýчим *ասանձնացնել*, սլովեն., չեխ. ločiti, սլովակ. lúčiť', *բաժանել, ասանձնացնել* իմաստներով՝ բոլորն էլ նախապատկերեն *ločiti-ից²⁸: Կարծում ենք, որ այս արմատը առկա է նաև սլավոնական լեզուներում, բայց գործածական են նախածանցավոր отлучить, разлучить ձևերը: Նախապատկերենի ločiti *ասանձնացնել, անջատել* իմաստով կա նաև սլավոնական լեզուների ստուգաբանական բառարանում, որտեղ բերվում են ոչ միայն հին սլավոներենի և եկեղեցասլավոներենի, այլև սլավոնական լեզուների բարբառների՝ այդ բառի ձևերը²⁹:

Симонян Нектар - Глаголы семантической группы „Разум, Мышление“, древнеармянского языка.- В статье рассматриваются глаголы *իմանալ, գմտալ ածել, մոռանալ, լոյծ (լուծանել)* древнеармянского языка, приводятся соответствующие корни и синонимы других индоевропейских языков. Выявляются семантические различия

²⁵ www.proto-indo-european.ru

²⁶ Յ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 681:

²⁷ www.etymonline.com

²⁸ М.Фасмер, *Этимологический словарь русского языка*, М., Изд-во «Прогресс», т. 2 , 1986, с. 536-537.

²⁹ *Этимологический словарь славянских языков. праславянский лексический фонд*, М., «Наука», 1990, Выпуск 16, с.132-133.

и сходства, происходившие в процессе исторического развития этих языков, делаются этимологические уточнения.

Simonyan Nektar - Verbs of the Semantic Group of “Mind, Thought” of Old Armenian. - The verbs expressing mind and thought իմաստի, գիտաւ ածել, մոռաւսալ, լոյծ (*լուծաւել*) are investigated in the article, their parallels in other Indo-European languages, their semantic changes obtained during the historic development of languages have been represented. The investigation reveals that the verbs expressing these concepts have undergone such changes during the historic development of languages that witness about the presence of typological universalities in these languages. Besides etymological precisions have been done.

ՎԱՂ ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈՆԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ (XIV դ.)

Քոնայի ունիթորների ստեղծած գրականությունը, ինչպես հայտնի է, սպասարկում էր կրոնական քարոզչությանը, ձևավորում մշակութային կախում՝ այն ծառայեցնելու քաղաքական նպատակի, սակայն այդ գրականությունը նաև աստվածաբանական բովանդակության կրող էր և հաղորդակցեց ժամանակի սխոլաստիկ մտածողությանը՝ «քրիստոնեական արիստոտելիզմի» գաղափարներին: Այդ երկերի շնորհիվ արևմտյան փիլիսոփայական միտքը տևական դադարից հետո վերստին շարադրվեց, մեկնաբանվեց հայերենով՝ գրաբարն օժտելով կրոնափիլիսոփայական հսկայական նյութով: Հասկացական այդպիսի ծավալի և բարդության պարագայում սպասելի էր, որ հեղինակները որոնեին արտահայտման նորանոր ձևեր, դիմեին լեզվի ներքին հնարավորություններին կամ օտար միջոցների՝ լատիներենի կաղապարներին, հատկապես որ թարգմանական նախկին փորձն ավանդել էր բառացիության եղանակը՝ ձևավորելով հունաբանությունների շերտ: XIV դ. լեզվավիճակի գնահատականները հակասական են. նախ համարվել է, որ լատիներենի ներգործությամբ գրաբարի «աղավաղումը» ընդգրկել է XIV-XIX դդ. ընթացքը, թեև դրա վաղ դրսևորումը որևէ օրինակով չի վկայվել¹, ապա մերժվել է այդ տեսակետը՝ առարկությամբ, թե ունիթորական գրականության լեզուն ժամանակի սովորական գրաբարն էր²: Հետագայում երբ շրջանառվեց Հովի. Քոնեցու քերականության ամբողջական տեքստը, լատինատիպ քերականության սկիզբ համարվեց XIV դարը և լատինաբան հայերենի սկզբնավորումը նկա-

¹ Տե՛ս **Գ. Զարբանալեան**, *Պատմություն հայերեն դպրութեանց*, Բ. Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 49:

² Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, Ե., 1951, էջ 310, նաև՝ **Գ. Զահուկյան**, *Գրաբարի քերականության պատմություն*, Ե., 1974, էջ 7, **Լ. Խաչերեան**, *Եսայի Նչեցին և Գլաձորի համալսարանը (1280-1340թթ.)*, Լոս Անձելես, 1988, էջ 365-66, նև:

րագրվեց առավելապես այդ տվյալների հղումով³։ Մակայն քերականական ուսմունքի այն միավորները, որոնք զուտ կադապարային նշանակումներ են և մատենագրական որևէ նախադեպ չունեն (օր.՝ իք, էք, օք մասնիկները՝ որպես սեռային ցուցիչներ), իրական չեն լեզվի համակարգում, և կարծում ենք՝ չեն կարող դիտվել իբրև գրաբարի տարրեր՝ թեկուզ ներմուծված և խորթ։ Լեզվավիճակը իրապես բնորոշելու համար հարկավոր են նաև մատենագրական տվյալներ։

Մեր ուսումնասիրության ընտրանքում հետևյալ երկերն են. «Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի»⁴. ընդգրկում է Թովմա Աքվինացու «Summa Theologiae» աշխատության երրորդ մասի (բաղկացած 90 խնդիրներից՝ «quaestiones») 1-ից 59-ը խնդիրները, Մ. Ուդենրիյնի կազմած քննական բնագիրը⁵. ամփոփում է հիշյալ աշխատության 3, 59 (հոդվ. 5, 6), 60-71, 77 խնդիրները, «Համառոտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան»⁶, որը Ալբերտուս Մեծի «Compendium theologiae veritatis» երկի ամբողջական թարգմանությունն է։

Այս երկերի թարգմանական սկզբունքների ընդհանուր քննությունը պարզում է ներհակ պատկեր։ Նախ նկատելի է, որ փորձ է արվել լատիներեն տեքստը արտացոլել ճշգրիտ և ուղղակի՝ չխախտելով բառերի նախնական կազմությունն ու շարահյուսական կարգը, բայց միաժամանակ բառեր են կազմվել ու հարաբերվել նախօրինակ ձևերից անկախ. որոշ շեղումներ էլ թույլ են տրվել ոճական նկատառումով, օր. կրկնվող «homo non peccasset» նախադասությունը թարգմանված է երկձև՝ «ոչ էր մեղանչեալ մարդոյն», «մարդն

³ Տե՛ս **Յովհ. Քոնեցի**, *Յաղագս քերականին*, Ներածություն, Ե., 1977, էջ 141, **Վ. Համբարձումյան**, *Լատինաբան հայերենի պատմություն*, Ե., 2010, էջ 109-110։

⁴ Տե՛ս ձեռ. 68, *Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի* (6ա-276ա), թրգմ.՝ Պետրոս Արագոնացի, Հակոբ Քոնեցի, 1345թ., հմմտ.՝ Thomas Aquinas, Summa Theologiae, tertia pars, quaestio 1-59։

⁵ Տե՛ս **M. A. van den Oudenrijn**, *Eine alte Armenische übersetzung der tertia pars der Theologischen Summa des. Hl. Thomas von Aquin*, Francke Verlag Bern, 1955, հմմտ.՝ **Thomas Aquinas**, Summa Theologiae, tertia pars, quaestio 60-71, 77։

⁶ Տե՛ս ձեռ. 66, *Համառոտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան* (3ա-120ա), ԺԴ դ., հմմտ.՝ **Albertus Magnus**, Opera omnia, Compendium theologiae veritatis, volumen 13, p. 1-148, ed. Jammy, Lyon, 1651։

ոչ էր մեղանշեալ» (հմմտ. ՄՄ68,9ա, STh,III,q.1,a.3,arg1*) ևն: Բացի այդ՝ թարգմանությունները երբեմն նաև թերի են (բացակա հատվածներ. հմմտ.՝ ՄՄ66, 8բ, 14ա, CThV, 7, 15 ևն). 68 ձեռագրի որոշ հատվածներ, որոնք վերաբերում են կաթոլիկ դավանանքի առանցքային սկզբունքներից մեկին՝ Քրիստոսի երկաբնակ էությանը, կրճատված են, օր.՝ «(filius Dei) est homo» բառերը (20ա, հմմտ. q.2,a.8,co.), սրբագրված է մեկնական մի տող, որտեղ Քրիստոսի երկաբնակ լինելը ներկայացված է ոչ հաստատապես, այլ իբրև քննելի խնդիր. «Երևի թե ի Քրիստոս ոչ իցէ միայն մի գոլ» (92ա), շարունակությունը՝ «այլ երկու», բացակայում է, հմմտ. «Videtur quod in Christo non sit tantum unum esse, sed duo». (q.17,a.2,arg.1): Նկատված հատվածները, հազվադեպ լինելով, չեն աղճատում աշխատության ընդհանուր բովանդակությունը, բայց հաշվի առնելով անտեսված բառերի կարևորությունը՝ բացառված չէ, որ միջամտությունը եղել է միտումնավոր:

Թարգմանական երկերի նորաբանությունները, որ ստեղծվել են բնօրինակ ձևերին համարժեք, ուղղակիորեն կրում են լատիներենի բառային կաղապարների ազդեցությունը: Դրանց քննությամբ կարելի է պարզել բառակերտման գործուն եղանակները, ընդօրինակված և ինքնատիպ կազմությունների հարաբերակցությունը, որոշել լատինատիպ կաղապարների կենսունակությունը և ընդգրկումը:

1. Նորաբանություններ*: Քննվող երկերում նոր բառեր գլխավորապես կերտվել են նախածանցների կցումով. դրանց գերակշիռ մասը նույնությամբ արտացոլում է նախօրինակների կառուցվածքը՝ շեղվելով գրաբարի բուն ձևերից: Նախածանցավոր նորաբանությունները, լատիներեն բառերի հետևողությամբ, ամփոփում են շարահյուսական հարաբերություններ՝ նախդիր-գոյական կամ մակ-

* Համառոտագրություններ. STh- Summa Theologiae, q.-quaeastio, a.-articulus, arg.-argumentum, co.-commentarius, s.c.- sed contra, pr.- prooemium, CThV- Compendium theologiae veritatis, Oud.- Oudenrijn.

* Բառերը նորակազմ են համարված հետևյալ բառարանների համեմատությամբ. **Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկագեան լեզուի, Վենետիկ, 1836-37, Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:**

բայ-բայ, որոնք կանխում են բայիմաստի մասնավորեցումը անջատ լրացումների միջոցով («համաթագաւորել (ՄՄ68,270ա). *conregnare* (q.58,a.1,co.)», փխ.՝ միասին թագաւորել, «նախապահանջել (ՄՄ68,22բ). *praeexigere* (q.2,a.11,ad2)», փխ.՝ նախապէս պահանջել նն), մինչդեռ այն բնորոշ է դասական հայերենին (հմմտ. «Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ ասէ, Յամենայն ծառոց որ է ի դրախտիդ՝ *ուտելով կերփցես...*» (Ծննդ.Բ,16-17), «*Praecepitque ei dicens ex omni ligno paradisi comedere de ligno...*» (Gn.2,16-17)): Մրան գումարվում է նաև այն, որ ընդօրինակված նախածանցը երբեմն արդյունավետ միավոր չէ, այլ միայն հավելադիր մասնիկ, որը բառին չի հաղորդում լրացուցիչ իմաստ. «մակյաւելեալ (ՄՄ68,14բ). *adjuncta* (q.2,a.2,co.)», «համասիրելի (ՄՄ66,8ա). *dilectus* (CThV,7)» նն:

Նորակազմությունների նախածանցները, ըստ կենսունակության, հետևյալն են.

հաւ/- (=con-). «համանստել (ՄՄ68,265բ). *considerare* (q.57,a.1, ad2)», «համայաւելումն (ՄՄ68,23բ). *coappositio* (q.3,a.1,ad1)», «համազանգուածութիւն (ՄՄ68,9ա). *commensuratio* (q.2,a.1,co.)», «համաքարշեմ (ՄՄ68,75ա). *contraho* (q.14,a.3,arg.1)» նն,

նախ/- (=prae-, ante-). «նախաճանաչեմ (ՄՄ68,28բ). *praescio* (q.3,a.8,co.)», «նախենթադրեմ (Oud.,200). *praesuppono* (q.77,a.4,ad3)», «նախապահպանեմ (Oud.,104). *praeservo* (q.61,a.1,co.)», «նախակալութիւն (ՄՄ68,113ա). *antecessio* (q.24,a.1,ad3)» նն:

արտ/- (=re-, trans-, abs-). «արտալուծումն (Oud.,143). *resolutio* (q.66,a.4,ad2)», «արտայեղով (ՄՄ68,124ա). *redundare* (q.27,a.3,co.)», «արտաքայլել (ՄՄ66,52բ). *transcendere* (CThV,66)», «արտաքարշեմ (ՄՄ68,25ա). *abstraho* (q.3,a.3,ad3)» նն:

ներ/- (=in-). «ներկեցել (Oud.,197. *inhaerere* (q.77,a.2,co.)», «ներսահել (ՄՄ66,13բ). *illabor* (CThV,14)», «ներպարարեմ (ՄՄ68,65ա). *include* (q.11,a.3,ad1)» նն,

տար/- (=de-, se-). «տարաչափական (Oud.,195). *dimensiva* (q.77,pr.)», «տարաչափութիւն (ՄՄ68,62բ). *dimensio* (q.11,a.1,arg.2)», «տարազատեալ (ՄՄ68,63բ). *separatus* (q.10,a.3,ad3)» նն,

ան/- (=in-). «անխելամուտ (ՄՄ66,37ա). *indocilis* (CThV,46)», «անչափակցութիւն (ՄՄ66,10բ). *improportionabilitas* (CThV,10)» նն,

անդր/- (=re-, e-). «անդրախոսումն (ՄՄ66,22ա). *recessus*

(CThV,26)», «անդրաշրջեալ (ՄՄ66,36ա). *versa* (CThV,46)» են,
վեր- (=de-, *super-*). «վերաւարտումն (ՄՄ68,13ա). *determinatio*
 (q.2,a.1,s.c.)», «վերնագոյացական (ՄՄ66,3բ). *supersubstantialis*
 (CThV,2)» են, նաև՝ *puig-* (=de-). «բացեազում (ՄՄ68,105ա). *desum*
 (q.21,a.3,co.)», *շար-* (=con-). «շարայօղեմ (ՄՄ66,53բ). *compono*
 (CThV,68)»: Ածանցները երբեմն փոխարինվել են նախադրությամբ և
 մակբայով. «յառաջադիտեալ (ՄՄ66,53ա). *praestitutus* (CThV,66)»,
 «յանդիմանկացուցանել (ՄՄ68,259բ). *praeberere* (q.55,a.3,ad4)»,
 «յառաջգամ (ՄՄ68,032բ). *procedo* (q.4,a.5,arg.2)»:

Ընդօրինակումներին զուգահեռ լատիներենի նախածանցա-
 վոր կադապարները նաև մասամբ կամ լրիվ անտեսվել են. դրա մի
 դրսևորումը նախածանցների տարարժեքությունն է՝ «համամար-
 տություն (ՄՄ68,96բ). *impugnatio* (q.18,a.6,arg.3)», նկատելի են նաև
 ինքնուրույն նախածանցման դեպքեր. «համանշանակություն
 (Oud.,102). *significatio* (q.60,a.7,ad3)», «շարագուզել (ՄՄ68,6բ). *jungere*
 (q.1,a.1,arg.2)», «ներպարառություն (ՄՄ66,10բ). *ambitus* (CThV,10)»:
 Որոշ բառեր թարգմանվել են ըստ իմաստի. «ներխուզություն
 (ՄՄ68,65ա). *collatio* (q.11,a.3,arg.2)», «արտանիւթական (Oud.,197).
mathematica (q.77,a.2,arg.4)». հավանաբար նկատի է առնվել «*metaphys-*
hys»-ը (մետա/արտա, ֆիզիկա/նյութ, հմմտ. բնագանցություն), որի
 մտահայեցողական բնույթը հատուկ է մաթեմատիկային⁷:

Վերջածանցավոր նորաբանությունները հիմնականում կազմ-
 ված են *-ություն*, *-ական* ածանցներով՝ հետևյալ համարժեքությամբ.

-ություն՝ *-io*, *-tio*, *-tas*, *-tia*. «առնողություն (ՄՄ68,229բ). *actio*
 (q.48,a.6,co.)», «կրկնակություն (Oud.,100). *ingeminatio* (q.60,a.6,ad1)»,
 «վտառաւորություն (Oud.,203). *porositas* (q.77,a.7,ad1)», «մտաթափու-
 թին (Oud.,174). *amentia* (q.68,a.12,co.)»,

-ական՝ *-ivus*, *-alis*, *-ilis*, *-osus*. «կրողական (ՄՄ68,150ա).
passivus (q.32,a.4,co.)», «ընկերակցական (Oud.,133). *socialis*
 (q.65,a.1,co.)», «դիրական (Oud.,167). *facilis* (q.68,a.5,ad2)», «սան-
 ձարձակական (ՄՄ66,52բ). *impetuosus* (CThV,66)»:

Այլ վերջածանցներով կազմությունները վկայված են եզակի
 կամ հազվադեպ օրինակներով. «կարծոտ (ՄՄ66,37բ). *suspiciosus*.»

⁷ Տե՛ս Ի. Գանտ, *Ջուտ բանականության քննադատություն*, Ե., 2006, էջ 42:

(CThV,47)», «մեղուշագոյն (ՄՄ66,37ա). rubens (CThV,47)», «գիտնակ (ՄՄ68,197ա). sciens (q.43,a.1,arg.2)», «ամենեւեանեալ (ՄՄ66,8բ). beatus (CThV,8)», «գործիաւորեալ (ՄՄ68,155ա). organizatus (q.34,a.2, ad3)» նն:

Այս տիպի բառերը ստեղծվել են ինչպես բնագրի կադապարների հետևողությամբ, այնպես էլ ազատ թարգմանությամբ, ըստ այդմ կարելի է տարբերակել.

ա) կառուցվածքային պատճենումներ. «յիմարախօսութիւն (ՄՄ66,55բ). stultiloquentia (CThV,69)», «շրջախոսութիւն (ՄՄ66,14բ). circumlocutio (CThV,16)», «վիճակընկեցութիւն (ՄՄ66,55բ). Sortilegium (CThV,70)», «սրբարարութիւն (ՄՄ68,125ա). sanctificatio (q.27,a.4,ad1)», «հաւասարամտութիւն (ՄՄ68,188ա). aequanimitas (q.40,a.2,ad1)», «դրողական (Oud.,115). positivus (q.62,a.6,ad3)», «զօրեղական (ՄՄ66,10ա). virtualis (CThV,10)» նն,

բ) կիսապատճենումներ, երբ բառի կառուցվածքը պահպանված է, բայց բաղադրիչների դասավորությունը կամ հարաբերության եղանակը նույնական չէ. «դիւրավարժութիւն (Oud.,167). facillie exercitium (q.68,a.5,ad2)», «վիճակակցութիւն (Oud.,104). consortio (q.61,a.1,s.c.)», «interpolatio (q.60,a.8,arg.3)» բառը թարգմանված է «միջադրութիւն (Oud.,102)», որը հավանաբար շփոթի հետևանք է, նկատի է առնվել «interpositio»-ի իմաստը,

գ) իմաստային պատճենումներ. «ձեռնախաղութիւն (ՄՄ66, 55բ). lucta (CThV,70)», «վարձարժանաւորական (ՄՄ68,155բ). Meritorius (q.34,a.3,arg2)», «արշաւական գիտութիւն (ՄՄ68,65ա). discursiva scientia (q.11,a.3,arg.1)», «հեղացուցանողական (Oud.,114). ultimus (q.62,a.6,ad3)», «փոխարինական (ՄՄ68,232ա). satisfactoria (q.49,a.3, ad2)»:

Ինչպես հունաբան հայերենում և ուշ լատինաբանությունների շրջանում⁸, Քոնայի թարգմանական երկերում ևս պատճենումների հետևանքով հաճախացել է մակբայակերտ ածանցումը: Մակբայներ կերտվել են հիմքերի և ածանցների զանազան զուգորդումներով, գերակշռում են ածանցավոր ածականների մակբայացման օրինակ-

⁸ Տե՛ս Գ. Մուրադյան, *Հունաբանությունները դասական հայերենում*, Ե., 2010, էջ 79-82, Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 223, 230-31 նն:

ները՝ *-yku* ածանցով. «առնողականապես (ՄՄ68,149բ). active (q.32,a.4,arg.1)», «բազմառականապես (ՄՄ66,14ա). pluraliter (CThV,15)», «թշուառականապես (ՄՄ66,40բ). miserabiliter (CThV,50)», «կրողականապես (ՄՄ68,150բ). passive (q.32,a.4,ad1)», «բացասականապես (ՄՄ66,10ա). negative (CThV,10)», «փոխաբերականապես (ՄՄ66,14ա). translativ (CThV,15)» են, սակավադեպ են բայական հիմքով մակբայները. «գովասանապես (ՄՄ68,239բ). laudabiliter (q.51,a.2,co.)», «զարմանալապես (ՄՄ68,29ա). mirabiliter (q.1,a.1, arg.1)», «յատկացելապես (ՄՄ66,14ա) appropriate (CThV,15)»:

-paw ածանցով կերտված բառերը չեն հանգում կայուն կաղապարների. «նիւթաբար (ՄՄ68,148բ). materialiter (q.32,a.2,ad3)», «տեղականաբար (ՄՄ66,27բ). localiter (CThV,34)», «եզականաբար (ՄՄ66,14ա). singulariter (CThV,15)», «տեսակաբար (ՄՄ68,236ա). formaliter» (q.50,a.2,ad3), «չափակցաբար (Oud.,182). proportionaliter (q.69,a.7,ad2)», անսովոր է կապի հիմքով մակբայի օրնակը. «միջաբար (ՄՄ66,6ա). mediate (CThV,5)»:

-opkēn ածանցով նոր բառերը սակավադեպ են. մի քանիսի կազմությունը օրինաչափ է. «նախազաղափարօրէն (ՄՄ66,6ա). exemplariter (CThV,5)», «պակասօրէն (ՄՄ66,10ա). privative (CThV,10)», հազվադեպ կաղապարի օրինակ է՝ «սպասաւորօրէն (ՄՄ68,51բ). ministerialiter (q.8,a.1,ad1)», հետևյալ բառերը կազմված են ածանցների անսովոր զուգորդումով⁹. «կարծողօրէն (ՄՄ68,34ա). putative (q.2,a.5,arg.1)», «երևակականօրէն (ՄՄ68,208ա). imaginarie (q.45,a.3,arg.2)»:

Բառաբարդմամբ ստեղծված նորաբանությունները գրեթե անխտիր շեղվում են նախօրինակ ձևերից. դրանք որևէ բաղադրիչի համընկնումով կիսապատճենումներ են կամ ազատ թարգմանություններ. «չափակցիմ (ՄՄ68,65ա). proportionatur (q.11,a.4,arg.1)», «վայրակոր (ՄՄ66,37բ). globatus (CThV,47)», «բարակաշուրթն (ՄՄ66,37բ). tenuia (CThV,47)», «բազմանգամ (Oud.,101). frequenter (q.60,a.7,arg.3)», «փոքրախելք (ՄՄ66,37ա). parvitas (CThV,46)», «մաքրափայլեմ (ՄՄ66,10ա). emundo (CThV,10)», «դիւրախոռով (ՄՄ66,37բ). iracundus (CThV,47)», «շատակոլ (ՄՄ66,37ա). vorax

⁹ Տե՛ս Լ. Հովսեփյան, *Գրաբարի բառակազմությունը*, Ե., 1987, էջ 229:

(CThV,46)», «վարձարժանաւորեմ (ՄՄ68,155բ). mereo (q.34,a.3,arg.3)», «աղուէսաբարոյ (ՄՄ66,37բ). versutus (CThV,47)»: Բաղադրիչների կցման եղանակը ևս կարող է միանման չլինել. բարդ բառեր ստեղծվել են նաև բնագրի բառակապակցությունների ամփոփումով. «արձակաքայլ (ՄՄ66,37բ). longus passus (CThV,47)», «միւսակողմն (ՄՄ68,84բ). alia pars (q.16,a.1,ad3)», «ստուարածեռն (ՄՄ66,37բ). crasse manus (CThV,47)», «թխակն (ՄՄ66,37ա). oculus niger (CThV, 47)», «կամարայունք (ՄՄ66,37ա), supercilia arcuata (CThV,46)», «նեղաճակատ (ՄՄ66,37ա). frons angusta (CThV,46)», «դժուրահալեաց (ՄՄ66,37ա). oculi acriter (CThV,47)»:

Թարգմանություններում գործածված են նաև լատիներեն բառերի տառադարձումներ՝ փիլիսոփայական, կրոնական նշանակությամբ. «էսենսիա (ՄՄ66,9ա). essentia (CThV,9)», «սոււսքանսիա (ն.տ.). substantia», «սոււսիսթէնսիա (ն.տ.). subsistentia», «փէրսոնա (ն.տ.). persona», «ապսթրաքթումն (ՄՄ68,20ա). abstractio (q.2,a.8,co.)» և այլն: Նույնպիսի մի շարք բառեր փոխառություն են հունարենից. «դիալէտիկական հաւաքաբանութիւն (ՄՄ68,58բ). dialecticus syllogismus (q.9,a.3,ad2)», «հիօսթազիս (ՄՄ68,17ա). hypostasis (q.2,a.5, arg.1)», «մէթաֆիզիքա (Oud.,102). metaphys (q.60,a.8,arg.2)», «ուզիա (ՄՄ66,9ա). usia (CThV,9)», «ուզիօզիս (ն.տ.). usiosis», «փրօզօփօն (ն.տ.). prosopon», «անթրօպոս (ՄՄ66,36ա). anthropos. (CThV,46)», «դիաբօլոս (ՄՄ66,27բ). diabolus (CThV,34)» և այլն:

2. Քերականական հատկանիշներ: Ձևաբանական համակարգը հիմնականում գերծ է արհեստական կազմություններից, նկատելի են անկանոն կամ հետդասական որոշ ձևեր, որոնք սակայն հետևողականորեն չեն կիրառվել:

Լատիներենի նմանությամբ կրավորական սեռը գրեթե միշտ տարբերակված է, գործածված են կրավորաձև խոնարհման, իր վերջավորությամբ, վերլուծական կազմությամբ սովորական ձևեր. «փոխադրեցի (ՄՄ68,7ա). transferatur (q.1,a.1,arg.4)», «միաւորին (ՄՄ68,6բ). jungatur (q.1,a.1,arg.1)», «տեսանիւր (ՄՄ68,8բ). videretur» (q.1,a.2,co.)», «գովեալ լինի» (ՄՄ68,8բ). commendatur» (q.1,a.2,co.)» ևն, սեռը տարբերակված է նաև, եթե լատիներենի բայերը կրավորաբանակերպ են (verba deponentia). «sequeretur (q.1,a.2,co.). հետևեցի (ՄՄ68,8ա)» ևն: Մինչդեռ անսովոր են ա լծ. անորոշ դերբայի

կրավորական ձևերը. «գիտիլ (ՄՄ68,67բ). sciri (q.12,a.1,co.)», որը վկայված է նաև իբրև հունաբանության օրինակ¹⁰, «իմանիլ (ՄՄ68, 8ա). considerari (q.1,a.2,co.)», որը կրավորականի տարբերակ է՝ նշված ՆՀԲ-ում, «ստանիլ (ՄՄ68,67բ). acquiri (q.12,a.1,ad1)»: Մակայն լծորդության այս անցումը ևս կայուն չէ. ա լծ. անորոշ դերբայը կրավորականի իմաստով գործածվել է նաև առանց ձևային տարբերակման, օր.՝ «մարմնանալ (ՄՄ68,8ա). incarnari (q.1,a.2,co.)» նն:

Հունաբան *ն* նախդիրը կիրառված է հազվադեպ, ընդ որում *ի* նախդիրին զուգահեռ՝ իբրև նրա ձևային տարբերակ (այս նախդիրների ոճական տարբերությունը հետագայում ձևակերպել է Միս. Սեբաստացին¹¹). «Այլ արդ՝ շնորհն է *ի յէութիւն* հոգոյն որպէս *նենթակաւում*, որպէս ասացեալ եղև *ի յերկրորդում* մասին:» (Oud.,118), «Sed gratia est *in essentia* animae sicut *in subiecto*, ut *in secunda* parte dictum est.» (q.63,a.4,arg1): Նույնպես նաև *առանց* նախադրությանը զուգադրված է արհեստական *թարց* տարբերակը. «իմանամք զաստուած բարի *առանց* որակութեան, մեծ *թարց* քանակութեան...» (ՄՄ66,10ա), «intelligimus Dem *sine* qualitate bonum, *sine* quantitate magnum...» (CThV,10):

Բնագրերին բառացի հետևելու արդյունքում թարգմանական երկեր են թափանցել նաև լատինատիպ զանազան շարահյուսական հարաբերություններ: Այդպիսիք են.

ա) Շարադասության պատճենում: Լատիներեն կանոնավոր շարադասությամբ նախադասության մի եզրում ենթական է, մյուսում՝ ստորոգյալը. այս երկբևեռ դրությունը թարգմանություններում կայունացած չէ, հնարավոր է դրա ն՝ նմանակում՝ ստորոգյալի վերջադաս գործածությամբ, և փոփոխում՝ ըստ հայերենին հատուկ շարադասության. «Ապա ուրեմն երևի և անյարմար, զի ընդ փոքրիկ մարմնոյ զերեխայականն արձակողի զձայն *թափցէ*:» (ՄՄ68,7ա), «Ergo videtur inconueniens quod intra corpusculum vagientis infantiae *lateat*.» (q.1,a.1,arg.4), բայց՝ «Այլ արդ Քրիստոս *ոչ փորձեաց* զա-

¹⁰ Տե՛ս Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 119:

¹¹ Տե՛ս Միս. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազան սեռի, Վենետիկ, 1730, էջ 248:

մենայնս:» (ՄՄ68,67ա), «Sed Christus non omnia *expertus est.*» (զ.11,ա.1,արգ.1) նն:

բ) Լատինատիպ դերբայական դարձվածներ: 1) Հայցական հոլովն անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo). այս դարձվածը լատիներենին հատուկ երկանդամ կապակցություն է, որի տրամաբանական ենթական հայցականով դրված գոյական է կամ դերանուն, իսկ տրամաբանական ստորոգյալը՝ անորոշ դերբայ: Մա հաճախադեպ կառույց է, օրինակները բազմաթիվ են. «...աշակերտքն զարհուրեալք և երկուցեալք համարէին *ոգի* ինչ *տեսանել*, և ոչ ճշմարիտ մարմին...» (ՄՄ68,34ա), «discipuli, conturbati et conterriti, putabant se *spiritum videre*, et non verum corpus...» (զ.5,ա.1,co.), «Որք ամենայն ցուցանեն *ունել* նմա *ճշմարիտ հոգի*» (ՄՄ68,035b), «Quae quidem ita demonstrant eum *veram animam habuisse.*» (զ.5,ա.3,co.), «Յորոց առաջինն է ի բանէ մարդկային բնութեան, առ որ վերաբերի *ունել ճշմարիտ մարմին:*» (ՄՄ68,34ա), «Quarum prima est ex ratione humanae naturae, ad quam pertinet *verum corpus habere.*» (զ.5,ա.1,co.), «Այլ Քրիստոս եկն առնել փոխարէն վասն մեղաց *կրել զպատիժ* զգայութեանն ի խաչին...» (ՄՄ68,10ա), «Sed Christus venit pro satisfactione peccatorum *poenam sensus pati* in cruce...» (զ.1,ա.4,արգ.2) նն:

2) Ուղղական հոլովն անորոշ դերբայի հետ (nominativus cum infinitivo). եթե նախորդ դարձվածում ներգործական սեռի բայն էր խնդրառում հայցականով գոյական և անորոշ դերբայ, ապա այս կառույցում բայասեռը փոխվում է կրավորականի, և ենթական դրվում է ուղղական հոլովով: Մա ևս թարգմանություններում հաճախ կիրառվող կառույց է. «որպէս ի յայնմանէ եկեր, ննջեաց և վաստակեցաւ, *ցուցանի* նմա *ունել ճշմարիտ մարդկային մարմին*» (ՄՄ68,035b), «...sicut ex hoc quod comedit et dormivit et fatigatus est, *demonstratur habuisse verum corpus humanum.*» (զ.5,ա.3,co.), «... ըստ այսմ *երևի զոչ ճշմարտութիւն* իմն միաւորութեան որդոյն աստծոյ առ մարդկայինս բնութիւն:» (ՄՄ68,29բ), «Et ita *videtur esse quaedam congruentia* unionis filii Dei ad humanam naturam.» (զ.4,ա.1,s.c.), «Դարձեալ՝ անջատեալ քանակութիւնն ի յենթակէն, *երևի զոչ* արտանիւթական *քանակութիւն*, որ ոչ է ենթակա զգալի որակութեանց:» (Oud.,197), «Praeterea, quantitas a subiecto separata *videtur esse*

quantitas mathematica, quae non est subiectum qualitatum sensibilium.» (q.77,a.2,arg.4) նն:

զ) Օժանդակ բայի կամ ստորոցյալի սղումով նախադասություններ: Այս երևույթը արձանագրվել է նաև հունաբան հայերենում¹². «Քրիստոս, *քստ այնմ որ մարդ*, է իփօսթագիս կամ անձն:» (ՄՄ68,83բ), «Christus, *secundum quod homo*, est hypostasis vel persona.» (q.16բ.), «Ոչինչ մերձաւորագոյն քան զաստուած, և ոչինչ անըմբռնելագոյն:» (ՄՄ66,10ա), «Nihil Deo praesentius, et nihil incomprehensibilis.» (CThV,10) նն:

դ) Խնդրառության պատճենումներ: «Կայանալ» + ներգոյական հոլովով խնդիր. «Իսկ փոփոխումն *կայանայ ի յաննելն* և *ի կրելն:*» (ՄՄ68,20ա), «Mutatio autem *consistit in actione et passione.*» (q.2,a.8, co.), «Իսկ եթէ ազահութիւնն *կայանայ ի ստանալն*, այս հանդիպի երեք կերպիւ:» (ՄՄ66,53բ), «Si autem auaritia *consistit in acquirendo*, hoc est tripliciter.» (CThV,68), «յանդիմանել» + ներգոյական հոլովով խնդիր. «*յանդիմանել* զայլս *ի յայն*, զոր և ինքն զնոյնն առնէ:» (ՄՄ66,55բ), «*reprehendere proximum in aliquot quod ipse facis.*» (CThV,69), հմմտ.՝ «*Յանդիմանեաց* արրամ զաբիմելէք *վասն ջրհորոյն:*» (ՆՀԲ, հտ.2, 325):

ե) Հոլովական ձևերի պատճենումներ: 1) Մասնական սեռական (genetivus partitivus). լատիներենում կիրառվում է նաև ածականի համեմատական աստիճանների հետ. «Մարդկային բնութիւնն ո՛չ էր *փոքրագոյն պատուոյ* ի Քրիստոս քան ի մեզ:» (ՄՄ68,14բ), «Natura humana non est *minoris dignitatis* in Christo quam in nobis.» (q.2,a.2,arg.1), դասական հայերենում մասնականությունն արտահայտվում է բացառական հոլովով¹³: 2) Բնութագրական սեռական (genetivus objectivus). լատիներենում հաճախ հարադրված է esse բային. «Դարձեալ *զարգանալն է անկատարին*, զի կատարեալն ոչ առնէ զաւելումն:» (ՄՄ68,67բ), «Praeterea, *proficere est imperfecti*, quia perfectum additionem non recipit.» (q.12,a.2,arg.2), բնութագրական

¹² Տե՛ս Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 193:

¹³ Տե՛ս Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 135:

սեռականը գործածվել է դասական հայերենում՝ փոխառվելով հունարենից¹⁴:

Այսպիսով, թարգմանության ներհակ եղանակները ձևավորել են լեզվական նույնպիսի պատկեր. մեջբերված օրինակները ցույց են տալիս, որ լատինտապ կաղապարներին հատուկ չէ կայուն կիրառությունը, դրանք պարտադիր չեն, ի հայտ են գալիս ըստ պատեհի՝ բառացի թարգմանության հետևանքով, որ հաստատում է նաև ձևաբանական համակարգի անխաթար դրությունը: Ուրեմն եթե բացակայում է միտումնավորությունը, ապա Քոնայի թարգմանական երկերի լատինաբանությունները իրենց ստեղծման հանգամանքով և նպատակով չեն առնչվում 17-18-րդ դդ. ծավալված արհեստական կանոնավորմանը, երբ գրաբարը մշակելու գիտակցված միջոց էր լատիներենի օրինակը:

Sirunyan Tigran - The Early Latinisms in the Translated Treaties of Qrna Center. - The article researches the language of some translated treaties by friars of Qrna School (Thomas Aquinas' *Summa Theologia*, Chapter III, Questions 1-71, 77, Albert the Great's *Compendium of the Theological Verity*). The essential attributes of verbal formations and syntactical foreign molds are indicated in comparison with the original texts. It is demonstrated that early Latinisms were not formed intentionally, but as a result of exact transmission of Latin concepts and syntactical forms.

Сирунян Тигран- Ранние латинизмы в переводных трудах центра Крна.- В статье исследован язык ряда переводных произведений монахов ордена Крны («Сумма Теологии» Фомы Аквинского, ч. III, пр. 1-71, 77, «Краткая сумма богословской Истины» Альберта Великого). Путем сравнения с подлинниками указаны основные признаки словообразования и чужеродные формы синтаксиса, выявлено, что ранние латинизмы создавались не преднамеренно, а вследствие установки на точную передачу на древнеармянском языке латинских понятий и синтаксических конструкций.

¹⁴ Տե՛ս Գ. Խաչատրյան, *Գրաբարի միակազմ նախադասությունները*, Ե., 2002, էջ 113:

Մուքիասյան Հենրիետա (Հայաստան,
Երևանի պետական բժշկական համալսարան)

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Յուրաքանչյուր մասնագիտությանը հատուկ հասկացություններն արտահայտվում են համապատասխան տերմիններով, որոնք տվյալ մասնագիտության հասկացությունների համակարգի և տվյալ լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մասն են, ենթարկվում են այդ լեզվի բառակազմական ու քերականական կանոններին:

Միաժամանակ տերմինային ամեն մի համակարգ կապված է զարգացող գիտության, մշակույթի և հասարակական կյանքի տվյալ բնագավառի հասկացությունների համակարգի հետ, որն էլ թելադրում է գիտատեխնիկական առաջադիմությանը համընթաց տարբեր լեզուներում պարբերաբար ստեղծել նոր տերմիններ, որը կոչվում է տերմինաշինություն (եզրաշինություն): Տարբեր լեզուների տերմինները կամ դրանց ամբողջությունը կազմող տերմինաբանությունը գոյանում է տարբեր աղբյուրներից: Եվրոպական լեզուներում գլխավոր աղբյուր եղել են հունարենն ու լատիներենը, որոնց հիման վրա ստեղծվել են տերմինացված բառեր ու բառակապակցություններ: Մերձավոր Արևելքի մի շարք լեզուների համար նույն դերն են կատարել արաբերեն բառերը: Ինչ խոսք, որ այդ լեզուների տերմինաբանության մի մասը կազմվել է նաև ազգային լեզվամիջոցներով: Ինչ վերաբերում է հայոց լեզվի տերմինաբանությանը, ապա այն սկզբից նեթ ունեցել է առավելապես ազգային բնույթ:

Հայերեն տերմիններ սկսել են ստեղծվել 5-րդ դարից, երբ սկզբնավորվեց օտար բառերն ու բառակապակցությունները հայերեն համարժեքով արտահայտելու ավանդույթը: Այսօր ևս տերմինները կազմվում են հայերենի բառակազմական նույն օրենքներով՝ բառաբարդումով և ածանցումով, ինչպես նաև հին, Տմեռած՝ բառերին նոր իմաստ հաղորդելով, բարբառային բառերի իմաստային եզրավորմամբ, նոր բառակապակցություններ կազմելով, նաև փոխառություններով: Այս հանգամանքը առավել բարդ ու պատասխանատու խնդիրներ է դնում տերմինաշինությամբ զբաղվողի առաջ, երբ հարկ է լինում գտնել ժամանակակից հայերենի բառա-

կազմական հնարավորություններով ստեղծված հաջող ձևեր, որոնք խիստ օգտակար են ոչ միայն բժշկի համար, այլև հայերենի գործածության առումով՝ հիվանդի:

Դեռևս չընթացած ոչ հեռու անցյալում ռուսերենի վնասակար ազդեցությունը հայերենի լեզվամտածողության վրա, այժմ նոր խնդիրների առջև ենք կանգնել. օտար լեզուների, հատկապես անգլերենի բացասական ճնշող ազդեցությունը հայերենի վրա: Անգամ սերնդափոխությունը չթեթևացրեց ստեղծված վիճակը, ավելին՝ ներկայիս սերունդը հայտնվել է առավել խառնաշփոթ վիճակում: Գիտական գրականությունը ռուսերենից և անգլերենից թարգմանվում է բազմաթիվ պատճենված քերականական, ոճական, մտածողական, բառային տիպական սխալներով: Բժշկագիտությունն ուսումնասիրող նոր սերունդը, հարկադրված լինելով օգտվելու ներկայումս գործող մասնագիտական գրականությունից՝ հոդվածներից, դասագրքերից, ձեռնարկներից, մեխանիկորեն յուրացնում է դրանցում առկա լեզվական թերությունները: Ներկայումս Հայաստանում չի գործում տերմինաբանական խորհուրդը, իսկ գործող լեզվի պետական տեսչությունը վարչականորեն իրավասու չէ տերմինաբանության և լեզվի կանոնարկման հարցերում, որի հետևանքով էլ լեզվաքաղաքականությունը դուրս է մնացել պետական հսկողությունից. գիտության բոլոր՝ առողջապահության, իրավագիտության, տեխնիկական գիտությունների և այլ բնագավառներում մշակված չէ մասնագիտական լեզուն, տերմինները մեծ մասամբ հայացվում են անհաստական, ոչ գիտական մոտեցմամբ, ներքին զգացողությամբ: Առողջապահության բնագավառում շատ դեպքերում առկա է մերժողական, խուսափողական վերաբերմունք բժշկագիտական լեզվի և տերմինների հայացման գործընթացի նկատմամբ: Լիարժեքորեն չտիրապետելով մայրենիին՝ բժիշկ-մասնագետը բառարանից օգտվելիս ընտրում է օտար տերմինի՝ առաջադրված հայերեն համարժեքներից ոչ համապատասխան, նույնիսկ սխալ տարբերակը: Ներկայումս ստեղծված բարձիթողի իրավիճակում տերմինների հայերեն համարժեքների կանոնարկումը պետք է լուծվի բժիշկ-մասնագետների և լեզվաբանների համագործակցությամբ և նպատակային ջանքերով: Որքանով մեզ հայտնի է,

գիտության որևէ բնագավառի մասնագիտական լեզուն լիարժեք ուսումնասիրված և մշակված չէ:

Փորձ է արվում կանոնավորելու և մշակելու առողջապահության ոլորտի լեզուն և տերմինները, նախատեսվում է ստեղծել առողջապահության լեզվի և բժշկագիտական տերմինաբանության կանոնարկման կենտրոն, որի իրականացման ուղիներն են՝

- ի մի բերել առողջապահության բնագավառի բոլոր հասկացությունները, տերմինները, անվանումները, դարձվածքները՝ իրենց տարբերակներով, հոմանիշներով և լատիներեն, անգլերեն համարժեքներով, սահմանումներով, ստուգաբանությամբ,

- կատարել դրանց ճշգրտում:

Անհրաժեշտ է միասնական գիտական հիմք ստեղծել բժշկագիտական բացատրական, թարգմանական, թեմատիկ, հանրագիտական բնույթի բառարանների, տպագիր և համակարգչային շտեմարանների, գիտահանրամատչելի, ճանաչողական, ուսումնական և հանրագիտական ձեռնարկների, դասագրքերի, տեղեկատուների, բժշկական ուղղագրական, բացատրական, ստուգաբանական բառարանների և ճյուղային տերմինաբանների համար: Պետք է ուշադրություն դարձնել մասնագիտական ձեռնարկների, բժշկական դասագրքերի փորձաքննությանը և խմբագրման աշխատանքներին: Անհրաժեշտ է կարգավորել նաև առողջապահության բնագավառի հիմնարկներում՝ հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում բժշկական փաստթղթերում, ձևաթղթերում, պաշտոնաթղթերում օտար տերմինների հայերեն համարժեքների ճիշտ կիրառությունը: Հատկապես մեծ են դժվարությունները մասնագիտական տերմինաբանության բնագավառում: Այստեղ գերիշխում են ռուսերենից փոխառյալ հունալատիներեն անվանումները, արմատները, ածանցները: Դրանց փոքր մասն է կիրառվում հայերեն համարժեքներով, որոնք հաճախ մնում են իբրև օտար ձևերի գրքային հոմանիշներ՝ չգործածվելով հատկապես բանավոր խոսքում:

Հիմնականում թարգմանվում են առողջապահության այն տերմինները, որոնք ռուսերենում նույնպես թարգմանված են, այսինքն՝ կազմված են ռուսերեն արմատներով ու ածանցներով: Ռու-

սերեն այդպիսի տերմիններից քչերն են գործածվում հայերեն բանավոր խոսքում:

Այսպիսով, մեր նպատակն է բժշկական օտար տերմինների հայերեն համարժեքները սահմանել՝ առաջնորդվելով տերմինաբանական կոմիտեի՝ 1986թ. հունիսի նիստի որոշման սկզբունքներով [Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006]:

Տերմինները կանոնարկելիս պետք է առաջնորդվել տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված որոշումներով /էջ 25/, ըստ որի՝

- տերմինակազմական տարբերակների հնարավորության դեպքում առավելություն տալ այն տարբերակին, որը, մնացած պայմանների հավասարության դեպքում, ավելի կարճ է և դյուրահունչ. ընդհանրապես խուսափել խիստ երկար, բազմաբաղադրիչ և դժվար արտասանելի տերմինների ստեղծումից, կազմված լինի հայերենում ընդունված ու հասկանալի բաղադրիչներով.

հակաձին /անտիգեն/
ախտածագում /պաթոգենեզ/
ախտորոշում /դիագնոստիկա/
վերորովայն /էպիգաստր/
աճառանյութ /խոնդրին/
թարախաբորբ /ֆլեգմոնա/
նյարդուռուցք /նևրոմա/
մկանահատում /միոտոմիա/
թափածակում /պերֆորացիա/
հականեխում /անտիսեպտիկա/ և այլն,

- խուսափել հայոց լեզվի բառակազմական կանոններից շեղվող, բառերի կամայական ստուգաբանության վրա հիմնվող, խիստ արհեստական և անհասկանալի տերմինների ստեղծումից և տերմինային տարրերի կամայական կրճատումից.

ուրուլոգիա, *ոչ թե միզաբանություն*
ուրուլոգ, *ոչ թե միզաբան*

գինեկոլոգիա, *ոչ թե կնախտաբանություն*
 գինեկոլոգ, *ոչ թե կնախտաբան*
 իմպոտենտ, *ոչ թե շուշտանդամ, անսեռունակ*
 ինտիմա, *ոչ թե սերտոնկ*
 իրիդերմիա, *ոչ թե անծիածանություն*
 լեթարգիա, *ոչ թե մահաքուն, մահաթմբիր, կեղծամահ*
 խոլեստերին, *ոչ թե մաղձաճարպ*
 կատամնեզ, *ոչ թե ապահիշություն*
 կոմա, *ոչ թե քնափություն*
 նեկրոֆիլիա, *ոչ թե դիասիրություն*
 վեներոլոգիա, *ոչ թե վեներախտաբանություն*
 վեներոլոգ, *ոչ թե վեներախտաբան*
 անէսթեզիա, *ոչ թե թմրաքուն և այլն,*

• խստորեն հետևել արդեն գործող հայերեն տերմինների քերականական և բառակազմական ճիշտ կիրառմանը՝ ըստ հայերենի թեքման, խոնարհման, ածանցման, բառաբարդման, ուղղագրական կանոնների.

կազմում – կազմման /*ոչ թե կազման/*
 սեղմում – սեղմման /*ոչ թե սեղման/*
 հողահատում – հողահատման
 աղիք – աղիքի – աղիքներ /*ոչ թե աղի-աղու-աղիներ/*
 մակարդուկ – մակարդուկի – մակարդուկով
 ոսկր – ոսկրեր
 ազդր – ազդրեր
 մկան – մկաններ /*ոչ թե մկանունք/*
 մակաբույծ – մակաբույծներ
 սպի – սպիներ /*ոչ թե սպիեր/*
 բուժքույր – բուժքույրեր
 ող-ողի-ողեր /*ոչ թե ողնի-ողներ/* և այլն:

Բժշկագիտական օտար տերմինների հայրենացման գործընթացում առաջնորդվում ենք հետևյալ նկատառումներով.

1. Կիրառել բժշկության մեջ ընդունված, մշակված և տարածված տերմիններ, **որոնք արդեն ամրագրված են և լայնորեն գործածվում են բժշկագիտական խոսքում:**

Դրանցից են՝

աբսցես – թարախակույտ

անեմիա – սակավարյունություն

անտիտոքսին – հակաթոյն

զանգլիոն – հանգույց

դիուրեզ – միզարտադրություն, օրամեզ

թորաքս – կրծքավանդակ

էպիդեմիա – համաճարակ

հեմոռոյ – թույք

ինյեկցիա – ներարկում

միոկարդ – սրտամկան

սիմպտոմ – ախտանիշ

սինդրոմ – համախտանիշ

տոմոգրաֆիա – շերտագրություն

տոնզիլա – նշիկ, նշագեղձ

տոպոգրաֆիա – տեղագրություն

տրանսպլանտացիա – փոխպատվաստում

ցեֆալգիա – գլխացավ

արթրիտ – հոդաբորբ

գլինգլիտ - լնդաբորբ

դերմատիտ – մաշկաբորբ

լարինգիտ – կոկորդաբորբ

հեպատիտ – լյարդաբորբ

նեֆրիտ – երիկամաբորբ

նևրիտ – նյարդաբորբ

օստիտ – ոսկրաբորբ

օտիտ - ականջաբորբ

ֆարինգիտ – ըմպանաբորբ

նևրոմա - նյարդուռուցք

նեֆրոմա – երիկամուռուցք

արթրոզ – հոդախտ

դերմատոզ – մաշկախտ

միկոզ – սնկախտ
օստեոզ – ոսկրախտ և այլն:

2. Տերմիններ, որոնք չունեն հայերեն համարժեքներ, սակայն լեզվից դուրս մնալ չեն կարող, ուստի **պետք է գործածել օտար տերմինը.**

բրոնխ
օրգան
օրգանիզմ
քրմոսոմ
սիմպաթիկ
ստրեպտոկոկ
ստաֆիլակոկ
հիգիենա
հիպնոս
կետգուտ
պրոպետիկա և այլն:

3. Տերմիններ, որոնք չունեն հայերեն համարժեքներ, սակայն իմաստն **արտահայտվում է բառակապակցությամբ կամ բացատրությամբ,** ուստի ըստ նպատակահարմարության՝ **կա՛մ գործածվում է օտար տերմինը, կա՛մ տրվում է բացատրությամբ.**

աորտա – մայր զարկերակ
ապենդիցիտ – որդանման ելունի բորբոքում
բացիլ – ցուպիկաձև մանրէ
դենդրիտ – նյարդային բջջի ճյուղավորված ելուստ
դեսմուրգիա – ուսմունք վիրակապության մասին
դիսֆագիա – կլլման խանգարում
դիսֆունկցիա – ֆունկցիայի խանգարում
դոռոդենիտ – տասներկումատնյա աղիքի բորբոքում
էյֆորիա – հիվանդագին բարձր տրամադրություն
էնդոկրանիում – ուղեղի կարծր պատյանի շերտը
էրիթրոցիտ – արյան կարմիր բջիջ
հիպոֆիզ – ստորին մակուղեղ

մեկոնիում – նորածնի առաջին կղանքը
 պապուլա – մաշկային փոքր կարծր հանգույց
 պիոնեֆրիտ – երիկամի թարախաբորբ
 պլազմա – էրիթրոցիտներից և լեյկոցիտներից գտված արյուն
 տրիպանոզ – միջատներով փոխանցվող հիվանդություն
 սկոլիոզ – ողնաշարի կռկման ածուում
 հեմոգլոբին – արյան գնդիկները կարմիր ներկող հաստատուն
 բյուրեղանյութ կոլապս – սրտի գործունեության հանկարծակի
 անկում և այլն:

4. Բժշկագիտական բնագավառի հասկացություններ, գործիք-
 ներ, բուժամիջոցներ, որոնք **ունեն իրենց հայերեն անվա-
 նումները** և ներկայումս լայնորեն գործածվում են.

անալիզ - հետազոտություն
 դիագնոստիկա – ախտորոշում
 բալզամ – բալասան
 բինտ – վիրափայթեթ
 դեֆեկտ – արատ
 դիետա – սննդակարգ
 դոզա – դեղաչափ, դեղաքանակ, չափաքանակ
 դոպինգ – խթանիչ
 զոնդ - զննաձող
 սպազմ – կծկանք
 տրավմա – վնասվածք
 մագոլ – կոշտուկ
 լանցետ – նշտար
 գրելկա – ջեռակ
 կոմպրես – թրջոց
 ամպուլա – սրվակ
 էմալ – արծն
 պլոմբ – ատամնալիցք
 կարոնկա – ատամնապսակ
 ինդիկատոր – ցուցիչ
 ինդուկցիա – մակածում
 կապսուլա – պատիճ

ռեցեպտ – դեղատոմս
մառլա – թանգիվ
պաստա – մածուկ
վակցինացիա – պատվաստում
պիպետկա – կաթոցիկ
բյուլետեն – հիվանդաթերթիկ
սիրոպ – օշարակ
տյուբիկ – պարկուճ
տարլետկա – դեղահաբ և այլն:

5. Հջգրտել օտար տերմինների, տերմինատարրերի, գիտաբաների ուղղագրությունը՝ ըստ հայերենի ուղղագրական կանոնների:

Տառադարձելիս օտար տերմինը ենթարկվում է հայոց լեզվի ուղղագրության կանոններին, այսինքն՝ հայերենում բառամիջում գրվում է *օ* և *է*, եթե առանձին արմատի սկզբնատառ է. նույն կանոնը գործում է օտար տերմինը տառադարձելիս:

6. Ըստ հայերենի ուղղագրական կանոնների՝ պահպանել *հայերեն տերմինների, հասկացությունների ուղղագրությունը*.

ախտադարձ
ակնաբույժ
ակնակապիճ
ադելիթ
այրվածք
անութ
անօդակյաց
ատամնափուտ
ատամնածկթում
գաղտուն
դեղապատիճ
դողերոցք
եռվորյակ
եվստախյան
թանգիվ

թրջոց
 խռչակ
 կաթված
 կծվածք
 կմախք
 հեղձուկ
 հոգեվարք
 մածուկ
 շաղկապենի
 ործկալ
 պատիճ
 պառկելախոց
 ջրալույծ
 սրտխառնուք
 փայծաղ
 փտախտ
 քսուք
 օրական
 ամսական
 մանրէ
 փտամանրէ
 տասներկումատնյա
 12-մատնյա
 երեքտոկոսանոց
 3%-անոց և այլն:

Կարևորում ենք բժիշկ և լեզվաբան-մասնագետների սերտ համագործակցությունը տերմինաստեղծման աշխատանքներում: Որքան էլ տերմինը մենիմաստ է, սակայն աղբյուր լեզուներից թարգմանելիս առաջանում են նույն տերմինի իմաստային տարբերակներ, և լեզվաբան-մասնագետը բժշկական տեսանկյունից չի կարող դրանց միջև մասնագիտական բառիմաստի ճիշտ, ստույգ և դիպուկ ընտրություն կատարել: Ճիշտ այդպես էլ բժիշկ-մասնագետները բավարար չափով չեն տիրապետում հայերենի բառակազմական օրինաչափություններին ու կանոններին, որ կարողա-

նան առաջադրել *ճշգրիտ* տարբերակներ: Լեզվաբան-մասնագետի խնդիրն է տերմինը չծանրաբեռնել այլ իմաստներով:

Այսպես՝ **մետաստազ** տերմինը մասնագիտական բառարաններում տրված է *փոխակայում* կամ *վարատում* համարժեքներով: Հունարեն -meta նախածանցը ցույց է տալիս՝

- ինչ-որ բանից հետո
- ինչ-որ բանի շարունակություն
- ինչ-որ բաների միջև

stasis հունարենից նշանակում է վիճակ, կանգ, դրություն: Ստորև ներկայացնում ենք քննարկման ենթակա և նախընտրելի տարբերակների մի քանի օրինակներ, որոնք առաջադրել են բժիշկ-մասնագետները՝

1. փոխակայում
2. տարակայում
3. ուռուցքաճյուղ
4. ճյուղարձակում
5. ճյուղայնություն
6. ճյուղատվություն
7. ճյուղասփռություն
8. ներսողանք
9. տարասողանք
10. տարասողաճ

Էրոզիա տերմինը՝ **erosus**, լատիներենից նշանակում է՝ *ներսից կրծել, մաշել, քայքայել*: Ախտաբանորեն բնորոշվում է որպես լորձաթաղանթի կամ վերնամաշկի մակերեսային դեֆեկտ /թերություն, պակասություն/: Նույն կերպ առաջարկվել է **երոզիա** տերմինի հայերեն համարժեքի մի քանի տարբերակներ՝

1. սաղրախոց
2. մակերեսային խոց
3. քերծվածք
4. լորձենախախտ
5. լորձախախտ
6. լորձախոց
7. խոցուկ
8. խոցոտվածք

9. բորբախոց
10. լփոփ
11. քերծունք
12. լորձափոսիկ
13. խրամաբորբ
14. փոսորակ
15. արատափոսուկ
16. լորձահարույց

Հետևություն. բժիշկ և լեզվաբան-մասնագետների համագործակցությունը անհրաժեշտ, անխուսափելի և օգտակար է:

Sukiasyan Henrietta – Systematization of Medical Terms in the Armenian Language. - At present, Armenian as an official language hasn't gained jurisdiction both in the social-economic and scientific fields. The medical language and medical terms are not systematized particularly in the sphere of medical science; public health language is full of stylistic, spelling, grammar, orthoepic any many other mistakes improper to Armenia linguistic thinking.

The aim of the article is to suggest systematization of medical terms in the modern Armenian language in accordance with the principles of Terminological Issue Board session decision made in June, 1986 (terminological and spelling directory, Yerevan, 2006).

Сукиасян Генриэта – Систематизирование медицинской терминологии в армянском языке. - В настоящее время армянский, как государственный язык, пока не закрепил свои позиции как в социально-экономической, так и в научной сферах. В частности, в области медицины пока еще не систематизирован язык медицины и медицинской терминологии, язык здравоохранения засорен многочисленными и разнообразными стилистическими, грамматическими, орфографическими и орфоэпическими ошибками, которые не соответствуют армянскому языковому мышлению.

Цель статьи, руководствуясь решением терминологического комитета от 1986 г. (Терминологический и орфографический справочник, 2006 г.), систематизировать медицинскую терминологию в современном армянском языке.

Տիոյան Սուսաննա (Հայաստան,
Վ.Բրյուսովի անվ. ԵՊԼՀ)
Թոխմախյան Ռոբերտ (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀՈԼՈՎ և ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍ

Հոլովների թվի, դրանց պատմական զարգացման, արտահայտման ձևերին ու իմաստներին նվիրված գիտական բազմաթիվ ու բազմաբնույթ մեծ ու փոքր աշխատություններ կան: Մեր ուսումնասիրությունը մի փորձ է դիտարկել հոլով – հոլովական իմաստ միասնությունը՝ արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրությամբ, համադրել երկու վիճակներում հոլովական համակարգերի առանձնահատկությունները՝ մասնավորապես դրանցում **ը** հնչույթի կատարած դերը:

Հոլովական իմաստ ունեն անխտիր բոլոր լեզուները. Հոլովներ՝ ոչ բոլորը:

Հոլով ասելով հասկանում են որևէ բառի (հիմնականում գոյականի) թեքված տարբերակը, որն ունի քերականական արժեք և չի փոխում բառի իմաստը: Եթե լեզվում չկա բառի փոփոխված ձև, չկա և հոլով (այս համատեքստում հոգնակիակերտ մասնիկները ևս կարող են դիտարկվել որպես ածանցներ, որոնք փոխում են բառերի իմաստները):

Հոլովը երկու գրականներում էլ իր գոյությունն է գտնում շարահյուսական գործառնություն: Ընդ որում, նույն հոլովական ձևը կարող է տարբեր շարահյուսական գործառնություններ ունենալ և հակառակը՝ տարբեր շարահյուսական գործառնություններ կարող են արտահայտվել նույն հոլովով:

Լեզվաբանական գրականության մեջ հիմնականում այն միտքն է հայտնվում, թե առանձին կամ յուրաքանչյուր հոլով ունի իր շարահյուսական հիմնական գործառնությունը. այսպես, ուղղականը ենթակայի հոլովն է, սեռականը՝ հատկացուցչի, հայցականը՝ ուղիղ խնդրի և այլն: Սակայն, այս՝ հիմնական համարվող գործառնությունը հաճախ ուղեկցվում է ամենատարբեր շարահյուսական պաշտոններով և երբեմն դժվար է այս կամ այն հոլովին վերագրել հիմնական

գործառույթ: Այսպես, բառի ուղիղ ձևով դրվում են՝ **ենթական, բաղադրյալ ստորոգյալի անվանական մասը, որոշիչը, խնդիրները, պարագաները, բացահայտյալը** և այլն: Այլ կերպ ասած՝ բառի ուղիղ ձևը նախադասության մեջ կարող է հանդես գալ շարահյուսական տարբեր պաշտոններով և, ինչպես նշում էր Ռ. Իշխանյանը, չունենք հավաստի վիճակագրական տվյալներ այն մասին, թե որն է առավել տարածված ձևը՝ ուղղականով ենթակայի, թե բաղադրյալ ստորոգյալի:

Նշովներին նվիրված բանավեճում հայ լեզվաբաններից շատերը հակված էին այն տեսակետին, թե բառի որոշյալ կիրառությունները չպետք է կապել հոլովական ձևի հետ. այն ինքնին հոլովական իմաստ չունի: Կային նաև առարկողներ: Այսպես, ակադ. էդ. Ադայանը գտնում էր. որ արևելահայերեն սեռական և տրական ձևերի տարբերակման ցուցիչ կարելի է համարել տրականի **որոշյալ հոդով** գործածությունը: Նա գտնում էր, որ տրականում *ը/ն* –ն արդեն հոլովական ձևույթ է: Դրանով էր փաստում արևելահայերենում 6 հոլովի տեսակետը:

Ը-ի՝ արևելահայերենում ձևայնության հարցին անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը. Նա, որ դեռ անցյալ դարի 50-ականներին կապերի հոլովառության մասին խոսելիս այն միտքն է հայտել. թե ... կապերի խնդրառության սիստեմում մեր լեզվի տրական ու սեռական հոլովների միջև որոշ խառնաշփոթություն է առաջացել.....մեր լեզվում բավական է, որ տրականը անորոշ գործածվի (այսինքն՝ հոդ չստանա), դա արդեն իբրև տրական չի ըմբռնվի:այս դեպքում տրականի հոդը ոչ թե ծառայում է որոշյալ և անորոշ հասկացողությունները տարբերակելու. այլ ստացել է **հոլովական վերջավորության** արժեք՝ տրականը սեռականից սահմանազատելու համար¹:

Պրոֆ. Վ. Առաքելյանի հայտնած տեսակետում (հատկապես տրական հոլովի հետ կապված), անշուշտ, իրենց մեծ դերն ունեն ներգործական սեռի բայերը՝ հատկապես հանգում ցույց տվողները: Սա մանրագնին հետազոտության աղերս ունեցող այլ խնդիր է:

¹ Տե՛ս Վարազ Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովներն ու հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Ե., 1957. էջ 185:

Հարց է ծագում. այդ **բ**-ն միայն որոշյալության ցուցիչ է, թե՞ այն կարելի է դիտել որպես հոլովական վերջավորություն:

Հայտնի է, որ երկու գրականներում **բ**-ն կարող է հանդես գալ.

ա) որպես ձայնավորական համակարգի լիարժեք անդամ,

բ) բաղաձայնների խճողումից խուսափելու միջոց,

գ) որոշյալության ցուցիչ:

Մենք համամիտ ենք այն կարծիքին, որ **բ**-ն, բացի նշված գործառնություններից, ունի նաև հոլովական վերջավորության արժեք, այսինքն՝ հոլովական հարացույցում ունի իր որոշակի տեղը ինչպես սեռական – տրական հոլովների կազմության մեջ, այնպես էլ, առանձին դեպքերում, ներգոյականի կազմության ժամանակ. այսպես **տանը** հոլովաձևում **բ**-ն կարող է լինել ներգոյական հոլովական կազմիչ՝ **Գյուղացի Համբոյի տունը կոփվ էր ընկել** (գրական կանոնականում՝ **տանը** կոփվ էր ընկել), Գրողների միության **տանը** կազմակերպվել էր ասուլիս, կամ՝ Նկարիչների **տանը** վերջերս բացվեց ցուցահանդես:

Մեր մոտեցումը հետևյալն է. **տանը** ձևում ոչ միայն ներգոյական հոլովի իմաստ է արտահայտվում, այլև այդ հոլովի ձևը՝ **սեռական + բ**: Արևակում 10.000-ից ավելի նման օրինակներ կան՝ արևելահայերենի և արևմտահայերենի բազմաբնույթ լեզվագործածություններ ընդգրկող:

Այս **տանը** գրանցված են նաև անչափահաս երեխաներ (Առաւօտ, 2008.09.20):

-Երեխադ **տանը** հիվանդ է,- ասաց տղան,-գնա տուն (Պատմվածքներ. Հ. Մաթևոսյան):

Գայանեն **տանը** հագնվում էր անփույթ, անճաշակ (Նրա ճանապարհը, մաս 1, Շ. Թաթևիկյան):

Հետաքրքրական է նաև **բ**-ի հետ կապված մի այլ երևույթ (այն ուղղակիորեն կապ ունի խնդրո առարկայի հետ): Հայտնի է, որ, եթե մի ձևույթ ունի իր իմաստը բառական ձևում, ապա դրա կրկնակ կիրառությունը դառնում է ավելորդ կամ դիտարկվում է որպես ոչ կանոնական ձև, օրինակ՝ **իմ գիրքս, քո գրիչդ**: Հայերենը այս առումով որոշակի ինքնատիպություն ունի. որոշյալ հոդի կրկնագործածության դեպքեր հանդիպում են ինպես գրական արևելահայերենում, այնպես էլ նրա բարբառներում. օրինակ՝ **Այս գիրքը Արա-**

մինն է, Շառնը բարձրացավ. մինչդեռ արևմտահայերենում պատկերն այլ է՝ **Սա գիրք Արամին է**:

Ենթադրվում է, որ արևելահայերենում **Արամինն** ձևում ունենք կրկնակ հոդառություն: Մեր մոտեցումն այս հարցում հետևյալն է. նշված բառաձևում **ն**-երից առաջինը կարելի է համարել հոլովական վերջավորության ցուցիչ, իսկ երկրորդը՝ հոդ:

Արևմտահայերենը, որը չունի ներգոյական հոլով, այդ հոլովական իմաստն արտահայտում է (ի թիվս այլ ձևերի) հետևյալ կերպ՝ **տանը + մեջ**, օրինակ՝

- Բայց **տանը մեջ** ալ դիմացուելիք բան չէ²:

Արևմտահայերենում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է.

ա) **բառի ուղիղ՝ անհոդ ձևով՝** Եղիա Տեմիրճիպաշեան ծնած է **Հասագիւղ**, Մայիս 8-ին, կամ՝ Եղիա կրցաւ բաւարար չափով ուսումնառութիւն ունենալ **Մարսիլիա**, ուր երկու տարի նուիրուեցաւ գրական աշխատանքներու:

բ) **սեռ. հ. + մեջ** կապով՝ **դպրոցին մեջ, Սուրիոյ մեջ, քաղաքին մեջ** կացութիւնը պիտի շրջէ ի նպաստ իրեն ..., **բողոքագիրին մեջ** և այլն,

գ) **բաց. հ. + ներս** կապով՝ **դպրոցէն ներս, երկիրէն ներս** և այլն,

դ) **հայցական հոլովաձևով՝** Մեծ հայրիկը գիւղ կ'ապրի (հայց. հ.+0 վերջ.) և Մեծ հայրիկը գիւղն է (հ.հ+որոշյալ հոդ)³:

Այս վերջին օրինակի ձևով և իմաստային նմանությամբ արևելահայերենում կազմվում են **Գյուղը իրարանցում էր ընկել** (Գյուղն էին իջել մի խումբ պատանիք, աղջիկ տեսնելու, պարի ու կոխի) տիպի նախադասություններ, որտեղ առկա է ներգոյականի իմաստը, ինչը թերևս պիտի դիտել կա՛մ արևմտահայերենի ուղղակի ազդեցություն, կա՛մ բարբառային ձևերի գրականացում:

Բացի այդ, հոլովակազմիչ ը-ն հաղես է գալիս նաև ժամանակացույց բառերում՝ **գարնանը, ձմռանը, աշնանը** և այլն՝ դառնալով ժամանակի պարագա. օրինակ՝ Կհանդիպենք **ամռանը, Ձմռանը**

² Տե՛ս **Յու.Ավետիսյան**, *Արևմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկ*, Ե., 2011, էջ 90:

³ Տե՛ս *Արևմտահայերենի արդի վիճակը Միրիայի հայ համայնքում*, Ե., 2015, էջ 44-45:

ցրտեր են սպասվում և այլն: Նման ձևերում հոդը համատեղում է որոշյալության և պարագայական իմաստները:

Պարագայական գործառույթի դեպքերում հոդն ունի ինչպես տրականի, այնպես էլ ներգոյականի գործառույթ: Փոխակերպական այն դեպքերում, երբ հնարավոր է զուգահեռ **սենյակում, դահլիճում, փողոցում** և նման այլ ձևերի գործառությունը, կունենանք ներգոյականի իմաստ, իսկ **սենյակին, դահլիճին, փողոցին** և այլ ձևերի դեպքում տրականի իմաստ: Հոլովական ձևերն այստեղ սերտորեն կապվում են բայական իմաստային խմբերի հետ: Օրինակ, **Ապրում է տանը /սենյակում, քաղաքում, դահլիճում/ և այլն, Բայց Մտնեցավ տանը /սենյակին, քաղաքին, դահլիճին/, Հասավ տանը /սենյակին, քաղաքին, դահլիճին/:**

Այն միտքը, թե արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում ուղղական հոլովն իր շարահյուսական հիմնական կիրառություններում տարբերություններ չի դնւնորում⁴, մասնակիորեն է ճիշտ, քանի որ արևմտահայերենում ներգոյականի իմաստի դրսևորումը, ինչպես տեսանք, հենց այս հոլովի բնորոշ հատկություններից է. **Անտառը** քամու ձայնը չի լսվեր, Պողոսը **քաղաքը** կը դասավանդի:

Այսինքն, հոլովական նույն ձևը կարող է հոլովական տարբեր իմաստների արտահայտիչ լինել:

Ընդ որում, եթե արևելահայերենում **ը** ձայնավորը մասամբ է դիտարկվում որպես ներգոյականի հոլովական իմաստի կազմիչ, ապա արևմտահայերենում այն հստակորեն հանդես է գալիս նշված հոլովի իմաստով, ինչպես բայերի հետ, որոնք ինքնին հոլովական իմաստի դրսևորիչներ են՝ **ապրել, բնակվել, սովորել** և այլն, այնպես էլ ցանկացած այլ բայի հետ:

Անշուշտ, լեզուներում հոլովական իմաստների արտահայտման տարբեր միջոցներ են գործառնվում. հայերենում ևս առկա են կապական կառույցներով, բառակապակցություններով և այլ միջոցներով կազմված հոլովական իմաստներ:

Խնդիրն այն է, թե հոլովական ինչ համակարգ և հոլովակազմիչ, ինչպիսի ձևույթներ ենք նախընտրում:

⁴ **Յու.Ավետիսյան**, *Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 58:

Մեր մտորումները վկայում են այն մասին, որ հայերենի քերականությունը ունի բավականին կնճռոտ խնդիրներ:

Сусанна Тиоян, Роберт Тохмахян - Падеж и падежное значение. - По сей день существуют противоречивые мнения относительно падежной системы армянского языка.

В арменистике превагирует точка зрения, что категория детерминативности существует вне падежной системы.

В статье выдвигается тезис о том, что в литературном восточноармянском языке в предложениях типа- "*Այս գիրքը Արամինն է*" не имеем двойного артикля: одно из двух "*ն*" является падежным окончанием, второе-артиклем.

Артикль в обеих ветвях современного литературного армянского языка формирует падежное значение, в частности, в западноармянском языке - предложного падежа-"*Պողոսը քաղաքը կը դասավանդի*".

Susanna Tioyan, Robert Thoxmaxyan - Case and Case Meaning. - The expressed view points concerning the case system of Armenian language still remain debatable. According to the accepted opinion in Armenology the grammatical category of definiteness is out of the case structure.

In the present article the following hypothesis is brought forward according to which in the literary Eastern Armenian language in the sentences like *Այս գիրքը Արամինն է* "This book is Aram's" we don't have double article but one of the two *ն*[n] is the case ending, while the other- the article.

The article in two literary languages may express case meaning, particularly in Western Armenian it expresses the meaning of locative case, e.g. *Պողոսը քաղաքը կը դասավանդի*.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գրիգորյան Մուսաննա, Պարոնյան Նաիրա
(Հայաստան, ԵՊՀ)

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ՃԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հովհան Մանդակունին հայտնի է իր քարոզներով, շարականներով, աղոթքներով ու կանոններով: Նա մեծ վաստակ ունի եկեղեցական մատենագրության մեջ. հարստացրել է «Մաշտոց» ծիսարանը օրհնություններով ու կարգերով, կարգավորել ժամագիրքը, հունարենից թարգմանել Գրիգոր Նազիանզացու պատարագամատույցները¹: Մեծ է նրա ներդրումը նաև ճառագրության մեջ: Մեր քննության նյութը Հ. Մանդակունու 26 ճառերի բառակազմությունն է, որը լեզվական առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: «Ճառք»-ը եկեղեցական կյանքին, բարոյականությանը և բարոյագիտությանը նվիրված գրական բացառիկ հուշարձան է: Բառակազմական կաղապարները բաժանել ենք 2 ենթախմբերի՝ բառաբարդման և ածանցման կաղապարների՝ առաջինների մեջ ըստ կառուցվածքային առանձնահատկությունների առանձնացնելով հարադրական կամ վերլուծական և համադրական բարդություններ: Հարադրական բարդությունները, ինչպես հայտնի է, լինում են բայական և անվանական: Անվանական հարադրությունները լինում են երկու տեսակ՝ կրկնավոր և բաղիյուսական: Հ. Մանդակունու ճառերում կրկնավոր բարդությունների թիվը քիչ է: Դրանց բաղադրիչներն ըստ խոսքամասային պատկանելության կամ երկու գոյականներ են, կամ *ածականներ՝ գեշ գեշ, ընտիր ընտիր, շեղջ շեղջ, սակաւ սակաւ*: Կան նաև բաղադրիչների միջև որևէ նախդիր ունեցող կրկնավորներ՝ *աւր ըստ աւրէ, մի ըստ միոջէ, պիղծ առ պիղծ, վաղունէ ի վաղիւ*: Մեր ընտրանքում եղած սակավաթիվ բաղիյուսական բարդությունները կազմված են տարբեր խոսքի մասերի հարադրմամբ՝ *ամ եւ կէսն, քսան եւ երեք հազար, քսան եւ չորք հազար*:

¹ Տե՛ս 'ս *Հնոտրանի հայ եկեղեցական մատենագրության*, Ս. Էջմիածին, 2003թ., էջ 120:

Հ. Մանդակունու ճառերում գործածված հարադրավոր բայերի մեջ գերակշռում են *գոյական+բայ* կաղապարով կազմված հարադրությունները՝ *ախտս առնուլ, ակն ածել, աղաթս մատուցանել, ամյամ առնել, անդրանկություն ընկենուլ, սպաստան առնել, բերան ի բերան խաւսել, բժշկություն առնել* և այլն: Սակավաթիվ են ածականով, մակբայով, նախադրությամբ *կազմված* ձևերը՝ *անփոյթ առնել, առաջ գնալ, բարի գործել, զագանաբեկ լինել, գաղտ խաւսել, ի բաց ընկենուլ, ի բաց հալածել, ի վերայ ածել*: Հարադրավոր բայերի համեմատությամբ զուգադրական բայերը փոքրաքանակ են՝ *անիծեալ արկանել, ստեալ բերել, ստեալ վերացուցանել, դիզեալ կուտել, եկեալ անկեալ, ընկեցեալ լինել*:

Մեր աշխատանքում նպատակահարմար ենք գտել «Ճառք»-ում գործածված համադրական բարդությունները բաժանել հոդակապով և անհոդակապ տեսակների՝ իրենց ենթակաղապարներով, երբ բաղադրիչները հանդես են գալիս հնչյունափոխությամբ՝ 1) *ե(է)>ի՝* *աւրինագանց, դիմադարձ, դիւամոլ*, 2) *ու>ը՝* *գլթագին, հրացայտ, տնանկ, ու>զրո՝* *աւգտակար, բազմալար, բազմահոյլ*, 3) *ի>ը՝* *ընչասէր, ընչաքաղց, խստավէր*, 4) *ի>ե՝* *գինեհատ, հոգելից, հոգեկիր*, 5) *ի>0՝* *ամսագլուխ, ճշմարտատես, սամթաջուր*, 5) *ոյ>ու՝* *լուսագգեաց, լուսափայլ*, 6) *եա > է՝* *կենսատու, կենարար, ը>0՝* *անձնակորոյս, դառնարուն, ծանրալուր* և այլն: Հետաքրքիր է *մշտամեղք* բառի *միշտամեղք* անհնչյունափոխ տարբերակի առկայությունը:

«Ճառք»-ում բավականին մեծ թիվ են կազմում հոդակապով բարդությունները՝ *աղալեզու, աղբաբոյն, արուագէտ, ամաքիմ, արաւհնայ, բիւրակեղծ, բոգահումանի, գերեզմանակրկիտ, գողահան, ժահահոգի, սուտակասպասք, ցոփագնաց, ուծակեր, քրիստոսագգեաց* և այլն: *Մահուչափ* բառում որպէս հոդակապ հանդես է գալիս *ու* շաղկապը: Այս կազմությունները Գ. Ջահուկյանը համարում է համադասական բարդությունների տեսակ, որտեղ շաղկապը անվանում է հավելատարբեր²:

«Ճառք»-ում հանդիպող անհոդակապ բարդությունները թվով

² Տե՛ս Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 218:

զիջում են՝ *այլադանդ, արիւներես, դիթաւալ, երկպահք, խազմարար, խարազիմաց, կամարար, կանեփհատոն, նախանձորդի, ողջանդամ, չորեքշաբաթ, չարիմաց, ցփոզի, քրիստոսատեաց, քրիստոսընկալ:*

Ըստ խոսքամասային պատկանելության՝ համադրական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը մեր ընտրանքում ներկայացնում են հետևյալ կաղապարները. 1) **Գոյական + գոյական:** Այս կաղապարով կազմվում են գոյականներ և ածականներ, իսկ բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են գլխավորապես հատկացուցիչ– հատկացյալի, երբեմն էլ՝ որոշիչ–որոշյալի շարահյուսական հարաբերության մեջ, *ամսագլուխ, գրաւահարկ, հայրապէտ, սամթաջուր:* Նշենք, որ այս կաղապարը գերիշխող է: 2) **Գոյական+բայարմատ** (բայահիմք): Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, ինչպես՝ *աստուածադիր, խելացնոր, քրիստոսատեաց:* 3) **Ածական+գոյական:** Այս կաղապարով ևս հիմնականում կազմվում են ածականներ՝ բաղադրիչների որոշիչ–որոշյալ շարահյուսական հարաբերությամբ՝ *գրավաստակ, նորաբողոք, կորովամիտ:* 4) **Ածական + ածական** կաղապարի բաղադրիչների միջև գոյություն ունի համագոր հարաբերություն, և ստացվում են ածականներ՝ *բարեխառն, երկարաձիգ, մեծամեծ:* 5) **Ածական + բայարմատ** (բայահիմք) կաղապարի բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են պարագայական հարաբերության մեջ, իսկ ամբողջ բաղադրությունը ածական է՝ *բարեպաշտ, խստախաւս, յորդահոս, սրընթաց:* 6) **Դերանուն + գոյական** կաղապարով կազմվում են ածականներ՝ *բոլորաձէ:* 7) **Մակբայ + բայահիմք՝ արագաթող, մշտայեղ, մշտաշարժ, փաղապատիր:**

Ածանցման կաղապարները ներկայացրել ենք 3 ենթախմբով՝ նախածանցավոր, վերջածանցավոր և բայածանցավոր: Նախածանցման պարզագույն կաղապարով ստեղծված բառերի մեծ մասը կազմված է *–ան* ժխտական նախածանցով՝ *անբան, անբաւ, անդադար, աներկիւղ, անընտիր, անժամ, անիրաւ, անլոյս:* Ժխտական նախածանցներից գործածվել է նաև *–տ* նախածանցը՝ *տգեղ, տկար, տկարագոյն* բառերում և *–չ* ածանցը՝ *չարժանի* բառում: Մյուս նախածանցներից և ածանցի արժեք ստացած նախդիրներից զանազան կաղապարներում գործածվել են *–համ համանման, համահաւաք, –նախ՝ նախաթոռ, –առ՝ առաւել, առժամայն, –տար՝ տարածամ, –ընդ՝*

ընդվայր, ընդդիմակաց, ընդելական: Մեր ընտրանքում գործածվել են հետևյալ վերջածանցները. **-(ա)բար-** անաստուածաբար, արինակաբար, **(ա)գին-** գթագին, ցաւագին, **-ագոյն-** աղտեղագոյն, պղծագոյն, **-ալի-** աղերսալի, զագրալի, **-ակի-** վաղվաղակի, փութանակի, **-ական-** աղաթական, երրորդական, **-ային-** աստուծային, խաւարային, **-ան-** պատուիրան, **-անակ-** ժամանակ, փոխանակ, **անի-** արժանի, **-անոց-** արուեստանոց, **անք-** գողանք, ղողղողանք, թեթեւանք, ցոփանք, փողփողջանք, **-(ա)պան-** պարտապան, **(ա)պատիկ-** հարիւրապատիկ, բազմապատիկ, **(ա)պէս-** ուղղապէս, արժանապէս, **-ատ-** խորխորատ, **-ալ-** պատահար, **-արան՝** զգայարան, խաղարան, **-ացի-** բաբելացի, նինուէացի, քաղղէացի, **-աւղ(ոդ)-** արբեցող, բամբասող, զրկաւղ, **-աւոր-** ամուսնաւոր, նախանձաւոր, **-աւրէն** - ամաւրէն, **-եալ-** պասքեալ, սաստացեալ, ուծացեալ, **-եայ-** առժամանակեայ, **-եան-** յաւիտեան, **-եղ-** ահեղ, շքեղ, **-եղէն-** հոգեղէն, հրեղէն, **-եղի-** սողոմայեցի, **-ի** - անակնածելի, փափագելի, **-իլ-** դառնատեսիլ, **-իկ-** սակաւիկ, փոքրիկ, **-ին-** նրբին, վերին, **-իչ-** արհամարհիչ, խոցոտիչ, սատակիչ, **-իստ-** հանգիստ, **-իցս-** երիցս, **-ին-** հնչյուն, **նի-** յայտնի, **-ոսի-** մեռելոտի, **ովի-** իւրովի, **-որդ-** ժառանգորդ, նախանձորդ, **-ոց** - հնոց, **-ուած** - հարուած, հայեցուած, **-ութիւն-** անզոջութիւն, անընչութիւն, կնահանութիւն, ցատումներաշտութիւն, ցոփագնացութիւն, **-ումն-** տոչորումն, փարատումն, **-ուն-** գողուն, իմաստուն, հաստատուն, **-ունդ** - ծնունդ, **-ունի-** արքունի, գողունի, **-ուտ-** աղբուտ, **-ուրդ-** ժողովուրդ, խորհուրդ, **-ուստ-** գալուստ, կորուստ, **-ուհի-** թագուհի, **-ուք-** գինարբուք, **-ք** - ւարէնք, ելք, պարտք, վերք: Բայածանցներից Հ. Մանդակունու ճառերում լայնորեն կիրառվել են սոսկածանցները, որոնցից մեր ընտրանքում հաճախադեպ է **-ան** ածանցը՝ *անցանել*, *արդարանալ*, *գտանել*, *գուարթանալ*, *ըղձանալ* և այլն, **-են** ածանցով կա միայն *յամենալ* բայը, **-ն** ածանցով՝ *առնել*, *առնուլ*, **-չ** ածանցով՝ *փախչել*, **-նչ** ածանցով՝ *կորնչել*, *երկնչել*, **-անչ** ածանցով՝ *մեղանչել*: Մեծ թիվ են կազմում պատճառական **-ուցան** ածանցով կազմված բայերը՝ *երեւեցուցանել*, *զագրացուցանել*, *ընդելացուցանել*, *ընծայեցուցանել*, *իզացուցանել*, *ծովացուցանել* և այլն: «Ճառք»-ում հանդիպում են նաև բարդածանցավոր կառույցներ, ինչպես՝ *անակնածելի*, *անակնունելի*, *անուանակոչութիւն*, *աւտարատեսութիւն*, *եղբայրսիրութիւն*, *զրպարտու-*

թիւն, կողկողանք, մեղմեխանք, մտակորոյս: Սրանց մեջ կան մի քանի բառեր, որոնցում դժվար է որոշել բառակազմական քայլերի ճիշտ հաջորդականությունը, ինչպես՝ *ամենօրեայ, երեքարեայ* են: Սրանք կարելի է անվանել խառը տիպի կաղապարներ, քանի որ բաղադրիչները միաժամանակ են կցվել իրար՝ մեկ քայլով: Հ. Մանդակունու ճառերում հանդիպող բաղադրյալ կառույցները հետաքրքիր են նաև իմաստային առումով: Հ. Մանդակունին ապաշխարության, հանցանքների խոստովանության, պահքի պնդության, տնանկների ողորմության, աղքատների միխթարության, բամբասողների վարքի մասին ճառերում որոշակի հիմքերով բաղադրյալ բառեր է գործածել, որը հնարավորություն է տվել հեղինակին իր ասելիքը դիպուկ և բնորոշ բնութագրումներով ներկայացնելու: Քրիստոնյային բարոյախրատական դասեր տալիս նա հաճախ է գործածում *Աստուած, բարի, ամեն, հոգի, չար* և նմանատիպ բաղադրիչներով բարդ կամ ածանցավոր բառեր, դիցուք՝ *չար* արմատով հանդիպում է մոտ 30 բառ՝ *չարակն, չարաբարութիւն, չարագազան, չարադիւթ, չարաթոյն, չարաժանի, չարիմաց, չարակսկիծ, չարահատ, չարայուշ, չարապատիժ, չարատանջ* և այլն: Երևում է, որ Մանդակունու համար էական է եղել քրիստոնյային ցույց տալ չարի բացասական ազդեցությունը և խրատել հեռու մնալ դրանից աղոթքով ու անբասիր վարքով: Ահա սա է պատճառը, որ նա իր ասելիքը նպատակակետին հասցնելու համար փորձում է երևույթները բնութագրել նմանատիպ կառույցներով: Բացասական իմաստ ունեցող արմատներով գործածվում են նաև *ժանտ, խոժոռ և դառն* ածականները՝ *ժանտագործ, ժանտամիտ, ժանտիմաց, դառնաթոյն, դառնաշունչ, դառնապէս, խոժոռամիտ, խոժոռադէմ, ռիս* գոյականը՝ *ռիսապահ, ռիսակալութիւն, ռիսութիւն*: Հ. Մանդակունին իր «Թուղթ վասն խոստովանութեան վարուց յանցանաց» և «Թուղթ վասն ապաշխարութեան» ճառերում գործածում է յուրահատուկ բառեր, որոնք իմաստային առումով առնչվում են հանցանքների, դրանց խոստովանության և ապաշխարության հետ՝ *խոստովանել, հեծեծել, հեշտանալ, ճգնութիւն, մաքրումն, մեղք, մոլորութիւն, յանցանք, ողորճանք, չարչարանք, պաղատանք, պապեալ, վայումն, վարանք, տանջանք, տառապեցուցանել, տրտմութիւն, փարատումն*: Մարդկային վատ բարքերը, որկրամոլությունը, անառակությունը

արտահայտվում են յուրատեսաակ կառույցներով՝ *աղտեղեալ, անպարկեշտագոյն, բռնավարեալ, գիջանալ, գրգուաղել, գեղխեցեալ, իգանալ, հեշտութիւն, մատակախազ, մարդահաճոյանալ, բոզահոմանի, մեղկութիւն, մոլեկան, շնութիւն, շոգմոգել, շուայտանալ, պոռնկութիւն, վավաշոտ, ցոփոգի, ցոփութիւն, փափկանալ, քոշքոտեցուցանել*: «Թուղթ վասն հմայից դիւթականաց եւ անարէն յուրթողաց» ճառում Մանդակունին, կապված կախարդության և գուշակությունների հետ, գործածել է հմայիլներին վերաբերող հետաքրքիր բառեր և բայական հարադրություններ՝ *աստեղագիտութիւն, արահմայ, բանդագոյշ, բժշկութիւն առնել, դիւահարցութիւն անել, դիւացոյց, դիւթութիւն, երագախաւս, թքթքել, ժաժմուկ, խտրողադիւթ, հաւահմայութիւն, հեղահարութիւն, մաղաքադութիւն, միջագիտութիւն, յորոգայթ անկանել, ոգոտնահմայ, սրտագէտ, ուռոյթ, քարկոծումն, քուահարցութիւն*: Առաջին հայացքից թվում է, թե **Աստուած** բաղադրիչով ավելի շատ բարդ ու ածանցավոր բառեր պիտի լինեին, բայց հանդիպում է 18 բառ՝ *աստուածային, աստուածադիր, աստուածախաւսք, աստուածածին, աստուածապաշտութիւն, աստուածական, աստուածամարտ, աստուածատեք* և այլն: Հաջորդ երկու արմատներով բառերը քանակով գրեթե հավասար են: Աչքի են ընկնում նաև հետևյալ բաղադրիչներով կազմությունները՝ **ամեն**՝ *ամենալուր, ամենախնամ, ամենահայր, ամենասէր, ամենապարգէտ, ամենացոյց, ամենափրկիչ, անձն*՝ *անձնատեաց, անձնակորոյս, անձնահաճոյ, յանձանձել, բազում*՝ *բազմամեղ, բազմահոյլ, բազմորդի, բազմաքանքար, բարի*՝ *բարեբանել, բարեգործել, բարեգործութիւն, բարեխաւսել, բարեկենդան, բարերար, մեծ*՝ *մեծամեծ, մեծամեղ, մեծապայծառ, մեծատուն, գազան*՝ *գազանական, գազանաբեկ, գազանակեր, գազանամիտ, արիւն*՝ *արիւներես, արիւնաշաղախ, արիւնահան, արիւնահեղ, խիստ*՝ *խստաբան, խստախաւս, խստամիտ, խստասիրտ, ինչ*՝ *ընչաքաղց, ընչեղ, ընչեղէն, ընչասէր, հոգի*՝ *հոգեբարձող, հոգելից, հոգէկիր, մարդ*՝ *մարդագոհ, մարդահաճութիւն, մարդասիրութիւն*: Այսպիսով, Հ. Մանդակունու ճառերը հարուստ են բառակազմական զանազան ինքնատիպ կաղապարներով, որոնց բաղադրիչների իմաստային առանձնահատկությունների վերհանումը առավել հետաքրքիր է դարձնում դրանց ուսումնասիրությունը:

Susanna Grigoryan, Naira Paronayn - The Word-Formation of Hovhan Mandakuni's Allocutions.-The collection of H. Mandakuni's allocutions is of special interest from the linguistic point of view. The collection is a rare literary monument devoted to the clerical life, its morality and ethics. The composite structures, present in Mandakuni's orations, are interesting from the semantic point of view as well. H. Mandakuni has used composite words with certain bases in the orations which concerned the confession, the admission of guilts, the comfort to the poor, the behavior of tale-tellers; all these have given the author the opportunity to transmit his message to the reader in a clear and typical way.

Сусанна Григорян-Наира, Паронян-Словообразование тирад Огана Мандакуни.- Сборник тирад О.Мандакуни представляет особый интерес в языковом значении. Сборник представляет собой редкий литературный памятник, посвящённый церковной жизни, нравственности, морали. Сложные конструкции, которые встречаются в тирадах О.Мандакуни, интересны и в своём смысловом значении. В своих тирадах о покаянии, признании в преступлениях, утешении нищих, о поведении сплетников он в определенных ситуациях употребляет сложные слова, которые позволили автору дать меткие и характерные определения тому, что он хотел сказать.

**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻ ՇԱՐՔ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒ ՏԱՐԱԾԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ**

Հայերենի բարբառների **Կը** ճյուղը աշխարհագրորեն գտնվում է Արևմտյան Հայաստանում: Մակայն 19-րդ դարի վերջերից սկսած և հատկապես 20-րդ դարի սկզբում հենց այս տարածքում տեղի են ունենում հայերենի մի խումբ բարբառների ու բարբառախմբերի վերացման, հայերենի բարբառների տարածական հիմքերի խախտման գլոբալ գործընթացներ: Պետք է կարևորել, որ Արևելյան Հայաստանում տեղակայված արևելյան խմբակցության **ոււ** և **եւ** ճյուղերի բարբառների դեպքում ևս տարածական հիմքերի խախտման որոշակի գործընթացներ տեղի են ունեցել, բայց դրանք տեղային բնույթ են կրել և, ի տարբերություն արևմտյան բարբառների, բարբառատեսակների վերացման չեն հանգեցրել:

Բնական երևույթների, տեխնոլոգիական վթարների, այդ թվում ցեղասպանության հետևանքների ուսումնասիրությունների համար ստեղծված գիտությունն ընդունված է կոչել վիկտիմոլոգիա (լատ. victim.գոհ)¹: Հայերենի բարբառների վերացման ու նրանց տարածական հիմքերի խախտման հետևանքների գիտականորեն ուսումնասիրություններն օրինաչափ են դառնում այս համատեքստում ևս:

Տարածքը լեզվաբանության մեջ երկակի բնութագրում ունի: Այն, որպես բառամիավոր, ունի որոշակի բառիմաստ, արտահայտում է բառհասկացություն, իսկ որպես եզրույթ՝ նշանակում է բնակչիմայական պատշաճ պայմաններով ներկայանալի այնպիսի գոտի, որտեղ կան մարդկանց կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Նախընտրելի է լեզվատարածք եզրույթի կիրառումը: Այն **«արեալ»**, **«տերիտորիա»** եզրույթների համարժեքն է: Լեզվատարածքը, կարծեք թե, արտացոլում է լեզուն, տարածքը և

¹ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 447:

հասարակությունը միասնաբար վերցրած: Տարածքը կամ լեզվատարածքն ապահովում են հասարակության կենսագործունեությունը և զարգացումը: Եթե չկա լեզվատարածք, ապա չկա նաև հասարակություն ու լեզու:

Լեզվատարածքի գաղափարը լեզվաբանության մեջ ակտուալ է դարձել տարածքային լեզվաբանության ստեղծմանը զուգընթաց: 19-րդ դարում պատմահամեմատական լեզվաբանության շրջանակներում ստեղծված լեզվաաշխարհագրության կամ զուգաբանությունների մեթոդը դրա ցայտուն արտահայտությունն է: Մակայն տարածքային լեզվաբանության կամ տարածքային բարբառագիտության զարգացման ձեռքբերումները գրանցվում են 20-րդ դարում, իսկ մեր ժամանակներում այն խիստ զարգացող գիտակարգ է ողջ աշխարհում:

Տարածքային բարբառագիտության նվազագույն միավորն ընդունված է համարել խոսվածքը, որը հավասարաթեք է մի լեզվատարածքի: Կարելի է դատել, որ ՀՀ տարածքում ամեն մի բնակավայր մի լեզվատարածք է՝ լինի քաղաք թե գյուղ, հետևաբար բնակավայրերով է որոշվում լեզվատարածքների քանակը: Խոսվածքի էությունը հաղորդակցային լեզու լինելն է, որով կազմակերպվում են միևնույն լեզվով խոսող հանրության խոսողության գործընթացները: Խոսվածքների համասեռությամբ ու տարասեռությամբ է որոշվում բարբառների առանձնացումը մեկը մյուսից, իսկ նրանց ամբողջությունը՝ լեզվական միավորների ծագման, զարգացման, կրած փոփոխություններով հանդերձ, հանգեցնում է մի ընդհանուր լեզվի:

Պատմական փաստերը հաստատում են, որ անցած դարասկզբին ու դրան նախորդած տարիներին Պատմական Հայաստանում թուրքական կառավարության սանձազերծած եղերական իրադարձությունները հանգեցրել են շուրջ 2500² հայկական լեզվատարածքների ամայացման: Ամայացումը, որպես գործընթաց, երեք ուղղվածություն է ստացել՝ ա) կենսատարածքից մարդկանց չեզոքացում, տար-հանում, գաղթ, բ) բնակչության ոչնչացում բուն կենսատարածքներում, գաղթի ճանապարհներին ու աքսորավայրե-

² Ստեփան Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. Առաջին, ԵՊՀ հրատ., Ե., 2008, էջ 658:

րում, գ) իսլամացում ու մահմեդականացում:

Ամայացած լեզվատարածքները բացառապես գտնվում են հայերենի բարբառների արևմտյան խմբակցության արեալում, ներառում են հայերենի վեց բարբառախմբեր³, որոնք, ինչպես կտեսնենք, տրոհվում են առանձին բարբառների, միջբարբառների և, ի վերջո, խոսվածքների: Այդ բարբառախմբերն են՝

ա) Անտիոքի կամ ծայր հարավ-արևմտյան բարբառախումբ:

Ունի երկու բարբառ՝ Քեսաբ-Սվեդիայի և Բեյլանի բարբառները: Քեսաբ-Սվեդիայի բարբառը ներկայանում է Քեսաբի, Քարուսիեի, Յոդուն Օլուկի, Հաջի-Հարիբլիի, Արամոյի խոսվածքներով:

բ) Կիլիկիայի կամ հարավ-արևմտյան միջբարբառախումբ:

Ունի երկու բարբառ՝ Հաջընի և Մարաշ-Ջեյթունի: Մարաշ-Ջեյթունի բարբառն ունի երկու խոսվածք՝ Մարաշ և Ջեյթուն:

գ) Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախումբ: Այս բարբառախումբը թերևս ամենամեծն է հայերենի բարբառների շարքում: Ներառում է տասը բարբառ և հինգ միջբարբառ: Նրանցից փրկվել են միայն Կարնո բարբառի մի շարք խոսվածքներ՝ տեղակայված լինելով ՀՀ Շիրակի մարզի տարբեր համայնքներում, և Ղրիմի-Նոր-Նախիջևանի բարբառը: Հիմնականում ոչնչացվել, մասամբ տարագրվել ու մահմեդականացվել են հետևյալ բարբառների ներկայացուցիչները՝ **ա)** Կարինի բարբառը և նրա Կարին, Բաբերդ և Խնդաձոր խոսվածքները, **բ)** Շապին-Կարահիսարի միջբարբառը՝ նույնանուն խոսվածքով, **գ)** Սեբաստիայի բարբառը՝ Սեբաստիա, Բրզնիկ խոսվածքներով, **դ)** Եվդոկիայի միջբարբառը՝ նույնանուն խոսվածքով, **ե)** Մարզվան-Ամասիայի բարբառը՝ Մարզվան, Ամասիա խոսվածքներով, **զ)** Պոլսի միջբարբառը և նրա Պոլիս, Զմյուռնիա, Նիկոմեդիա, Պարտիզակ, Ռոդոսթո, Օրդու, Տրապիզոն, Ադափազար խոսվածքները, **է)** Սիվիրիսարի միջբարբառը՝ համանուն խոսվածքով, **ը)** Կյուրինի բարբառը՝ համանուն խոսվածքով, **թ)** Սյոլյոզի միջբարբառը՝ համանուն խոսվածքով, **ժ)** Մալաթիայի բարբառը՝ համանուն խոսվածքով, **ժա)** Կեսարիայի բարբառը՝ Թոմարգա, Դարենդե, Էվերեկ խոսվածքներով, **ժբ)** Խարբերդ-Երզնկայի բարբառը՝ Խարբերդ, Երզնկա, Կամախ, Չմշկաձագ, Ալթուն-Հուսեյն,

³ **Ջևրազ Զահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972 թ., էջ 132-135:

Իսմայիլ, Հավլորի խոսվածքներով, **ժգ**) Ասլանբեկի բարբառը՝ համանուն խոսվածքով, **ժդ**) Ակնի բարբառը՝ համանուն խոսվածքով, **ժե**) Արաբկիրի բարբառը՝ համանուն խոսվածքով:

դ) Համշենի կամ հյուսիս-արևմտյան միջբարբառախումբ: Ունի երկու բարբառ՝ Համշենը և Եդեսիան: Համշենի բարբառն ունի երեք խոսվածք՝ Մարթիլ, Մայա, Ջեֆանոս, իսկ Եդեսիայի բարբառը ներկայանում է համանուն խոսվածքով:

ե) Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախումբ: Ունի չորս բարբառ: **ա)** Մուշի բարբառն իր Բադեշ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Մանազկերտ, Մուշ, Բուլանդ, Խնուս, Ալաշկերտ խոսվածքներով, **բ)** Տավրոսիկ-Մոտկանի բարբառն ունի երկու՝ Նիշի և Այգետունի խոսվածքները, **գ)** Մասունի (Գելիեգուզանի) բարբառը ներկայանում է երկու՝ Գելիեգուզանի և Հազգոյի խոսվածքներով, **դ)** Տիգրանակերտի բարբառը՝ համանուն խոսվածքով: Սակայն կան փաստեր, համաձայն որոնց՝ այսօր Թուրքիայի Դիարբեքիր քաղաքում (Տիգրանակերտ) կան բավական հայախումբեր:

զ) Վանի կամ հարավային միջբարբառախումբ: Ունի երկու բարբառ՝ Վանի և Դիադինի բարբառները: Վանի բարբառը ներկայանում է հետևյալ խոսվածքներով՝ Մոկս, Շատախ, Բաստ, Ոզմ, Վան, իսկ Դիադինի բարբառն այսօր հայտաբերվում է ՀՀ-ում հանգրվանած Վարդենիսի խոսվածքով: Հիմնականում փրկված խոսվածք է:

Վերոբերյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ անցած դարասկզբին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով իրենց բուն կենսատարածքում վերացել են քսանվեց բարբառ ու հարյուրավոր խոսվածքներ՝ հիմնականում ոչնչացվելով, մասամբ՝ տարագրվելով ու մահմեդականացվելով: Ի հավելումն ասվածի՝ բարբառներից ու խոսվածքներից բացի 1915 թ. կասեցվել է նաև Կ. Պոլսում այդ ժամանակ արդեն իսկ հարյուր տարվա կազմավորում ու գործառություն ունեցող գրական արևմտահայերենի զարգացումը: Խնդիրը, ինչպես գիտենք, լուծվել է ապրիլի 24-ին շուրջ 800 մտավորականների աքսորով ու սպանողով:

Հայերենի նշված բարբառները տեղաբաշխվում են Արևմտյան Հայաստանի հետևյալ՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի հայկական նահանգներում, ինչպես նաև

Կիլիկիայի և Արևմտյան Անատոլիայի հայաբնակ վայրերում: Չենք բացառում նաև այն, որ ոչնչացած բարբառների թվում եղել են նաև այնպիսիք, որոնք մինչ այդ հայագիտությանը հայտնի չեն եղել:

Եթե փորձենք վերլուծել պատմական փաստական տվյալները, ապա համաձայն թուրքական վիճակագրության՝ 1845թ. Արևմտյան Հայաստանում բնակվում էր 3. 833. 297 հայ: Տարեկան 0,7 տոկոս բնական աճի դեպքում՝ 1915թ. այդ թիվը պետք է հասներ մոտ 5,5 միլիոնի: Ընդ որում, Հայաստանից դուրս, այսինքն կայսրության մյուս մասերում բնակվում էր 1.030.000 հայ, որից Կիլիկիայում՝ 380.000, Ասիական Թուրքիայում՝ 455.000, Եվրոպական Թուրքիայում՝ 195.000, այսինքն՝ ընդամենը 3.904.637 հայ: Եթե հայերի ընդհանուր թվից հանենք մեկ միլիոն գաղթականներին, 530 հազար մահմեդականացվածներին, ապա, ինչպես նկատում է պատմաբան Հ. Զատիկյանը, Մեծ Եղեռնին Ջոհ է գնացել 2,4 միլիոն մարդ, կոտորվել էր բնակչության 74, 3%-ը⁴: Նույն այդ հաշվարկներով՝ 1895-1915թթ. ոչնչացվել էր 1,8 միլիոն հայախոս: 1894-1896 թթ. ջարդերի զոհերի թիվը ըստ նահանգների ներկայացնում է հետևյալ պատկերը. Վան՝ 46. 011, Բիթլիս՝ 27. 606, Դիարբեքիր՝ 27.606, Էրզրում՝ 51.133, Խարբեթը՝ 49.692, Սեբաստիա՝ 51.533⁵: Ընդամենը՝ 2.999. 94 հայ⁶:

Տարագրումը նույնպես բարբառի վերացման մի դրսևորում է: Նոր կենսամիջավայրերում բարբառակիրները պարտավորվում են ենթարկվել տվյալ միջավայրում ապրող հանրույթի կենսապահանջներին: Կենսագործունեությունը չկասեցնելու համար լեզուն առաջնային է: Օտարալեզու միջավայրերում այդ հանգեցնում է երկլեզվության, ապա՝ մայր բարբառի նահանջի ու մոռացման, մինչդեռ միևնույն լեզվի շրջանակներում գոյատևելը ժամանակի ընթացքում բերում է եկվորների մասնակի կամ լիակատար ասիմիլացման: Մրան նպաստում է եկվորների թվաքանակով քիչ լինելը: Տարա-

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 335:

⁵ Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N 9, Ե., 2004, էջ 149:

⁶ Ստեփան Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. Առաջին, ԵՊՀ հրատ., Ե., 2008, էջ 662:

գրյալների՝ բարբառների կորստյան վերոբերյալ գնահատականները հիմնավորող փաստերը մեզանում առատ են:

Հայերի ուծացմանն ուղղված քաղաքականությունը Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում օրակարգային է եղել: Մինչ բուն Եղեռնն այդ արտահայտվել է բռնի ամուսնություններով և հիմնականում մահմեդականացմամբ ու լեզվափոխությամբ: Որպես ասվածի վկայություն՝ կարող ենք հիշատակել այն, որ վերջին տարիներին Թուրքիայում սկսվել է բռնի ուծացված հայերի էթնոգիտակցության, էթնոլեկտի բացահայտման գործընթացներ: Վկայություններ կան, որ «հայ բառն արտասանողների լեզուները կտրում էին» Եղեռնի տարիներին, որի հետևանքով Կիլիկիայի բազմաթիվ գյուղերում «հայերը կորցրել էին իրենց մայրենին»⁷: Հետագոտող Ի. Չառնիի գնահատումներով՝ մայրենի լեզվով խոսելն արգելելը ևս պետք է որակել որպես ցեղասպանություն (լինգվիցիդ)⁸: Եթե ցեղասպանությունն ուղեկցվում է մայրենի լեզվի կասեցմամբ ու վերացմամբ, այն ինքնին վերաճում է նաև լեզվասպանության (լինգվիցիդ)՝ դիտվելով տվյալ հանրության բանավոր մշակույթի գործառման արգելափակում: «Թուրքերուն հարստահարությունն ու հալածանքն այնքան խիստ եղավ, որ հայախոս Անթեպ եղավ թուրքախոս՝ Փոքր Ասիո ուրիշ քաղաքներուն պես»⁹, գրում է Գ. Մարաֆյանն իր ուսումնասիրության մեջ: Հայախոսների՝ ստիպողաբար թրքախոս ու քրդախոս դառնալու մասին պատմական վկայությունները բազմաթիվ են: Պատահական չենք հիշատակում այս ամենը՝ նպատակ հետապնդելով հիմնավորել, որ մինչ բուն սպանող թուրքական քաղաքականության կարևորագույն գծերից է եղել բռնի լեզվափոխությամբ ու կրոնափոխությամբ որոշակիորեն լուծել Հայկական հարցը: Այս երևույթը լեզվաբանական գրականության մեջ գնահատվում է որպես փոխներթափանցման մի դրսևորում, այսինքն՝ «քաղաքական նվաճում»¹⁰: Նշվածից եզրակացնում ենք, որ

⁷ Գրիգոր Գալուստյան, *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջեյթուն*, Նյու Յորք, 1934, էջ 698:

⁸ Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 12:

⁹ Գևորգ Մարաֆյան, *Պատմություն Անթեպի հայոց*, հ. Ա, Լոս Անջելես, 1953, էջ 5:

¹⁰ Գևորգ Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 12:

նախքան բուն գենոցիդը, թուրքական քաղաքականությունը Հայկական հարցը ջանացել է ավելի սահուն կերպով լուծել, իսկ բուն Եղեռնի ընթացքում գուգորդվել են միմյանց գենոցիդն ու լինգվիցիդը:

Այստեղ ցանկանում ենք հակադրվել անգլիացի հետազոտող Է. Քարալին: Նա, փորձելով պաշտպանել թուրքական քարոզչական վեճը, թյուր տեսակետ է հայտնել, համաձայն որի՝ ցեղասպանության տարիներին «ցրվածության, միասնության բացակայության և նման այլ գործոնների թելադրանքով հայերի հիմնական մասը խոսում էր թուրքերեն: Հայերենը մոռացածներին կոչում էին «թուրք քրիստոնյաներ»»¹¹: Հեղինակը, քաջաձանոթ չլինելով հայ ժողովրդի պատմությանը, անտեսում է այն բացարձակ ճշմարտությունը, որ հայերը և հայերենն ավելի անաղարտ պահպանվել են մահմեդականների միջավայրում, քան քրիստոնյաների, քանի որ վերջիններիս միջավայրում վճռորոշ է կրոնական դավանանքի խնդիրը: Հայ բարբառախոսների սպանդի, տարագրման ու մահմեդականացման կարևորագույն գեղարվեստավավերագրություն է համարվում Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիներ» (2004թ.) հուշագրությունը:

Այդուհանդերձ, Եղեռնին հաջորդող տասնամյակներում՝ ողջ 20-րդ դարում և մինչև օրս, հայ բարբառագիտությունը ծավալուն գործունեություն է ծավալել կորուսյալ բարբառների ու նրանց տարածական հիմքերի խախտումների ուսումնասիրության ուղղությամբ: Եղած լիակատար կամ մասնակի վերականգնումներն օգնում են գաղափար կազմել Արևմտյան Հայաստանի լեզվատարածքների լեզվական համակարգերի մասին: Նպատակ է դրվել տալ կորուսյալ բարբառների նկարագիրը: Այս հարցում անուրանալի է Հր. Աճառյանի, Գ. Սրվանձտյանցի կատարած բարբառագիտական և բանագիտական գործունեությունը: Մինչ Եղեռնն է լույս տեսել Հր. Աճառյանի՝ տարածքային և գիտական բարբառագիտության զարգացման գործում մեծ նշանակություն ունեցող, ուղի հարթող «Հայ բարբառագիտություն-ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911թ.) կոթողային աշխատությունը՝ որպես «Հայոց խոսած

¹¹ Karal F. Z., *La Question Armenienne*, Ankara, 1975, p. 8:

լեզուներու և բարբառներու քարտէս»¹²: Հետագա տարիներին են լույս տեսնում Ռ. Բադրամյանի «Դերսիմի բարբառային քարտեզը» (1960թ.), Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972թ.), Ա. Հանեյանի «Տիգրանակերտի բարբառը» (1978թ.), Դ. Կոստանոյանի «Երզնկայի բարբառը» (1979թ.), Ա. Սարգսյանի «Հայոց լեզվի բարբառային ատլաս» (2008թ.) ուսումնասիրությունները:

Հայերենի բարբառների ոչնչացմամբ մասնակիորեն է հնարավոր վերականգնել նրանց բուն լեզվական պատկերը: Նրանցից շատերի վերաբերյալ, ցավոք, լեզվական տվյալները բավարար չափի չեն, որը խոչընդոտում է լեզվական համակարգերի հետադարձ վերականգնողականությանը: Տարածական հիմքերի խախտումները հանգեցրել են հատուկենտ փրկված խոսվածքների գոյատևմանը նորանոր լեզվական որակներով առաջնորդվող միջավայրերում: Գոյատևումը, ի վերջո, բերում է մասնակի կամ լիակատար ասիմիլացման: Հայկական գաղթօջախներում հանգրվանած տարագիրները մինչ օրս իրենց մայր բարբառը պահպանում են որպես տարբերակիչ էթնո հատկանիշ այլ լեզվական հանրություններից կամ չեն պահպանում, իսկ ՀՀ-ում հանգրվանած բազմաթիվ բարբառախոսներ ուղղակիորեն ձուլվել են, քանի որ մեզանում այդ էթնո տարբերակման խնդիրը չկա: Եթե հիսուն-վաթսուն տարի առաջ հնարավոր էր Երևանում կամ այլուր գտնել արևմտյան, եզրային բարբառները կրող մարդկանց, ապա այսօր այդ անելն ուղղակի հնարավոր չէ: Հայաստանի Հանրապետության այն տարածքներում, որտեղ լավագույնս պահպանվել են արևմտյան բարբառները, ներգաղթյալներ են կենտրոնական Հայաստանի տարբեր բնակավայրերից մինչ բուն Եդեռնը. նրանք մեծաթիվ խմբերով Արևելյան Հայաստան են եկել 1828-29թ. ռուս-պարսկական, 1877-78թ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում, բնակվել էռնային մեկուսի գոտիներում, և մինչ օրս հնարավորինս պահպանում են մայր բարբառները: 1915-22 թթ. տեղի ունեցած իրադարձությունների շղթայում ունենք միայն Սասնո, Մշո բարբառները կրող հանրություններ, որոնք ապաստան

¹² **Հրաչյա Աճառյան**, *Հայ բարբառագիտություն-ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, Էմինյան ազգագրական ժողովածուի Ը հատոր, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 307:

տանել են Թալինի տարածաշրջանում և դարձյալ պահպանում են մայր բարբառները մինչ օրս:

Ոչնչացված լեզվատարածքներում գործած բարբառային և խոսվածքային միավորների գրանցման գործում մեծ արժեք է ներկայացնում Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը (ՀԲԱ): 1977 թ. ՀՀ ԳԱԱ-ի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած այս ծրագրով նպատակադրվել է կազմել հայերենի բարբառագիտական ատլասը՝ արևելյան և արևմրտյան տարածքների ընդգրկմամբ: Այդ ուղղությամբ աշխատանքները մինչ օրս շարունակվում են: Այսօր լեզվի ինստիտուտում պահվում են ՀԲԱ-ի ծրագրով գրանցված հինգ հարյուր տետր: Տետրերի մի մասը՝ շուրջ 245-ը, արտացոլում է Արևմտյան Հայաստանի կորսված տարածքների խոսվածքների առանձնահատկությունները: Դրանց մեծ մասը ներկայացնում են Եղեռնից հետո ՀՀ կամ աշխարհի տարբեր գաղթօջախներում հանգրվանած բարբառախոսների լեզվական համակարգերը, իսկ մի մասը՝ մինչ Եղեռնը տեղի ունեցած ներգաղթյալների լեզվական տվյալները: Ինչպես ներկայացնում են այդ ծրագրի շրջանակներում աշխատած բարբառագետները, այդ կարևորել է ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը՝ գիտակցելով, որ Ժամանակի ընթացքում չեն լինելու այդ բարբառները կրող ինֆորմանտները (տեղեկատուներ): Արևմտյան բազմաթիվ բարբառների լեզվական համակարգերի վերաբերյալ բացառապես գաղափար ենք կազմում այդ տետրերի շնորհիվ, որոնք անվտանգության նկատառումներով արդեն մի քանի տարի է, ինչ թվայնացվում են և լուստուսպատճենավորմամբ պահպանվում:

ՀԲԱ-ի առավելությունն այն է, որ բարբառների մեծ մասը, որոնք, ինչպես արդեն նշվեց, գտնվել են արևմտահայ հատվածում, կորցրել են իրենց նախկին, տարածական բուն հիմքերը: Այդ վայրերում հայերեն բարբառներն ուղղակիորեն հաղորդակցային արժեք չունեն այժմ: Տվյալ տարածքների բարբառային նյութերը դաշտային աշխատանքներով գրանցվել ու գրանցվում են Հայաստանում ու հայկական գաղթօջախներում հանգրվանած հայերից: Մրա հետևանքով պատմական Հայաստանի բարբառներին նվիրված ամեն մի ուսումնասիրություն, այդ թվում երբևիցե կազմվելիք հայերենի բարբառագիտական ատլասը կունենա հետադարձ վերա-

կանգնողական բնույթ ու արժեք, այսինքն՝ հնարավորինս կներկայացնի այն վիճակը, որը գոյություն է ունեցել 1915 թվականի սպանդից ու գաղթերից առաջ:

Այսօր հայ բարբառագիտության հիմնախնդիրների մեջ առանցքային է ճշգրտելը հայերենի բարբառների թվաքանակը Հայաստանի Հանրապետության և տասնյակ գաղթօջախների տվյալների համադրմամբ: Այն, որ հայերենի բարբառների վերջին վիճակագրական դասակարգմամբ հայերենի 44 բարբառների թիվը կտրուկ նվազել է չարաղետ իրադարձությունների հետևանքով, անվիճարկելի է: Օրինակ՝ այսօր ար-դեն չունենք **Վանի, Տիգրանակերտի, Խոտորջուրի** և այլ բարբառներով խոսող հանրույթ: Տարազրյալ բարբառախոսների լեզվական կայունությունը խիստ հարաբերական է, քանի որ լեզվատարածքի փոխությունները հանգեցնում են երկլեզվության: Այստեղ մեծ է ինքնըստինքյան և աստիճանական ուժացման վտանգը, իսկ տարբեր բարբառային որակների համատեղ գոյակցումն ուղղակիորեն հանգեցնում է մեկի ձուլմանը մյուսին կամ լեզվական նոր որակների՝ կոյների առաջացմանը:

Garik Mkrtchyan - Armenian Genocide as the Reason of Elimination of a Number of Armenian Dialects and Violation of Their Geographical Bases. -According to historical data during the previous century the tragic events organized by Turks led to the desertification of about 2500 Armenian linguistic areas in the Historical Armenia. The deserted linguistic areas were exclusively within the areal of Western group of Armenian dialects and include six dialectical groups of Armenian. About twenty six dialects and hundreds of sub-dialects were basically destroyed, partially emigrated or islamatized. The eliminated Armenian dialects were spread in the following Western Armenian regions: Van, Erzurum, Bitlis, Kharberd, Sebastia, Diyarbakır, as well as in Kilikia and Armenian regions of Western Anatolia.

Гарик Мкртчян - Геноцид армян как причина исчезновения ряда диалектов и нарушение пространственных основ. - Согласно историческим фактам, в начале прошлого века и в течение предшествующих лет организованные турками трагические события в исторической Армении привели к опустошению около 2500 армянских

языковых территорий. Опустошение происходило в трех направлениях: изгнание людей из мест жительства, миграция, истребление населения прямо в местах жительства, на миграционных путях и в местах ссылки, обращение в ислам и мусульманство.

Опустошенные языковые территории находятся исключительно в ареале западных диалектов армянского языка и включают шесть диалектных групп. Около 26 диалектов и сотни говоров были полностью уничтожены, частично изменены и превращены в мусульманские. Исчезнувшие диалекты армянского распределены по следующим армянским регионам: Ван, Эрзрум, Битлис, Харберд, Себастья, Диарбекир, а также по армянонаселенным пунктам в Киликии и Западной Анатолии.

**ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԵՎ
ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Նախդրավոր և նախադրությամբ կառույցներով գոյականա-
կան բառակապակցությունները որպես շարահյուսական յուրա-
հատուկ կառուցվածքներ գրաբարում և միջին հայերենում տարած-
ված են ու հաղորդման մեջ երբեմն լրացական իմաստների ձևա-
վորման անփոխարինելի միջոցներ են: Նման կաղապարներն ինք-
նատիպ են և՛ իրենց կառուցվածքով, և՛ արտահայտած իմաստով, և՛
գործառությամբ: Դրանցում ուշագրավ են ինչպես լրացյալ գոյա-
կանի, այնպես էլ լրացումը ձևավորող նախդիրների իմաստային և
բառակազմական հատկանիշները:

Խնդրո առարկա կառույցների կազմության և իմաստային
արտահայտությունների հարուստ համակարգն ըստ հնարավորին
ամբողջական ուսումնասիրելու առումով համեմատական քննու-
թյան ենթ ենթարկել գրաբարի և միջին հայերենի նախդրավոր և
նախադրությամբ կառույցներով գոյականական բառակապակ-
ցությունները՝ փորձելով ցույց տալ այդ կառույցների միջև եղած
ընդհանրություններն և տարբերությունները, պարզաբանել բառա-
կապակցական այդ կաղապարների տարբեր արտահայտություն-
ների կիրառության աստիճանը, բնութագրել զարգացող և հետաձ-
ապրող կաղապարները, իմաստային նոր հարաբերությունների
արտահայտությունները, դրանք պայմանավորող հանգամանքները:

Այժմ զուգադրաբար ներկայացնենք գրաբարի և միջին հա-
յերենի գոյականի՝ նախդրավոր և նախադրությամբ կառույցներով
լրացումների հիմնական առանձնահատկությունները կազմավոր-
ման և գործառության մանրամասներով:

Իրենց հաճախականությամբ, իմաստային բազմազանու-
թյամբ այս կապակցությունները միջին հայերենում գրաբարի հա-
մեմատությամբ ավելի գործուն են և ունեն զարգացման միտում:

Լինելով գրաբարից աշխարհաբար անցումային օղակ (12-16 դդ.)՝ միջին հայերենն իր մեջ կրում է այդ երկու լեզվաշրջանների իրողությունները, որի հետևանքով էլ նրանում կողք կողքի դրսևորվում են և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի քերականական երևույթները: Այդ շրջանի հայերենով գրված և՛ պատմական, և՛ գեղարվեստական երկերում հավասարապես հանդես են գալիս և՛ կապերով, և՛ նախդիրներով ու նախադրություններով լրացումներ: Դա հետևանք է այն բանի, որ նախ այդ ժամանակի հեղինակները հակված էին պահպանելու գրաբարյան կապակցությունները և դրանց արդեն խաթարված ձևերը, ապա՝ նախդրավոր և նախադրությամբ կառույցները տեղի են տալիս նոր ձևերի՝ կապային կաղապարների:

Օրինակ՝ *Այնոր նման մին մ'ալ տեսայ (ԱՄՀՄՀ, 378): Հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցա անհաշտ և արեամբ չափ աստեղութեամբ (ՊԱԴ, 334):*

Պետք է նշել, որ բոլոր դեպքերում նախդրավոր և նախադրությամբ կառույցով լրացման և գոյականի կապակցությունները միջին հայերենում ավելի շատ գրաբարյան են, քան աշխարհաբարյան:

Նկատված է, որ և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում գոյականի լրացման դերում ավելի ակտիվ են նախդրավոր կառույցները: Գոյական լրացալին իրենց խնդիրներով լրացում են դառնում ավելի հաճախ **առ, ընդ, ի** նախդիրները, նախդրություններից ակտիվ են **ընդդեմ, յաղագս, ի ձեռն, ի մէջ, ի վերայ, վասն** և այլն:

Ըստ մեր վիճակագրական քննության՝ դիտարկվող երկու շրջաններում էլ նախդրավոր և նախադրությամբ կառույցներով լրացում ստացող բայանուն կամ ածականական սերումով գոյականների թիվը մեծ չէ: Դրանցից ավելի հաճախադեպ գործածություն ունեն հետևյալները.

1. արմատական բայանուն գոյականներ՝ **բողոք, գործ, դարձ, երթ, լուծ, խրատ, կռիւ, հաւատ, հրաման, մարտ, նախանձ, ողբ, պատերազմ, պարզել, սեր, սուգ, վախճան, ուխտ** և այլն:

2. անցավոր բայանուն գոյականներ՝ **ամբաստանութիւն, բարկութիւն, գժտութիւն, թշնամութիւն, յանդիմանութիւն, ծանօթութիւն, յաշտութիւն, վրէժխնդրութիւն, առաքումն, երդումն, յարձակումն, գալուստ, փախուստ, արշաւանք, տրփանք, նախատինք, խորհուրդ, անկէք, աղօթք, խնդրուածք, խօսք** և այլն, ածականական

սերումով գոյականներ՝ *ահաւորութիւն, անզգամութիւն, արդարութիւն, բարեխօսութիւն, խռովութիւն, յայտնութիւն, միամտութիւն, միբանութիւն, նենգութիւն, չարութիւն, չկամութիւն, քաջութիւն* և այլն:

5-16-րդ մշակութային հուշարձանների լեզվական նյութի քննությունից պարզվում է, որ նախդրավոր և նախադրությամբ կառույցով լրացման և գոյականի կապակցությունների կազմավորման հիմքերը հիմնականում նույն են՝ լրացյալի խոսքիմասային, բառային, բառակազմական հատկանիշները, սերումը, փոխանվանական գործածությունը, ինչպես նաև՝ բայի զեղչումը: Այսօրինակ կաղապարների դիտարկումներից կարելի է անել այսպիսի հետևություններ՝

ա) Բոլոր բառերի մեջ խիստ ընդգծված են բայի ու որակական ածականի հատկանիշները: Այստեղ նախդիրը և նախադրությունն ու իր խնդիրն ավելի հաճախ լրացնում են բայական և ածականական ծագմամբ գոյականներին: Սրանք հիմնա կանում արտահայտում են լրացական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք առկա են նախդրավոր և նախադրությամբ կառույցների և լրացյալ գոյականներին հարաբերակից բայերի, ածականների ու մակբայների կապակցություններում: Այսպես՝ հանգման և տեղի իմաստ արտահայտող **արշավանք, յարձակում, յանդիմանութիւն, մարտ, այցելութիւն, ծառայութիւն** մի շարք այլ բայա- նուններով ու **առ** (+տր., հայց.), **ընդ** (+տր., հայց., գործ.), **ի** (+տր., հայց) նախդիրներով, **ի վերայ, ի մեջ** (+սեռ.) նախադրություններով ձևավորված կառույցներով լրացում ստանում են նաև նույնարմատ բայերը: Օրինակներ

գրաբարից՝ Դարձուք անդէն ի պատմութիւն Տրդատայ յարձակումն ի Պարսս (ՄԽ, 2, 2),

միջին հայերենից՝ Սկսան իշխանք անմխիթար և ծանր ծեծել և վայ և եղուկ ասել, յիշելով զգեղեցիկ որդիք թագաւորին իւրեանց, զմիւսն ի ծառայութիւն ի մեջ այլազգեաց (ՄՄՊՅ, 43):

Նենգութիւն, չկամութիւն, միամտութիւն, միաբանութիւն, անկարութիւն և այլ ածականական ծագմամբ գոյական լրացյալների նախդիրով և նախադրությամբ ձևավորված լրացումներն էլ դրվում են վերջինների իմաստի պահանջով, օրինակներ

*գրաբարից՝ Եւ իբրն այլ հնարս ոչ ինչ կարէր գտանել դուրս
նենգութեանցն առ Պարսիկս (Բուգ., 208, ԼԸ),*

*միջին հայերենից՝ Ոմանք զանկարութիւն մարմնոյ առ ի զնա
լացին և ողբացին (ՊԱԴ, 60):*

բ) Առանձին կապակցություններում լրացումը գոյականի մոտ
դրվում է լրացյալի բառային իմաստի պահանջով, այսպես՝ հայե-
րենի պատմական երկու շրջաններում էլ մի շարք գոյականներ
(պատմութիւն, դիմում, զրոյց, կտակ, հրաման, ողբ, տաղ և այլն)
ունեն վերաբերության իմաստ. վասն, յաղագս, ի վերայ և այլ
նախդիրներով կառույցները դրանց լրացումն են դառնում հենց այդ
նշանակությամբ, օրինակներ

*գրաբարից՝ Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց
յազգէն Արշակունեաց (ՄԽ, 3, ԿԸ),*

*միջին հայերենից՝ Կտակ վասն զանձին (ՆՄԺԱՎ, 486): Եւ
լուեալ Լևոնի իշխանի զդիմումն ի վերայ իւր այլազգւոյն (ՍՕՊՆՍ,
2273):*

գ) երբեմն կապն իր խնդրի հետ լրացյալին կապվում է որևէ
դերբայի գեղչմամբ: Նման բառակապակցությունները գրաբարում
տարածված են և՛ վերնագրային - անվանողական կառույցներում,
և՛ դիմավոր նախա- դասություններում, օրինակներ

*գրաբարից՝ Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն
Արշակ արքայ Պարսից (ՄԽ, 1, Թ): Ըստ այսմ պատճենի հրովարտակ
եհաս յաշխարհն հայոց (Եղ., 1):*

Միջին հայերենում դրանք հաճախադեպ են հատկապես տեղի
ուղղության իմաստ արտահայտելիս, օրինակ՝ Ընդէր ողբաս, յամե-
նայն տեղուջէ ճանապարհ մի է ի դժոխս (ՄԳԱ, 181): Բոնեց զճամ-
բան ի Եզրնկին (ՀԵ, 168):

Հանդիպում են նաև կապակցություններ, որոնցում նարդրա-
վոր կառույցով լրացման առկայությունը պայմանավորվում է ոչ թե
լրացյալի հատկանիշներով, այլ նախադասության կառուցվածքով:
Այս կաղապարներն ավելի շատ կշռության լինելու են չափածո խոսքում,
ուր դրան նպաստում են բանաստեղծական խոսքի ռիթմն ու
հանգավորումը: Այսպես՝ Շողեղէն պատկեր քան զթերթ վարդի.
Շրթանց համբուրիդ արա արժանի (ԳԱՏ, 248): Բոյդ կու նմանի եղեգն
ի շամբայ (ՄՀԲ, 216):

Քննության առարկա կապակցությունները հայերենի երկու շրջաններում էլ ունեն նաև կառուցվածքային առանձնահատկություններ: Ավելի հաճախադեպ են հետևյալները.

ա) Բայանուն գոյականները երբեմն կարող են ստանալ նախդրավոր և նախադրությամբ կառույցներով արտահայտված մեկից ավելի տարբեր լրացումներ: Դրանցից մեկը սովորաբար դրվում է լրացյալի բառային իմաստի պահանջով, մյուսը պարագայական բնույթի լրացում է: Այդպիսի կազմությունները բայանվան՝ բայի հատկանիշների շնորհիվ բազմարժույթայնության դրսևորում են. այն հատուկ է հայերենի երկու շրջաններին էլ, բայց առավել ակտիվությամբ հանդես է գալիս միջին հայերենում: Լրացյալ են դառնում տարբեր իմաստների պատկանող գոյականներ, այսինքն՝ բազմարժույթայնությունը գոյականի մակարդակում զարգանում է:

Օրինակներ

գրաբարից՝ Գիր ամբաստանութեան Մօրկայ առ Խոսրով վասն իշխանացն և գօրացն Հայաստանի(Մեբ. , 2),

միջին հայերենից՝ Յաւուր միում ի մեջ երկոցունց զրոյց եղև յաղագս անհնազանդութեանն Աղամայ և ճաշակման պտղոյն... (ԷՀՄԳԱ, 90):

բ) Ե՛վ գրաբարում, և՛ միջին հայերենում նախդրավոր և նախադրությամբ կառույցով լրացումը կարող է վերաբերել մեկից ավելի լրացյալների, որոնք համադասական հարաբերության մեջ են միմյանց նկատմամբ: Օրինակներ

գրաբարից՝ Պարտումն Շապիոյ և ակամա հնազանդութիւն ընդ ձեռամբ մեծին Կոստանդիանոսի(ՄԽ, 2, 2Է),

միջին հայերենից՝ Պատմութիւն և խօսք վասն Յուդայի մատնչին, պղծոյն եւ անիծելոյն (ԷՀՄԳԱ, 214):

ե) Բայց առավել տարածված են այն կառույցները, որտեղ միևնույն կապով կա՛մ համադաս լրացումներն են լրացյալին կապվում, կա՛մ էլ համադաս լրացյալները՝ լրացմանը, օրինակներ

գրաբարից՝ Ուխտեաց Դովիդայէ ուխտ ի մեջ իւր և արքային (ՀՆԿ, Տիմոթ. Ե.),

միջին հայերենից՝ Առ որ ունիմք անքակտելի յաւատ և ցաւս առ սերելին... (ՆՇՈԵ, 114): Նոքա վեճ էին և կոթիվ ընդ միմեանս(ԷՀՄԳԱ, 31):

ը) Մյուս դեպքում կապը կրկնվում է՝ խնդիրներն առանձին-առանձին շեշտելու նպատակով, ինչպես՝

գրաբարից՝ Եվ դարձեալ ասէ թէ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան (Եզն., 126, ԲԲ),

միջին հայերենից՝ Բնութեամբ ամրացեալ է սիրտ մարդոյն ի թշնամութիւն՝ ի յատելութիւն ազգի առ ազգ և տոհմի առ տոհմ և մարդոյն առ մարդ (ՆՄԺԱՎ, 461):

Երբեմն հանդիպում են նաև այլ դրսևորումներ՝

ա) *կառույցը հավասարապես կարող է դիտվել և՛ ստորոգյալի, և՛ գոյականի լրացում, օրինակներ*

գրաբարից՝ Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր եւ տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս...(Եդ, 141): Խօսել քանս հայհոյութեան ի Մովսէսն յաստուած (ՀՆԿ, Գործ., 11),

միջին հայերենից՝ Մահու չափ մեղօք գործելով զմեղս խոցոտեն գՔրիստոս (ՆՄԺԱՎ, 296):

բ) Առանձին կապակցություններում լրացյալը կարող է իր հերթին լինել մեկ այլ նախդրավոր և նախադրությամբ կառույցի խնդիր, օրինակներ

գրաբարից՝ Նա և օձն պատժեցաւ՝ վասն ընդ անագորոն թշնամութեան ընդ մարդոյն (Եզն., 1, ԺԲ),

միջին հայերենից՝ Բնականին ի բաց դրութիւն վասն սղալման առ վեհագոյնս, նմանապէս են պատուհասք որպէս գիտեմք ի բնութենէ (ՄՀԶ, 76):

Գրաբարում գոյականի լրացման դերում նախդրավոր և նախադրությամբ կառույցը հաճախ կարող է՝

- լրացյալից ընդմիջվել նախադասության այլ անդամներով, սովորաբար լրացյալի ենթակայական սեռականով լրացմամբ: Օրինակ՝ *Գժտութիւն ընդ Հերովդի Արշամայ և ալիամայ հնազանդութիւն (ՄԽ, 1, ԲԵ),*

- ունենալ մեկից ավելի լրացյալներ՝ նույն կամ մոտ իմաստներով, ինչպես՝ *Ի յատելութեան և ի չկամութեան առ թագաւորն պարսից արքայն Հայոց Տիրան... (Բուզ., 43, Դ): Զի խեղութիւնք և արարք են ի նոսա (ՀՆԿ, Դ, Թագ., 14),*

- ընկած լինել երկու բայանուն գոյականների միջև և հավասարապես վերաբերել նրանցից ցանկացածին: *Օրինակ՝ Ուր է*

քաղցր աչացն հանդարտութիւն, ... ու՛ր զուարթ շրթանցն **ժպտումն**
առ բարի աշակերտացն հանդիպումն (ՄԽ, 361, ԿԸ),

• վերագրվել և՛ գիտակցվող դերբային, և՛ բայանուն լրաց-
յալին, Օրինակ՝ Լուայ **աղաղակի** նոցա **ի գործաւորացն** (ՀՆԿ,
Ելք, Գ, 8):

• երբեմն լրացյալներից մեկը կարող է լինել ավելադրություն:
Օրինակ՝ ... **ընդ այլ մծբնացիսն ի փոխել նորա անտի անդր ի մարտս**
պատերազմացն Յունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից
(Բուզ., 40, Ժ):

Սիջին հայերենում, ի տարբերություն գրաբարի, ավելի հա-
ճախադեպ են այն կապակցությունները, որոնցում բուն գոյականը
լրացում է ստանում **ըստ** նախդիրով կամ **նման, չափ, առանց** նա-
խադրություններով ու դրանց խնդիրներով ձևավորված կառույց-
ներով, ինչն աշխարհաբարյան քերականության բնորոշ հատկանիշ
է: Ընդ որում, լրացյալի և լրացման իմաստային հարաբերությունը
հատկանշային է: Այսպիսի կապակ- ցություններն ավելի հատուկ են
ուշ միջինհայերենյան շրջանի գրականության լեզվին:

Նման նախադրությամբ (որը, ըստ էության, հետադրություն
է, և այդպես են կոչում միայն ավանդույթին հետևելու պատճառով)
կառույցով լրացում ունեցող կապակցությունները կարելի է հա-
մարել աշխարհաբարյան կազմություններ: Օրինակներ՝ **Արեգական**
նման, իշխան, Եղբարք ուներ իւր մետասան... (ՀՄՀ, 351): **Տեսի անօթ**
մի զարմագան, Բ բոլորակ ձևոյ նուման (ն. տ., 392):

Նման նախադրության փոխարեն երբեմն գործածվում է
զերդը: Օրինակ՝

Տուն մի տեսի զերդ մինարայ. Բագում աչք կայ ի գլուխ նորա...
(ՀՄՀ, 403):

Աննշան տարբերություններով նույնանում են նաև այդ
կապակցությունների գործառնությանին առանձնահատկությունները:
Դրանք կարող են լինել և՛ դիմավոր նախադասություններում, և՛
վերնազգրային-անվանողական կառույցներում՝ հանդես գալով կա՛մ
ամբողջությամբ, այսինքն՝ կապակցությունը երկկազմ է, առկա են և՛
լրացյալը, և՛ լրացումը, կա՛մ լրացյալը զեղչված, այսինքն՝ կա-
պակցությունը միակազմ է՝ արտահայտված միայն լրացմամբ,
Օրինակներ

գրաբարից՝ Երևանդայ պատերազմ ընդ Արտաշիսի եւ փախուստ, եւ առաքումն քաղաքի նորին եւ մահ (ՄԽ. 170, ԽԶ): Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարդուց նորա (Բուգ., 398),

միջին հայերենից՝ Մկիգրն դպրութեանց հայ գրոցս ի ձեռն Սահակայ և Մեսրոպայ (ՄԱՊՀ, 47): Վասն տգէտ, հպարտ գոռոզաց և ինքնահաւան մարդոց (ՀՀՄՔ, 375):

Այսպիսիք ավելի հաճախ են հանդիպում միջին հայերենում: Իսկ առանձին դեպքերում զեղչվում է նույնիսկ նախադրության խնդիրը, որն արտահայտվում է ստորադաս նախադասությամբ:

Կապակցության անդամների շարադասության հարցում նկատելի է այսպիսի օրինաչափություն. իրանիշ գոյականի լրացումները դրվում են նրանից առաջ, բայանուն կամ ածականական սերումով գոյականի լրացումները՝ նրանից հետո: Բայց նախադասության մեջ շարադասությունը հաճախ չի պահպանվում:

Այսպիսով, համեմատելով խնդրո առարկա կապակցությունների կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունները հայերենի երկու շրջաններում՝ կարելի է անել այսպիսի եզրահանգում՝ այս կապակցությունները՝ որպես շարահյուսական յուրահատուկ կառուցվածքներ, պահպանել են իրենց հիմնական հատկանիշները՝ կազմության և իմաստային արտահայտությունների առումով: Փոփոխությունները պայմանավորվում են լեզվի զարգացման ընթացքով: Նման կառույցները ոչ միայն հարստացնում են լեզուն, այլև առավել աշխույժ և կենդանի են դարձնում շարադրանքը:

Anahit Muradyan - The Comparative Description of the Prepositional Noun Phrases in Old and Middle Armenian - Thus, comparing semantic, structural and functional features of prepositional (posle lozhnyh) + designs substantive combinations in two periods of the Armenian language, you can come to the following conclusion: these combinations as peculiar syntax retained their basic qualities in the value of the structure and semantic expressions. Changes are caused by the process of language development. Such designs are not only enrich the language, but also make the presentation more agile and alive. No coincidence that Academician GB Jahukyan perfect considers such language in which viable prepositional constructions.

Анаит Мурадян – Сопоставительный анализ предложных субстантивных словосочетаний в грабаре и среднеармянском языке. - Таким образом, сравнивая смысловые, структурные и функциональные особенности предложных (последложных) конструкций + субстантивных сочетаний в двух периодах армянского языка, можно прийти к следующему заключению: эти сочетания как своеобразные синтаксические конструкции сохранили свои основные качества в значении строения и смысловых выражений. Изменения обуславливаются процессом развития языка. Подобные конструкции не только обогащают язык, но также делают изложение более подвижным и живым. Не случайно, что академик Г.Б. Джаукян считает совершенным такой язык, в котором жизнеспособны предложные конструкции.

Պետրոսյան Հասմիկ
(Հայաստան, Հայաստանի ազգային
պոլիտեխնիկական համալսարան)

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության մեջ հաճախ նկատելի է լեզվական այն իրողությունը, երբ բառիմաստի տերմինացման ճանապարհով կերտված տերմինների հիմքում ընկած են բառերի դեռևս գրաբարում, միջին հայերենում կամ բարբառներում ունեցած իմաստները: Այդ բառերից շատերն այսօր՝ աշխարհաբարյան շրջանում, յուրացված են ամբողջությամբ կամ մասամբ. դրանց իմաստներն ամրագրված են աշխարհաբարի բառարաններում: Եվ գիտատեխնիկական տերմինաբանությունն էլ, որպես լեզվի զարգացման նորագույն փուլի արդյունք, գերակշիռ մասով հենված է հենց աշխարհաբարյան շրջանի բառապաշարային իրողությունների վրա:

Սակայն գիտատեխնիկական տերմինաբանության համալրման ներքին աղբյուրները քննելիս նկատվում է, որ տերմինացել են բառեր, որոնք արհեստների, երկրագործության, շինարարության և հարակից այլ հասկացություններ արտահայտել են լեզվի զարգացման դեռևս նախորդ փուլերում կամ բարբառներում: Միայն թե նշված բնագավառների հասկացություններին, գործընթացներին և գործիքներին առնչվող անվանակարգության վերաբերյալ միջնադարյան բառարանագրությունից այսօր քիչ թե շատ ավարտուն պատկերացում հնարավոր չէ կազմել: Հ. Ամալյանը, լեզվաբանական զանազան հարցադրումների ուսումնասիրության տեսանկյունից արժևորելով միջնադարյան հայ բառարանագրության հուշարձանները, իր առանձին աշխատության մեջ¹ նկատում է, որ «...հայ միջնադարյան բառարանները չափազանց փոքր են ընդգրկումներով, իրենց մեջ չեն առնում ինչպես տարբեր գիտական բնագավառների

¹ **Ամալյան Հ.,** *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, Երևան, 1966, էջ 12:*

ամբողջ մասնագիտական բառապաշարը, այնպես էլ մեր լեզվի բոլոր բառերը, չեն արտացոլում հայերենի միջնադարյան շրջանի բառային կազմի ամբողջական պատկերը»։ Այդ բառարանների բառամթերքի միակողմանի բնույթը, ըստ Հ. Ամալյանի, պայմանավորված էր դրանց առաջացման՝ հիմնականում թարգմանական և բնագիր երկերի վրա կատարվող բանասիրական աշխատանքի պահանջով։

Ըստ մեզ, միջնադարյան բառարաններում արհեստներին վերաբերող բառաշերտի չներառվելն այլ պատճառներ էլ ունի²։

1) Նախապես հողագործի երկրորդական զբաղմունք դիտված արհեստագործության զարգացման առանձնահատկություններից է եղել այն, որ արհեստները սերնդից սերունդ (հաճախ նույն տոհմի մեջ) փոխանցվում էին բանավոր՝ կայանալով որպես աշխատանքային հմտությունների ընդօրինակում-վերարտադրում։

2) Միջնադարյան Հայաստանում զարգացել են հիմնականում հասարակական և բնական գիտությունները, և բնավ չի զարգացել տեխնիկային առնչվող (արհեստների մակարդակով) որևէ գիտակարգ, որ ներառեր նաև նման հասկացություն-տերմիններ։

3) Թարգմանական և ինքնուրույն պատմագրական երկերում հազվադեպ է կամ բնավ չի նկատվում անդրադարձ միջնադարյան արտադրա-տնտեսական հարաբերություններին, և նման իրողությունների մեկնության համար բառացանկերի կամ բառարանների ստեղծման անհրաժեշտություն չի եղել։

Մինչդեռ՝ «Միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքում, գյուղատնտեսության հետ մեկտեղ, կարևոր դեր են խաղացել արհեստները, որոնք մի կողմից՝ կապված էին գյուղատնտեսական հումքի մշակման, մյուս կողմից՝ հանքահանության և մետաղամշակության զարգացման, անտառանյութի, քարի, կավի օգտագործման հետ»³։ Ըստ Լ. Անանյանի՝ միջնադարում զարգացել են մետաղի և փայտի մշակության հետ կապված արհեստները՝ դարբնություն, պայտարություն, հյուսնություն։ Արտադրվել են գյուղատնտեսա-

² Պետրոսյան Հ., *Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն / Թեկն. ատեն., Եր., 2007, էջ 18-19*։

³ Անանյան Լ., *Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Եր., 2003, էջ 79*։

կան, ինչպես և այդ արհեստներին անհրաժեշտ զանազան գործիքներ: Հետագայում դարբնությունից աստիճանաբար անջատվում են փականագործությունն ու պայտարությունը, մետաղամշակման արհեստներից առաջին պլան են մղվում զինագործությունը և ոսկերչությունը: «Միջին դարերում արհեստագործությունը հողագործի երկրորդական զբաղմունքից դառնում է արտադրության ինքնուրույն բնագավառ»⁴:

Նշված իրողությունները չէին կարող իրենց անդրադարձը չգտնել լեզվի նաև բարբառային շերտում, որը ժողովրդի առօրյա-խոսակցական լեզուն էր: Բնական է, որ պիտի հարստանար բարբառային բառաշերտի իմաստաբանական սպեկտրը հատկապես երկրագործության, արհեստների և շինարարության հասկացություններ արտահայտող բառերի շնորհիվ: Սակայն անցյալում բառապաշարի զարգացման այս տեղաշարժերի վերաբերյալ գաղափար կարող ենք կազմել միայն տարբեր գիտությունների (տնտեսագիտություն, ազգագրություն և այլն) ընձեռած հնարավորությունների շնորհիվ, այնուհետև՝ 17-րդ դարից հետո երևան եկած տպագիր և հետագա շրջանի բառարանների քննությամբ: Մեր համոզմամբ, անցյալում բարբառային բառապաշարում արհեստագործական և հարակից հասկացությունների անվանումների՝ տերմի նաբանության տեսանկյունից իմաստաբանական քննությունը ևս կարող է լրացնել միջնադարյան բառարանագրության բացը, և այդ առումով սույն աշխատանքն ունի գործնական արժեք:

Բարբառային ծագմամբ բառերի մի զգալի քանակ, որ յուրացված է արդի գրական հայերենում, բառիմաստի տերմինացման ճանապարհով համալրել է հատկապես մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանությունը: Եվ կան բարբառային բառեր էլ, որոնք յուրացված են մասամբ կամ դուրս են մղվել գործածությունից, սակայն այսօր տերմինացած են: Սա օրինաչափ է, քանի որ «գիտության լեզուն իր հետագա զարգացման ընթացքում չի կտրվում խոսակցական լեզվից»⁵: Այդ տերմինները համալրել են ոչ միայն մեքենագիտական-մեքենաշինական, այլև հարակից տրանսպորտա-

⁴ Նույն տեղում, էջ 81:

⁵ Виноградов В. В. Основные типы лексических значений слова / ВЯ, 1953, N5, с. 5.

յին համակարգերի, մեխանիկայի, մետալուրգիայի, պոլիգրաֆիայի, տեքստիլագործության, շինարարական, ռազմագիտության տերմինահամակարգերը:

Գիտատեխնիկական տերմինաբանության մեջ բարբառային բառերի տերմինացման նախադրյալը, ըստ մեզ, դրանց՝ բարբառներում արհեստագործական, երկրագործական, շինարարական, այլև կենցաղային հասկացությունների անվանումներ արտահայտելու իրողությունն էր:

Մեր քննությունը կատարելիս առաջնորդվել ենք Հր. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանով» (այսուհետ՝ ՀԳԲ)⁶, Բայց ընտրված բառերը համեմատել ենք նաև Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» (ՀԲԲ)⁷, Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի» (ՄՀԲ)⁸, Գ. Աւետիքեանի, Խ. Սիւրմեւեանի և Մ. Աւգերեանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Նոր Հայկազյան) բառարանի» (ՆՀԲ)⁹, ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանի» (ՀԼԲԲ)¹⁰ բառամթերքի, ինչպես նաև Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն»¹¹ և Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն»¹² աշխատություններում բերված բարբառային բառացանկերի հետ:

Բարբառային ծագմամբ բառերի ընտրությունը, որոնցից այսօր կերտված են մեքենագիտական-մեքենաշինական տերմինները, կատարել ենք հետևյալ սկզբունքով.

1. ՀԳԲ-ից ընտրված բառերից 30-ը աստղանշված են, որ նշանակում է՝ դրանք գրաբար մատյաններում և բառարաններում չեն հանդիպում բարբառներում ունեցած իրենց զանազան նրբիմաստն-

⁶ Աճառյան Հ., *Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, Հ. Թ., Թիֆլիս, 1913:*

⁷ Մալխասյանց Ստ., *Հայերեն բացատրական բառարան, 4 հատորով, Եր., 1944-1945:*

⁸ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., *Միջին հայերենի բառարան, երկու հատորով, Եր., 1987:*

⁹ Աւետիքեան Գ., Սիւրմեւեան Խ., Աւգերեան Մ., *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկու հատորով, Վենետիկ, 1979, 1981 (1836-1837):*

¹⁰ Հեղինակային խումբ, *Հայոց լեզվի բարբառային բառարան, 6 հատորով, Եր., ԳԱԱ, 2001-2010:*

¹¹ Աճառյան Հ., *Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951:*

¹² Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1974:*

երով: Դրանցից 7-ը՝ *կանթ, կեռ, կեռիք, կոթ, շիտակ, պոչ, պռունկ*, ՆՀԲ-ում կան *ռակ*. (ռակկորեն) նշումով, 2-ը՝ ճիշտ նույն իմաստով, ինչ որ գրաբարում՝ *առեղ, կեմ /կեամ/*: Մնացած 21-ը ՆՀԲ-ում չկան:

ՀԳԲ-ից առանց աստղանիշի ընտրված է ևս 60 բառ, որոնք ՆՀԲ-ում չկան:

2. ՆՀԲ-ից *ռակ*. նշումով ընտրված 19 բառերից 4-ը՝ *գամ, գրպան, թաս, փորիչ*, ՀԳԲ-ում չկան, իսկ մնացած 15-ը աստղանշված չեն:

3. Մեկ բառ՝ *փուլք*, որը չկա ոչ ՀԳԲ-ում, ոչ ՆՀԲ-ում, ընտրվել է ՀԲԲ-ից՝ + նշանով, որ նշանակում է գավառական բառ:

Այսպիսով, ՀԳԲ-ից քաղված բառերի թիվը 90 է (աստղանիշով կամ առանց դրա), ՆՀԲ-ից քաղվածներինը՝ 19-ը (բոլորը *ռակ*. Նշումով) և ՀԲԲ-ից 1-ը՝ + նշանով, ընդամենը՝ 110 բառ:

Հարկ է նշել, որ և՛ Աճառյանի կողմից աստղանշված, և՛ ՆՀԲ-ում *որպես ռակ*. բերված բառերի մի մասը Սո. Մալխասյանցի կողմից գավառական չի դիտվել: Ըստ երևույթին, այն բառերը, որոնք գավառական են համարվել ՆՀԲ-ում կամ ՀԳԲ-ում, ՀԲԲ-ն կազմելու ժամանակաշրջանում արդեն շրջանառվել են ժողովրդախոսակցական ոլորտում կամ եղել են դրանից գրականին անցման եզրին, ուստի Մալխասյանցի կողմից դրանք այլևս գավառական չեն համարվել: Սա բնական է, քանի որ Աճառյանի խնդիրը նույն բառերի՝ ըստ բարբառային շերտին պատկանելությանը բացահայտելն էր, թեև տալիս է նաև դրանց բացատրությունները, մինչդեռ Մալխասյանցի խնդիրը բառերի բացատրությունները տալն էր, որոնք նրա բառարանում ներկայացված են իմաստային բավականաչափ հարուստ նրբերանգներով (ստորև այդ իմաստները բերվում են համադրելով այս երկու բառարանները):

Լեզվի նախորդ փուլերից ժառանգված բառերի իմաստների տերմինացման դեպքերում նկատելի է հետևյալը.

1. Բառի տերմինացման հիմք ծառայած իմաստը գործուն է եղել և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ բարբառներում, գործուն է նաև այսօր: Այսինքն՝ տերմինացել է իր նշանակությամբ և գործառնություններով ընդհանուրհայերենյան, հաճախ՝ նաև համագործածական շերտի բառը: Այս դեպքում տերմինաբանության համալրման աղբյուր կարելի է դիտել աշխահաբարի բառապաշարը պայ-

մանական այնքանով, որ բառը, չնայած այսօր իր յուրացվածությանը, իր հենց այդ՝ տերմինացման հիմք ծառայած իմաստով գալիս է լեզվի զարգացման դեռևս նախորդ փուլերից, այսինքն՝ բառն իր տվյալ իմաստը աշխարհաբարում չէ, որ ձեռք է բերել (օրինակ՝ *եղան, ճախարակ, հող, գութան, ճանկ* և այլն):

2. Բառի՝ նախորդ փուլերում, նաև բարբառներում ունեցած այն իմաստը, որը տերմինացման հիմք է ծառայել, լեզվի այս փուլում այլևս գործածական չէ, բայց բառն իր կյանքը շարունակում է որպես տերմին (օրինակ՝ *գջիր, երիթ, լարան, կարան* և այլն):

3. Բառի տերմինացման հիմք են ծառայել կա՛մ միայն գրաբարյան, կա՛մ միայն միջինհայերենյան, կա՛մ միայն բարբառներում ունեցած իմաստները (օրինակ՝ *ագույց, առիչ, արբանյակ, աքցան, կոթ, կոճ, կեւ* և այլն):

Կարծում ենք, որ վերջին երկու դեպքերում բառի տերմինացման հիմքերը որոնելիս պետք է քննել լեզվի նախորդ շրջաններում նրա ունեցած այդ իմաստները: Այսինքն՝ տվյալ դեպքում տերմինաբանության համալրման աղբյուր պետք է համարել ոչ թե աշխարհաբարյան շրջանի բառապաշարային իրողությունները, այլ բառերի՝ հենց բարբառային կամ այլ բառաշերտերում ունեցած իմաստները: Ցույց տանք ասվածը կոնկրետ օրինակներով (*աղ.*):

Աղյուսակում բերված բառերի՝ բարբառներում և տերմինաբանության մեջ ունեցած իմաստների համեմատությունից երևում է, թե՛ 1. բարբառում բառի ունեցած ո՞ր իմաստն է հիմք ծառայել նրա տերմինացման համար, 2. բառի բարբառային իմաստներից հատկապես ո՞րն է արհեստագործական կամ հարակից հասկացություն նշանակել, 3. տերմինն այսօր որքանո՞վ է յուրացված գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում:

Աղյուսակ

Տերմինը և նրա գործածության բնագավառները*	Բարբառային իմաստները	Որպես տերմին յուրացվածությունը
1. Ասեղ (игла) ~ մակերևույթները միկրոնային ճշգրտությամբ չափող սարքի տարր, ~ փորագրման հաստոցի կտրիչ. ընդ. բժտ., օդգ., մք., ավտ., տքս., տպգ.	ասեղ – (երկրագործ., արհեստ.) 1. ասեղ, 2. սեպաձև փայտե սայլի երկու կողմերում, 3. կողմ նացույցի սլաք, 4. հյուսվածքի ասեղ, 5. առհասարակ սուր առարկայի ծայրը	ասեղ՝ ~ առանցքակալի ~ կարգավորման ~ լողանի, ~ փակիչ, ~ կափույրի, ~ դրոշմած ~ փակիչ և այլն
2. ատամ (зуб) ~ ելուն ատամնանվի վրա՝ շարժում փոխանցելու համար, ~ կտրող գործիքի մաս. կենս., տքս., մք., ոզմ.	ատամ – (մարմ. մաս, կենցղ., երկրագործ., արհեստ.) 1. ակռա (մարդու, կենդանու), 2. սանրի մեկ ճեղք, 3. գութանի մաս, 4. ոստայնանկի առեջք	ատամ՝ ~ հատած, ~ ներքին, ~ արտաքին, ~ ենթակտրված, ~ շեղ և այլն
3. բութակ (шпатель) ~ ելուն մի տարրի վրա՝ համապատասխանող մի այլ տարրի փորակի կամ բնի չափերին դրանք միացնելու համար. մք., շն., փտմշ.	բութակ – (երաժշտ., երկրագործ.) 1. լարավոր նվագարանի մաս, 2. կեռ, ճանկ, որ լուծը կապում է սայլին կամ արորի փոկը՝ մասանին	բութակ՝ ~ ներդրովի, ~ կատարավոր, ~ գնդաբութակ ~ ատամնավոր, ~ կրկնատամ, ~ կոնաձև և այլն
4. գրտնակ (валок) ~ մեքենայի մաս՝ ծառայող որպես հենարան, պտտվող առանցքակալներով և ոլորման մոմենտ	*գրտնակ – (կենցղ.) 1. գլանաձև ողորկ փայտ խմորը բացելու համար	գրտնակ՝ ~ կորացման, ~ սեղմագրտնակ, ~ կոպտամշակման, ~ մատնեքավոր, ~ ակոսավոր,

* Տերմինների բացատրությունները տե՛ս Захаров Б. В. и др., Толковый словарь по машиностроению, М., 1987. Տերմինների բնագավառները տե՛ս Հացագործյան Զ. Ա. և ուրիշ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր., 1988.

հաղորդող. մք., մտ., գղտ., շն., կշգ., տքս.		~ գլոցիչ և այլն
5. ծիծեռնիկ, կարա- պիկ (лебедека) ~ բեռնամբարձ մեքենայի բեռ փոխադրող մաս ճկուն շարժվող ճո- պանով կամ շղթա- յով. մք., օդգ., ավտ., հնք., շն., ճն.	ծիծեռնիկ – (շին., ար- հեստ.) 1. փոքրիկ ճա- խարակ՝ բեռ բարձրաց- նելու համար, 2. իլիկ, թելշիկի գլխիկը	ծիծեռնիկ, կարապիկ ~ ավտոմատ, ~ հորատման, ~ թիթեռնաշարժի, ~ եռաթմբուկ, ~ շղթայավոր ~ միառելս և այլն
6. կախովի (висячий, подвесной) ընդ.	կախովի – կախված, կախվածո	~ ընդկախ, կախովի ~ գսպան, ~ անցահատային պոմպ և այլն
7. կոկիչ (гладилка) ~ կոող գործիք՝ նա- խապատրաստ- վածքի մակերևույ- թի հար թեցման համար. ընդ. մք., շն., մտ., տպգ.,	կոկիչ – (արհեստ., կենցղ.) 1. ողորկ քար՝ կավե ամանները մինչև չորա նայր կոկելու, հարթեց նելու համար, 2. փոքր նկանակ, հաց, բլիթ	~ կոկիչ ~ մեխանիկական, ~ ճակատային, ~ անկյունավոր, ~ ձևավոր և այլն
8. հանիչ (съемник) ~ գործիք, ~ մեխանիզմ. մք., ավտ., փտմշ.	հանիչ – (արհեստ.) 1. ոս կերչի գործիք	հանիչ ~ մխոցաօղերի, ~ վռանի և այլն
9. մաշիկ (башмак) ~ մեքենայի կամ մե- քենամասերի ճշտադր ման հենարան. մք., կշգ.	*մաշիկ – (կենցղ.) սուր քթով, կրունկով մուճակ, կոշիկ (կանացի, տղա- մարդու)	մաշիկ, կալուն՝ ~ սողնակի, ~ արգելակի, ~ հենակի և այլն
10. սրոց (точило) ~ հղկող շրջանակով հաստոց կտրիչ- ները և այլ գործիք- ները սրելու հա- մար. մք.	սրոց – (արհեստ.) հեսանաքար	/շրջա/ սրոց, հեսան

Ըստ բառապաշարի իմաստային շերտերի՝ մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ գործածվող բարբառային ծագմամբ բառերը, լեզվի նախորդ փուլում ներկայացրել են հասկացություններ՝ կապված՝

– արհեստագործության հետ.

*ագռավուկ, այրուք, եզրահան, *զնդան, իլիկ, ծլեպ, ծակոտիչ, կալիչ, *ճաղ, *ճաք, շուռովիկ, սրոց, +փուքս* և այլն. սրանք բավական շատ են,

– երկրագործության հետ.

**առեղ, *դահուկ, կամրջակ, կոթ, կուղ, վաք, փորիչ, քերանք* և այլն,

– շինարարության հետ.

*գամ, թործ, լինգ, լիսեռնիկ, *կոնդ, կրունկ, սոնի, քարմաղ* և այլն,

– *կենցաղային հասկացությունների հետ.*

*բոնիչ, գոգնոց, գրպան, *գոլ, լաթ, ծալք, *թաս, *թասակ, լաթ, հովան, *մղակ, ձարմաղ* և այլն,

– կենդանիների և մարմնի մասերի անվանումների հետ.

**բուկ, բուշտ, թաթիկ, լեզվակ, խաղ, ծիծեռնիկ, ճանկ, վզիկ, ատամ* և այլն:

Ինչպես տեսնում ենք, անցյալում արհեստագործական կամ հարակից բնագավառների հասկացությունների, գործիքների անվանումներ հանդիսացած բառերից շատերն այսօր էլ և՛ համագործածական են, և՛ գիտատեխնիկական տերմիններ են (*դուր, ուրագ* և այլն), մինչդեռ մյուսները, տերմիններ լինելով հանդերձ, դադարել են լինել համագործածական շերտի բառեր (*առեղ, բու թակ* և այլն): Սրանց նախկինում ունեցած իմաստներն են, որ այսօր հիմք են ծառայել տերմինացման համար: Հատկանշական է, որ այս վերջիններից շատերը տերմինաբանության ճանապարհով վերստին թափանցել են նաև գրական լեզվի համագործածական ոլորտ, ինչպես, օրինակ՝ *այրուք, թափք, հենք, շտկիչ, վազկան, փարտիչ, փորեք* և այլն:

Եզրակացություններ: 1. Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ առկա է բառերի՝ բարբառներում ունեցած իմաստներով մի կենսունակ խումբ, որոնցով կերտված տերմիններն

այսօր, իրենց հերթին, հիմք են հանդիսացել նույն բնագավառի բազում նորանոր տերմինների կերտման համար:

2. Մեքենագիտական-մեքենաշինական տերմինները վերատերմինանալով գործածվում են նաև որպես հարակից և այլ բնագավառների տերմիններ, այսինքն՝ բարբառային ծագմամբ բառերն այսօր նաև ընդհանուր առմամբ յուրացվել են գիտատեխնիկական տերմինաբանության մեջ:

3. Բարբառային ծագմամբ այդ բառերը, անկախ նրանից՝ այսօր համագործածական են թե ոչ, գիտատեխնիկական տերմինաբանության ճանապարհով կարող են վերստին թափանցել համագործածական ոլորտ՝ նորովի հարստացնելով լեզվի բառապաշարը: Մա նշանակում է, որ իր զարգացման հաջորդ փուլում լեզուն չի կտրվում նախորդ փուլերի իր ձեռքբերումներից:

4. Միաժամանակ, լեզվի նախորդ փուլերից ժառանգված բոլոր բառերը չէ, որ այս փուլում յուրացված են ամբողջությամբ՝ նախկինում իրենց ունեցած բոլոր իմաստներով: Դրանց իմաստների՝ համագործածական շերտում չյուրացված մասը ժառանգել է գիտատեխնիկական տերմինաբանությունը բառիմաստի տերմինացման ճանապարհով:

Петросян Асмик - Отображение слов диалектного слоя в научно-технической терминологии.- Рассмотривались вопросы употребления слов диалектного слоя в научно-технической терминологии. Доказанно, что определенное количество слов диалектного происхождения усвоивались в научно-технической терминологии, путем терминизации смыслов этих слов.

Petrosyan Hasmik - Reflection of Dialectic Words in Scientific and Engineering Terminology.- Issues on using dialectic words in scientific and engineering terminology are considered. It is shown that a great number of dialectic words have been adopted in scientific and technical terminology through transformation of the meanings of the mentioned words into terms.

ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Բառագիտության բնագավառի տերմինաբանությունը ընդգրկում է բառակազմության, իմաստաբանության, անվանագիտության, հատկանունաբանության (անձնանվանագիտություն և տեղանվանագիտություն), դարձվածաբանության, տերմինագիտության, բառարանագիտության ոլորտներում գործող տերմինահամակարգերը: Դրանցից ամեն մեկը ունի իր մանրատերմինահամակարգերը, որոնք ուսումնասիրության ընթացքում անընդհատ հղվում, մշակվում են: Մանրամասն ուսումնասիրված որևէ բնագավառ որպես կանոն ունենում է նաև լավ մշակված տերմինաբանություն: Նույն հասկացության համար առաջարկված տարբեր տերմիններից և տերմինատարբերակներից գործածության մեջ է մնում առավել կենսունակը:

Տեղանուններին նվիրված աշխատանքներում գործածվում են մի շարք տերմիններ. *տեղանունաբանություն, տեղանվանագիտություն, ջրանուն, լճանուն, գետանուն, ճահճանուն, ծովանուն, երկրանուն, լուսնանուն, մարսանուն, լեռնանուն, տեղանվանակերտ ձևակազմիչ միավոր (մասնիկ), տեղանվանակերտություն, բնականուն, բնականվանացանկ, մինչտեղանվանական իմաստ, բնականվանակազմություն, տեղանվանակազմիչ ձևույթ, տեղանվանադրում, մանրատեղանուն, տեղանվանակերտում, հոգնակերտ մասնիկի տեղանվանիչ կիրառություն, տեղանվանահիմք, տեղանվանացանկ, անվանաշտկում* և այլն¹:

Բառակազմության օրինաչափություններն ու առանձնահատ-

¹ Տե՛ս **Լ. Մարգարյան**, Բարբառի պատմական զարգացման ընթացքը Արցախի բնականություններում.- Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու.- Ե., Ասողիկ, 2014, էջ 83-97:

Ն. Դիբարյան, Բնիկ և փոխառյալ կազմիչները Հայաստանի տեղանվանական համակարգում,

Ջառուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, (Երևան, 2013, մայիսի 22-24).- Եր., Էդիթ Պրինտ, 2013թ., էջ 44-53:

կությունները հետազոտող աշխատանքներում գործածվում են *բառակազմական քայլ, բառակազմական փունջ, բառակազմական շղթա, բառակազմական կաղապար, բառակազմական բանաձև, բառակազմագիտություն, նախաձանցավերջաձանցավոր բառ, համաձանցավոր բառ, բազմապատճառաբանվածություն, երկպատճառաբանված բառ, հիմքագիտություն, արմատագիտություն, սերող հիմք, բաղադրող հիմք, արտալեզվական հիմք, միաբնեռ հիմքակազմություն, երկբնեռ հիմքակազմություն, վերլուծակազմ հիմք, համադրակազմ հիմք, բառաբաղադրական հիմք, շարակազմական հիմք, գոյականասերում, իզականակերտ ածանց և այլն:*

Անձնանվանագիտությանը վերաբերող աշխատանքներում առկա են *ազգանվանակերտ ածանց, տոհմանվանական հիմք, մականվանական հիմք, ժողովրդանուն, ազգանուն, ցեղանվանահիմք նորակազմություն, անձնանվանահիմք, անձնանվանակերտ ածանց, կեղծանուն, ծածկանուն, մականուն, դիցանուն, ցեղանուն, տոհմանուն, ցեղանունաբանություն, դիցանունաբանություն և այլ տերմիններ:*

Հոդվածում քննարկում ենք բառագիտական մի շարք տերմինների ամրակայման, գործառույթի հարցերը: Անդրադառնանք նորաբանությունների բնագավառի մի շարք տերմինների, որոնք գործառում են ժամանակակից հայոց լեզվի դասագրքերում: Տերմինների մասին խոսելիս, դրանց գործառույթները դիտարկելիս անհրաժեշտաբար քննում ենք նաև տերմինի բովանդակային կողմը, քանի որ միայն հասկացության ընկալումով, տերմինի բովանդակային սահմանների ճշտորոշման դեպքում կարելի է խոսել նրա հաջող կամ անհաջող լինելու, դենոտատին համապատասխան, համարժեք լինելու, կենսունակության և հարակից այլ հարցերի մասին:

Նորաբանությանն իրենց ուսումնասիրություններում, դասագրքերում, ձեռնարկներում անդրադարձել են Է. Աղայանը², Թ. Ղաբազյույանը³, Ա. Սուքիասյանը⁴, Պ. Պողոսյանը⁵, Ս. Մելքոնյանը⁶, Ս. Էլոյանը⁷, Լ. Եզեկյանը⁸, Ա. Մարտիրոսյանը⁹ և այլք:

² Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն. – Եր., ԵՊՀ հրատ., 1984:

³ Թ. Ղաբազյույան, Դիպլոմային և պոստնցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում. – Լեզվի և ոճի հարցեր, VII, էջ 197-226:

Նորաբանության թեմայով պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ¹⁰:

Նորաբանություն և նորակազմություն հասկացությունների իմաստային ոչ հստակ սահմանազատումը ակնհայտ է նաև այդ թեմայով գրված հոդվածներում¹¹ և նորաբանությունների մեծ և փոքր բառարաններում¹²:

Այս ոլորտում գործածվող տերմիններից են՝ *նորաբանություն* (լայն և նեղ առումով), *ընդհանրացող և մեկուսացած նորաբանություններ*, *բուն կամ լեզվական նորաբանություններ*, *հեղինակային կամ անհատական նորաբանություններ*, *խոսքային նորաբանու-*

⁴ **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու: (Հնչյունաբան., բառագիտ., բառակազմ.): Եր., ԵՊՀ հրատ., 1999, էջ 158-162:

⁵ **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), Ուսումնասովորական ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար, գիրք 1, ԵՊՀ հրատ., 1990, էջ 160-163:

⁶ **Ս. Մելքոնյան**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանություն, «Լույս» հրատ., Ե., 1984, էջ 157-179:

⁷ **Մ. Էլոյան**, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., ԳԱ հրատ., 1989, էջ 180-232:

⁸ **Լ. Եզեկյան**, Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրատ., Եր., 2003, էջ 132-149:

⁹ **Ա. Մարտիրոսյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Ե., 2004:

¹⁰ **Վ. Ս Մելքոնյան**, Բառային անհատական նորաբանություններ 20-րդ դարի արևելահայ չափաձոյում, 2002, Ա. Ռ. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, 2004, Մ. Ռ. Սողոմոնյան, Նորաբանությունները 90-ական թթ. հայ մամուլում, 2005, Լ. Ֆ Սարգսյան, Արդի արևելահայերենի նորաբանությունների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, 2011:

¹¹ **Ա. Ա. Մարության**, Նոր բառեր և նորաբանություններ, ԲԵՀ, 1998, 3, էջ 77-85: Լ. Պետրոսյան, «Նորաբանությունները հայերենում» դասընթացի մեթոդաբանությունը, Գիտական հոդվածներ, բանասիրություն, Բ պրակ: ՀՀ ԿԳՆ, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետ. մանկ. ինս-տ., խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և ուրիշն.- Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2011, էջ 35-48:

¹² **Ֆ.Հ. Խղաթյան**, Բառարան- տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ.- Եր.: Հայաստան, 1982, Փ. Գ. Մելքիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., Փյունիկ, 1996, Ս. Ա. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002, Ռ.Կ. Սաքապետյան, Բառգրքույկ, նոր և նորակազմ բառեր հայերենում, Եր., ԵՊՀ հրատ., 2014:

թյուններ, նորամուծություն, նորակազմություն, նորակազմ բառ, պոտենցիալ (ներունակ) բառեր, իմաստային նորաբանություններ և այլն: Առանձնակի են մնացել, տարածում չեն ստացել մի շարք տերմիններ՝ հեղինակային նորաբառեր (Պ. Պողոսյան), նորաբանագիտություն, հանրական նորաբանություն և այլն: Որոշ տերմիններ գործածվում են մի շարք տարբերակներով (դիպլոմատային բառ/ դիպլոմատական բառ/ դիպլոմատություն, պոտենցիալ բառ/ ներունակ բառ և այլն):

Ուսումնասիրության ընթացքում հեղինակները հաճախ իրենք տերմինային փոփոխություններ են կատարում: Այսպես՝ Է. Աղայանը գործածում էր *գործուն և չգործուն բառապաշար*, այնուհետև սկսում է գործածել *գործուն և ոչ գործուն բառապաշար* տերմինները:

«Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն են կոչվում լեզվական ամեն մի նոր իրականություն կամ իրողություն: Նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն», - գրում է Է. Աղայանը¹³:

Ս. Էլոյանը «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն» աշխատության մեջ գրում է. «Վերջին տասնամյակներում ռուս լեզվաբանության մեջ ակնհայտորեն զգալի է դարձել լեզվական (ընդհանրական) և անհատական նորաբանությունները տարբերակելու միտումը՝ համալեզվականին հասկացնելով նորաբանություններ (неологизмы), իսկ զուտ անհատական-ոճական նորակազմություններին՝ օկագիոնալիզմներ տերմինները, թեև միշտ չէ, որ այս տարբերակումը պահպանվում է, քանի որ հաճախ էլ նորաբանություններ են դիտվում նաև անհատական կամ խոսքային (համատեքստային) նորակազմությունները, այսինքն՝ անհատական-ոճական (օկագիոնալ) նորակազմությունները¹⁴»:

¹³ Գ.Բ. Զահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Ն. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս. Ա պրակ, «Լույս» հրատ., Ե., էջ 331:

¹⁴ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 182:

Ժամանակակից հայերենում անհատական նորակազմությունների մեջ Ս. Էլոյանը տարբերակում է *պոտենցիալ, դիպվածական* և *հեղինակային բառեր*:

Թ. Ղարազոյսյանը «Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում» աշխատության մեջ գործածում է *դիպվածային բառեր* տերմինը¹⁵:

Պ. Պողոսյանը «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներում» գործածում է *դիպվածական բառեր* տերմինը¹⁶:

Լ. Եզեկյանի «Ոճագիտություն» ուսումնական ձեռնարկում գործածվում է *դիպվածային բառեր* տերմինը, մի քանի անգամ՝ նաև *դիպվածական բառեր*, մեկ անգամ՝ *դիպվածաբառ*¹⁷:

Ս. Մելքոնյանը նորակազմությունները բաժանում է երկու խմբի՝ *անհատական* և *հանրական*: «Տարածման իմաստով ավելի ակտիվ երևույթ են *հանրական* նորակազմությունները, քան անհատականները: Առաջինները, ստեղծելուն պես ձգտում են ընդհանրանալ համապատասխան գործածության ոլորտում կամ ողջ գրական լեզվում», - գրում է նա¹⁸:

Ս. Մելքոնյանը նշում է. «Հանրական նորաբանությունների տարածումը պայմանավորված է նոր հասկացությունների գործածության ոլորտի բնությով, որոնց անվանում է նոր բառը. առարկան, հասկացությունը կյանքում տարածվելու, մասսայականանալու աստիճանին համեմատ ընդհանրացնում է նաև իր անվանումը: Հենց այդ արագ ընդհանրանալու հետևանքով էլ հանրական նորակազմությունները կարող են կարճ ժամանակից հետո թափանցել համագործածական ակտիվ բառապաշարի մեջ և դադարել նորամուծություն լինելուց»¹⁹:

Նորաբանությունների, նորակազմությունների ընկալումը մանրակրկիտ և անհրաժեշտ մանրամասնությամբ ներկայացնելու

¹⁵ Տե՛ս Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., 1983, էջ 197-226:

¹⁶ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ե., ԵՊՀ հրատ., 1990:

¹⁷ Տե՛ս Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 2003, էջ 144:

¹⁸ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., Լույս, 1984, էջ 159:

¹⁹ Ս. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 160:

համար կարելի է կիրառել հոգեկեզվաբանական գիտափորձի և հարցումների տարբեր մեթոդներ:

- Տրված նախադասության մեջ լրացնել բաց թողած բառը (առաջադրանքում տրվում են լրացվելիք բառերը, որոնք նորակազմություններ են):

- Տրված բառերը դասավորել հոմանիշ գույգերով:

- Բացասորել տրված բառերի իմաստը՝ որևէ ձևույթի բառակազմական նշանակության ընկալումը ստուգելու նպատակով (հիշենք Լ. Շչերբայի *глокая кыздра*-ն և Մ. Ասատրյանի *լարգական դարգուհիներ*-ը):

- Բառաշարքերում տեղադրել գոյություն չունեցող, սարքովի բառեր և պահանջել դրանք գործածել նախադասության մեջ, գրել երկուական որոշիչ և այլն:

Առայժմ հստակ չեն տարբերակվում բառարաններում չգրանցված, չվկայված, չարտացոլված բառաշերտը և նորաբանությունները: Հատկապես անցյալ դարերի հեղինակների ստեղծած նորակազմությունները ներկայացնելիս, կարծում ենք, կարելի է միայն ենթադրություններ անել բառի առաջին գործածության վերաբերյալ, քանի որ դա կարող է նաև եղած բառարաններում չարտացոլված, չվկայված բառ լինել:

Հետաքրքիր և ուսումնասիրության կարոտ բնագավառ է նաև բառապաշարի ոչ գործուն շերտի միավորների՝ գործուն բառապաշարին անցման խնդիրը, գործածության համեմատաբար նեղ ոլորտ ներկայացնող բառերի, տերմինների և նորաբանությունների շփոթության հնարավոր դեպքերը, բառի տերմինացման և տերմինի բառացման ժամանակ ի հայտ եկող իմաստափոխության օրինաչափությունները և այլն:

Առանձնահատուկ քննության կարիք ունի արևմտահայերենի և արևելահայերենի տերմինապաշարի միավորների փոխներթափանցման երևույթը: Է. Աղայանը դա դիտում է *ներքին փոխառությունների* շարքում:

Թերևս ավելի հստակ կլինե՞ր ներկայացնել դա *արևմտահայերեն-արևելահայերեն փոխանցում, տեղաշարժ* տերմինով: Այն բառերը, որոնք արևելահայերենում սկսել են գործածվել (սմբուկ, աշխարհաքաղաքական, խափանարար, բարեշրջություն և այլն),

նորաբանություն համարելը ճիշտ չէ, որովհետև դրանք առկա են եղել հայերենի գոյաձևերից մեկում՝ արևմտահայերենում, և լեզվում արդեն եղած միավորները ուղղակի հայերեն բառապաշարի մի ենթաշերտից անցում են կատարել մեկ այլ ենթաշերտի՝ ընդգրկվելով գործածության անհամեմատ ավելի լայն ոլորտում:

Կարևոր է նաև ճշգրտել, թե քանի «տարեկան» բառն է անվանվում *նորակազմություն* տերմինով: Նորակազմ բառ համարել վերջին 50, 60 տարվա գործածություն ունեցող բառը և արտահայտությունը, թե՛ միայն 1-2 տասնամյակ առաջ ստեղծված բառերն ու արտահայտությունները:

Ի՞նչ ժամանակագրական կտրվածքով տարբերակել նոր և նորագույն բառերը:

Ա. Սուքիասյանը գրում է. «Նորաբանությունը պատմական հասկացություն է: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի գիտակցվում և չի ընդունվում: Այդ տեսակետից հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում և լեզվից դուրս են մնում»²⁰:

Ե՞րբ է նորաբանություն համարվող բառը կամ արտահայտությունը դադարում այդպիսին ընկալվելուց և համարվում համագործածական բառ:

Ի՞նչ օբյեկտիվ չափանիշներ են գործում իրականացված, լեզվում արդեն գործածվող պոտենցիալ բառերի և դեռևս չիրականացված, որևէ, նույնիսկ եզակի գործածություն չունեցող պոտենցիալ բառերի ընկալման ժամանակ: Այսպես, Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանում» գրանցված են հարյուրավոր բառեր – ուհի ածանցով. *գեներայուհի, գերուհի, ազիտատորուհի, ազատագրուհի, աստվածամերժուհի, ախոյանուհի, ակումբավարուհի, աղանդավորուհի, այգեպանուհի, այցելուհի, անդամուհի, անվանակոչուհի, արձակագրուհի, արվեստագիտուհի, աֆերիստուհի, շահախարդախուհի, բաղնեպանուհի, բաղնիսապանուհի, բարեգործուհի, բուժակուհի, բուրյաթուհի, գողուհի, գուշակուհի, դեսպանուհի, դիվանագետուհի, դոնապանուհի,*

²⁰ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 1999, էջ 162:

երաժշտագիտուհի, երգչախմբավարուհի, թխուհի, միջազգայնականուհի, խնամատուհի, ծաղկավաճառուհի, խնդրարկուհի, ազարակատիրուհի, լուսնոտուհի, դիրեկտորուհի և այլն:

Եթե բառը արդեն բառարանային գրանցում ունի, ճիշտ է արդյոք այն դիտել պոտենցիալ բառերի շարքում:

Արդյոք հանձնարարելի՞ տերմին է *խմաստային նորաբանությունը*: Այս և մի շարք այլ հարցեր (իսկական կամ բուն նորաբանության, փոխառության և հայերեն համանշանակի գործածության առանձնահատկությունների դրսևորման հարցերը, բառիմաստի, բառի նշանակության և առարկայական վերաբերության փոփոխության խնդիրները և այլն) ճշգրտման, հստակ սահմանման կարիք ունեն:

Galstyan Anahit- On the Use of Armenian Lexicological Terms.- The article discusses the use and function of some Armenian lexicological terms. The perception and relationships of such concepts as *neologisms*, *new coinages*, *potential words* and *occasionalisms* are given a detailed analysis within the context of the Armenian terminological system.

Галстян Анаит- Некоторые вопросы употребления лексикологических терминов.- Статья посвящена исследованию функционирования некоторых армянских лексикологических терминов. Анализируются взаимоотношения терминов *նորաբանություն* (неологизм), *նորակազմություն* (новообразование), *պոտենցիալ բառ* (потенциальное слово), *դիպլոմային բառ* (оказионализм) в армянской лингвистической терминосистеме.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Բարդ նախադասության՝ որպես շարահյուսական միավորի սահմանումը համաբանորեն զուգահեռվում է լեզվական մյուս բաղադրական միավորների առանձնացմանը սկզբունքային առումով: Բարդ բառը սահմանվում է որպես երկու կամ ավելի միավորների զուգորդում, որոնք բաղադրության մեջ առավել կամ պակաս չափով զրկվում են ինքնուրույնությունից և առաջացնում որակապես նոր միավոր: Պատահական չէ, որ բարդ նախադասությունը ուսումնասիրող հեղինակները հաճախ զուգահեռներ են տանում սրանց և բարդ բառերի կառուցվածքային նկարագրերի միջև: Օրինակ, Գ. Գաբրեղիյանը անշաղկապ և շաղկապական բարդ նախադասությունները համեմատում է անիսկական և իսկական բարդությունների հետ, «որտեղ նույնպես մի դեպքում բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների բնույթը հստակ է, քանի որ այդ բաղադրիչները ունեն համապատասխան քերականական ձևավորում (*տան + տեր = տանտեր, այս+օր = այսօր*), իսկ մյուս դեպքում նման քերականական ձևավորում չունենանու պատճառով բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը սուկ ենթադրելի է, հստակորեն չձևակերպված (*ջրածին՝ ջրում ծնված, ջուր ծնող, ջրից ծնված*)¹»:

Ակադ. Ս. Աբրահամյանը բարդ նախադասությունների բազմաբաղադրիչ կառույցները դասակարգելիս առաջարկում է գործադրել ըստ անմիջական բաղադրիչների վերլուծության եղանակը՝ դարձյալ համեմատելով երկուսից ավելի բաղադրիչներից կազմված բարդ բառերի (*անցուղարձ անել, արմատահան անել* ևն) հետ²: Ընդունված է նաև պարզ նախադասության անդամների և բարդ նախադասության բաղադրիչ մասերի (նախադասությունների) շարա-

¹ Գ. Գաբրեղիյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, էջ 15:

² Տե՛ս Ս.Գ. Աբրահամյան, *Հայոց լեզու*, Ե., 2004, էջ 106:

հյուսական հարաբերությունների զուգահեռականությունը³, որը, սակայն, բացարձակ չի կարող համարվել. Նախադասությունները, արդեն իսկ օժտված լինելով առանձին կառուցվածքներով, միմյանց հետ զուգորդվելու իմաստային ավելի մեծ հնարավորություն են ենթադրում (հմմտ.՝ հետևանքի կամ ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող երկրորդականներով կառույցները):

Բարդ նախադասությունների դասակարգության ժամանակ հաճախ առաջանում են երկիմաստ գնահատականների տեղիք տվող խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են նախադասության կառուցվածքին (պարզ կամ բարդ) կամ էլ բաղադրիչ մասերի հարաբերության բնույթին (համադասություն կամ ստորադասություն): Այս դեպքերում է, որ հաճախ անհրաժեշտություն է ծագում դիմելու ոչ միայն բառակազմության, այլև նախադասությանն անմիջապես նախորդող մակարդակի՝ ձևաբանության՝ նախադասության համար ենթակադապարային կարգերին, որոնք կարող են կողմնորոշիչ դեր կատարել կառույցի շարահյուսական գնահատականը հստակեցնելու հարցում:

Դրանք առաջին հերթին բայ-ստորոգյալին բնորոշ կարգերն են (եղանակը, ժամանակը նն), բայց, ինչպես կոտեսնենք ստորև, անվանական կարգերը ևս անմասն չեն բարդ նախադասությունների շարահյուսական նկարագիրը ձևավորելու խնդրին: Նույնպիսի դեր կարող են կատարել նաև մասերի շարադասությունը կամ էլ նախադասության հնչերանգային բնութագիրը:

Անդրադառնանք տարաբժեք գնահատությունների առիթ տվող այդպիսի մի քանի դեպքերի:

1) Կան կառույցներ որոնց պարզ կամ բարդ լինելը որոշակի չէ: Գ. Գարեգինյանը այդպիսի «անցողիկ» կառույցներից նշում է նախ այսպես կոչված «համեմատական դարձվածներով» նախադասությունները⁴: Օրինակ «.... *Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև*»: Այս նախադասությունը կարող է բարդ համարվել, եթե «զորությամբ» ենթադրենք համեմատական դարձվածի ստորոգյալը: Կարծում ենք, որ

³ Հմմտ., օր., Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1987, էջ 32-33:

⁴ Գ. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 9:

այս կարգի կառույցների գնահատության ժամանակ կարելի է չափանիշ համարել համեմատելի միավորի առկայացական նկարագիրը՝ առկայացման ձևաբանական կարգը: Որոշիչ (կամ այլ կարգի) հոդով օժտված համեմատելին, կարծում ենք, բավարար ցուցիչ է ստորադաս նախադասության ստորոգյալի ոչ բացահայտ (իմպլիցիտ) առկայության: Հմտ.՝ «... *ինչպես քամու բերանն ընկած չոր տերևը*»: Ստորոգյալի առկայության նշան կարող են համարվել նաև համեմատական դարձվածում նրա լրացումների արտահայտված լինելը, հմտ.՝ «*Դռան մոտ զրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները, և ներս մտավ, ինչպես միամիտ հավըր վանդակի բաց դռնով*»: Բնականաբար, որոշյալ միավորի հետ, *ինչպես, որպես* բառերը ձևաբանորեն կցնահատվեն որպես հարաբերական դերանուն, անհոդ միավորի կողքին՝ որպես կապ: Իբրև «անցողիկ» կառույցներ Գ. Գաբեգիյանը նշում է նաև զիջական շաղկապներով ձևավորվածները, ինչպես՝ «*Նա ի վերջո մասնակցեց շինարարական աշխատանքներին, թեև բավական մեծ ուշացումով և ոչ առանձին խանդավառությամբ*»⁵: Կարծում ենք, որ սա միանշանակորեն պետք է համարվի բարդ նախադասություն, քանի որ թեև-ը միայն ստորադասական շաղկապի արժեքով է կիրառվում:⁶

2) Ավանդական շարահյուսագիտության մեջ ընդունված երկիմաստ միավորներից էր այսպես կոչված «միավորյալ» նախադասությունը: Վերջին տասնամյակներում, թվում է, այս հարցը միանշանակ լուծում է ստացել. ընդհանուր ենթակայով և տարբեր ստորոգյալներով նախադասությունները բարդ են համարվում, տարբեր ենթականերով նախադասությունները՝ պարզ: Թեև իր որդեգրած կադապարային մոտեցման շրջանակներում սրանց երկակի բնույթը հաստատում է Գ. Ջահուկյանը. «... Տրամաբանական- իմաստային չափանիշներով առաջնորդվելու դեպքում հարցը լուծվում է հոգուտ համադասության բոլոր եզրերի միասնական գնահատման և իրոք, տրամաբանական հարաբերությունների տարբեր եզրերի դրսևորման առումով ի՞նչ տարբերություն կա «Հակոբը և Պետրոսը գնա-

⁵ Գ. Գաբեգիյան, նշվ. աշխ., էջ 9:

⁶ ԶԼՄ-ներում հանդիպող՝ կապի արժեքով կիրառություններն ակնհայտ սխալներ են. օրինակ՝ «Թեև արտասահմանյան հրավերներին, նա ցուցահանդեսներ է բացում Հայաստանում» («Հայլուր»):

ցին», «Ոչ Հակոբբ, ոչ էլ Պետրոսը չգնացին», «Ոչ Հակոբբ գնաց, ոչ Պետրոսը», «Հակոբբ գնաց, բայց ոչ Պետրոսը», («Պետրոսը չգնաց, այլ Հակոբբ»), «Կամ Հակոբբ կգնա, կամ Պետրոսը» նախադասությունների միջև: Ինչպես տեսնում ենք, համադաս հարաբերությունների դրսևորման առումով խիստ սահման չկա ասության (պարզ նախադասության) և լրասության (հիմնականում բարդ նախադասության) միջև. համադաս անդամներ ունեցող նախադասությունները կարող են դիտվել որպես երկու կամ ավելի նախադասությունների միավորումներ, այսինքն՝ դրվել լրասությունների մեջ: Սա երևում է այսպես կոչված միավորյալ նախադասությունների օրինակով, որոնք հավասարապես կարող են դրվել ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասության մեջ»⁷:

3) Հատուկ ուշադրության են արժանի միակազմ նախադասություններից բաղադրված բարդ նախադասությունները: Սրանք հաճախ են կազմում համադասական կառույցներ (օր.՝ *Լինե՛լ, թե՛ չլինե՛լ*), ստորադասական կառույցներում էլ որպես կանոն հանդես են գալիս գերադաս նախադասության դերում: Ինչպես միակազմ պարզ, այնպես էլ բարդ նախադասություններում, ինչպես հայտնի է, վճռորոշ դեր ունի հնչերանգը: «*Լռությու՛ն, լռությու՛ն, լռությու՛ն անսահման*». սա եռաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն է համարվում՝ կազմված երեք անվանական անդամ նախադասություններից՝ ձևավորված հատուկ հնչերանգի շնորհիվ: Բայց կան դեպքեր, երբ հնչերանգը բավարար ինքնուրույնություն չի հաղորդում անվանական միավորին՝ այն որպես առանձին նախադասություն ընկալելու համար, հետևաբար կառույցը երևի պետք է գնահատվի որպես պարզ (սրանք հանդիպում են խոսակցական ոճում): Օր. *Աշու՛ն, աշու՛ն ցանկալի...* (բարդ նախադասություն) և *Գարուն. ասա էս տարի գարուն է՛նք տեսել...* (պարզ նախադասություն)⁸:

4) Կառույցներ էլ կան, որոնց բարդ լինելը կասկած չի հարուցում, սակայն մասերի հարաբերության համադասական թե ստորադասական բնույթը ստույգ չէ կամ որոշվում է լրացուցիչ չափա-

⁷ Գ. Ջահուկյան, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 48:

⁸ Հմմտ. Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, էջ 46-47:

նիշներով: Ամենից ավելի հայտնի այս կառույցներից են անշաղկապ որոշ տիպի նախադասությունները, որոնք դասակարգվում են համադասական և ստորադասական տիպերից առանձին: Սրանց մի մասի քերականական բնույթը որոշելիս էլ վճռական է հնչերանգը (հմմտ. *Գործդ ավարտեցիր, (') գնա խաղալու*):

Միանշանակ չէ նաև այն կառույցների գնահատականը, որոնք ձևավորված են զուգադիր այնպիսի շաղկապներով, որոնց մի եզրը ստորադասական է, մյուսը՝ համադասական: (*Թեև ..., բայց, չնայած ..., բայց (սակայն)* և այլն): Նման դեպքերում, կարծում ենք, գերակա պետք է համարվի ստորադասական շաղկապի իմաստը: Երկակի են գնահատվել նաև *ուստի, ուրեմն* և այս կարգի հետևանքի շաղկապները. սրանց ձևավորած կառույցները համարում են կա՛մ համադասական (Մ. Աբեղյան, Ա. Պապոյան և այլք), կա՛մ ստորադասական (Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան և այլք):

Հաճախ կառույցի մասերի միջև առկա շարահյուսական հարաբերությունը պայմանավորված է լինում մասերի եղանակաժամանակային բնութագրերով. այսպես, *եթե ..., ապա* զուգադիր շաղկապով արտահայտվում են պայմանի և հետևանքի հարաբերություն սովորաբար ըղձական-պայմանական զուգորդման դեպքում (*եթե պարապես, կընդունվես*), սահմանական եղանակի բայերի կամ էլ բաղադրյալ ստորոգյալների զուգորդումով էլ կարող է արտահայտվել համադասական (հակադրական) հարաբերություն (*Եթե անցյալ տարի գնաճը աննշան էր, ապա այս տարի զգալի է*):

Բարդ ստորադասական նախադասության բնորոշ կապակցության միջոցներից են հարաբերական դերանունները և հարաբերյալները. այս վերջինները, ինչպես հայտնի է, կիրառվում են գերադաս նախադասության մեջ. դրանք երրորդ դեմքի անձնական (*նա, նրանք*) կամ երրորդ շարքի ցուցական (*այն, այնպիսի, այնքան, այնտեղ* և այլն) դերանուններ են⁹: Որոշ դեպքերում ստորադասականների մեջ են դրվում այնպիսի կառույցներ, որոնցում թեև գործածված են ցուցական դերանուններ, սակայն, կարծում ենք, դրանք ստորադասական կապակցություն չեն նշում: Վ. Առաքելյանը, օրինակ, հետևյալ օրինակը համարում է ձևի պարագա երկրորդակա-

⁹ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ 280:

նով բարդ նախադասություն, մինչդեռ, կարծում ենք, համադասական է.

Քո անկումները եղել են հար
Եղանակի պես փոփոխական,
Այդպես երկինքն է թափում հանկարծ
Թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ: (Չարենց)


Բերենք այս կարգի ևս մի օրինակ արդի պոեզիայից.

Ու մենք գտանք իրար,
Այդպես խոտն է գտնում
Այն անիվը, որը պիտի ճգմի իրեն,
Այդպես դեղձն է նայում իրեն պարզված ձեռքին
Համակերպված ու հաշտ, ու հեզորեն...
(Ա. Պարսամյան)

Շարահյուսական հարաբերության բնույթը երբեմն էլ կարող է պայմանավորված լինել բարդ նախադասության մասերի շարադասությամբ: Որպես սրա օրինակ կարելի է նշել *մինչդեռ* (երբեմն՝ *մինչ*) շաղկապով կապակցվող ստորադասական կառույցը: Հայտնի է այդ շաղկապի կրկնակ իմաստը՝ համադասական և ստորադասական: Որպես կանոն առաջադաս կիրառության դեպքում այդ շաղկապով միացած մասը ժամանակի պարագա երկրորդական նախադասություն է (*Մինչդեռ ժողովում քննարկվում էին նախորդ օրվա դեպքերը, շրջաններում տեղի ունեցան նոր իրադարձություններ*), հետադաս կիրառության դեպքում դիտվում է որպես նախորդ բաղադրիչին համադաս (*Համբարձումը ուզում էր որդուն հայտնի երաժիշտ դարձնել, մինչդեռ սա տարված էր համակարգչային խաղերով*):

5) Հայերենագիտության մեջ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների տեսակների առանձնացման խնդրում առանձնապես մեծ տարակարծություններ չեն ծագել: Տարբեր համակցություններով հանդես եկող բազմաբարդ նախադասությունները նկարագրվել և դասակարգվել են Մ. Աբեղյանի կողմից և հիմնական գծերով

կրկնվել հետագա ուսումնասիրություններում: Ակադ. Ս. Աբրահամյանը սրանց դասակարգման հարցում, ինչպես նշել ենք, առաջնորդվում է անմիջական բաղադրիչների վերլուծության սկզբունքով՝ դրանք տեսակավորելով համասեռ (միայն համադասությամբ կամ միայն ստորադասությամբ կապված բաղադրիչներով) և տարասեռ (համադասության և ստորադասության զուգորդում (ներ) պարունակող) կառույցների մեջ: Որոշ ուսումնասիրություններում առանձնացվում է բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների մի ենթատեսակ, որը կառուցված է մեկից ավելի գերադաս բաղադրիչներից և դրանց ստորադասական ընդհանուր երկրորդական (ներ)ից՝ հետևյալ նվազագույն կաղապարով:



Այս կառույցը սովորաբար գնահատվում է որպես ստորադասական, իսկ բաղադրիչների հարաբերությունը անվանվում է հանրաստորադասություն (Ա. Պապոյան):

Երգում էին և պարում, որպեսզի զբաղեցնեն հյուրերին:

Երբեմն ընդհանուր երկրորդականը գերադասների նկատմամբ տարաբժեք հարաբերություն է արտահայտում: Օրինակ՝ *Բոլորին հայտնի էր, և իրավապահներն էլ պարզեցին, որ նա անմեղ է* (երկրորդական նախադասությունը միաժամանակ և՛ ուղիղ խնդիր է, և՛ ենթակա): Ավելի նպատակահարմար է թվում այս կարգի կառույցները հատկացնել համադասությանը՝ հաշվի առնելով գերադաս բաղադրիչների միջև առկա շարահյուսական կապը:

Telyan Leonid- On the Classificaton of Compound and Complex Sentences in Modern Armenian.- The article addresses some Armenian sentence structures which are interpreted differently by Armenologists both from the point of view of structures (simple vs non simple) and the syntactic relationship of the clauses in compound vs complex sentences. Due emphasis is made on morphological and intonational features as well as word order in identyfng the syntactic function of such structures.

Телян Леонид- Заметки о классификации сложных предложений.- В статье рассматриваются некоторые конструкции предложений, которые неоднозначно оцениваются как с точки зрения структуры (простое-сложное), так и синтаксической связи частей (сочинение-подчинение). Указывается на роль категорий других уровней (морфологических, интонационных и др.) при уточнении синтаксической природы данных конструкций.

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբաջյան Աննա – Տեղաշարժեր արևելահայերենի սուկաձանցավոր բա- յերի համակարգում-----	5
Ավետյան Սարգիս – Գրական արևմտահայերենում հին հայերենի <i>իւ</i> երկբարբառի արտացոլման հարցի շուրջ -----	17
Բառնասյան Ջեմմա – Ածանցումը հայերենի բարբառներում. նախա- ծանցներ-----	27
Բարսեղյան Ամալյա – Նախադասությունների կապակցման բառական միջոցները տեքստում -----	32
Բրուսյան Լիլիթ – Հաճոյախոսությունները հայկական լեզվամշակույ- թում (ռուսերենի և անգլերենի զուգադրությամբ)-----	42
Գյուլգասյան Դավիթ – Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ -----	49
Գրիգորյան Մ. Սուսաննա – Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի երաժշտական հասկացությունների իմաստային քննություն -----	58
Դալայան Տորք – Հայերենի ենթաշերտային ծագման որոշ բառերի ստուգաբանություններ-----	69
Դոլուխանյան Ալիսոա – Հայերենի ամբիոնը Փարիզի արևելյան կենդա- նի լեզուների բարձրագույն դպրոցում -----	79
Դոխոյան Ռուզաննա – Մտածական բայերի դասակարգումը արդի հայերենում -----	90
Զաքարյան Հովհաննես – Բառապաշարի համալրման սկզբունքները հայերենում -----	104
Թադևոսյան Հասմիկ – <i>Միրտ</i> բաղադրիչով նոր կազմություններ միջ- նադարյան բժշկարաններում -----	117
Խաչատրյան Լալիկ – Մակբայի արժեքով պատկերավոր համեմատու- թյունները գրաբարում -----	125
Խաչատրյան Հասմիկ – <i>Տանիք</i> հասկացության բառանվանումների գոր- ծառական-ծագումնաբանական քննությունը բարբառային հայերենում --	135
Խաչատրյան Նունե – Բազմագործառական շաղկապները ժամանակա- կից հայերենում -----	147
Խաչատրյան Վալենտին – Միջին հայերենում փոխառված բառերի գործածությունը ձեռագրերի 15-րդ դարի հիշատակարաններում -----	160

Կատվայան Վիկտոր – Բայազետի բարբառում բառասկզբի բաղաձայնական հաջորդականությունների մասին -----	170
Հովհաննիսյան Լավրենտի – Լեզուների մասին Եղիշեի մի վկայության շուրջ -----	179
Հովհաննիսյան Նազիկ – Նորակազմ բառեր նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններում -----	187
Ղազարյան Հասմիկ – Որոշյալ հոդերի իմաստագործառական առանձնահատկությունները -----	198
Մարգարյան Լուսինե – Հնդեվրոպական արմատները Արցախի տեղանվանական համակարգում -----	209
Մինասյան Շողեր – Տարածք երկրորդական նախադասությունները ժամանակակից հայերենում -----	217
Միրումյան Մարգուշ – Հավելական բաղադրիչով հարադրական բայերի կառուցատիպերը Հ. Թումանյանի հեքիաթներում -----	233
Մխիթարյան Գայանե – Մանրուսման եղանակների անվանումները -----	244
Մուրադյան Գոհար – Գրիգոր Մագիստրոսի լեզուն -----	253
Չոլաքեան Յակոբ – Արեւմտահայերէնի բաղաձայնական համակարգի արդի վիճակը -----	266
Պապիկյան Միլվա – <i>Միհր – Մհեր – Վատմիհր</i> բառերի մասին -----	272
Պողոսյան Նորայր – Աշխարհաբարի ձևավորման հարցում հայկական գաղթավայրերի ունեցած դերը -----	279
Սանթրյան Արեն, Պետրոսյան Լիլիթ – Ժխտական միավորների կապակցելիությունը գրաբարում -----	290
Մարգարյան Նվեր – Գործառական ոճերը և խոսակցական լեզուն -----	296
Մարգարյան Արմեն – Հատուկ անուններով կազմված հատուկ անունները Ղարաբաղի բարբառում -----	305
Միմոնյան Նելստար – Գրաբարի « <i>միտք, մտածողություն</i> » իմաստային խմբի բայերը -----	313
Միրունյան Տիգրան – Վաղ լատինաբանություններ Քոնայի կենտրոնի թարգմանական երկերում (XIV դ.) -----	321
Մուքիսայան Հենրիետա – Բժշկագիտական տերմինների կանոնարկումը հայերենում -----	333
Տիդյան Մուսաննա, Թոխմախյան Ռոբերտ – Հոլով և հոլովական իմաստ-	345

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գրիգորյան Մուսանձա , Պարոնյան Նաիրա – Հովհան Մանդակունու ճաների բառակազմությունը -----	351
Մկրտչյան Գարիկ – Հայոց Մեծ Եղեռնը հայերենի մի շարք բարբառների վերացման ու տարածական հիմքերի խախտման պատճառ -----	358
Մուրադյան Անահիտ – Գրաբարի և միջին հայերենի նախորդավոր և նախադրությամբ կառույցներով գոյականական բառակապակցությունների զուգադրական բնութագիրը -----	369
Պետրոսյան Հասմիկ - Բարբառային շերտի բառերի արտացոլումը գիտատեխնիկական տերմինաբանության մեջ-----	378
Գալստյան Անահիտ – Բառագիտական տերմինների գործածության հարցեր	388
Թեյան Լեոնիդ – Դիտարկումներ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ	396
Բովանդակություն -----	404

Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով
7-9 հոկտեմբերի, 2015թ.

Զ ե կ ու ց ու մ ն ե ր ի ժ ո դ ո վ ա ծ ու

X International Conference on Armenian Linguistics
Yerevan, 7-9 October, 2015

Collection of papers

X Международная конференция по армянскому языкознанию
Ереван, 7-9 октября, 2015 г.

С б о р н и к д о к л а д о в

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 660
Ստորագրված է տպագրության՝ 25.12.2015թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 25.5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: